Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

460

ԱԳրակ
866

891.99
Պ-89
683

ՊԵՐՃ ԳԻՇԵՐԱՆՑ

ՍՈՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵ

ՎԷՊ



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱՔՈՒ
Տպարան Ս. Անտոնեանցի
1903

3615

Дозволено Цензурою. Тифлисъ, 10 Мая 1903 г.

ГОС. ПУБЛ. БИБЛ. СССР А. им. А. Мясникяна
866-2014
(3803 41)
Ա 1587
2004

ԱԶՏԱՐԱԿ ԳԻՒՂԻ

ՄԵԾԻՆ ԵՒ ՓՈՔՐԻՆ

Ի ՆՇԱՆ

ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ ՈՒՆԵՑԱԾ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՈՒՐԱԽ ԵՒ ՋՈՒԱՐԹ ՍՐՏՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՊԵՐՃ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ՊՈՕՇԵԱՆՑ։

Ընտիր Աշտարակեցիք,
Իմ քաղցր հայրենակիցք,


Ձեր հողումը ծնել, ձեր ջրովը սնել,
Ձեր օդը ծծել, ձեղնից կեանք առել,
Իմ մանուկ օրերս ձեր մէջ անցրել,
Ձեզ եմ կրկնում այս երկու խօսքս էլ։

Ձեր ինձ ցոյց տուած սէրն ու քաղցրութիւն,
Ձեր այս թանկագին բարեկամութիւնն
Ցեանդ ու աշխոյժ չնչեց իմ հոգուն,
Անմահացնել ձեր փառքն ու անուն։

Ձեր վարքն ու ընտիր ձեր սովորութիւն
Ջատ ախորժ էկաւ ամեն հայ մարդուն,
Ձեր մէջ ունեցած հայ—քրիստոնէութիւնն
Հնչում է այժմ ամէն աշխարհում։

Ձեղնից լինելս ինձ մեծ պարծանք է,
Ձեր մէջ մեռնելս ինձ կրկին կեանք է.
Ձեր գովքն երգելն ինձ մեծ յարգանք է,
Ահա իմ պատուն, որ ձեզ իսկ փառք է։

Ձեզ եմ նուիրում ուրեմն այս գիրքը,
Ջահել հասակիս ջահել արդիւնքը.
Դէհ, ընդունեցէք սիրով, հաճութեամբ
Պերճի Պռօշեանց փոքրիկ նուէրքը։





ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

Ս.

Պարտի տան և հինգն էր. առաւօտը օրը մի քիչ բարձրանալէն յետոյ, երբ արեգակը իրա ոսկեգոյն ճառագայթները կանաչ ու կարմրին տալով շողացրել էր մի մանանչափ նոր եկած ձնի վրայ, և օրը երևում էր բարեգուշակ. երբ բնութիւնը, կարծես թէ, զգուելով ձմեռուան ծանր լծից, մի թանձր պատան երեսից վերցրած՝ ուզում էր գարնան հոտերովը քիչ քիչ ուրախանայ, բայց և այնպէս շատ ցուրտ էր, Աշտարակայ մուխը ամպի նման քուլայ քուլայ բարձրանում էր։

Արշաւիրը իրանց դրանը, ոտները բարձր ուցած անելով՝ ձեռները փչելով՝ դվդվի էր տալի, հէնց իմանաս թէ մինը նրան ասող կար՝ որ էս ցուրտ վախտը ըտեղ կանգնի։

Գարեգինը ժամիցը դուս գալով՝ ձեռները չէքը դրած, առուն բռնած՝ նեըքեւ էր գալի իր միջումը դունդունալով. ով գիտե թէ ինչ։

— Ողորմի Աստուած, Արշաւիր, կանչեց նա մօտենալով նրան, առուն անց կենալով էս կողմը. աղպէ՛ր, քու չանը երկաթ ա թէ պողպատ. դիշերուան ժամ էլ չե՛ս գալի. լիսաթաթախ դուս ես գալի դրանը կանգնում. ազապ էլ չես, թէ ասեմ չուր տանող աղջկերանց ընկես մոխկ տալի. դու քունը պրծար, թող մենք հոգս քաշենք. թող հիւանդը անքայ. քու գլխիդ ինչ թաս են կոխել էս վախտ ըսաեղ կաննել սրթսրթում ես. եա փունչիդ էլա վրէդ էիր քցել մէթէ ամաչում ես Աչտարակայ սովորութիւնները բանացնել։ Ես ու դու էլ որ էչմիածին բարեկամ ունենայինք հայր սուրբենրիցը, մենք էլ մահուդի չինել կծածկէինք. է՜հ, ինչ անենք. մեր պապերը ինչ որ արել են, մենք էլ պտի անենք. տնաշէն, ինչպես մարդ ես դու։

— Ողորմի ծնողացդ, Գարեգին ջան, ասեց Արշաւիրը. ժամիցը հօ յեա ընկայ, էսօր էլ Ղազարոսի յարութեան օրն էր, համա արի տես, էս ցուրտ վախտին արևը ինչ լաւ դուս ա եկել, հէնց իմանաս մայիսի արևը ընկի, ընէնց չէ։

— Հա, հա, իմ սիրտս էլ բացուեց, ասեց Գարեգինը. համա ասա, ընչի համար ես էս վախտ ըսաեղ կաննել, ով գիտի մի ուրիշ փորացաւ կուներնաս. դու ընկես իմ արևը, ճշմարիտն ասա։

— Ի՛նչ բան, ասեց Արշաւիրը. էս մեր խիզանանցն էլ Աստուած բարի տայ, օխտը սհաթ փսխում են, դեռ թունդրի անթեղը նոր են բաց արել, ամարի մուխը առնը բռնել ա, ընչանք քուրսին դնիլը խելի վախտ կը քաշի, ոտներս էլ սառեց էլի՛... համա գիտես ինչ կայ. էքուց ծառզարդար ա (գիտեմ հիմի կասես ժամիցը ես եմ գալի, ողորմի Աստուածը դու ես ասում). ուռպտի օրհնեն, ժամուդը լաւ հանդէս կըլի, ազապ աղջկերքը, պտի հարսները լաւ լաւ չորերի բողչէքը բաց պտի անեն, երեխէքը փառք ի բարձումին ճօճօնակները ու ճեռները * պտի ածեն. մեր տղայ, ինչ կըլի ազապ աղէքանց հալը ժամի դրանը, Աստուած ոչ չհանց տայ, Մողնու նախրիցը չատ կըլին. դու հօ որտեղ աչ, ընտեղ բաշ էլի (*որտեղ կերակուր, ընտեղ գլխաւոր*)։

— Ըսէնց սովորութիւնը կարուի՛ մեր միջից, ասեց գլուխը պարտելով Գարեգինը. մեր դեղի էս մի բանը շատ վատ ա, էս ինչ քրիստոնէութիւն ա. ամէն երկներուս, ասում են, ամեն կիրակի մեծ ու պատիկ ժամ կերթան, նրանցում ամէթ չի կայ. հէնց մեզ համար ա որ չահել աղջկերքը ու պտի հարսները տարին երեք անգամ են ժամ գնում. մեր աէրաէրներին էլ Աստուած բարի տայ, բողաղներին հուպ տաս,

* ճօճօնակն երեք տախտակից շինած խաղալիք է որ իրար խփելուս չղկղկում է. իսկ ճեռն նոյնպէս փայտից շինած խաղալու գործիք է, որ պտտելուս ձայն է հանում։

երկու այլ չի վեր ընկնիլ, անչախ մաշտոցին են չան տալի, էլ չե՞ն ասում թէ քարոզչեն, բալքի էս սովորոյթը վերցուի. ես տէրտէր ընէի, տես մին օր կթողայի՛ ըսէնց։

— Էս լաւ սովորութիւն ա ջնչ, ասեց Արշաւիրը. մեր հարսները էրէկուանից իրանց չորեքը հանել պատրաստել են էքուցուան համար, թէ ամէն օր ընէը ժամ գնալը էլ ջինչ սրտով կերթային. մարդկանց սովորութիւն ա որ միշտ ժամ գնան. ուր են, հինգ մարդ անչախ ես թռռով կանում օրը, էն էլ ըզգնած հալիւորները, չատ օր էլ տէրտէրն ա ընում, ժամհարը ու չորս սինը։

— Ժամ գնում են հէնց գիտես աղօթք են անում; ասեց Գարեգինը (պատառներիցը սավահի). ամէն մարդ իրանց բարեկամներին ընտեղ են տեսնում։ ով գիտա թէ ջինչ բաներ են խօսում։ մեր Սօսն էլ ասում էր որ կիրակի օրը ժամ պտի գնամ։ նա տարին մի հետ անչախ ա գալի, ի հարկէ ընդուր համար որ ձեր վարդևթերին պտի տեանի, անճախ մի ֆրանգ ա ջցել (յաջողացրել), փորը գետինը քսելով մեռաւ խեղճը ձեր աղչկայ համար։

— Տես, Գարեգին, ես գիտեմ ընենց կանէք, ժամ էլ չեմ թողալ դայ մեր աղչիկը, ասեց Արշաւիրը. ըտուր համո՛ր ա հիմիկուց պատրաստուում; լա՛ւ, լա՛ւ, հլա տե՛ս է, աշխարհքս քանի գնում չարանում ա, աղչկէքն էլ չեն իրանց

հալին կենում. մեղնից յետոյ Աստուած աւելի չարից փրկի. Հայ աղչիկը էնքան համարձակի, որ իրա միչին աղայ ջոգի սիրի՛. ով ա լսել։

— Ընչի՛ ես ըսէնց խօսում, Արշաւիր, ասեց Գարեգինը. ժամ չթողալով ի՞նչ պտի անես. ջա՛նմ, մի աղայ ա՝ մի աղչիկ, էրկուան էլ իրար սիրել են, թէկուզ Թաքաւորի տղի էլ տաք՝ սիրտը տաք չի ընկիլ վրէն. մեր Սօսը չատ գիշեր անքուն ձեր դրանը անց ա կացնում։ ո՛չ Լէյլին ու Մաջլունը, ո՛չ Փեթարամն ու Աւլին, ո՛չ էլ աշուղ Ղարիբն ու Շահ-Սանամն էնքան սիրով չեն էլել ինչքան էդ երկուսը. չատ քիչ կը պատահի աշխարքումս ըսէնց բան։ ես քանի մեր Սօսին խրատում եմ, որ յետ կենայ էդ բանիցը, հէնց իմանաս թէ իմ խօսքերը ցախ են գառել նրա սրտի կրակը աւելի բորբոմ թեժացնում; աւելի ա վառուում քուքերը սիրովը. ես գիտեմ թէ ձեր վարդևթերն էլ ջինչ սրտով ա սիրել մեր Սօսին. ինքը հովարդ ա, նրան էլ բիւլբիւլ ա չինել. հէնց իմանաս թէ անուշը գիտութեամբ գրած ընկիր վարդիթեր, որ մեր բիւլբիւլի անուշ քունը կարի. ո՛չ մի աշուղ էնքան խաղ չունի ասած՝ ինչքան նա. ո՛վ դրանց ջոկի իրարից, Աստուած էլ նրանց ջոկի, նրա մուրազը փորումը մնայ։ Գիտես, դու ըսէնց ասելով ուրիշ բան ես գլխի գցում, ուզում ես փախցնեմ, իմ ձեռին չատ հեշտ բան ա. գորթ ա՝ ես չատ զօչաղ չեմ; համա Սօսի համար գլուխս վեր եմ դրել. ինչքան էլ նեղութիւն քաշեմ

Նրա համար, ոչինչ. նրա սիրտը չահիլը Թանգ աժի ինձ համար։

Արշաւիրը տեսաւ որ Գարեգինի սիրտը առնուեց իրա խօսքիցը, լեզուն ծռեց.—էն ազ ու հայը վկայ, ասեց նա, որ իրար հետ կարել ենք, ես հանապ եմ անուս, ես սրտով ուզում եմ Սօսի պէս վեսայ ունենալ. համա էգ անիրաւ հէրս ու մէրս կամք չունին տալու. քանի ես խօսք եմ բայ արել, առարկու քցել, բերնիս էկել են։ Ես լաւ գիտեմ որ Սօսի պէս աշխատասէր, մարդի սիրտ բայ անող, ուրախ ու չազ տղայ չի կայ, իլլաքի նրա հրեշտակի ձէնը, որ ամէնի բերանը բայ ա թողել. մի Սօս ա՝ մի դեղ, հէրս ուրիշ տալի ա ուզում տայ՝ մէրս ուրիշ. տեսնում եմ, որ երկուսն էլ հարուստի են ման գալի, Թքեմ հարստութիւնի միջին, մարդ իս համար վողն ու հողը մին ա, դու մի վախիլ, վերջը մեր խօսքը պտի ըլնի. երկուսի միտքն էլ չոկ չոկ տղի վրայ ա, Թէ խօսքները մին ըլնէր՝ ահ կար, մի տան չերէկի որ երկու տանտեան ձեռի ըլնի՝ շուտ բաժանք կըլնի. երկու գժին մի խելօք կըլնի. հալբաթի վերջը բանը պտի ձեայ վարդիվարդի վրայ, նա ում ուզենայ, նրան կերթայ. Աստուած տայ, որ բաէնց ըլնի... Սօ՛սը, Սօ՛սը, Գարեգի՛ն, էս ուր ա էս վախտ դբայ յիգ՛անիքը գարըլել, էս վախտ քնչ բան պտի ունենայ. մի ձէն տուր տեսնենք ուր ա էթում... համա էլ քնչ ձէն, նա վախաս, ով գիտի, քնչ չտապ բան ունէր։

Գարեգինը տեսնելով Սօսի վռաղ վռաղ անցկենալը՝ սև ու մութը գլխին էկաւ. մի քիչ չփոթուած ձեայ ու յետոյ առանց Արշաւիրի հարցմունքին պատասխան տալու՝ ձեաս բարով, ասեց, ես գնում եմ, մրսեցի, ու հեռացաւ։

Արշաւիրը լնչքան ուզեց հետ կանչիլ, որ բալքի կարենայ Սօսի կողմից մի բան իմանալ, նա անկալ չարեց. գնայ դբայ իրանց տունը. համա սև ու մէին կերթայ իրանց տունը. նրա գլուխը մի ընէնց քամի մտաւ, որ ինքն էլ չիմացաւ, Թէ քնչ անի, քուչէն ծռուեց Թէ չէ, մէկ էլ քուչովը յետ գառաւ. մէրը կորցրած հորթի պէս նա սկսեց վազել յիգանոնց քուչովը։ Մի քանի իլ դեռ նոր էր գնացել նոր եկած բարակ ԹերԹեփի վրովը, էս ճամփէն բռնեց ու գնաց։

Գնում էր՝ միտք անում ու ինքն իրան խօսելով ասում։ ախ, Սօս ջան, եարաթ ուր գնացիր էս վախտին, չըլնի՞ Թէ տանը քեզ նեղացրած ըլնին, չըլնի՞ Թէ ասել են վարդիվարդին չենք ուղիլ քեզ համար. ես կուզեմ, քեզ մատաղ, իմ ջանը քու ուզուրին վեր եմ դրել, իմ գլուխը մեռած ըլնի, որ դու նրան չառնես, աչխարհս ոչ մի նեղութիւնը չի կարող ինձ էգ մտքիցը յետ դարձնիլ. դու հէնց գիտես Թէ քու ախպէրը քեզ համար հոգս չի քաշում։ էն խաչի ու սուտարանի տակի տուած ողջումը ինձ քնչ կանի, որ ես քեզ մտքիցս քցեմ, չեմ մոռացել քեզ քու ջանին մատաղ, էս սհաթս էլ Արշաւիրի հետ

կռիւս էդ էր։ Աստուածդ չլան, ով գիտայ ո՛ւր գնաց, կարա՞մ գանիլ թէ չէ՛, առանց նրան իմ օրս մի օր չըլնի թո՛ղ... համա ամօ, ըսաեղից մի իզ ա գնացել, կ՚ասես թէ իմ Սօսի կուչկուչուրիկ տրխներըի իշն ըլնի, անպատճառ էն ա, ես դէսը գնամ տեսնեմ։ Վայ գլխիս, չըլնի՛ թէ դըայ ձորն ըլնի գնացած քարափիցը վեր ընկնելու, հէնց ձորի ճամփէն ա, վազեմ, վազեմ... Չէն ա գա-
լի, ը՛ս... էս ինչ ձէն պաի ըլնի, էն հատ պօ-
պօրու (ընկուզենու) տակիցն ա գալի. էլմով, էլ-
մով (կտաց) գնամ, ոտիս չփըլլթուն չի՛մացուի։
Փիչ էլ որ յատաչ գնայ՝ ըսը՛, Սօսը ձեռներով
ղաղալը (չոր տերեւ) քշլում ա արեգունի տեղե-
րումը, հէնց իմանաս թէ մի բան կորցրած ըլնի
ընտեղ։ Տեղն ու տեղը նատում ա Գարեգինը,
լսում ա որ Սօսը խառնչտորում ա ղաղալը ու
աղբար էլած կանչում էս խաղը անմիտք անիլ։

—Ընչանք երբ ես գիմանամ, մայեցիր չանս,
Վարդիթեր,
Կարեցիր կեանքիս թելը, դու իմ հոգեհանս,
Վարդիթեր,
Սէրդ կրակ ա դառել էրում ա չանս, Վարդիթեր,
Հերիք ա ինձ չարչարես, կարի՛ տանջանքս, Վար-
դիթեր։

Թուխ թուխ մազերիդ հիւսը, աղեղնաձև
ունքերիդ հետ,
Հրեշտակի ճակատդ՝ ոսկի-ֆինջան աչքերիդ հետ,

Դրախտի դուռ բերանդ, սպիտակ շարմաղ պռօշ-
ներիդ հետ,
Գրաւել են իմ սիրտս՝ մորթել կենդանս, Վարդիթեր։

Եարթը կըլնի՞ որ բռնեմ լիսաթաթախ ձեռ-
ներդ,
Շընքռվս պաիտ տամ երկար բարակ կռներդ,
Պաչեմ ճակատիս գնեմ, ակնամուտի մատներդ,
Ասեմ թէ էլ գարդ չունիմ, իլ հոգեհանս, Վար-
դիթեր։

Էքուց ժամ պիտի գնաս, գնացած ժամիդ
մատաղ,
Ճամփէդ պաի սպասեմ, կէս գիշերիցն էլ չատ վաղ.
Դուռը կարած կըկաննեմ, որ քու սուրբ երեսի շաղ,
Արեւի հետ լինէ դիպչի, կաջողի բանս, Վարդիթեր։

Մանիշակի եմ մանգալի, քեզ ընծայ տալու
բերեմ,
Որ ամէնքը իմանան, թէ ես իմ խօսքին տէր եմ,
Մարտ ամիսն ա, հեչ բան չի՛, ով կասի ձիւնը
քերեմ,
Մատներս թիակ չընեըլ՝ն, անեմ էս բանս, Վար-
դիթեր։

Հայաստանումը մի հատ ես, ոչով չունի քեզ
պէս եար,
Քեզ տեսնող աղաչ տղէն գլուխ կտայ քարէքար,
Կուշի սէրդ իրան քաշիլ, մեռնիլ հետդ բարեբար,
Համա գամիս ձեռիցը, կիսուրի կռանս, Վարդիթեր։

Սօսի դարդը քանի կայ՝ խօսքիցը չեմ դառնալ,
Գիշեր ցերեկ անհանգիստ, գլխին տալ պտի ու լալ.
Երբ քեզ կառնեմ կպրծնեմ, հայ կաւեմ կուշտ ու հալալ,
Բան ու գործս կվճողամ, կնստեմ տանս, Վարդիթեր։

Սօսը կրակուած էս խաղովը՝ Վարդիթեր ա կանչում։ Մին կաննում ա ու մին քաշում՝ որ մանչակ չի դանում, մին էլ չեմ կռանում ա զանգալը քրքրում։ Ո՞վ ա լսել թէ էս ցուրտ վախտին, դեռ որ նոր ա ձիները վերկացել, գաղալը չեմ տան, տակիցը մանիշակի մուն գան, համա ով որ աշխատի՝ նա կուտի. գոլթ որ մի գարնիւս տեղ, որտեղ արևի գոլութիւնը շատ էր տաքացրել գետինը՝ մի քանի հատ գտաւ։ Պտի իմանանք, թէ Սօսի սիրտը ինչպէս ուրախացաւ, որ իր ուզածին հասաւ. կէս թագաւորութիւն իրան տալիր, էնքան չէր ուրախանալ, ինչքան էս մի քանի հատ նոր դուս եկած մանիշակի համար։ Քաղեց ու հազար անգամ Աստուածուն փառք տալով ասեց. իմանում եմ, որ իմ ու Վարդիթերիս սիրտը մին ա. ես որ էս ցուրտ վախտը կարացի նրա սիրտը շահել մանիշակով՝ նա էլ ինձ կուրախացնի իրա սիրտովը։ Համա, Աստուած չանի, ով պտի տանի իրան տայ, երբ պտի նա դուս գայ որ տամ իրան, կարամ էս գիշերը ժամ գնալիս հասցնիլ. ախ էդ չի ըլնիլ, նրա մէրն ու

հարսները հետը կըլնին. էն խեղճը մոր ժանգոտ երեսին մութ տայ թէ չէ, կարա՞յ չուտ ու չառաջ ընկնիլ. ես դիտեմ էն դարմանի տակի ջուրը հիւանդ խեղճ աղջկայ երեսը պոկել ա, ու քանի՛ քանի՛ թամքահներ արել, որ ժամի ճամբին հարսներն ու մէջլուցը դուս չի գայ, ուրիշի խիզանոց հետ չի խօսայ. բա՛ ինչ քար քցեմ գլխիս, ինչպէս տամ իրան։ Գարեգինս թէ իմանայ, ինձ կրակը կքցի կհանի. ամէն օր նա ինձ ասում ա, որ ես առանց նրա խօսքին բան չի բռնեմ; ես էլ խօսք եմ տուել, ինչ անեմ, ասեմ չի՛ ընկիլ. չա՛սեմ չի՛ ընկիլ. երկու ջրի արանքին եմ մնացել. թէ չի ասեմ, ես չեմ կարալ էս մանիշակը տալ իմ սիրտը էրողին. թէ ասեմ, վա՛յ թէ նեղանայ. համա ինչ ուզում ա ընկի, պտի աս... (խօսքը փոխում ա). Աստուած չա՞ն, էս ո՞վ ա մեր խեճեճակենի (շուտ կոտրուող) պօպօքու տակին տալդումը նստած. վա՛յ, հարա՛յ, ես չի՛ կարացի իմ սրտի խորհուրդը ընչենց պահիլ, որ թաքուն մնայ. հիմի ինչ անեմ որ էս մարդը լսած ըլնի։

Սատանի սերունդ էր ըտեղ բուսնեց, էրթամ տամ ըսպանեմ։ Նալա՛թ քեզ, չար սատանայ. եարաբ էս ո՞վ պտի ըլնի. սա իմ բուստնը (հետքը) պահելով էկել ա քամակիցս, ես դրա կարմիրը հիմի կըկապեմ։ փորը-մորը երբ որ վեր ածեցի՝ թո՛ղ էն վախտը պարծենալով էրթայ իմ խորհուրդը պատմի իր հընկերներին։

886-2014
ՀԱՅԿ-ՍՕՓԱ.

— Էյ, ո՞վ ես, դուրս արի, թէ չէ՛ մենձ թիւ-քեդ ականջդ ծռաց, ասելով հանուամ ա Սօսը դա-մէն ընիցը (բնիցը). մի քթաչ արինդ եչէ՛ւզեցի. ո՛վ սուրբ Գէորգ, դու իմ կռանը զօրութիւն տաս: (Երեսին խաչ ա հանուամ)... Գարեգինս ա, վա՛յ գլխիս, Գարեգինս (չուտով զամէն դրեց դնի մէջը). աղաչե՛ր չան, քեզ մատաղ ըլնիմ, ի՞նչ բան ունիս ըսաես, իմ հոգու իւղաբերի մա՛ւամ; սրտա-յաւ Գարեգի՛ն չան, քեզ ո՞վ ասեց էս ցուրտ վախտը քու չուարայ աղպօր հետ մանդաս. ես գիտեմ հայ էլ չես կերած ըլնիկ, վա՛յ, ես ի՞նչ գլուխս քարը տուի, ըսաեղ էկայ որ քու հայն էլ հարամ էլաւ, ա՛յ իմ կերածը հարամ ըլնի: Դու վախեցար թէ կո՞րել եմ, վախիկ մի. քանի քեզ պէս աղպօր, քանի Վարդիթերի չունչը բեր-նիս ա՝ կորչիլ չեմ: որտեղ ըլնիմ՝ կգամ: թէ կուզ Վարդիթերի սիրովը հարբած՝ Ալագեաղու գեօլի բոլորքին վարագի պէս պրտիս հերսիցը գեամինը քարուքանդ անելիս ըլնիմ, թէ կուզ էլ յետ խելքս գլուխս էկած՝ մեր սուրբ Լուսաւո-րիչ պապի անպարան կանթեղի տակին Ալագեա-ղու հաչումը (ծայրումը) աղօթք անելիս ըլնիմ *, էլ յետ կը գառնամ:

* Ալագեազն է Արագած լեռան, որի գլխին, ինչպէս պատմում են, կայ մի մեծ լիճ: Կայ և մի այնպիսի աւանդութիւն, իբր Թէ երբ Լուսաւորիչը աղօթում էր այս լեռան գլխին, մի անպարան կանթեղ լոյս էր տալի նրան գիշերը և այժմ կայ, արժանաւորաց միայն տեսանե-լի: Այս անպարան բառի կրճատեալն է որ Արագածոտն գաւառին ա-սում են Ապարան ըստ աւանդութեան:

— Սօ՛ս, էս Աստուած վեր կունի՞, ասեց Գարեգին, ինձ էս վախտ պարզիկի տակին ա-պրախտ ես չինուամ. դու չե՞ս գիտում, որ քու էս-քան յետանալիս՝ քու Գարեգինը հազար ու մին մարթեր անելով, ձագը կորցրած սարեկի պէս գլուխը քարէքար՝ իրան սարէսար տալով՝ պտի որտեղ ըլնիս քեզ գտնի. քանի՞ անգամ քեզ ա-սել եմ, որ մի տեղ գնալիս դշի թևի հետ էլ ա ինձ իմաց արա՛, որ ես քեզանից երկմիտ չըլնիմ; դու չե՞ս գիտում, որ թէ մի սհաթ յետի տեսնեմ քեզ, հոգիս դուս կգայ, ըտենց ես աղաչեր պա-հում. համա մաշալլա՞հ քեզ, Հայ ես էլի՛. Հայը իր խօսքը դեամի՞նը կըբցի, Հայը իր թքածը կլի՞ղի, Հայը սրտով ասլան ա, հընկերասիրութիւնով էլ տատարակ, համա քու միջին էդ չըկայ, մենակ սիրտդ ես ասլանի չինել, էլ հընկերին մտիկ տալ չի՛ կայ: Դու ընչանք իրիկուն էլ որ Վարդիթեր կանչելով սառցի մէջ մտնես, հէնց կիմանաս թէ Վարդիսորին Հանալանքայ գետումը կռներդ փը-ռած լեզ ես տալի. սէրի կրակը, ասել են, թէ Մաս-սի դլխին գնես, տապանը կերևայ: Ես քեզ քա-նի՞ անգամ ասել եմ, որ դու հէնց իմացի, թէ Վարդիթերը մօտիդ նստած ա, դու նրա համար հոգս մի՛ քաշիլ, էդ իմ պարտքն ա, քեզ ի՞նչ կայ:

— Ախ. դու ամէն վախտ ըտենց ես ասում, ասեց Սօսը. համա մի օր չե՛լաս որ բանը գլուխ դար, չատ էլ ըլնելու էլ որ ըլնի, համա ընչանք

չերը կըթըչի՝ հիւանդի հոգին կըթռչի, ընչանք էդ բանը կլինի՝ ուղտի պոչը գետինը կհասնի... Է՛հ, ես մեղայ Աստուծոյ, քու ասածը թող ըլնի, ըստուց յետոյ էլ դարա չե՛մ անիլ, ի՛նչ կանես արա՛. ինչ ասես անկալ կանեմ; սիրաս սուփրայ չի, ամէն տեղ բանամ: ուրիշը չէ, դու հո լաւ գիտես:

Գարեգինը խօսքը փոխելով ասեց նրան.—էդ ի՞նչ ա բռիդ մինչեւ. էս վախտ ըսաեղ ընչի՞ համար ես էկել, տօ՛ էդ մանիչակը ո՞րտեղից ա, համա տղայ ես հա՞, արի՛ էրթանք, ես սառեցի ըսաեղ, քեզնում խղճմտանք չի կայ:

Բ.

Էն իրիկունը, երբ որ արեգակը ծովի մէջը մտաւ, աշխարհը մութը բռնեց, ամէնքն էլ գնացին իրանց տները ու հանգստացան Աստուծոյն փառք տալով, ու ամէն օրուանից թէզով քնեցին, որ առաւօտը շուտ վերկենան ժամ գնան՝ ծառզարդար տեսնելու ու օրհնած ուռ առնելու՝ որ բերեն իրանց տանը պահեն ընչանք մէկել տարին: Պատի հարսները ու աղապ աղջկերքը վաղուց հէնց պատրաստել էին իրանց լաւ լաւ չորերը, վաղի առակի պէս, դեռ ջրի ափը չի հասած՝ տոները հանել էին:

Վարդիթերի վահան աղբօրը էս տարի էին պատկել· խնամոնց տանիցը սրանց տունը մի խօն-

չայ էկաւ, որ էքսի օրը Թէլլիղարին (պատի հարսին) հէրանց պատի տանեն ժամիցը դուս գալուց յետոյ: Թէլլիղարի մենծ քերը (Եաղերը) խոնչի հետ էկել էր:

Խոնչէն բայ արին, աչքդ բարին տեսնի. Աստուծու մի բարի կար միջին. օրը մենծ պաս ա, համա Աստուծոյ տուածիցը պատի բարութիւնները հաղար. չիրբախտով գաթայ, հողի մաթով (ուռք, բաֆլաղ) հալուայ, պաստուց տօլմայ, լաւ չամչալի, աղջանաբաթի չրով փլաւ, տապակած բոխ, մինը մնիցը չատ լաւ. Թերմուռնը (օշարակ պղպեղով եւ ուռքով շինած) հօ էնքան քաղցր էին չինել, մի թաս խմողի սիրտն էրում էր:

— Շէն կենայ մեր խնամին, ասին ամէնը մի կողմիցը, ու Հեթումը (Վարդիթերի հէրը) նստեց մէջ տեղ. մեկ էլ տղէքը կարգով չորս կողմը շարուեցին հայ ուտելու:

Համասիւռն էլ (Վարդիթերի մէրը) խոնչէն քաշեց առաջը, հարսներն ու աղջկայ բաժինը տուեց իրանց, մնացողը դրեց սուփրի վրայ, ինքն էլ նստեց յետոյ հայ ուտելու մարդի ու տղէքանց հետ:

Վարդիթերն ու հարսերն էլ ոտի վրայ կանգնած ծառայութիւն էին անում: Նրա սիրտը արին ա դառել, ուզում ա որ էն գաթիցը մինը Սօսին հասցնի, համա չի գիտում ի՞նչպէս անի: Գիտի որ էքուց ծառզարդար ա, Սօսն անպատճառ ժամումը կըլնի, համա խեղճ չըտասրը չի գիտում;

թէ Սօսը իրանց դրանը կաննած ա։ Միաքն էկաւ որ թաքուն մինը աղվխումը կոլըվի, հետը ժամը տանի, բայըվի թէ մի սամթով կարենայ իր սիրեկանի սիրտը ուրախացնի։

Խնամի Շողերը ծանրագօգօթ մի քնջում նատել ա ու սուս կացել. Հեթումը սկսում ա նրա հետ քաղցր խօսիլ, նա էլ գլուխն ա տըմբամբացնում; հա աւելու տեղակ։

Խնամի Շողերի առաջը չայ զանաւուղ բաշօրթիկ (գլխաշոր) են խալաթի դնում; խօնչէն բերելու տեղակ. նա էլ ճանճին անող ձիու պէս շուտ շուտ գլուխն ա տըմբացնում; սաքի թէ չնորհակալ եմ։

— Մեր հարսին քեզ ենք տալի, ասեց Հեթումը, լաւ պահէք ընչանք կանանչ կիրակին, որ բարով էն օրը հասնենք, չենք թողալ ձեր տանը։ Աղջի՛, Թէլլիզա՛ր չան, ըստեղ արի՛. չըվնի՛մ չիմանամ որ քօղրը երեսիդ վեր ա կացել հօրանդ տանը. հէնց արա՛, որ հարևանները քու չուաքդ տեսնիլ չի կարենան. հօրդ ու մօրդ լաւ պատիւ տո՛ւր. էս վաղինը չի. իրիկունը քնելուս ոտները տրորի՛, ոնց որ մեր տանն իմն ու տեքերտանդ տրորում ես. չորերը հանելուս թևը քաշի՛. առաջ նրանց քնացրո՛ւ՝ յետոյ դու գնա՛ քնի՛ր. առաւօտենց տեղիդ ծեքելահան վեր կա՛ց, տներն աւլի՛, ուսապորդ քցի՛, կուժն ուսի՛, գնա՛ չուրը բեր, հօրդ ձեռին չուր ածա՛. որդի՛, հէնց արա՛ մեզ չի՛ ամաչացնես, մատով չհանց տալու դառնաս.

ըստուց յետոյ ինչ պակասութիւն ունենաս, մերն ա։

Կեսառն էս խրատները արճճի պէս հարում էր Թէլլիզարի անկաղումը. խնամունց կենացը խմում էր, որ իրանք ըստեղ չէին, համա մտքներն ըստեղ էր. խնամի Շողերին ծիծաղացնելու բաներ էր պատմում, նա էլ ամօթիցը գլուխը կախ էր քցել, երեխէն խաւել ու նստել. մերն ու աղէքն էլ Հեթումի խօսքերը հաստատելու համար մի վին մասալէք էլ վրայ էին բերում։ Համա վարդիթերը հէնց իմանաս, շուաքն ըլնի ընտեղ. իր հոգին մէնակ Սօսի հետ ա. ոչինչ բան աչքը չի դալի. աչքերը խփում ա՝ Սօսն ա առաջ դալի. բանում ա՝ հէնց գիտայ թէ Սօսի խոտուտը վախչում ա։

Նրանք հացից վերկացան, Աստուծուն փառք տուին, երեսներին խաչ հանեցին, խնամուցը շնորհակալութիւն արին, հիմի Հեթումը հրամայեց որ խնամի Շողերին էլ հաց ուտացնեն, լաւ պատիւ տան։ Իրանք երբ որ քնեցին պրծան՝ մի քնջումն էլ խնամին, հարսները ու վարդիթերը նատեցին հացի։ Աժէնքը սուփրի միջի էլած չէլածը լցնում են մեր խնամու առաջը, թէ համեցէ՛ք անուշ արա՛։ Նա էլ յետ վեր ա ունում դնում սրա՝ նրա առաջը ասելով, ես կուշտ եմ, շնորհակալ եմ ու նորն ա անում հաց ուտելու։ Մենծ հարսը զօռ անելով ասում ա.—քու ճարը գայ,

ասինք թէ սուած ես էկել դէ՛ լա՛ւ, ա՛ռ էս մի թաս թէրմուն էլա անուշ արա։

— Խնամի՛, քա՞ սուրբ Գէորգը վկայ, չե՛մ ուզում, ասում ա Շողերը, համա ի՞նչ անեմ խաթրներդ ադիզ ա. վա՛յ, ամա՞ն, մեծ խնամին զարմանն կընկի կըտեսնի՝ հիմիկ թուք կընկինք. յետոյ թաս ու մեկնելով մեծ հարսին՝ ասում ա. —խնամի ջա՛ն, թաս քեզ ողջութիւն։ Նա էլ չի առնում ձեռքիցը՝ ասելով. լաւ ձեռի ա. խնդաց անուշ. յետոյ սաքի թէ չարէն կարուած՝ ասում ա մենծ հարսին, խնամի ջա՛ն, սաղ ընկիս, քու աչերն ապրի, Աստուած քու երեխէքը քեզ բաշխի. (միջնեկ հարսին) խնամի՛ ջան, Աստուած քեզ ղօչ որդի տայ ուրախանաս. ճղքճղքնոտիս. Աստուած մեր խնամուն սաղ պահի քեզ համար. վարդիթե՛ր ջան, քեզ մի բարի նշանած ընկի, բաղտդ կարուկ ընկի, Աստուած քու սրտի մուրազը կատարի, քու աղաչերանքն ապրին. Թիլիփո՛ր ջան, պարզերես ընկիս, հնազանդ ծնաս, ոտդ ղադամով ընկի էս տանը, ծլիս, ծաղկիս, իրար հետ հալիւորիք, իրար հետ պառաւիք, մի բարձի սիրանաք, դու սրանց ոտի հողն ես. տէր Աստուա՛ծ, քեզ փառք ընկի։ Ամէնքը միասին պատասխան տուին. չատ սաղ ընկիս, Աստուած էդ մի երեխէն քեզ բաշխի, ուրիշն էլ տայ՝ ուրախանաս, քու աչերն ապրի։ Քնթիկալը յետ քցեց, ձեռը լըռնին տալդայ բռնեց մեր խնամին, մի քիչ խմեց ու յետ էր ուզում տալ (թեպետ կա-

ռիկն էլ չի թռչեց)։

— Ֆա, վայ, թէ Աստուած կըսիրես, անուշ արա, մենծ հարսն ասեց։

— Չէ՛, չեմ կարող, հերիք ա։

— Դէ լա՛ւ՝ իմ խաթեր համար, անաչէ՛ն, թէրմուն ա, հօ դինի չի։

— Դէ ասում ես ի՞նչ անեմ, կարամ խաթըդ կոտրի՞ր։ Էլի քնթիկալը յետ քցեց թէ չէ՝ թէրմունի տակի տաքդեղն (պղպեղ) էլ չի մնայ։

— Անո՛ւշ, անո՛ւշ, ամէնքը կամաց փսփսացին ու մի մին թիքայ մաղայ տուին, որը հալուայ՝ որը դաթայ։

— Անուշ կենաք, ասում ա ու մաղէն առնում։

Ամէնքն էլ կարգով սկսեցին մի մին թաս թէրմուն խմիլ, ամեն թասի վրայ մենծ պասիցը երկար շնորհակալութիւններ. վերջը Վարդիթերին էլ մի թաս տուին։ Նա հողը գլխին, ցեխն արևին կըխմի. նրա դարդը, կասես թէ, էդ մի թաս թէրմունն ա. նա օձի փուշ, մարդամուշ ընկի կըխմի ու էդ չէ։

— Շնորհակալ եմ ասեց, ես թէրմուն չեմ սիրիլ, ձեր խնածն էլ իմն ա։

Հարսները վատուց գիտէին Վարդիթերի դարդը, հաւա չէին ուզում խնամու կշտին իրանց տան սուը բանալ, ոչինչ չի՛ խօսեցին, համա մեր խնամին հէնց ղօռ ա անում, քեզ մատաղ, խմի,

ես սիրում էի՞, ձեր աղիկ խաթեր համար խըմեցի. դու էլ մի քիչ բերանդ ա՛ռ ու յետ տուր։

— Չէ՛, ասեց, դիտեմ խաթըդ աղիկ ա, համա թէբմունը վեր եմ ասել (ռւխտել)։ Խնամին ինչքան էլ զօռ արեց՝ նա գլուխը տակը չի՛ տուեց։

Նա որ խմոզ ընկեր՝ նրանց չէր մոխիկ տալ. «մարդ մարդի գարդ չի՛ գիտենալ, կէս քչերին ժամ կըկանչի». նրա սիրտը ուզում ա թէ պատռի, նրա աչքերիցը ուզում ա արտասուքը առուի պէս թափի, նա միտք ա անում, թէ ինքըն ըսկնց ուրախութիւնի միջի նստած ա, սև ընկե՞ր էն ուրախութիւնը, հմի Սօսը ի՞նչ տեղ պտի ընկի. օրթում էր կերել որ ընչանք էս դաթիցը մինը Սօսին չի հասցնի՝ բերանը նչխարք չի դնի։

— Աղջի՛, հայ էլ ա կե՛ր, ասեց խնամին։

— Ես կուշտ եմ, դուք անուշ արէ՛ք. մենծ հարսի կողքին էլ թաքուն բրթում ա՝ թէ պրծի՛, վերջացրո՛ւ, էքուց ժամ պտի գնանք, կէս քչեր դառաւ։

Խնամին տեսաւ, որ ամէնն էլ ծիծաղում են, համա վարդիթերի երեսը դառել ա ձմեռան երկինք, հէնց գիտենաս աչխարքիս կոռ ու բեկառը իրանից ընկին ուզում, նստել ա ու սուս կացել։

— Աղջի՛, ախար քեզ ի՞նչ էլաւ. ո՛չ ասում ես, ո՛չ լսում ես, ո՛չ ուտում ես. ասենք հայ

չես ուտում, բերնիցդ հո քրեհ չեն ուզում, մի խօսա՛ էլաւ։

— Չէ՛, ուրիշ բան չի կայ, աստւմ ա, գլուխս յաւում ա, չե՛մ գիտում թէ ընչից էլաւ։

Խնամին չատ տխրեց էս բանի վրայ. վախենալով թէ իրա ոտը վրայ չի՛ եկաւ սրանց տան վրայ, որ գալու պէս վարդիթերը հիւանդացաւ։

Վարդիթերը լնքը հօ հայ չի՛ կերաւ, նրանց կերածն էլ հարամ արեց։ Ամէնքը մի քիչ տաքի թէ այլին ոյին կերան, ու սուլորէն չէն արին, ասելով.—խնամի, դու բարո՞վ, հազար բարի՛. աւել պակասը կըբաչխես. քու տունն ա։

Նա էլ.—Աստուած հացին լիութիւն տայ. չատ շնորհակալ եմ, ձեր տէրն ապրի. ձեր տէրն ապրի. Աստուած մեր բարեկամութիւնը հաստատ պահի. ամէն վախտ գնանք, գանք. տաներս երկար ընկի էս տանը։

Համա ընկնց են խօսում, որ իրանք մէնակ կարան իմանալ. Թէլլիզարը հօ ո՛չովի հետ իրաւունք չունի՛ խօսել. մի մին քնթի տակին մըրթմրթում ա քուերը հետ ու մէկէլներին դէխով կամ ուսով անում։

Հացից որ վերկացան, մենծ հարսը հրամայեց վարդիթերին ու Թէլլիզարին թէ, պրծէք իննամու տեղը նէքսի օթախումը քցեցէք. Թէլլիզար ջա՛ն, դու ու խնամին մի տեղ քնեցէ՛ք. բան չի՛ կայ, էս իրիկուն էլ թո՛ղ տէքրս մէնակ քնի. վարդիթե՛ր ջան, դու էլ գնա՛ նանի ծոցին քնի՛։

Վարդիթերն էլ էդ էր ուզում: վազեց իր բօխչէն բաց արեց. ալ դանաւուղ վինթանէն, բաղդատի աղլուխը, սաղրի մաշկները բերեց դրեց իր բարձի տակը ու մօր կողքին բռնեց տեսաւ դեռ զարթուն ա՝ ասեց. նանի՛ ջան. շուտ վերկացրո՛ւ: Թիւլիզարն էլ էկաւ Վարդիթերի անկաջումը քնթակալի տակիցը փսփսալով ասեց, որ երբ նանը իրան վերկացնի, նա էլ գայ շուտով նրան վերկացնի, որ կեսառն ու տեքերտինքը չի տեսնեն քնած:

— Ամէնն էլ գնացին քնելու. ամէնի անկալն էլ ձէնի էր. ջրօրհնէքիցը դէսը անջախ էս քշեր պտի ժամ գնային. պստի հարսներն էլ հօ էնա աւելի էին ուզում: հարսանիքից դէսը մօր երես չե՛ն տեսած. էդ օրը պտի տեսնէին:

Գ.

Ամէն արարածներն էլ հանդստացան. գիշերը իրա եօրղանը քցեց ամէնի վրայ էլ, աւելի բեզարածների: Աշտարակայ քուչէքումը քամու վզզոցիցը սաւահի սատանայ էլ չէ՛ր ժաժ գալի, մուխթը ականակիր (աղջամուղջ), ջանիցը ձեռք քաշած մարդ պտէր, որ էս վախտ քուչէքումը մանդայ, էն էլ շատ հարկաւոր բանի համար: Համա արի՛ հարցնենք, թէ մեր պարոն Սօսը ո՞րտեղ ա քնած, որ առաւօտը ժամ գայ: Սատանէքը կըքնեն՝ նա ոչ. նա էրէկուանիկ Գարեգնենց տանը քերանը մի երկու թիքայ հաց դնելից յետոյ, վարդիթերենց դրանը մանուշակը եափունջու տակին ձեռումը բռնած՝ ըսուր ընդուր հետ խօսում էր, թէ ի՞նչ ա, կարենայ իրան սրտի սիրելուն մի հնարքով տեսնի ու նրա սիրտը ուրախացնի մանիչակով՝—գարնան չիշակով:

Լա՛ւ ես մարաղ մնել, մեր տղա՛յ, համա օխտը տարի աչքերդ պլստրակին անի՝ նա էս վախտ դուս չի գալ: Վարդիթերի հօր աղբաթը խէ՛ր, ընենց մի տեղ ա տուն չինել, որ ընչանք քշերը չի գայ, նրա դրան դռը վռը (աղմուկ) կարուկիլ չի. թէ նրա դուռը թէ երևանու մէյդանը մին ա: Վարդիթերը էլ մի երեխայ տեսնելուս՝ ամանչելուցը երեսը վարդի պէս կարմրում ա. ո՛ւր մնաց, որ նա էնքան բաղմութեան միջին տանիցը դուս գայ, էն էլ մէնակ:

Տեսաւ Սօսը, որ մութը կոխեց աշխարհքը՝ էլ չի՛ հեռացաւ. մտքումը դրեց. թէ ընչանք կենայ որ ժամհարը զանգակ տայ, բայքի ժամ գնալիս կարենայ իր բուխթէն (արտի առաւկայ) տեսնիլ ու մանիչակը տալ. քշերս էլ ընենց ցուրտ ա, որ թքես, գետինը չի՛ ընկնիլ. կասես, չանգալները քցել են, վերև են քաշում: համա նա հէնց դիտի, թէ օգոստոս ամիսն ա իրա համար:

Սօսը բտեղ շատ ճնալով, ցրտից սաւահի ոչինչ խէր չի՛ տարաւ. միտքն արեց լինքն իրան ու ասեց. բտեղ ցուրտ կուլ տալով բան չի՛ դառնալ. էրթամ էս քշեր Գարեգնենց տանը քնիմ:

Նրանց խիզանն (գերդաստուն) էլ պաի ժամ գնան. մանիչակը կըտամ Գարեգնի քուերը, նա կըհասցնի Վարդիթերիս։

Ասեց ու գնաց գալա Գարեգնենց տունը։ Հասա Աչտարակ արևը մեր մուտ թե չէ, էլ դուռը չի մնալ բաց. Նրանց դուռն էլ վաղուց չի նաճ էր. ծեծեց, բան չի՛ դառաւ. ձէն տալով էլ բերանը պատռեց. քնածն ու մեռածը մին ա. անուշ քնի վախան էր, ո՛չ ով դուռը բաց չա՛րեց։ Զարէն կուրեց, բաշովը նի էլաւ կտուրը, երթիկալը վեր կալաւ, որ մի խուրձը խոտ էր, ու էրթկիցը ձէն տուեց։

Գարեգնի մէրը անճախ ճլմկոտալով (յօրանջել) ասեց.—էդ ո՞վ էր։

— Արի՛ արի՛, ասեց Սօսը, տան դուռը բաց արա՛։

— Տօ դու ե՞ս, որդի. էս վախտ ալաբալայ. էդ ի՞նչ խաբար, խէր ըլնի էս բէվախտին։

— Արի՛ դուռը բաց արա՛, ասեց. խէր չէ՛լաճ՝ հօ շառ չպահ՛ ըլնի, շառը չառոտ մարդին կըդիպչի։

Գարեգնի մէրը դրան փակը մի քիչ լխլխակացրուց՝ չէլաւ. բայնիքը չի՛ գտաւ, մտաը կոխեց կոտիանները բարձրացրուց ու դուռը բաց արուց, գնաց չախմախի տալու ու ասեց, ամա՜ն, Սօ՛ս ջան, գալա տնի տակն արի՛ խմորի թունդրի կողքովը, թէ չէ՛ ճրագթաթը առաչիդ դրած ա

ձէթը լիքը, կըթափես, աչխարհքս ուռուսլահ կանես (անտոտել)։

Ինքն էլ ինչքան ման էկաւ, էն անտէր չախմախանը չի կարաց գտնի, սատանէն վըրէն նստել էր։ Խեղճ պառաւը գլուխը կոխեց քուրսու տակը, կռացաւ, թունդրիցը կրակ հանեց, քուքուրթ էլ չկա՛ր որ կպցնի. սատանային ա է՛. յետոյ թօնթօրալով ասեց. ղկուա՛ ըլնի՛ս դու, թէ գտնուես. սատանա՛յ, սատանա՛յ, մի զատ եմ կորցրել, քթի՛, կէտն ինձ կէսը քեզ։— Հէնց որ էս ասեց՝ ափսոսելով չախմախամանն էլ գտաւ, ճրագ արեց. նստի՛, ասեց, տրխներդ հանա՛, մին էլ պառաւ պառաւ տեղից վերկացրի՛ր, որդի. ի՞նչ էք ինձ չարչարում. ուսով երուսաղէմ պաի տանի՞ք, թէ մատով պաի տեղս քանդէք, որ ձեր կրակումն էրուում եմ. „կովը հորթին, հորթը կովին. գլուխը յաւի նախրարածին“։ Դուք ձեր քէֆին ման էք գալի ընչանք կէս քշեր. ես իմ տղիցն էլ մինը բերում եմ, լմնի ինձ ա հասնում; ընչանք տուն ա գալի. հիմի քու մէրն էլ քեզնից մինը բերո՛ւց հօ. ախար դուք մեզ ի՞նչ պաի անէք... Փա՜, էդ ի՞նչ ա երեսդ կապիտ լեզակ դառել. ո՞ր տեղ ես էլել էս վախտ, ձեր տունն ընչի՞ չե՛ս գնացել. խեղճ մէրդ հիմի մեռաւ. տեղդ էլ կըգիտենա՞յ թէ չէ. ջուրը նրան էլ տանի։

Սօսը լիզուն ծամլմըռելով պատասխան տուց.—ուրիշ տեղ չէ՛ի, մեր տանիցն եմ գալի.

պի ըսաեղ քնեմ, որ առաւօտը Գարեգնի հետ մի տեղ ժամ գնանք։

— Խեղճ պառա՛ւ, սաքի չե՛մ դիտում; ինձ ուղում ես խաբի՛ր դու թէ տանիցն ես գալի, ես Աստծու պատժին դամ։ ո՞վ դիտայ որ տեղ ես էլել. սաքի ես չեմ իմանո՞ւմ։ էն ինչ քու մտքումդ ա, հրէս իմ դրնդումը (ձեռին մէջ) դրած ա. դու Հեթումենց դրանն էս էլել։

— Ջէ՛, բիբի ջա՛ն (horafoyr), ասեց Սօսը. ես ընտեղ չեմ էլել, հոգուդ մեղք մի անիլ. է՛հ, ասա՛, Գարեգինը ո՛րտեղ ա քնած՝ մտնեմ կուշտը քնիմ։

— Կա՛յ, կա՛յ, վերկացնեմ, ասեց պառաւը։

— Ջէ՛, չէ՛, քնահարամ մի՛ անիլ, ես քիչ եմ քնահարամ՝ դրան էլ մի՛ թողալ մի դինջ քնի։

Ուսուլով չորերը հանեց Սօսը, մտաւ Գարեգնի ծոցը ու թէչք ընկաւ. երբ որ իմացաւ թէ խիղանն էն գլխէն չուտ պտի վեր կենան ժամ գնալու, աղաչանք արեց պառաւին, որ իրան էլ նրանց հետ վերկացնի, Անուշի (Գարեգնի պատիկ քուեր) հետ բան ունի, որ հէնց ըտուր համար էլ էս կէս քշերին իրանց տանիցն էկել ա։

Սօսը, որ ընչանք ոտի վրա Վարդիթերենց դրանը չորացել էր, ալիր աղցան էր գառնել՝ տեղը մտաւ թէ չէ, էլ իրան չի՛մացաւ. էս օր ես մեռնել, թէ էքուց։

Համա Գարեգնի մօր քունն էլ չի տանում։ Նա մի հանգ քուն ունէր, որ պրծաւ, էլ չե՛ր

քնիլ. լնքն իրան, ա՛վ դիտայ ինչ բերթեր էր չինում երկնքումը, էլ յետ քանդում։ Մին էլ լսեց որ Սօսը գլխիցը դուս ա տալիս քնած տեղը. մին ասում ա. Արշաւի՛ր, ինձ մի՛ բռնիլ՝ թող տանիմ, թէ չէ՛ էդ շլոխիկ աչքդ կըհանեմ։ մին ասում ա. ա՛յ ձի, եգին վախի, թէ չէ փորդ վեր կածեմ; ու գհա լսէնց բաներ ա դուս տալիս գլխիցը՝ շատն էլ անհասկանալի։

Իմացաւ պառաւը որ Սօսը քշերս ընտեղ ա էլել, համա չուզեց քունը կտրի վեր կացնի։

Բաղումքը հասել էր Շամփուր-կշեռքի մօտը, Լիս աստղը քանի գնում էր, մենծանում էր ու ներքև էր գալի *, աղօթարանը մօտացել էր, որ Գարեգնի մերը վեր կացաւ տեղիցը, ճրագը վառեց ու աղջկերանցը ձէն տուուց, որ վեր կենան։

Գարեգինն էլ որ տիրացու էր, ժամ պտի գնար, նրան էլ վերկացրուց. համա Սօսին չե՛ր ուզում զարթնացնել, որ նոր էր էկել քնել. ընչունքի սրան էլ Գարեգնի պէս սիրում էր ու նրանից չե՛ր ջոկում. անջոկ էս գլխէն լիսադէ-մին մի քիչ քնել էր։

Համա նրան, հէնց իմանաս, մինը կողքին բրթող ըլնէր. էն սհաթը տեղիցը վեր թռաւ։

Գարեգինը որ աչքերը ճմռելով, արշաւտա-լով չորերը նոր էր հագնում՝ երբ տեսաւ Սօսին

* Գուշակող աստղերն են, որով Հայաստանումը ճիշտ կիմանան գիշերուան ժամանակը։

իր կողքիցը վեր կենալիս՝ զարմացաւ՝ու հէնց, ուղում էր հարցնել, նրա աչքով անելուցը իմացաւ բանի տակը ու սուս կացաւ. վախեցաւ թէ չըլնի մէրը բան կարենայ հասկանալ, համա ինքը չէ՛ր հասկանում, թէ չէ մէրը նրանից չիսօսածն էլ գիտի։

— Անուշ ջա՛ն, քեզ համար մի բաղդատի աղլուխ կառնիմ, թէ որ իմ խնդիրքը կատարես. հէնց կիմանամ թէ մի թամքած ռախատած ձի բախշեցիր ինձ էս բանովը, ասեց Սօսը, յետո դառնալով դպա Գարեգնի պատիկ քիրը։

— Էդ ի՞նչ խնդիրք ա, որ իմ մուննաթն ես ընկել, ասեց նազ անելով Անուշը։

— Ցե՛ս ի՛նչ, ասեց Սօսը, էս մի քանի մանչիկը թէ որ հասցրել ես վարդիթերին, էլ մնչիլ չես. խօսքս խօսք ըլնի, որ առնիմ աղլուխդ. թէ ես ուրանամ՝ երկու աչքով կուրանամ։

Անէնը մի տեղից մնացին արմացած ու ասելին.—ա՛յ աղայ, էդ մանչիկը ո՞ր տեղից ա էս վախտ. էն էլ պլիվ չի, ծիրանի (տեսակներն են մանիշակի)։ դու գե՞ս ես, ի՞նչ ես։

— Որտեղից որ ա, ասեց Սօսը, գողանալս Աստուած հասցրեց. համա Անո՛ւշ ջան, քեզ մատաղ, իմ խնդի՛րը։

— Լա՛ւ, տա՛ր տեսնիմ, ասեց Անուշը, վա՛յ թուք ու բէդնամ ընկնիմ ես. տեսնեմ երեսս կըբռնի՞ որ ասեմ Սօսն ա ղրկել. համա թէ որ խռովի չի՛ առնի, յետոյ արի՛ էշը ցխիցը դու

հանա՛, փալանը դու դլի՛, նօխաէն դու դլուխը տա՛ր. էլ ինձանում մեղք չկայ։

Գարեգինն էն կողմիցը բարկանալով քաւեր վրա՝ ասեց.—քեզ բան չի կայ. դու տա՛ր, թէ կուզես, հէնց ասա՛ աղլէրս ա ղրկել խնդրում էր որ վեր ունիս. նա ո՛չ իմ խօսքիցը դուս կըդայ՝ ոչ Սօսի. ես որ ասեմ գնա քարափովը վեր ի՛նկ, լահ չի անիլ (չի մեռժիլ), ինձ հնազանդ ա. Սօսին էլ հո՝ էլ—ալամ գիտի, թէ ի՞նչպէս ա սիրում։

Անուշը աղպօր խօսքերը որ լսեց՝ ծպատնը կորեց. առաւ Սօսի ձեռիցը մանիշակը, դրեց բաղդատի աղլխի տուտը, էլմով փակփակեց, որ տրորուի ո՛չ։

Ընչանք դրանց շոր հագնիլ չինուիլը, ընչանք դրանց հարսի գլուխ կապիլը, զանգակը տուին։ Գարեգինը մօրը խէչհամբուր տուեց ու Սօսի հետ մի տեղ առաջ առաջ գնացին ժամ։ Նրանք էլ պրծան. պառաւը դուռը չինեց՝ առաջ ընկաւ՝ տունը աքլորին պահ տուեց, հարս ու աղչկերանցն էլ քամակիցը քցեց, գնացին ժամ։

Գարեգնի մէրը հարսին տարաւ իրա կողքին կաննացրեց. աղչկէքն էլ ժամի քնջումը աղչկերանց միջին կաննեցին, որտեղ Վարդիթերը նրանց յետ յառաջ էկել կաննել էր։

Անէնքը մի քանի ծունր դրին. Անուշն էլ Վարդիթերի մօտ գնաց, մի քանի երեսին խաչ հանեց՝ կաննեց. յետոյ դառաւ նրան բարով տուեց.—քէֆդ լա՞ւ ա, ասեց, ո՞նց ես. նա էլ նրան

հարցրեց։ Հարց ու բարով արին իրար հետ ու դէսից դէնից խօսացին։

Անուշը տեսաւ որ ուրիշ աղջիկերք անկաջ են դնում իրանց, յետ գառաւ դրանց էլ մի լաւ ներկեց, որ ո՛չ ով չի կարայ էլ անկաջ դնել. յետոյ սիլի բիլի անելով՝ խունջիկ մունջիկ գա-լով, քիչ քիչ ժմտալով ասեց.

— Վարդիթե՛ր ջան, քեզ մի լաւ գաս տամ՝ կուրախա՞նաս։

— Վա՛յ գլխիս, ասեց Վարդիթերը, քու տուած փուշը հէնց կիմանամ նուշ ա. էդ ի՞նչ խօսք ա, որ ասում ես։

— Հօ սիրտդ առնուիլ չի՞, հարցրուց Անուշը։

— Ֆա՛, ես քու ոտի տակի հող ու մոխրն եմ; գլուխս էլ տրորես, խօսալ չեմ; գաս տա-լո՞վ պտի նեղանամ, էն էլ լաւ գաս։

Անուշը բաղդատու տուաը յետ արեց ու ասեց.—Համեցէ՛ք, քեզ մատա՛ղ. քեզ համար հէնց բան եմ բերել, որ ո՛վ տեսնի՝ բերանը բաց մնայ, խելքամաղ ըլնի վրէն։

— Ֆա, էդ ի՞նչ ա, ձեռը դնչին կպցնելով ասեց Վարդիթերը. էդ մանիշակը ո՞ր տեղից ա էս վախտ. (իր միջին իմացաւ սատանի պէս. «փէտը վերցնես՝ գող չունը կիմանայ»)։

— Դու հօ լաւ գիտես, էլ ինչ ասեմ; ծի-ծաղալով ասեց Անուշը, գորթ ա վախտս ցուրտ ա, համա գարդիմանդ տղի չանին մեռնիմ։ Նրա ձեռին դժար չի, նա որ քարը գնայ՝ կըկանանչի.

փուշ բռնի՝ ոսկի կըդառնայ. ախպօրս ողջում ախպէրն ա բերել, էն ոսկէքաքուլ Սօսը, մախ-տուս քեզ համար. դէ՛, լա՛ւ, կարմրիլ մի՛ ըտէնց շուտով. էրնէ՛կ, ես էլ քեզ պէս բաղդ ունենայի, ինձ էլ ընէնց ուրախ չաղ տղայ թուշ ընէր, մա-նիշակ չի՛, թէ կուզ գառը բիան կամ ուզար-լուկ (դաղը խոտեր) էլ ըրկէր, հէնց կիմանայի, թէ վարդ ա. համա մեղաւորին ո՞վ ա տուել ար-քայութիւն։ Ես էդ մանիշակը բերում չէ՛մ, հա-մա ապտէրս վրէս բարկացաւ, թէ դու տա՛ր, ասա՛ Գարեգինն աստւմ էր վէր կա՛լ։ Հէլա դեռ էս էլ ասի, թէ խալխի աղջկայ վրա ի՞նչ էրք ունիս, նրան դու հօ ոսվ տարին հաց չես տուել մեծցրել. ինձ ասեց, թէ նա իմ խօսքիցը գուս չի՛ գալ. տուտն ու ղորթը չե՛մ գիտում։

— Ֆա՛ ինձ տուր, ասեց Վարդիթերը, ես քու աղպօր ղարաւաչն (աղախին) եմ։ Նրա աղիկ խաթեր համար թէ կուզ քարափին էլ վեր կըն-կնիմ, չուրն էլ կընկնիմ՝ հուրն էլ. նրա հրա-մանը կատարելու համար՝ վեր կառնեմ ամէն թուք ու մուրն էլ։

— Ձե՛մ տալ, ասեց Անուշը, ընչանք չասես, թէ Սօսի խաթե՛րն եմ առնում։ աղպէրս հօ չի՞ պլուխը քարին, երեսը սարին տուել, մանիշակ ճարել ղրկել քեզ. «բանն ո՞վ անի. ես ու դուն, հացն ո՞վ ուտի, ես ու դուն». Սօսը վրթի, աղ-պէրս խրթի՞. էդ Աստուած էլ չի՛ վեր ունիլ, բանդէն էլ։

— Անո՛ւշ ջան, էդքան մարդի դեմը չե՛ն կոխել ու հանել, ասեց վարդիթերը կարմրատա-կելով. է՛, դու աղջիկ չե՞ս, չե՞ս գիտում բանը. «զառ զադրի զարդեար ը իլուր» (ոսկեղենի արժէքը ոսկերիչը կիմանայ). ո՞ւմ գլխովն ընկի, որ էս քամին անցկացած չընկի. հիմի դու չե՞ս գիտում, որ ես նրան սիրում եմ: Թէ սիրում չընկիմ, դարդս ի՞նչ էր՝ հետդ լինը ահաթ կաստամանին (երկարաբանութիւն) քցել եմ: «Ձուաձեղի սիրուցը, Թաւի կոթը կըպաչէն». գիտեմ որ Սօսին դուք սիրում էք, ես էլ պտի ձեզ սիրեմ; ձեզ պատիւ տամ էլի. Աստուածանից թաքուն չի՛ նրա սէրը, քեզանից ի՞նչ թաքուն ընկի... Ամա՞ն, ըստանք խօսացածներս կիմանան. եաղուղ խաթէն պա-կաս չի՛ մեզանից:

— Հողս դրանց գլխին, ասեց Անուշը. դրանց հէնց չի սխտորեցի. որ մուխը պինչերիցը էլ դուս գայ. էլ անկալ չեն դնիլ, դու քու խօսքդ ասա՛:

— Ինձ Թէ պարան քցեն խեղդեն, չարու-նակեց վարդիթերը, մի քանի ապի տղէք էլ հո ուզում են, համա ես պտի ասածս անեմ; Սօ-սին առնեմ; ես Թէ չէ՛ սև հաքնիմ; վարպետ դառնամ; հոգուս ճամփէն դանիմ: Իմ ու քու աղպօր արևը վկայ, որ գլխից չատ եմ սիրում; ես էս մանիշակը պտի դօշումս պահեմ; ընչանք չորանայ՝ Թերը Թերը վեր Թափի. ես գիտէի, որ Սօսը ինձ սիրում ա, համա էսքան նրա սէրը Թէժ ընկիը՝ մոքից չէր անցկենում: Էս Թաւուր

ձնաչատ տարին, որ դեռ հինգ օր չը կայ ձինը վեր ա կացել՝ մանիշա՞կ. էդ լուսած չի՛. ում էլ ասես, վրեդ կըծիծաղայ. մեր գեղումը էս վախտ անկարելի ա. հալբաթ Երևան կընկի դը-նացած, ես էլմիածին. կընկի որ հաւէն կակղած ընկի ընաեղրանք:

— Չէ՛, չէ՛, հէնց մեր գեղին ա. էս ժամը վկայ, որ ասում եմ:

— Հիմի տա՛ր, դե որ ըսէնց ա, ասեց վար-դիթերը. ա՜խ, նրա չանին մեռնիմ: աչխարքս առուտուր ա, առուկուլ չի. նա ինձ մանիշակ ղրկեց, ես էլ տա՛ս ի՞նչ կըղրկեմ: կըթողա՞մ նրա աչքը ճամփի մնայ. սրտիս խորհուրդը կա-տարուեց: Աստուած ա ու դաթի աղլուխը կունա-տակիցը հանում: Երէկ մեր տունը խօնչայ էին բերել, ասում ա նա. էս օր մեր հարսին պտի տանին հէրանց. տեսայ որ լաւ վղպուզ վղպուզ (փափուկ) դամէք կայլին, սիրտս լցուեց: Ասի ի՞նչ անեմ, որ մինը Սօսիս հասցնեմ, օրթուս կերայ, որ ընչանք չի հասցնեմ, հաց չի՛ ուտեմ: ինչքան էլ գոռ արին, մատս վրէն չի դրի. միաքս էլ հէնց էն էր, որ բերեմ քեզ տամ՝ դու հասցնես. սրաներս ինչ գուզ ա է՞: Ա՛ռ էս աղլուխը տա՛ր. ես ընչանք իրիկուն էսօր պտի ձեր թաղումն ընկիմ՝ խնամինցս տանը. դու կարաս յետոյ աղ-լուխը ղրկի, որ մերս չի՛ ծեծի. ղըրթ ա, ըսէնց հազար աղլուխ Սօսին ղուրբան, համա թո՛ղ մերս

չի՛մանայ. թո՛ղ բառնայ լիզուի տակը չընկնինք, թէ չէ ժուռ ու մուռ կըմեռնինք։

— Ինձ տո՛ւր, իմ աղլխի մէջը դնեմ, ասեց Անուշը. մարդիս սիրտը պաի դուղ ըլնի՝ աղլուխը բան չի կարող չինիլ. խօսքդ կըպահես՝ հալալ կաթնակեր ես, թէ չէ՛, կուզես հաղալ աղլուխս պրկես, որ վերջը խօսքիդ չի՛ կենաս՝ անօդուտ։

Վարդիթերը գաթէն տուեց Անուշին ու ասեց. տա՛ր Սօսիս, ասա՛ քունն եմ՝ թէ կուզ աչխարհքս իրարոցով դիպչի. համա իմ աղլուխը քու գլուխը, ես տղայ դու աղլիկ՝ թէ որ ինձանից յետ կանգնես. արինդ աչքիդ տակն ա՛ռ ինձ համար. ինչ փորձանք էլ որ գայ՝ քաշի. թէ ըսէնց չանես, յաւուր դատաստանին պարտական ըլնիս, Գաբրիէլական փողին արժանի չըլնիս։ Ես քեզ համար մեր պապերի կանոնը քանդել եմ։ Ընչանք օրս լսուած չի, թէկուզ Երևան, էջմիածնին էլ, որ մի աղլիկ մի տղի պոչ բռնի ու բաց չը թողայ. էս բանը ով որ իմանայ, ինձ կրակումը կերի։ Գարեգնին էլ ասա՛.—մաղերս ոսիդ տակին փխանդազ անեմ (ախոռ). երեսս դնեմ, որորես. ես քեզ հնազանդ եմ. Սօսին ձեռաց չի թողաս. իմ հօրն ու մօր քարացած սրտերը բալքի դու կակղացնես, թէ չէ նրանք ապառաժից պինդ են։

Սրանք իրար հետ պրից տուին, ընչանք փառք ի բարձումը պրծան. ու ղորթ ա՝ ընէնց էին խօ-

սում, որ երկուսն էին հասկանում, համա ամէն կնիկ ու աղլիկ էլ տեսնում էին սրանց դունչ դնչի դրած քաղցր պրիցք, որ իրար հետ անում էին. ընչունքի էս օր կնանոնց դասի յետի քունչն էլ չրազուան (ձրագալոյծ) էր դառել։ Ամէն կէսուր իրա պատի հարսի առաջին մամ էր վառել. ասեղ էլ որ կորած ըլնէր՝ կերևար. աղլկէքը հօ՛, աւելի նրանք՝ որոնց աչքը Գարեգնի ճամբին էր, ուզում էին պատուին սրտերի հերսիցը. հէնց իմանում էին, թէ կըլնի որ, վարդիթերը ուզում ա Գարեգնին առնի, ընդուր համար նրա քուերը հետ ձնուշ անուշ խօսում ա. հա թէ չէ, Գարեգնին խաբարներ պրկում։ Համա զո՞ւր էք հոգիքներիդ մեղք անում, ա՛յ խեղճեր։ Գարեգինը ո՛չ բառնայ շուտ իր գլուխը կապող ա, ո՛չ էլ ձեզ վրա աչք բցող. գնացէ՛ք ամէնքդ ձեր աբևի ձէնն ածեցէ՛ք. Աչտարակումը տղեցն աւել ի՞նչ կայ. ամէնքդ մինն առ՛ք պրծէք։

Վերջը փառք ի բարձումն ասեցին. երեխէքը՝ որը ժամի դռնիցը, որը փանջարէքանց տակիցը, որը հէնց ժամի միջիցը ճօճօնակաները ու ճեռերն ածեցին. բոլոնց ձէնները աերաբերների ձէնին կոխեց. ո՛չ ով բան չէր կարում իմանալ փառք ի բարձումից։

Ծերաերը շատ էլ բարկացաւ, ո՞ր մինն ասես. մի քանիսի գլխին էլ հոգլթափով բամբաչեց (խփեց), էլ չէլաւ. մինը չի, տասը չի. տարեկանից ցածին ունի. գեղումն էլ որ տեղ

կորած մնըրած երեխէք կան, էս օր ժամու մը կըլնին։ Զարէն կարեց խեղճ իրիկի, քօս փոչմանն էկաւ տեղը կաննեց, ու—թա՛ւ, թա՛ւ, ասեց, կատրուա՛ք դուք. ըլհըդի ժամ չինեցին էլի. է՞ս ինչ սովրուվիւն ա սօ։

Հէնց փառք ի բարձումը պրծան՝ երեխէքն էլ իրանց ճօճօնակներն ու ճեռներն էնը կարեցին։

Մին էլ տեսնես, ամէն կնիկ իրա հարսին ու աղչկերանցը առան, դուս գնացին. իրանց ոտի տակի պատիկ դօշակն էլ, որ ժամ գալիս հետները բերում էին քցում տակները, տուին աղչկերանց խաիսը, ես թէ չէ իրանք վեր կալան։

Կնանանց ղալմաղալը ճօճօնակների էնից բարձրացաւ. պատի հարսնատէրերը բռնեցին իրանց հարսի կուռը տուին իրիկուան խօնչայ բերող հարսին ու ասեցին.—ամանա՛թ, ամանա՛թ, մեր հարսը ձեզ ամանա՛թ. չըլնի՞ թէ տանէք ապուռն երեսից վեր ունէք, մեզ թուք անէք։ Իրանց աղչկէքն էլ գրին հետները, որ տանին ճամփու քցեն, ընչանք իրիկուն էլ խնամանց տաները կենան, իրիկունը խնամու տղի հետ վեր կենան գան. հարսների էլ թշերը պաչեցին, նրանք էլ նրանց ձեռը պաչեցին ու իրարից ժամի միջից հէնց՝ բաժանուեցին։

Վարդիթերն էլ իրա հարսի հետ գնաց։

Էլ կնանանց գաստումը քիչ վախտից յետոյ լինս ու չլինս (ոչ ոք) չմնաց։

Ադապ տղէքը ժամի դրանը խլթէ խլթ (հոծ) կաննած էին ու սիրուն աղչկերանցը մտիկ էին տալի. ո՞վ չի խմանում, որ մեր Սօսը մի սհաթից յառաջ ընտեղ կըլնի։ Ժամումը մնացին մարդիքն ու երեխէքը, տասը տարեկանից վերև, որ ուռ առնեն։

Ուռը որ օրհնեցին պրծան, հէնց տիրացուն ուղեց մի մին բաժանիլ, մնած ու պատիկ վրայ թափեցին, իրար գլխով գլխան. հէնցը կար տասը ճուղք չըմթեց (խզել), փախցուց. հէնցն էլ եկաւ, որ ոտի՛ տակի կորաւ, մինն էլ չընկաւ ձեռը։

Ձէն ու ձուն, գոռգոռոցը երկինք հասաւ։

Տէրտէրը ձէն ա տալի.—օրհնուի՛ք դուք, կացէ՛ք կարգով վեր կայէ՛ք. ուտելու բան հօ չի՞. փառք Աստուծոյ, Աչտարակ ուռից սալահի բան չըկայ։

Տիրացուն ձեռիցը դաստէն քցեց գետին փախաւ, թէ չէ քիչ էր մնացել իրան էլ տրորատակ տային, ճխլէին. ձեռ քցողը գտակը կռնատակին ժամիցը դուս ա թռչում. երեխէքն էլ, ամէնքը մի մին հընկեր հետները, չուխտ չուխտ առան իրանց օրհնած ուռը, ծէրերը կառցրին ճղքնելի ու գնացին մանդալու տները ուռ կիսելու։

Գնում են, բակերումը կաննում ու իրար հետ ասում.

«Անա՜կ անա՜կ ճօճօնակ,
Աստծու ուռը բանանք,

Մանեկ ժամ անենք,
Դուրս գանք պատարագ անենք,
Զալ եղը մորթենք մնաղ անենք,
Պոդերը չարդախ անենք,
Միչին նատենք, քարդահ անենք.
Մատաղը սիրուն երկու ձու տայ,
Զատկին խաղանք քէֆ անենք,
Մինն ինձ մինն իմ հընկերին.
Ով տայ պիղի բարձին նստի,
Ո՛վ չի տայ, չոր քարին նստի»։

Ըսէնց ասելով ձու էին կիտում տներիցը, ու հէնց էն օրուանից՝ դեռ չի՛ ներկած՝ խաղում։

Մարդիկն էլ ամէնքն իրանց ուռերը բերին տուն, որը պատը խրեց, որը քթալամանի գլուխը, որը սինը, որն էլ օճուքը, որ մնայ ընչանք էկող տարին։

Էլ ըտուց յեթոյ ընչանք կանանչ կիրակին, Աչտարակու երէխէքանց չէբերը լիքը ձու կըլնի. ձու խաղալուց սավահի, ուրիշ բան չը կայ։

Դ.

Առաւօտեան ժամը դուս էկաւ, ծեր մարդիկը հայց չի՛ կերան էս օր, որ պատարագ տեսնին, նշխարք առնին, յետոյ հաց ուտեն։ Ջահէներն էլ ընչանք քուրսին դնիլը մի մին ցամաք

հայց չէբերը դրած՝ դրանը կանգնած՝ կերան։

Սօսը, ղորթ ա, չահէլ էր, համա ախտ արեց (ուխտել), որ ինքն էլ ծամ կենայ՝ ընչանք պատարագը դուս գալը։

Ժամից որ դուս էկաւ, վաղեց դպա Գաբրիէնց տունը մի խաբար իմանալու համար Անուշիկը։ Հէնց գաթէն տեսաւ, աչխարհքն իրանն էլաւ. վեր կալաւ դրեց ծոցը, որ պահի ընչանք վերջանալը։

Պատարագի ժամը որ դուս էկաւ, ուրախ ուրախ Գարեգինն պատմեց գաթի համար ու իրար հետ էկան տուն հայ ուտելու։

— Գարեգի՛ն չան, ասեց հայի վերայ Սօսը. էս իրիկուն գռնաբացիկ ա. բաններս աչ ա. ո՛վ հաչում ա՝ հաչայ, ինձ հինգ հաղար դեան (1 մանէթ 50 կոպէկ) վող ունիմ, Գիւմրի քրեհեմ տարել, ձեռիս մնացել ա, պոի ժամի դուռը բաց անեմ իրիկունա. վարդիթերս ընտեղ կըլնի, թող տեանի ուրախանայ։ Թո՛ղ ուրիշները պատռին. թո՛ղ նա ամէնի մօտ էլ պարծենայ, թէ ազատների միչին սա առաչինն ա, որ կարեցաւ չոմարդութիւնով (առատաձեռնութեամբ) վող տալ, ժամի դուռը բաց անիլ. թո՛ղ ասի, որ մեր գեղի չահէլ տղէքը մի սև վող ձեռներն ընկնելուս, հաղար չուլ փալասում կըփաթթեն, սրբի պէս կըպաչտեն. համա սա մենձ մարդկանցիցն էլ չատ տուուց, սրա չանին մեռնիմ։ Թո՛ղ լաւ վարաւուրդ անի, թէ բանն էն չի, որ մի սիրուն

աղջիկ տեսած սհաթը, ըստուր ընդուր աղաչանք անիլ, ձեռ ու ոտ ընկնիլ, նրանց բարեկամներին ղուլ ընիլ, խօսքիցը դուս չի գալ, կնկան պէս սիլի բիլի անիլ (կեղծաւորութիւն), թէ ինչ ա, էն աղջիկն ուզին իրան. բանն էս ա, որ զօռ ունին, մէյդան գան ամեն բանում: ըսէնց չոմարդուԹիւններով էն աղջկայ սիրտը ուրախացնեն, իրանց վերայ տաքացնեն: Վարդիթերի համար շատ աղասներ են դրադիցը հոտհոտում; մօտ գալ ու հետ քաշուում; մի փուչ բանի համար խօսքներիցը յետ դառնում: Համա ա՛չ ով իմ բանը չի անիլ. էն Թաւսուր տղէքը հէնց մարդի ճամփայ են քարոտում; էլ ուրիշ բան չեն անում:

Թո՛ղ ես իմանամ; որ Վարդիթերը ինձանից սաւահի ուրիչի վերայ միտք Թեքի, սրտովն ացն կացնի նրան սիրիլը, ա՛ռ, Թէ ես սև չալու (փուշ) կըդառնա՞մ նրանց միջին դուս գալու ու նրանց սիրտը կոտրելու. էն սհաթն իմ յօժար կամքովը յետ կը քաշուիմ; կասեմ Աստուած իրանց հետ: Համա իմ սիրահարը, իմ անուշ եարը, իմ դարդ ու դարը, ե՞րբ կը քցի ինձ քարէքարը, ու՞մ համար կը ղրկի գաթէն ու սէրի խաբարը. ախար ընչի՞ցն ա. մի չոմարդուԹիւնն ա, իմ կռան զօրուԹիւնն ա, որ լսել ա՝ չի ուզում ինձանից հեռանալը: Էս իրիկուն էլ, որ փողի միջին Թքեմ, հինգ հազար դեանիցն անց կենամ ձեռնէ ձեռը, էրԹամ տէրտէրի աչն առնիմ, գուռը բաց անեմ; չէ՞ որ Վարդիթերիս սիրտը վարդ կըպատռի. Թէ

որ դիխուշն էլ մի ԹեԹև քամու չափ խեղք ընկի ուրիչների վերայ միտքը փոխելու, շուռ կանցնի ինձ վերայ. աչխարհքս խելօքուԹիւնով ա կերել:

—Սօս, ասեց Գարեգինը. դեռ մի մատս խուփ, դու ըսէնց հալպրատանում ես. ա՛լ հալպրատանայ՝ նա չուտ վեր կընգնի. դեռ մի գաթայ ես ստայել նրանից, շատով ըսէնց լիզուդ երկարացրիր. իրա՞ն որ առնես ի՛նչ կանես. կռնատակերդ ձմերուկ կըդնես, էլ հետդ խօսալ չի ընիլ. ձողս ձէրով վարդը պնչիդ չի հասնիլ. հինգ հազար դեանը ութ օր ձների, բքերի միջին Թիփի ուտելով, ոտներդ ցրտին տալով աշխատել ես, աստմ ես չօմարդ եմ կըտամ. էն հարուստների տղէքը, մի միտք սրա տե՛ս, քանի՞ քեզ չափ ունին. դու որ հինգ հազար դեանով Վարդիթերի սիրտը դողանաս, քեզ քաշես, մի լաւ խեղդ Թօվ արա՛, մէկէնները որ ուզենան՝ քանի՞ հազար դեաններ կըփչացնեն: Մին էլ որ՝ դու Աստծուն ընդուր համար ես պաշտում, որ քեզ խալխին երևացնե՞ս: Աստուած ըսէնց տուրս չի՛ ընդունիլ. մուղայիմ կա՛ց, որ քու տուած փողովը ականաթի մէջ չընկնիս շատ գիտեցող աղուէսի պէս, որ չուխտ ոտով ա բնկել: Մեր գեղումը ընչանք օրս սովորոյթք չկայ, որ ազապ աղէն մեծ մարդին ոտ մեկնի. ըսէնց անելովդ ամէնի աչքիցն էլ կընկնիս. կա՛սեն մոխիկ տուէք սրան, դեռ ձուխցը նոր ա դուս էկել, ուզում ա հինգ տարեկան աքլորի պէս Թևերը Թափ տայ,

կիկլիկի կանչի։ Վարդվթերի հէրը գեղից փոզաւ-
տէրներիցը մինն ա. նա որ քու արածը տեսնի,
սրտի հերսիցը կըճաքի. օրթումմ կուտի, որ ապլիկը
քեզ չի՛ տայ. ընդուր որ ըսէնց անելով իրան էլ
ես քարովը տալիս։ Դու հէնց դիտես դուռը բաց
անելով Վարդվթերին կուրախացնե՞ս. նրա հէրը
որ մի հեա տանը ասի թէ հպարտ տղայ ա, ոտն
իր կարպետին չի՛ մեկնում, նրա սիրտն էլ կը-
կատրի, էլ քեզ չի՛ ուզիլ։ Ուզո՛ւմ ես ողորմու-
թիւն տալ, հէնց տո՛ւր, որ մին դու իմանաս, մին-
էլ Աստուած. գնա՛ ժամիցն առաջ սեղանի տա-
կին չոքի՛, մեռմ ա՛ռ, վառա՛. Մողնու ուխտը
հրէս մնատցել ա, մի ոչխար ա՛ռ, տանի՛նք մոր-
թենք, հում հում բաժանենք. դու էլ մտանա-
ւորուիլ մի՛, սուրբ Գէորգն էլ քեզ համար բա-
րեխօս կըլնի, բանդ կալդի. Ծառայ եմ նրա
սուրբ զօրութիւնին։ Ղօրթ ա, Վարդվթերն էդ
բաները տեսնիլ չի երեսահանից, համա սիրտը
կիմանայ նեքսևիցը. մի նոր կրակ կընկնի, ջանը
կէրի. քու անունը միառ բերելուս հէնց կիմանայ,
թէ մեկել աղատ աղէքը ճանճ ու մոծակ են։
Սուրբ Գէորգն ի՞նչ ուզենայ, որ չի՛ անի. նա մե-
կել սրբերի պէս չի. նա մեր աղէն ա, մեր գե-
ղի տէրն ա. ղօրթ ա՝ ամէն մարդկանց էլ ով
նրա դուռը գայ, հաւարին կը հանի, համա
քէրը ցերեկ Աչտարակցոնց քամակիցը ձիու վրայ
նստած, մղրախը ձեռին բռնած՝ մեն ա գալի.
նրա անունը սր տաս՝ կչոփդ ա։

Սօան ու Գարեգինը երկար խօսալուց յե-
տոյ իրարից բաժանուեցին. Գարեգինը մնաց տա-
նը, Սօսը գնաց իրանց տունը մոր կասկածը վա-
րատելու։

Դեռ Գարեգնենց տանիցը նոր էր մի քիչ
հեռացել, մին էլ տեսաւ, որ Մխիթարը, Մե-
լոժանը ու Պապը մի բոզչայ հաց, մի դաս էլ
գինի ձեռներին էկան յառաջը, բարով տվին ու
Մխիթարն ասեց.

— Ա՛յ տղայ, դու ո՞րտեղ ես գլուխդ թա-
ղել, գնացինք ձեր տունը, ասեցին, երեկուանից
տուն չի՛ էկել. չենք գիտում կըլնի, որ Գարեգ-
նենց տանը ըլնի. էդ ի՞նչ ա էլել քեզ. նա քեզ
համար ի՞նչ դառաւ. Աստծու իր օրը նրանց
տանիցը դուս չես գալի. նա դիտես թէ քեզ
բարեկա՞մ ա. երեսահանց ոչխար ա երևում,
համա սրտանց դել ա. ասի քեզ մին օր մի հա-
ցի հասցնի. գլուխդ մի օյին դայ, որ դու իմա-
նաս. լաւ ա քեզ խաբել գլուխդ տիւտիւի
(թոչուն է) եղ քսել. քեզ իրանց տունն ա տա-
նում չաս անդամ, անուշ անուշ կիրակրներ ա
ուտացնում. դու դեռ աչխարհքիցս խաբար չու-
նիս. քնած ես, ոտներդ ջրումը. խե՛ղճ ողորմելի,
ըսէնց աղպեր տղէքը թողել ես, գնացել մի սա-
տանի պոչ բռնել։

Սրանք ըսէնց Գարեգնի համար վիս-վիս
բաներ խօսալով՝ ուղեցան բալքի Սօսի սիրտը
կոտրեն նրանից, որ իրանց ուզածն անեն, ըն-

չունքի գիտէին, որ ընչանք Սօսին ու Գարեգինն իրարից հանեն ա՛չ, երկսի արանքը քանդեն ա՛չ, կարող չեն Սօսի ձեռիցը Վարդվիթերին խլիլ։

Գարեգինն ամէն տեղ էլ խոթը ունէր. հազար տեսակ դռներ գիտեր խօսալու. թէկուզ Վարդվիթերի հօր միտքը թագաւորի տղի տալու ընէր, կըծռէր. ընդուր համար շատ աշխատեցին Սօսին խաբելու, համա նա հէնց վաղի առաւիւ պէս ասում էր—ոչխարը գնաց, ու բաց թողնց դրանց հետևցաւ։

Ինչքան էլ գօռ արին, թէ երթանք մի քիչ քէֆ անենք, նա չի՛ անկալ արեց, գնաց իրանց տունը։

Իրիկուան զանգակը ամէն օրուանից էս օր թէզ տուին, որ գռնաբացէք աւ։ Էլ գեղումը մարդ չի մնաց, որ ժամ չի գնայ։ Գարեգինն էլ էկաւ ժամ Սօսի հետ, տեսաւ տէրտէրը դեռ նոր ա կնանոնց դասերը փիլոնը քցել վրէն, գալի դուռը։

Մի քանի ծունր դրին ու տէրտէրը ժամն օրհնեց, Հայր մերն ասեց ու „ես առ Աստուած կարդացի“...

Հէնց ուղում էր տակն էլ վրա բերի, Գարեգինն ընտեղից չապիկը ճիտը քցելով գոռաց.—տէրտե՛ր, ի՞նչ ես ասում, էս իրիկուն դռնաբացէք ա, ծնողացոյցին մոխիկ չե՞ս տուել։

Տէրտէրը բերնինը թողաց ու ասեց.—Ի՜հ օրհնած. էս ա հրէս ծնողացոյցն էլ ա փորումն

ու չարականն էլ. հիմի դու նոր ինձ սարվացնում ե՞ս. նոր նոր հաւեր են դուս էկել, երկաթէ հաւեր են ածում. որդի՛, ընչանք դու ինձ կըհասնես, ուզի պոչը գետինը կըհասնի է՞. էլի սկսեց.

— Ես առ Աստուած կարդացի...

— Տէրտե՛ր, էդ չի, ասեց Գարեգինը մօտ գալով, դրքի սաղմոն ասա՛. դիրք պի կարդացուի ու վազեց դիրքը դրեց, ծնողացոյցն էլ բաց արեց, դպա տէրտէրը մնկնեց ու ասեց.

— Դէ գնա՛ դիրքը կարդա՛։

— Է՛յ օրհնած, ասեց տէրտէրը. դու էլ խայտառակչի ես էլի՛. գնա՛ դիրքը դու կարդա՛, մին էլ ծեր ծեր տանիլ մի՛ դրքակալի առաջը, ես էլ կերթամ աւետարանը կըկարդամ։

Ասեց տէրտէրն ու ծալապատիկ խոսի վրէն նստեց ու ինքն իրան մաքուռն ըսենց ասեց.—«հինգ տարի ա, աւետարան չըեր ցերեկ տէրտէրով տառաճներս վեր ա թափել, գեռ դրուստ չեմ կարում կարդալ, որ չի կդկզամ, հիմի սա ուզում ա ինձ դիրք կարդալ տայ. հո՞ղը մեր տան կտերը. հա ընչանք գլխներիցդ դուս տուէք, հոդիներդ դուս գայ. ժամ կանեմ, պատարագ կանեմ, ծնածը կըկնքեմ, մեռածը կըթաղեմ, Աչտարակ գեղը չէն ըլնի, հիմը հատատա ըլնի, կուտեմ, կընատեմ։ թէ մի նոր գործակալ էլ փոխուում ըլնի, մի լիտր չոլջուխ ալանին ա՝ իրա չանը. մի շուշայ արաղով որ տանեմ, աչքերը կըկապուի, հետս բարեկամ կըլնի. թէ երկու

Ջուխա գաթայ է՛լ որ թխել տամ, հերը դե՜ր եղմանիցը կըհանի. էլ ընչի՞ եմ դնում դիրք կարդում, որ սխալուխմ։

Մեր աերտերը ըսենց միտք էր անում ու սրտին ումուդ դնում, որ Գարեգինը դիրքը պրծաւ։

Թէղով աեղիցը վերկացաւ. չուրջառս բե՛ր, տիրացո՛ւ, ասելով, թուխթունը խումիացնելով, պնչերը լցրեց, կէտն էլ մրքին վեր ածեց ու դնաց աւետարանը կարդայ։

Ժամն սկսուեց, ընչանք էկաւ դռնաբացէքի վախտը։ Գարեգինն էր, թէ ժամ ասող, թէ ծո՜նացոյց բայ անողը. վերջը դնաց աերտերին ասեց, որ մի քարող տայ, ժամի դուռը բայ անելու համար։

— Լա՛ւ, որդի՛. ընչի՞ չեմ տալ, ասեց աերտերը. ձէնս ա պակա՞ս, թէ խելքս, ու յետ դառնալով գպա ժողովրդին, ասեց.

«Օրհնեալ ժողովո՜ւրդ, Աստուած ձեզ չէն ու պայծառ պահի. դուք գիտէք, որ մեր պապական նախնուց սովորութիւնն ա, որ պատ էս օր մինդ գաք ժամին մի բան տաք, դուռը բայ անէք. էլ ի՞նչ ասեմ. շատ բան գիտեմ, համա չե՛մ ասում, թէ չէ՛ ընչանք կերկարի, մի մենծ պատ էլ նոր կըգայ, անչախ պրծնելով ենք. խելքըս շատ, քեամալս շատ. դէհ, էկէ՛ք, օրհնեալ լինի՛ք. Աստուած ձեր հատատն օրհնի»։

Սօսը էն ահաթը հանեց հինգ հազար դեանը, էկաւ աերտերի աչն առաւ, դրուց բուռը։

Տէրտերը փողը որ տեսաւ, աչքերը չռուեց։

— Էս ժամուց ես տալի՞, որդի՛, ասեց. «չիչեալ լիցի՛ս առաչի անմահ գառին Աստուծոյ»։

— Չէ՛, աերտէ՛ր, ասեց Սօսը. դռնաբացէք եմ տալի։

— Երկու հազար դեանը ժամուց պտի ընկնի, որդի՛, օրէնքն էն ա. ասեց ու ձէն տուեց ժողովրդին. «Աստուած օրհնի Սօսին, երեք հազար դեան դռնաբացէք տուուց. Աստուած սրա սրտի խորհուրդը կատարի. մուրաւելի՛ (երեցփոխ), արի՛ ա՛ռ։ Գնա՛, որդի՛, դուռը բայ արա՛, չոքեցէ՛ք, ու ժամի բանիքը հանեց, «Բայ մեղ աերն» ասեց։

Աստւած ա ու բանիքովը հէնց ա տալի, որ քիչ ա մնում դուռը երկու փեղկ ընկի. Սօսին էլ կաննացրել ա կողքին ու մուժը տուել ձեռը։

Գարեգինը աչքերը Սօսի վրէն օլորում ա, համա գնաց, անց կացաւ, էլ նոր ո՛րտեղ։

Հէնց որ «բայե՛ք ինձ զդրանս» ասեցին, Սօսը դուռը բայ արեց, նեքսե գնաց ու մուժը ձեռին սեղանի տակին կաննեց. համա խեղճի երկու հազար դեանը մոքիսը չէր գնում. հէնց գիտէր, թէ չուրն ընկաւ կորաւ։ Իրան միաքն էն էր, որ աերտերը ձէն տայ, թէ հինգ հազար դեան տուուց, որ Վարդիթերի սրտին հինգ թիզ եղ կաննի. համա նա իր ժամուցը ձեռայ չէր թողալ։

ժամը դուս էկաւ, Սօսը վախում էր Գարեգինին երկու հազար դեանի համար ասել. Գարեգինը էն երեք հազար դեանի համար էլ բարկացաւ, համա էլ ի՞նչ պաի անէր։

Սօսի սիրտը տրփտրփում էր, թէ ե՞րբ պաի երեքշաբթի իրիկունն էլ գայ, որ յիմար խմաստունի վիճակը փորձի։ Համա խեղճ աղա՛յ. զուր ես քեզ տրտրում։ ինչ կարծես կարծի, էդ մի՛ կարծիլ. Աստուած դրան քեզ համար չի՛ ստեղծել. ինչ կուզի ըլնի, դու քու ձին քշի. վերջը պաի բարի ըլնի. ինչ դրուել ա՝ էն պաի ըլնի. ճակատի գրուածը չնչուել չի. հարուր տարեկն մեռած մարդի գլուխն էլ հողի տակիցը որ դուս ա գալի, ամեն բանը խաբար էլած ա ըլնում, համա էն գիրը միուտ ա. արա ինչ կուզես։ Լա՛ւ, յետոյ կըտեսնենք։

Սօսը ժամիցը յետոյ գնայ վարդիթերենց դուռը. ընչանք մուրթը գետինը կսկսիը կաննէց, կաննէց, ձեռը բան չընկաւ։ Մի քանի գեադայ դիւդայ, ցախաւլով թօփ արածները (անիշան տղայք) էկան գլխին հաւաքուեցին։

Մինն ասէց.—աօ՛, քու սիրտը քար էր, որ մի չաբթէն աշխատանքը կէս սհաթը փչացրիր. մինը, թէ մէյդանից գեօրա չե՛ս ձիդ քշում. մինը, թէ ապրիս, լաւ տղամարդութիւն արիր. մինը տաք փչէց, մինը հով. մինը ըսի էր ասում, մինը բան։ Ինչ կուզեն, թո՛ղ դուս տան. ներանք տանէ էին ասում, Սօսը դանէ. ո՛չ ձիի խօսքին էլ անկալ չի անում. հօ ներանց ասածը, հօ քամու փչածը մին ա։

Մուրթը աշխարհքը նոր էր բռնում, ամէնն էլ քաշուելին իրանց անելքը, համա Սօսի ուշ ու միտքը, խելքը ու քեամալը՝ հրէ էն կտրած վանջարումը, թէ ե՞րբ պաի իր կեանքը, իր ուրախութիւնը գէնը անց կենայ. էլ միտքը չէր գալի, թէ էսօր խնամանոյ տանն ա, ու էն ա, դամբէ դամբ ա (ոչ է ժամը), որ գայ.—ընչունքի իրիկուան արագուքն (առաջ եղանակը) ընկել էր, ոռքն էլ խաղաղուել։ Մարդ մարդի դժար էր ճանաչում, որ մին էլ աչքդ բարին տեսնի, ինչ նա տեսաւ. իրա աչքին՝ մի արեւի շողքի պէս լիս ընկաւ. իրա պինչը մի անմահական վարդի հոտ առաւ. երեսը յետ դարձրուց՝ ինչ երեայ. իր սիրեկանը քուչի վերի դհիցը դուս էկաւ՝ խնամու տղէն առաջին քցած։

Էն խեղճ միամիտ տղէն ի՞նչ գիտէր. տասը տարեկան երեխայ էր. անտես դնայ խնամանոյ դուռը բաց արէց, նէ մտաւ, հէնց գիտէր թէ վարդիթերն էլ քամակիցը գալիս ա։

Սօսը, որ էդ տեսաւ, ինչպէս մի մարդ՝ որ իր միտուճաը որդին կորցրած ըլնի, աչքի սև ու սպատակը էն ըլնի, տասը տարուց յետոյ յանկարծ Աստծու աչքը վրէն քաղցրանայ ու գտնուի, ինչպէս նրա հէրն ու մէրը վրա կպըծնեն ու կըլիզեն, կըխոպտան. մեր Սօսը, էս անմեղ գառն էն, որ բարակութենիցը ծակ չան չունէը, հէնց

դրկեց դօշին հուպ տուաւ, նրա էն վարդ պատառած թշի ծերերը հէնց փափակով բերանն առաւ պաչեց ու—օխա՜յ, ասեց. հոգիս փառաւորուեց, քեզ մատաղ սրտիս փափակը հանեցի, մեռնիմ էլ հիմիկեց դէնը գերեզմանիս վրայ օխտը թիզ մանիշակ գուս կըգայ, նրա էն ոսկեթինչան աչքերը համբուրեց ու ասեց—ըսաուց յետոյ օխտը տարի սուլած մանդամ, վէճս չի ընկիլ. խեղճ աղջիկը, էն անմեղ ազունիկը հօ թիլացաւ, սիրտը գնաց, համա մի կոզմիցն էլ սրտին օխտը թիզ եղ կաննեց ու մի բարակ գանգակի ձէնով՝ կաց ու կամ անելով, ասեց.

— Թո՛ղ, քու չանին մեռնիմ; Սօ՛ս չան, հիմի գուս կըգան, արևիդ մատաղ, Սօ՛ս չան, իմ թագ ու պսակ, Սօ՛ս չան, մէրս որտեղ որ ա հիմի գուս կըգայ. Թո՛ղ, թէ ինձ սիրուտ ես, Սօ՛ս չան։

Սօսը Վարդիթերի լիղուին էսքան կարօտ, նա հէնց չատ անգամ ասում էր՝ ա՜խ, մի պռօշը պռօշին դիպչելուս նրա ձէնն առնեմ; էլ ինձ ահն ու մահը քեզ չեն անիլ, էլ սրտումս գարդ չի մնալ. ո՞ւր մնաց, որ հիմի ա՛չ թէ մէնակ ձէնը լսեց՝ գրկին ունի. էս խօսքերն էլ որ չլսացաւ՝ ձեռ ու ոտը թիլացաւ, ուշը գնաց ու Վարդիթերին ձեռաց թողալով, շինքը ծռած, կոզքի վրայ ընկաւ գետին, փռուեց ու բերանը բաց ու խուփ անելով, կլափին էր անում։

Վարդիթերը, որ տեսաւ, քիչ մնաց սրտա-

ճաք ըլնի. ափրինած, ահահար, դողահար տուն ընկաւ. հէնց ընտեղ հասաւ, որ խնամու տղէն նոր ոտը դրել էր տան դրան չեմին, ինքը նրանից առաջ տուն ընկաւ, տեսաւ հէրը տանը չի։

— Նանի ջա՞ն, ձէն տուաւ. հասէ՛ք, մի խեղճ տղայ մեռաւ. նանի ջա՞ն, ես էլ մեռայ. հասէ՛ք, օգնեցէ՛ք, հոգի աղատէ՛ք։

— Աղջի, ի՞նչ ա, քու մօր ճարը գայ. ասա՛, ի՞նչ տղայ, ասեց մէրը. Արշաւի՛ր, Վահա՛ն, գուս թռէ՛ք, աղջի՛, ո՞րտեղ ա։

— Ա՜խ, մեր դրան առաջին, ասեց Վարդիթերն ու թըլըփեց։

Տղէքը կայծակի պէս գուս թռան, տեսան որ մինը իրանց պատի առաջին մէնումը փռուած, չի՛ ճանաչեցին. մօտ գնացին, տեսան որ Սօսն ա։

Արշաւիրը դեռ էն վախտը Սօսին հոգու պէս սիրում էր. հէնց որ տեսաւ, վա՜յ դլխիս, ասեց ու ծնկներին տուաւ. անկաղը գլուց բերնին, տեսաւ չունչ կայ. ձեռը դրաւ սրտին, տեսաւ քցում ա։—Վահա՛ն, ասեց, վազի՛ գոմը, տե՛ս Լեւոնն ու Գագիկն էլ ընտեղ են, գուս կանչի՛, գան, տուն տանինք. սրա խելքը գնացել ա, ահաթ ա անց կացել վրովը. քուքուրթ (ծծուկը) մուխ տանք պնչումը՝ յետ գայ։

Ընչանք Վահանի գնալը, տանը մարդ չի՛ մնաց՝ կխտուեցին, վեր կալան խեղճին, անկաղները ձգելով տուն քցեցին, ճրագ բերին, մի գատաղ քուքուրթ ծուխ տուին, անկախ մի քիչ աչքերը

բաց ու խուփ արեց ու թիլաքերան չուր ուղեց։

Էն սհաթը հասցրին ու ըսենցով քիչ քիչ ուշը բերին։

Հասիա էն ալուան ծաղիկը, կասես, գերեզմանից դուս քաշած ըլնի. պաոի ծէփ էր դառել. հենց նոտացնում էին, էլի թըլըփում էր։

Աբշաւիրը բռնեց սրան ընտիլ անելը (մեղադրել).—ասո՛, ի՞նչ էլաւ, ասթի չի՞, է՞դ ա քու տղութիւնը՝ սիրած պինդ պահի՛, ես քեզ բաենց չէի գիտում։

Սօսը էս թուք ու մուրը որ առաւ, սիրտը պնդեց, աչքերը արարեց, տեսաւ թէ ո՞րտեղ ա. հենց գիտէր, թէ Գարեգնենց տանն ա.—վա՛յ գլխիս, ասեց. ես ո՞րտեղ եմ։ ասո՛, ես խալխի տանն ի՞նչ բան ունիմ՝ քնած ե՞մ թէ զարթուն. երազ ա՞՝ թէ ճշդրիա. Աբշաւի՛ր, ես ու ձեր տունը՞, էս ի՞նչ բան ա։

— ի՞նչ կայ, հա՛ հէր օրհնած, ասեց Աբշաւիրը. էս էլ հենց իմացի՛, թէ ձեր տունն ա. ես էլ քու աղպէրը չե՞մ, սիրտդ ուրախ պահի՛ր։

— Տօ՛, ախար ընչի՞ եմ էկել ո՞վ ինձ բերուց, ես մեր տունն էի գնում; լաց ըլնելով ասեց Սօսը։

— Ես բերի՝ ո՞վ բերուց. մին օր մեր տունը պօնադ չպտի՞ գաս, ասեց Աբշաւիրը. գու ինձ ամէն վախտ ասում էիր, թէ տա՛ր ձեր տունը պօնադ. էն ա բերել եմ. նանի՛, հայ չինա՛։

Սօսը երբ որ տեսաւ, թէ Վարդիթերը մեկ տակին ոտի վրայ սառել ա՝ դնչով արեց խելքամաղ էլած նրան՝ թէ մի չուր բե՛ր։

Աբշաւիրը, որ բանի տակը վազուց էր հասկացել, էն սհաթը հրամայեց Վարդիթերին, որ գնայ չուր լցնի բերի Սօսին։

Էն խեղճը ազգօր հրամանը որ լսեց, վազեց չուր բերուց ու ազգօրը մեկնեց։ Նա բարկացաւ վրէն, թէ ես հօ չե՞մ ուզում։ ում պէտքն ա՝ նրան տո՛ւր։

Աչքերը գետինը քցած, սիրտը լկկալով, ձեռները դողալով մեկնեց Վարդիթերը չրի վարչը Սօսին։

Նա էլ առաւ, խմեց ու մի—օխա՛յ արեց, իմ օրումն ասեց, ըսենց իշտահալի չուր չէի խմած։

Հենց որ Սօսի սիրտը մի քիչ հանգարտուեց՝ Աբշաւիրը ծիծաղալով հարցրուց նրան։

— Դո՛րթ, դու ընկիս իմ արևը, Սօս, ընչի՞ ըսենց եկար. ո՞ր տեղից էիր գալի, ո՞ւր էիր երթում։

Սօսն էլ սաքի թէ ոչինչ բանից խաբար չէր, ասեց.— չեմ իմանում, ժամից եկայ, ձեր դրանը մի քիչ ազէքանց հետ գրից արինք, ուզում էի գնամ մեր տունը, էս երկ օր ա, Գարեգնենց տանն եմ էլել. մուրթը որ կոխելու վրայ էր, ամենքն էլ ցրուեցին, ես էլ ուզում էի հեռանալ. էլ ընտուց

յեռոյ չխնացայ ի՛նչ ելաւ. մին էլ ձեր տանն լինէ տեսայ։

Արշաւիրը յետ դառաւ Վարդիթերին.—աղջի՛, ըսաեղ արի՛, դու ի՞նչպէս տեսար սրան, որ լնաւմի Պաճոյճը (Վարդիթերի հետ եկող երիտէն) վարաւուրդ չարեց։

Վարդիթերն էկաւ աղաչօր անկաչուամը փսփսաց, թէ ես անց էի կենուամ չեմքը, տեսայ մի տղայ մծնուամը կաննած էր։ Պաճոյճն ի՛մ առաջին էր, նա ինձանից շուտ բակը մտաւ. հէնց իմ մի ոտը չեմքի էս դիւնն էր, մինը էն՝ մի թըփ-պոց էկաւ քամակիցս. յետ մտիկ արի, տեսայ դա. դիպաւ գետնովը ու խռխռացրուց. ես էլ վախուտիւնիցս վազեցի, ձեղ խաբար արի։

Վարդիթերի մէկէլ աղաչերտինքն իրար ասին. ահաթ ա անց կացել վրովը. հաւա մէրը նրանց առաջը կտրեց, թէ չէ՛, սրդի՛ք, դրա ահաթը մեր էս ծակծակուած անդամն ա էլել. հէնց էն դիւրը դուս ա էկել, տ՛ւ դիտայ աչքը երեսին ա քցել՝ թէ ի՞նչ. նա էլ տղայ ա, խելքը դնացել ա վեր ընկել. էդ տղին ի՞նչ դնաւմիչ անելու ա (անարգելու), հոը (խորամանկութիւնը) էս մեր փչացածներին ա. պոչը դրա տակին ա, Աստուած ձեռներիցս առաւ էլ տ՛չ, թէ պրծնեիք էլի՛։

Արշաւիրը ընտեղից ձէնիկս արուց, աչքով անելով մորը, որ ուս կենայ ու ձէն տուուց.—հարանե՛ք, հայ չինեցե՛ք, հաղարիցը մի անգամ

Սօսը մեր տունն ա էկել. սրան ես ըսէնց միտք չունեի բերելու, յաւ թանթանէքով (պատրաստուելով), քանի ազապով պոի տուն բերէի, համա Աստուած ըսէնց կամեցաւ. բան չի կայ, մին օր էլ էն կըլի, հայ բերի՛ք։

— Շնորհակալ եմ, ասեց Սօսը. Աստուած հասատա պահի. ես տուն պոի գնամ, ոտիս տակին կրակ ա վառուում, մէրս, տ՛ւ դիտայ, մարդ ղրկի Գարեգնենց տունը, տեսնի ընտեղ չեմ, գեղս արորատակ տայ՝ ինձ մանգալով. մտերն ընկել ա։

Արշաւիրն ինչքան էլ ղօռ արուց, չէ՛լաւ։

Սօսը վեր կացաւ տեղիցը,—շնորհակալ եմ, ասեց, դուք որ ինձ մեռնելուց ազատեցիք, Աստուած էլ ձեղ ամէն փորձանքից, նեղութիւնից ազատի, մեղաւոր բերնովս խնդրել եմ. ես քանի չունէս պաղնցիս ա, ձեր արած լաւութիւնը չեմ կարող մոքիցս քցել. մի հայ պոի ուտեմ, մինն էլ ձեղ համար մատաղ տամ. դուք չէիք ելել, քշերս պարզկաչոր էլած՝ պոի մեռնէի։

Արշաւիրը Սօսին տարաւ ճամփու քցելու։ Հէնց ուզում էին գնան, Վարդիթերը վազեց դրան առաջը, որ դուռը բաց անի առաջին, համա մեր մէրը բարկացաւ վրէն, թէ ճրագը որ կպաւ, էլ գնաղի առաջին դուռը չեն բաց անիլ, ընչանք առաւօտեան ժամի դուս գալը։

Սօսը տան չեմքիցը ոտը դուրս պնելուս մի խոր հոգւոց քաշեց, որ պնչերքիցը մեխը դուս եկաւ։

Երբ որ անցկացան պրան էն դիհը՝ Աբշալույը Սօսին ասեց.—Սօ՛ս, ես քու խնդրանքով ընկնին խնացայ, թէ ընչեցն էր. էլ ինձ չես կարող խաբել. արի՛ դոգիդ քարը վեր ածա՛, ընչի՞ համար ըտենց էլար։

Սօսը կզկզացնելով՝ ուզեց ասքի, Աբշալույին աւատացնել որ ի՛նչ ասել ա, ընչենց էր. համա նա պատասխան տվուց, թէ դու գիտես, որ սատանեքը Թարս եմ նալնում, ես խաբուղ պտուղ չեմ. էս օրուան օրը, էս բարի բիկունը գիտենայ, որ ասես խնչ կանես. բաս իմ կեռրածը հարամ ըլնի, թէ քու արտի ուզածը չանեմ։ Համա, քու դուշմանը, թէ որ չասես, մինչքիդ երեսը կըտեսնես, արտիդ ուզածը ո՛չ. դու գիտես, որ ես մեր տանը մի կոպեն ընկեմ՝ հնացողը մեկել կոպեը, էլ իմ սատծը պտի ըլնի. տունը որ լակ ձու չինեմ, տամ պատռվը, ոչով չի կարող ծպտալ. քեզ ասում եմ՝ ասես. զորթ ա երեսը մես ա, մի բան ասելուս պրեն ա գառնում, համա ազգէր տղի կշտին սար ու ձոր հաւատար պտի ըլնի. աւելի էն տղի, որ ձեռքիցը բան ա գալիս։

— Սաքի ասեմ չասեմ, քեզ յայտնի ա. մենակ իրիկուանս Թիլանալը չի՛, ըտուց յետոյ ինչ բան էլ գայ իմ գլուխը, քու քուեր խաթեր ա. ո՞ւր ա իմ առաջուան լիքը երեսը, իմ հատա կռնեերը, չոր չոփ եմ գառել. էլ՝ ալամ գիտի, աղվէ՛ր, սերն ամարիցն ա կպել, կարա՞ք պո-

կիլ. գուք ու ձեր Աստուածը. Թէ ինձ գրկէք, ձեր հայը կըկարուի։ Հենց անց էի կենում ձեր դռնովը. էն կողմիցը որ գուս էկաւ, կասես, Թէ մի չանգալ քցեց ու սիրտս քաշեց, տարաւ իրա կուշտը, խելքս գնաց՝ գլխես վրայ դիպայ գետնովը. ըտուց դէնը՝ գու խաբար տո՛ւր, ես չեմ գիտում։ Համա քեզ ասեմ։ կամ կիսախենեմ, կամ գըբայի կուշտ կէրթամ, փիթիկ անիլ կըտամ, ընչենց կառնեմ։ Գու գիտես, որ Ցուշու * ախոնգի ձեռքիցը ինչ ասես, կըգայ. մի Թուռմանի գլխիցը որ անց կենամ, ով գիտայ իր հէրն ու մէրն էլ գետներիցը հանի, չօլերը քցի. հենց կանի, որ անով աեղով կը գժուիք. կամ Թէ չէ, ձեր, ապրկայ կռնիցը կըբռնէք՝ օրը ճաչին կըբերէք մեր տունը. գիտես, որ կանգառ ա կըծում, ասլամ ճաչին ա քեռում։ Աստւմ եմ առաջ ձեր խաթրովը ընկի, Թէ չէ մնքուսս դրել եմ էս բանը. քանի Թիլ եմ բանալ տալի, կամ գարի քցում, ասում են, էն ապրիկը քունն ա, համա երկու գար կայ առաջիդ, Թէ էն գարը անց կացար, կը տանեա։ Գիտեմ, գարերի մինը հէրդ ա, մինը մէրդ. լաւ չեն անում։ Ձեռներն ի՞նչ պտի ընկնի, որ ես մի օր էլ ձեր գրանը պարզկաչոր էլած՝ մեռնեմ, Թող էն վախտը ձեռները հենա դնեն։ Համա ի՞նչ եմ ասում. Ցուշու ախոնգը ասլ ընկի. նրա վեց հազարեանն ու

* Ցուշի—Պարսից գեղ է, որտեղ է սուրբ Սարգսի վանքն աւերակ։

Սօղոմոնին հասուստ ընկեր, մի ահաթը հազար սատանայ կըկիսի դլխին։

— Սո՛ս, ըսէնց մի՛ խօսալ, ասեց Արշաւիրը. էն ախոնդի տեղը ամէն մարդ դիտի. դու ասա՛. սիրով, խաթրով առնիս, թէ չէ վխթիկի բան որ դառաս, ձեր սէրն ընչանք պատկուիլը կընկի. ընդուց յետոյ չուն ու կատու կըդառնաք իրար հետ։ Գիտե՞ս ինչ կայ, ես էն օրը Գարեգինին էլ ասի, թէ ես դատկն իմ դլխին չընկի, ես բեզս վեր գայ, թէ քանի ջանուսն կան կայ, չարչարուիմ ս՛չ քեզ համար. էն մարդը մարդ չի, ով որ երկու երեսանուխիւնով խօսայ. նրա երբեսը շուռ անցնի, ով կեն ու ծայութիւնը (կեղծաւորութիւն) գիտենայ։ Ինձնից հո վախտմ չեմ, համա թէ կուզ հէրս անիծքաչոր էլ անի, պատի իմ ասածն անեմ; դու արխէին դատկդ ծուռը դի՛ր, քէֆ արա՛, հէնց խմացի՛, որ յատուկ տարրել ես։ Լա՛ւ, առնիք հիմի նշան էլ դնենք, հօ էս տարի տանելու չի՞ս, դեռ տատմիները նոր ա փոխել պրծել. դեռ նոր ա տոը դրել տան իրեք տարու մէջ. ի՞նչ ես վռազել հլա մէջ տեղը թամամ երկու տարի էլ կայ, որ նոր Հայ—Քրիստոնեի օրէնքով ապրիկը հանի տանելու։ Գիտեմ քու լաւ վախտն ա, մի ընկերիդ էլ մոիկ տո՛ւր է՞. Ատատած չար աչքից պահի. քու բոյդ դառել ա մի չիշակ բարտի, համա նա դեռ երկու մատը քօրփայ ա է՞. հէնց արա՛, որ պատկուելիս գլուխ գլխի դրած վախտը մէջքիդ իլիկը (ոդնաշարը) կոտրի ս՛չ. ապրանքդ խէ՛ր (օրհնած), քեզ ի՞նչ էլաւ, մենք էլ ազատուիուն ենք քաշել. քեզ պես ո՞վ ա արել։

— Ա՛խ, քու բերնին մեռնիմ, բերան չէր, տաճար էր. ես հինգ տարի էլ կըճնամ, թէ որ հատատ իմանամ, որ իմ թառլանը, իմ լաչինը (որսի թռչուն) ձեռիցս խլող չըլնի. համա ի՞նչ եմ ասում. քանի նրա անուսը միտս գայ, քանի նրան տեսնիմ, պտի վեր դիպչիմ. ընչանք նշան չի դնեմ, չեմ հանդարտվիլ. մի օղ որ վեր ունենք, սիրտս տեղը կընկնի. հէնց կըդիտեմնամ, որ մեր տանն ա, թէ չէ լսէնց խօսքերն ինձ տաքացնիլ չեն։

— Դիմ մի՛ կենալ, ասեց Արշաւիրը. խելքդ գլուխդ հաւաքի՛. ձեռդ տար սիրտդ բռնի՛, էլի համբերի՛. էդ բանն էլ իմ չինքը. տեսնիմ, բալքի կարենամ մի թաքուն մօրս խելքն առնեմ. կնիկ ա, շուտ կըխաբուի. մի մարդ, որ մի մարդի բան ուզի անիլ տալ, առաջ պտի կնկան խելքն առնիլ, նրանք իրանց մարդին հեշտ կըթեքեն, որ կողմն ուզենան. դու գնա՛ արխէին քու բանին կա՛ց. աչխատի՛ մի քանի շահի փող չինես, քրեհ քարվան արա՛, ձեր խամերից* անկի՛, յիքի (ազգի) չինա՛, ձեր յիքանիքն էտի՛, վորի՛, բահդ կոթած պահի՛, թափչակը վրէն. էտոցը մէջքիդ վեր մի քցիլ. մանդաղդ ու խարտըդ (արոց) յիքուցը տուն մի՛ բերիլ. էս ա բանը

* Խամ—չմշակած երկիր։

դուս էկաւ. Աշտարակցունը ըսանք աւ՝ Հէնց որ քեզ ըսէնց տեսան, հէրս չի՝ որ թագաւորներն էլ կուզենան ազիկ տալ քեզ, աւելի քեզ՝ որ աշխատանքի հետ էլ Աստուած ամէն շնորհքը տուել աւ՝ լաւ ձէն ունիս, քեզնից ասել (հեղինակել) դիտես, բոյն ունիս, լաւ պարզերես տղայ ես, ընչանք հիմի քու ձէնդ մի տեղ փիս չի վեր է-լել ի՞նչ ես դարդ անում։ Ա՛խ, ազապուլիւնին բանի չի հասնիլ։ Գնա՛, մուրճն ընկաւ, Աստուած քեզ հետ, Աստուած քու բանն յաջողի։

Սօան Արշաւիրին—Ծնաս բարին, ասեց, ինչ ասեցիր՝ Աստուած կատարի, սուրբ Գէորգը քեզ հետ էլ, մեզ հետ էլ ու ուրախ զարբեց դպա իրանց տունը. հէնց գիտէր, թէ խաղինայ գտած ըլնի։ Հէնց մտաւ տուն, տեսաւ որ մէրը քնելու թադարեք (պատրաստութիւն) ա արել, ասեց.—քա-րի բիկուն, նանի՛, սուլած եմ, ի՞նչ կայ ուտելու, ես գիտեմ հայց կերել էք պրծել, հոգեպահուստ բաներ կունենաս։

— Ի՛, սև սրտի տղա՛յ, թոնթորալով ասեց մէրը. մի քիչ չուտ տուն գաս, ի՞նչ կըլի. ի՞նչ ես վայրի դառել, էլ էս տանը երես չես թեքում։

— Դէ լա՛ւ, ասեց Սօսը, ըստեղ կաննած ղրից էնք տալի. ի՞նչ ունես, մի քիչ բե՛ր ու-տեմ, սուլած եմ, ընկրթելս ընկել ա (ուժահաս լինիլ)։

Պարէտը (Սօսի մեծ աղպերը) տեղի տակիցը գլուխը բարձրացրուց ու ասեց.—արի՛ ոտներս

կե՛ր. կիրակուրը կերանք, ամանները լուացինք, ծոխանքն (ղուզած ջուրը) էլ դէն ածեցինք. հա-ւը տանը կենայ, կուտն ուտի. մանն եկողը եա չորին կըճարի, եա փորին. ուտելու բան չունինք, արի՛ տեղդ մտի՛, ճրագն անցնում եմ. քունս տանում ա։

Համա խեղճ մօր սիրտը չդիմացաւ, վեր կացաւ քունչ ու պուճախ արեց, մի քիչ պատուց տօլմից, բանից բերուց դրուց տղի առաջը,—կե՛ր, ասե՛ց, ու ճրագը անցրո՛ւ, մտի՛ տեղդ։

Սօան էլ ուրախութիւնից ո՛չ աղաղօր, ո՛չ մօր խօսքը չուանի չի դրուց (արհամարհել). կերաւ ու ճրագը վչեց, երեսին խաչ հանեց, Ցիատաս Քրիստոս արեց ու երկար ու բարակ տեղը մեկ-նուեց։

Խելի անց կացաւ, ամէնքը մի հանք քնել էլին, որ Պարէտը զարմնեց, ճրագը վառեց, գնաց դոմը, ձիուն ակը տվուց (նայեց), տեսաւ իրիկուան դրած եօնչէն (խոտը) դեռ չի՛ պրծել խմացաւ, որ դեռ կէս քշերը չկայ, Բազումքին էլ մտիկ տուաւ, համա երկինքը քիչ ամպը կոխած էր, բան չի կարաց իմանալ, էլ յետ էկաւ։ Էն ա պարկում էր՝ մին էլ լսեց, որ Սօսը խօսում ա քնած տեղն ու ասում, թէ Գարեգին չա՛ն, խնդիրս կատարուեց. էսօր կարացի մի փափակս առնիլ վարդևթերիցը. ա՛խ քու սև ու սպատա-կին (գրեղուն) մեռնիմ, մի զալամը ձեռդ ա՛ռ, ինչ որ ասեմ՝ գրի՛ ։

Պարէտը, որ քիչ այբը բենիցը կըխոկէր, լուռը չրամանիցը կըհանէր, վեր կալաւ թանապատմանը, որ կասես մի հարիսի կճուճ ընկեր, մի կատր էլ մխոտ թուղթ դրեց առաջը, որ Սօսի ասածը թղթի երեսը հանի։

Համա Սօսը մի քանի կղկտուր, կիսատ միսատ բառեր, Վարդիթ... Արշաւ... Պարեղ... Ջանին դուրբան... ասեց ու սուս կացաւ. մի չէրգ (տող) բան չասեց կարգին, որ բան դուս գար։

Խեղճ Պարէտը թմրմորալով, համա իմանալով, որ բանի մէջին բան կայ, ճրագն անցրուց, մտաւ տեղը, մի քիչ մէջի մատովը քորեց բեղը, ասեց ես կըգանեմ սրա ճար ու դեղը, երբ որ թագայ դինին կը լցուի գեղը, կըչորանայ կանանչի ծեղը, Արշաւիրին կըբցեմ նեղը, որ չի հայդնեն մեր Սօսի սրտի եղը։

Ե.

Աւագ երկուշաբթի առաւօտենց Պարէտն ու Սօսը վեր կալան ամէնքը մի բահակոթ, գնացին յիւրին վեր թողալու։

— Իրեկ ո՞րտեղ ես էլել, հարցրուց Պարէտը. քանի՞ մի քանի դու էգ բանն անես, քեզ քանի՞ հետ եմ ասել, որ մեր ազգի անուսին խայտառակիչ մի՛ ընկիր, ազիկ սիրի՞ր որն ա. Աստուած օրը կըտայ բարին հետը՝ աշունքը կըգայ, որը զամթի կըընի, էն կուզենք քեզ համար. էս ի՞նչ ա, ո՛ր քուչումը կաննում ես, քամայ քեզ համար են խօսում։ Մեր Պարեգինն էլ քու խեչքին ա ընկել. ընչանք իրիկուն իր բանը թողած՝ քեզ համար ա աշխատում։ դրուսան ասա՛, էրեկ ո՞րտեղ ես էլել։

Սօսը հասկացաւ, որ Պարէտը դլխի ա ընկել, համա ուզեց, որ իզը (հետը) կորցնի, ասեց. էրեկ ժամիցը դուս էկայ, գնացի ուռուցը, մի քիչ կանանել ենք ընտեղ, դրից տուել, խալխը լիքն էին, ու մթնել ա, տուն եմ էկել. էլ ո՞րտեղ պտի ընկէի։ Աղջի՞կ ո՛վ ա սիրել. չե՛մ գիտում ամեն մարդի չուանով ի՞նչ ես հորը մտնում. օտարը շատ բան կա՛սի, պտի ամէնի ասածին էլ աւատա՞ս. ինձ էլ շատ բաներ են ասում քեզ համար. թէ որ ամէնին էլ անկաչ անեմ, քարը քարի վրայ չի կանանիլ։

— Ի՞նչ ես խօսում, ասեց Պարէտը. դու ուզում ես ինձ չօլերը (դաշտը) քցի՞ր իրիկունը ո՞րտեղ ես էլել, դրուսան ասա՛, դու ընկես ափունի (հօր) գերեզմանը։

Սօսը տեսաւ, որ իրան տարաւ հօր գերեզմանին կապեց, որ էլ սուտ չի կարալ ասիլ. լացակրկնեց ու ասեց.—ինձ ընչի՞ ես ղնամիչ անում. ես ուզո՞ւմ եմ որ ըսէնց ընկի. լաւ չե՞ս հէքեաթների մէջին, թէ քանի՞սը գլխները վեր են դրել իրանց բուռթի (սիրեկան) համար, չօլ է չօլ ընկնելով, երկրէ երկիր ման գալով, սոված, ծարաւ. չաբաթներ ամիսներ անցկացնելով, ցրտի,

մար. էս ի՞նչ ա, ո՛ր քուչումը կաննում ես, քամայ քեզ համար են խօսում։ Մեր Պարեգինն էլ քու խեչքին ա ընկել. ընչանք իրիկուն իր բանը թողած՝ քեզ համար ա աշխատում։ դրուսան ասա՛, էրեկ ո՞րտեղ ես էլել։

Սօսը հասկացաւ, որ Պարէտը դլխի ա ընկել, համա ուզեց, որ իզը (հետը) կորցնի, ասեց. էրեկ ժամիցը դուս էկայ, գնացի ուռուցը, մի քիչ կանանել ենք ընտեղ, դրից տուել, խալխը լիքն էին, ու մթնել ա, տուն եմ էկել. էլ ո՞րտեղ պտի ընկէի։ Աղջի՞կ ո՛վ ա սիրել. չե՛մ գիտում ամեն մարդի չուանով ի՞նչ ես հորը մտնում. օտարը շատ բան կա՛սի, պտի ամէնի ասածին էլ աւատա՞ս. ինձ էլ շատ բաներ են ասում քեզ համար. թէ որ ամէնին էլ անկաչ անեմ, քարը քարի վրայ չի կանանիլ։

— Ի՞նչ ես խօսում, ասեց Պարէտը. դու ուզում ես ինձ չօլերը (դաշտը) քցի՞ր իրիկունը ո՞րտեղ ես էլել, դրուսան ասա՛, դու ընկես ափունի (հօր) գերեզմանը։

Սօսը տեսաւ, որ իրան տարաւ հօր գերեզմանին կապեց, որ էլ սուտ չի կարալ ասիլ. լացակրկնեց ու ասեց.—ինձ ընչի՞ ես ղնամիչ անում. ես ուզո՞ւմ եմ որ ըսէնց ընկի. լաւ չե՞ս հէքեաթների մէջին, թէ քանի՞սը գլխները վեր են դրել իրանց բուռթի (սիրեկան) համար, չօլ է չօլ ընկնելով, երկրէ երկիր ման գալով, սոված, ծարաւ. չաբաթներ ամիսներ անցկացնելով, ցրտի,

տաքի դիմանալով. նրանք գի՞ժ են էլել, որ ըսէնց են արել. համա ի՞նչ անէին խեղճերը. սէրի կրակը բերել են ղօռով ծոցները լցրել, էրուին ա՞չ. երազում՝ բութայ են տուել, ճակատներին էն ա գրուած էլել, նրանք էլ էդ օրերը քաշել են. որը իրա մուրազին հասել ա, հօ էն ա էսքան չարչարանքը, քաշած օրերը բանի տեղ չի՛ դրել, մոռացել ա. որն էլ մուրազաչոր՝ ճամփին եա ցրտից, եա սովածութիւնից մեռել ա, եա թէ չէ գողի, գաղանի կերակուր էլել. նրա սիրեկանն էլ լաճ տեղն ա հոգին տուել ու Աստուծու հրամանքովն երկուսն էլ մի պատան են գրուել. ըստով էլ՝ էն մեռածը իր փափակին հասել ա։ Ես ի՞նչ մեղաւոր եմ, որ ինձ էլ էդ կրակովն են վառել. դու տեսե՞լ էիր, որ ընչանք հէրու մի բան խօսայի ապրկայ կամ հարսանիքի վրայ. համա ի՞նչ անեմ. հէրու մի քչեր քնած էի տեղս, մին էլ տեսնիմ մի սպասակամիրուք հալուոր՝ գլուխը լսի միջին թաղուած, մազերը բոց սպասակ, որ մարդի աչքեր էին ծակում, ունքերը հաստ ու երկար ընչանք պնչի վրայ էկած, աչքերը վոս ընկած ու պսպղուն, երեսը կնճռնած, համա ծիծաղադէմ, միրուքը ընչանք դօսիկը, կըռներն երկար ու բարակ, մատներն երկար ու սպասակ, ղնկերն անկարիլ՝ համա խստակ սրբած, մի ձեռին գաւազան գլուխը կանանչած ու աշխարհքումն ինչքան անուշ հոտով ծաղիկ կան վրէն բացուած, մի ձեռով էլ բռնած վարդի-

թերի կռնիցը՝ եկաւ կուշտս։ Սաքի թէ, ես մեր ածերումը (նոր տնկած այգի) ափան ուռու տակին թէք ընկած էի. նրա գաւազանի անուշ հոտերը պնչովս դիպան ու վեր կացայ ցոփ տեղիցս կանգնեցի։

— Հոտ քաշի, ասեց ինձ, որդի՛, էս ծաղիկներիցը որը քեզ դիր կդայ, մի տերև նրանից պոկի՛։

Ես էլ հոտ քաշեցի ու տեսայ, որ վարդիցը հոտով ծաղիկ չի կար, վարդի շատ թերթիցը մինը պոկեցի։

— Ա՛ռ, ասեց, քու բաղտդ, էդ տերևը սայա, օրերդ հասել ա, պակի մի նշանած ունենաս. սրան են դրել քեզ համար, կայ սայ ա, չի կայ սայ ա. նեղանաս ա՛չ, լաւ բանը հեշտութիւնով չի ճարուիլ. սրա խաթեր չարչարանք, բանքասանք, կռիւ, խռովութիւն ու ամեն բան էլ կըպատահի քեզ. սիրով, համբերելով քաշի ըտոնք. համա ինչ կանես սրա՛, օտարի քարկը լեզուիցը չի խաբուիս, մենձ մենձ խօսալուցը չի վախիս, թէ չէ դու էլ մեզք ես, սա էլ։

Էս խօսքերն ասելով հալուորը պղկայ կուռը տուուց ինձ. մենք էլ պռոշակ արինք. հէնց ուզեցայ ձեռս էլ ճաոլը քցեմ, վեր թռայ, տեսայ տեղս։ Էն օրից դէսը, թէ քնում եմ, թէ զարթնում եմ, թէ նստում եմ, թէ կանգնում եմ, էն պղկիկը աչքիս առաջին ա, ու հէնց իմանաս, թէ չինքը ծռած եսրի (գետի) պէս, աչքերը պր-

տասունքով լիքը. ինձ ասում ա. ի՞նչ արիր, ո՞ չինչ բանի չես ձեռը տալի, բա ես մեղք չե՞մ։

Էրեկ էլ Անուշի հետ խաբարներ էր ապ-սպարել ժամիցը, թէ Սօսին ասա՛, իմ լերդ ու թոքս մի՛ խորովիր քու սէրի կրակովը. թէ դու ընձես, կառնեմ, թէ չէ սև կըհադնեմ՝ վարպետ (կոչս) կըգառնամ, տանը կընստեմ։

Հալբաթ ըստուց երևում ա, որ նա էլ ե-րազ ա տեսել. էլ ես ի՞նչ մեղաւոր եմ ըստում, աղպէ՛ր ջան։ Դու իմ մենձ աղպէրն ես, էս սը-հաթը իմ հէրն ես, հօրս տեղն ես, քեզ ամանա-չում էի ասիլը, Գարեգինը աղպէր ջղայ ա, նրա կշտին սրտիս խորհուրդը յայտնեցի, նա էլ չինք առաւ, թէ ես էդ բանը կըհոգամ։ Ի՞նչ քարը տամ գլխիս, ո՞ր չուրն ընկնիմ խեղդուիմ։ Հէնց ուզում եմ մտքից քցիլ, բայց թէ ձեռք վեր առնիմ, մի չամիրի պէս բան սիրտս ծակում ա. հիմիկէց դէնը դու ասա՛, ես խօսալ չեմ։

Պարէտը մի խելօք ջղայ էր, նա լաւ էր հասկացել սէրի կրակի թէժուխիւնը, ինքն էլ մի վախտ սէրի մատաղ էր էլել, ընչանք պատկուեց պրծաւ։

Հէնց որ իմացաւ, թէ Սօսը պարզ սրտով խոստովանուեց, էս խօսքումը ատելիուն չի կայ, ասեց.—որ ըսենց ա, դու մի՛ դարդ անիլ. դեռ մեր գեղումը ընչանք էս օր լսված չի, որ մենձ պատին խնամիաօս ղրկեն, եա աղջիկ նշան դնեն. հլա դեռ մեր յիքանոնց դարդը քաշենք. էս ա

թաղը վեր ենք թողում. կէսն էս իրեք օրը՝ կէսն էլ զատկից յետոյ էտոցներս սրենք, էտենք (վա-զը կտրել), արքադը (վազի կտրած մասը) կիտենք, քարենք, ամեն բանից պրծնենք, յետոյ աշունքը երբ որ էկաւ, մեր ամեն լիսեթիւնները տուն հա-ւաքեցինք, տարուան հոգսը քաշեցինք պրծանք, ոնց որ ըսկի, ես էն աղջիկը կուզեմ քեզ համար. թէկուզ որ տեղն ընկնի, մի յիքին կըծախեմ ու ասածս կանեմ. քու աղպէրը մեռել չի, որ քու սիրտը կոտրած մնայ։

Հեթումը հինգ տղայ ունի՝ քսմնա քու ղըն-կին չաժեն. ասենք փող էլ ունի, իրանից յետոյ էն փողն էլ կփչանայ. նրա տղէքը պատուղ չեն, փող պահող չեն։

Սօսն ընչանք հիմի դեռ առաջին անգամն էր, որ Պարէտի բերնիցը ըսենց քաղցր խօսքեր լսեց. աշխարհքը իրանն էլաւ, էչխի ընկաւ. թէ ընչանք էքուց իրիկուն էին մաքնեթումը դրել երկու աղ-պերով երկու յիքին վեր թողալու, ընչանքի ա-ծերը տուել էին Աբշամ պատի աղպօրը, որ նա վեր թողայ, հէնց բանի կացաւ Սօսը, որ առա-ւօտեան հացի վախտին էն պրծան, դեռ ճաշ չի դառած՝ ժէկէլը, ու գնացին պատի աղպօրն էլ օգտելով, իրենք էլ ընչանք իրիկուն թափ տուին, թփերը ծածկի տակիցը հանեցին ու տուն էկան։

Էքսի օրն էլ Սօսը չի թողուց որ էտուր ա-նեն (վազը կտրող բերեն), թէ մի քանի օր կենայ, մի քիչ քամին ծեծի, զատկից յետոյ էրկօրումը

կէտենք, արքագն էլ կըկիտենք, կըքարենք, կուտ-
բակն էլ (վագի հաւս տեղը որ կոտրուում ա կտրեվիս)
աւեն կը բնրենք. ի՞նչ ա էլել, հս չաւրը դեռ
քցում չի՛ մաւիցը, հա թէ չէ դեռ աչքակալել չի
(կոկոռևել) թուվը։

Միաքն էն չէր, որ քամին ծեծի, համա ու-
զում էր էս շաբաթ պարապ անցկացնի, որ ձու
խաղայ, ձու նաչխի ու էս իրիկուն էլ յիմար ի-
մաստունի վախտը ժամուտը գանուի։

Դու Սօսին ումուտա (յոյս) տուր ու հեռու
կաննի՛. տան օրէն բանը երկօրումը կանի կը-
պրծնի. նրա ձեռին թէ բան անիլը, թէ հաց ու-
տիլը մին ա։

Էս օր, որ Աւագ իրեքշաբթին ա, Աշտարակայ
որ քուչովն անց ես կենում, կնանիքը մի մին վէ-
տէ խնոցի ուռներին դրած՝ քուչայ քուչայ են ըն-
կել. բան ու գործը էս օր ա մոքներն ընկել,
ինչ տեղ ազապ աղջիկ տեսնես՝ կուժները ու-
ներին չաւր են բերում. որ քուչովն անց ես կե-
նում. խնոցի հարելու ձէն ա գալիս. էս սաղ
մենծ պասին, թէկուզ երբ ասես հարած ըլնին,
համա վերջի հարը պտի ըսօր տան, թէ չէ էքուց
որ Զիք-չարեքշաբթին վրովն անցկենայ, կարագը
կըչքուի, թան կըկըտրուի. էսօր պտի հարեն, որ
Աւագ հինգշաբթի օրուան համար նոր կարագ
վեր ունին, ալանի պահեն ուրիշ կճըճում հա
բժըթում, հա թէ չէ չրի մէջը քցեն, որ ժամ-

հարը հաւաքելուս իրանք էլ տան, որ իրանց կո-
վերը կաթնալի, խնոցալի (հիւթալի) ըլնին, թէ չէ՛
պտուկը կըքոռանայ*։ Էսօր ընչանք իրիկնապահ
խնոցաբանի են. Աստուած ոչ չհանց տայ կնա-
նանց նոմերիցը. թէ մի կատր հայ ուզես ուտե-
լու, ճանգ ու երես կըընին, հազար աբուռ կը-
տան մարդի, թէ մեր հայը տեսնում չես, որ
հաց ես ուզում. մի ձեռներս եղումն ա, մինը
մեզրումը. ով որ էլ բանտր ունի՝ մարդի վրայ
կըթռնթռրայ քամակիցը, թէ կացաւ էլ ոչ էս
բանը պրծել էինք, նոր էր արել։

Իրիկնապահին որ խնոցուց պրծան՝ նոր կի-
բակուրը կեփեն. թէկուզ տղամարդը տանը ըլնի
թէ ո՛չ, իրանք անուշ կանեն. վեր կըկենան նոր
չորերը կը բերեն, կըհաքնեն, կընստեն քուրսու
տակին. հէնց որ զանգակի թերը գնդայրին,
կարմիր ծուղէքը կը քաշեն տներն ու պապա
ժամ։

Սօսի մերն էր՝ մի հարսը. աղջիկ չունէր
տանը, որ իրան օգտի խնոցուն. Սօսին աղանչաք
արուց, հեռը հարիլ տուուց. հարսն էլ գնաց
չուրը բերուց։

Հէնց որ բանից պրծան, ժամի վախտին
Սօսը հաքաւ չորերն ու գնաց Գարեգնի կուչաը
չհօլը. տեսաւ որ նա էլ յիմար իմաստունի թղ-
թերը գրել ա տասը հատ. հընգի վերայ իմաս-
տուն, հնգինը յիմար։

* Այս մեկ սովորութիւն է, որ սրբութեամբ պահում են։

— Ես պաի իրիկունս մի վիճակ բաց ա-
նեմ, ասեց. Վանի տղայ Վահէնին չապիկ հագ-
ցրո՛ւ, թէ իմաստուն ընկնի՝ իմ բաղտիցը կըմնի,
Վարդիթերին ես կառնեմ. թէ չէ իմ քօռ բախ-
տը ծոցիս ընկած կըլինի, իմ սև օրն ա։

Ժամը որ տուին, Գարեգինը մնդթերին առաւ
գնաց ժամ, Սօսն էլ հետը. ատան երեխի չապիկ
հագցրուց։ Հէնց որ վերջի աւետարանը սկսեցին
կարդալ տարաւ էդ երեխանցը աւետարանի
տակին կանանացրուց, ամէնի ձեռը մի մուտ տը-
վուցը։ Հէնց որ էկաւ էն տեղը, որ ասում ա
«Յայնժամ՝ նմանեսցի արքայութիւնն երկնից տա-
սըն կուսանաց» Թղթերը բերուց բօլմի (ախոռ) մի-
ջին, բաժանեց երեխեքանցը, ու երբ որ ասեց
«հինգն ի նոցանէ յիմարք էին և հինգն խոհա-
ւունք» բաց արուց երեխանց Թղթերը ու մնիկ
տուուց։ Որը իմաստուն էր ընկել, Թողուց ըն-
տեղ կանգնիլը, ընչանք աւետարանի վերջը. որը
յիմար էր, կռնիցը բռնեց հեռացրուց։

Խալֆայ Փառնաւազը, որ բերնումը տասմ
չէր մնացել երկու կնիկ արած, օխտը որդու
տէր մարդ, մուր էր չինել ձեռին բռնել. իր ծե-
րութիւնին էլ ա պատիւ չի տուուց. էդ յիմար
ընկնող երեխանց, որին հասաւ, երեսները քսեց
սևացրուց։ Համա երեխանցից մինը կարաց նրա
հախիցը գալ. մի բուռը մուր վեր կալաւ ամա-
նիցը ու նրա սիպտակած մազերը սևացրուց,
նրան չահելայրուց. երեխեքանցը բան չէլաւ,

համա ինքն ամանչեց. ով տեսաւ, վրէն ծիծաղաց։

Դու ասի՛, որ մեր խեղճ Սօսի բաղտիցը իրա
վիճակը դուս չեկաւ, Վահէն յիմար ընկաւ։

Հէնց որ Սօսը տեսաւ, լաց ըլնելով ժամիցը
դուս ելաւ։

Գարեգինն իմացաւ, որ Սօսը հիմի դարդ-
պաի անի, համա ի՞նչ աներ, հօ չէր կարող չա-
պիկը հագիցը հանիլ, ժամը կիսաւ թողալ դուրս
գնալ, ի՞նչ անես. Սօսը գնաց՝ Գարեգնի սիրտը
հետը տարաւ։

Սօսի կիրակի օրուան ուրախութիւնը, երէ-
կուան ապաօր քաղցր խօսքերը ու էս իրիկուայ
անբաղտութիւնը իրար չընկաւ։ Դուս գնաց ժա-
միցը, անցկացաւ եկեղցու քամակը։ Երեսը քը-
սում ա սեղանի քարերին, աչքերիցը կայծակ ա
թափում արտասուքի հետ, ուզում ա որ մի
բան ասի ինքն իրան, սրտի հեթհեթոցը չի թո-
ղում. ուզում ա ինքն իրան սիրտ դնի՝ մխիթա-
րի, փեչը տանում ա աչքերը սրբում, համա
հէնց լսանաս, թէ գարնան ազբիւր ընկի, որ
ինչքան չուր վեր ունիս՝ նա ո՛չ կը հատնի, ո՛չ
կպակսի։

Վերջը տեսաւ, որ ճարը կտրեց՝—դէ՛, ա-
սեց. ամօթ իմ տղամարդութիւնին, տղամարդի
մի դիհը կարեն, վէճը (հոգ) չի պտի ընկնել ես էս
ի՞նչ եմ անում. թէ որ մինն ինձ տեսնի՝ ի՞նչ
կասի. ըսէնց անելով՝ բան չի ընկնել. մի քիչ խելք
ունիմ, էն էլ կըկորցնեմ. ի՞նչ եմ էդ սուտ բա-

ներին աւատում։ Խեղճ Գարեգինն ամէն օր ա-
սում ա, թէ վիճակը սուտ բան ա. դուխս հօ
երկաթից չի՞ որ բան չի մնում, թո՛ղ պառաւ-
ները աւատան ըռէնց բաները, ես իմ ուսուցս
չեմ կարիլ. ի հարկ է տասը հոգի են, հինգը
պիտի յիմար ընկնին՝ հինգը խնամատուն. հիմի ժա-
մը դուս կըգայ, երթամ դրանը կանգնեմ: Վար-
դիթերը հօ ըսաեղ չի, թո՛ղ մերն էլ ա տեսնի
աչքերիս ուռիցքը իմանայ, որ Վարդիթերի հա-
մար եմ լայ էլել. բայըի թէ Աստուած խեղճիս
խեղճ գայ, նրա քարէ սիրտը կակղացնի, նրա
աչքը վրէս քաղցրացնի, իմ բաղաս չուրը չի գցի.
երբէկ իրիկուն էլ նրանց տանն էի հօ, համա
թո՛ղ էսօր էլ իմանայ։

Ժամը որ դուս էկաւ, Սօսը պատմեց Գա-
րեգինին իրա լացն ու սուգը.—Էս ի՞նչ ա, ասեց.
երևում ա, որ էն երազը սուտ էր. քանի բանի
տեսիլքն եմ ընկնում, աւելի ձախ ա դալիս. լաւ
նշաններ չեմ տեսնում: Էս երկօր ա, քանի միտք
եմ անում Վարդիթերի համար, վըռշտում եմ,
սաբը ա գալի. ախար ես ընչո՞վ մեղաւոր դըա-
նուեցի Աստծու առաջին, որ երում ա ու չի
խորովում. թէ որ իմ ճակատին դրուած ա, որ
ընչանք մեռնիլս չարչարուիմ նրա սիրովը, լաւն
էն չի՞, որ գնամ քարափիցը վեր ընկնիմ, որ հէնց
էսօր վերջանան էդ ցաւերը. քեզ եմ ասում,
Գարեգին ջա՛ն, թէ իմանամ, որ Աստուած մեղք
չի համարիլ՝ ես իմ դիմի չարէն կտեսնեմ։

— Խելքդ գլուխս, ասեց Գարեգինը, գլու-
խը տմբամբացնելով. թէ պառաւների ասածին
աւատաս, յիմար խնամատունի վիճակովը կամ
վռշտալովը գլուխդ աղը գնես, շատ խելօք կըլ-
նես։ Անխե՛լք, թէ որ էդ թաւուր բաները դը-
րուստ ընէին, հիմի մեր վիճակ քցող պառաւ-
ները խազինայ կապած կըլնէին, որ էսօր սոված,
ծարաւ, խալխի հացովն են ապրում. բոռնք պա-
պական սովորոյթք ա՝ կատարում են։ Դու հէնց
գիտես, թէ են յիմար ընկնող երեխանց մէջին
խելօքը չի կա՞յ. նրանց մէջիցը մէնակ քու չո-
կած վահէն ամենիցը սուր միտք ունի. ես դեռ
ընչանք լսօր չեմ տեսել նրա պէս խելօք երեխայ.
Աստուած պահի, թէ որ տէր ունենայ՝ հէնց
մարդ պիտի դառնայ, որ մատով չհանց տալու.
հօ ամէնն էլ լաւ են, մեր գեղումը բթամիտ ե-
րեխայ շատ քիչ կըգտնուի, համա աւելի նա. էն
թաւուր չնորհալի երեխէն որ յիմար ընկաւ, էլ
ի՛նչ աւատալու բան ա էդ վիճակին։ Դու համ-
բերի՛, բանը բանին չհանց կըտայ. դու արխէին
գնա՛, ուրախ կա՛ց. ես հիմի գնում եմ մի տեղ
ղոնաղ. լինէ իմաստուն ընկնող երեխեքանց մի-
նի հէրը համեցէ՛ք արեց. տղէն իմաստուն ա
դուս էկել, ուրախացել ա. մեր գեղացիք էլ քեզ
պէս են, հիմի էն յիմար ընկնող երեխատէրերը
հէնց կըարամին իրիկունս, որ հէնց իմանաս
մարդ ա մեռել. իմաստուններինը հէնց կըգիտե-
նան, թէ նոր ա տուել Աստուած իրանց էն ե-

ըեխէն. ի՞նչ անեն խեղճերը. ըսէնց տեսել են, ըսէնց էլ կէրթան։

Սօսն ու Գարեգինը մի քիչ խօսալից յետոյ, իրարից բաժանուեցին. Գարեգինը գնաց ղոնաղ՝ Սօսը իրանց տունը։

Առաւօտեանց լիսը որ բացուեց, Սօսը տեղիցը վեր կացաւ, երեսը լուաց, մի քանի խաչ հանեց ու իրան ամէն օրվան աղօթքն ասեց, դուս էլաւ. մին էլ տեսաւ, որ բաչի գլխին մի կաչաղակ կաննել ա կչկչացնում։

Անպատճառ, ասեց, սա մի բանի համար ա էկել. ես սրան հարցնեմ իմանամ։

Յետ գառաւ դպա կաչաղակն ու ասեց.— Թէ խէր ա, տեղդ փոխի, թէ չառ ա, ձէնդ կտրի։

Կաչաղակն էն սհաթը թռչկոտալով անցկացաւ պատի վրէն ու սուս կացաւ։

Մնաց Սօսը մոլորած, թէ ընչի՞ համար համ տեղը փոխեց, համ ձէնը կտրեց. երևում ա, որ վարդիթերենց տանն իրա համար խօսք ա ընկել, մինը լաւ ա ասել՝ մինը վատ։

— Այ կաչաղա՛կ, ասեց, լաւ նշան չես երևում։ դնա՛ դու վարդիթերենց տունը, խաբարներ իմացի, բե՛ր ու իմ էս մի քանի խօսքն է՛լ ինչ որ կասեմ, վարդիթերին ասա՛, թո՛ղ մտքումը պահի, ու սկսեց ասել կաչաղակին.

Սրի՛, արի՛, կաչաղա՛կ, բարով եկար լինէ համար.
Վարդիթերենց տանիցը բեր նոր խաբար լինէ համար,
Քեզ համար միս կըտրեմ, կե՛ր կշտացի՛ր, ման արի՛.
Վարդիթերիս ասա՛ թէ, դու տե՛ս մի ճար լինէ համար։

Ասա՛ թէ քու խեղճ Սօսը, ձեռը ծոցին ման գալով,
Դալտեր, չօլեր չափում ա, սիրոյդ համար ջան տալով.
Մեռնիմ ապիզ արեւիդ, քանի ձէնդ լսել եմ,
Քաղցր լեզուդ դառել ա՝ մի սուր նշտար լինէ համար։

Էն գիշերը լինէ համար դու նոր արեւ ծագեցիր,
Ոսկեփայլ ճառագայթդ սրտիս մէջը թափեցիր.
Վերջացաւ իմ կարծիքս, սիրոյդ կասը պնդացաւ,
Թո՛ղ մահը գայ օրէս յետ աղատաբար լինէ համար։

Լալագարից (ծաղիկ է) կարմիր եա՝ մախմուր ծաղկի խաւ ունիս,
Անմահական ջրի պէս մի գուս գալու թաւ ունիս.
Քու թաւը ես լաւ տարայ, սրտիդ սիրեկան դառայ,
Քեզ մօտ գուշ ա ըստուց յետ՝ թէ ձոր թէ սար լինէ համար։

Դէ թռի՛ գնա՛, կաչաղա՛կ, վարդիթերենց կտուրը,
Սիրեկանիս իմաց տո՛ւր էս սիրտ կրակով լուրը.
Պատմի՛ր թէ Սօսն ասում էր, էն էր իմ բաղտի օրը,
Որ քու կարմիր թչերդ էլան չաքար լինէ համար։

Հէնց Սօսը էս խաղն ասեց մի բարակ ձէնով, կաչաղակը մին էլ կչկչաց ու թռաւ. հէնց իմանաս իմաստուն էր՝ ինչ էր, գնաց դպա պատրաստի տունը։

Զ.

Զորեքշաբթի քչերը լիս Աւագ հինդշաբթի, դեռ Աղամայ մուրթը չէր կոխել՝ Սօսի մերը ճըրագը վառեց ու Սօսին անուշ քնիցը վերկացրեց։

— Վե՛ր կաց, ասեց, առ կացինդ, անխօս գնա՛ մեր ղալաթայ ընձաորենու, մեղրակենի տակըը ծիրանու ու մեծ մալաչի տանձենու (պտուղների ա-

ունենք) քօքին (արմատ) երեք հետ կացնով տո՛ւր, էս օր Աւագ հինգշաբթի ա, ասա՛ բար (պտուղ) ես տալի տո՛ւր, թէ չէ կարում եմ։ Էս տասը տարի ա իրեքն էլ, չեմ դիտում, աչք ա դիպել, թէ ընչի՞ց ա, որ մի լօլիկ (պտուղ) չեն տալի. ողորմածիկ հերդ ձեր պէս աշխատասէր էր ա՛յ. անխօս էս օր վեր կըկենար կերթար, ծառ չէր թողալ, կըտար կացնով. քանի լիտահոդին սաղ էր, ամէն բարութիւններս էլ կար. ինքը մեռաւ՝ էլած չէ՛լածն էլ հետը տարաւ։

Սօան անխօս վեր կացաւ, առաւ իրա ղօդ դրած (ծայրը պողպատած) կացինը, կապեց իրա չիրմայի դատասէր դամէն (դաշոյն) ու մտքումը մի երկու հետ Աստուծոյ անունը տվեց, դեռ ո՛չ խեր արած ծեքելահան ո՛չ չառ, քցեց եափունջին վրէն ու իրանց յիքին տեղակ, իրան քցեց գնալու դպա Վարդիթերենց Յօչականայ գէլխի յիքին։

Էն մութն ականակիր ժամանակը, նրա համար էն քարքարօտ ատացակ ընկած՝ օլոր մլոր քուչէքը դառել էին, հէնց իմանաս, մի կանանչ ծաղկալից մայխանան դաշտ, որ ղմիշ չանես, թէ ծաղկները ոտիդ տակին տրորես. հէնց մանգաս վրովը, որ նրանք էլ չիմանան, թէ իրանց նեղացնող կայ. ընչունքի Սօսը հէնց էր վազում, որ ոտի տակի քարերն էլ չէին կարում իմանալ, թէ իրանց տրորող էլաւ։

Գնաց հասաւ յիքին ու պատիկ անկուցը բռնած, ընչանք էն մեծ հատ պօպօքուն էլ

ամէնին երեք երեք հետ տալով ու «բար ես տալի տո՛ւր, թէ չէ կարում եմ» ասելով, մի գլխից ընչանք մէկելը գնաց. չղլուխնիցը ուռոնցն ու բալդոնցը ու ուրիշ անբար ծառերին էլ էր տալիս։ Յետոյ միտքն ընկաւ, որ էս օր, թէ չօլի դաղձը (պիտնայ, անանուխ) ճմով հանես չուռ տուած, քօքը դուռն արած, կանանչը ներքև թընկես, կըխոխուի սուսամբար. ընդուր համար դընաց մի քանի կունճղը (ճիւղ) կտրեց դաղձալի տեղերից, բերուց մի քանի տեղերում չուռ տուած տնկեց, որ սուսամբար դառնայ։ Էլ իրանց յիքին միտը չի բերում. աչքը Վարդիթերենց համար էր մենակ լիս տալիս։

Երբ որ տեսաւ, թէ դամբէ դամբ ա (ֆիչ ա վնացել), որ ժամը տան, ծեքծեքատում ա, էն ա, յետ դառաւ տուն. հէնց իմանում էր, թէ աշխարհքս իրան էլին տուել. ու ընչունքի գիտէր, որ Վարդիթերն էս առաւօտ ժամ չի գալ՝ տասթ (ծուս) չի, ինքն էլ վազուցուան թուրքացածն էր էդ բանումը, միտքն էլ չի թեքեց ժամ գնալու համար։

Իրիկնապահին Սօսը տանը նստած՝ մօր հետ մենակ թաքուն թաքուն խօսում էր, մօր գլխումը նստացնելու համար, որ Վարդիթերին իրա համար ուզի. լսեց, որ ժամհալ պապը գընիցը ձէն տուաւ, թէ խանըաչի՛ (տիկին ֆոյր), կարագ բերի՛ք ոտնալուէքի համար, Աստուած ձեր կովերը կաթնալի պահի։

Սօան էն սհաթը տեղիցը վեր թռաւ առանց մօր հրամանին, գնաց մաթրաթի (մեծ առաւ կաւէ) տակիցը ալանի կարագը հանեց դուռնդ արած՝ տարաւ տուաւ ժամհարին։

Խեղճ պառաւը տան անգամ ասեց, թէ կէսը մնայ ղահիկ շաբաթ իրիկունը ձուաձեղ անենք. համա Սօսը նոր էր ջերմեռանդացել, հոգու ճամբէն գտել, սաղ դունդը վերկալաւ տուաւ նրան ու էկաւ մօրը, թէ նանի՛, կաժ էլ կըլնէս մանած էս մեծ պասին, մի կաժ էլ տո՛ւր՝ ոտները սրբի տէրտէրը։

Պառաւն ինչքան էլ վրէն բարկացաւ, թէ տասը կաժից գիւման (քացի) էլ չունիմ, երկուսը պահ հասա դերձան անեմ, չորսը բարակ, չորսն էլ պատրուգի համար ա պէտքը, Սօան անկաջ չարեց. մի կաժ էլ վեր կալաւ կարագի հետ տուաւ ժամհարին։

Ժամհարն օրհնելով նրան, ումբը ու արև խնդրելով, ուրախ ուրախ յետ գառաւ. քանի շատ ընկեր եղը, նրա համար լաւ էր, կէսը կանթըթխէր (թագցնէր) իր կճուճը կըկոխէր, կէսը կըտանէր ժամը. կաժն էլ, որ շատ ընկեր, մինն էր պէտք իրիկուան համար, մնացողն իրա երեխանց ղորերը կըկարէր. հալբաթ շատ տուողին մի երկու խօսք կասի, էն էլ կիսատիրա. համա ո՛վ որ ըսկի չի տայ, գու արի՛ էն վախտը տե՛ս, թէ մեր ժամհարի բերնիցը ընչե՞ր ա վեր թափում յետ գառնալիս. բերնիցը գուս գայ ծոցը թափի,

ինչ օրհնանք, որ նա կարագ չի՛ տուողների համար անում ա։

Իրիկուան ժամը որ տուին, Սօան էն սհաթը ժամումը հազիր էլաւ. հէնց տէրտէրը ղգեստաւորուած չոքեց, լականը (կոնի) դրուց առաջը, մի երկու ծեր մարդկանց ոտները լուաց, մանածով սրբեց ու մի թիքայ եղ քսեց, ուրիշների էլ ձեռների երեսը լուաց ու եղ քսեց, Սօսը արանքները ճղելով՝ անց կացաւ եկաւ իրա ձեռն էլ դէմ արեց, ջրոտ անիլ տվուց, Գարեգինին էլ, որ եղը բաժանում էր, եղ առաւ, տեղ չի թողուց, գըլուխն ու աչքերն ու անկաջներն էլ քսեց, մի քիչ էլ ձեռի երեսին դրած՝ տարաւ, որ իր մօր եղի պուլկի մէջը քցի, որ կովերը կաթնալի ընկնին։

Ուրբաթ գշերը աքլորիցն յառաջ դարբիններն անխօսակ էկան իրանց դուքանները բաց արին, գնդաններին երեք հետ չաքչեցին, որ Աբրաւաղդի գնջիլը հասատանայ, չի՛ կարենայ դուրս գալ աշխարհքը քանդել, տակ ու վրայ անել ու էլ յետ չինեցին դուռը, գնացին ժամ կտակ լսելու։

Փառք ի բարձունի վախտը ճրագներն անցրին, սեղանի վարագոյրը քաշեցին ու Գարեգինը նի էլաւ սեղանի քամակիցը բարձր ձէնով կարդաց կտակը։

ժողովուրդը սաղ չուր կարեցին, աչքները մինը մի պարկ գառաւ լալուցը. չիմանանք, թէ Քրիստոսի համար էին լալի. էն կտակի միջիցը աերտէրն էլ չէր մի բան հասկանում, ո՛ւր մնաց ժողովուրդը։

Ամէն մարդ միտքն էր բերում էս օր իրանց հին ու նոր մեռելները, աւելի նոր մեռելտէրերը, որ էս օր պատի ուրբաթը կատարէին, աչքներիցը ուքուր ուքուր (ողոռ ողոռ) վեր էին ածում. իլլաքի (մանաւանդ), թէ մի քիչ ապիլ ընկեր մեռածը։

Կանանանց սգի ու ողբի քա՛յ ու քո՛ւյիցը կըտակի ձէնն էլ չէր լսում։ ընչենց մրմնջալով ամէն իրանց ապիլ մեռելների անունը տալիս ու գօշներին բռնցկում էին, որ քար ու պողպատի սիրտ կունենար տեսնողը ու չի լաց ընողը. բա՛ր մարդ, որ դիմանայ, սիրտը փուլ չի գայ։

Ձրագը որ վառեցին կտակից յետոյ, ո՛չ մինի աչքն էլ բան չէր տեսնում. ճրագները ղժի վժի (խաղուն) էին երևում իրանց աչքերին։

Ժամը գնաց եկաւ, նոր մեռելտէրերը ոսպնախաշուի չուրը դրին. ինչքան բարեկամ կնաւնիք կային, հաւաքուեցին ու օրը մի քիչ բարձրանալից յետոյ գնացին գերեզմաններըը, նոր ննջեցեալի գերեզմանի չորս կողմը կարեցին ու մեռելտէրը վեր կալաւ բայաթին, մեկեկներն էլ ձէն քաշեցին, ընչանք աերտէրն էկաւ օրհնեց, նոր վեր կացան էկան տուն։

Ճաշուայ ժամիցը յետոյ ոսպնախաշուն դրկեցին ժամը աերտէրների ու մարդկանց համար, իրանք էլ հացից յետոյ մին էլ սուգ արին մեռելի համար։

Ժամի հացի վրայ երեք ողբումթաս խմուեց. մին՝ էս սեղան պատրաստողաց հին ու նոր ննջեցելոց հոգին, մին՝ ում համար որ սեղանը չինած ա նրա հոգին, մին էլ՝ Աշխարակ գեղումը ինչքան ննջեցեալք կան նրանց հոգին Տէր լուսաւորեսցէ։

Գարեգինն էլ տիրացու էր, էն սեղանի վրայ էր. համա հարցնենք մեր Սօսի համար, թէ ո՞րտեղ ա։

Նա էս օր Գարեգնին չի տեսել. նա առաւօտեան ժամից դուրս ա էկել, գնացել ա մի դարբնի դուքանում ղուլ (ծառայ) գառնել մի քանի հատ ուրբաթարօր * առնելու. հատն երկու ձու ա, չկա՞յ փոթօյին (ձոյգ ձի) գարի, ի՞նչն ա բօլ Սօսենց հաւերը. քանի ձու տուեց՝ ուրբաթարօր առաւ ու գալա վարդիթերենց գուռը, թէ ի՞նչ ա, տայ նրան, որ նա կարի իրանց երեխեքանց ուսներիցը, նա թատակիցը։

Սօսը ոնց որ ուրբաթարօրն առաւ, ընչենց ճնայ չկըլին։

Վարդիթերը ծէքելահան մի հետ դուս էր

---

* Ուրբաթարօրն է փոքր երկաթի կտոր, կռացրած երկու ծայրը իրար վրայ չամանի նման, որ կըկարեն երեխեքանց գլխի կամ ուսի վրայ, որ աչք չի դիպչի։

էկել, լուր լցրել ու տուն մտել. նա ո՞րտեղից կարէր նրան տեսնել։

Տեսաւ Սօսը, որ օրը ճաշ դառաւ, ճաշուան ժամն էլ վաղուց դուս ա եկել, քոռ փոչիման յետ դառաւ իրանց տունը։

Իրանց պատի երեխայ չունէին, որ նրանց գլխին կարէն, առանց էն էլ՝ գարբնի աչկերը մինը բաժանելուս տուել էր իրանց տանը։

Հաց կերաւ պրծաւ ու մի քանի հատ մուք ներկած ձու, որ մերը էրէկ էր ներկել, մի երկու էլ իրանց մէրուն (պառաւ) հաւերի ձուերիցը, մի ձու էլ կոտրեց, դարդակեց, մէջը սև ձուէթ լցրուց ու էլ յետ ընկնց կպցրուց, որ բէկլու չանի, վեր կացաւ գնաց Գարեգնի մօտը։

Գարեգինը մանթերին շաքաթ իրիկուան դերքերը սերտացնում էր, որ կարդան։

Սօսը մտաւ ներս ու հանեց կարմիր մուք ձուերը, դրուց Գարեգնի առաջը.—էքուց, ասեց, նշանած տղէքն իրանց սիրեկաններուն համար նաշխատած ձուեր կըղրկեն. հէնց ե՞ս պատի խալխի տակով, դուշմանի սրտով ըլնիմ։ Առ էս ձուերը նաշխի՛, տեսնենք, բայքի թէ մի սամթով ղրկենք նրան։

Գարեգինը, որ վաղուց մտքումը դրել էր էդ բանն անելը, բայքի թէ Վարդուհիերի մօր սիրտը նաշխատած ձուով էլ ա կրակի, Սօսի վրայ դարձնի, ձուերը վեր կալաւ ու ասեց.—հրէ՛դ ժամի բակում տղէքը ձու են խաղում. գնա՛ դու ընդեղ

ուրախութիւն արա՛. ես ինչ կընաչխեմ, հլա աշխարհքումն մարդ չի դուս էկել, որ միտքն իմանայ։

Սօսը, որ դուս էլաւ, Գարեգինը, որ աշխարհքումն բան չի ճնայել որ չի՛մանայ, առաւ ձուի պողպատէ ղալամն ու մի ձուի վրայ քաշեց Սօսի պատկերքը, Վարդուհիերի կուռը բռնած՝ բաղչի միջին վարդ քաղելուս։ Սօսը քաղում էր, Վարդուհիերը փունջ անում. տակին էլ գրեց, թէ «դոր Աստուած ղուդեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»։ Մէկել ձուի վրայ մի խնձորի ծառ քաշեց, մի կարմիր խնձոր վրէն, որ հոտը աշխարհքը բռնել էր. մի քանի ջահել տղէք քար էին քցում, որ էդ խնձորը վեր ընկնի. համա ոչ ով չէր կարում վեր քցել. ուժուանները կարած յետ էին ուղում դառնալ. յետոյ Սօսը գալիս ա, որ քար քցի, երկու օձ, որ ֆշշացնելիս մարդի երեսի հէնց քամի էին տալիս, որ սառչում էր ու տղէքը երեանները փախցնում էին, էդ օձերը պատուղը բերաններն առան ու գլուխ տուին, որ Սօսի քարը չի դպչի. Սօսը հէնց քցեց քարը, որ երկու օձի գլխին էլ դիպաւ. նրանք չդմեցին ու խնձորը վեր ընկաւ. տակին էլ գրում ա, թէ «էս բանը թթու էր թան չէր, ամեն մարդի բան չէր»։ Մէկ ձուի վրայ էլ քաշում ա Սօսին մի սիպտակ քահլան ձիու վրայ նստած, որի բերնիցը կըրակ էր վեր գալի վինչացնելիս. Վարդուհիերին դատակին գրած՝ մի սարի գոչի հէնց ա փախչում, որ

թօղը վեր ա ըլում ու թօղի միջից մի ծախ չափ ա երևում. չատ ձիաւորներ էլ քամակից ընկել են, ուզում են բռնել. չատերը ճամփին ձիու վրից գլխի վրայ ընկնում են, չատերն էլ մի ոտը մնացած օրզանգուլի միջին, ձին քաշ ա տա-լի. համա էնքան հեռու են, որ Սօսը նրանց աչքին չի երևում ու իրանք չեն հասնում, սկսում են յետ դառնալ. տակին էլ դրում ա, թէ՛ հաշխարհքս խելօքաբէխնով ա կերել. որ ա՛չ լուխցէ ունկամբ, լուխցէ թիկամբ»: Մի ձուլի վրայ էլ քաշում ա էն մանիչակը, որ Անուշը (Գարեգնի քոյրը) տալիս էր ժամումը Վարդիթերին ու առնում գալէն. տակին էլ դրում ա թէ՝ սաքի Վարդիթերի բերնից.

«Սիրել եմ սերն երեսին,
Ոչխան թէրն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստու կրակն երեսին»:

Ջուխրը նաչխելից յետոյ կանչեց Սօսին, որ ընչանք հիմի իրա սերա ձուխրովը մի յիսուն ձու տարած կըմնէր, չհանց տուուց նրան, ու Վարդիթերի պատի աղպօրը Փափախին, որ իր մանթըն էր, կանչեց ձուխրը տուուց, որ տանի իրի-կունը հէնց տեղ դնի, որ առաւօտը մէրն ու հէրը վեր կենան տեսնին ու պատուէր տուուց, որ էս խօսքը բերնից չի հանի, հէնց որ տակն իմանայ բանի, լսի խօսածն իր ականի ու նանի

(հօր ու մօր), գայ մի մէն իրան խաբար անի, թէ չէ ինքը նրա աչքը կը հանի:

Է.

Վարդիթերի մէրը Զատիկ շաբաթ առաւօտենց շուտով վերկացաւ, թունդրիցը կրակ հանեց, ճրագը վառեց ու մարդին էլ վերկացրուց, որ ժամ գնայ:

Հէնց ուզում էր դուրս գնայ՝ մի կարմիր նաչխած ձու առաջին վեր ընկած էր. կռացաւ, որ վեր առնի՝ մէնն էլ վերի դիհը, մէնն էլ մէկ էլ տեղը, կասես թէ տան միջին ցանած ըլնէր:

— Այ մա՛րդ, ասեց, էս ի՞նչ հրաշքներ են աչքիս երևում: քնած ե՞մ, թէ զարթուն. մի քանի նաչխած ձու ըսաեղ չաղ տուած թափած են. ի՞նչ սիրուն են. տէր Աստուա՛ծ. երեսին խաչ հանելով ճրագին մօտ ա բերում: հէնց մնի վրայ մտիկ ա տալիս՝ ընչ՛, Սօսն ու Վարդիթերը. մէկելին՝ էլ ընէնց:

— Մա՛րդ, տնաքա՛նդ, ասում ա. արի՛, տե՛ս ի՞նչ կայ, դեռ քնած ես, ոտներդ չըսում, աչխարհքսում ի՞նչ խաբարսէխուն ունես, խե՛ղճ միամիտ:

— Տօ՛ ի՞նչ ա, խանի խարաբի (shaitan) կնիկ. էլ ի՞նչ քչերհանայ լիսաթաթախ Զատիկ շաբաթ առաւօտահան դևերդ բռնեցին, իծանդ տուն եկան. տեսնեմ՝ էդ ի՞նչ ձուխր են:

Առաւ կնկայ ձեռքից ձուն. մեկ տուեց թէ չէ, մատը կծեց.—Հա՛, ասեց. բանի մէջին բան կայ. էս թէ արել ա՝ փուչ կենդանի՝ մաղ-մանի աչկերտ Գարեգինն ա արել. ըստեղ էլ մեր Փափակն ա բերել. ես նրա կիրակուրը կե-փեմ: Թո՛ղ ժամը դուս գայ, բարի լիսը բացուի, տես ի՞նչպէս եմ անպատիւ անում; ցեխը կո-խում, հանում նրան. տէր Աստուա՛ծ, էլ բե-րանս ի՞նչ ա գալի յետ դառնում: Ջատիկ շա-բաթ առաւօտենց, դեռ ո՛չ խեր արած ո՛չ չառ, դեռ երեսիս խաչ չի հանած՝ ընչե՞ր եմ տես-նում: ընտուր են ասել կռիւը ո՞րտեղից ա դուս գալի. համա բան չի կայ, թող բերաններիս հուպ տանք, էս երկու աղիզ օրերն էլ անց կացնենք, հաղորդութիւնի օր ա, զատկից յետոյ ես նրա աչքին հէնց երեսամ, որ քանի իմ անումը լսի, օխտն օրէն ճամփայ էլ հեռու փախչի. դու թո՛ղ ձուերը տանը մնան, ես ժամից յետոյ Աբշալիրին կարդալ կտամ: Հիմի արեխներս բե՛ր, համա չէ, էս օր աղիզ օր ա՝ մայկներս բե՛ր հագնիմ, հի-մի կասեն, թէ պինդ մարդ ա, հինգ տղայ ու-նի, էնքան հարստութիւնի ու գովլաթի տէր ա, ըսկնց օրը տրեխ ա հագնում:

Հեթումը մայկները հաբաւ, գնաց առուի ափը քուչումը էն սառը ջրովը երեսը լուաց, փե-շովը էլ սրբեց ու Աստուած կանչելով, Հայր մերն ու Անկանխմքն ասելով, գնաց ժամ:

Կնիկն էլ մի կէս ահաթից յետոյ չարսաւը գըլ-խին քցեց, հարաներին ու վարդիթերին էլ, որ վա-ղուց պատրաստուել էին, քցեց քամակիցն ու գը-նաց ժամ:

Ժամը որ արձակուեց՝ տէրտէրը սկսեց խոս-տովանք անելը:

Մարգի թէ կնկայ՝ կողքին չոքացնում ա ու լինքն իրան «Մեղքն» ջրի պէս ասում ու յետ դառնում «Ողորմեացի» տալիս: Ո՛չ կնանոնց, ո՛չ հարանների, ոչ էլ ազապ աղջկերանց ձէնը նա չի լսում: հէնց էն ա, որ առաջին չոքելիս ու վեր կենալիս քընթա-կանները կը կպցնեն տէրտէրի ձեռին, որ փիլոնի տակիցը մեկնում ա նրանց, սաքի թէ աչն ա-ռան. հաստատ հաւատացել են, թէ տէրտէրի ձեռը, որ գլխներին դիպաւ, մեղքները գնաց:

Բանը շատ երկարեց. տէրտէրը տեսաւ, որ ժամանակ չի մնում նշխարք գործելու, խոստո-վանողները քանի կենում են շատանում են, կանչել տուուց Գարեգինին, ոտ ու ձեռն ընկաւ, մի քանի ձու էլ կաշառք խոստացաւ, որ նստի ալիրը մաղի, խմորն անի ու կամաց կամաց նըշ-խարքը գործի՝ ընչանք լինքը մի քիչ թեթևանայ:

Տէրտէրը չահէլներին խոստովանացնելից յե-տոյ՝ պառաւներին էլ անց որ ելաւ՝ գլխիցը ռաստ արուց. Գարեգնի չինած նշխարքը տուուց ժամ-հարին, որ տանի գեղումը բաժանի: Ամէն մի նշխարքին երկու ձու աւ: Ինքն էլ նստեց նշխարք գործելու, մի կողմիցն էլ մանանատուփը կողքին դրած՝ եկող երեխանցը, որոնք չէին կարում ըն-

չանք իրիկուն սոված ճնալ, ևա թէ չէ պատիկ-
ները են, սրբուքիւն էր տալիս։

Մանրները հիմի էին հաղորդուում, մեծերը
ծում էին պահում ընչանք իրիկուն, որ պատա-
րագից յետոյ հաղորդվեն։

Ժամհարը միալար (անդադար) կրեց ձուն ու
խախալի մէջը լցրած, բերուց համարով յանձնեց
տէրտէրին ու էլ յետ նչխարք տարաւ. ամէն
տուն էլ պտի տար. շատ կնիկ էլ իրա ջերմե-
ռանդութիւնից երկու ձուի տեղ, չորս, հինգն
էր տալի, որ ժամարարը իրիկունն իրա ննջեցել-
քին պատարագի մէջին յիշի։

Ճաշ որ թեքուեց, արևը մի քիչ կախ ըն-
կաւ, տէրտէրը նչխարքից պրծաւ ու իրան թափ
տուուց, ժամը տալ տվուց։

Տե՛ս հիմի Աշտարակու թունդիրները. էս օր
առաւօտեանց չէին վառել. էն էր, որ երէկ առա-
ւօտ քուրսիքը դրել էին. հիմի ո՞ր տանիցն ա-
սես, որ ծիրանի մուխը էրկիզվը դուս չի ընուում։

Ամեն տան մի պառաւ կնիկ մնաց կիրա-
կուրներն եփելու իրիկուան համար որ իրանց սո-
վորականն ա. օչխիցը նոր հանած ձուկը տապա-
կած, գեղաքունի խաշած, վրաւ՝ ձուաձեղն էլ
տակը քցած, չոկ ձուաձեղ նոր թարխունով՝ ու
կողակ։

Մնացողները, մարդ ու կնիկ, հարս ու տղ-
չիկ լաւ լաւ չորերով զարդարուեցին. մարդիկը,
ով ունէր, իրանց մահուտ չուխէքը, ով չունէր,

լանքայ կապէն, գատակ արխալուղը, սև գայթա-
նից էլ դուկմայ կապած՝ լէն լէն ալչակները
(մաջիքը) ձեռների երեսին քաչքցած, Բուխարայ
կամ Ղրիմի մորթուց գատակը գլխներին, մաշկընե-
րը՝ որը բարձրակրունկ՝ ընչանք ոտի կէսը, որը տա-
փակ կրնկով. կնանիքը գլխները կապած, խուշուշկ-
ները (շալակի ճակատի վրայ եկածը) քաշած, քնթը-
ները կալած, քեաթիբայ, մինթանայ, ղանաւուզ
կամ ղասաբի փոխանով պռնկները՝ չատերինը գիւ-
լաբաթինով աղարուր կարած, չարսաւները՝ որը
պառաւ էր, երկու տակ քցած, որն էլ չահել ա՝
միտակ տուտը գօտիկը խրած՝ գլխներին քցած.
աղջկներն էլ՝ որը նշան դրած ա, կարմիր չաղ-
րաթը ընչանք պնչների ծերը քաշած, սաղրի
մաշկները հաքներին. որոնք էլ դեռ աննչանգնիլ-
են, Բաղդատի աղլուխը բկի տակովը՝ կարմիր
թչերը կիսովը կապած, ճալուերն (գանգուր) էլ
կէսն էս թչի վրայ փռած՝ կէսն էն, աչքները դեղ
դրած՝ գնացին ժամ։

Համա խեղճ ազապ տղեքանցը ոչինչ չունին
զատկուքիւն. թէ հարուստի տղայ ա, կըլնի,
որ հերը սատանի գլուխը տրորած ըլնի, գոգի
քարը վեր ածած, մի լուխտ սուր քնթանի լափ-
չին առած ըլնի. թէ ադքատ են, էլ էն չուրն
ա, էլ էն չաղացը. մի փօստը (գտակի միջի մորթուց
ատստաղը) դուս եկած գատակ ա, մի պատռտոր-
ուած արխալղահին, մի լուխտ ծակուած տղլափ
(կարկատան) դրած տրեխ։ Ղորթ ա՝ չորերը պատ-

ռուած կըլնի, համա սրտները հէնց ուրախ կըլ-
նի, որ տեսնողը կասի մի տուն խաղինայ ունին. ժամը հէնց լիքը կըլնի սրանցով, որ ասեղ քցես, դետինը չի ընկնիլ։

Մեր Սօսն էլ ըսօր ընչանք իրիկուն ծում ա պահել, ուզում ա հաղորդուի. վաղուց զար-
դարուել ա, էկել ժամումը կաննել։

Վարդիթերն էլ իրա հարսների հետ էլ ծում էկաւ ժամ աղջկերանց միջին կաննեց, որ նա էլ պտի հաղորդուի։

Շատ տղէք էլ՝ մի մին կարմիր ձու կլպած՝ աղ սրած, սիպտակ լօշ հացի միջին կոլոլած՝ չիքներուումը պահել էին, որ հէնց ողջումը վեր գայ թէ չէ, սաղ սաղ քցեն բերաննները։

Պատարագի վերջին մարդկանցից բռնած ընչանք կնանիքն ու աղջկէքն էլ հաղորդուեցին ու քաշուեցին իրանց տները։

Ծէրաէրն էլ մի տիրացու կամ ժամկարը հետը քցած ընկաւ տներն օրհնելու։ Թուղթը չուռ տա՛ր, աքսոին կուլ տա՛ր. մի տուն չարական ա, մի կարճ աւետարան, ընչանք ասել են, չաղացի կոտրած չախչախ են դառել։ Կարդում են ու վոզը ծընկացնում. համա չեն իմանում, թէ «ոտը վեր կալած չաղացը, խարաբ կանի ցորնի հացը»։

Ժամաւորը դուս էկան ու գնացին սուփրէն փռեցին ամէն մարդ իրանց տանը. հաղոր-
դուղներին մի քիչ գինի խմացրին գնա հաց չի

կերած ու ամէնը մի մին կարմիր ձու չարթելով՝ իրար հետ խաղալով, «Քրիստոս յարեաւ ի մեռե-
լոց» ասելով, մէկէն էլ՝ «Օրհնեալ է յարու-
թիւնն Քրիստոսի, բարով, մէկէլ սաղ աչքով, ուրախ սրտով հանենք էս օրին» պատասխան տալով, սկսեցին յաւաչ բերաննները ձուով բաց անել։ Ուսում էին, խմում, իրար հետ ուրա-
խութիւն անում։

«Ի՞չ կըլնի մի աղքատ գայ, ասում էր տան-
տիկինը՝ մեր սեղանիցը մանաւորուի, փառք քեզ Աստուա՛ծ, մեր աչքը մեր դրանն ա. հիմի քա-
նի՞ մարդիկ կան, որ չօլերումը գլուխները մի քարի դէմ արած՝ ճնում են էքուցվան, որ ճամփու ընկնին. քանի՞սը հիմի ցամաք հայ էլ չի գտնում որ իր սուլածուխիւնը լցնի. քանի՞սը հիմի բքարդ ընկած՝ ցրտին մատաղ ա էլել. հաղար բերան գոհ եմ քեզնից, իմ Աստուա՛ծ, դու իմ երեխա-
քանց աչքը իրանց դրանը պահես։ Շատերն էլ հիմի 10, 15 տեսակ կիրակուր առաջն ա դրել, չկլուխիւնիցը չի իմանում, թէ ո՞րն ուտի, ո՞րը թողայ. ես չեմ ուզում ընդոնք. էս քիչ հացը թո՛ղ իմ տանիցն անպակաս ընկնի, էս թաւուր ա-
ղիղ օրը իմ դուռը մի աղքատ բաց անի, կամ մի ղարիբ մարդ ճամբից եկած ընկնի, տեղ չու-
նենայ, գայ մեր հացը հալալ անի, էն ինձ հա-
մար լաւ աշխ, քանց հարուստների լիքը սուփրէն»։

Թէ որ Աստուած սրտներումը էր անում, մի աղքատ տուն էր մտնում հացի վրայ, էն սհաթը

տեղներիցը վեր էին թռչում, «համեցէ՛ք, բաբի ջան, աղպէ՛ր ջան, համեցէ՛ք հաց անուշ արա՛, ասելով՝ տանում սուփրի վիրի դիմը բաղմացնում։ Երթալուս էլ նրա խուրջինը կարմիր ձուով, ձըկնով ու ուրիշ բաներով լցնում՝ թէ տա՛ր հնկերներ կունենաս, նրանց էլ տո՛ւր»։

Ամէն մարդի տան էլ էս իրիկուն ըէնց ուրախութիւն ա ըլում անպատճառ. համա խեղճ Ջրատար Սօսը ժամիցը դուս ա էկել, դնացել իրանց սուփրի վրայ նստել, բերանը հաց չի դընում։ Նա միտք ա անում, թէ էս իրիկուն ամէն նշան դրած աղջկայ համար հարսնափայ ա դնացել, ձեռքերով չոր, չխաերով գաթայ, հալվայ, ոտով ոչխար ու նրանց վեսէքն էլ ուրախացած կըլնին, որ էքուց գնալ պտէն զանքաչատես. համա ինքն էսքան աշխատեց՝ չկարաց իր մուրազին հասնիլ։ Մէրը, աղպերտինքը զօռ են անում, թէ այ աղա՛յ, հաց կեր, էս թաւուր իրիկունը մեր հացն էլ հարամ մի՛ անիլ։

Նա ասում ա, թէ իշտահ չունիմ։

— Իշտահն տտամի տակին կըլնի, ա՛յ որդի, ընչի՞ էս ըէնց անում, պռնկնոտալով աստմ ա մէրը։

Նա հէնց պատասխան ա տալի, թէ—Աստուած սիրողն ինձ չի զօռ անի, հաղորդուած եմ, ձլաս կըտայ։

Խեղճերն էլ ահու սուս են կենում։

Ընչանք կացաւ Սօսը, որ հայը վեր կալան, տեղիցը վեր թռաւ, որ գնայ ժամի բակը, ախառի (զատկի մատաղի) կուշտը, որ մորթել էին ու քերթում էին. ու ընչունքի էս օր ինքը խաւնուած ա էլել չի կարացել ցախ տանիլ, հայ էլ դեռ չէին պրկել մի տուզ չալակ ցախ չալակեց, տասը հաց, մի աման աղ էլ տուեց իրա պստիկ աղպօրը՝ Գեղամին ու գնաց մատաղի կուշտը. ցախը վեր քցեց ու մնաւ ձու խաղացողների մէջը, որոնք հացը կերել էին թէ չէ, էկել էին ընտեղ։ Մանկին ու քսան ձու տանիլը մին էլաւ։

Սօսն էս քչեր բաց աչքով լսացրուց մատաղների կշտին, ձու խաղալով կամ պղնձներին տակը ցախ անելով։

Աղօթարանիցն առաջ, որ ժամը տուին, դընաց ժամի դրանը Գարեգնի ճամփէն ապասեց, որ հէնց գայ, տանի մի աման մատաղի Ջրիցը տաք տաք երեսի չաղ տեղիցը խմացնի։

Ուրիշ աիրացուներն էլ էկան չորսյայ խմեցին ու մնան ժամ։

Բազմութիւնը ձնի նման իրար վրայ թափուելով՝ ժամ են գալի։ Դռները չինել են, ինչ կայ, չկայ թողել տանը, իրանք էկել լցուել ժամ։ Թէ որ մինը Աստծու ահը սրտիցը հանի, աքուռը (պատիւ) վեր դնի, երեսի մեռոնը լուանայ, էլ ծակ չի թողալ, որ մտնի ոչ, մաղէն ու մուտը (եղած, չեղածը) կըհաւաքի, դուս կը գայ, ո՛չ ով բան չի իմանալ։ Տնաչէնները 365 օրն անց են կացը-

նում, մինն էլա հոգին միտքը չի բերում, ժամ գալիս. թէ որ հարցնես, թէ ընչի՞ չես ժամ գալիս՝ կասեն.—ես որ ժամ գնամ, ժամը տեղիցը կըփախչի, հիմի էս իրեք օրը սաղ տարուան փոխարէնը հանում եմ։

Ժամը որ վերջացաւ, Սօսն ու Գարեգինը, որ սովորութիւն էին արել, էկան տէրտէրին ասին, որ իրանց ողջումը նորի. տէրտէրն էլ աւետարանն առաւ ձեռը, կաննացրուց երկուսին առեջու տակին, սեղանի առաջին ու Ողջումի Աւետարանը կարդաց գլխներին, «Պահպանիչն» ասեց ու օրհնեց նրանց, որ սիրով կենան։

Մի քանի ուրիշ աղէք էլ իրար հետ ողջում տուին, ողջում ախպէր դառան։

Մի քանի էլ կնանիք, հարսներ ու աղջկէք էլ իրար հետ ողջումաքիր դառան, սէր հաստատեցին։

Վարդիթերն ու Անուշն էլ իրար հետ առաջուց խօսք էին տուել Ծառզարդար կիրակի օրը. սրանք էլ իրանց մօր հրամանովը էկան աւետարանի տակին ողջումաքիր դառան։

59 Ժամը որ արձակուեց, տունը մի մարդ մի մին վարխալ (դող) ու աղլուխ ձեռներին կիտուեցին մատաղի կշռին ու մի վարխալ մատաղի շորվայ ու քանի էլ տանը հոգի կան, ծծկեր երեխէցը բռնած ընչանք հալուորներն ու պառաւները, ամէնի համար մի մին լոչի մէջ վառ թաթած մատաղ առան։

Էս օր ամէն տան էլ անպատճառ պտի մատաղի չրով շորվայ ըլի. ընչանք սուրբ ախտռով չթաթախուին, բերանները նշխարք չեն դնիլ, թէ կուլ թուր ու սուր խաղացնես երեսներին, չընքներուին օձ վառթաթ տաս։

Գարեգինն ու Սօսը ժամից յետոյ գնացին Գարեգնենց տունը։ Գարեգնի աչկերտները եկան խալթի (վարժապետ) Զատիկը չնհատորելու, բերին նրա համար ձուաձեղ, ներկած ձու ու մի չուշայ արաղ։

Վարդիթերն էլ իրա աղպօր հետ պրկել էր թանի միջին նաչխած երկու ձու, մինը Սօսին՝ մինը Գարեգնին. սրանք էլ տեղակը երկու ուրիշ ղալամքաշ (փորագիր) ձուեր պրկեցին, որոնց վրայ գրած էր թէ «Մեղ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Պատի հարսների բաղդին էսօր օրը պարզ էր, արևը լաւ տաքացնում էր, ձնները հալուել պրծնել էին։ Կաւահանքի դուռը կանանչը քիչ քիչ բռնել էր։

Ճաշ որ թեքուեց՝ կնանիքն առան իրանց խիղանոցը (ընտանիքը), աւելի պատի հարսնատեղերը գնացին իրանց խնամու տունը, վեր կալան ընտեղից խնամոնց թօքունն (ժողովը), նրանց ամէն բարեկամներին, ազգ ու ընտանոնցը, որ առաջուց խնամին կանչել էր իրանց տունը, գնացին սուրբ Մարիան եկեղեցումը ուխտ արին ու անց կացան ժամի քամակը Կաւահանքի դուռը։

Սրի՛ դու էս տեղ ազապ տղեքանց հալը տե՛ս. ով մի քիչ հունար ունի, կռնումը ղօրու-
թիւն կայ, պաի բանացնի աղջկեքանցն արմայ-
նելու համար։ Ջիանը թամքել են, ղաջարու
(ձիու ծածկոց) ապրշումէ վինջուխները (ծայրերը)
կախ քցել, մի մին ջիրիտ ձեռներին բռնել,
չուխեքանց կամ կապեքանց վիշերը ջիբներովը
հանել, թևերն ուսներին կապել, կարմիր զանա-
ւուզի դաշլուղը (կրծոց) ղառ բաւթով (ներիզ)
կարած կապել դօշերին, ձիու վրայ հէնց սար-
քուած նստել են, որ կասես ամէն մինը մի խա-
նի աղայ ըլնի։ Ոչինչ բանի հոգս չեն քաշում,
հէնց ուրախ ուրախ իրար հետ խնդում ծիծա-
ղում են, կասես բակի վատ օր չեն քաշել. մէ-
նակ մի դարդ են քաշում, թէ ո՞վ պաի ղոչաղ
դուս գայ. իրա անուշն աղջկերանց բերնի խօս-
քը չինի։

Սօսը, որ էս թաւուր օրն իրա հունարը
չհանց չի տայ, էլ ընչի՞ ա պէտք, վաղուց պատ-
րաստուել, չինուել, ջիրիտը ձեռին ձիու վրայ
նստած էր։ Աչքերը քցեց կնանանց մէջը՝ տեսաւ,
որ իր սիրելի, աննման Վարդիթերը աչքի տա-
կովը իրան ա մտիկ տալիս արծուի նման, ու
հէնց իմանաս թէ աչքով, ունքով ապանչաք ա-
նելով, ասում ա, թէ ինձ ամօթով չի թողաս, ինչ
որ հունար ունես, պահես ո՛չ։

Դափ ու զուռնէն նշան տուուց։ Ջիրիտին
(ձիարշաւի եղանակ) ածելով ու Սօսը, որ թէկուզ

ոչինչ հունար էլ չունենար, Վարդիթերի երե-
սին մտիկ տալով, ասլան էր դառել ընկաւ էս
մէյդանի մէջը, երկու գլուխ ձին դէս ու դէն
քշեց, տաքացրուց ու ջիրիտը ձեռին չարխի պէս
պտիտ տալով ընկաւ իրա թշնամիքանց միի հետ,
որ Վարդիթերին ուզում էր, ու իրա ծիրանի
վէտից չարխաքաշի ջիրիտը, որ նետի նման չըք-
ցեց, նրա միջքումը հէնց կպցրուց, որ էս չանա-
թաթախ, աղջկերանց աչքին դիր եկած տղեն
չմեց ու գլխի վրայ գետնին փռուեց, ձին էլ
վախաւ։

Սօսը ղոլթ ա, չատ նախանձ ունէր նրա հետ,
ղոլթ ա, նա պողպատի պէս պինդ սիրտ ունէր,
հաւա գութ էլ ունէր. հէնց որ տեսաւ տղի
գոյնը թռած՝ գետնին փռուած, ուրախանալու
տեղակ արածի վըրէն փոշմանեց. էն սհաթը
վեր էկաւ ձիուցը, տղին խոտեց, տարաւ կնա-
նանց մէջը, որ ջուր բերեն խմացնեն, սիրտը կան-
նի։ Պաի ասած, որ Վարդիթերը ուրախութիւնից
աչխարհքն իրանն էր համարում։

Ընչանք Սօսի տղի հետ ըլիլը, մէկէլ տղեքը
մի քիչ քշեցին. հաւա հէնց որ նստեց ձիու վրայ,
ում քաւակիցը որ ընկնում էր, խեղճերը օձի
նման լիզուները հանում էին, ապանչաք անում
ու մէյդանից դուս գալի, ղրպին կանում։ աչ-
քերի առաջին տեսնում էին էն տղին. ընդուր
են ասել. «չալ օձը տեսնողը չալ չաթուից կը
վախի»։

Ամէն աչք էլ Սօսի վրայ կը թաց, մէր ու մա-
նուկ նրան էին մոխիկ տալի. ամէն չահէլների խօ-
սալու բանը դառաւ Սօսը, կէս սհաթից աւելի
ձիու վրայ նստած՝ մէյդանի մէջ տեղը, չիբիտը
երկինքը ծուռի քցելէն ու բռնելէն կաննել էր ու
կանչում, որ իր քամակիցը գան, քցեն, համա
ոչով սիրտ չէր անում նրան մօտանայ, նրա հետ
մէյդան դուս գայ. որ իգիթ (կտրիճ), քուրսու
տակներումը պարծեցող տղի էլ համեցէք էր ա-
նում, լեզին չուր էր կորում, թուք ու մուքը
բերնումը ցամաքում։

Սօսը շատ որ ճնայ ձեռը կողքին դրած՝ ձի-
ու վրայ կաննած, ոչ ով մօտ չեկաւ. ինքն իրան
մի ուրախացաւ, ձիու գլուխը յետ դարձրուց
դպա կնանոնց կողմը ու չիբիտը մի նաչխած ձու
հանեց, հէնց քցեց, որ ձուն գնաց ու վարդի-
թերի գոգումը վեր ընկաւ չի կոտրուեց. ով ա-
սես էս բանը տեսաւ ու մոթ էլած՝ պէլացած
(ափշած) ճնաց։ Մինն ասեց Սօսի վրայ թվիամ
(յուտուբի) կաչ. մինն ասեց սուրբ կարապետու
պան ա պահվել, նա ա տուել մեկելը՝ թէ սուրբ
Գէորգ էլ շատ ա գնում, ամէն շաբաթ մում ա
վառում նրա սիրու՝ նրա չնորհքն աւ։ Ամէն դըը-
խից մի խօսք էր դուս գալի։

Վարդիթերը ուրախութիւնից ծառս էր ըլ-
նում սրտումը, համա մօրը, որ դանակ տալիը,
արին չէր կոթալ, ուզում էր հերսիցը սիրտը
բերնովը դուս գայ. աւելի կնանոնց ասակութէն

չատ բորը էր տալի նրան. լուն ուզտ կչինեն՝ ձէն
էր, որ անկաչն էր ընկնում, ո՞ւմ բերանը վակի,
առանց էն էլ էրէկուան ձուերը դեռ մոխն էր.
համա ի՞նչ անէր, ձեռին ճար չի կար, էս թա-
ւուր ապիզ օրը, որ մարդի գլխի ապուն էլ ա-
գաս, չաղաց պտիտ տաս, խօսալ չի պտի, թէ չէ
լափ չուռ կըտան գլխին. «մուկը ծակը չէր մըտ-
նում, ցախաւելն էլ պոչիցը կապեցին». քիչ էին
թաքուն խօսում վրընները, էդ էլ աւելցրին։

Ձիու խաղը վերջացաւ, հերթն ընկաւ աղ-
չկերանցը. գափ ու զուռնէն ածեցին ու եալլի-
բաչի (պարեզդուխ) Խանումը վեր կեցաւ տեղիցը, 67
մի ձեռն աղլուխ առաւ, մեկել կուռն էլ քցեց
իրա հարսին ու սկսեց խաղալ. զուռնէն ճռներն
էր ընկել, հէնց կոտրատուելով ժաժ էր գալի.
մի մին էլ աղլուխը պատեղով, որ ամէնի էլ հարսաթ
քցեց։ Քոմմա էլ տեղներիցը վեր կացան, եալլին տա-
քացրին ու ծանր ու բարակ սկսեցին տմբտմբալով,
ընկընկալով պտիտ գալ։ Աչքները Խանումի վերայ
էր, նա ոտը ոնց փոխում էր, նրանք էլ հե-
տը։ Համա բանն էս ա, որ Վարդիթերի մէրը
չան պոչը բռնել ա, վերի ոտին կաննել չի թո-
ղում, որ խեղճ աղջիկն էլ ընկնի եալլու մէջը։
Ուրիշ կնանիքն ինչքան մուննաթ արին, նա աւե-
լի սատանի ձին նի էլաւ, վեր չեկաւ։

Սօսը ձիու վրայ կաննած մոխիկ էր տալի,
հէնց որ տեսաւ, թէ պառաւը չի ուզում աղ-
չկանը թողալ խաղալու, եկաւ Գարեգինի կուշտը,

որ ընտեղ կաննած Թամաչայ էր անում. քեղնից սաւահի, ասեց, ոչ ով չի կարող պառաւին բան հասկացնել, դնա՛ երեխին եալլու մէջը քցի, թէ չէ ուրախութիւնս մոխցս կընկնի։

Գարեգնին էլ զորթ ա, չէր սպի, որ էնքան կնանոնց արանքները ճղի անց կենայ, հասկա չինքը ծռած էր խաչն էր, մէջ տեղը Սօսը կար, թէ նրա խօսքը կոտրած՝ թէ նրան սպասնած՝ մին ա. ըտուր հանար անկացաւ էդքան կնանոնց միջովը ու նստեց Վարդիթերի մոր կողքին։—Կամ, ասեց, ինձ սպանի՛ր, կամ էդ երեխի սիրտը մի, կոտրիլ. «սիրտը շուշայ ա, թէ որ մի կոտրուեց, էլ չի սաղանալ, թէկուզ կոճկուի էլ». քու թշնամիքդ մի՛ ուրախացնիլ, բարեկամներիդ ախրացնիլ. նա չահել տղայ ա, դեռ չուրը գաբրիդուս էր, չէր հասկանում։ դեռ թղթի մի եբեան ա կարդացել, դու է՞լ ես ուզում երեխայ դառնալ, արինն արնով չեն լուանալ, մի՛ անիլմի՛ ըընիլ։ Էս ասեց ու վերկացաւ հաւի ճուտի պէս բարձրացրեց Վարդիթերին, որ մոր կողքին չինքը ծռած՝ կռնները խաչած՝ նստած՝ անկաղ էր գնում դրա խօսքերին, տարաւ քցեց եալլու մէջը, ինքն էլ յետ գառաւ էնքան գիլի աւետարան կարդաց պառաւի գլխին, որ սիրտն առաւ, գլուխն եղ քսեց, նրան էլ տատնուհինդ տարեկան աղկայ պէս տարաւ քցեց եալլու մէջը, խաղացրուց։

Եալլին որ պրծան, քէյվանի կնանիքը, որոնց ձեռին էր հրամանը, առան իրանց թօքաւոնները ու ցրուեցին իրանց տները։ Սօսն էլ ձիու վրայ նստած՝ չկրիտը ձեռին խաղացնելով, գնում էր էն թօքաւոնի եաւէրը, որի մէջն էր Վարդիթերը, մտքումն ունենալով նրա սերը, աղօթք էր անում առ ամենակալ Ծերը, որ օր առաջ հասցնի իրան իրա ընկերը, թէ չէ էնքան չի քնիլ քչերը, որ կը քօռանայ աչքերը. ընչուներ, ինչպես աստմ են, սթաթիին էր կպել սերը, անկարելի էր չակերը։

Էս օր ընչանք իրիկուն չահելներն ըստեղ քէֆ արին, հասա ահէլները (ծեհերը), քեթխուդայ, տանուտէր ու ամէն պատուաւոր մարդիկն էլ ամէնքն իրանց տանիցը մի բօղչայ հայ, մի գաւ գինի, մի մին քթաւ էլ իրանց հասար՝ մի ամանով առան գնացին ժամի բակչումը նստեցին։ Մատաղի ճնացած չորվին բլինէ էին քցիլ, չլայ չինել. արանք էլ չիլէն կերան ու ընչանք իրիկուն լաւ խաղ ու տաղ ասելով անց կացրին ընչանք ժամի տալը։

Երկուշաբթի օրը նոր ամէնն իրանց մեռելներին մոքները բերին. վեր կալան մի մին կապոց հայ ու երէկուան ճնացած աւելյուկներիցը, գնացին գերեզմաններն օրհնել տվին, մի մին թաս էլ ողորմաթաս խմեցին ու ամէն մարդ գընաց ըստուց յետոյ իր աշխատանքին։ Հասա ընչանք ժամի տալը պտի բանէին, թէ չէ ժամից յետոյ որ բանէին, հաւկիր կըընէին, աչքերը բան

չէր տեսնիլ իրիկնապահիցը բռնած. ընչանք Համբարձումը հաւկիրը չուռ տալու օրն ըսէնց կըմնայի *։

Ը.

Զատկիցը յետոյ Աշտարակումը ո՛չ ըլնի, աչքին մի նոր բան կերևայ. բոլորը ծառ ու տունկ ա, կանանչները նոր դուս էկած՝ ցնծին են տալի յիքանոնց ափներումը, ուռի ծառերը բաց արած իրանց լեզուակ տերևները, գարնան բարակ քամուցը խշխշալով իրար են դիպչում, հէնց իմանաս, թէ իրար բարովում են. պտղատու ծառերն իրանց կարգին՝ որը կոկոմել ա, կարծես, չարած մարդարիտ ընի, որն էլ ծաղկել ա, եօթանասուն տարեկան հալևորի նման տալիս ա մարդիս մի յոյս ու սրտին ուրախութիւն, թէ պէտք է մին օր վայելես իմ քաղցրահամ պտղիցը. մանիշակն ու եասամանին (յասմիկ) իրանց անուշ հոտերովը քաղցր քուն են բերում յիքու մէջ սէհր անողին. մանիշակը գլուխը քաշ ա քցել պատի հարթ կամ ազատ ու ապուռով աղկայ նման, մտել ա խոտերի տակը, որ չըլնի թէ երևալը հպարտութիւն համարուի. համա եասամանն իրա ծառի վրիցը ճիթ ճիթ կախ ընկած ու հոտով աշխարհքը լցրած՝ հէնց իմանաս, թէ կանչում ա անցկենողին, որ առանց իրան ու իրա պարկեշտ քուերը տեսութիւն գալու չի անցկենայ. վարդն էլ դուս էկած ձմեռուան տըկլորութիւնիցը՝ հաքել ա կանանչ աթլաղ չորերը ու իր ոսկի կոճակի նման կոկոնիներովը իմաց ա տալիս, թէ ես պրկել եմ ինձանից յառաջ իմ քիր մանիշակին, որ ձեզ ուրախացնի, ընչանք ես էլ կը գամ իմ մեկել ծաղիկ ընկերներուն հետ։

Էսպէս ամէն բանն իրանց կարգն ընկած՝ մի ուրախութիւն էին բերում մարդիս վերայ Կարմիր կիրակի օրուան առաջին շաբաթ օրը, որ Սօսը Գարեգնի հետ առաւօտեան հովին մանէր գալիս իրանց յիքումը։ Երկուսի ձեռին էլ մի մին փոնչ ծիրանի մանիշակ ու մի ճուղք եասաման։ Սարեկները ծառերի ճղքներին կանանած՝ կարմիր արեգակի դէմը հազար ու մին տեսակ պէծերը հէնց սիրունացնում էին նրանց, կասես, թէ ամէնը մի աստղերը ճառագած քչեր ընի։ Համա ի՞նչ մի մեծ սար կար էս երկու ողջում աղպօր մէջը։ Մինը ուրախ սրտով, համբերող հոգւով ղուարճանում էր էս տեսարաններովը՝ մտքումը ղարմացած Աստծու բարիքների վրայ, բայց մեկելը բռնած իր առաջին բարեկամի կըռնիցը, ղորթ ա, երեսահանց խօսում էր ու մի մին հետ էլ ժմռում, որ չի կոտրի իր աղպօր քնքուշ սիրտը, համա սրտիցն արին էր գնում. մանիշակը, որ վախտ վախտ պինչի մօտ էր տա-

* Այս հաւկուրի սովորութիւնը շատ ճշտութեամբ պահպանում են բոլոր Հայաստանումը յիսանց 40 օրը։

նում ու հոտ քաշում, հէնց իմանում էր, թէ բիանի կամ եավշանի դառը հոտ աւ։

Վերջը չի կարայ համբերիլ ու մի խոր հոգէյ որ չքաշեց, հէնց իմանաս, թէ Գարեգնի սըրտին մի թուր տաս։

— Ի՞նչ ա էլել քեզ, աղակ՛ր ջան, աղալի ձէնով ասեց Գարեգինը, քեզ չե՞մ ասել, որ ըսէնց օրն էլ ա թո՛ղ հանգիստ վեր ընկնիմ։ Թէ ըսէնց պտի անէիր, ո՞ւր էիր ամալ աչալս կըտրում, հետդ քաշ տալով բերում։ Ի՞նչ ա էլել, փառք Աստծու, մտիկ տո՛ւր էս գեղեցիկ օրի քաղցրութիւնին. Աստծու բարիքների վերայ անբան սարեկներն էլ են ուրախացել, փառք են տալի Ներան, նրանցից էլ ա սարվի՛. գիտե՞ս դրանով հոգուդ մեզք ես անում։

— Ա՛խ, ի՞նչ անեմ, մէկ էլ խոր հոգէյ քաշելով ասեց Սօսը, ըտոնք են, որ իմ սրտին եարայ (վերք) են դառել. մենք հիմի էս օր ուբախանանք, էքուց ի՞նչ անենք։ Էքուց ուրիշների յիքանիքը կանանոնցով լիքը կընի. ընչանք ե՞րբ պտի մեր խեղճ յիքու ափը մի ուրախութիւն անոգի երես չի՛ տեսնի, կարմիր ձու ու ձուաձեղ չի թափուի վրէն. ընչանք ե՛րբ էս կանանչ Աստծու տուած խալիչէն, էս սիրի-սիրի խոտերը չի տրորի Վարդիթերի ոտները. ընչանք ե՞րբ պտի աղապ աղջկերքը չի քաղեն էս սիրի սիրի խոտից ու սրա տերևովն իմանան իրանց եարը (սիրահարը) ու մատով իրար չհոնց տան էն

հետու տեղումը նրանց սիրու համար էրուզ չահէլներին։ Ձե՞ս իմանում, որ էքուց կարմիր կիրակին ա, ի՞նչ կըլնի ուրիշների յիքանանցումը. էս մանիշակը ընչանք ե՞րբ ես պտի քաղեմ ու ձեռումս տրորելով թոռոմացնեմ. ընչի՞ չի՛ պըտի Վարդիթերի ձեռին ընկեր. ասում ես գժուիլ մի՛, թէ ես չի գժուեմ՝ ո՞վ գժուի, քար ու քօլ հօ չպտի՞ գժուեն. ընչի՞ չի պտի մեր ափներն էլ ուրիշների նման զազալները (աշնան չորացած տերեւ) կրակ տուած ըլնի սրբած, որ էքուց կանանչ խոտի, չայիր չիմանի վերայ կարմիր ձուով կարմիր կիրակի անցկացներ Վարդիթերը...

Սօսին թէ թողայիր, էնքան կը չարէր, որ օխտն օր հատնիլ չէ՛ր. սիրով երված սրտին ո՞ր լուրը կարայ հովացնիլ, բայցուլն էլ էնքան չէր կարող իր սրտի դարտերը վարդի կշտին բացանիլ, եթէ Գարեգինը թողար, որ նա խօսքն յարաչ տանէր։

— Հերիք ա, ասեց, հէնց ասենք սիրտդ էրված ա, չպտի՞ թողաս մարդ բերնիցը մի խօսք հանի. ասել են քիչ խօսա՛, չատ լսի՛. քո տունն Աստուած չինի, դու հարիւր խօսում ես, մարդի մին էլ չես թողում բերան բանայ, ի՞նչ էլաւ քեզ. թէ կուզ նիհնես երկինքը, վեր գաս գետինքը, էս տարի անցկացաւ, միայ աշունքը. թէ կուզ չանդ քանդես, քեզ կրակի մէջ քցես, էրէս, հօ Աչաարակայ սովորութիւնը չե՞ս կարող քանդիլ. գիտես, որ մեր նշանդրէքն էլ՝ հարսանիքն էլ

ձեռնէ ձեռն ա, մի աթռում (մի կռակեղու) բա-
րութի պէս բան ա, որ կրակը դիպչէ թէ չէ՝
էն սհաթին կը պրծնի. դու հիմի նհախ տեղը
ծանր տեղդ թեթևացնիլ մի՛, «քարն իր տեղը
ծանր կընկի. ծանր նսաիր լիար գաս», քու բա-
նիդ կա՛ց, աշխատի՛ր. երբ որ Աստուած կը տայ,
էս տարի էլ յիքանիքն երես կը տան, աշունքը
Մողնու ուխտից յետոյ քուԹահ կ'անենք, կը վեր-
ջացնենք։

Համա որ սիրտդ ուզում ա, էքուց նրանք
կերթան յիքին, դու էլ մի քանի տղի հետ գնա՛
մոիկ տո՛ւր, ես էլ կըգամ. հաց վերկա՛ր, Աստ-
ծու տուածիցը գինի վերկա՛ր գնանք. ես գի-
տեմ, Պատռելակոնդը կերթան կամ Զորահորիկ.
մենք էլ կերթանք նրանցից մի քիչ հեռու կը
նստինք, քէֆ կանենք, մեր կուռն ո՛վ կը բռնի։
Մի վախիր, Աստուծով մորը կակղացրել եմ,
տամորը գտել եմ. հէնց կանեմ որ ինքը մեզ
համար պաշար կը ղրկի, ոնց որ զանքաչներն
իրանց վեսէքանցը կը ղրկեն, դու հիմի արի՛
գնանք տուն, մի կտոր հաց ուտենք, ճաշ անց-
կացաս, սոված փորին ըստեղ մանգալը սաղիլ
չէ։ (Թէ և օրը նոր էր բացուում)։

Կարմիր կիրակի օրը Պատռելակոնդի (մի ա-
վային տեղ է ծաղիկտես մի այգու կողմի) դուզը հէնց
լմնաս, Թէ կարմիր ու սիպտակ պատկերներով
լիքն ընկի. ո՛ր կողմն աչքդ կցում ես, կիտուկ
դառած դուս են գալի իրար քամակից գառան

նման տռճնկի տալով աղկէքը չալիկ մալիկ շո-
րերով։

Փասաղ դեսը ներքևը դղգղալով, մեծ մեծ
քարավներին դիպչելով, էնի նման փրփրակա-
լած անց ա կենում, նոր մի քիչ հանդարտացած
իրա կատաղի վարարութիւնիցը ու դեռ հլա
պղտոն երեսիցը չի գնացել։ Նրա երկու կողմի
ափներումը Թօռը ձեռին կանգած ա էկնորան ու
Թաղայ ձուկը խլպլտալով հանում Թօռի միջիցը,
քցում ափը։ Մեր սիրուն աղկէքը վերևը կան-
գած՝ իրար չհանց են տալի ու ամէն Թօռը քը-
ցելուցին իրանց մեի բաղդը վոճում։

Վարդիթերն էլ աղկերանց միջին խառը,
տխուր, արտում մոիկ ա տալի Պատռելակոնդի
բարձր քարափի գլխիցը ու իր կրակոտ աչքերովը
մեն ա գալիս ուռիքանց փռնուտաների (մացառուտ)
միջին կամ չըի խչխչան տեղումը իրա սիրեկա-
նին, որ նոր Թօռովը վորձի իր բաղդը։

Համա Սօսը չի ուզում մի քանի կնատ տը-
ղէքանց պէս աղկերանց առաջին պարծենալով
Թօռը փռել չըի միջին. նա գնացել ա Աղբիւ-
բակներիցը լաւ լաւ կարմրախէտներ, կապուտ-
ներ, մորադներ, ճանճառներ ու սաճախներ (ձկանց
անուններ են) բռնել, ուռի ճղքան վերայ չարան
արած, ձեռին բռնել, կռնի կախ բերել ու ինչ-
պէս Գարեգինն ասել էր, Պատռելակոնդի ք-
րափի տակին ծիրանու ցախի քօղը (կրակը) չաղ
արևլ, սերկևիլի չիւերից չամիրներ չինել ու

ձկները ժժժի տուել, ընչից որ նոր ձկան հոտը սաղ թառակը (թաղ) բռնել ա։

Գարեգինն էլ մի քանի չահելների հետ թևերն ուսներին քցած, խաղ ու տաղին ղլած, քաղցր ձէնով կկլացնելով, ուրախութիւն անելով, իրան ժամանակին էկաւ ու հէնց ընտեղ վրայ հասաւ, որ սիրուն սիրուն աղջկէքը Պատուելակոնդի գղջումը կուռ կուռի բռնած՝ իրար հետ ուրախ ուրախ վազէվազ էին անում։ Ձիքու. ափսոսմն էլ կնանիքը նատոտած, որը ղրից են անում իրար հետ, որը ափներին են ման գալի։ Համա վարդիթերը մէն մէնակ քաշուել ա մի քունջ ու աչքը քցել էն տեղին, որտեղանց վեր էր կենում Սօսի ձկների ծիրանի մուխը։ Մի սըհաթից յետոյ էս թառակի (թաղի) յիքանանց ափները ասեղ քցէիր, գետինը չէր ընկել, ամէն տեղից ղուվռոց ա, որ գալիս ա։

Կնանիքը սուփրէք ա, որ բաց են արել, կանանչ ափները դառել են կարմիր ճուի խառճեպ, երեխէքը բոլիկ ոտով, գլխները բաց ժանդ ու ժունդ են անում։ ճօճ քցած ծծկեր երեխանց ճաճանակելուցը մարդ մարդի խօսած չի լսում։

Մէկէլ կողմից գրանցից բաւական հեռու աղապ տղէքանց ձէնը զանգակի նման ա գալիս մի մեղ կշուից, որ թէ մօտ գնաս, բոլոր թաղայ ճուկն ա. կնանիքն իրանց սուփրեցը բաժին են հանում, ղրկում իրանց տղէքանցը, որը ղանքաչ ա՝ փեսին, որը մէր ա՝ տղին, որը՝ բարեկամին.

տղէքն էլ իրանց կալած ձկներից բաժին են յետ ղրկում հնանոնցը, ուրախութիւն ա, որ ընում ա։

Հացից յետոյ տղէքը թօփ էլած իրար կուշտ «Լէլէ» են ասում ու խաղում։ Աղջկէքն ու հարսներն էլ իրանց քէյվանոնց (կառավարողներին) հրամանովը տղէքանց «Լէլէովը» կուռ են բռնում ու «հալլի» խաղում; հա թէ չէ իրանք քաղցր ու բարակ ձէնով հէնց ասում, որ մէնակ իրանք են լսում։

Էս օր ընչանք իրիկուն ըսաեղ քէֆ արին ու ժամի վախտ ամէն մարդ առաւ իրանց թօռ-բունը հեռացաւ. պզտի հարսներն էլ կէսուրնէրի ձեռը պահեցին ու իրանց մօր հետ գնացին հէրանց տունը. մի չաբաթ էլ ժամանակ ունին ընչանք կանանչ կիրակի օրը հօրանց տանը քէֆ անելու։

Թ.

Երկուշաբթի առաւօտենց Սօսը բահը բերուց սալքեց, ճլուռի կոթը քցեց վրէն, ծիրանի թաւիչակն էլ անցկացրուց, կռնեն հղեց, լափչինները (կօշիկ) վեր դրուց տանը, տրեխները հագաւ, էտոցն էլ խրեց մէչքը ու գնաց փոխարայ —բանատեղ վարդիթերենց յիքին փորելու, որ նրանք էլ գան իրանցը փորեն։

Վարդիթերի հերը հալուռ մարդ էր՝ համա հէնց ղվան (առոյգ) ոտիցը թեթև էր, որ կասէիր,

թէ քան ու հինգ տարեկան տղայ ընկեր. բան-
ւորներիցը յառաջ գնացել էր յիքումը նստել:

Հէնց որ տղէքը բան ընկան, կանգնեց գլխա-
վիրևները ու սիրտ տալով նրանց ասեց.—դէ՛, տը-
ղէ՛ք ջան, ապրի՛ք, ձեր ջանին մատաղ, աչխա-
տեցէ՛ք, լաւ բահի տուէ՛ք. ես ձեր վախտը հէնց
փոր էլի անում, որ բահը ձեռիս դողում էր. ու
հանաքներ անելով նրանց էշխի քցելու համար՝
ասում ա.—տօ՛, ձեր տղամարդութիւնին ի՞նչ
ասեմ, ձեր վախտին ես քարին հուպ էի տալի,
ջուր էր դուս գալի կամ հող էր դառնում բըռ-
նում, մածունն անվչիլ էի ուտում; օխտը հա-
ցը մի աման կիրակրով էի խփշտում; եղը ջրի պէս
էի խմում, հիմի ա, որ ոտից ձեռից ընկել եմ;
բերնիս մռիկ անող չկայ, ոչով ինձ մարդատեղ
չի քցում: Ախո՜ս ժամանակ, անցկացած օրերին
օր չի հասնիլ, մեր վախտն էլ մի վախտ էր, էլ
ձեռ չի ընկնիլ: Ասէք ո՛չ, թէ հալիւորել եմ;
խելքս յետ ա տուել. ինչքան էլ ոտ ու ձեռից
ընկած ըլնիմ; բանի միջին ձեր պէս օխտը տղին
հում հում կուտեմ; կը թողա՞մ որ չունչ քա-
շէք, «ուղտը ինչքան սատկի, սատկի, կաշին մի
իչի բեռը կըլնի». դէ՛, ապրին իմ տղէք հա՛.
տօ՛, ասէնք ասում եմ՝ ձեր սիրտը ուրախացնե-
լու: Ղօրթ ա, ասած ա, թէ հիմիկուան տղէքն
անբան են, ծոյլ են, համա ձեզ պէսերի համար
չի ասած. մի քանի ային-ոյին (անիշան), թիլիկ-
միլիկ տղէքանց համար են ասել, «իմացել են

Ալին մեռել ա. համա չեն իմացել Ալին ա՞, թէ
Մահմատ-Ալին»: Ա՛յ, հրէս նրանցից մինն էլ
մեր վահանը, դէ՛, քու յետ քցողի հերը օրհնուի՛,
կասես, ձնհնէրը փլաւ են ուտում, աղբաթդ-
խէ՛ր, կա՛ց փլաւը գայ, նոր կռնեցդ քշատ՝ է՛,
համա չնեղանաս, որդի՛, հանաք եմ անում: ապ-
րի՛ն իմ տղէքը. ապրի՛ իմ Սօսը, տե՛ս է՛, մա-
շալլա՞հ, կա՛սես ասլան ա, բանը ձեռին դողդում
ա, ի՞նչ կասեմ ըսէնց տղին, հալալ ա սրան հա-
ցը իր մօր կաթի պէս, քու բերդոյ մէրը քեզնից
օխտան ունենայ, հօ ունի է՛լ փառք Աստծու, հա-
մա նրանք քու մօտ հալի ճուտ: Բաս, որդի՛ք,
Սօսը քեահլանի ջինս ա (ձիոյգի ցեղ), Աստուած
սրա պէս կարիճ տղին իրա մուրազին կը հաս-
ցնի. խնդրեմ անարժան բերնովս ամէնիդ սրտի
մուրազն էլ կատարի. ամէնքդ էլ լաւ էք աչ-
խատում: Ապրի՛ վահանս, աչքումը եղ ա ունե-
ցել, լաւ տղէք ա ջոկել բերել. էն անկեալ ու
ճլէրքներին լաւ ա ճանանչել. բաս, որդի՛ք, տես-
նո՞ւմ էք՝ սրանք ոնց որ չան են տալի մեր բա-
նին, դուք էլ պտի չան տաք սրանց բանին (իրա
որդուցն է ասում). աչխարհքս փոխ հայ ա, ոնց
կանես, ընէնց կուտես. ես էս թաւուր տղէքան-
ցը տե՛ս ի՞նչ պատիւ եմ տալի: Փափա՛կ (պատի
տղեն), պրծի՛, դնա՛, տե՛ս հայն ի՞նչ արին, ճաշ
դառաւ, էսքան կը յետացնե՞ն, տղէքն ախոռս
են. ա՛խ, կնիկ, ընչանք օխտը սհաթ ճըըրացել
քունչ ու պուճախս ա ընկել փափաղով, բանը էս-

տեղն ա հասել. ի՞նչ անի խեղճ պառաւը. հիւ-
միկուան հարսներն իրանց կէսօրնոերի գլխին
խանում են գալի, մի բանի դնելիս՝ նօթերը կի-
տում են, պնչները օխտը գազ կախ քցում. խեղճ
պառաւս էլ վախելութիւնից ո՛չ մի հարսին բա-
նի չի դնում, քոմմա ինքն ա անում...

Ըհը՛, հացն եկաւ, ապրի՛ իմ պառաւը. ես
գիտէի, որ նա բանը յետ չի քցիլ։

Մին էլ տեսնինք, որ մենծ հարսը դաս-
տախնումը (ախոռց) կապել ա տէվերով (փայտէ ըս-
կուտղ) վըռան ու դրել գլխին, հրէս էկաւ։

Վարդիթերն էլ գաւը դինին լցրած, ձեռին
բռնած՝ էկաւ։ Խեղճը չէ՛ր գիտում, թէ իրա սի-
բահարը, իրա անուշ հարը իրանց յիւթումը բա-
նում ա. գլուխը քաշ քցած՝ դեռնին մտիկ տա-
լով, գալիս էր հարսի քամակիցը։ Հէնց որ հա-
սաւ բանւորների կուշտը, գլուխը վեր քաշեց ու
երբ որ աչքովն ընկաւ Սօսը, ամօթիցը խեղճ աղ-
ջիկը կարմիր վարդ դառաւ. տաք ջուր բերանը
կոխեց, քիչ էր մնացել, թէ խեղդամաղ ըլնի։
Սօսի հօ բահը ձեռիցը վեր կընկնէր, թէ չուզե-
նար իր հունարը չհանց տալ իրա ապիղ ջխանին։

Երբ որ հալիւորը ձէն տուաւ.—յետ գա-
ռէ՛ք, տղէ՛ք ջան, ձեր արևն ապրի՛, հալալ ա
ձեզ հացը, Սօսը մտիկ չի տուաւ ու էշխին ըն-
կած ուզում էր է՛լ փորիս։ Գնացէ՛ք, ասեց հըն-
կերներին, նստեցէ՛ք, ես իմ թմբի կիսատը վե-
րեմ ու գամ, ասեց ու բահը հէնց չուտ չուտ

բանացրեց, որ չես իմանում, թէ ոնց ա տալի»։
Համա վարդիթերի հերը չի՛ թողուց.—արի՛, ա-
սեց, հաց կե՛ր, գօտիկդ պինդ՛, յետոյ. առանց
էն էլ քու աշխատանքն ինձ հասաւ, «բանն ով
անի, ես ու դուն, հացն ո՛վ ուտի, ես ու դուն.
հացը հացարարին տո՛ւր, մինն էլ աւելի». ապ-
րի՛ք, ամէնդդ էլ լաւ էք աշխատում։

Վարդիթե՛ր ջան, տա՛ր վարխայը վերի կա-
ւառիցը (ջրաբերան, որտեղից ջուրը մտնում է այգու
մէջ) լցրու բե՛ր, որ տղէքը ձեռները լուանան ու
հէնց որ տղիկը ջուրը բերուց, հերն ասեց. ա-
ծա՛ ջուրը ձեռներին, որդի՛։ Խեղճ տղիկը գը-
լուխը կախ քցած՝ ամէնի ձեռին լցրուց ու հէնց
հերթի հասաւ Սօսին՝ նա չէր իմանում ի՞նչ ա-
նի, թէ ածէր՝ գեռինն էր մտնում ամանչելուցը,
թէ չի՛ ածէր՝ համ աւելի ամօթ էր տղէքանց
մէջին բանը յայտնելու, համ էլ վախում էր
Սօսի սիրտը կոտրելու։ Էս տղաթէթը խէրն էլ եր-
կու ահաթ կաննել ա, նոր ձեռների ցեխը վեր
բերում. տօ՛, մի ասես, քու ընչի՞ն ա պէտքը
սօֆութիւն (մարդուն) անելը, դու մի բանւոր
մարդ ես։ Համա չէ՛, նա ձեռներն իստակելու
համար չէր կախ քցում, խալխն էլ լաւ գիտէին,
Հեթոումին էլ լաւ յայտնի էր բանի էութիւնը.
նա էլ չուզեց նրա սիրտը պակսի, ընչանք կա-
ցաւ, իր քէֆովը ձեռները լուաց պրծաւ, նոր
կանչեց իրա մօտ նստացրեց ու փլաւը լցրեց հա-
ցի վրայ, քաշեց նրա առաջը, թէ կե՛ր։ Աղջկանն

էլ ասեց. էգտեղ կաննի՛, որ ջուր բերես։ Հարսին էլ ասեց.—գնա՛ մի քիչ ցախ ու մախ, չոր ու չոփ հաւաքի՛, տա՛ր իրիկուան կերակրի համար. ես գիտեմ, որ էս օր կպրծնենք փորից, պաի խէչ փունջ* անենք. մեր քեյվանուն էլ աս՛ա՛, թոզ լաւ սըպաս չինի, ակնակալը բրինձ քցի, 20
չուջուխ ալանու բուռնունիկը (կուռ զամբիւղ) բաց անի, որ տղէքը մի լաւ ուրախ խէչ փունջ անեն։

Խալխը հաց են ուտում, համա նրանցից մինը ինչպէս բանի վախան էր, հիմի էնպէս չի. ծղծամ տալով բերանն ա տանում թիքէն ու աչքի պոչովը, թերթևանուկի տակովը մտիկ տալի դէմի կանանածին. ո՞վ չի ասիլ, թէ Սօան աւ Ներան փլաւը հարկաւոր չի. նա առանց էն էլ կշտանում ա, դու Վարդիթերին բեր՛ նրա մօտ 21
կաննացրու, ութ օր սոված պահի՛, նա հէնց կը գիտենայ, թէ ադիլոխայ (շամարահաց) կամ գառնով փլաւ ըլնի կերած, դու Վարդիթերին տա՛ր նրա դէմը կաննայրո՛ւ, օխտը մարդի բան անի։

Հալիւորը հէնց կրակել ա, թէ հաց կե՛ր, որ ղօչաղ բանիս. նա ասում ա.—չնորհակալ եմ,

* Խէչ փունջ ասում են այն փնջած հասկին, որ երբ արտը քաղում են վերջացնում, ցորենը խաչաձև կապում են ու բերում տիրոջը նուիրում, նրանից միրգ առնում ընծայ. այս սովորութիւնս մտել է և այգիների բաների ժամանակը, երբ մի այգին մշակելուց աւարտում են, այն երեկոյին միրգ են բերում և ուրախութիւն անում. այս ուրախութեան անունն էլ մնացել է խէչփունջ այսինքն խաչ փունջ։

ուտում եմ, Աստուած հաստատ պահի, էլ ուտիլը հո պողաւոր չի՞ ընկիլ։

Սօսի հաց ուտիլը հէնց էն վախան էր ըլում, երբ որ տղէքը փարխաջի ջուրը խմում էին դարդակում։ Վարդիթերը գնում էր ջուր բերելու. նա էլ հո ընչանք ծակի ջուր խմիլը չէտ էր դառնում։

Հացից վեր կացան երեաներին խաչ հանելով, Աստծուն փառք տալով ու «Աստուած հացին լիութիւն տայ» ասելով. գնացին իրանց բանին. Վարդիթերն էլ հարսի հաւաքած խուշուբները (խոխ) կապեց գաստախանի միջին ու հարսի հետ չէտ գառաւ տունն։ 22

Նա գնաց, Սօսի սիրտը հետը տարաւ։ Մրտքումը դրեց Սօսը, թէ ճաշուայ հացի վախտը կը գայ։ Ճաշուան հացն էլ էկաւ՝ Վարդիթերը չեկաւ։

Սօսը նստեց հացի վրայ ու խպռնուեց (շփորուեց) ճնաց. քանի էլ Վարդիթերի հէրը զօռեց, թէ կաց կե՛ր, նա հէնց չնորհակալութիւն էր յառաջ բերում. բանի վախտը ասլան էր դառնում, հացի վախտը գառը։ 23

Տղէքը բանեցին ընչանք իրիկուան ժամը ու չկին պրծան։

— Յետ գառէ՛ք, չէն տուուց հալիւորը, կռնեղդ դալար (կանանչ), օրհնեա՛լ է Աստուած։ 24

— Խէչ փո՛ւնջ, չէն տուին բանուորները, Հէթում ափէ՛ր (ծեր վարդոյ պատուանուն), դո՛ւ 2

գնա՛ չարազը (միրգ) պատրաստիլ տա՛ր։ Ասին ու ամէնքն իրանց բահն էտոցով քերեցին, դրին ուսներին, եկան տուն.

Ժամը դուս էկաւ. ինչքան փոխարայ բանողներ կային Աչտարակ, որն Ուռուցումը, որը տէր Առաքելենց դրանը, որն էլ Պապենց դրանը հաւաքուած՝ ղրից էին տալի։ Մի քիչ ժանգարքը կոխեց թէ չէ, ամէն մարդ հաւաքեց իրանց բանուորներին, տարաւ տուն։

Հացը քաշեցին ու թանով սպասը լցրին երկու մեծ քերեզանի մէջ։ Հացը փրթեցին ու քթալներն առան ձեռները, խրթեցին։

Մեր պարան Սօսն էլ ճաշուայ պէս մի քթալ վեր ա ունում, չորս հեա մեկ տալի անի տակի կաննողին, կամ Աբշաւիրի երեսին։ Նա էլ աչքով, ունքով անում ա, թէ հաց կե՛ր, որ հէրս չիմանայ։

Հացից յետոյ տղէքը ձէն տուին.—Ասիե՛ր, խէչ փո՛ւնջ։ Էն ահաթը մին էլ տեսնինք, աչքդ բարին տեսնի, շուլուխ կասես՝ կռանս պէս հատա. ալանի՝ մի նալբաքու (ախտ) լէնուրթիւնով. կլպած ու անկլոխլ դեղձի չէր՝ խուրմի պէս քաղցր. վըշաո՝ մատներիս երկարութիւնով, մի կախան էլ հաւոյ՝ կասես թմիւը նոր քաղած, տէփրի մէջը լցրած՝ դրին մէջ տեղ։ Դնին ու տէփրիցը չմթիւը մին էլաւ։ Սօսը մինն էլ չի վեր կալաւ, հէնց էր ժաժ գալի, կասես երկ օրէն պատի հարսը։

Էսպէս ուրախ իրիկուն անցկացնելից յետոյ, ամէնքը գնացին իրանց տները, որ գիւղացիան ու առաւօտենց գնան իրանց բանին։

Ժ.

Վարդիթերենց տունը կանանչ կիրակի օրուան շաբաթ իրիկնապահին մութը հէնց բռնել ա, որ մատը մարդի աչքը կոխես, չի իմանալ։ Վարդիթերի մօր հագի ձէնը ղուռնի պէս ա գալի. երկու իրեք հաւ մօրթատած վեր թափած են. օճաղի ղրաղին ցախը դիլի պէս կիտել են, որ պատի ընչանք օճաղի վեր գալը (հոտիկ պրծնիլը) կամաց կամաց գնեն տակը. մի ձեռները եղումն ա, մինը մեղրումը։ Մի հարսը եղի բղղի (ֆիպայ) կոխքին նստած, եղ ա քանդում, մինը փոշամանիցը աչիւը ա հանել մտցում։ Վարդիթերը հաւերն ա թէբառում, բումբուլը լցնում խախալի մէջը իրա բաժնքի բարձի համար։ Պառաւը քունչ ու պուճախ ա ընկել կամ քթալ, չէրեփ, դաստամնալ (ջնջան) ա բերում, կամ պղինձը ջուր ա լցնում դնում օճաղի վրայ, որ խօնչայ պատի ղրկի խնամինց տունը։ Պատի հարսին, Թէլլիզարին էքուց պատի բերեն հէրանց տանիցը։

Մի կէս ահաթից յետոյ անուշ հոտը տունը բռնեց, գեղաքունի կամ թաղայ ձկները, որ ճըզճզատած քցում չեն ալիւրի մէջն ու հանում քցում դաղ արած (հատած) եղի մէջը, ժժոցը աշխարհքը բռնում ա. անուշ հոտը հէնց գալիս ա,

մարդ անուտիլ կշտանում ա, մեկել կիրակիրեն էլ էնպես մարդի քեֆ են բերում։

Վերջապես բանից պրծան, խօնչէն բերին, ամաններըը միչին շարեցին, Թերմունն էլ գաւը լցրին ու տուին Գագիկի (Վարդիթերի չորրորդ եղբօր) խաիաը։ Վարդիթերին էլ զարդարեցին, գլխին քցեցին իրա մենծ հարսի Փիրսանու չալը, ղըրկեցին խօնչի հետ խնամանց տունը։

Գագիկը խօնչէն վեր դրեց ու ամանչելուցը դռնէ դուս։ Ինչքան էլ ձէն տուին, թէ,—այ տղա՛յ, կանչի՛ մի քիչ խօսա՛, համա նա անկանչ չի՛ դրեց։

Վարդիթերը գնաց մենծ խնամանց (հարսի հօրն ու մօր) ձեռները պաչեց, մեկէլներին էլ խոնարհութիւնով գլուխ տուուց. գնաց հարսի չըն-քոճը ընկաւ, փաթաթուեց ու իրա մօր բերնիցը շատ բարով արուց։ Խնամուն էլ խնդրեց, որ հարսին պատրաստեն, էքուց տանեն Մաղնի ուխտ ու յետ դան իրանց տունը։

— Շա՞տ էիք վռազել, ասեց խնամին, վռազ Աստծու, անուղներդ շատ, երկու հարսն ունիք տանը, մի քանի օր թողել էիք երեխես մեր տանը ձնացել էր, ի՞նչ կըլներ, ձեր հարսը հօ ձեռներիցդ խլելու չէ՞ինք։

— Դէ ի՞նչ անենք, ասեց Վարդիթերն ուսերը ժաժ տալով, բաններս շատ ա, գլուխս չենք կարում առակիլ (պարապուիլ), լաւ հերիք ձնաց. էլի ձեր աղչիկն ա, երբ ուզենաք՝ հա-

մեցէ՛ք, ձեր տունն ա, մի՛ վախենաք, գլխներիս վերայ տեղ կունենաք գալուս, բարեկամացանք՝ բարեբարացանք, մեր տունն ու ձերն ըստուց յետոյ մին ա։

— Ի հարկէ՛ էդպէս ա, ասեց Վարդիթերի մէրը, միայն լաւ կըլնէր, որ էս մի քանի օրն էլ ձնացել էր ըստեղ, մի քիչ սիրտը բացուէր, հա-մա տարէ՛ք, աչխարհքիս կանոն ա, ձեղնում ի՞նչ մեղք կայ, թէ կուզ թողաք էլ ես չեմ ուզիլ խալխի լիզուի տակ չեմ ընկնիլ։

Իրիկուան ժամից յետոյ Թէլլիզարի հէրն ու աղպէրտինքը նստեցին հացի. խնամանց ղրկած խօնչէն յետ քաշեցին ու—«չէն կենայ մեր խնա-մին», ասելով՝ հաց կերան։

Թէլլիզարն ու Վարդիթերն էլ չոկ մի քընչումի երեանները շուռ տուած՝ նստեցին հացի։ Համա Թէլլիզարը ուռել ա, գառել փչած տիկ, քիչ ա ձնում արտասուքը աչքերիցը վեր թափի. պտի ասած, որ սրտով ուզում ա մարդին տես-նիլը, հօրանց տանը շատ ձնալով բեզարել ա (ձանձրացել), համա լայ ա ընում, սաքի հօրն ու մօրը չհանց տայ, թէ շատ եմ սիրում ձեզ. նաղն ա անում. մին էլ որ առաթ ա։

Մէրն էլ վարաւուրդ ա անում, որ աղչիկը հաց չի ուտում, մօտ ա գալիս իրա գլխի չամ-բարի (փարաշան) տուով աղչկայ աչքերը սրբելով՝ ասում ա.

— Հայց կե՛ր, անուսիդ մեռնիմ, թէղ թէղ տեսութիւն կըդամ, աղաւօրտանդ կըղրկեմ կըդան ակը կըտան (այցելել) ու Համբարձմանն էլ կըդամ կէսօրիդ կըխնդրեմ, կըբերեմ. լաց մի՛ ընիլ աչքերիդ զուրբա՛ն, Թէլլիզա՛ր ջան։

Վարդիթերն էլ կամայ քնթի տակին ասում ա.

— Աղչի՛, ընչի՞ ես լալի, հօ դուշմանի տուն չե՞ս էրթում, ի՞նչ մի նեղութիւն տեսար մեզանից, վատ-ք Աստծու. ո՞րիցս լսեցիր, թէ աչքիդ վիրևն ունք կայ, ուրիշ դեղում հօ չե՞ս, էքուց էլօր երբ որ խնամու քէֆը կուղի, կըդայ քեզ կը տեսնի. հեռու հօ չի՞, անկանչիդ տակին ա, ձէն տաս՝ կը լսի. հայց կե՛ր, թէ չէ էքուց նանին (իր մօրը) կասեմ։

Խեղճ Թէլլիզարը տալի * խօսքերիցը ամանչեց, վախեցաւ, որ զօրթ կէսերը կասի, սկսեց պուճուր պուճուր (փորիկ) դուբումներ (պատառ) չինել ու բերանը դնիլ, ձեռն առաջին բռնած քօղրի տակիցը։

Ղօրթ ա, Վարդիթերը երեսահան խրատում էր, ահ էր տալի, թէ հայց կե՛ր, համա ինքը հէնց լցուել ա, որ աչքերիցը ուզում ա կրակ թափի արտասուն-քի տեղակ։ Նա միտք ա անում, թէ ա՛խ, ե՛րբ պտի ընկի, որ էս օրն ինձ համար էլ գայ, ես էլ երեսահանց ախրեմ, սրտանց ուրախանամ, որ պտի էքուց Աստին տեսնիմ։ Համա ընչանք էն օրը կը գայ, իմն ինձ կըհասնի։

* Մարդի քոյրը կնոջ տալն է։

— Ո՛վ սուրբ էքուցվան ուխտ, ասում ա մտքումը, թէ ես էլ քօղր քցած՝ չարսաւում կոխվածՙ հէրանցս տանիցն եկայ քու դուռն ու յետ դառայ Աստին տեսայ, ուխտս ուխտ ընկի, որ մի տարի տարէ տար ամէն երկուշաբթի օր քու անուսի համար պաս պահեմ։ Ընչնց խընդիրքներ անելով իրա մտքումը՝ հարսին խրատում ա, թէ հայց կե՛ր. ինքը կամայ կամայ—«իմ բաժինն Աստուած օրհնի՛ չէն պահի՛» ասելով՝ յետ քաշվում։ Ինչքան էլ զօռ ա անում խնամին, էլ բերանը նշխարք չի դնում, հէնց ասում ա՝ թէ ես կուշտ եմ։

Հայցից որ պրծան, Թէլլիզարի մէրը բերուց հինէն (որ առաջուց չաղախել պատրաստել էր), հարսն ու տալի ձեռնները դնելու համար, որ էքուց կարմիր ընկի ուխտ դնալիս. յետոյ մի քիչ որ փաշաչեց (կիսաչոր), Վարդիթերի համար Թէլլիզարին հետ տեղ քցեցին տան մի քնջումը ու իրանք էլ իրանց տեղը քուն էլան։

Առաւօտենց կանանչ կիրակի օրը, որ գարնան Մողնու ուխտն էր, լիսը չի բացուած, աղօթարանը նոր ծագելիս, Թէլլիզարը տեղիցը վեր կացաւ, չորերը հաքաւ, կուժը վեր կալաւ գնաց ջուրը բերուց, աներն ու դուռն աւլեց, գնաց մօրն էլ զարթնացրուց, եկաւ տալին էլ վեր կացրուց, օճաղի ցախը բերուց կշտին կիտեց, առանց չամանն էլ հաղիր արուց, որ չուտով կրակ վառուն, կիրակուրն եփուն, պրծնեն ու գնան Մողնու

նե։ Աղպօրն էլ վեր կացրուց, որ գնայ դոմը, տաւարի տակը սրբի, եմ (կեր) տայ, ձիու առաջ եօնջայ (խոտ ե) քցի, թիմարի (մաֆրի)։

— Մէրն էլ վեր կացաւ կրակ վառեց, մի չլթչլթան քաշովի էփեց, խորոված ն արեց, վեր քաշեց, դան դրուց ու ծնաց մարդին, որ ժամից տուն գայ, շուտ հաց ուտի, դուս ըլնի, որ խընամիքը գալ պտեն. տղամարդը որ տանն ըլնի, ամօթ ա։

Ժամը դուս էկաւ. մարդն ու տղէքը շուտով հաց կերան, դուս էյան։ Մի քիչ որ արևի ոսկու գոյնը վոխառեց էրծաթի, հրէս վարդիթերի մէրը, առած իրա մօտիկ բարեկամների կնանոնցն ու իրա հարսներին՝ տուն մնաւ, բարի լիս տուուց, հարսի թշերը պաչեց, խնամոնց քեֆը հարցրուց ու ասեց.

— Շուտ արէ՛ք գնանք Մողնի, ճաշ դառաւ. խէրնները շատ ըլնի՛ էս մեր խաթունների, լիսը բացուել չի՝ պրկել եմ՝ անճախ հասաքուեցին. պրծէ՛ք գնանք։

— Վա՞յ, խնամի՛ չան, ասեց Թէլլիզարի մէրը, նստէ՛ք մի քիչ դնջացէ՛ք, մեր հացի համը տեսէ՛ք, էլի կերթանք, հրէս Մողնին, հօ կորած չի՛, անաչէ՛ն, դեռ լիսը նոր ա բացվում, դու ասում ես ճաշ դառա՞ւ։

— Չէ՛, ասեց, չնորհակալ ենք, քու որդիքն ապրին, օրը մինեց, մեր հալուորի բնութիւնը դուք չէ՛ք խանում; մի քիչ յետո գնանք՝ կը

թուրքանայ. մի կտոր հաց կըլի, յետո կգանք, կերթանք, մեր տանն էլ կուտենք։

— Ախէ՛նք, թէ սոված կըլնիք, պատասխան տուուց Թէլլիզարի մէրը. մեր տանը մի քիչ սառը չուր խմեցէ՛ք, գնանք. մի՛ վախենաք, սուրբ Գէորգը բարկանալ չի, որ հաց կերած էրթանք էս թաւուր աղիվ օրը. ուրիշ վախտ էլ ծուխ կերթանք, հիմի կը բաշխի, մեր աղէն ա. ձեր հարսը հօ ձեռներիցդ չե՞մ կարող խլիլ էլի տարէ՛ք. ընչանք մեր մի քիչ նհար (նախաճաշիկ) անիլը, նա էլ գլուխը կը չինի, թաղայ շորերը կը հագնի, նրանք վաղուց իրանց հացը կերել պըրծել են։

Հացը քաշեցին, ինչ կայ, չի կայ, մի ալար (բաղար) բերին լցրին սուփրի վերայ։

Վարդիթերն էլ գնաց հարսի գլուխը կապելու։

Ընչանք նրանց հաց ուտիլը, սրանք օթախում բօյահայլին դրած՝ շոր են հագնում։ ընչանք Թէլլիզարի չուշտակը[1] քցիլը, բաշօրթիկը[2] կապիլը, ճլպինդը[3], պօլը[4], բասպինդը (ճակատի աղոտիկը), լաչակը (չիթիայ), քնթիկալը, ճակատի ոսկին ու չալ օշխամը[5] սաղացնիլը ճաշ դառաւ։

---

1 Շուշտակ—երեխայից Քասակի պէս բան է, երկար պոչաւոր։

2 Բաշօրթիկ—եռանկիւնի գլխաշոր է։

3 Ճլպինդ—նեղ երիզ որ ճակատները հուպ կտան։

4 Պալ—կօտ, կամ կօպի, կամ կօլօտ։

5 Չալ օշխամ—ծնօտի վերայ, քնթկալի վրայից ասղարուր գործած եռանկիւնի բարակ սպիտակ կտոր։

Մհասիլ (շտապացնող) մհասլի վրայ ա գալի, թէ շուտ արէ՛ք, պրծէ՛ք։

Գէղդան գէղ (հազիւ հազ) զարդարուեցին ու ճամիու ընկան։ Թէլլիզարի մէրն էլ առաւօտեանց իրա իրաւորներին կանչել էր, նրանք էլ հետները գնացին Մողնի։

Մողնու ճամիին որ մտիկ տաս, սիպտակ չարսաւորուած կնանիքը, կարմիր չադրաթները քցած աղջկէքը, հէնց կը դիտենաս, թէ զազերի (սագերի) քարվան ըլնի, որ իրար քամակից գնալով զարդարում են ջրի երեսը։

Մեր կնանիքը գնացին ու հէնց որ հասան վանքի բակը, իրեք անգամ սուրբ Գէորգի գլխովը պտիտ էկան ու մտան ժամ, հաւաքուեցին գերեզմանի դրանը ծնկի վերայ եկած՝ երկու երկու, իրեք իրեք՝ չոքե չոք անելով՝ խորանի դռնովը մտան գերեզմանի կուշտը, երեսները գետինը քսելով՝ համբուրեցին սրմխով (կարօտով) գերեզմանաքարն ու սուրբ Գէորգի գլխաքարը, որ գերեզմանի վրայ դրած էր. ձեռները կոխեցին գերեզմանի տակի փոսի մէջն ու Օրհնուելիւնի հողիցը հանեցին, բերանները քցեցին, մի մին սև փող էլ խէչհամբուր քցեցին, չոքե չոք յետ դառան։

Հէնց որ հասան Մակ խաչի գլուխը, որանից գէղն երևում ա, Թէլլիզարի մօր աչքերը գէօլ (լիճ) դառաւ։ Մօտացել էր վախտը, որ իր երեխեցը պտի բաժանուի։ Քիչ էլ ներքև եկան գէղի գլուխը, մտան կարմրաւորի (կուսանաց փոքր վանք, ուխտատեղի) բակը, գուռը համբուրեցին։

Թէլլիզարի մէրը պաչեց աղջկայ երեսը, արտասուքը սրբելով բռնեց աղջկայ կռնիցը, տուաց վարդևէրի մօրը։

— Խնամի ջա՛ն, ասեց, սաղ սալամաթ (ողջ եւ առողջ) ձեր ամանաթը ձեզ եմ տալի, ըստուց յետայ մեզ բան չի կայ, գուք գիտէք, ոնց կուզէք, պահեցէ՛ք. օ՜հ, աղջիկ բերող մօր օրօրոցը կրակ ընկնի՛. պահի՛, մենծացրո՛ւ, հրից, ջրից, փորձանքից թաւի՛, ուրուրի պէս աղուն արա՛ (պտիտ արի) գլխին, հէնց որ մենծացաւ, վախտն էկաւ, որ հարարիդ (կարիմ) հանի, գխիդ տան, ձեռիցդ խլեն։ Ա՜խ, քո մերը մեռնի, Թէլլիզար չա՛ն... լաց մի՛ ընիլ զադէտ (ցաւդ) առնիմ. ըստուց յետայ քու կէսուրն ա քու մերը, կէ՛սառդ՝ քու հերը. աեքերտինդդ՝ աղպէրտինդդ, տալդ՝ քու քիրը. մենք էլ քեղ չենք մոռանալ. համա նրանց մեղնից աւելի պտի համարես. կէսառդդ, կէսօրդ, տեքօրտաճդդ խօսքին անկալ անես, հըճատանդդ ընկես, ոտներն հողը դառնաս, հէնց ասես, որ ասեն չէն կենայ քու դուս թաղնողի օճաղը, չասեն քանդուի դուս անողիդ տունը. դէ՛ կէսօրդ ձեռը պաչի, գնա՛ հետը։

Մէկէլ բարեկամներն էլ էկան Թէլլիզարի թշերը պաչեցին, բարովեցին ու հէնց կարմրաւորի դռնիցը բաժանուեցին իրարից։

Թէլիզարի մէրն իր բարեկամներին տարաւ իրանց տունը, Վարդիթերի մէրն էլ իր բարեկամներին իրանց տունը։

Ընչանք ըստեղ հասանք, չես ասում, թէ Սօսն ո՞ւր ա։

Նա էս քանի օր ա չի երևում, չըլնի՞ թէ հիւանդ ա, կամ դլուխը մի բան ա էկել։

— Չէ՛, նա որսկանի նման Գարեգնի հետ ծեքելահան աչքով պահելով իր սիրեկանի ճամփէն, ընկաւ նրանց քամակիցը, գնաց Մողնի։ Ներանք ժամիցը դուս էկան՝ նոր նա մտաւ նեքսև, ուխտ արեց, մում վառեց, խէչհամբուր քցեց, էլ յետ դուս էկաւ քամակներիցն ընկած՝ էկաւ գեղը. համա «դարդակ ամբար, դարդակ չուալ». էնքան գնա՛, արի, ոտներիդ տակին էլ չի կաչի մնայ. էնքան ճամփեքը չափի՛, հոգիդ դուս գայ։

ԺԱ.

Գարունքը քանի գնաց, տաքացաւ. Մայիսի մէնն, կասէիր, Օգոստոսի ամիսն ըլներ. երկինքն ամէն օր հէնց պարզ ա ըլնում, որ դէղապետի համար ամպի նշան չես դանիլ. արևի թէժութիւնը քաչալի դլուխն էրում ա. էն յիքանիքը, որ մի քիչ լրգլխի են, էլի կանանչի ծէզ երևում ա ավներումը՝ չուաք տեղերումը. թէ չէ, ինչ որ ներքևի յիքանոնց հալն ա, Աստուած հեռու ա-

նի. կասես, թէ ամայի չօլ ընկին. չիման տեղ երազում չես տեսնիլ։

Աչտարակու որ քուչովն անց ես կենում, ամէնի բերնիցն էլ լսում ես,—թէ էս տարի մենք ևսիրներս պտի ծախենք, թէ մի քանի օր էլ ըսէնց գնայ. Աստուած մեր մեղքը մեր երեսովն ա տալի. չորային ընկիլը հերիք չի, Թրթուռն էլ մի կողմիցն ա ծառերը սունգ անում (փչացնում), խնձորենիքը, ծիրանիքը ու չորիքը, կասես, թէ մի մին քրդի ադի չադիր (վրան) ընկին բռնած Թրթռի ձեռիցը։ Տնաչէննե՛ր, մեր քրիստոնէութիւնը վերացել ա, հաւատներս չլիս պակսել ա. ամէն տարի էս վախտ սուրբ Գէորգի Մասունքը, մեռնիմ նրա սուրբ զօրութիւնին, երկու հետ բերած էինք ընում, էս տարի սուրբն էլ ենք մտներիցս քցել, Աստուած էլ հետը։ Էս մեր կոտրած երեսնքը նուրին (շազարհ) էլ չեն ման ածում, բայքի Աստծու սիրտը քաղցրանայ վրներս, մի լիս ու ճար անի։

Ըսէնց խօսում էին մի քանի մարդ իրար հետ ճանճապատանենց դրանը կանգնած, երբ որ Գարեգինը վռազ վռազ անց էր կենում ընտեղից։

— Կանգնի՛, կանգնի՛, կանչեց նրանցից մինը, խալֆա՛յ Գարեգի՛ն, ախա՛ր էս ի՞նչ պատուհաս ա, գրի սև ու սիպտակը դուք էք հասկանում, ի՞նչ ա ասում գիրն էս տարուան համար, անձրև պտի գա՞յ, թէ չէ ձեռներս լուանանք, ումուտներս (յոյս) կտրենք, յետ նստինք։

— Ի հարկէ չի գալ, ասեց Գարեգինը. մի տեղ որ չերմեռանդութիւն չըլնի, սրբերի պատիւը վերանայ, Աստուածը մոռացուի, թափօր չըլնի, ընտեղից Աստուած չի՛ հեռանալ։

— Ընչանք հիմի մենք էլ էդ էինք խօսում, ասեց էն մարդը. ո՛ւմն էք աստւմ, մեզքը տէրտէրների չինքը, նրանք ե՞րբ մեզ քարոզեցին, Աստծու ճամփէն սարվացրին, մեր խէր ու չառը ճանանչացրին, որ մենք արինք ո՛չ. ես իմ բռնակալ (կոպիտ), կարճ խելքովս լաւ եմ հասկանում, որ մեզքը ձերն ա. մեր տէրտէրները, թէ որ մեզ քարոզէն, մեր քրիստոնէութեան պարտքը սարվացնեն, հէնց ժամ ասեն, որ ժողովուրդը կառըզանայ բան հասկանալ, ժողովրդի հետ արդիւնք տալու ժամանակը լաւ վարուէն, հէնց ասեն, որ ժողովրդին իրանց սիրիլ տան, էլ ընչի՞ ըսէնց կանենք։ Մենք որ կանք, ոնց որ մի ոչխարի սուրու (ոչ), որտեղ տանիս, ընտեղ պտի արածենք. ա՛յ, տեղն ա էկել ընչի՞ չեն միաք անում, թէ հալբաթ Աստծու բարկութիւնն ա, որ էս գեղի գլխին թափել ա. մի խրատենք ժողովրդին, չեա դառնան իրանց չարութիւնից։ Սուրբ Գէորգ ունինք, պապական մեր սովորոյթքն ա, որ ամէն տարի պտի բերենք. քարոզենք, բալքի գնան բերեն։ Աչտարակ գեղը ե՞րբ ա սըրսից, ողբմութիւնից, մատաղից վախել, որ հիմի վախչի. դու ըընիս քու Աստուածը, խալխայ Գաբրիէլն, կարդին եմ ասո՞ւմ, թէ չէ. թէ մի

խօսքը սուտ ըընի, բերնիս սիլի՛ (ապտակել), մատդ կոխի՛ աչքս հանա՛, թէ չէ ախար էս ի՞նչ ա մեր տէրտէրների արածը։

Գարեգինը տեսաւ, որ էս մարդը տաքացած ա խօսում, ամէնն էլ տէրտէրի վրայ ոտն են բարձրացրել—լաւ ես աստւմ, ասեց. խօսքդ աւետարանի կողքին գրած ա. հիմի ինչ էլաւ՝ էլաւ. էքուց անկաչներդ ձէնի պահեցէ՛ք, պատրաստի կացէ՛ք, ադրաթին (մօտ 10 ժամին) զանգակի ձէնը որ լսէք, դուս էկէ՛ք, որ սուրբ Գէորգի մատունքը բերիլ պտինք, բալքի (գուցէ) մի վատաութիւն ընկնի. նոր ըտաւր վրայ էլին խօսում ներքևը քեմխուդէքն ու մենճ տէրտէրը. ասեց ու գնաց։

Էս մարդկանցից մինը գղիր Սուրէնն էր. հէնց որ լսեց, միրուքը քորելով՝ փէսը քաշատալով՝ ընկաւ քուչէքը, չաւ արեց (հետ տարակեց) թէ, —էքուց պտի սուրբ Գէորգը բերեն. ուրիշ տեղ չի գնաք։

Էքսի օրը արևը մի քիչ բարձրանալից յոտայ՝ զանգակները քաշեցին. տիրացուները հաքան ժամաշապիկները. որը քշոցը վեր կալաւ, որը խաչփառը, որն էլ՝ մոմերը բռնած՝ առաջ ընկաւ։ Գարեգինն էլ նրանց կարգի քցելուց յետոյ, բուրվառն ու չապիկը վեր կալաւ, գնաց։ Մի տիրացու էլ չարականը խոտեց տարաւ. տէրտէրներն էլ չուրջառները ժամհարի կռնատակը տըուած՝ որն էլ իրա ուսին քցած՝ գնացին դպա

Մողնի. ժողովուրդն էլ մեր ու մանուկ, տեր-տէրների քամակից Մողնու Թաւռովը (զաւ իվեր) վիրև գնացին։

Ընչանք ժողովրդի գալը տէրտէրներն իրանց զարդ ու զարդարանքովը, տիրացուներովը յառաջ ընկան, գնացին Մողնի ընտեղ նստող Հայր սուրբի մօտ. ժողովրդի բերնից խնդրեցին, որ սուրբ Գէորգի մասունքն առնի ներքև գայ։

Նա էլ—«օրհնեալ լինին ժողովուրդը, ասեց, Աստուած իրանց հաւատան օրհնի, աչքիս վրայ, այս ահաթս. տղա՛յ (իր ծառային է ասում), կօշիկներս, բե՛ր, վեղարս սրբի՛ տո՛ւր, ֆարաջէս բեր հագցրո՛ւ, խոյի դուռը ամուր փակի՛, այս երեք օրը Աշտարակ կըլինինք։

Հայր սուրբը փառաւորի՛, էն ահաթը պատրաստուեց, գնաց ժամի դուռը բաց արեց, Մասունքները խորանիցը հանեց, տէրտէրների հետ էնքն էլ չուրջառակալեց ու ամէնքը մի մասունք վեր կալան։ Ինքը բռնեց սուրբ Գէորգի էրծաթի ոսկէջրած Աչը, ճնացող տէրտէրները մինը Գըլխաքարը, մինը Գադաթը, մինն էլ էն Դռնաւոր մասունքը, զգեստաւորուած, չարական ասելով, խաչ ու խաչփառով՝ մենծ հանդէսով եկան դպա Աշտարակ։

Հէնց հասան Պատաշարը (Մողնու ձանապարհին մի տեղ), ջերմեռանդ ժողովուրդը, որ ընտեղ ըսպասում էր, գառան նման բա՛յ ու բո՛յ քցած՝ դլխները բաց, արտասուքն աչքներին՝ թափուեցին յառաջը։

Կնանիքն էլ ամէնքը բոբիկ ոտով, ճամփի քար ու քօլին, փշին, տատաշին, գետնի տաքութիւնն մտիկ չի տալով—ո՛վ սուրբ Գէորգ են կանչում, քու զօրութիւնին մատաղ, մեր տէրն ու պահապանը դու ես, էս տաք ջրին մի հով ջուր ածա՛, մեր լաց ու աղաղակը լսի՛, մեր ընչեքանցը խեղճ արի՛։

Որ կողմն էլ մտիկ ես տալի էս չօլը (անապատ), քօմնա մարդիկ են ձեռները երկինք բարձրացրած՝ ղինաւոր սուրբ Գէորգ են ձէն տալի։

Հայր սուրբը կաննեց ընտեղ ընչանք սաղ ժողովուրդը համբրեցին ու մասունքի քամակից ընկած՝ եկան Կարմրաւորի յառաջը գեղի գլուխը ու ընտեղ թափօր արին։

Հիւանդներն էլ փաթաթուած, գլխները կապած, ընչանք ընտեղ էին դուս էկել սուրբ Գէորգի յառաջը։ Հէնց որ տեսան, մոռացան իրանց ցաւերը, աչքներիցն արտասուք թափելով, ընկան մասունքի առաջն ու տաք արտով համբրեցին։ Թափօրից յետոյ էլի շարական ասելով գեղի գլխավերևովը գնացին դպա սուրբ Մարիան եկեղեցու թաղը։

Շատ մարդիկ էլ մատաղ արին առաջին. որն էլ մի աչառ (արջառ), կամ մղի, կամ ոչխար բերուց մասունքի առաջին անկաջը կտրեց, յետ տարաւ, որ էն նրա մատաղն ընկի։

Երբ որ հասան գեղի մեկել գլուխը՝ մին էլ ընտեղ թափօր արին ու պատեըով բերին Ամե-նափրկչի եկեղեցու առաջը. մին էլ ընտեղ թա-փօր անելուց յետոյ, խաչալուայ արին առուի վը-րայ, սուրբ Գէորգի աչը քաշեցին ջրի մէջ, որ երթայ յիւքանիքը թրթռուռը կարի. յետոյ տա-րան ժամուռը սեղանի վրայ բաղմացրին։

Հայր սուրբն էլ կողքին կաննեց, գանձանակ քցողներին ա մոխիկ տալիս։

Ժողովուրդը չը կշտացան էնքան համբուրե-լուցը՝ էլի կիտուկ, կիտուկ լցուում էին ժամ ու ուղիղ սրտով խեչհամբուր քցում։

Սօան էլ, որ ընչանք հիմի ուր անգամ համ-բրած կընէր, ընչանք կացաւ ժամը խոլվաթա-ցաւ (դատարկուել), ուխտ անողները քչացան, էկաւ մին էլ չոքեց մատունքի առաջին ու սուրբ Գէ-որգին մի գառը մատաղ խոստանալով՝ ապան-չաք արուց, որ իր մուրազը կատարի։

Տե՛ս ի՞նչ ա լինդրում. ընդուր են ասել «բըլ-բուլն իր գարդը կըլայ, ագռաւը դա՛ւ, զա՛ռ կանի»։ Էն խալխն աղօթք են անում, թէ Աստ-ուած մի անձրև տայ, նա իր մուրազն ա ուղում կատարիլ տայ։

Իրեք օր սուրբ Գէորգը մնայ Աշտարակ. Աստուածապաշտ ժողովուրդն ընչանք մատաղ ու կարաններով գինի խոստացան, թո՛ղ վերանայ քը-ցած գանձանակը, որ Մոշնու միաբանքն ուր ա-միս ուտէին, հատնիլ չէր։ Տասն ու հինգ հա-

զար գեան վոզ ու իրեք կարաս գինի յատուկ հէնց Հայր սուրբին իրան տուին, որ նեղութիւն էր քաշել, մատունքը բերել։

Իրեք օրից յետոյ սուրբ Գէորգի մատունքն ինչ հանդէսով որ բերել էին, յետ տարան։

Երեխէքն էլ նուրին չինեցին ու ման ածե-ցին։ Երկուսը կռնից բռնեցին, մինն էլ տոպրակ ա վեր կալել, մէկէլն էլ մի պատի բժուռ (կծուռ) ու ման են գալի աները։ Ո՛ր գլան առաջին կան-նում են, տատում են.

Նուրին նուրինն էկել ա,
Աչքա հուրին էկել ա,
Շիլա չապիկ հագել ա,
Կարմիր գօտի՛կ կապել ա։
Եղ բերի՛ք պորտը քսենք.
Ջուր բերի՛ք գլխին ածենք.
Մեր նուրինի փայը տուէ՛ք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք։

Կնանիքը մի՛ ման ջուր բերում են լցնում էգ նուրինի գլխին ու երեխէքանցը բրինձ, կամ եղ, կամ ձու տալի, որ տանեն քէֆ անեն։ Էն երիկուանը, որ սուրբ Գէորգի մատունքը տարան ու նուրին էլ ման ածեցին, մի պատիկ ամպ Ա-լագեազից վեր կացաւ, գալա Մասիս գնաց. քիչ քիչ չատանալով՝ երկնքի երեսը թզպեց ու կէս սհաթից յետոյ մի հէնց անձրև էկաւ, որ աշ-խարհքը չինեց ցեխ ու բամբակ (տիղմ), իրեք օր

իրար վրայ կտրուեց ո՛չ. յիքանիքն էլ կչտացան, տաւարի արօտն էլ լաւացաւ, ղեռերն էլ մի թիզ կանանչեցին, բոխն էլ դուս էկաւ, արտերն էլ իրանց կարգին յառաջ էկան, մի շաբթուամբ երկու թիզ բարձրացան. աշնաւար ցորեններըը հասկը քշելուն մօտացան, գարնաւարների սմբուլներն էլ հէնց ցնծին էին տալի իրիկնապահերի վեր կացած բարակ քամուցը, որ կասես պտիկ դեօլի տալղէք (ալիք) ընէին, որ քամու վախտը խաղում են պտպղին տալով. մտիկ տուողի սիրտը ճխտում էր ուրախութիւնից։ Թրթռուռը հօ ընէնց վչացաւ, որ նչան չէիր դանիլ. բները, պօժերը, որ ծառերի վրայ բռնել էին, քօմմա չուր դառան։ Ամէն մարդի բերնից էլ փառք ու չնորհակալութիւն էր, որ ընում էր Աստծուն. Աշտարակը իր առաջուան գեղեցկութիւնը ստացաւ, ամէնի սիրտն էլ տեղն ընկաւ։

Մեր Սօսը հօ ամէնից չատ ուրախացաւ. քանի օր էր, որ վարդիթերին չէր տեսնում; հիւմիկեց դէնը գիտէր, որ կերթայ յիքին, ընդուր համար ճամփէքում բուսուն էր պահում (հետը պահել)։

Մի առաւօտ վարդիթերին մէրը ղրկեց յիքին, որ գնայ թթենուս տերև բերի ապրչի ճիճուի համար։ Խեղճ աղչիկը չէր ուզում գնալ մենակ, համա մօր խօսքին էլ չէր կարող դուս գալ. վեր կացաւ, առաւ դաստախուանը, գնաց յիքին։ Իրա Գագիկ աղպէրն ընտեղ էր, նա պտի

քաղէր, ծառիցը վեր ածէր ներքև, ինքը կապէր դաստախուանի միջին ու բերէր։

Շալակեց տերևը, յետ դառաւ ու դեռ մի քանի ադդամ (քայլ) չէր փոխել ոտը, յետ մտիկ տուուց, տեսաւ, որ Սօսն ու Գարեգինը կուռ կուռի բռնած՝ ներքևիցը գալիս են, քիչ ա ճնացել որ հասնին։

Խեղճ աղչիկը քաշուեց պատի տակը, երեսը պատին դէմ արեց ու տերևն ուսին կաննեց։

Սօսը հէնց իրա համար էր առաւօտենց դէսը տրտիսը տալով (հետ պահելով) գան գալի. հիմի նա ի՞նչ պտի ձեռք բերի իրա պատին ուժուտ գնելովը. հասաւ իրան, կաննացրուց գրեգնին ղարաուղ, որ մարդ չի տեսնի, ինց որ Կռունկը դաշտումը քշերը վեր գալուս մինը պահապան ա կաննացնում չորս կողմը մտիկ տալու։

— Ա՜խ, իմ հոգուս հրեշտա՜կ, ասեց Սօսը, ընչի՞ ես երեսդ ինձանից չուռ տալի, քու երեսը տեսնիլը իմ սրտի ուրախութիւնն ա. չընի՞ թէ սրանից ընչիս ամանչում; իմ սրտի խորհուրդը սրա կշտին թաքուն չի, սա իմ ախպերն էլ ա, քունն էլ. յետ մտիկ տո՛ւր, մի խօսք տո՛ւր ինձ, որ սրտիս մի ումուտ ըլի. յետ գա՛ռ ու ասա՛ ինձ, թէ խօսքիդ տէ՞ր ես, ինչ որ ասել ես. ընչանք մեռնելու դուռը հետս կըգա՞ս, թէ բանն էն տեղն ընկնի. ասա՛, մի՛ ամանչիլ, ասա՛, թո՛ղ իմ ու քու աղիզ Գարեգինն իր անկաչոցին իմա-

նայ. սա թո՛ղ մեր էրկուսի մէջտեղը աստուծա-
կայս կողմանէ վկայ ըլնի՛, ես սրա չանին էլ մեռ-
նիմ, քունին էլ: Ա՜խ, ի՞նչ կըլնի մի ասես տես-
նիմ սիրտդ ի՞նչ ա ուզում, քարի տակինը ճա-
րեմ, բերեմ. կըլնի, որ վերջին տեմնիլս ըլնի քեզ-
էլ ըսենց խօրվաթ (գաղտնի) տեղ չեմ կարող քցել:
114 ասա՛, քանդիլ մի՛ սրտիս հիմքը, թողա՞լ պտես
չինքս ծուռը՝ խաչերի դռներին մնան գալով՝ դրի
բանտառեղ ընկիլ, թէ խօսքիդ տէր ես, հալալ
կամենակեր ես:

Վարդիթերն աչքերը բարձրացնելով՝ չինքը
ծռած՝ մոխիկ տուաւ Գարեգինին ու ասեց.

— Աղպէր չա՞ն, էս դերութիւնիցը մեզ ա-
զատի՛. ասում ա. խաչին տէրը ղօրաւոր կանի.
մեր տէրը դու ես. հերիք ա ես էստեղ միտք ա-
նելով հալ ու մնաչ ընկիմ, էդ խեղճն էպտեղ. իմ
հօրն ու մօր քարացած սիրտը դու կըկակղացնես.
մեզ ձեռաց մի՛ թողալ, խեղճ արի՛ իմ չահել
չիւան չանին, որ Սօսի ուղուրին վեր եմ դրել: Էս
115 օրէնքից դուս բան ա, որ իմ լիլուն քու առա-
չին պտիտ էկաւ. իմ թայ (հատակի) աղչիկը քեզ
պէս պատուաւոր տղի հետ խօսա՞յ, դեռ լսուած
չի. համա ի՞նչ անեմ, ինչքան միտք եմ անում,
բանը քեզնում ա վերջանում: ինչ կուզես խնա-
յի՛, համարձակուիթիւնիս դիմայի՛: Սա ինձ ա-
սում ա, խօսքերիդ տէր ես. տէր չըլնիմ; ի՞նչ
ցաւս ա էս թուք ու մուրը վեր ունիլը, ես ո՞վ,
դուք ո՞վ:

Գարեգինը որ տեսաւ Վարդիթերի մղկտա-
ցը, աչքերիցը արտասուքը բուռը բուռը վեր
ածեց, մօտացաւ նրան:

— Ջի՛րա, ասեց, խօսքիցը չեա դառնոզ
մարդը չի. ես լաւ դիտեմ, որ Սօսը քեզ ա սի-
րում; դու նրան, ես էլ էրկուսիդ. ըստեղ խելք
կուզի բանայնիլ, վռազելով բան չի դառնալ.
մենք վռազենք, հօրդ էլ բարկացնենք, վեր ու-
նի քեզ տայ ուրիշի, էն վախտը կըսազի մեր վը-
րայ ասել, թէ «չատ գիտեցող աղուէսը չուխտ
ոտով թալաքը (որոգայթ) կընկնի,. համա կատաց
կատաց, դուք ձեզ համար կացէ՛ք...

— Սօ՛ս, Սօ՛ս, վռազ վռազ խօսքը փոխե-
լով ասեց Գարեգինը. բայ թո՛ղ, որ բանը խրբեց
(խառաբ էղաւ), թո՛ղ, ծլկուի՛... աղչիկ, վե՛ր կալ
տերևդ գնա՛, հերդ վիրևիցը վէտը քաշ տալով
գալիս ա: Ասեց ու ինքն էլ Սօսի հետ հրեշտա-
կի պէս աներևոյթ եղաւ, իրանց քցեցին պա-
տովը յիքին:

— Էս ընչի՞ յետացար, մօտ գալով հարց-
րուց հէրն աղչկանը, էդ տերևը ո՞ր ծառիցն ա,
էն կարմիր կորզաւոր թթենուցը հո չի՞:

— Չէ՛, ասեց աղչիկը, սիպտակ բիւրանայ
թթենուցն ա:

— Դէ տա՛ր, տա՛ր, ճիճուները սոված կտորը-
ուեցին, որդի՛, չաղ դնալու (պօշ դառնալու) վախտն
ա, բալքի ուտեն ռատ ընկեն կորչին. ծառերս

վերջ արին էլի. բարով էկող տարի հասնենք՝ թէ մերդ էլ բռնի՝ պարծենայ։

Էլ չի խօսացրուց խելօք աղջիկը, առաւ տեղևն ու գնաց։

Մի քիչ տեղ որ առաջ գնաց՝ տեսաւ, որ Անուշն (Գարեգնի *fոյրը*) էլ տերևն ուսին, իրանց յիքուցը դուս էկաւ։ Մօտացան իրար, բարով տուին ու ղրից անելով երիշները (*ընթացքները*) ծանրացրին։

— Քա՛, Անուշ ջա՛ն, ասեց Վարդիթերը. ձեր ճիճուն ի՞նչ վախտն ա հասել։

— Դեռ երկու հետ ա քնել, մենծ քունը չի մտել. մեզ շատ ունէինք, համա պատուի՛ չար աչքը. էն օրն Ամիրենց Մարինոն էկաւ մեր տունը կրակի. ընչանք իմ տուն մտնիլը, օճաղիցը կրակ բերիլը, ինքն էլ քամակիցս նի պրծաւ ու մօտս, թէ—աղջի՛, Մարգարիտ, էս ի՞նչ շատ ճիճու ունիս, լաւ առուղ առուղ են. քա՛, քեզ ղուրբան. էն օրուանից դէսը դեղնում են ու սատկոտում։ Էրէկ նոր Պետքականենց Համազին օխտը ձիու մունեսթի ենք արել, որ էկել ա աղօթել, նիազրն (*վարձը*) էլ առել մի մենծ աղլուխ. նոր էս երկօր ա մի քիչ վրայ ա գալիս. ձե՞րն ինչպէս ա։

Մերը մենծ քունը պրծել ա, շաղ գնալու նշաններըը քցել ա, կըլնի որ մի շաբաթից յիսուց վերջանայ. մեր ճիճուն էլ հիւանդացել էր, ով գիտայ էլ աչքից ի՞ր, թէ ընչից. ուղարըուկ (*դառը խոտ է*) մուխ տուինք՝ լաւացաւ։

— Ի՞նչ պտի անէք էդքան ճիճուն, հարցրեց Անուշը. բաժնըվիդ համար խիտխիտ չի՞նվել պտէք, տեղաչարսաւ գործիլ տա՞լու էք։

— Տեսնինք, ասեց Վարդիթերը, հալբաթ վաւերը կեփենք, կաղ կըչինենք չարսաւացու, լուն էլ խիտխիտ կըքաշենք. է՜հ, մի բանի պէտքը կըդայ էլի. քա՛, ես իմ (*ես ի՞նչ գիտեմ*), իրանք դիտեն, ինչ կանեն թող անեն։

— Էքուց ծաղկաքաղ ա, խօսքը փոխելով հարցրուց Անուշը, դուք ո՞րտեղ պտի գնաք ծաղիկ քաղելու՝ Պատուելակոնդը* թէ Զորահորիկու լանջերը (*զատ ի վայրը*)։

— Ձեմ գիտում, ասեց Վարդիթերը, մերս գիտի. սանդն էլ ա իրա ձեռին, դաստէն էլ. քարն էլ՝ պօպօքն էլ. ինչ կուզի, էն կանի։

— Է՛, բաս մնաս բարին, ես դէսը պտի էրթամ, ասեց Անուշն ու ճամփէն ծռեց գնաց վերև իրանց տունը։

ԺԲ.

Համբարձման չորեքշաբթի օրն ամէն տան էլ պատրաստութիւն կայ. որոնք ձիան են ճարել, պտի գնան Ծաղկեվանք* ուխտ. որոնք էլ չեն ուզում գնալ, պտի գնան ծաղիկ քաղելու։ Թունդրներիցը անուշ գաթի հոտը հէնց ա վեր

* Ծաղկավանք է Արայի սար կոչուած լեառը գետի ափին, ուր է սուրբ Գառնոյ կուսի գերեզմանը մի այրի մէջ, ըստ աւանդութեան։

էլել, որ աչխարհքս բռնել ա. պաչար ա, որ կա-
պում են. խաչալուայ գինի ա, որ տակերի մեջն
են լցնում։ Ըխտաւորի տուտը գետի կարմունջն
անց ա կացել։

Անուչին էլ իրա քեռակինը հետը տարաւ
Ծաղկեվանք, որ իրանց ուրախացնի, չան գիւ-
ղումով ծաղիկ գովի։

Ամէն ձիու վրայ նստած են իրեք հոգի. մի
կնիկ, մի աղջիկ թարքին, մի երեխայ էլ ա-
ռաջին։

Ըխտաւորները գնացին, մնացողները ամէն
կնիկ իրան թօքունն առած՝ գնացին մի նոր պատ-
կուածի տիրոնջ տուն, որ էրթան յիքանիքը, ձո-
րերը, ետ Պատռելակոնդը ծաղիկ քաղելու։

Էլ յետ յիքանիքը լցուեցին քօմնա կարմիր
ու սպրդի մաչկներով, պառաւ կնանիքն իրար
մօտ հաւաքուած քչփչացին, ղրից տուին, սրա՝
նրա վրայ բամբասանք արին, համա չահել աղջ-
կէքն ու հարսները կանանչ ու կարմիր շորերով,
վազե վազ անելով, ընկան յիքանոնց թմբերի,
ետ լեռ չէ ղռերի մեջը։

Մինը վազում ա մի ծաղկի վրայ, որ քաղի,
մէկելը տեսնելով նրան, ինքն էլ գառան նման
թռչկոտալով գալիս ա նրա մօտն ու նրա ձեռ-
քիցը չվթում; ինքը քաղում, որ ասի, թէ ես չատ
եմ քաղել։ Ծաղիկ ա, որ գոգերը լցրած բերում
են։ Մինը փչաուու ճուդքը կռացրած՝ նրա ծաղ-
կներն ա ճղքով կոտրատում։ մէկելը գեղին ու

կարմիր խնկածաղիկը վեչը լցրած՝ ծիծաղալով
պարծենում ա ընկերի կշտին, թէ իմ քաղածը
լաւն ա քունիցը. մինը բացուենալուկի ծաղիկ ա
խտիտ արած բերում, որն էլ բուլի-բուլի ծա-
ղիկ, ետ թէ չէ տատաչի ծաղիկ գոգն ածած՝
բերին ափումը կնանանց կշտին կիտեցին, էլ յետ
յետ գառան ուրիշ ծաղկի։

Վարդիթերն էլ մի քանիսի հետ ծաղիկ քա-
ղելու էր գնացել նա էլ իրա քաղած ծաղկները
բերուց ընտեղ։

Ծաղիկը քաղելուց յետոյ, էկան բոլորվանքի
(շուրջանակի) նստեցին։

Ամէն աղջիկ իրա բերած ծաղիկը քաչեց ա-
ռաջն ու սկսեցին փունջ փունջ կապել, կանանչ
խոտի վրայ կիտել։ Վարդիթերն էլ ծաղկամերը [1]
ձեռն առաւ մի օրինաւոր հաղար թուռլու (բազ- 116
մերանգ) ծաղկից կապեց։

Ծաղիկը գովիլն սկսեց եալլիբաչի Խանումը,
որ մէկէնների էլ լիզուն բացուի.—աղջկէ՛ք, ա-
սեց, գուք ձէն պահեցէ՛ք, ես ասում եմ չան
գիւղում։

Ասեց ու վեր կալաւ բարակ ձէնով։

Ինձոր ունիմ կծած ա, չան գիւղում չան, չան, [2]
Զորեք կողմն էրծաթ ա, չան ծաղիկ չան, չան.

---

1 Ծաղկամերն է խաչաձև փնջած ծաղիկ, որ ծաղիկը բաժանե-
լուց յետոյ կընտրիրեն եկեղեցուոյն։

2 Ամէն տան միջումն և վերջումն կրկնել չան գիւղում, չան
ծաղիկը։

Ախպէրս ուղեց չի տուի, Ջան դիւլում Ջան, Ջան,
Ասի հարի ղրկած ա, Ջան ծաղիկ Ջան, Ջան։
Ա՛յ տղայ, հիլ անիլ տո՛ւր—մանուչաչափ դիր անիլ տո՛ւր,
Ինձանից էլ քեզ ճար չի կայ—քաքուղ վեր անիլ տո՛ւր։
Ես աղջիկ եմ, ալ կուզեմ—բարակ մէջկիս չալ կուզեմ.
Երբ ես էկայ ձեր տունը—ոսկին սարէսար կուզեմ։
Կիրակի էլ պաս կըլինի՞—էրծաթից լաւ թաս կըլինի՞.
Որդիդ մեռնի վարդապետ—սիրածը չհաս կըլինի՞։
Քանաքեռ բարձր տեղ ա—ջուրը հիւանդին դեղ ա,
Սիրած սիրածին չեն տալ—էս ի՞նչ անիրաւ դեղ ա։
Էն սարը բարձր սար ա—տակը գինձած քար ա.
Ես քեզ թաքուն սիրեցի—բաս ո՞վ արաւ աչկարայ։
Իմ եարն ինձ եար պտի—ձեռումը ֆանար պտի.
Իմ եարի կաննած տեղը—մէկ չինարի ծառ պտի։
Ա՛յ տղայ, դու հադար ընկնա—իմ աղջօր սադար ընկնա.
Թէ ինձնից ջոկ եար բռնես—դու սրտապատառ ընկնա։
Քաքուղիդ կալին մեռնիմ—երեսիդ խալին մեռնիմ.
Լսել եմ կարդացող ես—սաղմոսիդ ծալին մեռնիմ։
Ամպել ես ամպի նման—չաքար ու զանգի նման.
Իմ նանն ինձ ո՛նց ա պահել—ծալած գիւլբանդի նման։
Կաննել եմ ախայ բախայ—չաւաղուս տուրը կախ ա.
Շէկ տղայ, կարմիր աղջիկ,—թո՛ղ բռնենք իրար եախայ։
Ամպել ա ձոն չի գալիս—մթնել ա տուն չի գալիս.
Էս անտէր բարձի վրայ—առանց եար քուն չի գալիս։
Ոչխարն սարել եմ բազը—գէմ ավել սէլի ակը.
Ով իմ սիրածս առնի—չի վէլի (վայելի) գլխի թագը։
Կաքաւը կաննել ա քարին—կտուցը լիքը արին.
Մի աղլուխ վարդ եմ քաղել—ղրկել եմ ախպօր եարին։

Ծաղիկը գովեցին պրծան, բերին սուվրէն վռեցին կանանչ խոտի վրայ, ամէն կնիկ իրա բօզչի մէջինը լցրուց մէջ տեղ։

Գինու դաւը ձեռն առաւ Խանումը, հարսներին ու աղջկերանցն էլ ասեց, որ երեսները դէն արած՝ նստեն. ինքն էլ կտրած քթակի պէս մէջ ընկած՝ նրանց էլ հաց, խորակ տուռւց, մին էլ թէրմունի գաւը։

Կնանիքը ջոկ նստեցին քէֆ արին, հարս ու աղջկերքը ջոկ։

Վարդիթերի մէրը մի երեխի ձեռով մի սուփրայ էլ չինեց ադապ տղերքանցը, որ յիքուն մեկել դիհը հաւաքուած էին։

Իրիկուան ժամը տուին ու հացից վեր կացան. էս թօքունը գնաց Վարդիթերենց տունը, ընչունքի նրանց նորահարս ունէին, նրա ծաղկաքաղն էր։ Մի քիչ դէսից դէնից զրից տուին ու Վարդիթերը մէջտեղ բերուց ծաղիկը, որ յիքուն մը գովել էին՝ ծաղկամէրն էլ մէջտեղը դրած։ Հիմի կարգին նստեցին նորից նոր գովիլ, էն թաւը չէր (անընդունակ էր), օրէնքը հիմի ա։

117

Իմ միջկինս քամար ա—քու ունքերդ կամար ա.
Ա՛յ տղայ, ի՞նչ ես ուրաք անում—իմ ջանս քեզ համար ա։
Մարիկ տուէ՛ք էն զաղին—պուտուտուրիկ բոզաղին.
Հողն էն հօրն ու մօր գլխին—աղջիկ կըտայ չոլմազին։
Կաննել ես բարձր սարին—չուխիդ նախշու կարին.
Հեռու տեղից ես գալիս—ո՞ւր ա բերածդ բարին։
Քաքուղդ թափ ես տալիս—ձեռներդ ծափ ես տալիս.
Էս օր էքուց ասելով—ամէն օր խափ ես տալիս։
Գութանը հաց եմ բերել—բերանը բաց եմ բերել.
Տե՛ս քեզ ի՞նչքան եմ սիրում—ձկնով տապկած եմ բերել։

Ա՛յ տղայ, եախինդ մով ա—առաջը կարապետ քեզ գովայ.
Ես քեզ խիստ չատ եմ սիրում—քու սիրտն ինձանից հովա.
Կանանչ խառէն քիսացու—կարմիր կովը մսացու.
Ես քու հօրը հարսնացու— դու իմ մօր փեսացու.
Էրթկի վրէն թինգինել ես—էրթկի կոճը ըանել ես.
Հէրս քեզ աղջիկ չի տալ—ախոռս քունդ կարել ես.

Ծեռոյ խանումը սկսեց հաւկիթը չուռ տալ։ Տէվուրն առաւ ձեռը ու չուռ տալով ասեց.

Սկլա՛յ սկլա՛յ պատին տո՛ւր, հաւկիթը չուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ քունս տանի, չարսաւս տանիլ տամ։

Մին էլ չուռ տուռուց տէվուրն ու ասեց.

Սկլա՛յ, սկլա՛յ պատին տո՛ւր, հաւկիթը չուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ քունս տանի, չալս տանիլ տամ։

Ամէն մի հետ տէվուրը չուռ տալումը մի հետ սկսայ էր տուում, ու գլխաշորիցը բռնած՝ ընչանք մաշկները մի մին տանիլ տալի. վերջին էլ ասեց.

Սկլա՛յ սկլա՛յ պատին տո՛ւր, հաւկիթը չուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ քունս տանի, մաշկներս տանիլ տամ։

Ծեռոյ մի քաղցը ձէնով, աղջկէքն էլ հետը ձէն ձէնի տուած՝ ասեցին.

Համբարձո՛ւմ հայլա՛ (գնա՛), հայլա՛ ջան հայլա՛,
Համբարձումն էկել ա, մեր բաշին կաննել,
Լաչակ ա քցել մէկ մէկի վերայ,
Մինը տակեւանց, մինը վերեւանց.
Քա խաթուն Գիւլա՛ղ, հունարդ երեւաց.
Համբարձո՛ւմ հայլա՛ հայլա՛ ջան ու այլն։

Խանումը՝ հէնց որ հաւկիթը չուռ տուին պրծան, վեր կալաւ Վարդիթերի մօրը, Թէ—խընամի՛ ջան, աչքդ լիս, փառք Աստծու, անշառ, անխաթայ անց կացրինք էս հաւկիթը, Աստուած մին էլ ուրախ սրտով, ցամաք աչքով էս օրը հասցնի։

— Աղբիւրդ անսպառ, խնամի ջա՛ն, չնորհակալ ենք, լաւ ուրախութիւն արիր, մեր աչքի վրայ, մեր դլխի վրայ. բարեկամնե՛ր, դուք էլ բարով հաղար բարի, Աստուած էս ուրախութիւնը ամէնիդ տանն էլ ռաստ բերի (հանդիպեցնի)։

Իրար չնորհակալութիւն արի՛ն, Աստծուն փառք տուին, պրծան։

— Դէ բերե՛ք, Վարդիթեր ջա՛ն, վիճակի բաղուղը, ասեց խանումը, որ առաջ էր կաննել ամէն բանումը։

Մէջ տեղ էկաւ վիճակի բաղուղը լցրած մի քիչ չուր, մի երկու բուռը խոժոռ աւազ։

Վեր դրին մէջ տեղն ու յաւաջ պատաւ կնանիքը մինը մի մատանիք,, մէկելը մի օղ, մինը մի քորոց, մէկելը մի սև փող, եա դանակի շղպլինկ (անկոթ դանակ) քցեցին մէջն ու ասեցին.

«Գնացի սաղ աչխարհքը մանկէկայ, շատ խէր ու բարի տեսայ, շատ վորձանքներին ռաստ էկայ, էկայ ընկայ էս բաղի մէջը»։

Հէնցն էլ կար, որ իրեք չորս բան էր քըցում, ամէն մինի համար մտքումը մի խորհուրդ

անելով. յետոյ ամէնքն էլ մի մին բան քցեցին բզդի մէջը, Աստուածանից խնդրեցին, որ խէրով բարով վիճակ ըլնի ու տարան պահեցին, որ առաւօտենց գան բանան, ամէնքն իրանց վիճակն իմանան։

— Մուղայլեի կացե՛ք (զգուշացէ), ձէն տը-ւուց Խանումը, ազապ տղէքանց էլմը-ֆէլմը (հնարագիտութիւն) ո՛չ ով չի իմանալ, կըգողանան, խախք ու առակ կըմնինք. ամեն, Վարդիթե՛ր ջան, տա՛ր հէնց տեզ դի՛ր, որ աղվէրտին-քզ չիմանան, մե՛ր խեղճ երեխի (թէղիզարի) բազդը ես գիտեմ, նրա խաթէն (փորձանքի) իր հետ ա. ուզուրի (ձախտագիր) լաւ չի, թէ որ գողա-նան. ջահել աղջկե՛ք, դուք էլ էկե՛ք, էս ծաղիկը տարե՛ք, պահեցե՛ք, որ էքուց մեն պտի ածուի, էդ ձեր բանն աւ։

Մեր քէյվանիքն էս իրիկուն ըսենց անց կաց-նելից յետոյ, մնա՛ք բարով ասին Վարդիթերի մօրն ու ամէնքը գնացին իրանց տները։

Սրի՛ հիմի Սօսիկը հարցրո՛ւ. հէնց որ յիքա-նոնց խիզանը ցրուեցին, իրիկուայ ժամն էլ տը-ւին, Գարեգինը բաց թողուց Սօսին գնաց ժամ. նա էլ ջոկնուեց հետի տղէքանցիցը, մէն մինակ հետ գառաւ, էկաւ քարափի գլխին նստեց, աչ-քերը քցեց գետի խշխշան տեղը, մի քիչ միտք անելուց յետոյ, մին էլ վառուեց ու ջունուն գա-ռած վեր կալաւ չան դիւլումը էապէս.

Ֆու սիրուդ ինձ կոպանեմ—աղջի՛, քու չարը տանեմ.
Դու իմ խօսքիս կամ արի—նանիդ ոտի կանեմ։
Չիթ մինթանէդ հնամաչ ա—ունքերդ զալամ քաշ ա.
Սաղջիկ, ի՞նչ ես միտք անում—իմ չանս քեզ փեչքաչ ա։
Սաղջի՛, ի՞նչ լաւ մազ ունիս—սոխակի փարվազ ունիս.
Խօսքիս ջուզաբ չես տալիս—ի՞նչ չատ էչիս ու նազ ունիս։
Մազերդ օլորուել ա—աչքերդ բոլորուել ա.
Իրեք օր ա չեմ տեսել—իմ սիրուս մոլորուել ա։
Սմսկել ես ամպի տակին—ծունկդ ծնկանս տակին.
Ես քեզ ի՞նչ տեղ սիրեցի—խնձորի ծառի տակին։
Ետրա զրկել եմ թեթի—աղջի՛, քու վիզդ փեթի.
Որտեղ խաղալու գնաս—ման արի՛ ետրդ քեթի։
Պատի աղջիկ, զալում ես—մազերդ սղալում ես.
Գնդարդի զազաբին գաս—միան ոսկուիչ հանում ես։
Պատի աղջիկ, լաւ աղջի՛կ—ունիս մենծ համբաւ, աղջիկ։
Իմ քեզ ծածուկ սիրելս—ի՞նչու էլաւ, չաւ աղջի՛կ։
Սաղջի՛, դու չատ սառն ես—Ալարատեան գառն ես.
Ախատ ճարտար լեզու ունիս—սոխակի բարբառ ունիս։
Ջուրը կըպայ քարիցը—աղջի՛կ, դու կըգաս սարիցը.
Սէրս ի՞նչպէս հովանայ—քեզ պէս սոխակ ճարտարիցը։
Էս գիշեր լուսնիակ գիշեր—ձիեն էկել գետինը նաչիել.
Դուդ դէմ արա՛ պաչեմ—կեռ ունքե՛ր, կարմիր թշե՛ր։

Սօսը չան գիւլումով քարափները գոգացնե-լով՝ բան չի չինեց. գիժ մեղու պէս վեր թռաւ տեղիցը, էկաւ իրանց տունն ու յուռ ու մունջ նստեց. ո՛չ պռօշը պռօշին կպցրուց, ո՛չ բերանը մանանայ դրուց։ Մէրը, աղվէրտինքը ինչքան էլ զօռ արին, եա բան հարցրին, հօ նրան ասած՝ հօ սար ու քօլին՝ մին ա. թէ դու ձեր տանիցը չուզաբ տուիր, նա էլ քեզ հետ։

Խեղճ մէրն ու ապպէրաիները տեսան, որ էլ չի խօսում, իրանք էլ սուս կացան. խմացան, թէ ընչի՞ համար էր նրա լալանալը (հաւրհանալ):

Հացից յետոյ մէրը տեղերը քցեց, աղէքանցը քնացրուց, Սօսին էլ ասեց, որ մոքի դրածիցը յետ կենայ. գիտէր, որ պաի քշերս աղէն անքուն մնայ, վախենում էր, թէ գլխին մի փորձանք չի գայ: Համա Սօսը քառի (խուղ) պէս քառացել, լաւ պէս լալացել էր. ոչ լսեց, ո՛չ էլ ծպտաց:

Խեղճ մէրը, որ անչափ կրակներուածն էր էրվում ու շուաքներումը չէր հովանում, մտաւ տեղն ու առաղ արուց (ղռեց)· չուղեց քնի, որ տեսնի, թէ տղէն ի՞նչ ա ըլնում: Համա ինսան (մարդ) էր, Ադամորդի էր, քնի գալու վախտը աչքերն իրանց իրանց խփուեցին:

Սօսը նստել ա տեղումն ու աչքերը բաց պահում: քուն ու երազ իրանից փախել են, պետ (դեղ) ա գառնել: Միտք ա անում; դէ երբ պտի մոքի դրածը կատարուի:

Մին էլ, կըլինէը կէս քշեր, տեսաւ, որ քըշերը ցերեկ դառաւ. արեւի շողքը երթկիցն ընկաւ տուն. ինքն էլ սաքի թէ, Ապարանում մի դաշտ տեղ կաննած ա. էն դաշտի ծաղիկների խչխչոցը, նրանց ուանդը, հոտը, սիրտնուռթիւնը, էնտեղի հազար տեղից վաղող աղբիւրների հայլու պէս պարզ ջրերն իրա սիրտը հէնց ուրախացրին, որ էլ չէր կարծում; թէ աշխարհքումն ընչի: Էս տեղը մի հարիր հետ տեսած կըլնէր, ըսկի միտը չէր գալի,

թէ մի օր ըսէնց տեսած ա. պապերիցն էլ չէր լսած, պէլացել էր մնացել:

Մին էլ էն տեսաւ, որ մի սաստիկ քամի Մասիսից դպա Ալագեազը գալով՝ էէն ա տալի. —պատրաստ կացէ՛ք. դաշտե՛ր, քոլե՛ր, ծաղիկնե՛ր, խոտե՛ր, ձեր տէրն ու սիրականը, էս աշխարհքի մէրը դալիս ա:

Էս ասելով, քամին անց կացաւ ու քամածկիցը Մասիսն եկաւ: Նրա առաջին սիրուն, չահել աղջկեքն իրանց քաղցր ձէնովը չան գիւղում ասելով դալիս էին, ձեռներին մի մին փունջ ծաղիկ բռնած: Մասիսը հասաւ Ալագեազին ու նրա ճառին ընկաւ, փաթաթուեց ու ասեց.—Աղպէ՛ր չան, էս օր թո՛ղ ուրախանան ամէն սիրեկաններ, որ իրանց մուրազին հասնիլ պատեն:

Վերջը իրանց գիւղին լինչքան ծաղիկներ կար, հրամայեց, որ լիզու ընկնին ու ասեն, թէ ընչի՞ համար են:

Մինն ասեց, թէ ես գիւղացւի դեղ եմ. մեկելը՝ թէ որտեղ ի՞նչ ցաւոտ մարդ ընկնի, ես նրան կը սազացնեմ: մեկը՝ թէ ով որ իմ չուրը ծծի՝ էլ մեռնիլ չի. մեկելը՝ թէ ով որ իմ տերեւիցն ունենայ կշտին, ինչ մուրազ անի՝ կըկատարուի ու ամէնը մի տեսակ բանի պէտք գալն ասեցին:

Սօսը հենց որ էս վերջինի խօսքը լսեց, վրայ թռաւ, որ մի տերև էլա պոկի նրանից. համա էն ահաթը Մասիսն ու Ալագեազը իրարից չոկ-

նուեցին, Սօսը ճնաց էլ յետ Աբարանու դաշտումը։

126 Սրանից յետոյ տեսաւ, որ մի տուփրա (սիտոց) 127 բայց էլաւ էդ չայիր չիմանի (սիզաւես տեղ) վրայ. աշխարհքումն ինչքան կիրակուրներ ու անուշեղէններ կային, էդ տուփրի վրէն չարուեցին։

Մին էլ էն տեսնես, էկան Լէյլին ու Մաջլունը կուռ կուռի բռնած՝ ուրախ ուրախ ծիծաղելով, նստեցին տուփրի վրայ, հայ կերան, ուրախութիւն արին, Լէյլին գինին ածում էր տալիս Մաջլունին, նա էլ՝ Լէյլուն. յետոյ մի թաս գինի լցնց Լէյլին ու տուեց Մաջլունին, ասելով.

— Սիրելի՛դ իմ, մենք ըսենց ուրախութիւնի մէջի ենք, ըսկի էլ չենք ասում, թէ էս օր մի մարդ կայ, որ քանի իմ ու քու քէֆը տեսնում ա, սրտի ճարէքը նորանում են մեր առաջին գուլ դառած կաննել ա. ուզում ա, որ իմանայ իր գլխի գալացուկը. ի՞նչ ես ասում, նրան ի՞նչ չուզաք տանք. բե՛ր էս ուրախութիւնից նրան էլ զամաթ անենք (վիճակեմ), թող գնայ իր մուրազին հասնի։

— Սիրելի Լէյլի՛, ասեց ուրամելով Մաջլունը, գինու թասը ձեռին բռնած. երնէկ մարդի սիրտ իմանայիր, նոր ասէիր. օրհնուի՛ս գու, բանի տակը չիմացած խօսում ես. լեզի կըխմեմ ու ես էս գինին էլ չեմ խմիլ, ասեց ու թասը տուեց գեանովը, ձեռը քցեց Լէյլու ճըտովը ու աներևոյթ էլաւ։

Սօսը էս թասի չըխկոցիցը վեր թռաւ, տեսաւ, որ նստած տեղը քունը տարած ա էլել, էս ամէնը երազ են էլել. համա աչկարայ իմացաւ իր մէջումը, որ սրտինը չի ըննում. սիրտը կոտրած՝ երսի վրայ ընկաւ բարձի վրայ ու էլ ի֊րան իմացաւ ո՛չ. մին էլ աչքերը բայ արուց, տեսաւ, լիան երթկովը տանն ա ընկել։

Աստծու լիսը բայուեց, կարմիր արևը ոսկու պէս պսպղին տալով՝ Մասիսի վրիցը սաղ աշխարհքը բռնեց, տասը տարեկանից ցած աղջկէքը մի մին տէփուր գլխներին՝ ծաղկի վինչ֊բով լիքը, գռնէ գուռը ման են գալի, ամէն տան մի վունչ տալի ու ասում.—«Ծաղկամօր փայը տուէ՛ք»։ Նրանք էլ կաթն ու ձու են տալի կամ բրինձ, որ տանին իրանց համար կաթնով վըլաւ էփեն. ընչունքի էս օր ամէն աղքատ տան էլ պտի կաթնով կիրակուր էփվի. ունևորը չունևորին կըզրկի։ Ծաղկամէրն էլ, ծաղիկը բաժանելուց յետոյ տանում են կարմրատոր եկեղեցու գուռը համբրում ու ընտեղ վեր դնում։

Վարդիթերի մէրն էլ համբաւ֊ճառ հինգշաբթի քչերհանայ վեր կացաւ տեղիցը, կաթնովը էփեց ու պրկեց իրիկուան վիճակ քցողներին կանչի տուեց, որ գան վիճակը հանեն։

Վարդիթերի սիրտը աբրիշումում էր, թէ ե՞րբ պտի վիճակը հանեն, որ իր բաղդը փորձի։

Խալիսը հաւաքուեցին ու խանումը, որ աղջ֊ բաշին (գլխաւոր գերաևն) էր, բերուց մի պատի

հինգ տարեկան անմեղ աղջկայ, որ խեր ու շառը չէր ճանաչում, նստացրուց նրան մէջտեղը, գլխին քցեց մի կարմիր քօղը ու վիճակի բղուղը տուուց ձեռը, որ հանի։ Ինքն էլ վեր կալաւ ու ասեց.

Սիրել եմ սերն երեսին,
Ոչխան թերն երեսին,
Ով իմ սիրածն լինէ չի տայ,
Աստու կրակն երեսին։

Երեխէն ձեռը տարաւ ու հանեց մի աղջկայ մատանիք։ Ամէն մի սեղից էն տուին.—աչքդ լի՛ս, լաւ կըլնի բանդ, վիճակդ լաւ դուս էկաւ։ Ցեռոյ խանումը մի տուն էլ բան ասեց, մինն էլ դուս էկաւ, համա՛ չի սաղեց։ Խեղճ վիճակի սէրը սկսեց նոթերը կիսիլ ու հոգէց քաշելով յետ քաշուիլ պրաշ. համա քէչմանի կնանիքը ասին, որ մէկէլ քցեն բղդի մէջը, բաւքի սխալվեց։

Ցեռոյ ամէն կնիկ մի մին դհից մի բան ասեցին. որի վիճակը լաւ դուս եկաւ, որինը վատ. վերջը խանումն ասեց.

Երթիկ երթիկ բառնել ես,
Երթիկատակին կառնել ես,
Իմ նանը քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կտրել ես։

Աբի՛ քօռ թալահը (կոյր թաղի) տե՛ս, վա՞յ նրան, ինչ Աստուած չի յալողի. էս վայը վարդիթերի գլխին էկաւ. էգումը դրա մատանիքը դուս էկաւ։ Ամէնն էլ մտիկ տուին խեղճ աղջկայ

երեսին, որ հէնց տեսաւ իր մատանիքը թէ չէ, աչքերից գլգլալով վեր ածեց ու հէնց ուզում էր առնիլ գնալ յետ, մերը մին էլ քցիլ տուուց, թէ ինչ ա, բալքի Աստծու աչքը վրէն քաղցրանայ, աղջկայ սրտովն ըլնի վիճակը։

Մի քանիսը յետը մին էլ ասեցին.

Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի ալվալայ ա.
Եար բռնիլը լաւ կըլի,
Բայ թողալը բալայ ա։

Էլի երեխէն ձեռը տարաւ, բղդիցը հանեց։ Էդ խեղճ վարդիթերի բաղդիցն էլի իրանը դուս էկաւ. ջըլիս սիրտը կոտրած, աչքերը գետինը քցած՝ ասեց. մին էլ քցեցէ՛ք, հանքն իրեքուսին ա, բալքի ո՞վ գիտայ, իմ վիճակն ըսենց ա։ Վերջը մին էլ ասեցին.

Էս օր ուրբաթ ա, պաս ա,
Ծոցինդ երծաթէ թաս ա.
Հոգիդ դատի, վարդապե՛տ,
Խի՞սա իր ասում չ'հաս ա։

Մարդի բան, որ մի հետ թարսուի, օխտը տարի էլ չարչարուես, չես կարող դրսոիլը էս էլ մեր խեղճ աղջկանը դուս էկաւ։ Ամէնքը ջուր դառան ու սառած մնացին իրար երեսին մնիկ տալով. տեսան, որ աղջիկը ոանդը չիլ քցեց, սկսեցին ամէնքը մի դհից սիրտ տալ։ Մինն ասեց. վիճակն ի՞նչ ա, որ աւսուսում ես. մէկէլը՝

թէ սարքովի բան ա կնանոնց խելքից դուս էկած ու դհա ուրիշ ըսէնց խօսքերով՝ ուղեցան վարդիթերին ուրախացնեն։

Վիճակը որ պրծան, բզդի ջրիցը ածեցին մի թասի մէջ ու երկու կնիկ իրանց բթերովը (բուր ուսեն) բաշ (բողդ) բռնեցին. մէկելը սրտումը մի մուրազ արեց ու ձեռը ջրի երեսին քսելով՝ ասեց. Թէ ալ պտավի, խեր դայ։ Թասը էն սհաթը առանց ժաժ տալու պտավեց ալ. էս դհիցը աչքալիս խօսացին, որ նրա սրտի մուրազը կատարուեց։

Ձեռայ ամէն կնիկ էլ սրտումը մի մուրազ անելով՝ ձեռնները քսեցին. որինը ալ էր պատվում, աչքալիս էին խօսում. որինը ձախ՝ ասում էին. սուտ բաներ են, սրտի ումուտներ են, ուրիշ ոչինչ։*

Մեր վարդիթերն էլ մնքում էս դրուց. Սօսին թէ կարողանամ էս աշունք ուրախացնել ալ պտավի։ Համա ինչ օգուտ, նրանը ձախուելուցն էր վեր կացել էս օր։ Կնանիքը տեսան, որ նրա բանը չի յաջողեց, ասին. էս օր քոռ օրը չի, էս օր քեզ վրա չեկաւ. օրիցն ա, թէ չէ մի հետ էլ ա լաւ կըընէր վիճակդ. Համա նա իր գլուխը հէնց առաջի վիճակումը լայ էլաւ, ըսոնք աւելորդ էին։

* Այս վիճակի սովորութիւնը Հայաստանումը ամէն տեղ կայ և ջուրը բաժակով պտիտ ածողը իրանք են, որ իրրև խորհուրդ կը պահպանեն իրանց մէջը, ուրիշներին հաւատացնելով, Թէ ինքն իրան է պտտվում։

Ամէն բանը երբ որ վերջացաւ, սուփրէն բերին քցեցին. պառաւները չոկ նստեցին, հարսն ու աղջկեքը չոկ. կաթնովի ամաններըը յառաջ քաշեցին, կերան ու վրէն էլ խորովածը, նրա վրէն էլ ոսկու ւանդ դինին մի մին խմեցին ու օրհնեցին էս օրուան վիճակը, որ ումը լաւ դուս էկաւ՝ լա՛ւ. ումն էլ վատ դուս էկաւ, Աստուած տայ, որ լաւանայ։

Երբ որ հացից պրծան, չնորհակալութիւնները անելով՝ ամէնքը իրանց երեսէքը վեր կացան ու դնացին. հիւանդատէրերն էլ վիճակի ջրիցը մի մին թասի մէջ լցրած տարան, որ նրանով լեղացնեն, բայքի սաղանան. աղապ աղջկատէրերն էլ տարան աղջկերանց գլուխը լուանան, որ մնացերը երկարի։

Մեր Սօան էլ մի կնկայ մի գանակ էր տուել ուրիշի տանը, որ իր համար վիճակ քցի. էս խեղճի վիճակն էլ հէնց էն էր դուս էկել.

Երթիկ երթիկ բռնել ես,
Երթիկակոճն կռնել ես.
Իմ նանը քեզ աղջիկ չի տալ
Անուշ քունդ կարել ես։

Սօսը հէնց որ իր անխեր վիճակի համար լսեց, գլխին կրակ վառուեց, աղբար էլած՝ (շուարած) ընկաւ յիքանիքը ու ինքն իրան կորցրածի պէս թառակէ թառակ (թաղէ ի թաղ) մնն էր գալի. ընչանք ընտանքանք քարեքար դիպաւ, որ իրիկնա-

պահը մօտեցաւ. յետոյ տեսաւ, որ բան չի դառնում, յետ դառաւ գեղը, գնաց Գարեգինենց տունը. ընչունքի մի օղ էլ Անուշին էր տուել, որ Ծաղկեվանք իրա համար վիճակ բանայ. տեսաւ, որ Անուշն էկել ա ու հէնց իրան տեսաւ, ախուր, տրտում ասեց. ողորմի՛ Աստուած։

— Ողորմի՛ ծնողացդ, դիլակդ տայ (իղձդ կատարի), ասեց Սօսը. կերած խմածներդ ձեզ անուշ, տեսածներդ պատմի՛. հլա մի առաջ ասա՛ տեսնիմ, ալչու ա վէ՞քդ, թէ թօխան (ախիևին յաջողուեց, թէ չէ)։

— Է՜հ, ալչու, թօխանով որ մարդի դևի դալացուկը իմացուել էր, ունքերը վրայ տալով ասեց Անուշը, հիմի էլ ի՞նչ ծնացած կըլներ աշխարհքումն թաքուն. սաքի ի՞նչ ասեմ. սար ու քօլ էլ քեզ հետ լինադ (բշնարհի) են էդ բանումը, Աստուած ա ծնացել. վիճակդ լաւ չի դուս էկաւ. ուխտատեղից նոր եկած՝ կարալ չեմ քեզ խաբիլ։

Սօսը երբ որ լսեց, եքսան (կրկին) դարդերը աւելցան. վեր կացաւ տեղիցը, որ դուս ըլնի. հասա Գարեգինը բարկացաւ նրա թիլ սրտի վրայ, թէ դու կնիկ ես, ի՞նչ ես, որ էդ թահրը այնե-օյին, պառաւական բաներին աւտուում ես։

— Չէ, ասեց Սօսը, քչերս լինէ ամէնն էլ յայտնուեց. Մալլունի խօսքերը սրտիս ումուտը կարեցին, տունս քանդեցին. լինէ ըտուց յետոյ

ծնացել ա՝ գլուխս առնիլ կորչիլ աշխարհքէ աշխարհք։

— Տօ՛, նամի՛, ա՛յ խելքապակաս, ասեց Գարեգինը. տե՛ս ի՞նչ լաւ պատմութիւն ա անում Անուշը. ի՞նչ բաներ ա անց կացել Ծաղկեվանք։ Աղջի՛կ, արի՛ մին էլ պատմի՛ տեսածներդ։

Անուշն էկաւ ասի վրայ կանգնեց ու ասեց. — է՜հ, ի՞նչ կար. ամէն տարուայ պէս մի տարի էլ էս էր։ Էն Ծաղկեվանքայ ձորը բերնից հետ լիքն էին ըխտաւորներով. Ասպարանու կնանիքը եղնեղի վրայ նստած՝ կարմիր ջուբէքը հաքներին, մի մին ղաթըրի (ջորի) զռռեքանցից (զանգակ) մենծ էրծամէ շարք (մանեակ) շըրնգներին գնգընգացնելով. աղջկերանց պնչերը ծակած՝ մի քիչ երծամէ անցկացրած, բոթէ թելի մարգրի ուսերքով, երեսներին տեղ տեղ կապիա խալ արած. մարդիկը ղուրմնի անթարիք (երկար բանկոն մինչեւ ոտները) հաքներին, մուշամասի աղլուխով փաթաթած քօլոզները դևիներին։ Երեւանցիք լաւ-լաւ, մեր դաստառի (ձեւով) չորերը հաքներին, չահել որ ղէքանց մահուտ չուխէքանց թեւերը ուսերքին քցած՝ կարմիր զանազան աստառով, խաղ կանչելով, թուանք քցելով, իրար քամակից ձի քշելով, իրար դեմ դևիները փախցնելով. կնանիքը ձիանոց վրայ չարսաւաւորուած՝ նստած, մի մին Բաղդասի ապլուխ չարսաւի վրից բերաններըը կապած, խաս խաս չորերը հաքներին, սաղրի մաշկները ոտներին։ Դաշտըցիք (Ararատեան դաշտի

գիւղօրէից բնակիչքը) որը ոանաբաց, որը կարմիր ջուբով, որը մինթանով գալիս լցուում էին էն խոր ձորի մէջը։ Մի մարդ, որ խօսում էր, քարափներն ու ծառերը նրանից բարձր էին ձէն հանում։ ո՞ւր մնաց, որ էսքան ղալմաղալիցը մարդ մարդի խօսած չէր հասկանում։ Հարիր տեղ չադրներ (վրան) էին վերթողած. մատաղացու գառների ու ոչխարների ձէնիցը վիրի (վայրի) ոչխարներն ու մարալներն էլ էին հաւէսի ընկում (ոգեւորվում), որ գան իրանք էլ մատաղ ընեին. մուխն ու ծուխը սաղ ձորը բռնել էր. գալ ու գնում էին մարդի ճռներն էր ընկնում։ խաղ կանչող տղէքանց քաղցր ձէնը լսուի խելքն էին տանում, քարափներն էին ձէն քաշում նրանց. ձորի մի ջիցը ընչանք սուրբ Վառվառիա կուսի յէրի (այր)* դուռը, մարդ ու կնկայ ձեռից ոտ վոխելու տեղ չի կար, մրջմի քարվանի պէս տասը վիրեու էր գնում, քանը ներքեւ գալի. յէրի մէջը չունչ քաշիլ չէր ըլում համբրողների ձեռիցը. էն ապառաժ քարափիցը չուրը կաթ կաթ թափում էր.

* Այս այրի մէջը կայ մի գերեզման, որի համար ասում են, թէ վառվառիա կուսինն է. երբ նա քրիստոնէութեան համար հալածուել է հօրիցը, փախել է, եկել այս այրի միջին Ջախ կացել։ Հայրը հարցնելով եկել է մինչև այս լեռան գլուխը և այն տեղի հովիւներիցը իմացել է, որ իր աղջիկը ներքևը այս այրի մէջն է. եկել է այդտեղ նահատակել. բայց նա իր մահից առաջ խնդրել է Աստուածանից, որ որքան Ծաղիկ ցաւով հիւանդ լինի, իրան անունովը բժշկուին և իրը թէ անիծել է հովիւներին, իրենց ոչխարներովը քար են դառել և կան մինչև ցայսօր լեռան գլխին. բայց դժուարութեան համար չի կարելի բարձրանալ, կամ թէ շատ քիչերը կը բարձրանան։

չատ չէին կնանիք գնում էին կաթիլքի տակին կանում, որ ընկնի գլխներին, երեխայ բերեն։ Որի մուրազը կատարվում էր, նրա գլխին մի կաթ ընկնում էր. որինը չէ՝ կաթիլքը տեղիցը փախչում, ուրիշ տեղ էր վեր ընկնում. յէրի մի։ չի հաւուղը վախտ չրով լցվում էր, վախտ ցամաքում։ գիլակ անողները գալիս էին ձեռները կոխում մէջը. տակիցը մի բուռն աւազ հանում. ում գիլակը տալիս էր, աւազի միչին եա քորոց, եա ուլունք, եա ասեղ, եա թէ չէ ուրիշ բան էր դուս գալի. թէ չէ՝ ումը որ չէր կատարում, աւազ էր դուս գալի։ Ես էլ ձեռս տարայ, մի վէգ (կոճի, ճան) դուս էկաւ. խնայայ, որ հարսս տղայ պտի բերիլ։ Ցերտէները փարաչէքը գօտիկները խրած՝ մի էչմիածնայ թուանքչի (պահապան) էլ հետները քցած՝ երկու էլ ուրիշ մարդ, էրի ու մորթի էին կիտում. համա ինքը առաչնորդը վեղարը վեր կալած՝ գերեզմանի վիրեւը նստած՝ խէչհամբուր քցողներին օրհնում էր. յէրի չոքութիւնիցը ճակատի քրտինքը առուի պէս էր վեր գալի, մարդ չէր կարում կէս սհաթ մնայ յէրի մէջը, նա սաղ օրը ընտեղից վեր չի կացաւ. խաա՞ֆ (բարի՞) նրա համբերութիւնին. հալբաթ իրան արքութիւնն ա, որ ընէնց դիմում ա, թէ չէ մենք խի* չենք կարում։ Իրիկունն էլ մեր չատրի տակին վիճակ բանալ կար, խայտառակ էլանք։ Ծաղկէվանքայ սարի ծաղիկը ըօ՛չ էնքան քաղել էինք, որ երկու խուրձը. բերինք լաւ, սիրուն չան գիւղումով գովե-

134 V 135 V V 136

ցինք, վինչեցինք. վիճակն էլ՝ լաւ տեղը տեղին քցեցինք ու վեր կացանք մեր չաորի առաջը դուզ էր, ընտեղ մի լաւ եալլի բռնեցինք. լինսակ էր, ինչ ցերեկ։ Ապրին ազապ տղէքը, հացը նրանց հալալ. համ վիճակը գողացան, համ էլ Աբրահամնց Նոյեմզարի գլխից Բազդասարի աղլուխը փախցրին. եալլին քանդուեց, չիոմի դառաւ. մեր չաորի տղէքանցից մի քանին ընկան յետեւնից, սաքի բռնեն, համա պոչը իրանց տակին էր, սատանութիւնը իրանցում էր. իրանք էլ հընկեր էին, թէ չէ ճար ու մունքիւն չի կար. հէնց տեղ էինք պահել բղուղը, որ սատանէն չէր գըտնել. «գողը, որ տանու ընկի, երդն երթկովը դուս կըքաշի». մենք վերջն իմացանք. փախցնողը Աբրահամնց Բաբկէնն ա էլել ու Աբրահամնց Անուշաւանը։ Նոյեմզարի աղլուխն էլ որ փախցրին, ի՞նչ պտի անէինք, կռնեերը հո կարելու չէ՞ինք. առաւօտեան տասը մէկնորդ ենք քցել, օխտը ձիու մունտալ արել, որ կարացել ենք էդ ղօչաղ տըղէքանցը մի քանի գաթայ, երկու խաչած հաւ, մի երկու բաժին մատաղ էլ տալ, որ ձեռներիցն առել ենք, վիճակը բաց արել։ Ես գիտեմ, լաւ դուս կըգար քու վիճակը (*Սօսին է ասում*), համա հարամուեց վիճակը, տղէքանց ձեռն ընկաւ, ընտուր համար խելքը գլխին ոչովինը չէր...

— Լա՛ւ, լա՛ւ, խօսքը կտրելով ասեց Գարեգինը. ամակդ երեսաղէմ. գնա՛ մի քիչ մատաղ ու խաչալուսայ բե՛ր, մենք էլ թաթախուենք։

Գարեգնի մէրը վաղուց հացը չինել էր, վեր դրել. երբ որ լսեց, էն սհաթը գաստախուանը (*ախոռց*) վռեց, մի քիչ գաթայ, մատաղ ու Ծաղկեվանքից յետ բերած կիրակրներից դրուց առաջները, գաւն էլ պաշարի գինուցը յորուց, կշաներին վեր դրուց։ Սօսը գինին ձեռն առաւ ու ասեց.—իմ բաժինս չնորհաւոր բարեկենդան. ես էքուցվանից սուրբ կարապետու պատն եմ ընչանք վարդիւորը. իմ վայ միսը ձեղ հալալ, ես օր յետ ու առաջի միս ուտիլս ա, բարով հասնենք էն օրը, մին էլ ո՛վ սաղ, ո՛վ մեռած՝ լաւ աչքը պտի, որ տեսնի. լաւ Աստծու դիրեկան տղայ պտի ընկի, որ իր մուրազն առնի. Տէր Աստուա՛ծ, քեզ փառք։ Ասեց ու խմեց իրա վերջի գինին ու հաց կերաւ Գարեգնի հետ, ուտիսի ծէրին կապ տուուց, բերանը լուաց ու ընչանք վարդիւոր կիրակին պաս ծնաց։ Համա չաբաթ կիրակի նաւակատիք էր պահում, ոնց որ Հայ-Քրիստոնի օրէնքն ա։

Ժ.Գ.

Համբարձմանից յետոյ մին օր առաւօտենց խէր ու շառը նոր էր կոտրել, վարդիթերի հերը տեղիցը վեր կացաւ, երեսը լուաց, երեսին մի քանի խաչ հանեց ու տղէքանց վրայ թոնթորալով (*փնթփնթալ*), թէ անքան են, փիս են, ճաշքուն են տալի, մեր յիքանիքը հիմի եաղին

(գողը) տարաւ, տարուայ էս վախտն ա հասել, դեռ մեր յիքանոնց պատերը չափարած չի, մեր մարգ ու մուրգը չորացել ա, մի քիչ պօլօճիկ (ջրի) ունինք ցանած, ո՛չ բար ա դրած (ամրացնել արուստներր հողով), ո՛չ չախած (ներցուկ տուած). էս խանի խարաբի տղէքը ո՛չ մի բանի համար հոգս չեն քաշում; դատած հացի վերայ են նստել. էս խալխի տղէքը քշերն էլ չեն դնձանում; մեզ Աստուած տղայ չի տուել, պատիժ ա տուել. մի քանի տնկի (փոխր ծառ) ենք կնստել (բնիցը վեր ճղերը կոտորել), չիւերը հատատացան, պատրիս (պատուաս) չեն դնում; թէ էքսէք իրանց համար պատուղ տայ. ես էս օր կամ էքսէց ո՛չ, իմ ընչի՞ն ա պէտքը: Ըսենց մի քանի խօսքեր ասելով դնաց տաշտիցը մի կտոր հաց վերկալաւ, դրուց գօտկածալը, էտոցն էլ խրեց մէջքը, բահն էլ դրուց ուսին, հալիւոր հալիւոր ճամիու ընկաւ դպա յիքին գնաց, կնկանն էլ թամբահ արուց (պատուիրեց), որ տղէքանցը վեր կացնի, մի մին հաց տայ իրանց ու դրկի յիքանիքը:

Գնաց յիքին, տեսաւ, որ ջրի հերթն իրանց հարեւանինն ա. բահով կատառի (ջրի ուղտը) տակիցը հէնց բաց արուց, որ ո՛չ ով չիմացաւ, թէ ջուր ա կապել. արեց մարգերի վրայ, հէնց չինեց, որ թէ տեսնէին, կասէր ես խաբար չեմ; ջուրն ա ծակել. յետոյ էտոցը հանեց, մի քանի բադամարգի, աղջանաբաթի, զայսի, գետագետառ (ծիրանևերի տեսակներն են) ու ուրիշ լաւ ծիրանի չիւերը

կարեց, տարաւ կնստացած վիս ծիրանիք, դամբուլիք, չլորիք ունէր նրանց նոր դուս քցած չիւերի վրայ պատրիս դրուց:

Գնաց, մարգերի ջուրը կարեց, պօլօճկի վրայ արուց, էն էլ ջրեց ու բաց թողուց ափան վրայ ու ինքը քաշուեց, գնաց յիքու ոլքը (ներքեւ), ծառերի որ ճուղքն աւելորդ էր, կարատեց չափար չինելու համար ու մի կանանչ տեղ նստեց, քըրտինքը սրբելով ինքն իրան ասեց.—է՜հ, ընչի՞ս ա պէտքը, ինձ մինն ասող ըլնի, թէ ժամիցն ընկել ես, էկել ըստեղ խալխի ջուրը կապում: ի՞նչ անեմ, ախպէ՛ր, անում եմ՝ գնամիչ են անում (մեղադրում են), չեմ անում՝ իմ տղէքանցիցը ճրագ չի կպչում: Ես իմ ողորմածիկ հօրիցն էս եմ տեսել համա հիմիկուայ տղէքանցիցն Աստուած պահի. խալխըն էլ ասում են, թէ Հեթումը բաղդաւոր ա, վեց տղայ ունի, Աստուած պահի, իր հարաբին հասել են, համա չեն իմանում վաղի առակը, թէ ՙիշին ասին աչդդ լիս, քեզ քուռակ ա էլել աՙ ասեց. ի՞նչ անեմ, որ իմ բեռն իմ մէջքիցը պակսիլ չի պատ՚. հիմի իմն ա. տղէքն, Աստուած պահի իրանց համար, ինձ մի փարի օգուտ չեն բերիլ. ամո՞ն, Աստուած չա՞ն, քեզ դժար չի գայ, Դու իմ տղէքը պահես...

Ըսենց խօսում էր Հեթումը, որ ջրատերը բահը ձեռին վերեւը կատառը կարելով՝ ձէն տուեց.—աՙյ ջուր կապո՛ղ, ձեզ ամօթ չի՞:

Հեթումը, որ լսեց, թեք ընկաւ, համա չբաւ-
աէրը վաղուց տեսել էր, մին էլ ձէն տուուց.—
Հեթո՛ւմ ափէր, ախար էս ին՞չ էք անում։

Սա տեսաւ, որ չի կարայ տափ կենալ վեր
կացաւ ու գոռաց. որդի՛, քու արեւը, ես խաբար
չեմ. կըլնի, որ ջուրն ինքն ա ծակել. ես հէնց
նոր նեըքեւ էկայ, ղատ չի կար. քշերս էլ ջուրը
շատ վարար էք տարել առուի թմբերովը քցել
ա, գնացել մարդերը, պօլօճիկը չըրել. հէնց թաց
էր, մէկել օրն էլի չըրել քուրս տղի ջրովը, սաքի
էկայ, թէ բար գնեմ, տեսայ որ չըռւել ա. կարի՛
տա՛ր, աղպէ՛ր չա՞ն, քու ջուրն իմ ընչի՞ն ա
պէտքը. էքուց էլ օր էլ մեր չըլի հերթն ա, քեզ
սաղն ասեմ, ուզում եմ ըսկի ջուր չի կապեմ։

Սաքի չրատէրն էլ գիտեր, որ սուտ ա ա-
սում; համա ի՞նչ, աբռւռիցն (պատուիրն) ամանչեց,
ջուրը կարեց, գնաց, աղանչաք անելով՝ Հեթումի
ափէ՛ր, քեզ արքայութիւն ըլնի, կարես ոչ. ինչ
ունինք, չունինք, չորացել ա։

Հեթումն ընչանք կացաւ, որ չրատէրը ոսոր
յիքուցը դուս դրուց, էլ յետ գնաց ջուրը քան-
դեց ու էկաւ նեըքեւ, բահը դրուց գլխատակին
ու թեք ընկաւ, որ աչքը մի քիչ կպցնի։

Մի աչքը քուն էր՝ մինը գարթուն, որ պատ
աղէն՝ փափակը վիրեւիցը ձէն տուուց։

Վեր թռաւ տեղիցը Հեթումն ու էկաւ տղի
կուշտը։

— Ի՞նչ ա. ասեց, որդի՛, անուշ քունս կըտ-
րեցիր։

— Վաղարշակենց Արշակը մեռել ա, հեթ-
հեթալով ասեց տղէն. նանն ասում էր, արի՛,
գնա՛ վրէն, բարեկամ ա։

— Ի՞նչ ես ասում; ասո՛, ե՞րբ մեռաւ, ողոր-
մի իրան, ափսո՜ս մարդ, գեղի աների մինն էլ
վեր ընկաւ. հիմիկեց դէնը վա՛յ գեղի օրին. մեռ-
ցինք մի երկու իրեք ծեր մարդիկ, մինք էլ ես ա
մի ոտներս գերեզմանումն ա։—Տօ՛, ժամը տա-
րա՞ն, թէ չէ, յետ գառնալով հարցրուց տղին։

— Չէ՛, ասեց, նոր էլեն նաչը (դպագաղ) տա-
նում; կէս օհալթ կըլնի, որ մեռել ա։

Հալիւորը ճամփու ընկաւ դպա գեղն ու ին-
քն իրան ասեց.—ողորմի՛ քեզ, Արշա՛կ, ի՞նչ տա-
րար. աշխատեցիր-աշխատեցիր տղեքանցդ հա-
մար, հիմի տե՛ս ի՞նչ պտի անեն քեզնից յետոյ.
է՜հ, փուչ, անցաւոր աշխա՛րհ. ո՞ր մինս պտի
սաղ ձեանք. ես էլ վերջած գերան եմ գառնալ
էքուց էլ ես պտի վեր ընկնիմ; իմ տղէքն էլ
նրա տղէքանցիցը պակաս բեդուվլաթ (անառակ)
չենն։

Ընչենց խօսալով էկաւ գեղը, գնաց ննջեցե-
լատիրոնջ տունը, տեսաւ, որ լաց ու շիւան քցել
են. կնիկը գլխին տալիս ա, երեսը պոկում ու
դոռում; տղէքը վա՛յ ափու չան են ձէն տալի.
պղչկէքը մոր ճտոիկ ընկած՝ նանի չան են կան-
չում; մեր տունը քանդուեց. փեսէքն էլ մի քիչ

ափու ձէն տալուց յետոյ՝ տանն են մոխիկ տալիս։ Խալխը տունը լցուել են, բարեկամ կնանիքը օղլուշաղի կշտին նստած՝ աչքերն արտասուքով լիքը՝ ձէն են քաշում կնկայ լացին. ննջեցեալը տարել են մեկել օթախը, լուացրել պրծել են ու պատանում են. նաշը դրանը վեր դրած ա. աերտէրներն էկել են մաշտոցները ձեռներին կաննել, ծնում են, որ պատանեն։

Ինքն էլ գնաց մի քնչում նստեց անխօս, մարդկանց մէջին։

Պատանեցին ննջեցելքին, դրին նաշի մէջն ու դիպարդը քցեցին երեսին ու աերտէրները տան կարգը կատարեցին։ Բարեկամները բռնած կընկայ ու աղչկերանց ձեռները՝ բերին, որ վերջի բարովը տան. կնիկն ու աղչկէքն ընկան նաշի վրայ լաց էլան։

Լացը որ մի քիչ թեթեւացաւ, վեր կալան չորս մարդով նաշն ու աերտէրների եաւիցը տարան դպա ժամ։

Տղէքը, փեսէքն ու ուրիշ մոխիկ բարեկամներն էլ գտակները գլխներին՝ ափու չան կանչելով, շընքները ծռած գնացին ժամ։

Ննջեցեալքը վեր դրին ժամումն ու յետ դառան։

Տղէքն ուղեցին, որ հէնց էս օր թաղեն, համա Գարեգինը, որ համ ախրացու էր՝ համ բարեկամ; չի թողուց, թէ անաչէննե՛ր, թողէ՛ք էս օր կենայ, էքուց պատարագ կանենք, կարգին

կը թաղենք, դուք էլ ձեր պատրաստութիւնը տեսէ՛ք. հաւի ճուտ հո չէ՞ք կորցրել հինգ տարեկան քօրփա (ևաևուկ) հո չի՞. ինքն էլ մի անուան տէր մարդ էր գեղումն. դուք էլ ժառանգէք, փառք Աստծու, ողորմի՛ իրան, էնքան յետ ա քցել որ կացէ՛ք ու կերէ՛ք, էլ ինչի՞ պակ էս օր թաղէք։

Մեռելը մնաց ժամումը, իրանք պատրաստութիւն տեսան իրիկուան համար։

Իրիկուայ ժամը որ դուս էկաւ, տէրտէրները, ախրացուերը, իրիցփոխը, ժամհարն ու մի քանի էլ ուրիշ մոտիկ բարեկամներ էկան ննջեցելատիրոնջ տունը, պաշտումահաց (սուրբ սեղան) կերան, մի քիչ մխիթարեցին օղլուշաղներին ու ցրուեցին։

Ժամհարն էլ մի չուխա մուշ տարաւ, որ քչերս պատարագիչ տէրտէրը սարմոս պակ քաղեր, ննջեցելատիրոնջ մոմիցը պակ վառէր, որ սարմոսը նրա հոգու փրկութիւնի համար ըլնի, թէ չէ ով մուշը կը տայ, նշխարքի ալերն ու բաժակացուն կըտայ, էն պատարագը նրա ննջեցելոց հոգուն կերթայ։

Առաւօտեան ժամից յետոյ ժամհարը գնաց նշխարքի համար ալիւրն ու բաժակացուն բերուց ու հէնց նշխարքը թխուեց, պատարագի ժամը տուին։

Երբ որ պատարագը հասաւ «Տէր ողորմիայի» վախտը, ժամհարը գնաց ննջեցելատիրոնջ տու-

նը, իմաց տուուց, որ գան վերջին բարովը տան իրանց մեռելին։

Մին էլ ի՞նչ տեանիս. մեռլատիրոնջ բարեկամ մարդիկը տղէքանցը յառաջ քցած՝ լաց ընելով՝ լցուեցին ժամ՝ գտակները գլխներին։ Իկան նաչի կշտին հաւաքուեցին, ընկան նաչի վրայ ու մի քիչ լաց ընելուց յետոյ իրանք յետ քաշուեցին, տղէքանցը թողացին իրանց սրտի փափաքն առնելու։ Տղէքը գլխները ժամ տալով, ափո՛ւ չան, ձէն տուին, մեզ ընչի՞ ձեռներս ծոցը-ներումն թողիր. էլ ո՞վ պտի մեզ խրատի, էլ ո՞ւմ ափու պտի ձէն տանք։

Դրանք գեռ լաց էին ընում, որ կնանիքը չարսաւներն էրկու տակ գլխներին քցած, նընջեցելքի կնկայ ու աղջկերանց կուռն ընկած՝ լցուեցին ժամ։ Իրանց երեսները չանդրէթորել էին, որ արինելուէք էլ էլած, էյ սալ տեղ չի կար։ Իկան թափուեցին նաչի վրայ, կնկանն ու աղջկերանցն էլ նատացրին գլխավիրեւը։ Դու ասի՛ ու հիմի մնիկ տա՛ր. ապառաժ քար ընէր, լաց կըընէր, թէ որ էս ազգի բանը տեսնէր. ձեռները որ տանում չեն, բերում ու գլխներին տալի՝ մարդի սիրտ կարատուում ա. կնիկը որ Աբշակ չա՛ն չի ձէն տալի, ինձ ընչի՞ տղէքանց ումու-տալի ես թողում, մարդի մաղեր բիզ բիզ ա ընում։ աղջկէքը՝ որ նաչը խատում չէն ու ափու չա՛ն դոռում բարակ ձէնով, մեզ ընչի՞ եթիմ (որբ) թողացիր, մարդի գլխի կրակ ա վառուում։

Սրանք լաց են ընում, թուրքավար բայաթի ասում մղկաալով, մեկել կնանիքն էլ վերջումը միասեղ ո՞հ, ո՞հ անելով ձէն են քաշում ու մըղկըտում։ Ինքան լաց էլան, որ ձէննները կտրուեց. պատարագի ձէնն էլ լսուում չէր. մարդիկը մօտ են գնում ու կռնկրիցը բռնում յետ քաշում։ Նրանք աւելի են գոռգոռում։

Պատարագը որ վերջացաւ, ժամարարը վեր եկաւ, հաւաքուեցին մեռլի գլխավիրեւն ու ամբիծքն ասելին. տէրտէրը վարշամակը խաչաձև կարեց, մի նշխարք, մի քիչ խունկ էլ հետը տուուց կնանոնցը, որ խունկն ու նշխարքը դնեն ննջեցեալքի երեսին ու կարեն։

Գանձը որ ասելին պրծան, մարդիկն էկան, նաչը վերկալան ու տէրտէրների քամակից առան, գնացին գերեզմանատունը. ժամարարն էլ պգեսաը հանեց, եկաւ ժամի դրանը կնանոնց համար «Հոգւոց» ասեց, մխիթարք խօսաց ու գըներց ննջեցեալքին հասաւ։

Ձէնց որ ննջեցեալքը թաղելին, նատելին էն չօլ տեղը հացի. քարերի վրայ փռած էր լըշ-հացը. էրկու մարդին մինը. վրէն դրած էր էրկու կտոր խաչլամայ, մի քիչ աղ, մի քիչ էլ սաւղի (կանաչի)։ Ամէն մարդ մի էրկու թիքայ հաց կերաւ ու երեք թաս գինի խմեց, ողորմի տուուց նոր ննջեցեալքին տէրտէրներիցը բռնած՝ ընչանք յետին աղքատը։ Յետոյ վեր կացան հացն օրհ-

նեցին, վխտիթարք խօսացին բարեկամներին ու գնացին դպա ննջեցեալիրանց տունը։

143 Էն տեղի աւելացած հացիցը մի երկու հատ մանր կոտորեցին ղուրդ ու ղլի (թռչնոց եւ գայլերի) փայի համար, որ նրանց կերածն էլ խէր ա, մընացողը ժամհարը հաւաքեց տարաւ իրա տունը։

Խալխը գերեզմաններիցը վէր եկան, գնացին ննջեցեալիրանց տունը, «Հոգւոց» ասին ու ամէն մարդ ցրուեցին իրանց անելը. համա աէրաէրներն ու մի քանի բարեկամներ մնան նէքսև հաց ուտելու։

Իրիկուայ ժամը որ տուին, աէրաէրն ու բարեկամ մարդիկը գնացին Աբշակի տղէքանցն ու վեռէքանցն բերին ժամ, վերջումը մի «Հոգւոց» ասին ու վխտիթարանք խօսացին։ Ննջեցեալիրանց տանիցն էլ աթաբի վրայ կրակ դրին ժամից յետոյ ու տարան դերեզմանի վրայ դրին, որ չանաւաը (գազան) չի դիպչի։

144

ԺԴ.

Էս էկող շաբաթ օրը մեր Սուրբ ԳՐԻԳՈՐ պապի Խորվիրապիցը դուս գալու օրն էր. նրա էքսի օրը Փարպի պապ էրթային ուխտ։

Սօսը վաղէ վաղ գնաց Վարդվիթերենց հարևանի հարսի կուշտը, որ իրա քեռակինն էր, իմացաւ նրանից, որ Վարդվիթերենք էլ պապ դը-

նան Փարպի։ Ցետ դառաւ ափալ թափալ (հապճեպ) Գարեգինին ասեց, թէ Ճիանը հագիր եմ առրել, որ էքսից Ծէքը քցելուս ոտներս դնենք օրզանգունին ու դպա Փարպի։

145 — Չէ՛, ասեց Գարեգինը, Փարպի գնալը մեր ի՞նչ բանն ա, թո՛ղ կնանիքն էրթան. մենք խօլվաթ (պատապ) օր կերթանք, քէֆ կանենք ընտեղ։

146 — Ես անպատճառ պապ էրթամ, խօսքը կարեց Սօսը. մէկէլ օրը Տաճարի երեխեն կատաղած չունը կծել էր, փաթաթեցին գլուխը կեմը (ոչորած խոտ), Փարպի տարան. չունը բէզաֆիլ (յանկարծ) դպա ինձ վազեց վրիս։ Ես ափսոսրը չաղ տալով. դամէս հանեցի, հէնց տուի, որ մէջ տեղիցն երկու կտոր էլաւ. կէսը դէսը քցեցի, կէսը դէնը ու միջոցն անց կացայ. հիմի մի քիչ նիգեարան (երկմիտ) եմ, անկարելի ա որ չերթամ։ Ես հէնց մին օր պապ էրթայի, մեռնի՞մ նրա սուրբ զօրութիւնին, էքսից հօ նրա ուխտն ա. Հայ —քրիստոնէն ուխտից կըփախչի՞։

— Լա՛ւ, ասեց Գարեգինը, որ քանից ա, գնա՛ մեր Պահլաւունուն, մին էլ Վարդանին (ընկեր տղայք ևն) իմաց արա՛, որ էքսից նրանք էլ Ճիանը թամքեն, մեզ հետ գան. ընչունքի էրթում ենք, մի լաւ ուրախութիւն էլ ա անենք։

— Դէ՛, բաս ճնաս բարին, ասեց Սօսը, ես էրթամ ամէն բանը պատրաստեմ, դու առաւօտենց թէզ վեր կա՛ց։

Կիրակի առաւօտենց լիսը որ բացուեց, էլ յետ կնանիքը զարդարուեցին, չարսաւները քցեցին գլխներին, երեխէքն առաջ արին, հարս ու աղջկերանցն էլ քամակներին քցեցին, պաչարի դասաախումնը, որոնք չահել տղէք ունէին, կապեցին նրանց չալակը, որոնք չէ, քցեցին ձիու վրայ ու մի երեխայ մէջտեղը նստացրին, եա թէ չէ, աղջկերանց կռնատակը դրին ու դպա փարպու ճամփէն։

148 Գեղի ամէն մի քուչիցը երկու իրեք թօքուն (խումբ) ա դուս գալի. երեխամէրերն էլ խոտած իրանց քօրփէքանցը, առաջ են ընկել. հէնցն էլ կայ, որ համ ծծին երեխայ ունի, համ լինքն էլ երկուհոգիս ա, համա նրա հէչ վէճը չի. հէնց ա գնում ծիծն երեխի բերանը դրած՝ որ կասես ձեռին բան չըլնի. կաքաւը քեզ օրինակ. մի քանիան էլ բոբիկ են գնում, որ մուրաղները կատարի Սուրբ Գրիգորը։

Աւենք հիմի առաւօտեան հոգիս ա, էլի էնքան գժար չի, համա մի կէս սհաթից յետոյ աբևի թէժութիւնիցը գետնի աւազը հէնց կըտաքանայ, որ մէջին ձու թաղես կէփի. համա մեր սթխով (հաւաստով) ըխտաւորները գարդ չեն անում, թէ ոտները արևը կէրի։ Նրանք իրանց Լուսաւորիչ պապի խաթերը հէնց իմանում են, թէ չայիր չիմանում են մանգալի ու սէհր անում (գբօսնում). թէ որ իրանց էլ ասես, թէ ոտներիդ մեզք չես գալի, աւազի մէջին խորո-

վում ես, նա կասի.—մեռնիմ մեր Սուրբ Լուսաւորիչ պապի լիս գերեզմանին, նա մեզ համար 15 տարի խոր վիրապումը օձերի ու ճիճըների միջին, էն նամ տեղը ծում ա պահել, 14 չարչարանք ա քաշել, մեզ դժոխքիցը դրախտն ա հանել, մեզ լիս հաւատ ա տուել, Հայ-քրիստոնեայ ա չինիլ. հիմի չատ բան ա՞, որ ես մի օր նրա անուամի խաթեր համար բոբիկ ոտով էրթամ նրա դուռն ուխտ։

Ձամիու ընկան մեր ըխտաւեր Լուսաւորչու գառները գալա Փարպի իրար հետ գրից տալով, Սուրբ Գրիգորի հրաչքները պատմելով, կատաղածների վրայ խօսալով, թէ ի՞նչպէս անխօսալ գալիս են նրա դուռն ու փրկուում *։

Աղաչ տղէքն էլ իրանց թայ ու թուշերի (ընկերների) հետ խաղ կանչելով, փառ փառ ծիծաղալով, ըստուր ընստուր աղջկայ վրայ խօսալով, ձին գովելով, մէկէլին մասխարայ քցելով, եա թէ չէ իրանց յիքանոնց մասիլի վրայ մասլահաթ անելով, գնում են յառաջ յառաջ։

Մեր Սօսն ու Գարեգինն իրանց երկու հընկերների հետ գետ չեն երևում։ Նրանք ուրիշ բանի են ձիում։ Նրանց համար գնալը մի գժար

* Փարպիումը մի եկեղեցի կայ ի հնուց շինեալ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի անուամբ, այժմ առաստաղը քակուած է և փայտով հասարակ ձևով ծածկած. այս եկեղեցիս որքան կատաղած շանից վնասուած մարդ գլուխը կեմ փաթաթած անխօսիլ գայ, եկեղեցու գլխովը եօթն անգամ պտիտ գայ, կըփրկուի անպատճառ։ Հայաստանումը կատաղած շանից վիրաւորուածի դեղն այս է. հինգ վեց աւուր ծանապարհից կըգան։

բան չի, ձիանոնցն երկու երկու հետ կրկնեն, հերիք ա. նրանց ձիանը թամքած՝ գետմը գըլխըներին կաննած են։

Հենց որ մեր բլրուլ Սօսի վարդը բացուեց, Քարհանքի դղեակը առաւօտեան քամու հետ իր անուշ հոտը դիպցրուց մեր Սօսի քնթին։

Մեր աղէքը մի մին փունջ վարդ ձեռներին բռնած, ձիանոնց քամակն ընկան, դեղիցը մի քիչ հեռացան, գաւակները քցել--կաշնելով, մուխամբաղ ասելով, Քարհանքի դղումը նրանց առաջին ամէնքը մի քանի գլուխ ձի քշեցին։

Սօսը հօ ձին աստղերի հետ խաղացնում ա, թօղ ու դումանը բռնացրել ա. սաղ ըխտաւորի ուշ ու միտքը իրա վրայ ա դարձրել։

— Էլի սրանցից պրծանք ո՛չ, գլուխը պտըտելով ասեց Վարդիթերի մէրն իրա հետի կըռնանոնցը՝ ճամփէն յառաջ գնալով. սրանք մեր քամակիցն են մանգալի, քա խիզա՞ն (աղջկո՛ւնիվ),էս Աստու իրաւունք ա՞, ինչ անում ենք, չենք ա-նում, մեղնից ձեռը չի վերցնում: ա՛խ ծակծա-կոտուած, ախ սրտի աղջի՛կ (վարդիթերին ե ասում), ի՞նչ անեմ, խաւարեր էն օրը, որ դու լիս ընկար. էն քշերը հերդ չաղացն էր գնացել ի՞նչ կըլներ. մեզ աշխարհքի միջին դու թուք ու բէդնամ արիր։

— Ֆա՛, ընչի՞ ես էս բարի լսի առաջին, սուրբ ըխտի ճամփին բերանդ փիս բաց անում. հա՛ չահէլ աղէք են, ի՞նչ ես ուզում՝ թո՛ղ քէֆ անեն. դու նրանց ի՞նչ ես անկանչ անում, դնա-միչ անելով ասին մեկել կնանիքը։

— Ա՛խ, սրտիս տախտակն են դաղել (այրել), 153
տատդ պատաւը, չէ՛ք իմանում: էս մեր փչացածի 154
արածն ա քօմմա (բողոքը), նրանցում ի՞նչ գիւնահ 155
(մեղք) կայ. խաչն ինձ ա, քեարամաթը (զօրութիւնը) ես գիտեմ։

Խեղճ Վարդիթերը լսում ա մօր կծու կծու խօսքերը. մին ուզում ա, որ լաց ընկի, մին էլ աչքի պոչովը որ մտիկ չի տալի էն սպիտակ ձիաւորին, հենց իմանում ա, թէ մօր ասածը քա-մին տարաւ։

Մեր աղէքն էս դղումը ձի խաղալուց յետոյ՝ էս ուրախութիւնովը էկան դրանցից յառաջ ընկան։

— Սօս չա՛ն, ասեց Գարեգինը բարձր ձէնով, լինէ սիրում ե՞ս։

— Ա՛խ, ասեց, էդ ի՞նչ խօսք ա. աշխարհ-քում մին դու լինէ համար, մին էլ՝ ո՛վ որ ես ու դուն դիտենք. մնացողին էլ Աստուած սաղ պա-հի իրանց համար. Աստուած սաղ պահի ամէն մարդի էլ, նրանց սաղացիը (ի պահու նոցա) քեզ, նրան ու ինձ. ամէ՛ն, աղէ՛ք չան, ձեզ դուրբան ընիմ, ասեցէ՛ք ամէ՛ն։

— Ամէ՛ն, ձէն տուին չորսով էլ։ Սուրբ Գը-րիգորն ու Թարգմանիչը* տան ամէն մարդի մու-

* Փարպիում կայ մի աւերակ փորը մատուռ, որ Թարգմանիչ են ասում. կարծիքաւոր է, թէ արդեօք այս Թարգմանիչը Ղազար Փարպե-ցին է, թէ ո՞վ պտի լինի. ցանկալի էր մեզ սորա տեղեկութիւնն իմանալ:

բազ էլ, մեր հնգլինն էլ, որ չորս ձիով ենք, մինս ոտով։

— Ամէ՛ն, քեզ մատաղ, Սօս չա՛ն, ձէն տը-ւուց Գարեգինը. երնէ՛կ կըլնի էն օրը, որ բլբուլը կտեսնի վարդին բաց էլած ու նրա վրայ վեր կը-գայ, հոտ կը քաշի նրանից. երնէ՛կ էն օրը կըլնի, որ աչքներս յետուց չի ըլնիլ բաց ասեմ, ո՛չ ամաչեմ։ Երնէ՛կ էն օրը կըլնի, որ ամէնքս էլ մեր սրտի մուրազն առած կըլնինք, աչքներս խալխի դրանը չի ըլնիլ։

— Ամէ՛ն, գոռացին աղէքը միաբերան։

— Սօս չա՛ն, քեզ մատաղ, մի էն մուխամ բաղն ասա՛, ասեց Գարեգինը. վաղուց ա, որ չեմ լսել. մի՛ վախենալ, թէ խօսքդ շաքարով կոտրող չի ըլնիլ. ես էլ պատասխանը նրա տե-ղակ քեզ կտամ։ Բլբուլը, որ իրա համար քա-րափների գլխին, ծառերի վրայ վարդի սիրովը կըծլվլացնի, աշխարհքումս ինչքան խօսող ղներ կան, կըգան նրան գլուխ կտան ու նրա ձէնը հեռուից կըպահնեն, կամ թէ չէ նրա եղանակ-ները կըսարվեն. հիմի էն օրն ա, որ մեր բլբուլը վարդի կոկոնը տեսել ա, չորս դիհը փարվազ փարվազ ա անում (փարում է), պատ որ ի՛նչ հու-նար ունենայ, պահի ո՛չ. էլալամ (հարայնի) դի-տի, որ մեր բլբուլն էլ դու՛ս ես. թէ վարդը լի-ղու չունի, որ քեզ բաց ձնի իր սրտի սըռը (գաղտնիք), համա վարդի քաղցրն էլա նրա բերնի-ցը մի քանի խօսք կունենայ, որ ասի։

Սօսը բաղձն խտակեց ու վեր կալաւ դաշտ ու չօլեր դողդողացնելով էս մուխամ-բաղը, որ իրա ու Վարդիթերի բերնիցը չինել էր։

Վարդիթերի տեղակ էլ Գարեգինն էր պա-տասխան տալիս։

Բան եմ ասում, անկաջ դի՛ր, անկաջիդ մատաղ, Վար-դիթե՛ր.
Ինձ մի՛ քցիլ չօլերը, կրակիլ սաղ սաղ, Վարդիթե՛ր,
Հանդիստ ու դադար չունիմ, դառել եմ սարսաղ, Վար-դիթե՛ր,
Ատուճած սիրես խնայի՛, թո՛ղ մնամ խաղաղ, Վար-դիթե՛ր։

Գարեգինը վեր կալաւ Վարդիթերի բեր-անիցը։

Հրամայի՛, որ լսեմ, դու ինձ համար վարդ, Սօսի՛ ջա՛ն,
Պատրաստ եմ ես կատարել ամէն հրամանդ, Սօսի՛ ջան.
Թէկուզ սաղ աշխարհքն ինձ ասի վատաբաղդ, Սօսի՛ ջան,
Ձեմ թողալ քու սրտումդ մի կորկի չափ դաղ, Սօսի՛ ջան։

Ս Օ Ս Ը

Աղջի, երբ որ քեզ տեսայ, թռաւ երեսիս գոյնը,
Թէ արեւդ կսիրեա, մի՛ կորիլ իմ անուշ քունը.
Տուած խօսքդ պինդ պահի՛ր, որ հաստատուի սրտիս սիւնը,
Սէրիդ կապը նորոգի՛, իմ ոսկի վարագ Վարդիթե՛ր

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ը

Ինձ պէս հասարակ աղջիկը, որ հող եմ քու ոտի տակին,
Ի՞նչպէս կարամ քունդ կորիլ, որ գերի եմ քու պատ-կերքին.

Իր խօսքիցը յետ դառնողն արժանի ա թէժ կրակին,
Սէրիդ կրակը նոր ա ու նոր, էրուած սրտիս չաղ Սօսի՛ Ջան։

Ս Օ Մ Ը

Ուզում եմ քեզ մէկ գովիլ, վախում եմ էդ իմ բանը չի,
Թէ արեգակ կասեմ, կասէն նրա նմանը չի.
Արեգակը աչք ծակող է, էդ սրա նշանը չի,
Բաս լուսնիակ ես կէս ամսուան, իմ լիս ու չաւաղ Վարդիթե՛ր։

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ը

Գովասանքը դարդակ բան է, սէրն աւելին է գովելի,
Արեգակ, լուսնիակ ասելով ոչինչ օգուտ չէ դուս գալի.
Թէ գովելու ջանն ես ուզում, քեզ պէս էլ ո՞ր մինը կըլի,
Համ քաղցրաձայն, համ պարզասիրտ, համ կարիչ ղօ-
չաղ Սօսի՛ Ջան։

Ս Օ Մ Ը

Լուսնիակն էլ կըխաւարի, դու միշտ պայծառ ես, հոգի՛ Ջան,
Եաղուտ ալմաստն էլ կըփչուրին, քեար չի անիլ քեզ
ոչինչ բան.
Վարդն էլ կթոռոմի, ամէն ծաղիկ կսալարին,
Բայց իմ սրտին անթառամ ես, իմ բաղչայ ու բաղ
Վարդիթե՛ր։

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ը

Աչխարհիս ամէն բանը մին օր մի վախճան կունենայ,
Մին լաւութիւն, մին հալալ սէրն է, որ յաւիտեան
կըմնայ.
Ես էլ չուտով կըվերջանամ, թէ մուրազս կիսատ մնայ,
Մուրազս կիսատ թողողը չուտ մանի դադաղ, Սօսի՛ Ջան։

Ս Օ Մ Ը

Սօսն եմ, սիրովդ տոչորուած, սաղ քչեր անքուն եմ մնում,
Վայրենու պէս տուն չեմ տեսնում, չէր ու քարափ
ինձ բուն չինում.
Ով երկուսիս վայիս դառնայ, Հախ Աստանից եմ
խնդրում,
Մուրազաչոր սրտով մեռնի, ամէն ասա՝՝ ա՜խ Վար-
դիթե՛ր։

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ը

Սիրոդ տեղակ սէր եմ տուել, էլ ինձանում հալ չի մնաց,
Դու վայրենի՝ ես ճլերքի սէր, մեզ ուրախանալ չի
մնաց.
Ջան Ջանի տալուց սաւսափ՝ ոչինչ բան յուսալ չի մնաց,
Վարդիթերի յոյսն է Աստուած, մեկից չունի վախ, Սօ-
սի՛ Ջան։

Էս մուխամբաղը հէնց կրակ քցեց Վարդի-թերի սիրտը, որ թէ էնքան խալխը չէին էլել էլ մօրը չի պատի անկալ անէր, պատի վաղեր ու ընկնէր նրանց դիրկը. համա նրա մօրը հէնց դաղ դառաւ էս խաղը, որ քիչ մնաց լաց ըլնի։

— Տեսէ՛ք, ասեց հեսի կնանոնցը. ի՞նչքան անամօթ են, որ իմ աղջկայ բերանից էլ են խաղ չինել. բաս դրանք ինձ վա՞յ տան, թէ ես դրանց աղջիկ տամ. չուրը կըքցեմ, մեր ալրի չուա-լին թայ կշինեմ ու դրան չեմ տալ։ Ես հօ միտքս փոխել էի խեղճ դալ դրան, համա ըս-տուց յետոյ թէ տանի, պարծենայ։

Խեղճ Վարդիթերը գլուխը քաշ ա քցել հէ-
րը նոր մեռած մարդի նման, լսում ա էդ կծու
կծու խօսքերն ու մօր քամակիցը գնալով, աչքե-
րիցը գլորը գլորը (որոն որոն) վէր ածում։

Գարեգինը, որ բանը չուտ կըհասկանայ, մի
քիչ հեռու հեռու նան էկաւ կնանոնցկին ու աչ-
քի պոչովը մտիկ տուաց, տեսաւ, որ Վարդիթե-
րի մօր աչքերը դառել ա կատաղած գիլի աչ-
քեր.—մեր տղէ՛ք, ասեց, քշէ՛ք մի քիչ հեռա-
նանք, թէ չէ բանն ուրիշ թաւուր ա. էն խեղճ
երեխէն մեռաւ լալով. երևում ա, որ մէրը
ժանդը վէր ա ածում։

— Տօ՛, յառաջ քշելով ասում ա Վարդա-
նը Սօսին. թէ Աստուած ո՛չ անի, բերնիցս դուս
գայ քամին տանի, էլաւ որ տուին ոչ, ի՞նչ պաի
անես. ընչի՞ համար ես քեզ կրակ քցում, անդալ
գլուխդ դալմաղալի տակ դնում։ Էքուց օրը կը-
գայ, Աստծու բարին էլ հետը, ում համար որ
ճակատիդ գրուած ա, էն քեզ ղամաթ կըլնի։

— Քեզ բան չկայ, էն դհիցն ասեց Գարե-
գինը, ամէն մարդ իր տեղն իր համար ծանր
կենայ. էս թաւուր բաներիցը ձեր խեչքը դուս
չի գալ. ես գիտեմ։

— Աստուած տայ, Աստուած տայ, չուզողի
աչքը տրաքի, ձէն տուին մէկկէլները, ինչ որ Գա-
րեգնի սրտումը կայ, Աստուած ինքը կատարի։

Մեր տղէքը չահել աղչկեքանց վրայ գրից
անելով, ձի խաղալով, հասան Փարպի, Սուրբ

Գրիգորի բակումը վէր էկան, ձիանը քաշեցին
կշտի բաղչէն ու իրանք մնան ժամը։

— Ըխտաւորներն արտասունքն աչքերին
վանքի չորս կողմովը պտիտ են գալիս ոտաբոբիկ.
կատաղած չան կծած մարդիկն էլ գլխները կեմ
փաթաթած՝ օխտը հետ պտտուում են վանքի
գլխովն անխօս, վանքի դրանը կեմը վէր քցում
ու մտնում ժամ գերեզմանի առաջին երեսները
գետինը քսում; արտասունք թափում ու մեր
Սուրբ Գրիգոր պապի ձեռն առ Աստուած բռնե-
լովը՝ էն սհաթը փրկուում իրանց փիս ցաւիցը։
Ընչունքի, ղորթ ա, տարուան ամէն վախտն էլ
պատահում ա չների կատաղութիւնը, համա ա-
մէնից աւելի էն չաբաթին ա ընկնում, որ ամէնի
աչքի առաջին Սուրբ Գրիգորի զօրութիւնն երե-
ւայ։

Հէնց մարդ ընկում ա, որ երկու չաբաթուան
ճամիփուց, գլուխը կեմ փաթաթած՝ գալիս ա
լուռ ու մունջ *, մատաղն էլ հետը բերում ու
փրկութիւն գտնում։ Շատ մարդիկ էլ գոմէշ,
եզը, ձի, կով յառաջ սրած՝ գլուխը կեմ փա-
թաթած՝ բերում են, վանքի գլխովը պտիտ տա-
լի ու յետ տանում սաղացած։ Հիմի էսօր
հարիւր կեմ աւելի կընկնի ածած Սուրբ Գրիգորի
դրան առաջին։

* Լուռ գնալու պատճառը ո՛չ ոք հաւաստի չէ իմանում, այլ հա-
ւանական է, թէ լուռ են բերում, որ մարդու հետ չխօսի և նրան էլ
չվերաձենայ ու նա ևս չվնասուի. իսկ կեմն նորա համար, որ ամէնքն էլ
իմանան՝ թէ կատաղած է։

Մեր տղէքն ուխտները որ արին պրծան, գնացին բաղչի մէջին նստեցին. ձուկը կալնող էին ղրկել յառաջուց ձորը, նա էլ բերուց էն սհաթը կարմրախէտները կանանչ խոտի վրայ կիտեց։ Կրակը վառեցին, ձկները վրէն չարեցին ու գինու գաւը կողքներին դրած՝ ընչանք իրիկուայ հոգի ընկնիլը կերան, խմեցին, հէնց քէֆի մէջի էին, որ խանը չէր ունենալ. ո՞ր յիքումն ասես Փարպի, որ էս օր ուրախութիւն չի ընծուի. ո՞ր թմբերի ու ծառերի տակին ասես, որ Հայի աղջիկ չընի։

Իրիկնապահ որ թեքուեց, վեր կացան էս քէֆիցը, գնացին Թարգմանչի գերեզմանը, որ դարիդուսի քարափի գլխին էր. ուխտ արին, ծառերի տակին նստեցին ու աղջկերանց մտիկ տալով՝ նրանց վրայ խօսքեր քցեցին։

Վարդիթերն իր մօր հրամանովը հարսների հետ էկաւ համբուրելու։

Սօսը որ տեսաւ, մին էլ նրանից յառաջ ընկած՝ գնաց կնանոնց արանքը ճղեց ու Թարգմանիչը համբուրեց. յետ գառնալուս կամաց Վարդիթերի փէշերքը տրորեց։ Էնքան կնիկ ու աղջիկ էին հաւաքուած, ոչով չիմացաւ, թէ մէջ տեղն ի՞նչ անց կացաւ. մէնակ երկու սիրտ՝ չանով իրարից չոկ, սրտով միասին բնակուած, հասկացան իրար ու ուխտները հաստատեցին անխօս, որ իրար հետ մեռնին։

Իրիկուան բարակ քամին մի հովութիւն քցեց աշխարհքի մէջը. ըխտաւորները, որն ուրիշ հեռու գեղից էին, վաղուց էին գնացել. մնացողներն էլ հաւաքեցին իրանց պաշարների գարատակ գաստախուններն ու ճամիու ընկան կոտր ընկած ղօնչունի պէս, որը գպա Աշտարակ, որը գպա Կարբի ու Մողնի.

ԺԵ.

Երքսի օրը երկուշաբթի առաւօտենց խոտհնձի պատ ա. աշխատաւոր Հեթոմ հալուորը տեղիցը վերչ ա կացել, երեսը առուումը լուացել, կանոնել ու կնգայ վրայ թոնթորում։

— Էս ո՞ւր են մեր մանգաղները, խարտը. մենք էլ տուն ենք էլի՛. ձեր տունն Աստուած չինի, շատ մարդ, որ քոմակ (օգնական) էլ չունի, մենակ մեկ հոգի ա, հէնց տուն ա պահում, որ պօպօքի մէջի պէս. իրեք չորս յիքի էլ որ ունենայ, հէնց կըբէջարի (մշակել), որ մարդի քէֆ կըգայ նրա յիքանոնց մատներին մտիկ տալով։ Աստուա՛ծ են, մեր Հարևան Մամբրէն ագահ մարդ ա, հինգ յիքի ունի. ինքն ա իր չոր գլուխը, մի նօքար էլ չի բռնում; գեղի առաջին հարբէն (հարուստն) ա. ես իմ Աստուածը հալալ ընի նրան իրա ճակատի քրտինքը. երկու օր ա, որ խոտ հնձուոր ունի, նրանք հնձում են, ինքն էլ աղլուխը գլուխը կապած՝ էն արևի տակին նը-

բանց քամակիցը բարդ բարդ ա քցում, որ չորանայ ու խորոմուի. «խօսքն էշ նիլնիլը չի, իչիցը վէր գալն ա». խօսքը վեց տղայ տէր ըլնիլը չի, խօսքը Մամբրէի պէս մուլք բէչարիլն (մշակել) ա։ Աստւմ են, թէ Սուրմակը կրճան մարդ ա, միս չի ուտում։ Թէ որ միս եմ ուտում, ասում ա, աստւծներիս տակին ա մնում, հիւանդանում եմ. ես իմ Աստուածը՝ շատ լաւը նա ա անում։ Աստուած դրուստ նրա սրտովն էլ իրան տուել ա. վատք Աստծու, տղէքն ունի, հիմի նրա յիքանոնց խոտերը հընձոտած պրծած կընին, մի ծեղ չի մնացած ընել. գարունք կըբացուի՝ նրան ու իրա տղէքանցն էլ դնջում դադար չի ընիլ, մրջմի քարվանի պէս հա կրում են միալար (անդադար) ընչանք իրիկուն. հիմի նրա տարեկան ցախը բերած կընի, ի հարկէ իրանց յիքանոնցիցը մի չոփ չի ընիլ որ մարդ աչքը կոխի. համա որտեղից որ ա, մարդի գուռ ու տունը լիքն ա. կերածն էլ, որ հարցընես, մի քիչ չոր ցամաք հաց ա գարի խառնած. թէ Աստուած ոչ անի, թանգութիւն տաբի ընի հօ՛, էլ ցորնի անում նրա տանը չես լսիլ։ Պտի ասած, որ մարդ իրա երեխանցը պտի ըսէնց պահի, որ խելքները գլխները գան. նրա երեխէքը, որ Թունգիրն ածես էրես, չորահոտ չի գալ վրներիցը։ Մենք գժի նման աշխատում ենք, չորերիս ու փորերիս անում։ Նրա տղէքանց գլխին, քանի խելքներին հասել են, մի գտակ ա էլել. համա իմ տղէքը տարին մինը փոխում են,

էլ չեն չնորհակալ. որ՝ ինց որ ուտիլ-հագնիլ են ուզում, ընէնց էլ աչխատեն, ո՞վ գարդ կանի. համա բանն էս ա, որ ուտելու ղօչաղ (կտրիչ) են, անելու քօռ. օրն էկել ա ճաշ ա գառնել դեռ քնած են, օխտը հետ անկանչներում ղուռնայ ես ածում, նոր են ղարթնում։ Հալալ ա հացը Սհակի տղէքանցը. իրէք աղկէր են, լաւ ուտում են, լաւ խմում են, աչխարհքիս վայելչութիւններն անում են, իրանց բանն էլ չեն թողնում, որ գեանին մնայ։ Նոր, որ դուս էլայ երեսս լուանալու, Սօսը՝ որ ամէն օր մեր աղկայ համար նոր նոր փորձանքների ա հանդիպում, մի սուր մանգաղ մէջքը խրած, որ լէնութիւնը մի թիլ կընէր, մի հնձի չալմար կռնատակին՝ գընում էր յիքին. ես էն թաւսւբ տղի չանին ղուրբան, ամէն բան էլ գիտի. խաղ կանչիլ, քէֆ անիլ, մարդամէջ մտնիլ, հընկերի սիրտը չահիլ, խնդացնիլ, ղօչաղութիւն անիլ, կոխ պրծնիլ (ըմբշամարտիկ), իր թայերին գեանովը տալ, կռուիլ էլ չետ բարկչիլ. ի՞նչ ասես, որ չանի, իրա բան ու գործին արի կենալ։ Ես իմ աղջիկը նրան պըտի տամ, որ հարիր տարի կենաս, որ ճգնիս. էրէկ ձի ա խաղացել, խաղ կանչել աղկանդ անումը տուել գանգատ ես անում։ Հողը գիժ կատարիդ, քէֆի օր էր, ընէնց կանէր, մի տես էսօր ի՞նչ ա անում է՛. նոր անց կացաւ, գնա՛ մի նրանց յիքին տե՛ս, հիմի չորերը հանած՝ չապկանց՝ խոտէ գտակը գլխին՝ ուէթ թումբը հնձել

կըլնի. ես հօ տեսել չեմ, ասում են, թէ ընէնց իստակ ա հնձում, որ եղը վէր ածես, վեր կըհանուի, կորեկ շաղ տաս, կըկիսուի մին մին։ Ինձ վեց տղայ ունիմ, թէ հնձում էլ են՝ կէսը շաղ են տալի ու վրէն թողնում, ես իմ ապէքանցողը ի՞նչ ուրախանամ։ տղամարդը էս վախտ քնած կըլնի՞, ես հիմի Մամբրէին էրնէկ չի տա՞մ, Աստըծուն էլ դժար չի թուի։ Որ մէնակ ընէնի, հիմի ես բանից պրծնել էի. ատով, դորթով, դա-
166 քով, տօլապով (խարդաւանիօք) եօլայ կըտանէի։ Ա՛յ կնիկ, ո՞ւր ա մեր մանդաղները, խարտը, խոտհընձի չալմաները, բե՛ր ես հագնեմ; էրթամ էս հալիւոր տեղովս հնձեմ; թո՛ղ դրանք երկար ու բարակ մեկնուին։

— Փա քանի՞ քչերհանայ բարի լսի դէմ բե-
րանդ բաց արած՝ ժանդդ վէր ածես, ա՛յ տնա-
շէնի մարդ, ի՞նչ էլաւ քեզ, դեռ լիսը նոր ա բացուել, դեռ խոտհնձի պատն էսօր ենք մտել. հլա ընչանք դրուստ հունձը մի չաբաթ էլ ու-
նինք, ի՞նչ էլաւ, հօ չորացաւ ո՛չ։

— Սուս կա՛ց, բարկանալով ասեց Հեթո-
մը, դու էլ ըսէնց ես ասում, որ ես բերանս բա-
նամ ոչ. հո՛ղը հօրդ գլխին, յիքանիքն էլ առաջ-
ուանն են, ծիրանիքը առաջ հիմիկուանից չատ էին, դու մէնակ համ թաւ էիր տալիս, համ թօփ անում, համ յուսում, տանում չնղնեղումը վառում, համ էլ չիրը հաւաքում, տուն բերում. հիմի իրեք հարան ունես՝ մի աղջիկ էլ հետը, ես

տարի մեր ծիրանները ծառերի տակին հոտե-
ցին, խաշիլ դառան, կէսուէ կէս էլաւ, եաղին տարաւ (յափշտակուեց), կիտող չէլաւ. դու մի կնիկ էիր, համ տանն էիր մտիկ անում; համ յիքա-
նոնցը. տե՛ս քու հարսներին, թէ մեին յիքի ես ղրկում; մինն ա խառվում, թէ ես տանը մնացի. թէ մէկելին տանն ես թողում; մինն ա նօթերը կիտում; թէ ես յիքին գնացի. ո՞ւր ա մեր հա-
լալ քրտինք թափելով, աշխատանքով ուտելու
168 օրը։ Հիմի հլա մի քիչ վրէդ հալ (ոյժ) կայ, է՛լի պատիւ ունիս, քիչ ու միչ խօսքիդ անկալ են անում; հազար խօսքիդ մինը պարանի են դը-
նում. դու կա՛ց պառաւիս, տե՛ս ո՛նց են գլխիդ տալի աչքդ հանում; բերնիդ էլ մտիկ չի անում։ Տեսնում ե՞ս, որ ես երկու խօսում եմ, ասում են հալիւորել ես, խելքդ յետ ա տուել. էլի քու կռներումդ զօրութիւն կայ՝ մի քիչ ժմտում ես. տղէքդ հօ մարդատեղ չեն քցում քեզ, դու էլի նրանց թասիքն ես քաշում։ Իմ մէրը հարիր տա-
րեկան պառաւ էր, ես նրա առաջին չէի կարող բերանս ժաժ տալ. հարսների սասը հօ՛ դեռ նրա անկալը չէր ընկել. փառք Աստըծու, մինն էլ դու էիր, տեսա՞ր. հիմի տեսնո՛ւմ ես, մի բան ասելուս՝ հարսդ քեզնից բարձր ա գոռում, որ դու տակիդ չորանում ես, թէ հիմի կըտայ աչքս կը հանի. դու թո՛ղ գլխիդ նիշնեն. մարդ էլ որ խօսայ, բերնին արի՛։

— Ի՞նչ անենք, ա՛յ մարդ, գլուխը տմբա-
ցնելով ասեց պառաւը, ուղղեարն (ժառանգակ)
ա քռայել մեր քօռ բաղդիցն ա. մեր վախտը
աղջիկը քսան տարեկան կըլնէր, տղէն քսանու-
հինգ, դեռ աչխարհքիցս խաբար չէին ունենալ.
քսան տարեկան աղջիկը քսանուհինգ տարեկան
էլօղլի (oswr) տղի հետ վեր ու նիստ էին անում,
բանից խաբար չէին ըլնում: Իմ միտս ա, որ ես
հասած կատարած աղջիկ էի, մեր յիքրու հարևա-
նի հետ, որ քու վահան տղիցը մենծ էր, մի
տեղ նստում էինք, խաղ անում, յիքին պահում,
շատ անգամ էլ յիքրու ափումն իրար հետ թեք
էինք ընկնում՝ ճիտ արած քնում, ոնց որ երկու
տարեկան երեխէք՝ քիր ու աղպօր պէս. տես-
նո՞ւմ ես հիմի ըսէնց բան. դեռ քու աղջիկն ի՞նչ
տեղն ա հասել, որ տղայ ա սիրել, նրա սիրելու
դարդիցը միսը հալուել, ոսկոռն ա ճնացել վրէն.
հինգ տարեկան աղջկայ որ հարցնում ես, թէ
մեծանաս, ի՞նչ պտի անես, ասում ա, մարդ
պտի առնեմ, երեխայ բերեմ: Մեր վախտին
հարսանիք էլ էինք ըլնում; բան չէինք հասկա-
նում, սաքի ի՞նչ մեղադրեմ նրանց. մենք հլա
ողորմութիւն ենք, որ էս վախտին ենք ռասա է-
կել. վա՛յ մեղնից յետի եկողներին, չուրն էկել
ա նրանց տարել, նրանք աւելի բէթար պտի ըլ-
նին. վազի մասալէն չըլնի. «ձուկը գլխից ա հո-
տել». մենծից ընչանք պստիկ ըսէնց ենք էլի՛, թէ

հոգևորական, թէ աչխարհական. մինը մեկելիցը
օրինակ ա վեր ունում էլի:

Մարդ ու կնիկ ըսէնց իրար սրտից չուր խը-
մելով խօսացին ու մարդը վեր կացաւ, որ գնայ
յիքին, կնկանն էլ ասեց, որ տղէքանցը վեր կացը-
նի թէզ (շուտ) ղրկի:

Չէնց որ մարդը գնաց, կնիկը տղէքանցը վեր
կացրուց ու ասեց, որ հերներդ գնաց յիքին,
մանգաղները տարաւ, ձեղ էլ կանչում էր:

— Դէ՛ մի մին թիքայ հաց տո՛ւր բերանը-
ներս դնենք, ասին տղէքը, սուաց հօ բերաննե-
րս չպտի՞ բռնենք յիքրումը:

Մէրը մի մին լոշ բերուց, տուուց տղէքանցը,
թէ ձեռներիդ դուրսում անելով գնացէ՛ք, ես էլ
կիրակուր կեփեմ ու կըղրկեմ: Տղէքանցը ճամ-
փու քցեց, ինքն էլ վեր կացաւ, տեղերը հարս-
ներին կիտել տուուց, կտրիցը վեր էկաւ (ընչուհի
կտեռն հին ֆնում, ինչպես նուռնի, հնպես հղ բոյոր գիւ-
ղացիք), կովերը կթոտեց ու հարսների մին ա-
սեց, օճաղ անի, պղինձը չուր լցնի, ոսպը դնի
վրէն. մին էլ ասեց, որ ալթարը թխի, մեկելին
էլ մի ուրիշ բան դրուց, ինքն էլ չահրէն դրուց
առաջը, մանիչն առաւ, ճլվռտացնելով մանեց,
Թոռի օրօրոցն էլ դրուց կուշտը. ոտով ժաժ տա-
լով օրօրում էր ու էս նանիկն էր կանչում ծա-
նըր ու բարակ.

Նանի՛կ, նանի՛կ, իմ Գրիգո՛ր, դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ.
Քեզ համար դղուի սար ու ձոր, դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ.
Պառաւ գլուխս ղուրբան կըտամ, դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ.
Անուշ բալին ես քու մօր, դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ։*

Նանիկ արա՛ մեծանաս,
Հալիւորիս ծերանաս.
Երբ որ խելքիդ տէր ըլնիս,
Պառաւ տատիդ չմոռանաս։

Տատը գլխովդ պտիտ գայ,
Ինչ խաթայ (փորձանք) ունիս տատին գայ.
Երեսիս մի բուռը հող քցես,
Իմ տէ՛ր ու տիրական բալա՛յ։

Շնորհքով, զօռով տղայ դա՛ռ,
Սաղ աշխարհքը ձեռդ ա՛ռ.
Էս մեր դուշման աղգերին,
Խեղճացրո՛ւ հոգին ա՛ռ։

Ձինդ լսողը սասանի,
Ծակը մանի, տակ անի.
Ասի հրէս Գրիգորը
Կրտայ լինճ ու կապանի։

Գերի ա մեր Հայ աղգը,
Ղօչաղների թայ աղգը.
Էս անիրաւ Թուրքի ձեռին,
Փչացաւ մեր կէս աղգը։

* Ամէն տողի վերջին կրկնել նանիկ։

Իմ Գրիգորը մեծանայ,
Դուշմանի աչքը հանայ,
Հայի աղգին օգնելով,
Փառք ու պատուի տիրանայ։

Վարդվթերի մերը դարդերն իրար էկած նանիկ կանչելով, քնացրուց երեխին ու յահրի մանիչը պտտեց։ Հէնց որ կիրակուրը հասաւ, վեր կացաւ լցրուց փարխաջը, մի դաստայ բոխ, մի երկու էլ սոխ, մի քիչ էլ սիբեղի աղը դրած ղօխ ղրկեց յիքին մարդին ու աղէքանցը. ինքն էլ մի երկու թիքայ ծղծամ տալով հաց կէ-բաւ, հարսներին էլ կիրակրեց, էլ յետ նստեց յահրի տակը։

Ժ.

Մի կիրակի առաւօտեան Գարեգինը ժամից դուս էկաւ, գնաց Սօսենց տունը, որ իրար հետ գնան մանգալու.—ողորմի՛ Աստուած, քեռակի՛ն, ասեց Սօսի մօրը. էս ո՞ւր ա Սօսը քչերհանայ, դու էդ ի՞նչ բանի ես։

— Տօ՛, ասեց պառաւ, Սօսը էս քչեր ձեր տանը չի՞ էլել, ի՞նչ ես ասում, բա քչերս տուն չի էկել, մենք հէնց գիտէինք, թէ քու կշտին ա, էս ի՞նչ բան ա։

— Լա՛ւ, լաւ, ասեց Գալուստինը, էս քչեր ես էլ տանը չեմ էլել. հիմի ես կէրթամ կի-

մանամ, դու միամիտ կա՛ց, կըլնի որ մեր տանն ըլի. ասեց ու ջանը կրակ ընկած դուս էլաւ։

Դրան առաջին չդմածի պէս կաննել ա ու վիազ անում.—Տէր Աստուա՛ծ, ասում ա, ես ո՞ր քարափովը վէր ընկնիմ, էլի էդ տղի միաքը բան ա ընկել. հիմի ո՞ւր գնամ, ո՞րտեղ գանեմ նըրան. ես հէնց ասում էի, որ սա մին օր իր գըլուխը մի փորձանք կըբերի. հէնց հրէս կատարուեց, սաղ քշերը տուն չի էկել, գլուխը վրէն ըլնէր, նա ոչ մի տեղ կենալ չէր. ես ի՞նչ փորձանք էր, Աստուածա։

Ձեռը ծոցը դրած՝ գնաց Գարեգինը քուչէն դպա նէրքև. տեսնողին հարցնում էր, համա ոչովից խաբար չիմացաւ. գնաց Արշաւիրի կուշտը, հարցրուց նրանից, թէ Սօսին տեսել չի՞ս։

— Ես էրէկ տեսայ Սօսին, ասեց Արշաւիրը, իրանց յիքումը նստած մի պուճուր գիրք ձեռին պօպօքու տակին կարդում էր. հէնց որ ինձ տեսաւ, էլ կաննեց ոչ, փախաւ դպա ձորաքաշը, էլ չեմ իմանում ի՞նչ էլաւ։

Գարեգինը որ էս լսեց, էլ խօսացրուց ոչ, յետ դառաւ ու դպա ձորաքաշը, իրան քցեց էն քարափի կուշտը, որ տաշտի պէս տափակ ա ու միջին նստելու տեղ կայ։

Շատ անգամ խօսք բացուելուս Սօսը Գարեգինին ասել էր, թէ էս քարափին իմ տունն ա, ինձ որ մեն գաք՝ գանէք ա՛չ, էկէ՛ք ըստեղ. հիմի հէնց որ միտն ընկաւ, իրան քցեց էս քարի

կուշտը. համա բանն էս ա, որ ամէն մարդի ձեռից գալ չի էդ քարը նիհնին։ Գարեգինը, ղորթ ա, շատ բան գիտի, օխտը տէրտէրի, վարդապետի խելք ունի, համա թո՛ղ մաշակարը մաչկից աւելի չի գատի. ընկնելի ծէրով քարափը չանգռելով վիրև գնալը Սօսին էր տուած։

Խեղճ Գարեգինը շատ աշխատեց, որ նիհնի, տեսաւ իրա խելքի բանը չի. էս ճըղը—վըղը չի (գրչի ձայնը), որ երկու խզմզի ու փող առնի, խալխին խաւիի. չարէն կարեց՝ ձէն տուեց։

Սօսը, որ Գարեգնի ձէնն առաւ, տեղիցը վեր թռաւ ու ներքև մաիկ տալով ասեց.

— Ի՞նչ ա, էլ էկաը, քեզ դուրբա՛ն, ընչանք ե՞րբ պտի թխսի պէս ադուն-ադուն անես գլխիս, մեռնիլ հօ չէ՞ի, հիմի կըգայի։

— Վէր արի՛, վէր արի, ասեց, սևերես չըլնիս դու, ինչ խեղճ ես, ինձանում էլ հալ թողեցի՛ր. ես ինչ որ տեսնում եմ, դու օրէց օր գրի բանատեղ ես դառնում, քշերն ընչանք լիս սաըերումը, ձորերումը արչերի հետ ընկերու թիւն անելով, աւարայ էլած մեն ես գալի. տնաչէ՛ն, մերդ մեռել ա, քշերս ընչանք լիսացրել ա. հիմի էլ ընչանք նրան կըհանիս, հոգին դուս կըգայ. ի՞նչ ես ինձ էլ, էն խեղճին էլ էրում, փոթո՛թում։

Սօսը հէնց որ էս լսեց, աչքերի արտասուքը սրբեց ու ուզենալով վեր գալ, ասեց.

— Ա՜խ, ի՞նչ կըլինէը մի կէս սհաթ յետի վրայ հասնէիր, մեռայ կիսաջան ըլնելով. հիմի հէնց գիրքը առաջս դրած կարդում էի գղելով, մին էլ, ինչպէս թէ մի մարդ մի կարմիր խնծոր բերուց անկաջքռնուկ քցեց. մի քանի տղայ էինք մի տեղ հաւաքուած, մեզնից մինը վազեց, որ վեր ունի, հէնց ձգեցի անկաջը, որ քոքահան էլաւ. քիչ էր մնում՝ դմակն էլ հետը պոկ գայ. նա որ վեր քցեց, ես վեր կալայ ու վազեցի դպա էն մարդը. մի երկու տղայ մօտ էին գալի, որ խլեն էլ յետ, վախլուրթիւնից մկան նման յետ էին փախչում; ընդուր որ ձեռիս զօրութիւնը տեսել էին. հէնց էն ա, քիչ էր մնացել՝ հասնէի մարդին, որ խնձորն ինձ մնայ, ձէնդ առայ ու վեր թռայ. ա՜խ, Աստուած չէն, ընչանք ե՞րբ մուրազս պտի կիսաս մնայ։

— Լա՛ւ, լա՛ւ, վեր մի՛ գալ, ասեց Գարեգինը, կռնիցս բռնի՛, քաշի՛ վերև, տեսնեմ, թէ ըտեղ ի՞նչ կայ, որ էսքան գալիս ես։

Խեղճ Սօսը լաւ չէր ուղում; որ իր առաջ (արտակից) աղլէրն իմանայ էն, ինչ որ ամենից էլ թագուն էր, Աստուածանից սաւսահի, հասա վախեցաւ, որ չըլնի թէ Գարեգինն ասի, թէ էդ ընչի՞ցն ա, որ «գլխիս տալու վեքիլն ես, աչքս դուս գալու վեքիլը չես». ամէն բանի միջին խառն ընկնի՞ ու ինձանից թագուն բան ունենաս. ընդուր համար էն եքայ (ուժ) տղին քաշեց վի-

րև, ոնց որ մի ծառի ճուտ տեղիցը վեր ունիս, կամ մի բմբուլ, որ փչես՝ թռչի երկինքը։

Գարեգինը հէնց նի էլաւ քարի գլուխը, աչքերը խփեց ու էլ չի կարաց դիմանալ. վաթթուեց Սօսի ճտովը, ոնց որ զղլապատառը (թաղեղը) ծառին. ա՜խ ասեց, փառք Աստծու, որ իմ աչքումն լիս կայ, որ մարդին ճանանչել եմ; նոր եմ հոգուս պէս սիրել. էս ի՞նչ արտասունք ա, որ թափել ես էս փուխ քարի վրայ. էս ի՞նչ մատների տեղեր ա, որ վոս ա ընկել. դու մի՞թէ ամէն օր բանթող էլած վախտդ գալիս ես ըստեղ, ըմբըրիդ կէսը փչացնում; հոգիդ լուսաւորում; հոգուդ իւղաբերի մմերը վառում; հոգիդ լուսաւորում. քու հոգուն մեռնիմ. տո՛ւր էդ գիրքը, տեսնեմ ի՞նչ աւ ցետոյ բաց արուց՝ տեսաւ «եփրեմ խորի»։ Մտիկ տուուց քարի չորս կողմը, մի գիհը խոր էր երի պէս։ ցառաջ գնաց, տեսաւ չոր խոտը փռած, տեղ չինած, մի քար էլ գլխատակը դրած.—է՞ս ա էլել, ասեց. էս քշեր քու եօրղան. դոշակդ, սրա միջի՞ն ես անց կացրել. յետոյ մտիկ տուուց Սօսին, տեսաւ որ ծնկները հողոտ են։—Հիմի իմացայ, ասեց, որ քու ձեռներն էլ, ծնկներն էլ ծունր դնելով ես կոչտացնում ու պոկում։ Մտիկ տուուց խոտի տակը, տեսաւ մի նարեկ, մի ձեռագիր խզմզած Աւետարան, մին էլ իրա տուած Սաղմոսը։

— Դա ո՞րտեղից ես ճարել էս անգին գանձերն, ասեց. ես քեզ մէնակ էս Սաղմոսն եմ

տուել, որ կարդաս, էսքանը ո՞վ ա քեզ հաս-
ցրել, ա՛յ քու սաեղծօղին զուրբան. փառք քեզ,
ամենագէտ Աստուա՛ծ, որ քու ողորմութիւնիդ
դռներն ամէն մարդի համար էլ ա բաց. քու
խորհուրդդ անքննելի ա. ընչանք հիմի մեր աշ-
խարհական մարդիկը հէնց իմանում էին, թէ
դրքի վրայ աղօթք անելը տէտէրներին ու վար-
դապետներին ա տուած, համա իրանցը հէնց էն
ա, որ առաւօտը տեղիցը վեր կենալուս քու ա-
նունը տան, երեսներին խաչ հանեն, թէ բան
չունենան հօ, ժամ էլ երթան, թէ ունենան՝ իրանց
բանին երթան. հիմի իմանում եմ, որ աշխար-
հական ռամիկների մէջն էլ ա մտել դրքով ա-
ղօթք անելը:

Ցետոյ յետ դառաւ Սօսին ու ասեց. արի՛
գնանք, մերդ խեղճ ա. աղօթքն անես, մօրդ
սիրտը ցաւացնես, էդ էլ Աստծուն ընդունելի չի.
քու ծնողիդ պատի հէնց մտիկ տաս, որ մի թոզի
չափ սրտին դարդ չի թողաս. վեր կա՛ դրքերդ,
գնանք:

— Չէ՛, ասեց Սօսը, դրքերը թո՛ղ մնան,
ոչով չի տանիլ, սրանք Աստծու պահած դառ-
ներն են, ի՞նչ դէլ կարայ մօտ գալ, ամէն օր
ըստեղ դրած են ընդում:

Սօսը բռնեց Գարեգնի կռնիցն ու վեր բե-
րուց ներքև, ինքն էլ հետը վեր եկաւ, գնաց
դեսի ղրաղը, երեսը լուաց, չիբիցը սանդրը
հանեց, ոսկեքաքուլ մազերը սանդրեց, հանեց

կարմիր դանաւուդի դոշլուղը (կրծնոց) երկու մատ
ղառ դիւլաբաթունով կարած՝ կապեց շլինքը,
հանեց եղամանից եղը, որ քամարին կախ տուած
էր, քսեց լափչներին (կօշիկներին), թափ տուուց
չորերը, չինուեց, սարքուեց, հէնց ղարդարուեց
մի աչքը թերդելուվը, որ Գարեգնի բերանը բաց
մնաց. յետոյ կուռը քցեց Գարեգնի շլինքովը ու
վեր կալաւ Ղարաբաղին (երգի եղանակ է):

Ծառ ու քօլ անկաչները բաց արին, որ
լսեն էս հրեշտակի ձէնը. բլբուլները ձորը լիքը՝
ծառերի վրայ՝ առաւօտեան հովի դէմ երգում
էին հաղար ու մէկ եղանակներով. հէնց որ էս
ձէնը լսեցին, ամանչելուցն իրանց ձէնը պահե-
ցին, սուս կացան ու անկաչ էին դնում, որ նրա
եղանակները սարվեն ու իրանց առաչին եղա-
նակը չինեն. գետի խշշոցն ու ձորի ղժժոցը,
հէնց իմանաս, մինը ձէն ը ընէր պահում, դամ
քաշում, մէկէլն էլ թաւթակի պէս ածում, իրար
քցում, որ Սօսն աւելի էչխով ասի. առաւօտեան
բարակ քաղցր քամին էլ որ էլմով (ղուիկ) շուա-
ցնում չէր, հէնց իմանաս, թէ նրա ձէնն ընչի
ուզում սարվիլ, որ ինքն էլ նրա նման կկկլացնի:

Ընչանք հիմի սուս էր, ոչով չէր երևում
յիքանանցումը, հիմի թաղ ու թառակ ձորի բա-
չին կկտուեցին. որոնք որ լսել էին, ասում էին. —
Սօսն ա. որոնք չէ, ասում էին.—ա՛խ, մի սրա
ասող տղին տեսնենք, էլ սրաներումն դարդ չի
մնալ:

Մի հարս, մի աղջիկ էլ էդ քաղցր ձէնը վեց օխտը յիքի դէնը մի յիքում լսել են. վեր կացան ու վազում են տեսնելու սրա կանչողին. հէնց են գալիս, ոնց որ ոչխարը արօտիցը բերում են մէր անելու. հէնց որ դվուկին (փարախ) են հասնում, էլ իրար մտիկ չեն տալիս, առաջ են ընկնում: Բանն էս ա, որ աղջիկը գիտի, թէ էս ո՛վ ա էս թառակը թնդացնողը, ընէնց ա գալի, համա հարսը միամիտ ա, չի իմանում, ոնց որ ոչխարի միջին մի թուանք քցես ու փախչես, միամիտ ոչխարները դպա քեզ կըվազեն:—Ա՜խ, ասում ա հարսը, ես իմ օրումն էս թաւուր քաղցր ձէն չեմ լսած, սա մեր գեղըցի չի պտի ըլնի, չուտ արա՛ հասնինք: Համա աղջիկը նրանից աւելի թայթի ընկնելով, որ տեսնի, մի գհիցը վազում ա, մի գըհիցն ասում:—Էլա աչխատի հասնենք, հիմի բանը կըպարզուի:

Էկան նրանք դպա ձէնն ու ի՞նչ տեսնեն. կնիկ, աղջիկ, հարսներ ձորի գլխին կիատուել են, աղէքն էլ՝ լսողը վազում ա նէրքեւ դպա ձորը:

Մինն էլ ի՞նչ տեսնեն. նոր գնացող աղէքն առել են մէջաեղ Սօսին ու Գալեգնին ու գուս են գալի խրամովը:

Ա.մէնն էլ ծափ տուին, ծիծաղացին ու ասին. մկամ սա ըսէնց չնորհք ունի՞. ամէնքն էլ ուրախացան, համա մընի ոտները գետնիցը կըըռւեց, երբ որ տեսաւ, թէ իր սիրուկանը սազ թառակի ուշ ու միտքը վրէն ա դարձրել. մի

կամաց էս բառերը փախցրուց բերնիցը, չի կարենալով իրան պահել.—Ա՜խ, փառքիդ մեռնիմ, Ասուածած, թէ որ մեռնիմ, գիտեմ, որ ըստուց յետոյ գերեզմանիս օխտը թիլ մանիշակ գուս կըգայ:

Աբի՛, որ նրա անբաղդութիւնից՝ ուրիչի անկայը սուր էր, ամէնքն էլ լսեցին. ինքն էլ երբ որ հասկացաւ, թէ ինքն էլ նրանց պէս մի աղջիկ ա, ղորթ ա, ինքն ա էս ամէն բանի պատճառը, իր խաթեր են էսքան խալխը հաւաքուել, ինքն ա Սօսի խաղ ու տաղը, մէկ խօսքով ինքն ա վարդը, որ էս բլբուլին էչխալամիշ ա արել (ոգեւորել), ինքն ա վարդիթերը, համա ամէն բան իր տեղն ունի, ծպտոնը կարեց, սառեց ու մնաց:

Էլ նոր ո՞րտեղ, բերան բերան ընկաւ, թէ էսքան էլ բաց աղջիկ կըընի՞. խաղը, թամաշէն թողացին, աչքները քցեցին աղջկանը:

Մինը մատն ա կծում, մինն ասում ա, վա՛յ, թուք ու բէզնամ ընիմ ես, էսքան էլ երեսի մեռանը վեր արած, աբուռը մի դիհ դրած աղջիկ կըընի՞. սա էսօր, որ ըսէնց համարձակութիւն ա անում էսքան խալխի միջին, իրա սրտի ուրախութիւնը կէս սհաթ կարած ոչ ծածկել, էքուց որ մենծանայ, էլ դրա օգտին ո՞վ կարայ գալ:

Խեղճ աղջիկը վաղուց էր հասկացել, թէ սէրն իրան շատ ճամփից հանեց, աղջկայ կարգից դուս

(մատեան)

ուրիշների մօտ բայ անել, կարմրեց, աչքերիցն արտասուքը գլգլալով վէր ածեց ու մտաւ հարսի քամակը։ Համա ղուշ էր թռաւ, էլ չես կարող բռնել, էլօղլին սառաֆ կըլի։ Սօսն էլ, որ տեսաւ, թէ իրա սրտի ուրախութիւնը սևացաւ, իրա կոկոմ վարդը բայ էլաւ, ասակուսի տակ ընկաւ, ձէնը կտրեց ու աչքով արուց հարսին, որ առնի հեռանայ։

Էս ամէնը Սօսի ձէնին էին բանգ. հէնց որ տաղ արուց, իրանք էլ քաշուեցին իրանց յիքանիքը, մնացին Սօսն ու Գարեգինը։

— Ա՜խ, ի՞նչ անեմ, ասեց Սօսը. գլուխս ի՞նչ քարով տուի. էն խեղճ աղջկանը հիմի միս ու ոսկոռ կանեն, ճիպոտի տակին կըչորացնեն, սալջարդ կանեն (կրծեծեն). ի՞նչ անենք, էրթանք մօր ոտները ընկնենք, բալքի պրծացնի հօր բարկութիւնիցը, էրթանք հարսին ասենք, տանը խաբար չի տայ։ Համա ի՞նչ. ընչանք նրանց տուն գնալը Աշտարակցիք հիմի կտրների ծէրին չաւարին։

— Չէ՛, ասեց Գարեգինը, արի՛ գնանք Արշաւիրին գտնենք, նա սրա չարէն կըտեսնի. կըլնի որ իրանց էս մօտիկ յիքումն ըլի, էսօր կիրակի ա։

Սօսն ու Գարեգինը վաղէ վաղ գնացին վարդիթերենց յիքին, տեսան որ Արշաւիրն ընտեղ չի. հարսի իշարաթ (նշանացի) անելուցն իմացան, որ տանն ա։

— Զըլնի թէ, ասեց Գարեգինը, տանը բան ասէք, հարսի՛ չան, երեխայ էր, ինքն իրան կորցրուց, չիմացաւ, թէ ո՞րտեղ ա. ես հիմի կերթամ, հէնց կանեմ, որ երեխի խաթրին ոչով չի դիպչի։

Հարսը մի քանի հետ գլխով արեց, սաքի թէ լաւ կըլնի ու յետոյ վարդիթերի բերնովն ասեց.

— Արխէին կացէ՛ք, թէ խալխը չասեն, ինձանից բան չի դուս գալ։

Գարեգինը բռնեց Սօսի կռնիցն ու հրեղէնի նման էն սհաթին հասան գեղը. տեսան, որ Արշաւիրն Ուռուցումը մի քանի տղէքանց հետ նըստած՝ ղրից ա տալիս։

Գարեգինը կանչեց դրան ղրաղ ու ասեց. ես էսօր քեղ մի բան մի պտի ասեմ; համա պտի եօլա տանես։

— Ես ու Սօսը գնացել էինք ձորը. վանանց յիքովը դուս գալուս, ասեցի, որ մի Ղարաբաղի ասա՛. սա էլ՝ հօ գիտես, քարափիցը վէր քցեմ, վէր կընկնի, որ վեր չի կալաս, աշխարհքը ժաժ էկաւ, ձորի ձէնը փորն ընկաւ։ Մէն էլ ի՞նչ տեսնենք. թաղ ու թառակ ղզղնի (ուրուր) պէս գըլխներիս հաւաքուեցին, հարսներ, աղջկէք, տղէք էն սհաթը ձորաբաչը լքցուեցին։ Չեմ գիտում, որտեղից որտեղ՝ քուս հարսն էլ առաջ ձեր երեխին էկաւ ընտեղ։

Վարդիթերը, որ տեսաւ, թէ Սօան ա էս հաղ կանչողը, մի կամանց փառք տուուց Աստըծուն, թէ ի՞նչպէս էլաւ, էլ խաբար չեմ։

— Էս լուն ուղտ չինող խալխն ամէնքը մի կողմից դնամիշ արին, խեղճ երեխին ամանչացրին։ Հիմի գիտեմ, հօրն ու մօրդ անկայը կընկնի էս բանը՝ մընի վրէն հարիր էլ աւելացրած. դու ոնց որ կարաս, պտի անց կացնես. դու գիտես կնանոնց բնութիւնը, որ ըսէնց մի բանի են մանգալի, որ աչխարհքն ապականեն իրանց ստախօսութիւններովը։

— Արխէին կացէ՛ք, ասեց Աբշաւիրը, հէնց կանեմ, որ հէրս թէկուզ աչքով է՛լ տեսած ըննի, իմ խօսքին աւատայ, իրա աչքին՝ ո՛չ։

— Դէ մնաս բարին, չնորհակալ ենք, ասացին տղէքն ու յետ դառան դպա Սօսի մօր կուշտը, նրա սիրտը միամոտացնելու համար։

ԺԷ.

Վարդիւտր չաբաթ օրն ա. Գարեգինն ու Սօսը ճաշուայ ժէրժան չոքին երեսների քրտինքը սրբելով, Աւագագեօլի միջին լեզացած՝ անքալով, քրանքուտը չղջղընոտած՝ դուս են գալի ձորի դարիդուսովը։

— Շուտ գնանք, չաբարկենի խնձոր չատ քաղենք, էքուց մեզ չատ պէտքը կըգայ, ասեց Գարեգինը։

— Ես հիմի կէրթամ, կը քաղեմ խնձորը, խուրջինի մէջը կլցնեմ, մատաղն էլ վեր կունեմ ու կըգնամ Սուրբ Կարապետ, դու էլ առաւօտենց չուտով հասաքի՛ մեր հընկերներին ու արի՛...

— Ըհը՛, Թուանքը տրաքեց. Երեւանայ ըխտաւորներն էկան, կընի, որ սրանց միջին բարեկամ տղէք էլ ըննին, կանենք ըստեղ, տուն տանենք, վեր բերենք՝ մի քիչ դնչանան, իրար հետ գնանք։ Օ՛հ, մին էլ քցեցին Թուանքը... երկու, իրեք, չորս, հինգ և այլն. չատուոր են ա՛յ. տե՛ս ի՞նչպէս ձի խաղալով են գալի, է՛ն քարքարոտ ճամփուսին է՛լ ձիուն մտիկ չեն անում, դրանց չանչին մեռնի՛մ, հէնց քէֆի են անում, որ քէֆի աչքն են հանում, լաւ ուտում, խմում, թամուզ հաքնում։

— Ի՛հ, բաս ըտէնց պտի՛ ըննի, մեզ պէս հօ չպտի, որ Շահի կուտորի պէս ընչանք իրիկուն տանչուում ենք, ուղտի պոչի պէս ոչ երկարում, ո՛չ կարճանում։ Ես քու կարդալուդ մեռնիմ, քեզ ալմաստի պէս մուրթ տեղն էլ ա պսպղացնում։ դու էն չհարցոնցիցն (խաղաքացիներից) էլ լաւ ես, չուրն էկել ա մեզ տարել, ընչանք իրիկուն արևի տակին, անձրևի միջին, ձների վրէն, քշերը քուն չունինք, ցերեկը ղարար չունինք։

Ընչանք Սօսի խօսքը վերջացնիլը երևանցիք դրանց քամակիցը հասան ձիով։

— Օ՛հ, մեր Հրաչեան ա էլել։

— Ողորմի Աստուած, ասեց Հրաչեան։

— Ա՛յ, ողորմի ծնողացդ, ի՞նչպէս էք, լա՞ւ էք. քէֆներդ, հալներդ։

— Փառք Աստծու, ամէնքս էլ լաւ ենք. Սուրբ Կարապետ չէ՞ք գալի, էկէ՛ք գնանք իրար հետ։

— Շատ լաւ կըլնի, ասեց Գարեգինը, հա- մեցէ՛ք վեր էկէ՛ք, դնչացէ՛ք, յետոյ հոգին ընկնի՝ դուք կերթաք, մենք էլ իրիկունս ա՝ կը գանք, առաւօտն ա՝ կը գանք դուք երևանայ ընչանք ըստեղ նրա լիս գերեզմանի համար էկել էք, մենք քնթներիս տակին ա, ի՞նչ պտի ասենք, որ չըգանք. համեցէ՛ք, քչէ՛ք ձիանը դպա գեղը։

— Շնորհակալ ենք վեր գալուց, ասեց Հրա- չեան, դուք համեցէ՛ք ձիու թարքը (գաւակը) նիլէ՛ք, գնանք, թէ աղէն (աւուրը) կը սիրէք։

Գարեգինը չթողաց դրանց ոչ մինին անց կենալ քաշեց Հրաչէի ձիու գեամը (սանձ), առաւ գնաց դպա իրանց տունը։

Դուռն առաջին վեր էկան, ձիանը բակը քա- շեցին ու նստեցին քէչի (թաղիք) վրայ չարդախի (սրահ) հովումը։

— Մի սառը ջուր չունի՞ք, ասեց Հրաչեան։ Էն սհաթը գերասլամբիցը (ննջուղ) սառը ջու- րը հանեցին, ոնց որ լրօրհնէքին լցրած։

Էնց որ խմեց Հրաչեան, օֆա՛յ, ասեց. ակդ օրհնուի՛, քո պատճառ դառնոզի հոգին դրախ- տական ըլնի՛. տղէ՛ք, ես էսքան մանը եմ էկել, լաւ ջրեր շատ եմ տեսել, համա էս օրհնուած

Աշտարակայ ջրի պէս մարսական ու քաղցր ջուր ոչ մի տեղ չըկայ, չասէ՛ք, թէ կեղծաւորութիւն եմ անում, խմեցէ՛ք, տեսէ՛ք։

Ամէնն էլ խմեցին ու բերաններըը բաց մնաց։

Վարդիւոր շաբաթ օրը ըսէնց ջուր՝ երևա- նու երկիրը քանդէիր, չէիր գտնիլ. Աբարան շատ աղբրներ կան, Ալագեազ շատ քաղցր ջրեր կան, համա ոչ մինը սրա պէս մարսական չի. Ամբեր- թը գոլած ջուր ա, համա սրա խումը (ումպ) չու- նի. Սուրբ Ականատեսի զօրութիւնին ղուրբան, նա մեր գեղի համար էս լաւութիւնն ա արել. Կարբու նեբևիցը գետիցը գաւազանն առել ա, աղօթք անելով ընկել յառաջ ու քաշ տալով գը- նացել դպա ներքև. որտեղ գաւազանը խաղ ա արել, լէն առու ա դառել, ջուրը հետն էկել, ոնց որ չորքը մարդու քամակիցը. որտեղ ապա- ռաժ քարաւի ա էլել, գաւազանով տուել ա, երկու կտոր արել, կամ միջիցը ջուրն անց կա- ցըրել, ընչանք բերել ա գեղատեղը հանել, նոր կամանց կամանց մարդիկ են էկել տեսել ջուր կայ, գեղ են չինել, որ հիմի էս աննման Աշտա- րակն ա*։ Ինքն էլ յետ ա դառել գնացել Սաղ- մոսավանք, ընտեղ ճգնութիւն արել։ Նրա լիս գերեզմանին ղուրբան, մենք նրան շատ ենք պար- տական. նրա սուրբ գերեզմանը հիմի էլ Սաղ-

* Այսպէս են ասում աւանդութեամբ, թէ մի Սուրբ՝ Ա կ ա ն ա տ ե ս անունամբ՝ այս ձևով բերել է Աշտարակու ջուրը։

— Ա՛յ, ողորմի ծնողացդ, ի՞նչպէս էք, լա՞ւ էք. քէֆներդ, հալներդ։

— Փառք Աստծու, ամէնքս էլ լաւ ենք. Մուրբ կարապետ չէ՞ք գալի, էկէ՛ք գնանք իրար հետ։

— Շատ լաւ կըլնի, ասեց Գարեգինը, հա՛ մեցէ՛ք վեր էկէ՛ք, դնչացէ՛ք, յետոյ հոգին ընկնի՝ դուք կերթաք, մենք էլ իրիկուընս ա՝ կը գանք, առաւօտն ա՝ կը գանք դուք Երևանայ ընչանք ըսաեղ նրա լիս գերեզմանի համար էկել էք, մենք քնթներիս տակին ա, ի՞նչ պտի ասենք, որ չըգանք. համեցէ՛ք, քշէ՛ք ձիանը դպա գեղը։

— Շնորհակալ ենք վեր գալուց, ասեց Հրաչեան, դուք համեցէ՛ք ձիու թարքը (գաւակը) նիլէ՛ք, գնանք, թէ աղէն (առտրը) կը սիրէք։

Գարեգինը չթողաց դրանց ոչ մինին անց կենալ, քաշեց Հրաչէի ձիու գեամը (սանձ), առաւ գնաց դպա իրանց տունը։

Դուան առաջին վեր էկան, ձիանը բակը քաշեցին ու նստեցին քէչի (թաղիք) վրայ չարգախի (սրահ) հովումը։

— Մի սառը ջուր չունի՞ք, ասեց Հրաչեան։

Էն սհաթը գերուզամբիցը (ննջուղ) սառը ջուրը հանեցին, ոնց որ չրօրհնէքին լցրած։

Էնց որ խմեց Հրաչեան, օխա՛յ, ասեց. ակդ օրհնուի՛, քո պատճառ դառնողի հոգին դրախտական ընկի՛. տղէ՛ք, ես էսքան մանը եմ էկել, լաւ չրեր շատ եմ տեսել, համա էս օրհնուած

Աշտարակայ չրի պէս մարսական ու քաղցր ջուր ոչ մի տեղ չըկայ, չասէ՛ք, թէ կեղծաւորութիւն եմ անում, խմեցէ՛ք, տեսէ՛ք։

Ամէնն էլ խմեցին ու բերանները բաց մնաց։

Վարդիւոր չաբաթ օրը ըսէնց ջուր՝ երևա՛նու երկիրը քանդէիր, չէիր գտնիլ. Աբարան շատ աղբրներ կան, Ալագեազ շատ քաղցր չրեր կան, համա ոչ մինը սրա պէս մարսական չի. Ամբերթը գոլած ջուր ա, համա սրա խումը (ուռկ) չունի. Մուրբ Ականատեսի գօրութիւնին զուրբան, նա մեր գեղի համար էս լաւութիւնն ա արել. Կարբու նեբևիցը գետիցը գաւազանն առել ա, աղօթք անելով ընկել յառաջ ու քաշ տալով գընացել դպա ներքև. որտեղ գաւազանը խազ ա արել, լէն առու ա գառել, ջուրը հետն էկել, ոնց որ չոզքը մարդու քամակիցը. որտեղ ապառաժ քարափ ա էլել, գաւազանով տուել ա, երկու կտոր արել, կամ մինիցը ջուրն անց կացըրել ընչանք բերել ա գեղատեղը հանել, նոր կամանց կամանց մարդիկ են էկել, տեսել ջուր կայ, գեղ են չինել, որ հիմի էս աննման Աշտարակն ա*։ Ինքն էլ յետ ա գառել, գնացել Սաղմոսավանք, ընտեղ ճգնութիւն արել։ Նրա լիս գերեզմանին զուրբան, մենք նրան շատ ենք պարտական. նրա սուրբ գերեզմանը հիմի էլ Սաղ-

* Այսպէս են ասում աւանդութեամբ, թէ մի Սուրբ՝ Ա կ ա ն ա տ է ս անունով՝ այս ձևով բերել է Աշտարակու ջուրը։

մոսավանքի ժամի միջին ա ու մեղ համար աղօթք ա անում։

Գարեգինը նստացրուց տղեքանցն ու մնաւ կախանատունը, վեր բերուց ձողու վրիցը լաւ հալալի հաւտղ, լուաց սառը ջրով ու դրուց դըբանց առաջը։

— Համեցէ՛ք, ասեց, Թողութիւն կանէ՛ք, տանը մարդ չկայ, ամէնքն էլ յիքումն են, Աչտարակցուն էլ էդ մի յիքին ա, գարունք ծագում ա, աչքները անկում են նրա վրէն. ընչանք մսախլը (քեֆ) վեր են ունում, իրանցն իրանց ա հանում։ աղպէ՛ր, դուք քաղքցի էք, որըդ առուտուրի էք, որըդ փեշակի, միջներիդ պարապ մարդ չի կայ. ռանչպարն (ներկագործ) էլ իրա ցանքս ու վարին ա աշխատում, տարեկան հացը տուն ա լցնում։ տաւար, ոչխար, դոմէշ, ձի, գութան, չութ պահում։ հացը, եղը, պանիր, բուրդը, ամէն բանն էլ իրան իրան գալիս ա. մենք երկուսիցն էլ զուրկ ենք, էս մի յիքու երեսին ենք մնում Աստուած մի արասցէ, կամ կարկուտը տայ, կամ թրթուռը վչացնի, կամ տարին չ'բեր ըլնի, սոված կոտորուիլ պատենք։ մեր մսախլն էլ որ կայ, ամէն բան նրան եաղի (թշնամի) ա. եվսած կերակուր ա, մարդ, չուն, կատու, ղուրդուղուշ, ինչքան աշխարհքումն ժըժմունք կան՝ քօմմա էլ ուտում են. կէսը անփոդ հէնց ճամբորդներին ենք տալի կամ աղքատներին. էս լաւ ա, հլա խեր էլ ա ըլնում. քաղ-

քումն ամէն բան էլ փողով ա, գեղըցուն էլ ունի ո՛չ. մերն ա, որ մեջ տեղը փչանում ա։ Մարգս մի երկու կով ենք պահում, թէ երեխէքանց մածուն էլ ա ըլնի, էն էլ չենք կարում եօլա տանել, ամէն բան փողով ենք առնում։ Մեր մի բանն ա լաւ. տարուայ որ վախտին ղօնաղ գայ, գլխըներիս վրայ պատիւ կունենանք. մի քիչ, ղըրթ ա, ձին պահելու համար նեղութիւն կունենանք, որ տեղ չունինք, համա մարդի մեղ պէս ոչով չի պատիւ տալ. գինին կայ, արաղը կայ, հաւտղը կայ, հազար ռանդ (տեսակ) չարազ (միրգ) ու թթու դրած բաներ կըհանենք. ա՛յ, ինչպէս հիմի ձեզ պէս թանկագին ղօնաղների սիրտը կարող եմ մի կախան հաւտղով շահիլ։

Ընչանք Գարեգնի խօսքը վերջացնիլը Սօան էլ ղերուզամբիցը դուս բերուց երկարապոչ գեօդրի (դդում) մէջ լցրած ոսկու ռանդ դեղին գինին։

— Տղէ՛ք չան, ի՞նչ գինի ունինք, ասեց Գարեգինը. գլուխը քարոզն ա տուել սրա կշտին կախէթու գինին. Պետրպօլցին էկած չանքանը սրա կշտին ի՞նչ բան ա. ածեց մի թաս ու մեկնեց Հրաչէյին. Համեցէ՛ք, Հրաչեա՛յ չան, տե՛ս ի՛նչ ա է՞։

— Լաւ ձեռի ա, ասեց Հրաչեան։

— Դէ լա՛ւ, ա՛ռ մի յառաջ յառաջ դու համը տե՛ս ու յետ տո՛ւր։

Հէնց որ Հրաչէն ձեռը միամիտ տեղովը մեկնեց Թաան առնելու, Գարեգինը յետ քաշեց ու ասեց.—կենդանութիւն, տղէ՛ք ջան, բարի՛ հազար բարի՛, իմ աչքի վրայ, իմ գլխի վրայ, գալոստներդ բարի՛, Սուրբ Կարապետն՝ ինչ մուրազ ունիք, ինքը կատարի։

Ամէնն էլ ծիծաղացին Հրաչէի վրայ, որ խաբուեց։ Հրաչեա՛յ ջան, ալլահվէրդի՛, ասեց ու խմեց։

Ցետոյ ամենին էլ մին մին Թաս խմացրուց, ամէնի բերանն էլ բաց ճնաց, արմացել էին, թէ Աշտարակ ըսէնց գինի ա ընո՞ւմ։ մենք հէնց գիտէինք, թէ մեր Երևանայ Դալմի գինին ամէն մեր երկրի գինանոցիցը լաւն ա, համա սա տուրուց նրան, անց կացաւ։

Հաւողը որ կերան պրծան, գինջացան, Հրաչեան ձէն տուրուց.—Դէ՛, տղէ՛ք ջան, վեր կացէ՛ք, մթնեց. չնորհակալութիւն, Գարեգի՛ն ջան, Աստուած օջղադ հաստատ պահի՛, ասին ամէնը, դուք էլ չէ՞ք գալի։

— Մենք էլ իրիկուննա կըգանք, մի՛ վախէք, հէնց քէֆ չհանց տանք ձեզ, որ ասէք մաշալլա՞հ (կեցցե՛ս)։

Տղէքը ձիանը նստեցին ու քշեցին դալա Հանալանք։

Գարեգինն ու Սօսն երբ որ տղէքանցը ճամփու քցեցին, իրանք գնացին Սօսենց ածերը, ընտեղից խնձոր քաղեցին ու յիքանոնցովը գալով՝

հասան վարդիթերենց յիքին. տեսան հեռուից, որ Հեթումը գլուխը դրել ա աղբկայ գոգն ու քուԹուԹիլ տալի. կաննեցին մի տալգայ տեղ ու դալա էն աստղը մոխկ տուին, որ օրով ցերեկով նրանց համար արևիցը լաւ էր լիս տալի։ Նա էլ՝ հէնց իմանաս, Թէ կոզքին բրԹոզ ըլներ, յետ մոխկ տուուց ու աչքերը քցեց իր տիրոնչ երեսին, ձեռներով էլ մհանայ (դիտմամբ) հօր մազերըն էր յետ քաշում, սաքի Թէ քուԹուԹում ըլի, ուշ ու միտքն ընկաւ դրանց վրայ։

Սօսն էնքան արուց, որ աչքով ունքով կարաց իմանալ, Թէ էն օրը ծեծել չէին երեխին, ուրախացաւ դրա վրայ. յետոյ ոտ ու ձեռով հասկացնելով իմացաւ, որ էքուց նրանք էլ պտի հասկացնելով իմացաւ, որ էքուց նրանք էլ պտի Հանալանք գնան, աշխարհքն իրանն էլաւ։

Աղջիկը դնչով-գլխով իշարաթ (նշանացի) անելով ասեց, որ հեռացէ՛ք, հէրս վեր ա կենում։

Լաւ չէ՛ր ուզում Սօսը հեռանալը, համա ճար չի կար։

Հէնց որ հալուորը գլուխը բարձրացնել ուզեց, դրանք ծլկուեցին։

— Աստծով խէր ա, ասեց Սօսը Գարեգնին, «բանները աչ ա, ով հաչում ա՝ հաչայ». երեխեն ծեծել չէն, էքուց էլ պտի Սուրբ Կարապետ գան, տեսնենք ո՞նց ենք անում։

Սրանք ըստեղանց գնացին Գարեգնենց յիքին, մատաղն ու խնձորը տուին մի մանթի (աշակերտ),

(որ յառաջուց էկել էր ընտեղ) որ առնի գնայ. մինին էլ ասեցին, որ իրիկունա իրանց բերնիցն իրանց ամէն հընկերներին համեցէ՛ք ասի, որ էքուց շատ քէերհանանայ գան Հանապանք ու մնացածներն էլ քօմնա վեր կենան գան. յետոյ ի՞նչ ճամփու ընկան հէնց ընտեղից ոտով, ղրից տալով գնա Հանապանք։

— Ես կ՛ասեմ, տատնիրեք տարեկանին օրէնքով պատկ կըհասնի, հարցրուց Սօսը, ըտէնց չի՞։

— Թէ օրէնքին մոխկ տանք, ասեց Գարեգինը, կարդն իսկ տատնուչորս տարեկան աղլըկանն ա, տատնուհինգ տարեկան աղի հետ։

— Թէ որ ըտէնց ա, ընչի՞ մեր Վարդվիճուի աղլօրը՝ Վահանին պատկեցին. ինքը քսաներկու տարեկան էր՝ աղջիկը տատնումին։

Հէնց ըտուր համար էր, որ մեր գործակալը հինդ վեց հետ տարաւ բերուց է՞, դու ի՞նչ գիտես. մի քչեր իրեք հետ շաքար գնայ նրան, վեր չի կալաւ, թէ ըտուղ ըսկի տատնուչորս տարեկան էլ որ ընկի, չի հասնիլ. մին էլ տարան՝ էլ չելաւ. վերջը մի փուճ՝ մի բարեկամ աղայ մարդ վեր ա կալել, ձի նատել, տարել, որ հրամանը բերել ա, հլա էն էլ խոստացել ա, թէ արաղը որ քաշէն, մի լիտր էլ լաւ արաղ կըղրկեմ։

— Իրեք փուճ չի, ասեց Սօսը, թո՛ղ նա խօսք տայ, որ բանը ըլցնի, կայացնի, ես տասը վիճի դին կըտամ նրան, ի՞նչ անուամ ա՝ թո՛ղ ա-

նի։ Դորթ, չի՞ ընկիլ, որ մեր գործակալին միջնորդ քցենք, մի մահուտ փարաչայ էլ կանեմ իրա համար, նրանից կամանչեն, խաթրիկը անց չեն կենալ. վարդապետ ա էլի, Աստուած օհնի ասելով՝ բանը կը չինի, գլուխ կը բերի. արի՛, գնա՛նք էս իրիկուն խօսանք, ես գիտեմ, հիմի վաղուց նա Հանապանք գնացած կըլնի։

— Չէ՛, չէ՛, ասեց Գարեգինը, նրա ի՞նչ հարկաւորն ա էդ թաւուր բաներին մէջ մտնի. նրանն էն ա, որ թուղթը տանես, մի քանի շահի էլ իրան ժամուց տաս, «Հոգւոցն» ասի ու քեզ հրաման տայ. թէ չէ երբ որ չհաս ըլնի, էն էլ ինքը գիտայ. դու նհախ տեղը մարդին նեղութիւն մի տալ։ Սուս կա՛ց, դրա համար յետոյ կըխօսենք, էս ա՝ հասանք։ Լաւ բօլ ըխտաւոր կան էս տարին, պարապին մոխկ տո՛ւր է. ո՞հ, ղրթի որ վարդապետն էկել ա։ Մօտենում են ու ասում. —Աստուած օգնական, հա՛յր սուրբ, ու գնում աչը համբուրում։

— Աստուած պահապա՛ն, որդի՛ք, Աստուած օրհնեսցէ՛, ծիծաղալով ասեց հայր սուրբը. ի՞նչպէս էք, ուխտ էք էկել, ընդունելի ըլի. բաս ո՞ւր է ձեր մատաղը։

— Բերել ենք, հա՛յր սուրբ չան, ասեց Գարեգինը, էս իրիկուն չէ՝ էքուց առաւօտեննց պատարագը որ վերջանայ, խնդրեմ ճաչին մեզ մօտ համեցէ՛ք, ժամարարին էլ, տէրացուերին էլ հետ-ներդ բերէ՛ք, յատուկ կըպարտաւորէք։

— Շատ լաւ, որդի՛ք, մենք՝ որ կանք, ձեր հայրերն ենք, ձեր համար աղօթող ենք, ինչի՞ չենք գալ։

— Փառաւորի հայր սուրբը, յաւուկ որ մարդի սիրտ չահող ա, ընչանք էսօր նա մի մարդի խաթիր կոտրած չի, տեղիցը վեր կենողը նրանից չնորհակալ ա, մարդ պտի իսաֆով (խղճիւ) խօսի։

Վանքի խցերն ամէնը քանդուած են, մէնակ քեալավէքն (աւերակ) են մնացել. ըխտաւորները քաշուել են, լցուել էդ քեալավէքանց մէջը, որն էլ Երևանցի ա, կամ տղամարդ ա, մտել են ժա-մի դաւիթը։

Երևանցի տղէքն էլ վեր էին եկել ժամի* միջին։

Սօան ու Գարեգինը մտան ժամ, գերեզմանը համբուրեցին ու էկան Երևանցոնց մօտը։

---

* Յովհաննու վանքը շինած է Քասաղ գետի ժայռերի վրայ՝ կարմիր և սև սրբատաշ քարերով: Հրաշալի է նրա արտաքին կողմից նայիլը: Արևմտեան կողմից ունի մի մեծ դուռն կամարակապ: Երբ մտնում ես ներս, իսկոյն գաւիթն է չորս միապաղաղ քարեայ սիւների վրայ հաստատած խաչաձև. մէջ տեղը ունի գմբէթ՝ սիւների վրայ նոյնպէս, որոյ գլուխը շարժը քանդել է. գաւթի միջիցը երկու դուռն ունի. մինը մըտնում է խորանը, ուր է գերեզմանն Սուրբ Յովհաննու Մկրտչի (ուր, գուցէ, մասունքիցն ընի Քաղած) և այժմ ժամ են ասում մէջը. իսկ միւս դռնիցը մտնում է ժամատունը, որ է մեծ եկեղեցին՝ հոյակապ շինուածքով և մեծ սեղանով, բայց առաստաղը ներքին կողմիցը կիսով չափ քանդուած է շարժից: Այս ժամատանը դռան մօտի որմի երկու անկիւնումը կան քարեայ իրարից աղխաղեալ սանդուղք՝ պատի միջիցը հանելու աստիճանաց ծայրերը, որ բարձրանում են երկու խորանի մէջ. այս խորանների միջիցն ևս առաստաղը բակտեալ գոլով՝ էստեղից են գնում կտուրը:

Իրիկունը մթնեց, հեռու տեղից էկած ըխտաւորներն իրանց մատաղները մորթեցին, պղնձներըը դրին կրակի վրայ, մի կնգայ պահ տուին. իրանք ինչքան դեղացիք կան, հաւաքուեցին մի տեղ։

Ջահել տղէքն ու աղջկէքը եալլի բռնեցին ու լէ՛լէ՛ ասելով պար էկան։ Մի տուն տղէքն էին ասում, մի տուն աղջկէքը իրար դէմ։

Ընչանք կէս քշեր իրար հարբայ գալով՝ (մրցելով) լէլէ են ասում ու թռչում. յետոյ երբ որ մատաղն եփում ա, նոր նստում են հացի։

Մեր տղէքն էլ, որ ասինք, էս իրիկուն Երևանցոնց ղռնաղ էին։ Սրանք լէլէ չէին գիտում, հացի վրայ նստեցին ու կարդով խաղ ասին, ուրախութիւն արին։

Սրէն (հերթ) էկաւ Սօսին, նա բողաղն խտացկեց ու վեր կալաւ էս մուխամբաղը, որ էն սհաթը միտք արուց.

Սիրելի՛ ջան, հեռացար,
Զըլինի՞ ինձ մոռացար.
Սրտումս վառ ա քու սէրը,
Էրում ա չիպեարիս ծէրը։

Դու մի հատ ես աննման
Աչխարհումս գովական.
Փոթոթում ես տեսնողին,
Կրակում նրա հոգին։

Ջէնդ ա հրեշտակի,
Ջրկայ երկնքի տակին.
Լսողի խեչքը կերթայ,
Էլ չի կարող հեռանայ։

Շատերը դիտեմ ես,
Ոչ մինը չաժեն քեզ.
Գիշեր ցերեկ երազով,
Քեզ դրկում եմ հաւեսով։

Զատատաս խօսքին չատերի,
Ինձ մուղարար միտդ պահի,
Սօսը քեզնից սաւահի,
Էլ չի սիրիլ ուրիչի։

Նրա ձէնի լաւութիւնը մենք դիտենք, հէնց որ վեր կալաւ էս մուխամբազը, քօմմա էլ հայիլ մայիլ էլան։ Երևանցոնց միջին մի տղայ կար, նրա ձէնը գոված էր. քանի Սօսի ձէնը չէր լսել պարծենում էր. հէնց որ լսեց, իրանը պարկը դրուց, բերանը կապեց (յոնց)։

Սօսը որ մուխամբազն ասում էր, աղջկեքը դռանը լելէ էին ասում։ Ըխտաւորները հաւաքուել էին նրանց թամաշայ, հէնց որ ժամի մէջիցը ձէնը լսեցին, լելէն կիսատ թողին ու թափուեցին նէքսև։

Ամէնքը մի կողմից ասում էին.—եարաբ էս տղէն ո՞րտեղից ա, մեռնիմ էդ թաւուր տղի ջանին։

Աղջկեքն էլ լելէն բաց թողին, էկան թամաշայ։ Հէնց որ տեսնում էին Սօսի պօլօվիկ կարմիր երեսը ու լսում նրա ձէնը, խելքները գընում էր. մինը մինին ասում էր.—տեսնես էս տղէն պսակուած ա՞. էրնէ՞կ դրա կնկանը, մարդ մեռնի էդ թաւուր տղի ձեռի տակին։ Ամէնքն էլ մտքներումը դրին, որ էրնէ՞կ էս տղէն իրան առնէր։

Էս ա՝ որ Ծուշականցի մի կնիկ մտքումը դրուց, որ իր աղջիկը, ինց որ ըլի, տայ դրան։ Էդքան թամաշաւորների արանքը ճղեց, գնաց Գաբրեգինի քամակից անկաշկանդ ասեց.—աղպէ՛ր ջան, էս տղէն ո՞ր տեղացի ա, պսակուած ա՞, թէ չէ։

— Աչտարակցի ա, ասեց Գարեգինը, ու աղաղ։

Հէնց որ էս իմացաւ, ուրախ ուրախ յետ դառաւ, աղջկայ աչքերը դեղ դրուց, առաւ գընաց քօմմէքի առաջին կանոացրուց, որ Սօսը տեսնի, հաւանի. աղջկանն էլ սարմացրուց, որ թէ էն տղէն ներան մտիկ տայ, երեսին ծիծաղայ, բալքի խաբուի, որտեղ ըլնինք, մեզ գայ գտնի.

Սօսը մուխամբազի մէկել տունը որ վեր կալաւ, գլուխը մի բանձրացրուց ու աչքովին ընկաւ էդ աղջիկը. հէնց որ տեսաւ նրա համարձակ ծիծաղը, աչքերն օլորեց ու երեսը յետ դարձրուց. վաղի առակի պէս, որ ասում ա. «ուղեցաւ ունքը չինի՝ աչքն էլ հանեց» խեղճ աղջիկը։

Սօսի միտքը տե՛ս ու էս աղջկանը. նա խաղը ո՞ւմ համար ա ասում, ո՞վ ա գալի առաջին ընկնում. նա ուզում ա, որ իր աննմանը ըստեղ ըլեր, որ ինքը ձէնով՝ նա սիրունութիւնով խաղի ուշ ու միտքը իրանց վրայ դարձնէին, հիմի էս աղջիկն էկել ա, որ Սօսի խելքը դողանայ։

Աղջիկը կաննեց կաննեց, տեսաւ, որ չէ, Սօսն էլ իրան մոիկ չի տուուց, արածի վրայ փոշիմաննեց, յետ դառաւ մօրը, թէ էս չէլաւ, արի՛ գնանք, էքուց տե՛ս բալքի հացի կանչես, էա մի բան անես։

Հէնց որ Սօսը մուխամբազը պրծաւ, խաղ-խըն ամէնքն էլ ծանօթ՝ անծանօթ ձէն տուին. աղբիւրդ անապա՜ռ, Աստուած աւելի շնորհք տա՛յ, Սուրբ Կարապետը մուրազդ տայ, ու յետ դառան։

Դրանց թամաղէն մի թաս լցրուց ու ասեց. Աստուած կեանք տայ Սօսին ու Գարեգնին, Աստուած սէր միաբան պահի՛ միշտ էդ երկուսին, դրանց կենացը։

Հէնց ուզում էր խմի, Սօսը կուռը բռնեց, թէ կիսատ ճնաց, ասա՛.—Աստուած սաղ պահի Գարեգնին, Սօսին ու ում որ Սօսը սիրում ա։

—Ամէ՛ն, ամէ՛ն, ձէն տուին աղէքը, ինչ որ Սօսն ասեց, Աստուած լսող կատարող ըլնի, որ խմեցին։ Վերջը Գարեգինն ու Սօսը մի մին թաս ձեռնեն առած՝ կաննեցին ու շնորհակալութիւն արին։

Գարեգինը, որ պրծաւ, Սօսն ասեց.—շնորհակալութիւն ձեզանից իմ կողմից էլ՝ ում որ սիրում եմ նրանից էլ, որ ինքն ըստեղ չի՝ իրա միտքն ըստեղ ա. նա ասում ա, թէ դուք իմ կենացը խմեցիք, ինձ յիշեցիք, Աստուած ձեզ կենաք կենդանի պահի, ինչ մուրազի, ինչ խորհրդի որ էկել էք, Սուրբ Կարապետն ինքն կատարի. Աստուած Գարեգնին էլ ինձ հետ անքաժան պահի. ամէ՛ն ու խմեց։

—Ամէ՛ն, ամէ՛ն, ձէն տուին մեր գարդիմանդնեն ու ամէնքը մի մին կանանչի թաւաղայ արին (առաջարկեցին). ընչունքի Սօսը պաս էր. էսօր, էքուց պտի հաղորդուէր։

Էս քշեր մեր աղէքը կենաց խմելով, խաղ կանչելով՝ հացի վրայ լիսացրին, գեղըցիքն էլ դրսևը հաց կերան ու «լէլէին» ղեցին ընչանք լիս։

Առաւօտենց ժամհարն առաւ կոչնակը, կանեց վանքի հասարի (պարիսպ) քանդուած պատի գլխին ու թղթակայնելով, ձէն տուուց ղիլ ձէնով.

Օրհնեա՜լ է Աստուած,
ժամ հրամա՜յեցէք.
Դատաստան կայ գալո՜ւ,
Պատասխան կայ տալո՜ւ,
Ո՞վ բարի քրիստոնեայք,
ժամ հրամա՜յեցէք։

Ըխտաւորը ժամհարի ձէնը որ առան, թո-
ղին իրանց ուրախութիւնն ու լցուեցին ժամ։
Սօսո էլ գնաց տէրտէրի կուշտը, արտա-
սունք թափելով խոստովանուեց, զղջաց իրա մեղ-
քըն ու կանոնց ժամումն ընչանք պատարագի
վերջը, որ հաղորդուի։
Գարեգինն էլ գնաց Հանալանքցի Ռստակէ-
սի բաղչումը մատաղը մորթիլ տուց ու հաղիր
էր անում։
Արեգակը նոր ծագել էր, դեռ էնքան զօ-
րութիւն չունէր, որ մարդի աչքեր ծակի, նոր
կառքը լծել էր, նստել ու դուս գալի, որ Աշ-
տարակայ ըխտաւորը ճամփու ընկան։
Աղապ տղէքը թօքուն թօքուն (խմբովին) ի-
րանց հայնները կապել էին չալակներն ու առաջ
առաջ գալի, պաս պահողներն էլ խնձորը լցրել
էին չիբնները, աղքատներին բաժանելով վազում,
որ պատարագին հասնին, արքութիւն առնեն. կը-
նանոնց մի տուտը քիչ էր մնացել հասնի Հանա-
վանք, մինը դեռ Աշտարակայ նոր էր դուս գա-
լի. երեխէքն էլ չիբնները խնձորով լիքը՝ կուռ
կուռի էին բռնել ու կնանոնց առաջն ընկած՝
վազում։
Գարեգնի կանչած տղէքը մի մին աղլուխ
պաշարով, մի թօռ էլ հեռներն էկան։
Գարեգինը մատաղը մորթիլ էր տուել, մի մենծ
պղինձ դրել օջախին ու միսը լցրել մէջը. սուկին,
հաւը, կարճակոզերը, սիրտը, ևև թոքը, պօլօճիկ-

ներն ու ամէն լաւ տեղերիցն էլ ջոկիլ էր տուել
խորոված անելի համար։
Աշտարակու տղէքը որ էկան, դու տե՛ս հի-
մի դրանց արածը, թէ ընչի՞ համար են էնքան
խնձոր բերում։ Նի են ընում (վեր եղնում) ժամի
կտուրը, գնում են գաւթի կամուղիկէի տներն
արանքովը գլխները հանում, խնձորով ըստուր,
ընտուր գլխին տալի։ Ընտեղից գնում են ժա-
մատան կտուրը, կամուղիկէի գլուխը նիշնում,
վեր գալի խորանի ձկան մինչքի պես սուր կա-
մարի վրայ մտն գալի, ձորին մտիկ տալի, ըն-
տեղից քար քցում դպա ձորը, իրար ղոչաղու-
թիւն չհանց տալի, էլ յետ վեր գալի ներքև։
Մեր Սօսո էլ չատ մուշտարին ա էս թա-
ւուր ղոչաղութիւններ անելու, համա սրբութիւն
պտի առնէր։
Պատարագը դուս էկաւ. պաս պահողները
հաղորդուեցին. Սօսո էլ գնաց գործակալի մօտ,
խնդրեց նրան, որ ժամից յետոյ առնի ժամա-
րարին ու մէկել տէրտէր-տիրացուներին, գայ
իրանց տեղանի վրայ Ռստակէսի բաղչէն ու ինքն
առաջ առաջ գնաց տղէքանց կուշտն ու ողորմի
Աստուած տուուց նրանց։
Գարեգինն իրա ընկերների հետ երբ որ տե-
սաւ, մօտ էկաւ, ընդունելի ընկի ասեց ու վա-
զեց թասի մէջը գինին լցրուց, բերուց տուուց
իրան, թէ բեռանդ ա՛ռ մի քիչ։

Հայը քցեցին կանանչ խոտին բայց արած սուփրի վրայ, ամէնի բերած պաշարն էլ Գարեգինը բայց արուց լաւ տանտեան պէս, ընչանք տան ու հինգ մարդի համար սեղան դրուց առէն Աստծու տուած բարութիւններից էլ՝ ու մընեին էլ ղրկեց հայր-սուրբի եաևից։

Բաղչի մեկել կողքին էլ մի բօլուկ (բաւական) օղլուշաղ (կանայք) կային հաւաքուած. Սօսանից, Գարեգինից, Վարդիթերենց ու չատ ուրիշ խիղաննեը. նրանց էլ վաղեց խնայ տուուց, թէ ընչանք կայէ՛ք տէրտէրները հաց ուտեն, յետոյ ձեզ էլ կըկերակրեմ։

Մին էլ տեսնինք, վարդապետն իրա հոգեւորականների հետ էկաւ։

— Համեցէ՛ք, հայր սուրբ չա՛ն, համեցէ՛ք սեղանի վրայ, ձէն տուուց Գարեգինը։

— Աստուած ձեր սեղանն օրհնի, Աբէլի, Աբրահամի մատաղն եղիցի, ասեց հայր սուրբը, սեղանն օրհնեց ու նստեց մէջ տեղը. տէրտէրները ու տիրացուերն էլ, որ ձեռնները սրանեերին էին դրել կաննել, նրանց էլ հրամայեց, իրան աջ ու ձախ կողմը չարուեցին։

— Հայր սուրբ չա՛ն, ձէն տուուց Գարեգինը, խնդրեմ մի լաւ ուրախութիւն անէ՛ք, մատաղի էրեմորթին ու ձեր բաժին մատաղն էլ հիմի կըղրկեմ, ինչ որ ձեր պարտքն ա՝ էն էլ աչքիս վրայ։

— Օրհնեալ լինիք, որդի՛, Աստուած ձեր հաւատն օրհնի, դուք մեզ այդպէս պատիւ կանէք, մենք էլ պարտաւոր ենք ձեր համար գիշերն արթուն ծնալ, հակել, սաղմոս ասել, ձեզ կեանք ու արեշատութիւն խնդրել, մեր ձեռքից էլ այս կըգայ։

— Այո՛, ճշմարիտ է, ասեց էն տիկնոջը մենծ տէրտէրը. հայր սուրբս միշտ ձեզ համար աղօթք կանէ։

— Իրա՛ւ է, իրա՛ւ, ձէն տուին մեկել տէրտէրն ու տիրացուերը։

— Հայր սուրբ չա՛ն, խնդրենք մի քիչ մեզ անկաղ կալնէ՛ք, ասեց Գարեգինը։ Էս մատաղն արել ա մեր Սօսը. խնդրեմ մի մին թաս գինի խմէք ու ասէ՛ք.—Աստուած Սօսի սրտի մուրազը կատարի, մեկ էլ աղօթքներն էլ դու գիտես։

— Լաւ ո՛ւ, Սօս չա՛ն, թասը, ասեց հայր սուրբը, մի լաւ օրհնեմ։

Առաւ ձեռն ու ասեց.—օրհնեցէ՛ք, տեա՛ք, կենդանութիւն, Սօ՛ս, զօրանաս, խնդրեմ իմ անարժան բերանով Սուրբ Յովհաննէս Մկրտչին, որ քո սրտի բաղձանքը կատարի, քեզ երկար կեանք տայ, կարմիրդ կապենք, որին քո սիրտը կը բարեհաճի, այն քեզ բաղդ լինի։ Գարեգինին, Աստուած օրհնեսցէ, Աստուած աւելի չնորհք տայ, Աստուած քո աշխատանքը, որ մեր երեխայից համար անում ես, ի փառս իւրում ընկալցի, բարև արժանի լինիս հրեշտակական կար-

գին, չուտ մեր հօտին խառնուիս։ Որդի՛ք, օրհնեալ լինի՛ք (միւսներին ի ատում), Աստուած ձեզ սիրով, եղբայրութեամբ պահեսցէ, Աստուած ձեզ էլ ձեր ցանկութեանցը հասուսցէ. Տէր Աստուած էլ մեր Հայոց աղգին այցելութիւն արասցէ, իր քաղցր խնամից տակ պահեսցէ և որքան էլ այսօր ուխտաւորք կային մեծից մինչև փոքրն՝ ամէնի խնդիրն էլ լինքը կատարեսցէ Սուրբ Ծովհաննէս Մկրտչի բարեխօսութեամբը. Տէր Աստուած քեզ փառք։

Հէնց օրհնեց հայր սուրբը, ուղում էր վայելել մեծ տէրտէրը Գարեգինն ասեց, թէ հայր սուրբիս թասի վրայ մի տաղ ասա՛։

— Աչքիս վրայ, ասեց Գարեգինը, էս սհաթիս. երեխէ՛ք, Գագի՛կ, Լեւո՛ն, լսատեղ էկէ՛ք։ Երկու ձայնաւոր աշակերտ կանչեց։

— Էկէ՛ք հայր սուրբի թասի վրայ մի տաղ ասեցէ՛ք, ես էլ շարականը կասեմ։

Երեխէքն իրար հետ հէնց ձէն ձէնի տալով ասեցին «Հայրենասէրք Աստուածն» տաղը, որ ամէնի սիրտն էլ փառաւորեց։ Ցետոյ Գարեգինն էլ հայր սուրբի անուամով մի շարական վրայ բերուց, որ յետոյ հայր սուրբը չնորհակալութիւն արուց վարժապետին ու աշակերտներին և անուշ արուց։

Հաց ուտելուց որ պրծան, սեղանը փռած թողին ու վեր կացան, հացն օրհնեցին ու հէնց

ուզում էին գնան, Գարեգինը չոկ չոկ դրանց ժամուցն էլ տուաւ, նշխարք առաւ։

Հէնց որ նրանք չնորհակալութիւն անելով գնացին, նստեցին ինչքան աղէք կային ու ուրախութիւնը սարքեցին. կնանիքն էլ էն դիւրը (կողմ) սեղան փռեցին ուռի ծառերի տակին ու ինչ որ իրանց օրէնքն ա, հարս ու աղջկէքը չոկ՝ իրանք չոկ նստեցին։

Գարեգինն էս երկու սեղանն էլ հէնց կառավարեց, որ ամէնն էլ չնորհակալ էլան։ Լցրուց մի թաս գինի, առաջ լինքը չնորհակալութիւն արուց խմեց, յետոյ տարաւ վարդապետների մօրը. — խնամի՛, ասեց, թէ ինձ կը սիրես, թէ էդ քու կողքին նստած աղջկանը կը սիրես, էս թասը խըմի՛, ասա՛. ո՛վ Սուրբ Կարապետ, դու տաք չըլնիս, ոտով չուր չածես, մտիկ սրտեր իրարից չի չոհով չուր չածես, բարի խորհուրդը կատարես, ուրիչի աչքն էլ մեր դռանը չի թողաս։

Սատանի յետի ոտն էր պատաւը, էն սհաթը հասկացաւ, համա ի՞նչ, ամանչեց, որ խօսքը կոտրի, առաւ ձեռը թասն ու ինչ որ նա ասել էր, մին մին ասեց ու հէնց ուզում էր խմի, կուռը բռնեց Գարեգինը.—դի՛ր գետին թասդ, ասեց, թասիդ վրայ մի խաղ ասենք՝ նոր խմի՛։ Թողուց կնանոնցն ընտեղ, գնաց տղէքանց կուշտը. միաչար չուհլակի պէս հինած էր անում, գնում էր ընտեղ, գալի ընտեղ։ Սօսին կաննացրուց ու ա-

սեց.—ասա՛ էն մուխամբազը, որ մին օր խոտ հնձելիս չինել եւ։

Սօսը, ղըրդ ա, որքուԹիւն էր առել համա Գարեգնի խօսքն ու վարդիԹերի սէրը սուրը էր համարում, ընդուր համար մեղք չի կարծեց ասիլը։ Վէր կացաւ տեղիցը կանգնեց, ոնց որ մի չիշակ խնձորի ծառ, որ մանր անկոնց միջին դուս էկած ըլնի. երեսը յետ դարձրուց դպա կնանիքին ու ասեց էս մուխամբազը.

Ինձ էրում ա էն սէրը, որ պիշեր ցերեկ վառ ա,
Լէրդ ու Թոքս խաշում ա, վա՛յ, ես սարսարի դառայ.
Աստուած սիրո՛ղք, ջուր ածէ՛ք, էս սէրն էլաւ իմ մահը,
Սիրեկանիս անունը ինձ արեց փարայ փարայ (կտոր կտոր)։

Մեռնիմ էն աչք ու ունքին, որ ծիածան ա ու արեւ,
Մեռնիմ էն անուշ լեզուին, որ տեսնելիս ոտ բարեւ.
Մեռնիմ խոշճուճ մազերին՝ ընչանք ծունկը կախ ընկած,
Ով որ տեսնի չարմանայ, նրա սիրտը լիս քար աւ

Թշերի ծերը վարդ ա, պռօշները չարմազ են,
Սատաֆի պէս ատամները մարդի հոգին կը քաղեն,
Պատիկ կարգին բերանը, կաքաւակտուց չանէն,
Փափուկ մանմուր բօխանը զոյ (փեշտակայ) բարձի հատասար աւ

Շիշակ ունկու հասակով, սիրամարգի տեսքովը,
Բամբակի պէս կռներով, նազանճեմ գնացքովը
Սիրտս քաշեց իրան ժօտ, խելքս առաւ գլխիցս,
Ասեց մին օր կատանաս նեղուԹիւնիդ փոխարայ։

Քանի երկու տարուայն եմ, քսանը չուտ անց կացաւ,
Էս երկուսը հէնց գիտեմ, երկու հարրից աւելցաւ.
Սեւ մազերիս մի՛ խաբուէք, սեւ սրտիս մոխիկ արէ՛ք,
Սօսի զարդն ես դու, աղջի՛կ, ինձ մի դեղ ու ճար արա՛։

Սօսը մուխամբազն ա ասում, Գարեգինն էլ զարձ գալը։

Բաղչի պատերն էլ յետ լցուեցին, Թամաշաւորները իրար գլուխ են պատռում։

Սօսը որ ասում չի ու մի մին էլ հետը ժըմտում, աչքերը գցելով իրան կեանք տուող արեւի երեսին, ուրիշի սիրտն ա վրէն գնում։ Գնաց ումբը ու արեւ ըլի՛, Գարեգին, ասում են, որ մեր սիրտն ուրախացրիր. Աստուած Սօսին է՛լ աւելի շնորհ տայ։

Համա մի չենք հարցնում, Թէ խալխի սիրտը որ էսքան ա ուրախացել հիմի տունը մերը, խօսքը մերը, բաս նա ո՞վ ա, որ Սօսի ձէնի վրայատուղը (վազելիս) գնացել ա կպել նրա սրտին ու քաշում ղոռում, որ բերի կպցնի իրան. չէ՞ որ էս մեր երուած ու կրակուած վարդիԹերն աւ։

Համա ի՞նչ անի խեղճը, որը կապած ա. մերը վախա վախա աչքի տակովը հէնց խէԹը մոխկ ա տալի, որ տեղն ու տեղը հալուում ա, Թէ չէ նա ընտեղ իր սրտի փափաքը կը հանէր։ Ի՞նչ պտի անէր, մեր ատաԹումը (ծուս) կայ ո՛չ, որ մի մենձ կնիկ արմատ, եա մի տղամարդ էլած տեղը՝ աղջկայ պռօշը պռօշին գայ. Թէ քաղքի (Թիֆլիզի) պէս ըլներ, որ ասում են, կնանիքը մարդկանց հետ ղրից են անում, աղջկէքն էլ խաղալուս տղէքանց կուռը բռնում են խաղում, ուր որ սրանքն ուզում ա, եա գիտեմ Թէ էն վախտը արեւը ո՞րտեղ մեր կը մտնէր. համա

սեց. —ասա՛ էն մուխամբազը, որ մին օր խոտ հնձելիս չհինել եւ։

Սօսը, ղորդ ա, օրքուԹիւն էր առել, համա Գարեգինի խօսքն ու վարդիԹերի սէրը սուրը էր համարում, ընդհուր համար մեղք չի կարծեց ասելը։ Վեր կացաւ տեղիցը կաննեց, ոնց որ մի չիշակ խնձորի ծառ, որ մանր անկոնց միջին դուս էկած ըլնի. երեսը յետ դարձրուց դպա կնանիքին ու ասեց էս մուխամբազը.

Ինձ էրում ա էն սէրը, որ պիշեր ցերեկ վառ ա,
Լերդ ու Ժոքս խաշում ա, վա՛յ, ես ասրասրի դառայ.
Աստուած սիրո՛ղ, ջուր ածէ՛ք, էս սէրն էլաւ իմ մահը,
Սիրեկանիս անունը ինձ արեց փարայ փարայ (կտոր կտոր)։

Մեռնիմ էն աչք ու ունքին, որ ծիածան ա ու արեւ,
Մեռնիմ էն անուշ լեզուին, որ տեսնելիս տայ բարեւ.
Մեռնիմ խուճուճ մազերին՝ ընչանք ծունկը կախ ընկած,
Ով որ տեսնի չարմանայ, նրա սիրտը լեռ քար ա։

Թշերի ծերը վարդ ա, պռօշները չարմալ են,
Սատափի պէս ատամները մարդի հոգին կը քաղեն,
Պատիկ կարգին բերանը, կաքաւակուց չանէն,
Փափուկ մանտուր բօխանը ղուշ (փեշտեակ) բարձի հաւասար ա։

Շիշակ անկու հասակով, սիրամարգի տեսքովը,
Բամբակի պէս կռներով, նազաճեմ գնացքովը
Սիրտս քաշեց իրան մօտ, խելքս առաւ գլխիցս,
Ասեց մին օր կատանաս նեղութիւնիդ փոխարայ։

Քանի երկու տարուայն եմ, քսանը չուտ անց կացաւ,
Էս երկուսը հէնց գիտեմ, երկու հարրից աւելցաւ.
Սեւ մազերիս մի՛ խաբուէք, սեւ սրտիս մոխիկ արէ՛ք,
Սօսի գարդն ես դու, աղջի՛կ, ինձ մի դեղ ու ճար արա՛։

Սօսը մուխամբազն ա ասում, Գարեգինն էլ դարձ գալը։

Բազէի պատերն էլ յետ լցուեցին, Թամաշաւորները իրար գլուխ են պատռում։

Սօսը որ ասում չի ու մի մին էլ հետը ժըմտում, աչքերը քցելով իրան կեանք տուող արեւի երեսին, ուրիշի սիրտն ա վրէն գնում։ Ինչ ումըր ու արեւ ըլի՛, Գարեգին, ասում են, որ մեր սիրտն ուրախացրիր. Աստուած Սօսին է՛լ աւելի չնորհ տայ։

Համա մի չենք հարցնում, Թէ խալխի սիրտը որ էսքան ա ուրախացել հիմի տունը մերը, խօսքը մերը, բաս նա ո՞վ ա, որ Սօսի ձէնի վրայատուզը (մազնիս) գնացել ա կպել նրա սրտին ու քաշում ղոռով, որ բերի կպցնի իրան. չէ՞ որ էս մեր էրուած ու կրակուած վարդիվարերն ա։

Համա ի՞նչ անի խեղճը, ոսը կապած ա. մերը վախա վախա աչքի տակովը հէնց խէթը մոխկ ա տալի, որ տեղն ու տեղը հալուում ա, Թէ չէ նա ընտէղ իր սրտի փափաքը կը հանէր։ Ի՞նչ պտի անէր, մեր ատաթումը (ծես) կայ ա՛չ, որ մի մենծ կնիկ արմատ, եա մի տղամարդ էլած տեղը՝ աղջկայ պռօշը պռօշին դայ. Թէ քաղքի (Թիֆլիզի) պէս ըլնէր, որ ասում են, կնանիքը մարդկանց հետ ղրից են անում, աղջկէքն էլ խաղալուս տղէքանց կուռը բռնում են խաղում, ում որ սրտներն ուզում ա, եա գիտեմ Թէ էն վախտը արևը ո՞րտեղ մեր կը մտնէր. համա

նրանց մեռելն իրանց տեղն են թաղում, մերն ըստեղ։

Չէ, վաղի առակը չըլնի, Սօսի խաղը վարդիթերի մօր ճրռներն էլ ընկաւ։ Հէնց որ ասեց պրծաւ, պառաւը տեղիցը կաննեց ու Սօսին ձեռով արուց։

Չեռը ժաժ տալն ու Սօսը առաջին կաննիլը մին էլաւ։

— Որդի՛ չա՛ն, ասեց, աղբիւրդ անհատնելի, ոնց որ մեր սիրտը դու ուրախացրիր, Աստուած էլ քու սիրտն ուրախացնի, քու ճամիին փունջ մանիշակ բանի, Աստուած քեզ քու մօրը բաշխի, քո մուրազը Սուրբ Կարապետն ինքը կատարի, աչքդ ինչ բանի որ ընկած ա, էն քեզ զամաթ (վիճակուած) ըլնի. բաց ասեմ, ո՛չ ամանչեմ; քու սրտինն իմ աղջիկն ա, որ երկու տարի ա աչքիդ տակն ես առել, քեզ զամաթ ըլնի։ Աղջի՛, վեր կա՛ց կաննի՛, երեսդ դէսն արա՛, գլուխդ բարձր բռնի՛։

Էն նստոտած տղէքը, էն խալխը բոլոր մաթ են մնացել (զարմացել), Գարեգնի ոտները կարուել են, Սօսը քիչ ա մնացել՝ խելքը կորցնի, վարդիթերը հէնց գիտի երազումն ա։

— Հաւանո՞ւմ ես, ասեց սրան պառաւը, լաւ մտիկ տո՛ւր մուշտարու աչքով, ինչ կայ՝ չկայ՝ էս ա. ո՛չ ձեռացաչուր ունի, ո՛չ շորհ.ք ունի, ո՛չ մի ասեղ քաշիլ գիտայ, ոչինչ բան չի իմանում Աստծու սէրը. աչքը քոռ, չինքը ծուռը, ոտը չոլախ (կաղ), լաւ՝ վատ, էս ա. տես, չի փոշիմանես, էլ չասես, թէ սաբաբի (պատճառ) որդին մեռնի, առնում ե՞ս։

— Կա՛ց, կա՛ց, խնամի, ասեց Գարեգինը յառաչ գալով. մենք նոր չենք ճանանչում; նոր չենք հաւանել, դու լաւ գիտես, որ քանի մարդ էլ ղրկել ենք, չէք տուել. հիմի որ տուիր, դրա սաբաբն էլ ես եմ՝ մէկի մարդն էլ. թո՛ղ ինձ ուշունց տան էրկուսն էլ ինչ մեղք ըլի՝ իմ չլինքին։ Ասեց, ու մի մին թաս դինի խմեցէ՛ք, տղէք չա՛ն, ձէն տուէք, Աստուած չնհաւոր անի, բարեկամց աչքը լիս, քեռակին (Սօսի մօրն ե ասում) աչքդ լիս. Սօ՛ս չան, Աստուած աղօթքդ լսեց։

— Ուռա՛յ, ձէն տուին ամէնն ու մի մին թաս դինի խմեցին։

Մի հէնց զալմաղալ ու ուրախութիւն ա վեր կացել որ կասես, Ղարսն առան։

— Ուզում եմ մի նոր բան անիլ, ասեց Գարեգինը, ասէք ո՛չ—նոր նոր հաւեր են դուս էկել էրկաթէ ձուեր են ածում... ես ասում եմ, որ մեր նշանը մի պռօշտի ըլնի. ի՞նչ ես ասում, խնամի՛ չա՛ն։

— Լաւ կըլնի, ասեց պառաւը, հիմիկէց դէնը փակն էլ ա ձեռիդ՝ բալանինքն էլ, ինչ կուզես, արա՛։ Աբի՛, աղջի՛կ, արի՛, Գարեգինն ինչ կասի, անկալ արա՛։

Աղջիկն ուրախութիւնից մնացել ա կանգնած, ամանչելուցը Մայիսի վարդ ա դառել չի իմանում, ի՞նչ անի։

Կռնիցը լռնեց Գարեգինը, բերուց մօտ, թէ պռօշտի արէ՛ք։

Տէր Աստուած, էլ ո՞ւմնում ա հալ մնացել։ Սօսը՝ որ էսքան էրուած էր, մտքովը չէր անցկացել, թէ ըսէնց օր կը տեսնի, ինքն էս դիհին ա գլուխը քաշ քցել, վարդիթերն էն. ուզում են, որ մի սհաթ յառաջ հասնին իրանց մուրազին, համա ինչքան ըլնի, բազմութիւն ա կիտուած։ Վերջը՝ չաս որ էս դհիցն՝ էն դհիցը ձէն տուին, թէ Աստուած չնհաւոր անի, պռօշտի արէ՛ք, Գարեգինը երկսի ձեռը բռնեց, իրար մօտացրեց։ Բռնել էին ու էլ չէին կարում բաց թողալ։ Տղէն վախում էր, թէ աղջիկը չի թիլանայ, վեր ընկնի։ Աղջիկը վախում էր, թէ տղի խելքը չի գնայ, գետնովը դիպչի։

Վերջն իրար բաց թողին ու գլխներըը քաշ քցած մնացին։

— Ա՛նո՛ւշ, ձէն տուին ամէնքը, էդ մին ա, թէ պռօշտի։

Ցետոյ Գարեգինը բռնեց վարդիթերի ճակատը պաչեց, թէ ըստուց յետոյ իմ հարան ես, գնա՛ կէսօրդ ձեռն էլ պաչի՛, ամէնին էլ գլուխ տո՛ւր. Ա՛ս չա՛ն, դու էլ արի՛ մի պռօշտի անենք, գնա՛ զանգանչիդ ծիծը պաչի՛։

— Բանը վերջացաւ, ասեց պառաւը. համա խօսքներս խօսք ըլի, որ ընչանք աշունքը մեր դուռն ո՛չ ով չի գայ. յիքանիքը քաղենք, քաղցուահան ընկնինք, աշնան Մողնու ուխան անց կենայ, էկէ՛ք նշան բերէ՛ք. թէ չէ, կարմիր կով եմ, մին էլ տեսար՝ կաթս շուռ տուի, կովկիթը կոտրեցի։

— Շատ լաւ, ասեց Գարեգինը, թո՛ղ քու ասածն ըլնի, ընչանք քու ասած վախտը մի ամիս ու կէս անճախ ա մնում, էդ էլ կը համբերենք։

Սօսը գնաց վարդիթերի մոր ծիծը պաչեց, նա էլ նրա թուչը պաչեց ու հայր վեր քաղեցին։

— Տղէ՛ք, պատրաստուեցէ՛ք, թօռը վեր ունենք, գնանք ձորը, մի լաւ վադիւոր անենք, էս ի՞նչ ա, ո՛չ թաց ենք էլել, ո՛չ իրար չուր ենք շաղ տուել, կասես վարդիւոր չըլնի, հացից յետոյ ասեց Գարեգինը։ Նանի՛, պրծէ՛ք, դուք էլ գնացէ՛ք, մենք պաի էրթանք ձորը, ձուկը բռնենք, քէֆ անենք, խնամուն լաւ պատիւ տալով տա՛ր, հէն բարեկամութիւններս նորացաւ։

Էն էր վեր էին քաղում, որ մի ուրիշ գեղցի կնիկ էլ էկաւ էդ բաղչէն, գնաց Գարեգինին ղրաղ քաշեց ու հարցրուց Սօսի համար, թէ էս էն տղէն չի՞, որ իրիկունը ժամումը նստած խաղ էր կանչում։

— Հրամեցիք, ասեց, ի՞նչ ա որ։

— Ես ուզում եմ իմ աղջիկը տալ դրան, երիկուանից դէսը քանի տեսել եմ, սիրտս կպել ա, կարաս՝ դրան մի խօսքով հասկացրո՛ւ՝ քեզ մի խալաթ կը տամ, իրան էլ լաւ բաժինք։ Ես Ցուշականից Մէլիք Աւոմի կնիկն եմ, հէնց բարկ ու բարխանայ կը դնեմ, որ ձեր գեղումը դեռ տեսնուած չըլի. փառք Աստծու, ինչս ա պահ կաս, երկու բաղս ասես, թէ քսան, քսանուհինգ օրավար հողս ասես, թէ չուխա դուխանս, ինչ ասես, որ իմ տանը գտնուի ո՛չ։

— Նանի՛ չա՛ն, ասեց Գարեգինը, էս տըղէն իմ ազպէրս ա, ընչանք հիմի ազապ էր, համա էս օր ըտեղ նշան դրինք, Աստուած մինը զամաթ էր արել, որ էլաւ պրծաւ։

Խեղճ կնիկը որ լսեց ո՛չ, մտատակը ցեխն ընկաւ, անխօս յետ դառաւ, հլա էն գնալն ա, ինչ գնացել ա։

Սուրբ կարապետու ըխտաւորները քաշուեցին. մնացին մի քանի բաղչում չահէլ Աչտարակցի տղէք, որ դափ ու դուռնայ ածելով քէֆ էին անում։

Սրանք էլ իրանց պատրաստութիւններով վեր կացան, կամաց կամաց գնացին ձորը, չորահան էլան ու կխտահանիլ ընկան գետի մէջը։

Որն էլ չի ուզում չորերը թրչիլ, չուր են շաղ տալի, թէ վարդիւոր ա։

Իրար հէնց օրը քցեցին, որ տմկաւեցին (թրջուեցին), ծնած կով գառան, չուրը ծլծլալով ամէնքի փէչերին էլ չոչռում էր։

Լեզանալուց որ պրծան, իրանց թօռչին առան ու ընկան ձկնելի չանին։

Բացած թօռը սխալում չի, կարմրախէտ ա, որ դուս ա գալի։

Սրանք թօռ քցելով պտի գնան ընչանք Աչտարակ ու նոր ընտեղ դուս գան, գնան յիքա նոնցումը մի լաւ քէֆ անեն։

Գարեգինը հէնց ուզում էր իրանց խնպանոնցը ճամբու քցի, որ իրանք էլ գնան ձորը. մին էլ մի տարաբաղդութիւն պատահեց, Անուշը հիւանդացաւ։ Աբևը գլխին տուել ա. «խարփուխ էլած պէսէրին, ծուխն էր մհանայ»։

Ուրախութիւնը փոխուեց տխրութիւն, ձորն էլ մոքնելուց ընկաւ, ամէն բանն էլ. մէրը հո սեւսրտել ա։

Էս թօռունը քօմնա մնացին նատած, փուչնեը լծպին։

Գարեգինը սաքի մի քիչ բարկացաւ, որ բալքի գրկի տուն, համա տեսաւ, որ չէ, աղջկայ ուռնգը գառաւ պատի ծեփ։

— Աղպէ՛րտինք, ասեց հընկերներին, գուք ինձ մի՛ մնաք, գնացէ՛ք ձորը ձուկը կալէ՛ք, իմ գալը վրստ անց կացաւ (չը յաջողուեց)։

Տղէքը գնացին սրտները կոտրած։ Սօսը մէ-նակ ձեաց իր ոգիւմ աղպօր նեղ վախտն իրան պէտքական։

Կնանիքը՝ որը ասղով ա աղօթում, արշաւ-տալով ասում նիաթ (աչք) ա դիպել, որը մի կը-տոր հաց ու աղով՝ որը քարով՝ համա ո՛չ մին աղօթքն էլ կէս սև փողի չանց կացաւ։

Գարեգինը գնաց, որ ժամարարին բերի, մի բժշկութեան աւետարան կարդալ տայ։ Նրա քօռ բաղդիցն էլ ժամարարը քշերս անքուն աղօթք եր արել, սաղմոս քաղել, թնք եր ընկել, որ մի քիչ հանգստանայ։ Զարէն կարեց, գնաց մենծ տէր-տէրի մօտ։ Փառաւորի ինքը, էն սհաթը մաշտո-ցը դրուց կռնատակն ու հասաւ թուխթունը քա-շելով*։

Աղջկանը թնք էին քցել կանանչ խոտի վը-րայ՝ գլուխը մօր ծնկանը դրած, որ տէրտէրը վրայ հասաւ, աւետարանը կարդաց, «փարատեա՛» ասեց, մի քանի սև փող խէչհամբուր առաւ ու Աստուած առողջութիւն տայ ասելով՝ գնաց։

Ղօրթ ա, ասինք թէ, տէրտէրը հալիւոր էր, կամ ի՞նչ էր, աւետարանը մի քիչ կղկղայրուց, համա կարգին հաստատ ըլնի, ձեռը թեթև էր, ցաւը բօշացաւ էն սհաթը։

* Զգիտեմ, թէ այս ինչ սովորութիւն է, որ ինչպէս մեր եկեղե-ցու սպասաւորքը ֆարաջայ են հագնում քահանայանալու համար, իս-կոյն քՕախտոի տուփն էլ գրպաններեն են դնում, իբրեւ մի ամենահար-կաւոր բան քահանայութեան համար։

Վեր կալան երեխեն Աշտարակ, Գարեգինն ու Սօսն էլ հետները ղրից տալով։

Էկան հասան Մողնի, Սուրբ Գէորգումն էլ ուխտ արին ու վեր էկան Աշտարակ։

Աշտարակ մի՛ ասիլ, մի չհար (խաղաք) ասա՛. աչքդ լինչ սիրի, կըգտնուի. էն սհաթը, կնանիք էին էլի, քացախ բերին, ղրկեցին Յոլակենց պա-ռաւն էկաւ, նրա աղօթքը քար կը ճաքացնէր, աղօթեց ու ասեց.—վախիլ մէ՛ք, աչք էր դիպել էնից հիմի կը սպռանայ։ Ղօրթ որ, էն սհաթը երեխէն խտակ լաւացաւ (ի հարկէ շորն եր տուել)։

Գարեգինն ու Սօսը դուս գնացին դեղամէջ առուի ափը, լո՞նչ տեսան։

Գեղի մենծ մենծ իշխաններըը, աղէքը, տա-նուտէրը, մի խօսքով ով որ ընտեղ կային, էնից օրն էին ընկել, որ էլ չի էլած. իրար չուր են շաղ տալի, բրթում են, քցում առուն. որն էլ փախել հետու պատի տակին նստել ա, թաքուն ըղղով չուր են ղրկում՝ կարիցը չուռ տալի գըլ-խին։ Էլ ո՛չ աղայ են հարցնում, ո՛չ նօքար են ասում, քօմմա էլ դառել են իր քէֆին թուխս նստող թրչուած հաւ։

Էս էրկուան էլին, որ չոր էին, Հանավանքայ էին էկել։

Սրանց համար էլ աղայ Մռքատն աչքով ար-ուց, ըղղով քահանկներիցը չուրը գլխներին ածեցին։ Շատ մարդիկ էլ ղատի (դիտմամբ) իրանք էին գալի, որ թրչուին։

Գիտեմ ո՛չ, բայց թէ աէրոպէրները ազատ պրծնեն էդ խաղիցը։ Իմ խելքովը աէրոպէր չի, որ թէկուզ գործակալն էլ որ դար էս ուրախութիւնի վախտին, նրան էլ կը թրչէին, ոչովի սիրտ չէր առնուիլ. Վարդիւտրն ա, ո՛վ կարայ խօսալ։

Էս ուրախութիւնն արին ընչանք ժամի վախտը, յետոյ ամէն մարդ գնայ իրանց տունը. որը ուրիչ շոր ունէր, փոխեց. որն էլ չունէր, հին դուրչ-մուրչ (gligrshf) հագաւ ընչանք մէկէլնելի չորանալը, որ էքուց մեռելոցք ա, պահ գնան դերեզմաններն օրհնիլ տան։

Մեր Սօսի ու Գարեգնի հընկերնեն էլ ձորիցն եկել էին, ձուկն էին բերել, նրանք էլ գընացին իրանց քէֆին։

ԺԸ.

Վարդիթելի մէրը Հանամանքայ էկաւ տուն, մի քիչ կացաւ, քէֆը թողուց, խելքը գլուխն էկաւ, արած բաներըը միան ընկան։ Մնացել ա մոլորած՝ ունքերը կախ ա քցել, մտքի հետ ընկել։ Գիտի, որ հիմի մարդը տուն կը գայ, հարսները աղէքանցը կասեն էդ բանը, հիմի իրան պահ դընեն էրեն. հէնց բան ա արել, որ Աշտարակ դեռ լսուած չի, աւտոնը (poվոտմն) տակն ա ընկել. մարդի քաջքերը տեսել ա, ոնց որ «չալ օձ տեսնողը չալ չարխուից կը վախի». դողում ա. համա ի՞նչ, բանը բանից անց ա կացել։ Մտքումը

դրուց, որ մարդին մի սամթոլ ասի. «արջն իր ահէն կը գոռայ». բայլբի թէ մարդի սիրտը գոռանայ։ Համա չէր գիտում, թէ էս Աշտարակն ա, քու չորս պատի միջին որ կնգանդ հետ մի խորհուրդ անես, քարը վեր ունիս՝ տակը գնես, դուս գաս, էն սհաթը գեղի էն ծէրուհը կը լսես, ո՞ւր մնաց հիմի, որ աշխարհըն էս օր հանավանք ա էլել, էն էլ կնանիք։

Ինան առղ մարդին աչքալիս խօսացին, թէ կնիկդ աղջկանդ նշան դրուց քացքի թաւուր պռօշակի անելով։

Ոնց որ մի մարդ ասլանի ճուտը սպանած ըլնի, ասլանն էլ իմացած ըլնի էդ մարդի տեղը, ի՞նչ սրտով վրայ կը պրծնի նրանից լինալ (վrkժ) հանելու, էն սրտին Հեթումին աչքերն արինը կոխած, առաջները (ho՛ չունkr kղ) պրճտացնելով, դազանակը ձեռին դուռը նեքսև մտաւ ու դալա կնիկը։

Աբշաւիրն իմացել էր էս բանն ու հէնց ե՛ն սհաթին տուն մտաւ, որ հէրն ուզում ա ոտը դնի տան շեմքը. հօր աչքերիցն իմացաւ, թէ ի՞նչ կայ ու հարցրուց, թէ ո՞ւր ես տանում էդ փէսը։

— Թո՛ղ, գոռաց Հեթումը, ես հիմի նրան չհանց կատմ աղջիկ նշան դնիլը, ասեց ու տուն ընկաւ, աղէն էլ քամակիցը։

Կնիկը վախլուխիկը հէնց բակումն էր ձէնն առնել, էկել դռան քամակին կաննել. մարդը որ տուն մնաւ՝ ինքը դուս թռաւ։

— Աղջի՛, մերդ ո՞ւր ա, գոռաց հալիւորը։

— Ձեմ գիտում, գլուխը քաշ քցած՝ լացակրկնած պնչի տակին վնթվնթաց խեղճ անմեղ գառը։

— Գնա՛ կանչի՛ էս սհաթը։

Հարսներն էլ չարդախումը պատին են կըպել, կաննել։

— Ես դրան չհանց կը տամ, գլուխը ժաժ տալով՝ բարկանալով ասեց հալիւորը տղին. թո՛ղ մի տուն գայ, տեսնի, թէ աղջիկ նշան դնելն ի՞նչ կը նստացնեմ իրան։ Գիտե՞ս, որդի՛, ի՞նչ ա ասըել. գինովացել ա, էն սատանի խօսքիցը խափուել, մեզ խալխի մէջին թռուք արել. նա էլ հօ՛ աշխարհքումն սատանայ չըլնի հէրիք ա, մեզ հէնց օյին ա էկել, որ դրա մուխը մեր պնչիցը դուս չի գալ։

— Ի՞նչ ա արել, սաքի չիմանալով, հարցըրուց Աբշաւիրը։

— Բռնել ա էս փչին նշան դրել, պռօշակի անիլ տուել իր ձեռովը, էս Աստրծու իրաւունք ա՞. հէնց ասենք, ի՞նչ գլուխը քարոզն էր տալի՝ տալ. ո՞վ ա լսել մեր պապերիցը, որ աղջիկ տըղայ նշան դնելուս պռօշակի անիւն։

— Լաչէնց չի՛, այ հէ՛ր, ասեց Աբշաւիրը, ես լաւն իմացայ, գու ծուռն ես հասկացել. ասել ա, թէ կացէ՛ք ընչանք աչունք, թէ Աստուած դրսմաթ (արժանի) կանի, ձեզ կը տամ։ Էն սատանէն էլ ասել ա, բերէ՛ք պռօշակի անեն, չի թողել։ Ձե՞ս իմանում, որ Աչտարակ լուն ուղտ են չինում։ ասում ա. «խօսքի սուրը չի ըլնիլ, սխալը կըլնի». մի վախիլ, ըսենց բան չի ելել։

Էս ասելուս մենծ հարսը չարդախիցը լսեց, վազեց կէսօրն ասեց, թէ որ հալցնի, դու էլ ըսենց ասա՛. Աբշաւիրը բանը փոխեց։

Պառաւը հէնց իմացաւ, սաքի թէ բանից խաբար չի, աղջկայ կանչելովն ա գալի, տուն մնաւ։

— Ողորմի՛ Աստուած, ի՞նչ ա, ա՛յ մարդ, ընչի՞ ես ըսենց վռազ վռազ կանչել, ես էլ էն ա գալիս էի. անաչէնի մա՛րդ, էսօր տեսել չես, սիրտըդ պատռում ա. հալբաթ ըսենց պատի, ես ու դուն ենք իրար հարկաւոր, ի՞նչ ես ասում։

— Կրակ ու բոց եմ ասում քեզ, բարկանալով ասեց հալիւորը. էսքան վախտ ո՞րտեղ էիր կորել։

— Ո՛յ, զարմանալով ասեց կնիկը. լա՛ւ, էլ խի՞ ես բարկանում։ Հացից յետ վեր կացանք, Մոլնու խաչի տակին էլ մի քիչ գնջայանք, հովվեն ընկաւ՝ էկանք։

— Էս ի՞նչ բաներ եմ լսում, մի քիչ ձէնը ցածացրուց Հալիւորը. քեզ ո՞վ էր ասում, իմ աղջկանը նշան դնես, խօսք բաց անես առանց ինձ։

— Ըտուր համա՞ր ես նօթերդ (կնճիռն) կիտես, մասխարաճիճաղ տալով ասեց կնիկը, քու առնեն Աստուած չինի, ես եմ ասում, ի՞նչ ա ասում։ Հա՛, տուինք ա՛չ, առանք ա՛չ. տղայ էր, մեզ մատաղի վրայ զօնաղ էր արել խօսք ընկաւ՝ ասեցի, թէ Աստուած զամօթ կանի, աշունքը քեզ կը տանք։ Հիմի սրա համար ի՞նչ ես բարկանում, քու խերդ շատ ըլի՛, ըսկի հովսուլա (հաւերուրիւն) չունիս։ Կա՛ց, դու որ ասել չէիր, ես գալ չի՞ պտէի քեզ պատմիլ քանի՞ հետ դու ասել կըլես էս խօսքը, մին օր էլ ես ասեմ, էլ ի՞նչ կայ։

— Ձէ՛, չէ՛, ասեց մարդը. լսել եմ, որ նըշան ես դրել, պռօշտի ես անիլ տուել, կատարդ տաքացրել ես, չես իմացել՝ ի՞նչ ես անում։

— Ա՛յ մարդ, ունքերը վրայ տալով, զարմանալով ասեց պառաւը. չեմ գիտում, քեզ են ծուռ հասկացրել, թէ ինձ ես ուզում անխնչքացնիլ. խելքս հացի հետ էի կերե՞լ, որ ես էդ բանն անեմ, ես չե՞մ լսանում, թէ՝ որ մի տասը բալեկամ ունինք, մի քանն էլ թշնամի կունենանք. եա թէ չէ, ո՞վ ա լսել՝ Աչտարակ տղէն աղջկայ հետ պռօշտի անել տան, ես նոր օրէնք էլ չինո՞ւմ։ Ես որ ասի, թէ կենանք աշունքը, Գարեգինը վեր կալաւ.—Սօս չա՛ն, որ ըտենց ա, աբի՛ մի պռօշտի անենք իրար հետ, որ Աստուած մեր բանն յայդոդի։ Մէնակ ես հօ չէ՞ի, հազար հոգի կար ընտեղ, վա՛ռք Աստծու։ Նստի՛, նստի՛, Աստուած բալքի քեզ մի խելք տայ, որ ամէն բանը ծուտ ծուտ լսես ոչ՝ դաս մեզ դինդինի խաղացնես (անհանգստացնես)։ Էդ էլ դառաւ ո՛չ էն, որ ասում էիր, սաքի թէ ես մեր Թէլլիզարի աղջիկ վախտը, Վահանի ձեռովը մի աղլուխ ղրկած ընկիմ (թեպետ ձշմարիտ է այդ), բաս ինչի՞ չէի ղրկել։ Աբի՛, աբի՛ մատաղ բերեմ՝ կերէ՛ք, մի մին թաս էլ խաչալուայ խմեցէ՛ք։

Մարդի տամարը կակղեց. կնիկը հէնց բաներ ասեց, որ թէկուզ իր աչքովն էլ տեսած ընկեր, լսածին աւելի կաւատար։ Նստացրուց մարդին, մատաղ բերուց, դրուց մարդի ու աղի առաջն ու ինքն էլ կշտաներին նստեց, սկի (հաճոյախօսութիւն) անելով՝ հէնց արխէին քցեց, գլուխը կլեկեց մարդի, որ իր բերնովն ասեց. թէ հիմի տղէս էլ որ ասի, աւատալ չեմ, իմացայ, որ Աչտարակցոնց բերանուտը ճշմարտութիւն չկայ։

Համա չէ՛, տուաը կը ոտնատորի, համա չի գնալ մին օր կը յայտնուի։

Հացի վրայ նստած էին, դեռ Հեթումի սըրտի փուքը նոր էր նստել, որ մենծ տղէն տուն մտաւ։

— Բարի բիկուն, նանի՛, ուխտդ ընդունելի ըլի, ասեց. էս ի՞նչ են ասում, բիրդանբիր (յանկարծ) դուս կանենցի՞ր, աղջկանդ նշան ես դրել

պռօշակ անելով, էդ իակի քեղնից չի. փեսին ե՞րբ պիտ տանն ըներնք։

— Ես չեմ տառում, որ տուտ չի ըլնի՛ն, ասեց Հեթումը, ես տառում եմ, սրանք ինձ քարով քարկոծում են, քեղ ո՞վ ասեց, որդի՛։

— Ո՞վ պիտ ասի, ասեց տղէն, դուս էլի՛ք դուռը, ամէն տեղ էդ են խօսում, գեղը դրըմբդրմբում ա, Աչտարակ թաքուն բան կըմնա՞յ։

— Ը՜հ, հողս դրանց տատասայ գլխին, ասեց պառաւը, թո՛ղ էնքան հաչան, հոգիները դուս գայ. քա՛ խիղա՛ն, էս ի՞նչ կրակ ա, ամօթ չունին ըսոնք, ինչ բերաններիցը դուս ա գալի, ըցում են. փառք Աստծու, ոչ ով չի մեռել, երես երեսի կըննինք, էն վախտն ի՞նչ կանեն։

— Ես չեմ գիտում, ասեց տղէն, տատն մարդ աչքալիս խօսաց ինձ, ես էլ ամանչելուց տառում էի, աչքներդ լիսի կենայ։

Պառաւն էնքան արուց, որ տղէքանց սիրտն էլ գողացաւ, մաքնելը ծռեց, լսածնելը տուտ հանեց։

Վերջը, որ թեք ընկան քնելու ինքն ու մարդը մի տեղում, կամաց, կամաց խօսք բաց արուց։

— Ա՛յ մարդ, ասեց. սաքի հէնց խմանանք, թէ մի կէս սհաթ էլ տուինք. Սօսն ի՞նչ պատկաս տղայ ա։ Փա՛ռք Աստծու, էրէկ՝ մէկել օրը դու էիր մնացել արմացած նրա արած բանի վրայ, տաղ գեղն են խմացել նրա խելօքութիւնը։ Աչխատասէր ասես՝ Սօսը. սէր, սօհբաթ անող ասես՝ Սօսը. քաղցր տղայ ասես՝ Սօսը. քէչ չատ էլ մուրք ունէն, էլ ի՞նչն ա պակաս։ Սաքի դու ի՞նչ էիր իրիկունս էնքան բարկացել իմ վրայ. քու խելքդ՝ չեմ իմանում, գալիս՝ դնում ա, թէ ի՞նչ ա։ Ես չէի ուզում, որ էդ բանն ըլի, հիմի որ ասենք էլաւ, դու ընչի՞ ես նազ անում։ Ես արած էլ ըլնիմ, քու խօսքովն ա, որ ամէն վախտ նրան գովում էիր։ Ես ուզում էի տալ Բագրատի տղէն, դու ասեցիր. տղէն փուչ ա. ուզեցի տալ Երուանդի աղպօր տղէն, ասիր. հօր աղպօր կնկայ աբով (յուսով) ա մնացած. ուզում էի տալ վասակի տղէն, դու ասիր. գժատուտ ա։ Դու ուզում ես տալ Գարեգնէն, համա էդ բանը մտքիցդ հանի՛, նա քչեր ցերեկ աչխատում ա Սօսի համար, ինքը մի անդամ քիր ա ասել մեր աղջկանը, Սօսին էլ աղպէր։ Գարեգնի սիրտը ընտով կարաս չահիլ, որ աղջիկդ տաս Սօսին։ Հիմի ի՞նչ ես ասում. էն մարդն երկու տարի ա, որ մեր աղջկանը սիրել ա. պտի նրա մեղքի տակն ընկնիս, գժուացնե՞ս, թէ տալ պտես։

— Ա՜յ կնիկ, գի՞ժ ես դու, ի՞նչ ես, ասեց Հեթումը. մի վախտ կար, Սօսի անունը տալուս թուր ու թուրանք էիր բանացնում, հիմի դու ես տամարս մտել, որ տամ. էս երևում ա, որ ինչ ասում են՝ դրուստ ա։

— Դէ տեսնում ես, ասեց կնիկը, ես կակղել եմ, դու էլ բե՛ր տանք։ Քեզ դրուստն ասեմ, էն տղին հէնց որ Սուրբ Կարապետ տե-

ապ, վրէս մի ապրանք էկաւ, կասես, թէ մինն ինձ ասող ընկեր, թէ էս տղի մեղքը յաւուր դատաստանին քեզնից պտի ուզեն։ Ես, տաքի Աստուածածնից թաքուն չի, քեզնից ի՞նչ պահեմ, խօսք եմ տուել, որ ընչանք աշունք մարդ չի՝ զրկեն, յետոյ տանք։ Բալքի բարին էս էր, խեղճ երեխի ճամբին քար քցին էլ մեր հոգուն մեղք ա։

— Հլա ինձ ասա՛ տեսնեմ, պատասխան տուուց մարդը, պռօշաին դրուստ ա՞, թէ ոչ։

— Հա՛, ի՞նչ ա, իմ աղջիկը խալխի աղջկերանց պէս հօ գեղըցաւոր չի՞ պտի նշան դնէի. պռօշաի չարին, Գարեգինը մէնակ ճակատը պաչեց, ես էլ տղի թուշը պաչեցի։

Վեց տղայ ունիս, իրեքը քու խօսքովն են պսակուել, էս իրեքն էլ քեզ, էգ մի աղջիկն էլ ես պտի մարդի տամ. տղէն հօրն ա, աղջիկը մօրը։ Ես իմ յօժար կամքովը տուի Սօսին, իմ մեղքիցը դուս էկայ. համա էս էլ եմ հալի արել անկալներուսը, որ թէ ընչանք աշունք բանը ժաժ են տուել, կը քանդեմ։

— Փա՞ռք քեզ Աստուած, հոգէց քաչելով ասեց Հեթումը, ընդոր են ասել, թէ Աստուած աղատի կնկայ չառիցը (փորձանք). կնկայ էլմը— գէլմը (խորտանկուրիւնը) մարդ չի իմանալ, ի՞նչ ասես, որ կնանիքը չանեն։ Ընչանք հիմի սրտիս բարկացած վախտն էր, հանդարտացրուց. մոքուս մը դրել էի, որ մի լաւ սալմարդ անեմ, ես էլ փոչիմանակի, թէ էս ի՞նչ միտք էր. հիմի էլ ընչ-

չե՞ր ա խօսում։ Ջա՛նամ, դու գիտես, քու աղջիկը, ես բան չունիմ. ըստուց յետոյ մեղքն էլ քու չինքը, վարձքն էլ. խեր ու շառը քեզ։ Հիմի էքուց աչքալիս պտի գա՞ն, թէ չէ՛։

— Չէ՛, ասեց կնիկը, նշանն աշունքը պտի ընկի, հիմի մէնակ խօսք ենք տուել։

— Դէ լա՛ւ, լա՛ւ, ի՞նչ արել ես՝ արել, Աստուած չնհաւոր անի, Աստուած էլածն օրհնի, սուս կա՛յ քնենք, ասեց մարդն ու տաղ արին քնեցին, որ էքուց վաղ վեր կենան, մեռլոցք ա, գնան գերեզմաններն օրհնել տալու։

ԺԹ.

Աստուածածնի աթոռ* կիրակի օրն էր, հաւոզները լաւ հասել էին. իծապատուկը, քիշմիշին, ասկաբին չաւուշտուրին, մախալին, կոմռունջը, եղնաչքը, ճիլալը, եղանպարին, մէկ խօսքով ինչքան ալուան (ազնիւ) հաւոզներ կան, թլթլում էին, մէնակ խարջու հաւոզն ու հալապին (խաղողների անուններն են), դեռ մի քիչ թթուռւթիւն ունին իրանց մէջնից։

Գարեգինը գիտէր, որ էս օր չըի հերթը Սօսենցն ա, վեր կացաւ գնաց դպա նրանց յիքին մի քիչ հաւոզ ուտելու։

* Աթոռ ասում են այն պահին, որ կամաւոր պահում են կանայքը վարդավառի, Աստուածածնի և Սուրբ Խաչի պահոց առաջին շաբաթը։

ասյ, վրէս մի սարսափ էկաւ, կասես, թէ մինն ինձ ասող ընկեր, թէ էս տղի մեղքը յաւուր դատաստանին քեզնից պտի ուզեն։ Ես, սաքի Աստուածանից թաքուն չի, քեզնից ի՞նչ պահեմ, խօսք եմ տուել, որ ընչանք աշունք մարդ չի՝ զրկեն, յեսոյ տանք։ Բալքի բարին էս էր, խեղճ երեխի ճամփին քար քցիլն էլ մեր հոգուն մեղք ա։

— Հլա ինձ ասա՛ տեսնեմ, պատասխան տուուց մարդը, պռօշակին դրուստ ա՞, թէ ոչ։

— Հա՛, ի՞նչ ա, իմ աղջիկը խալխի աղջկերանց պէս հօ գեղըցաւոր չի՞ պտի նշան դնէի. պռօշակ չարին, Գարեգինը մէնակ ճակատը պաչեց, ես էլ տղի թուշը պաչեցի։

Վեց տղայ ունիս, իրեքը քու խօսքովն են պահակուել, ես իրեքն էլ քեզ, էդ մի աղջիկն էլ ես պտի մարդի տամ. տղեն հօրն ա, աղջիկը մօրը։ Ես իմ յօժար կամքովը տուի Սօսին, իմ մեղքիցը դուս էկայ. համա էս էլ եմ հալի արել անկալներուս, որ թէ ընչանք աշունք բանը ժամ են տուել, կը քանդեմ։

— Փա՜ռք քեզ Աստուած, հոգէց քաշելով ասեց Հերթուսը, ընդուր են ասել, թէ Աստուած աղատ կնկայ չառիցը (փոռձաճի). կնկայ էլմը— գիլմը (խոռաճանկոթիւնը) մարդ չի իմանալ, ի՞նչ ասես, որ կնանիքը չանեն։ Ընչանք հիմի սրտիս բարկացած վախան էր, հանդարտացրուց. մտքուս մըս դրել էի, որ մի լաւ սալմարդ անեմ, ես էլ փոչիմանեցի, թէ էս ի՞նչ միտք էր. հիմի էլ ընչ

չե՞ր ա խօսում։ Ջա՛նմ, դու գիտես, քու աղջիկը, ես բան չունիմ. ըսատուց յետոյ մեղքն էլ քու չինքը, վարձքն էլ. իէր ու չառը քեզ։ Հիմի էդքուց աչքալիս պտի գա՞ն, թէ չէ՛։

— Չէ՛, ասեց կնիկը, նշանն աշունքը պտի ընկի, հիմի մէնակ խօսք ենք տուել։

— Դէ լա՛ւ, լա՛ւ, ի՞նչ արել ես՝ արել, Աստուած չնհաւոր անի, Աստուած էլածն օրհնի, սուս կա՛յ քնենք, ասեց մարդն ու տաղ արին քնեցին, որ էքուց վաղ վեր կենան, մեռլոյք ա, գնան գերեզմաններն օրհնիլ տալու։

ԺԹ.

Աստուածածնի աթոռ* կիրակի օրն էր, հաւողները լաւ հասել էին. իծապատուկը, քիշմիշին, ասկեաբին չաուշատուրին, մախալին, կոթռուննը, եղնաչքը, ճիլալը, եղանդարին, մէկ խօսքով ինչքան ալուան (ազնիւ) հաւողներ կան, թլթլում էին, մէնակ խարջու հաւողն ու հալապին (խաղողիների անուններն են), դեռ մի քիչ թթուռթիւն ունին իրանց մէջին։

Գարեգինը գիտէր, որ ես օր չըի հերթը Սօսենցն ա, վեր կացաւ դնաց դպա նրանց յիքին մի քիչ հաւող տառելու։

* Աթոռ ասում են այն պահին, որ կամաւոր պահում են կանայքը վարդավառի, Աստուածածնի և Սուրբ Խաչի պահոց առաջին շաբաթը։

Հէնց Ուռուցոզը անց էր կենում, տեսաւ, որ իրա փափակ աշակեաը, որ Վարդվիթերի պըտիկ ապպէրն էր, վաշէվաշ էկաւ քամակիցն ու թևը բռնեց։

— Ի՞նչ ես ասում, յետ մոխկ տալով հարցրուց Գարեգինը։

— Գիտես ի՞նչ կայ, ասեց փափակը, բանը փոխուեց, ճար ունիս՝ տե՛ս. Աշաւիրի մտքն ընչանք հիմի թէ ծուռն ա էլել, թէ դուզ ա էլել ձեր հետ, չեմ իմանում, համա հիմի իմացուեց. երէկուանից դէսը հարիր հետ կռիւ ա քցել, թէ կամ թուրը վեր կունեմ ինձ կապանեմ, կամ թէ չէ Սօսին աղջիկը չեմ տալ. ես պտի տամ Զարմայրի էջմիածնեցի քաւորին. չեմ գիտում ի՞նչ ա դրա մտքը, որ Զարմայրի հետ բարեկամութիւն ա անում, ձեզ հօ լա՞ւ յայտնի ա։ Խեղճ հէրս, մերս, ապպէրտինքս կաննել են մի դիհ (կողմ), նա հէնց ասում ա, չի ըննիլ կերթամ Սօսին կապանեմ, ես էլ հետը կը կորչիմ ու նրան չեմ տալ։ Հէրս ինչքան ասեց, թէ ա՛յ փչանաս ա՛չ դու, խեղճ ես. մի վախտ կար, գլիններս տանում էիր, թէ տանք Սօսին, հիմի ի՞նչ դառաւ, որ մեզ ուզում ես խալխի միջին գեռինը կոխիլ. էքուց աչքդ կը հանի, ամէն տեղ կասի, թէ պռօշաի եմ արել, տունն էլ գնացել, էկել եմ։ դու չե՞ս գիտում, որ Աշտարակումը վատ բանը թէզ ա աչկարայ ընում։

— Չ՛է ասում ա, ես ինձ կապանեմ, թէ որ իմ խօսքը չի ընկի։

Հէրս էլ բարկացաւ, թէ դեռ իմ աղջիկը չահել ա, նրա հէրն էլ օրհնուած՝ մէկել մէկսէլինն էլ, պտի ըտուց յետոյ իրեք տարի էլ պահեմ, թո՛ղ ա՛վ ուզում ա, կենայ ընչանք կատարելութիւնին հասնիլը։ Նա էլ ասեց. լա՛ւ, կամ պտի չի տաս էս տարի, կամ թէ չէ պտի տաս իմ ասած տղին։

Գարեգինը, որ էս լսեց, մտաը կծեց։

— Լա՛ւ, ասեց փափակին, դու քուրդ ա՛ տարխէլին կենայ, էդ թաւուր բաները ոչընչի տեղ չի քցի, ես իմ չապկումը կհնող չեմ։ ու ինքը հեռացաւ։

Մի քիչ տեղ յառաջ գնաց ու յետ դառաւ դպա Վարդվիթերենց դուռը. ծեծեց՝ Վահանը դուս էկաւ։

— Մի Աշաւիրին դուս կանչի, ասեց, բան ունիմ խօսալու։

Վահանը գնաց, Աշաւիրն էկաւ։

— Օ՜հ բարով, Գարեգին ջա՛ն, սիրտ բիրտ անելով հարցրուց. աշայ բաշայ (ի՞նչ նորութիւն), խէ՞ր ըլի։

— Փա՛ռք Աստծու, խէր ա, ասեց Գարեգինը, քուչումն անց էի կենում, միտքս ընկաւ, դուս կանչիլ տուի, մի քիչ գրից տանք։

— Ես չեմ գիտում, ընչի՞ ես տխրած, հարցրուց Արշաւիրը, ըսկի քեզանից չի։

— Ոչինչ քան չկայ. մեր պատիկ երեխեն հիւանդ ա, քէֆս փիս ա. համա քշերս մի երազ եմ տեսել, Աստուած խեղը վրայ բերի։

— Երազդ երբը կարդացողի կշտին կըլի բա՛ց, տե՛ս էլի, ասեց Արշաւիրը. համա էլի թո՛ղ ըլի, ասա՛ տեսնենք ի՞նչ ես տեսել։

— Ա՛յ ինչ, ասեց Գարեգինը. հիմի ես ու դուն մի չիքու կանանչ ափում էինք, մի թաք խնձորի չիս կար մեր կշտին. էն չիսն էն սհաթը ծաղկեց, բար բռնեց ու դառաւ մի կարմիր խնձոր. հէնց անուշ հոտ ունէր, որ մեր քունը գալիս էր։ Էս խնձորի հոտին հաւաքուեցինք ինչքան մեր գեղումը մարդ կար, վազեցին ամէն մարդ, որ քաղեն։ Մին էլ էն դհիյը մի հալիւոր, սիպտակ լոի պէս մարդ, գլուխը երկնքումը, ոտները գետնումը՝ ծանր ծանր դուս էկաւ։ Ծեսնողը վչաքաղուեց ու յետ քաշուեց։

Գալիս էր էդ մարդն ու ձէն տալի.—Ինչ որ ձերը չի, մօտ մի՛ էրթաք։

Էկաւ կանգնեց, երկար կուռը մեկնեց ու քաղեց խնձորը, աչքերը դէս ու դէն քցեց, դուս եբևացիր երան։

— Ա՛ռ, ասեց, էս խնձորն ես քեզ եմ տալի, որ դու ում ուզենաս, նրան տաս։

Մօտ գնացիր, ձեռը պաչեցիր ու առար։

Համա տալուս ասեց, թէ ինչ կանես պրա՛, վերջը փոշմանես ա՛չ։

Հէնց որ խնձորն ընկաւ քու ձեռը, ամէն մարդ էլ էկան քեզ աղանչաք արին, որ իրանց տաս։

— Ձեռս դնայէ՛ք, ասիր դու, էս խնձորն առաջ ես ու Գարեգինն ենք տեսել սրանն ա։

Ձեռդ ինձ կանչեցիր, թէ արի՛ ա՛ռ։

Ես էլ հէնց չնորհակալութիւն արի, ձեռիցդ առայ, մի սպիտակ չիթի մինթանաւոր (շորերով) հարսը, աչքերը դեղ դրած, ճակատը բաց, ըստուր ընտուր դէն քցելով, էկաւ քեզ ասեց, թէ ա՛ռ ինձ տո՛ւր, ղրկիլ պատմ էլմիածին իմ քաւորին զատկափայ։

Դու առաջ ասիր, թէ ես մի հետ սրան եմ տուել, թո՛ղ դու էիր թէզ էկել։ Համա յետոյ չեմ իմանում, մէջ տեղն ի՞նչ անց կացաւ, հէնց իմանում եմ, թէ հարսը քեզ աչքով՝ ունքով կաշառք խոստացաւ, էկար, որ ձեռիցս խլես տաս նրան։

Մէջներս մի կռիւ ընկաւ, ձեռիցս խնձորը թռաւ, հալիւորը բռնեց ու մենք իրար բռնած՝ ղարթնեցի, էլ չեմ իմանում, ինչ էլաւ։

— Աստուած բարին կատարի, ասեց Արշաւիրը. բայց ես քնել։

— Ինչ ուզում ա՝ թող ըլնի, ասեց Գարեգինը, համա քեզ ասեմ; Արշաւի՛ր, որ մեր մէջը կռիւ պատի ընկնի. ես էֆեմէրտուն մտիկ տուի,

ասեց. երազը քառասուն օրն կատարի, տեսնենք ինչ պատ ըլնի։ Դէ ծնաս բարին, ես էկել էի, որ քեզ էս երազը պատմեմ ու գնամ, ասեց ու հեռացաւ։

Գնում ա ու ճամբին մտք անում. թէ Սօսին ասեմ, վայ թէ սիրտը կոտրի, տամլայ (կաթուածմ) վեր բերի. թէ չասեմ, վայ թէ ըստուց յետոյ յիրականի պէս վարուի նրանց հետ, ինչ անեմ։

Ըսէնց մտք անելով՝ գնաց դպա Սօսենց յիքին ու դեռ չէր հասել, տեսաւ, որ Սօսը բահն ուսին, կաւառները կարելով՝ գալիս ա։ Հէնց որ իրան տեսաւ, մի քաղցր ժմռալով մոտիկ ուուց ու էկաւ դպա իրան։

— Բարի լիս քեզ, ասեց Գարեգինը, քչերս ինչքան ես ըրել։

— Ներքի ածերը պրծել ենք, ասեց Սօսը, էս յիքին էլ հիմի կը պրծնեմ։ Վարդիթերենց ածերիցն էլ մի տախտակ ըրել եմ՝ իրանք տաննը քնած։

— Սօս, ասեց Գարեգինը, ընչի՞ չես դու քու երէխուԹիւնը Թողնում. քեզ ո՞վ էր ասում, որ նրանց յիքին ըուր արա՛, Թո՛ղ ինչ ուզում ա, ըլնի. ես քեզ ասում եմ, որ էլ ըստուց յետոյ ըսէնց երեխայ երեխայ բանի չբռնես։

— Քեզ մի բան եմ ասում, Գարեգին ջա՛ն, ասեց Սօսը, աւէն վախտ Վարդիւորիցն առաջ Արշաւիրն ինձ որ տեսնում էր, հետս խնդում,

ծիծաղում էր. հիմի էս քանի հետ ա տեսել ա, երեսիս մոիկ չի տուել, ըստում մի բան պատ ըլնի. ի՞նչ ես ասում դու։

— Ի հարկէ, ըսէնց պատ ըլնի, ասեց Գարեգինը, առաջ քեզ հետ աղպէր տղի պէս էր վեր ու նիստ անում, հիմի մարդը միըզայ (անհարազագ) ա, պատիւը ծանրացել ա, դու պատ ըստուց յետոյ նրա հետ համարձակ չըլնես։ Հէրը հո՛ որտեղ կաննած ըլնի, դու բայ պատ Թողաս, ընտեղանց քաշուես. նրանց տան յետին երեխին էլ պատ պատիւ տաս։ Համա Թէ ինձ կը լսես, ընչանք աշունքը նշան դնելը նրանց ոչ մրնի հետ չես խօսալ, տեսնելուս աչքերդ գետինը կը քցես, կը քաշուես, սաքի Թէ չես իմացել։ Մէրն ինձ տեսաւ, խնդրեց, որ քեզ ասեմ՝ ընէնց անես, խալխի բերանը խօսալու բան չտաս։

Գարեգինը, ղրկի՛ ա, Սօսի գլխատակը բարձ դրուց, քնացրուց, համա ինքը մտքի հետն ընկած՝ մի քիչ հաւոզ քալեց, պղկի մէջը յըրուց ու յետ դառաւ տուն։ Էլ ընդուց յետոյ Թողած իրա բան ու գործը, ուշ ու միտքը քցել էր Սօսի դարդը հոգս անելու. ընչունքի մի հետ չինքն էր առել պատ գլուխ տանէր. «Ուզողը նիստողը կուզեկուզ մեն չի գալ» էլ ըստուց յետոյ ամմօթ մտմօթ վեր պատ կնի։

Հէնց էկաւ տուն, հաւոզը վեր դրուց, մին էլ Արշաւիրը դուռը ծեծեց ու ասեց, որ դուս գայ, բան ա ասում։

Գարեգինը դուս էլաւ ու իրար հետ գրից անելով՝ դպա ներքև գնացին։

— Էրթանք մեր տունը, ասեց Աբշաւիրը, մի քիչ բան ունիմ խօսալու, էլմախատպի ասէի, համա ախրած էիր, խօսք չի բայց արի։

Հէնց որ գնացին Աբշաւիրենց օթախը, ասեց Աբշաւիրը. աղպէր, մենք էս չորս պատի մէջին մի բան պատի խօսանք, ես՝ դու, մին էլ Աստուած, ինչ որ բերաններիցս դուս գայ, ըստեղ պատի քարը վեր կալած, քարի տակին դրած, որ էս տանիցը դուս չերթայ։

— Թո՛ղ քու տատծն ընկնի, ուսեր ժաժ տալով ասեց Գարեգինը։

— Ես քեզ կանչեցի, ասեց Աբշաւիրը, ընդուր համար, որ իմ մէրս իրա բարի յօժար կամքովն իր մենծացրած աղջկայ վրայ երք (իրաւունք) ա ունեցել, տուել ա ձեր Սօսին. հիմի էն օրուանից դէսը մեր տունն արդէն թրաչէն (արածուրիւն) տանում ա. էն իրիկունը քիչ մնաց, որ հէրս մօրս սպանում էր. ինչ դիւչի բալով (ձեռնուրեակ), թալով-թուլով (ինարով) պրծացրել եմ։ Մենծ աղպէրս կանչել ա, թէ ես մի օր նրա համար մի գաղ չիմ չէ՞ի առել, որ ինձ էլ մի բան հարցնէիք. հէրս հօ իրա աղջիկն ա. ուզենայ Թուրքի կը տայ. ես մնացել եմ մէջ աեղը կրակի մէջին էրուելով։ Թէ հօրս դիմը պահեմ; մօրս վայն ա. անմահ անդրօղ հէրս կպանի. ճարս կարել ա՝ մօրս դիմն եմ կանչել թէ

լաւ ա արիլ, տուել ա, աղջիկը մօրը կը հանի։

— Հիմի ես քեզ ըստուր համար կանչեցի, որ մէրս յատուկ զրկեց քու մօտը, ասում էր. իմ ձեռն ա քու վէշը, ինձ ազատի՛ էս գերութենկից. հէնց իմացի՛, թէ հօրդ մի ժամ ես անում. հիմի դու գիտես, ինչ ջուզաբ ուզում ես՝ տո՛ւր։

— Գիտե՞ս ինչ կայ, Աբշաւի՛ր, խօսքդ էլ կարում եմ, ասեց Գարեգինը. ես ո՛չ անատուն եմ, որ վէշի առաջն անես, որտեղ ուզես, ընտեղ արածացնես. ո՛չ երեխայ եմ, որ մի լոլոկ (պտուղ կամ ինչ ու իցի) տաս, խաբես. դու բերանդդ բաց արիր, ես մէտքդ հասկացայ. ես իմանում եմ, որ քչերուանս երազը սուտ չէր, ասիլդ հիմի ի՞նչ ա, ասա՛, պահիլ մի՛։

— Ամա՞ն, վա՛յ գլխս, ափրմնելով ասեց Աբշաւիրը. թէ որտուում սուտ ըլնի, իմ երկու աչքիցս դարտակ նստիմ. դու հիմի կարծիք կանես, թէ ես քեզ հետ դռնելով ըլնիմ խօսում. ով որ երեսով ա խօսում, երեսը չուռ անցնի. դու իմ սիրտը հօ լա՛ւ գիտես։

— Հերի՛ք, հերի՛ք, հոգուդ մեղք ա, օրթուում մի ուտիլ, ասա՛ տեսնենք, ի՞նչ անենք, թահր անելով ասեց Գարեգինը. ես չեմ ուզիլ, որ մի մարդի խաթեր համար մի տուն արին ընկնի. էդ իմ հոգուցը հեռու ա։

— Տե՛ս ի՞նչ, ասեց Աբշաւիրը. մօրս հիմի կը կանչեմ ըստեղ. նա քեզ հետ քաղցր քաղցր կը

խօսայ, համա դու ախրածի պէս ասա՛, թէ՝ զորթ ա, էն օրը գինու քէֆ էր, գլխներս տաքացած էր, մի բան արինք, համա մենք փոշիմանել ենք, էգ աղջիկը չենք ուզում, աղէն յիտ ա կաննել, ինքըն էլ պատիկ ա, մեզ ձեռք չի տալ, ում կուզէք՝ տուէ՛ք։

—Ես քեզ խօսք եմ տալի, թէ կուզես իրիկունը գնանք ժամը, պատկերքի առաջին երկու մոմ վառի՛, անցնեմ, որ էս օրէն էքուց՝ էգ աղջիկը ձեզանից հանեմ ո՛չ. կուզես հէնց հիմի մնատանիքը մատից հանեմ (ասելով հանում ա), քեզ տամ, քունն էլ ինձ տո՛ւր, որ Աստծու նշան ընենի. ընչանք յիտի չունչս արինս թափեմ, որ ա՛չունքը, ոնց որ մերս ասել ա, նշան դնեմ։

— Արշաւի՛ր ջան, գիտե՞ս ինչ կայ, ասեց Գարեգինը. զորթ ա, ասած ա, թէ «չատ գինեցող աղուէսը չուխտ ոտով թալաք կընկնի», համա ես էն աղուէսներիցը չեմ։ ես քեզ էլ ասեցի, թէ երեխայ չեմ, որ մի կտոր փափա (հաց) տաս, ինչ ուզես, անես. ես հիմի, որ իմ բերնովս ասեմ չենք ուզում, մին էլ ի՞նչ երեսով պատմ գալ աղջիկ ուզելու. մենք ղօռով ձեր աղջիկը ձեր տանիցը թուր ու թուանքով չենք դուս քաշել, փա՞ռք Աստծու։

— Ձչմարիտ ա, մեր աղէն էս երկու տարի ա, որ դրան սիրել ա, համա ղօռի բան չի, կը տաք՝ դուք գիտէք, չէք տալ՝ դուք գիտէք. «որտեղ դու գիտես, ընտեղ կռիւ չի ընկիլ»։ Մերդ

ինքը կանչել ա, ինքը ձեռք ձեռքի տուել, ինքն էլ խայխին խնդրել, թէ ասէ՛ք. Աստուած չընհաւոր անի։ Դուք բաս չէ՞ք ամանչիլ էն վախտը. Աշտարակցոնց լիզուի տակիցը կարա՞ք դուս գալ. կասեն՝ Սօսը աղջկայ հետ պռօշտի արաւ ու յիտ դառաւ. մեզ համար ոչինչ, դուք խայտառակ կըլինէք։

— Մեզ համար էլ ոչինչ, ասեց Արշաւիրը. դէ որ չես ուզում ըտենց ընկի, արի՛ մի բան էլ միտք անենք. մերս կը դայ ըստեղ, քեզ կասի երեսահանից, թէ—ձեր կորուսսը մեզանում չի, յիտից թաքուն էլ կասի, թէ—Արշաւիրի հետ նշան տուէ՛ք, թո՛ղ մնայ ընչանք աշունքը. ըստուր հաւան ե՞ս։

Գարեգինն ընչանք ըսօր խաբուած չէր, համա հիմի խաբուեց. ինքն էր ասում, թէ ես թալաք ընկնող աղուէս չեմ; համա ընկաւ։ Խօսք տուում։ Միտք արաց, թէ ես գիտեմ, որ մերն էլ, հերն էլ, մեկել ապպերտինքն էլ դաբուլ (հաւանական) են, սա ա մենակ, որ չի ուզում տալ։ Մերը, որ իր բերնովն ասի նշան տուէ՛ք, առէ՛ք, էլ սա ի՞նչ պտի անի։

Արշաւիրը հէնց որ Գարեգնի բերնիցը խօսքը դուլացաւ, նամի՛, ասեց, ըստեղ, ես գալիս եմ։ մնաս տուն, կպաս մօր երեսիցը, թէ արի՛, Գարեգինն ըստեղ ա, ասա՛—ես հիմի կասեմ էլ չեմ տալիս, մեր տան խրթմունքը դնչացնելու համար, համա աշունքը կը տամ; թէ կուզէք, Ար-

չաւիղի հետ նչան տուէ՛ք, թողէ՛ք ճնայ. կամ ասեց, ալի՛ ըսէնց ասա՛, կամ թէ չէ (դանակը ջիբիցը հանելով) էս դանակը կոխում եմ փորս։

Մէրն էլ գիտէր, որ տղէն գժատամալ ա, վախեցաւ, ընկաւ քամակիցը, էկաւ օթախը։

— Գարեգին չա՛ն, ասեց պառաւը, ի սէր Աստծու, ինձ թափի՛ էս դերութիւնիցը, ալի՛ ընչանք աշունքը հօլայ տա՛ր. ես քեզ ասում եմ։ ես է՛լ տալիս չեմ՝ դու էլ ըսէնց չաւ արա՛. հաւիս թէ կուզէ՛ք, դուք հիմի նչան դրէ՛ք սրա հետ, էն նչանն ընկի Աստծու նչան, որ ես իմ խօսքին տէր եմ։

— Խնամի՛, ասեց Գարեգինը, սաքի որ դերուստ էլ չուզաք անէք, թէ չենք տալի, ձեր քեֆը ա. հաւիս ընչանքի ասում ես, թա՛ղ քու խօսքըն ընկի, ես պրան զաբուլ եմ։

— Դէ՛ հիմի դու գիտես, ես գլուխ չունիմ, ասեց մէրը տղին, ինչ կանես, արա՛, ու ինքը դուս դնաց։

Գարեգնի մտաին էլ կար մի մտատնիք, Աւշաւիլինն էլ. դրանք հանեցին մտատնիքնէրը, փոխեցին, թէ ով որ էս խօսքիցը յետ դառնայ, նրա երեսը յետ դառնայ, էս ընկի մեղ նչան։

Երբ որ Գարեգինը դուս գնաց, Աւշաւիլը մտաւ տուն, կպաւ հօրն ու մօր չնքիցը, թէ խօսքներս յետ առանք. դէ՛ բերէ՛ք իմ ասած էջմիածնեցուն տուէ՛ք։ Հաւիս իր ասածն էլ չէլաւ։

Հէրն ասեց. չուրը կը քցեմ, ալի չուալին թայ կը չինեմ, ես էջմիածնեցու աղչիկ չեմ տալ։

Ի.

Աստուածածնի բարիկենդան կիրակի առաւօտեան Գարեգինը գնաց Սօսենց տունը, տեսաւ, որ Սօսի մէրը տօլմայ էր եփել։

— Նստի՛ք, ասեց պառաւը, որդի՛ք չան, ածեմ՝ կերի՛ք։

Հայն առաջներին քաշած ուտում էին, որ Սօսի աչքն ընկաւ Գարեգնի ճկլթին։

— Ըհ՛ը, ասեց, մատանիդ փոխել ե՞ս, թէ նոր ես չինել տուել, ընհատոր ընկի, առաջուանդ լա՛ւն էր, հաւիս էլ ո՞վ գիտի, ո՞ւմ կըլես բաշխած, խի՞ չէիր նրան ղրկում, երեխայ էր՝ կուրախանար։

— Է՛հ, ասեց Գարեգինը, ինչ արել եմ, արել՝ հլա հայ ուտենք։

Յետոյ յետ դառաւ Սօսի մօրը.—քեռակի՛ն, ասեց, տեսա՞ր տղիդ ո՞նց ձեռնէ ձեռը նչան դրի, ուրախ ե՞ս թէ չէ, դրուստն ասա՛, դու ըլիս իմ ու Սօսի արևը, դու ըլիս քեռու լիս դերեզմանը։

— Է՛հ, որդի՛, քեզ ումբր ու արև, ուրախ եմ, որ երեխա սրտովն էլաւ, դուշմանի աչքը դուս էկաւ, հաւա ի՞նչ անեմ, պատի տիկնու պէս հագցնեմ, առաջիս կանգնացնեմ, բօյին մտիկ

տամ։ Ես ասում էի, ահլի բիխտան (խեղօք), կա-
տարեալ աղջիկ ուզենք, որ ջուրս բերի, խմորս
ունցի, դռնակս քաշի, էս ա պատաւել եմ՝ հա-
րարիս հանեի. հրէ մինն էլ կայ, ի՞նչ անեմ;
լաւ վախտի պտի ես նրան մենծացնեմ, որ նա
իմ մտաիցը փուշ հանի. երեխի պէս երեխայ ա
էլի։

— Լաւն էն ա, ասեց Գարեգինը, որ քու
ձեռի տակին քու բնութիւնին կը մենծացնես,
մարդս որ կայ՝ տնկի ա, քանի պտուկ ա, կա-
րաս տակը նեռիկ (ներցուկ) տալ դղրդ, համա
հէնց որ մենծացաւ, հասուցաւ, էլ չես կարող
դղրդ թէկուզ ռանդես էլ՝ ծուռը կը ճնայ։ Ես
ասում եմ, քու բաղդիցն ա, որ չահել չահել
հարսներ ես բերում, քու հաւատին մենծացնում։

— Ես էսօր կամ՝ էքուց ա՛չ, մի ոտս գե-
րեզմանումն ա, ասեց պառաւը, ընչանք նրանց
կնիկ չինելս, ես կը մեռնիմ։ Ինձ ի՞նչ օգուտ էն
վախտը, լաւ կըլին՝ իրանց համար ու իրանց
մարդի համար կըլին։

— Լա՛ւ, էդ դէնը կենայ, ասեց Գարեգինը
ձիճապալով, մի հարսիդ ինչ արինք՝ չարինք, ե-
րեսը կալ (փակ) պահեցիր. սրա համար ի՞նչ
ես ասում; երեսը բաց պտի անե՞նք, թէ չէ։

— Վա՛յ, քանի իմ չունչը կայ էս տանը, էդ
բանը չի ըլնիլ, ասեց պառաւը. ես կը մեռնիմ;
երբ որ իմ հարսի երեսը խալխը կը տեսնեն.
հո՞ղս դրանց գլխին, մի քանի սրթխնները (հա-

մարձակ) կան, հիմի բերում են հարսի երեսին
մի բարակ տուլի լաչակ քցում, սաքի թէ ծած-
կել են. նա ընդու տակովն ինձանից լաւ ա տես-
նում; աչքը խալխի երեսին ա քցում, բացուում։
Խիզա՛ն, էս գեղը՝ քանի գնում ա՝ Աստծու ծրիցն
ընում ա. ո՞վ էր լսած՝ թէ ընչանք օխտը տա-
րին թամամիլը հարսի երեսը տեսնինք։ Մին էլ
էն, որ մի երկու տարի անց ա կենում թէ չէ,
հարսին նստացնում են՝ հետները հաց ուտացնում։
Ես՝ իմ ողորմածիկ կէսօր չուաքը տեսնելիս,
հէնց իմանում էի, թէ դևխա Աստուածն ա.
հինգ խիզանամեր (զաւակի մայր) էի, դեռ ես նրա
կշտին պռունկս պռնկովս չէի տուել նշխարք
չէի դրել բերանս. հիմի երկու տարի չի անց
կենում, հարսը կէսօրիսը բանձր ա խօսում։ Մեր
պնչի վրայ ընչանք աչքներիս առաջը քնթկալ ա
էլել հիմի քիչ ա ճնում, պնչիցն երևայ. խու-
չուիկներս ընչանք աչքներս քաշած ա էլել հիմի
ճակատներին մի մին իշի նալը (ոսկի) կպցնում
են ու պաշխայ (պիտակաւոր) կովի պէս դալի մար-
դի առաջին ցից ընում։ Աստուած է՛լ բէթարիցն
ազատի, աբուռ-հայէն (ամօթ, պատկառանք) հի-
միկուայ օղլու-չագերիցը վերացել ա, է՛լի պառաւ-
ների մէջին ա ճնացել. հին կնանիքն էլ էս ա
վեր են ընկել ո՞վ կայ։ Ես օխտը տարէն կնիկ
էի, արևի երես չէի տեսած. դեռ լիսը բացուած
չէր ըլնի՝ կերթայի կուժս կը լցնէի, տներս կը
սրբոտէի, ապրը կը տանէի, դէն կը քցէի, ինչ էլ

239 240 241 242

ճնար դրսի բան, իրիկունը, որ մթնէր, էն վախ-
տը կանէի։ Ամառը աքլորը կը կանչէր, տեղից
վեր կը կենայի, ամէն բանից կը պրծնէի։ Աղօ-
թարանը գնում չըծէքած՝ ողորմածիկ կեսուրս վեր
կը կենար, կը քցէր քամակը, կերթար յիքին. թէ
նաբադայ (շանկարծուս) մարդ պատահէր՝—սև
սրտի աղջի՛կ, կասէր, կպի՛ պատիլը. ես էլ պա-
տի տակին կուչ կը գայի։ Ասուածդ մի՛ արասցէ,
որ քաւորանցս նոքարն էլ ուտատ գար, կեսուրս
կասէր՝ աչխարհքի մէջին թուք էլանք։ Սանամէ-
րը, թէկուզ հարիր տարեկան էլ ըլնէր, կասէին,
որ քաւորի կտրովը անց կենայ, օխտը թաբաղայ
(թերթ) երկինքը գլխներիս փուլ կը գայ. հիմի
ո՛չ էն կայ՝ ո՛չ էն։ Հարսները չատ են քնում
քանց կէսուրը. օրը ճաչին՝ նոր մոխրատան ուտում
են, աղբը տանում, կուժն առնում են՝ գնում
ջուրը։ Ընչանք օրը ճաշ չի դառնայ, ոնց որ հի-
մի մենք՝ յիքին չենն էրթում, ճամփեն թէկուզ
քաւորն էլ ուտատ գայ՝ բանի տեղ չենն գնում։
Հիմի մի հարսը չես գտնիլ, որ չ'խօսքանուքիւն
գիտենայ, էլածներն էլ՝ ծակ կթայով*։ Էս բա-
ները՝ որ ասում եմ, հօ հիմի չեմ կարող իմ
հարսներն անկանչներում հալի անիլ. ասում ա.
«աչքն լինչ տեսնի, էն կանի»։ Համա գլուխ քարը,
հալա էս մինն էլ ա կանեմ, որ թողալ չեմ ե-
րեսը բաց պահակեն։

* Ծակ բթալով չըխօսքանն այն է, որ իբրև թէ չենն խօսում, բայց նրանց բարձր ինչումիցն ամէն բան կարելի է հասկանալ։

— Ա՛յ մէր, էն դհիցն ասեց Սօսը, էդ էլ
դառաւ ո՛չ աղպօրս. հիմիկուց քեզ ասում եմ,
որ դու խօսաս ո՛չ. էն մարդիկը պտի երեսը բաց
պահկիլ տան։ Ձեմ գիտում, ի՞նչ էք էս պատա-
ներդ էդ հէն ծխնակ բաները սիրում։ Ասածու
պահակերն էլ չէք թողում երևայ։ Ես իմ կնդա-
նը հօ մէնակ երեսը չը պտի՞ բայ անեմ, ոչ ոք
իրաւունք չունի էս բանումը. դու որ քու էդ
հարսի երեսը կալ ես պահում ու չըխօսքան,
չա՞տ աբուռով ա քանց Մխակի կնիկը, որ համ
ամէնի հետ խօսում ա, համ քաւորի հետ էլ
հաց ուտում, համ էլ ամէն տեսակ քաղաքավա-
րութիւններն ունի։

— Տե՛ս, Սօ՛ս, բարկանալով ասեց մէրը, թէ
հիմի էլ իմանամ, թէ քու միտքդ էդ ա, կէր-
թամ քարափովը վեր կ'ընդնիմ, ջուրը կ'ընդնիմ
կը խեղդուիմ, էն Սուրբ Գէորգը վկայ՝ կանեմ։
Դու գիտե՞ս, վարդիւոր կիրակի օրը ձեր վար-
մունքիցն ես գեամնը մնայ, ասում էի.—գեամ'ն,
պատառուի՛, ես մէջդ մտնեմ ու էս բանը չի
տեսնեմ։

— Էն անաբուռ պատառը (վարդիքերի մէրը)
հո՞ղս նրա գլխին. մի ասօղ ըլնի, թէ խի՞ չես
քու հօրն ու մօրից տեսածն անում, ամանչում
էլ չի, ո՞վ ա տեսել, ազատ աղջկանը ղանաւուղ
(կերպաս) հագցնեն, ինչքան էլ դովլաթաւոր ըլ-
նեն։ Նա քանց Գէորգենք ու Թորոսենք հարուստ
չըլնեն, որ ասում էին՝ օրը հինգ խնոցի կը հարէ-

լին, նրանց թանի տուան էկել ա առուն թափել. քառասուն գամէշ կը կթէին, նրանց պղկերանց հաբինն էժանապին չիթ ա էլել մէկէլնելինը Ուրգիւդի խամ չիթ, առաջները բաց։ Էս Բաղդադիլը, որ պղկէքը քյուա՛ն են, ո՞վ ա տեսած. մի մին պօպօզ գտակ էր, քառասուն տեղից ծլանքը կախ ընկած. խէր ու բարաքաթին էլ էն վախտն էր՝ սէր ու սոհբաթին էլ։

— Ինձակին, ծիծաղալով ասեց Գարեգինը, քու ասածներդը թռան, մարդ պտի ժամանակի հետ գնայ. ասում ա. «մի մարդ գնաց մի գեղ, տեսաւ քօմմայ քօռ են, ինքն էլ աչքերը կապից, թէ ես էլ եմ քօռ»։ Հիմի սաղ աշխարհքը փոխուել ա, սաքի հիմի դու ասա՛. լա՞ւ ես անում; որ էդ առաջը բաց մինթանէն (շոր) հագնում ես. ընչի՞ չի պտի ոդեքանդ գլխներին տաս, թէ գնացէ՛ք ինձ համար զանաւուղ առէ՛ք, բերէ՛ք հաքնիմ։ Ինչ անում են, չեն անում, էդ ղադաքիցը ձեռը չես վեր առնում։

— Ա՛յ որդի, չնորհքով ի՞նչ պտի ըլնի ասեց պառաւը. դու ասա՛, հրնկեր—հարևանուհին գիտենանք, ադքատին ողորմանք, ժամ գընանք, պաշտաւմէց, ժամուց տանք, մեր հոգու ճամփէն գտնինք, ըտոնք են պէտքը. ես էլմախտասի, թէ մի ոտս գերեզմանումն ա։ Դուք հիմիկէց դէնը լա՛ւ հաքէ՛ք, լա՛ւ մաշէ՛ք, մեր օրերն անց են կացել. համա ինչ կանէք արէ՛ք, Աստծուն մոքներիցդ քցէք ո՛չ։

— Հա՛, ըտեղ խօսք ունիս, ասեց Գարեգինը, իմ ասիլն էլ էդ ա. դու հէնց գիտես, թէ ըոր հաքնելով պտի հոգուդ ճամփէն կոչդնե՞ս. քու ոդէքն ամանչում են, որ էրանց մէրն ըսէնց ղադաքի մէջին ա։ Լա՛ւ, էլի ղադաք հագի՛, տալին երկուսն էլ ա կարի՛, որ նոր ըլի. օրհնուիս դո՛ւ, աչքս բաց եմ արել էդ մի մինթանէն ա. մի թելը քաշես՝ հարիր կարկատան վեր կընդնի. խեղճ Սօսն ամէն վախտ ինձ պանդաանել ա։ Դու արի՛ լսի՛ր, էքուց ասեմ, ծիրանի զանաւուղ առնեն, առաջը կալ կարիլ տանք, հագի՛։

— Վա՛յ դլխիս, Գարեգին չա՛ն, ասեց պառաւը, դու ուզում ես ինձ նոր չահելայնե՞ս, աշխարհքի միջին խայտառակ անե՞ս, տեսնողն ի՞նչ կասի։ Թէ ուզում ես՝ ասա՛, թո՛ղ մի սև ղադաք առնեն, առաջը բաց կարենք, հաքնեմ. դու խաթաթիկը համար։

— Էդ էլ ըտէնց, ասեց Գարեգինը. նչանն ի՞նչ պտի տանինք, ախար էս ա աշունքը մօտացել ա։

— Հա՛, ինչ որ ինձ լսերել են. մի գմբէթաւոր էրծամէկ մատանիք կայ՝ օղը կոտրած. չինել տուէ՛ք, մի չաղրաթով (ֆօղ) տարէ՛ք. էդ ա՝ էլ ի՞նչ պտի ըլնի։

— Ատում եմ մի ակն առնենք, չինել տանք, մի լաւ էլ Բաղդադի պլուս, տատներիս հատ էլ պաճախլու (ոսկի) ընկնիլ տանք (կանթել), ի՞նչ ես ասում։

246
247
248

— Գարեգին ջա՜ն, ասեց պառաւը, դու էլ չատ բանի քամակիցն ես ընկնում: Իմ հասը ոտ-կին ի՞նչ կանի. ես մի հարսին էլ որ չինեցինք, հէնց գիտես հաւան ե՞մ: Էկէ՛ք դուք ինձ լսե՛ք, ես հարսին էլ վեր ունինք, նրան չի էլ տանինք. երեխեքանցս տարեկան ապրուստը կարիլ մե՛ք. եա թէ չէ, սրա գլխինը վեր կալե՛ք, տարե՛ք, էլ կը բերէք մեր մալը մեր տունը: Ես տեսել եմ, որ մեր գեղումն ինչքան հարսը կը պահակուէր, քոմմա Գէորգենց ու Թորոսենց չարերովն էր. ի՞նչ ամօթ բան էր որ: Փա՜ռք Աստծու, մենք հօ ուրիչից չենք բան ուզում, մերն ա. իմ հարսը խելօք ա, բան չի ասիլ, անխօս կը տայ ոսկիքը:

Սօսն էլի բարկացած մէջ ընկաւ.—Նանի՛, քեզ ասել եմ; մեր տան բանումը խառնուիլ մի՛. չա՜ն-նըմ, քեզ համար նստի՛, խանումի պէս հրաման տո՛ւր. թէ կուզես, կիրակուն էփի՛, թո՛ղ հարսդ դուռ խամ ա, տարվի:

Գարեգինն աչքով անելով Սօսին ասեց.—դու սուս կա՛ց, ես գիտեմ իմ քեռակինը, քեզու դեօրայ բան չի կայ. ինչ ասի, պաի նրա տասծն անեմ: Ցետոյ յետ դառաւ դէպ պառաւն ու ասեց. քեռակի՛ն ջա՜ն, տեսնում ե՞ս, տղեդ վրեդ բարկանում ա, էս ժամանակի քռուխիւնից (կոպտութիւնից) ա քամիա:

— Հա՛, որդի՛, գլուխը ժաժ տալով ասեց պառաւը. ես մի աղպեր ունէի՝ երեսուն տարեկան էր, իմ մերը հէնց կը ծլրտէր վրէն, որ աղ-

պօրս թուք ու մուքը կը տառչէր. իրեք օր դուս արած պահեց, ընդուր համար, որ մի օր կիրակուրը յետի հասաւ, աղպէրս ասեց. թէ էս ի՞նչ են էս պառաւները, մարդի կոտորելու հալ ունին: Տաք տաք չերեփը վեր կալաւ մերս, հէնց տուաւ աղպօրս բերնին, որ քիչ ծնաց՝ առաջը վեր ընկնի:—Դէ վե՛ր կա՛ց դուս ի՛լ կորի՛, ասեց. էլ իմ աղէն չես. որտեղ քեզ թեզ կիրակուր կը տան, գնա՛ ընտեղ:

Հէրս տանը չէր, էկաւ տեսաւ, որ աղպէրս գլուխը պէմ ա արել պառկին ու կանկել. հարցրուց մօրս, նա էլ ասեց, թէ վրէս հարբայ ա կոխում (տրաճոում), թէ կիրակուրն ընչի ա յետի հանում: Դադանակը վեր կալաւ հէրս ու ընկաւ աղպօրս յետնուցը, տանիցը դուս արաց: Իրեք օր դրանը ծնաց. աւէն օր կը դար իրիկները երթիկի վրայ կը քնէր: Վերջը տատս (մօր մայրը) իմացել էր, էկաւ մեր վրայ բարկացաւ, հօրս էլ ազանչաք արաց, որ նոր տուն ա բերել ձեռը պահիլ տուել, բարիշացրել: Հիմի տղէս իմ առաջիս խօսում ա, էն էլ բարկանալով. ի՞նչ ասեմ, դրա մեղքը չի, ժամանակն ա մեղաւոր:

Պառաւը տեսաւ, որ խօսքներն երկարեց, պրծէ՛ք, պրծէ՛ք, ասեց. հայ կերէ՛ք, մենք էլ մի վին թիքայ բերանները գնենք, գնանք յիքին, մեր մալը եաղին (բշնաւին) տարաւ:

Մեր աղէքը հայը կերան ու վեր կացան՝ դռնէ դուս:

Ցեսոյ Սօսը հարցրուց Գարեգինին մատանիքի բանը. նա էլ մի մին պատմեց։

Սօսն աչքերն արէնկոլով արտասուների տեղակ, չուխտ ձեռը տարաւ իր գլխին տուաւց։ Վա՜յ գլխիս, ասեց. քեղ խաբել են, ես էն օրն ասեցի, որ էգ Արշաւիրը վոխատել ա։

Գարեգինը, ղորթ ա, լաւ հասակում էր բանը, համա Սօսին աւատացրուց, թէ չէ, նրանց խորհուրդն էն ա, որ մի քանի օրից յետոյ կաբենան հօր սիրան առնել։

ԻԱ.

— Աքլորները կանչում են, էս ա լիսը բացուել ա, ընչանք չորերս հաքնիմ; ո՞վ գիտայ ժամը մտան. Հայ—քրիստոնեայ ենք, բռնե՛նք ասինք, էս օր էլ ա ժամ գնամ; Աստուածածնին կիրակին ա, վեր կենամ տեղիցս՝ գնամ մեր ածերը, աղլուխս ալվան հաւոզ յղնեմ գամ, տանեմ ժամը, խալխից յետ չի մնամ; տեղումը թեք ընկած՝ մի երապից վեր թռած՝ ասում էր Սօսը։ Ինձ պէս աղէն պատ քշերն ընչանք լիս բանի կենայ, ես կակոզ եօրդան-դօշակի միջին թեք ընկած եմ՝ իմ հընկերները հիմի յիքանոյսումը առուբների կանանչ ափներին ձիանը արածացընում են։

Ըսէնց միաք արուց ու վեր կացաւ, չորերը հաքաւ, գնաց մօրը բրթեց վեր կացրուց, թէ ես էրթում եմ յիքին հաւոզ բերելու, դու էլ պատրաստուի՛, հարսիդ էլ ա՛ռ, գնա՛ ժամ; երկու շաբաթ ա՝ պաս ես պահել։

Սօսը երեսը լուաց, երեսին խաչ հանեց, ղամչն (դաշոյնը) կապեց, էտոյը կողքը խրեց, գնաց յիքին։

Հէնց որ մտաւ թոռմքը, ուզում էր ալվան թփերի կուշտը գնայ, երկու մարդ առաջիցը վախան։

— Ւհ հ՛յ, ո՞վ էք, Հա՞յ էք, Թո՞ւրք էք, գոռաց Սօսը ղամչն հանելով ու քամակներից վաղելով։

Գողերը վախան, համա թմբերի միջին մոլորուեցին, ճամփէն չի գտան, որ դուս ըլնեն։

Սօսը վրայ հասաւ, ինց որ մի ուրուր վեր գայ ճուտի վրայ.—կանգնեցէ՛ք, ասեց, թէ չէ՝ ղամչն սրտներումդ անկեցի։

— Ամա՞ն, աղայ ջա՛ն, գլխիդ զուրբա՞ն, պատասխան տուին երկու Թուրքը։

— Ա՛յ, ձեր ապդը գեաւրն անց կենայ, չընե՛ր, յետ արէ՛ք գօսկներդ էս սհաթը։

Թուրքերի միջքինը մի մին կարատւած զայիչ (ձոկ) էր. դողդողալով յետ արին ու տուին Սօսին։

— Բռնեցէ՛ք, գոռաց, ձեռնելդ, թէ չէ ա՛րիներդ թմբումը գեօղ չինեցի, ասեց ու կապեց դրանց երկուսի կուռն էլ քամակներիցը։

— Ո՞ւր ա ձեր ասպասներն (զհնխերը) ու ձեր քթոցները։

Թուրքերը պռնկները պատռած՝ դոզդոզալով ասին.—մեզ ասպատ չունինք, գլխիդ արևիդ մատաղ, աղա՛յ ջա՛ն. համա քթոցներս հրե էն թմբուռմը, որաեղից դու մեզ փախցրիր։

Սօսը դրանց առաջ արուց եսիրի պէս, բերուց քթոցների կուշտը՝ տեսաւ, դրուստ որ մի մին կուաքցի (աղբ թափելու) քթոց ա վեր ընկած, նոր հէնց ամէնքը մի քանի ճիթ հատոզ անճախ են քաշել։ Տարաւ դրանց, հնձանի դուռը բաց արուց, չուանը դրուց ոտներն ու դուս բերուց, կապեց հասա պօպօքուրը (ընկուզենի)։

— Անհատտա չնե՛ր, ասեց, է՛լ չի կարացի ժամ էրթալ։

Թուրքերն աղանչաք, պաղանատանք ընկան, օձի պէս լեզուները հանելով։

— Ամա՞ն աղա՛յ, քու ոտի տակն ենք ընկել, քու բազդն ենք ընկել. մեզ ըտեղ մորթի՛ ու գեղը մի՛ տանիլ, մենք գլխներս քարը, մեզ որ գեղը տանիս, մեր աղէն խայտառակ կըլի։ Մենք Լազրվան գեղի աղայ Մահմադի չօբանն ենք, նա մեզ ղրկեց, որ գանք գոզանանք։

— Լա՛ւ, որ ըտէնց ա, հիմի լիսը բացուի, տեսէ՛ք, ես ձեր ապի գլուխն ի՞նչ եմ բերում. վրի պապաններդը պոկիլ տամ։

— Հարա՛յ, մադա՛թ, աղա՛յ ջա՛ն, մեզ ըսպանի՛ ու նրա միրուքը ձեռ մի՛ տալ։

Սօսը դրանց գայիմ (պինդ) ծառիցը կապած թողուց, ինքը գնաց հատոզ քաշեց ու յետ դառաւ գեղը։

«Հարցի» զանդակը տալիս էին։ Տարաւ հատոզը ժամը, տուրուց ժամհարին, տեսաւ տանուտէրն էլ ժամումն էր, դուս կանչեց։—Արի՛, ասեց, գաղեր եմ բռնել կապտաել ծառիցը. երկու մարդ գրկի՛, գնանք բերենք։

Տանուտէրն էն սհաթը վազեց տուն, գդրին իմաց տուրուց, որ չորս մարդ առնի, գնայ Սօսի հետ։

Էն սհաթը չորս գօչաղ (ֆաջ) աղամարդիկ Սօսի հետ գնացին գոզերին բերելու։

Վրայ հասաւ էս տղէքանց մինը Թուրքերին.—ձեր հատաոը ձեզ խառ՛ի, ասեց. հերիք չէլա՞ւ, դուք մեր հոգին հանեցիք. ձեռներիցդ ուրիշ բան չի գալի. Աստուած տուել ա, մի գոզուլթիւն գիտէք, էն է՞լ չէք կարում հէնց անիլ, որ գըլխներիդ հարամ չըլնի։ Աստուած մի՛ արասցէ, մի իշխանուլթիւն ունենաք, խեղճ Հայերի հոգին կը հանէք։ Էդ՝ ա՛ռ ձեզ Հայերի տունը քանդիլ, ասեց ու հէնց սիլլայ (ապտակ) տուուց, որ երեսը պօպօքուն դիպաւ, աչքը փարս էր ընում (փղձիկ)։

— Աղայ ջա՛ն, Աստծու խաթեր համար, մեղնում մեղք չի՛կայ, մեր աղէն ա մեզաւոր, նա մեզ ղրկել ա՝ մենք էլ էկել ենք, ի՞նչ անենք, նրա նօքարն ենք, քարիցն էլ վեր քցի, լիզուընեերս կարճ ա, ի՞նչ կարանք ասիլ։

— Ը՜հ, չնե՛ր, վեր կալաւ էն դհիյը մի ալ-
ղայ, նօքար ես, հօ ճորա չե՞ս. ըսէնցո՞վ էիք
քանի ձեռներիդ էր դուխալը (խրատուիմ) ուղում,
որ Հայերը ձեզ ճորա ըլնին: Խեղճ հէրս ասում
էր, թէ սարէնը մի հետ քոչացնում էին մեզ
չուն Հասան խանն ու Հիւսէին սարդարը, թէ
Թուրքացէ՛ք: Ա՜յ ձեզ Թուրքանալ. չէ՞իք խմանում,
որ Աստուած մին օր լիս ու ճար կանի Հային,
ըսէնց ոտիս տակը կը լիզացնեմ ձեզ ա՛յ:

— Յետ արէ՛ք, տղէ՛ք չա՛ն, ծառիյը, ասեց
Սօսը, տանենք գեղը. էդ քաղած հաւոզն էլ վեր
կալէ՛ք՝ հետներս տանինք:

— Աղա՛յ չա՛ն, Աստծու խաթեր, ձեր հա-
ւատի խաթեր, մեզ թողէ՛ք՝ գնանք չորս լաւ ղօչ
(խոյ) բերենք ձեզ, մղկատլով ասին Թուրքերը:

— Ա՜յ չներ, ասեց Սօսը, ուղում են հիմի
էլ գնան իրանց չուն ապի ղօչերը դողանան բե-
րեն, հիմի ես ձեզ կը տամ տղէն էլ՝ նօքարն էլ.
առաջ ընկէ՛ք:

Թուրքերը կռները կապած՝ առաջ ընկան
դպա գեղը: Մի քիչ տեղ որ գնացին, տղէքն
արևէլինն ընկած՝ իրար հետ ղրիյ տալով գալիս
էին. մին էլ տեսան, որ Թուրքերի մինը փախաւ:

— Բռնէ՛ք, դրանց հէրն անիծա՛ծ, գոռաց
Սօսը, հասէ՛ք, տղէ՛ք չան, ասեց ու ինքն ընկաւ
յետնուցը:

Թուրքը հէնց որ տեսաւ, թէ Սօսը հասուէ
հաս ա, կռացաւ թիկ կապած ձեռքովը մի եր-
կու քար վեր կալա՛ւ, որ տայ Սօսին վեր քցի:

— Ը՜հ, քու հաւատդ անիծած, ատամները
ղրճայնելով ասեց Սօսն ու վրայ հասաւ ղամչն
հանած՝ որ վրայ չի բերուց քամակիցը՝ էրաթա-
թիկն արինը պրծաւ, Թուրքը վեր ընկաւ. գես-
ղալ թէ (ղաւ որ) ծէրն էր դիպել, թէ չէ հիմի
վաղուց էր վչել չունչը:

— Տղէ՛ք չան, ասեց, հասէ՛ք, սա իր բա-
նիյը պրծաւ:

Թուրքին բռնեցին, արինլուիկ էլած՝ տարան
մէկէլի կուշտը, արինը շաղ տալով՝ յառաջ ա-
րին դպա գեղը:

Աւտւօտեան ժամը պրծել էր, մարդիկը
դուս էին եկել հաւաքուել ձ՛անճապանենց դը-
րանն ու ղրիյ էին տալիս:

Թուրքերին բերին էս հէշտաքի (բազմութիւն)
մէջը: Ամէնքը մի դհիյը հաւաքուեցին:

— Էդ ո՞ր տեղից էք բռնել, ձէն ձէնի քը-
ցեցին, դրանց հէրն անիծա՛ծ:

Տանուտէրը յառաջ եկաւ, հարցրուց, թէ
ընչի՞ համար էիք էկել հաւոզ գողանալու:

— Աղա՛յ չան, ասեց էն սաղը, մեր աղէն
ղրկեց, մենք էլ էկանք, մենք ի՞նչ մեղաւոր ենք,
ի՞նչ պաի ասէինք:

— Հիմի ձեր հէրն էլ կանիծեմ, ձեր աղինն
էլ, ասեց տանուտէրը:

— Տղէ՛ք, տարէ՛ք կապեցէ՛ք Ուռուցումը ուռուցը՝ քանի արևը տալիս ա, իրանց գողացած հաւողն էլ քսեցէ՛ք երեսները, թո՛ղ չիրէն գնայ. կռները կապեցէ՛ք, որ ձեռները կարենան ո՛չ ժաժ տալ. ճանճերը, կրէտները (իշամեղու) դան երեսներն ուտեն, որ իմանան, թէ գողութիւնն ի՞նչ բան ա. Աչտարակցին թո՛ղ դրանց աչքին երևայ։

Տղէքը տարան Թուրքերին ղայիմ կապեցին ուռուցը, փափախները դէն քցեցին, երեսներին ու կռնգալ (տկnոr) գլխներին հաւողը ճմլռեցին։

Արևը մի դհիյն ա Թուրքերի գլխներն էրում, (ներանք ընչանք ըսօր իրանց փափախները կէս սհաթ վեր չեն կալած), ճանճերը, կրէտները, բզէզները, բօռերը, մճակ ու մլակները, էլ բան չի մնաց, որ դրանց երեսի վրայ վեր էկան, էնքան կծեցին, որ սաղ տեղ չի մնաց. աչքները խփել էին, թէ չէ կը քօռացնէին. գլխները դառան հինգ լիտր, էնքան ուռեցին։

Մեր տղէքը դրանց ըսեղ կապեցին ու մի մարդ էլ ղրկեցին Մահմատ աղի կուչտը, որ գայ իր նօքարներին ազատի։

Արևը որ մի քիչ բարձրացաւ՝ պատարագէ զանգակը տուին. ժամուորը հաւաքուեցին ժամ, գողերի վրայ մի երկու ղարաուլ կանգնացրին մնաւիկ տալու ու իրանք գնացին ժամ։

Պատարագը վերջացաւ, հաւողը օրհնելու վրան էկաւ. էնքան հաւող էին բերել, որ տէր-

տէրներին ութ օր հերիք էր։ Ամէն մարդ էլ մի մին աղուխս լաւ ալուան հաւող չէր խնայում, որ իր յիքին բարաքաթով ըլնի։

Հէնց որ հաւողն օրհնեցին, ուզեցին զնգըլակ-զնգլակ (ճիռ-ճիռ) բաժանեն։

Դու հիմի արի՛, ըստեղ մտիկ տո՛ւր, հէնց կը գիտենաս, թէ Աչտարակը Ասլարանն ա. հալուոր ու չահէլներն իրար են խառնուել ու իրար բոթբոթելէն յառաջ գնում դպա հաւողը. հէնց մարդ կար, որ երկու ճիթ վեր կալաւ, հէնցն էլ էլաւ, որ պտուղ չի կարաց տանիլ, որ թաթախուէր. նոր գնացին դառնը մի մին պտուղ մէկէլներիցն ուզեցին, իրանք էլ մանաւորուեցին։

Հիմի էս լսողը կիմանայ, թէ Աչտարակցիք շատ թամարղու (չրտեա) են, եա անկարգ են որ մի պըտուղ հաւողի համար, հրտէնց զալմազալ են անում։

—Ձէ՛, նրանց սրթին (չհրմեռանդութիւն) ու հաւատըն ա, որ իրանց անիլ ա տալի։ Ամէն տան էլ պաս պահողներ կան հաւողի, թէ որ նրանք օրհնած հաւող չուտեն, սաղ տարին պտի էլ հաւողի համ չի տեսնին։

Ծօան էլ հաւողի պաս էր, իր մէրն էլ. հէնց որ օրհնեցին պրծան, ամէնիցն յառաջ վազեց մի երկու ճիթ վեր կալաւ ու դուս էկաւ։

Ժամից յետոյ ամէն մարդ մի զնգլակ հաւող ձեռին գնացին իրանց տները, որոնք էլ յիքումն էին քնում՝ իրանց յիքանիքը։

Սօան ընչանք կոցաւ, Գարեգինը ժամիցը դուս էկաւ, իրա դլխի էկածները քօմնա ասեց ու առաւ գնաց Ուռուցը դպա դողերը։

Թուրքերը որ Սօին տեսան,—աղայ չա՛ն, գոռացին, մեզ ոչնահ՛ ու էս կրակիցը մեզ աղատի՛։ Էն գամուռաածն (վիրաւոր) էլ արևի տըժ-ժան չաքիցը թըլըփել էր (ուշագնաց եղել)։

Գարեգինը որ տեսաւ, սիրտը չարժուեց,—անիրա՛ւ, ասեց, քեզ խղճմտանք չունի՞ս։

— Չէ՛, դու խօսալ մի՛, ասեց Սօսը, դրանց գլուխը էս լաւ օղիայ եմ էկել (հաղ խաղացել)։ Թո՛ղ ճնան, ընչանք իրանց չունե-ապի հետ ենք դրկել՝ դայ։

Էս խօսում էին, որ տէրտէրը ժամիցը դուս էր էկել, տուն էր էրթում։ Հէնց որ տեսաւ էդ բանը, մօտ էկաւ, թէ յետ արէ՛ք, խղճմտանքի ընդդէմ ա. Քրիստոսի աշակերտ ենք, նա ասում է. «բարի արարէ՛ք առելեաց ձերոց», դրանք արել են, որդի՛ք, դուք մի՛ անէք։

Սօսը տէրտէրի խօսքիցն ամանչեց, գնաց կռնները յետ արուց, որ երեսները լուանան, տաբաւ դրանց քցեց դոմը, դուռը վըրնները չինեց։

Իրիկնապահ քաշեց՝ Մահմատ աղէն իրեք ձիաւորով էկաւ։

Սօսը հէնց որ տեսաւ, վրայ պրծաւ, ուզում էր տայ քեալի (գլխի) վրայ կործանի, համա մարդիկ մէջ ընկան, չի թողին։

— Սլաղ սախլան (Աստուած պահպանի, այսիմի բարեւ ձեզ) ես իմացայ, որ իմ նօքարներն էկել են ձեր յիքանիքը հաւաղադող, բռնել էքընչի՞ չէիք տալի ոպտուում։

— Շո՛ւն, դոռաց Սօսը, դու սարվացրել ես ու հիմի պոչդ ղրաղ քաչո՞ւմ (յետ դաշտում)։ Ես քեզ հէ՛նց կորցնել տամ, որ Աստծու կորցրած, դողերի մենծաւոր չո՛ւն։

— Ա՛յ Չանամ, ինձ ընչի՞ ես մէջ բերում նհախ տեղը (իզուր)։ հիմի որ դու մի մարդ ըսպասնես, քու հէրդ ի՞նչ անի, ես բանից խաբար չեմ, վալլա՛հ, բիլլա՛հ, Ղուրանը վկայ։ Ես դրանց ղրկել եմ ոչխարը, դրանք էկել են դողուվխուն. ախար դու նհախ տեղն ինձ ընչի՞ ես բիաբուռ անում (անարգում) էքան խալխի մէջին, իմ մերքես էլ ա դադը արա՛ (խնայիր), ես էլ ինձ համար մի անուսի տէր եմ։

Տանուտէրը Մահմատ աղին քաշեց ղրաղ, թէ էս տղէն ուզում էր տանել Մովրովի (գառանոպեսի) կուշտը, համա քու խաթեր համար ես չեմ թողել բերել ենք կապել ծառիցը, ճանճերը երեսները կծել են, վախչելուս էլ էդ տղէն տուել ա մինին եարալու արել։ հիմի արի դրա սերտն առնինք, թէ չէ դա մի կոպիտ մարդ ա, կը տանի Մովրովի կուշտը, քեզ երկրի մէջին խայտառակ կ'անի, հարիր մանէթ տաս, տակիցը չես կարող դուս գալ, անուսդ կէս փող կը դառնայ։ Դու գիտես, որ մեր էս հիմիկուայ

Մովրովը «եղը վեր ա քաշում, տակինը հորթ ուզում». մին որ կպաս, էլ պոկ չի գալ։

— Ինչ որ քու քեֆը կը տայ՝ էն արա՛, ասեց ուսերքը բարձրացնելով Մահմատ աղէն. ի՞նչ տանք, որ էդ տղին ռազի անենք (գոհացնենք)։

— Բե՛ր, մի երկու ոչխար ղրկի՛, թո՛ղ ռատ ըլնի, ասեց տանուտէրը թաքուն։

— Վալա՛հ, բիլա՛հ, քեօխվայ (տանուտէր), մեղք եմ, մղկտալով ասեց Մահմատ աղէն, ի՞նչ զարար են տուել, որ երկու ոչխար տամ։

— Վնաս տուել են՝ չեն տուել՝ էլ դրա հարցնելու վախտն անց ա կացել, թէ անուշիդ ափսոս ես գալի, պահ տաս. էս էլ հլա ինձանից եմ ասում, ո՛վ գիտայ ինքը հէնց մի իր ասածի տղայ ա, որ մարդի անկայ չի անում, տեսնենք ղաբուլ կանի՞ (կը համաձայնի), թէ չէ։

— Դէ, դու գիտես, քեօխվայ ջա՛ն, ասեց Թուրքը, կամքը քոնն ա, ինչ կ'ուզես, արա՛, թաք պրծացնես ինձ էս խաթայ-բալիցը։

— Սօ՛ս, յետ դառնալով տանուտէրը դպա նրան՝ ձէն տուաց. ըսաեղ արի՛, բան եմ ասում։

Սօսը մօտ գնաց ու — գիտե՞ս ինչ կայ, ասեց տանուտէրը. աղայ Մահմատը լաւ մարդ ա, մենք իրար հարևան ենք. ես լաւն իմացայ, որ սա բանից խաբար չի էլել, չօբաննները (հովիւները) սուտ են ասում, թէ աղէն ղրկեց։ Արի՛, աղի խաթեր համար դրանց բաց թողա՛նք, աղէն էլ ամէն մըննիցը մի ոչխար կառնի, կը ղրկի քեզ, կուտես։

— Աղպէ՛ր ջան, կաշառք ուտող չեմ, ասեց Սօսը, ես զատ չեմ ուզում. մեզ մի կտոր հալալ հաց ունինք, ես հարամիլ չեմ, պտի տանեմ Մովրովի կուշտը, ինքը գիտի, ինչ կանի, թո՛ղ անի, թէկուզ բան չասի, բայ թողայ։ Նրանց մինն ինձ քարով սպանում էր. հիմի էլ գիտեմ, թէ թողամ, պտի հետս ինդադ ընկնին, բուսունիս պատուհին (հետս պահին), ընչանք իրանց ինդադը հանեն. հազիր լաւն էն ա, տանիմ տամ Մովրովին, բերաններիցն էլ գիր առնեմ, թէ էս օրէն էքուց իմ գլուխը մի բան գայ՝ դրանք ըննին մեղաւոր։

— Հիմի է՛լ գիր կը տամ, միրուքը բռնելով ասեց Մահմատ աղէն, որդի՛, իմ միրքիս բաչխի՛, մենք դինն այրի (պղակրօն) աղպէր ենք։

— Շանը կը տան՝ տիրոջը խաւիր կանեն, ասեց տանուտէրը հայերէն, արի՛ բաց թո՛ղ, լաւութիւն չունի, արածները մի բանի չի։

— Ի՞նչ ես ասում, տանուտէ՛ր, ասեց Սօսը, չունեն իր չնութիւնը կանի երբ ըլի, ասում ա. «չան հետ աղպէրացի՛, փէսը ձեռիցդ վեր մի քցիլ». ընչանք սա ինձ գիր չի տայ, իրա մուհրն (կնիքի) էլ կոխի ոչ, սաղ Աչտարական էլ ձեռք չի քաշի, բայ չեմ թողալ. սրանք օձի չինս (ցեղ) են, ընչանք օխտը պորտը նախանձ կը պահեն։

Սրանք ըսէնց խօսում էին, որ Բագրատ աղէն էկաւ էն դհից։

— Ա՜հ, բարով տեսանք, ասեց, Ադայ Մահմա՛ա, քեզի ի՞նչպէս ա, էս ի՞նչ դուլդուզ (ի՞նչ գործով), շատ թանգ-թանգ ես երևում։

Ադայ Մահմատը բադրատ աղի կռնիցը բըռնեց ու ղրաղ քաշելով՝ ասեց.—սա իմ մարդիկը բռնել ա հատուղ դոդանալիս, հիմի երկու ոչխար եմ տալի՝ ձեռք չի քաշում։

— Ի՞նչ պտի ասի, որ ձեռք չի քաշի, ասեց Բադրատը. դու էն երկու ոչխարի վրայ մինն էլ աւելցրո՛ւ, ղրկի՛ իմ տունը, ես դլխին էլ երկու տամ ու սուս կացնեմ։ Ես իմացայ էդ բանը, շատ ասեցի որ բայ թողայ, համա էդ մըղէն մի չարագլուխ, իր ասածի մարդ ա, ոչխարները որ ղրկես, էլ կարալ չի խօսալ. էն վախտն իմ չընքին։

Մահմատ աղէն տեսաւ, որ ուրիշ չարայ չի կայ՝ ասեց կը ղրկեմ։

— Սօ՛ս, յեա դառաւ Բադրատն ու ասեց, Ադայ Մահմատի խաթրը ընչի՞ ես կոտրում; բայ թո՛ղ դողերին, էսօր սրանցն ա, էքուց էլ մերը կ'ըլնի։

— Ադա՛յ չան, ասեց Սօսը, ես ձեր առաջին համարձակութիւն չունիմ; որ խօսեմ, համա չէք իմանում; ինձ սպանում էին. որ առում էք՝ մի ձեռադիր առէ՛ք բերինքը, մուհրն էլ կոխի, դուք էլ ձեռք քաշեցէ՛ք, որ ես միամուսիմ։

էն սհաթը բերին Գարեգինն նստացրին, մի դիր դրել տուին։ Թուրքերին հանեցին դռիցը, տուին Մահմատ աղին, առաջ գնայ։

Նա որ հեռացաւ, Բադրատը Սօսին կանչեց ղրաղ ու ասեց.—քեզ համար մի ոչխար պրկեցի չանկըը, իրիկունը կը բերեն, կը ղրկեմ ձեր տունը, համա մորթելու օրն ինձ ու տանուտէրին պտի կանչես, էպ էլ քու մորդուխինը։ Բակի էն երկուսի անուսը չի տալի։

— Ադա՛յ, ի՞նչ ես ասում, ասեց Սօսը, տանուտէրն երկուսն էր առնում, դու ոնքը չինելու սեղակ, աչքն էլ հանեցի՞ր։

— Չէ՛, որդի՛, մեզք էր Թուրքը, ջնաս չէին տուել, առանց էն էլ լաւ բօլ պատիժ էիր տուել. Այլին գերեզմանկոցը դուս պայ, ուր օր նրանց երեսը ցեխ քսելով չի կարող սաղ այնել։ Դու իմանո՞ւմ ես, Մովրովի կուշտը որ տանէր ընտանց, քեզ հողէց հոդի կը կորցնէին. գնա՛ մի հայ կե՛ր, մինն էլ մատաղ տո՛ւր, որ Թուրքն էշ էր, բան չի հասկացաւ. դու ո՞նց կարաս քեզն ու քեզը պատիժ տալ։

Սօսը տեսաւ, որ աղէն բանը հէնց ծանրացրուց, որ տակինը ուրիշ բան ա դուս գալի, չնորհակալ եմ, աղա՛յ, ասեց, որ ըսէնց ա, էն մի ոչխարն էլ քեզ բաշխեցի, թո՛ղ ասեն ո՛չ, թէ Սօսն իր օրումը կաշառք ա կերել։

— Ապրի՛ս որդի, խելօք ես խօսում. օձի վուշը լակլակը (արագիլ) կը մարսի, «աերը սուռ-

քը կուտի», դու որ էն մի ոչխարն առնիս, հազար մարդ վրեդ կը խօսայ, համա ինձ համար ոչով էլ բան չի ասիլ. ոչինչ, հալբաթ մին օր ես քեզ պէտքը կը գամ։ Դու գիտես՝ բագրատըն եմ, մենծի մօտ խօսքս երկու չի ընդում. գեղն էլ ոնց կուզենամ, ընենց չուռ կը տամ. հալբաթ մի բան կունենաք՝ իմ աչքի վրայ։ Էքուց էլօր էլ՝ Աստուած պահի, հասել ես, պտի պսակուիս, առաչնորդն իմ բարեկամն ա, թեկուզ չհասութիւն էլ որ ընկի, ես անց կը կացնեմ; թէ չէ՝ դու գիտես, երկու փութի չաքարըդ կուտի մի փուչ բանի համար. էլ ի՞նչ երկարացնեմ; ում աղջիկն էլ սիրում ընկիս, որ տան ո՛չ՝ ես կը հոգամ։

Ըսենց ասելով՝ Բագրատը մարսեց իրեք ոչխարն էլ, մի խորովածացու էլա չ'ղրկեց Սօսին։ Նա էլ ղրրթ ա, վերջն խմացաւ, որ իրեք ա էլել համա ասեց.—էն ուտելով էլ բան չէի դառնալ, ղուբ տեղը մարդի սիրտը կը կոտրէի, յետոյ վեց ոչխարագին էլ որ տայի, անճախ տակիցը դուս գայի, հալալ ընկի նրան իր մօր կաթի պէս։

ԻԲ.

Ճանը ու բարակ մտիք անելով էրթում էր Սօսը Սուրբ խաչի պատին դպա իր վեհի տունը, որ երեխէն էկել թայլթի (շտապ) կանչել էր։

—Տէր Աստուա՛ծ, ասում էր, էս հոգի վախտ չի, թէ ընդու համար կանչած ընկի, կընկի որ սիրեկանիս հօրիցը մի խօսք իմացած ընկի. ես անց կացած օրը ասել էի իրան, որ մտքիցը քցի ոչ, կարենայ բանը հէնց կայացնել, որ աչունք չի ընկնի։ Համա չէ, էս Աշտարակու խառնուած վախտն ա, ամէն մարդ իր ցաւին ա. ո՞վ գիտայ ի՛նչ ա ասում։

Էս մտքով մնաւ Սօսը վէհի տունը, բարով տուաց ու թէ—էլ ի՞նչ ա մտիդ ընկել, կամ մտդնելդ։

— Օ՛հ, բարով Սօ՛ս ջան, ասեց վեհէն ընէնց մի կեղծաւորութիւնով, որ Սօսն ինքն էլ արմացաւ. իր վեհիցը ըսէնց քաղաքավարութիւն, առաչինն էր, որ տեսնում էր։

— Նստի՛, տե՛ս քեզ ի՞նչ եմ ասում; որդի՛, ընչանք ե՞րբ պտի քո խեղճ մերը մնայ ձեռը Յոյսումը միաք անելով. նրա ամսակիցը (երախտիք) պտի ո՞նց պտի դուս գաք. ախար մի մտքներդ բերի՛ք, թէ նա ձեզ ծիծ ա տուել, մենծացրել, համա հիմի կրակներումդ էրում ա ու չուաքնե-

զուարճ չի հովանում: ընչի՞ չի պատի նրա խօսքին դու անկաչ անես, ընչի՞ պատի նրա սիրտը կոտրես:

— Ի՞նչ ա ասել, որ խօսքիցը դուս եմ էկել, արմացած ասեց Սօսը. ես հէնց գիտեմ, թէ նա ինձանից չատ ա չնորհակալ, քանց մէկել տղէքանցիցը. ես ընչանք լաօր նրան մի կծու ջուզաբ չեմ տուած:

— Չէ՛, չէ՛, ասեց փեսէն, ընչանք դու նըրա խօսքին անկաչ չանես, նա քեզնից կարաչ չի չնորհակալ ըլնիլ: Բսօր ինձ կանչել էր, աչքերիցը հէնց էր վեր ածում, որ գլխին կրակ թափուեց. 281 արի՛, ասեց, խրատի՛ Սօսին, որ յետ կենայ էդ խորհրդիցը. էն մի մատը քօրփէն (ճրեխան) պատի բերի, ես ի՞նչ պատի անեմ: Մեղք ա, որդի՛, մէրըդ. քեզ համար հէնց աղչիկ ուզեմ, որ նրա- 282 նից հաղար փառքով սիրուն ըլնի, ճեռացայնուր ունենայ, մարիֆաթով (շնորհալի) ըլնի, ի՞նչ ես դու դրա պոչը բռնել ու պոկ չես գալի, բա էդու մօրը չե՞ս խեղճ գալիս:

— Հերի՛ք, հերի՛ք, փեսա՛յ, իմացայ միտքդ, 283 նօթերը կիսեղով (խոշոռակ) ասեց Սօսը. էդ սէրպերը գիտեմ, թէ ո՞րտեղանց ա տուած. իմ մէրս չի ասել, թէ չէ ինձանից ամաչում չէր: Մին ասիր էդ խօսքը, մին էլ բերնիցդ հանես ո՛չ. չնորհակալ եմ, ճնաս բարին, ձեր հաճի էլ առայ:

— Հլա մի քիչ կա՛յ, կուռը բռնելով ասեց փեսէն, ո՛վ ըսուում մի աւել պակաս խօսք

ա խառնում, որդու առաջը գայ, քու մօր՝ իր բերնի խօսքն ա: Մին էլ, որդի՛, ես էրէկ հէթուանին տեսայ, ինձ ասեց, որ ձեր կօրցրածը մեզանում կայ ո՛չ, ուր կերթաք՝ գնացէ՛ք, Աստուած ձեզ հետ: Լ՛ լաւ, հլա նատի՛ մի քիչ զբըխց տանք, ընչանք քիրդ մի քիչ հաց չինի՝ ուտենք: Աղչի՛, վեր կա՛ց, հաց չինի՛ ուտենք, ասեց կնկանն ու սկսեց խեղճ Սօսի դէմքին աւետարան կարդալ:

Ա՜խ, երանի՛ թէ ամէն տեղ էլ փիս մարդը չըլէր. անտէրի փո՛ղ, ընչե՞ր չես անում. խեղճ աղին ինչ տարաբաղդութիւնի պատճառ պատի դառնաս. քու տխուր յիշատակը պատի ամէն լըսողի սիրտը դողացնի:

Սօսի փեսէն մի պատառ աղչկայ հէր տասնուհինգ մանէթի կաշառք էր խոստացել, թէ որ կարենայ տղի միտքը ծռիլ տայ իր աղչկայ վրէն. «կաշառքը մուրթը տեղը լիս կը տայ»: Անիրաւ փեսէն ծախեց տասնուհինգ մանէթով իր բարեկամութիւնը, չադուքեար (վհուկ) պատաւի պէս տամարն ա մտել, ուղում ա տղի բաղդին քար քցի: 284

Կնիկը մարդի միտքը վաղուց գիտէր. հաճի անուամբ լսին ու վեր կենալը մին էլաւ. հաց քաշեց առաջներն ու ասեց աղպօրը. փեսեդ ինչ ասում ա, խօսքիցը դուս մի՛ գալ:

Տե՛ս ի՞նչ տեղն ա հասել քիրն աղպօրը փոս ա փորում:

Հայը դրին առաջնեկն ու մարդ ու կնիկ մտան Սօսի տաճարը, աւտոնում են, վ.արդիթե-լին նրա առաջին լիրը են չինում, փիս աղդից են չինում; մուռատառ, քօս, չվինքը ծուռը, ոտը չոլախ՝ էլ բան չեն թողում, որ անխղճմտանք բերաններից վեր չի ածեն էն աննման հրեշտակի պէս աղջկայ վրայ. կնկայ ասածին մարդն ա վկայութիւն տալիս, մարդինը՝ կնիկը. վաղն ասածի պէս որ ասում ա՝ «տանտրոջ վրայ լիս վեր էկաւ, ա՛լ տեսաւ, գղիրը», կամ թէ «տանուտէրի վիզն գիրն ա»:

Համա Սօսն իր անկաշնելի մինը մալ ա չինել՝ մինը խախալ (gnrևնի մաղ), դէմն ասում են, դէնը դուս ա ըլնում:

Շատ խրատեցին մարդ ու կնիկ, տեսան որ, թէ նրան ասած՝ թէ քարին՝ մին ա, եքսան(առաւել) սկսում ա գժուիլ, խօսքերը փոխեցին ու իրար աչքով արին:

Կնիկը տեղիցը վեր կացաւ, դուս գնաց ու տուն էկաւ:

Կէս ահաթ չի քաշեց, Սօսի մէրը տուն մըտաւ: Դու մի՛ ասիլ, կնիկը գնացել ա իր աղին ղրկել պատաւի հետ:

— Որդի՛ ջա՛ն, տուն մնանելով ասեց Սօսին, ընչի՛ չես փեսիդ խօսքը լսում; ընչի՞ չես ինձ հնազանդում: փեսէդ ըսօր ինձ ասեց, իմանում՝ եմ, որ զօրթ ա ասում:

— Ես ի՞նչ եմ ասել, մէ՛րս, ես ի՞նչ եմ ասել, դու գիտես՝ քու տղէն. դու ինձ աղանչաք ես անում; հիմի մեղքը քցում՝ իմ վրայ, աչքով անելով ու ձեռը թափ տալով ասեց փեսէն:

Պատաւն էն ահաթը հասկացաւ, թէ ի՞նչ ա ասում; լիզուն ծամծմրելով ասեց. ախար ես մեղք չե՞մ, մի մտաը երեխէն բերես մեր տունը, նա ի՞նչ պտի կատալարի, ընչի՞ ես ըտէնց քու տունը ծի ըլնում:

Սօսը սխալակեց, դեղնեց, սկրթնեց, գառաւ թան. պինչը քամի մտած դիժ մողու նման վեր թռաւ տեղիցը, որ դուս թռչի:

— Ա՛խ, ասեց, սրանք ուզում են ինձ ընչանք վերչի չունչս մի ուրախ օր չի տեսնեմ. բանը գլուխ էկած պրծած՝ հիմի նոր չար թել են օլորում:

Հէնց որ հասաւ դրան առաջը, տեսաւ դուռը չինած՝ բանիքը հանած՝ էն ահաթը ծղրտաց վրընները.—անաքանչնե՛ր, բաց արէ՛ք դուռը. թէ չէ էս ահաթը արինները վեր կածեմ; ասեց աչրինն աչքերը կոխած ու վրայ պրծաւ գալ փեսէն:

Սատանի սրոց փեսէն կուչ էկաւ պլերի չըւալի տակին:

Սօսի աչքովն ընկաւ չվինքը ծռած՝ կուչ էկած մէրը, ձեռները ծալին: Տղէն ճանաչեց էս վայրկ արդ դառած վախտն իր մորը, թիլացան ձեռները, զամէն ընկաւ գետին, աչքերը սև ու սիպ-

տակին տուաց, բերանը տաք չուր կոխեց, չմեց ղլի պէս փռուեց գետնին ու էլ իրան իմացաւ ո՛չ։

— Վա՛յ գլխիս, իմ տունը քանդուեց, ձեր տունը քանգուի՛, չուր բերէ՛ք, սև սրաե՛ր, երեխէս ձեռաց գնաց, ասեց մէրն ու ինքն էլ ընկաւ տղի գլխին։ Աղիքը փորումը կտոր կտոր ա ընում։ Սո՛ս չան... Սո՛ս... Սո՛ս... Թիլ ձէնով կանչում ա անկաչումը։

Համա ո՞ւր ա Սօս. պառաւն էլ հեռը թիւլացաւ։ Մէը ու տղայ նուաղած ճնացին։ Աղիկը վաղեց, չուր բերուց, մարդի վրայ ծղրտաց. դուռըդ փակուի՛, տունդ բրիշակ (աւերակ) ընի՛, մէրըս ու աղպէրս մեռան, նանի՛ չան, աղպէ՛ր չան։

Պառաւին, որ նոր էր վեր ընկել, ինչ հալով՝ չուր ածելով, վեր նստացրին, համա Սօսին ի՞նչ քեար (ազդեցութիւն) կանէր. երկու դաստա քուքուրթ կրակ տուին, ատամները ձէնց կցուել էր, որ չախմախը երկու սհաթ անճախ մնաւ մէջը։ Շատ չարչարուելուց յետոյ՝ նոր գէղդանգէղ (հազիւ-հազ) սրտաքթալը մի քիչ տրփաց ու չո՛ւր... ասեց։

Չուր տուին իրան ու կամաց կամաց ուշքի բերին։

— Ա՛յ անաքանդի մարդ, ասեց կնիկը, մենք արէնտեր էինք դառնում, բայ թողա՛նք գնայ, Աստուած իրան հետ, ասեց ու գնաց դուռը բաց արուց։

Սօսը վեր էր կացել, չէր վեր կացել, աչքը դրանն էր. հէնց որ տեսաւ բաց, ամբամբալով, գլուխը դողացնելով վեր կացաւ ու ասեց. Աստուած էլ էս տան երեսն ինձ արժանի չի անի տեսնելու, քու դուռը սև քարով չարուի՛, փեռայ՝ ու դուս էկաւ, գլիժ չմած՝ գնաց դպա Գարեգնի կուշտը նրանց յիքին։

Դեռ մօտ չի էկած՝ Գարեգինը վարաւուրդ արուց, որ Սօսը գալիս ա, հաւա մի ուրիշ թաւուր (տեսակ) ա երևում։ Մտածեցաւ՝ որ ո՛չ պատկերը կայ վրէն, ոչ չնորհք։ Աչքերը փոս ա ընկել, պինչը երկարել, պռօշները լեղակ դառել, ձեռները ուռի պէս դողում են, հեթհեթում ա, թրչուած՝ դառել ա մի այլանդակ պատ։

— Ա՛յ տղայ, ասեց, էդ ի՞նչ ա քու հալը. դու էս երկու օրս ո՞րտեղ ես։

— Աւրի՛, աւրի՛ մանգանք պատմեմ, ասեց Սօսն ու գլխոյն ընչանք վերջը մի մին Գարեգնին պատմեց։

Հէնց որ լսեց Գարեգինը, արտասուքի տեղակ պէտ պէտ կրակ էր ուղում դուս տայ աչքերիցը. քիչ ճնաց, ասեց, ես էլ քու օրն ընկնիմ, ախար ում աղկայ համար էին ասում։

— Էլ ընչանք էդքանը չհմացայ, ասեց Սօսը, ուրքաթը թէզ էկաւ՝ քանց չաբաթը։

Էս երկօրը Սօսը Գարեգնի կշտին կացաւ, յետոյ ուրքաթ առաւօտենց առաւ Սօսին հեռը,

էկաւ գեղը, ինքը գնայ ժամ, նրան էլ ղրկեց իրանց տունը, որ երթայ մօրը տեսնի։

Հէնց որ գերեզմաններիցը վեր էկան նոր ննջեցեալները, ոսպախաշուն ժամումը կերան, ժամը գուս էկաւ, Գարեգինն էլ յետ գնաց Սօսենց տունը, տեսաւ մէրն ա տանը, Սօսը գնացել ա յիքին։

— Ա՛յ պառաւ, ասեց, դու խելքդ կորցրել ե՞ս, թէ ի՞նչ ա, դու քու ձեռքովդ քու տունը քանդում ե՞ս, տղէդ բալքի մեռնում էր. էս ի՞նչ ա, իրեք օր ա, խելքը գլուխը չի գալի։

— Ամա՛ն, քեզ մատաղ, ասեց պառաւը, Աստուածանից կը խնդրեմ, որ իմ վեսէն իր կեանքումը լաւ օր չի տեսնի. նրա մինն երկու չընի։ Էկաւ, գլուխս տարաւ, թէ հա՛, հա՛, հա... ես լսել էմ, որ նշան էք դրել, դուք ո՞ր խելքովն արիք, մենք հէնց բարեկամ չենք ու մի կտոր աղուհացկեր ենք, ա՛յ իմ աղուհացը նրա աչքերը բռնի, հէնց ասենք, քիր չի՝ ու մի վախտ ձեր ղարաւաչն (աղախին) ա էլել պէտքը չէ՞ր, որ մեր միրքի տակովն էլ անց կենայիք. էն ի՞նչ աղջիկ ա, որ ուզել էք. աչքը շաշ ա, չանէն ծուռն ա, չեմ գիտում ի՞նչ ա։ Ես էլ միամիտ կնիկ, հէնց գիտեմ, թէ լաւութիւն ա անում, աւատացի, հիմի իմ ձեռքովն իմ տունը քանդում էի. ես ի՞նչ էի գիտում, թէ ըսէնց կընի։

— Է՛, նա ո՞ւմ աղջիկն էր աստւա՛ ուզենք, հարցրեց Գարեգինը։

— Վաչէի տղի, ասեց պառաւը։

— Հէրիք ա՛ բաս, ասեց Գարեգինը, ես քումնա հասկացայ, ինաս բարին ու դուս էլաւ, որ երթայ՝ Սօսին ասի։

Ճամիկին քօռազադինայ (դիպուածով) դրան առաստ էկաւ Վաչէի տղէն. —բարի աղողո՛ւմ, ասեց, խալխայ Գարեգինն, քեզ հետ մի քիչ գրից ունիմ, կընի՞ որ զահմաթ (նեղութիւն) քաշես, մի քիչ տան ընիս։

Նա էլ էդ էր ուզում, էն ահաթը կանչեց։

— Գիտե՞ս ինչ կայ, ասեց Վաչէի տղէն. ես լսել եմ, որ դու Սահակենց Սօսին չատ ես սիրում, համ բարեկամ էք, համ աղջում աղպէր. Աստուած սէր միացան պահի. համա իմ աղջիկը դու տեսել ես, ի՞նչ անարատ եփուած դուս էկած, բանի միջում վարժուած, հասակն առած աղջիկ ա, մի տուն կը շալակի մինքին, ման կածի։ Ես էն օրն ասել եմ Սարուխանենց տիրացու Տիրանին, որ նրա վեսէն ա՝ ու տատնըհինգ մանէթ էլ վէչքաշ եմ ասել իրան, որ բանը չինի. համա տեսնում եմ, որ նրա ձեռիցը բան չի գալի. թէ դու կարենաս էդ բանը գլուխ բերել, քեզ քսան մանէթ կը տամ, մի մահուտ էլ չուխայ, խօսքս խօսք ընի, իրա էլ, նշանածի էլ քթէքթը (հարսանեաց հանդերձը) կը կարեմ, լաւ բաժինք կը տամ, հարսանիքի խարջն էլ քումնա ես կը քաշեմ։ Ասած ա. «լաւ տեղը կաշառք տո՛ւր՝ ներս քցի՛, փիս տեղը կաշառք տո՛ւր՝ դուս քցի՛»,

վառք Աստծու, աչխարհքը գիտի, թէ նա ի՞նչ տղայ ա։

Էլ Գարեգինիցը թաքուն բան չի մնաց, իմացաւ, թէ կոմը ո՞վ ա չուրը տարել. լա՛ւ կըլնի, ասեց, էս յիքանոնց բանիցը մի պրծնենք, քեզ չուղաբ կը տամ ու թողուց գնաց։

Հասաւ Սօսանց յիքին, տեսաւ, որ ափնումը խռմիալով քնել ա. էլ ղմիշ չարուց (խնայից) վեր կացնի, ինքն էլ կողքին թէք ընկաւ։ Մի վախտից յետոյ Սօսը վեր թռաւ, տեսաւ Գարեգինը կշտին։

— Օ՛հ, ասեց, էս ե՞րբ ես էկել. արի՛ երթանք հաւտղ ուտենք։

Աչքտոտալով, աչքերը ճըմճռելով, ճլմկոտելով, Գարեգինն ուզեցաւ, որ Սօսին մի փորձի։—Սօս, ասեց, ինձ սիրում ե՞ս։

— Ա՛խ, ասեց, նո՞ր պակ իմանաս, որ ես քեզ սիրում եմ. թէ որ ըսէնց ա, լաւն էն ա, գեօտինը պատռի, ես մէջը մտնեմ։

— Աստուած մի՛ արասցէ, ասեց Գարեգինը, բաս արի՛, ինչ որ ասեմ, անկաղ արա՛։

— Էս սհաթը, ասեց Սօսը, թէկուզ ասա՝ ղամէն կոխի՛ սիրտդ քեզ սպանի՛, անեմ։

— Արի՛ ձեռը վեր կա՛լ էդ աղչկանից, ասեց Գարեգինը։

— Ա՛խ, աղպէ՛ր չան, ասեց Սօսը, իմ մըտքովը չէր անց կենալ, որ մի վախտ քու բերնիցը

ըսէնց բան դուրս կը գայ, հաւա որ ասում ես, ձեռը վեր կունեմ։

— Ապրի՛ս, ասեց Գարեգինը, գիտես, հիմի ես մի բան եմ ասում. փեսիդ արածն իմացայ, նա քեզ համար ուզել ա վաչկի տղի աղչիկը, էն թաւուր աղչիկն ա քեզ կամուսել, տանուտէրնդ մանչերի համար քեզ մահուան դուռը տարնելն ամանչել չի։ Նոր վաչկի տղեն ինձ պատասխանեց. ինձ քանի մանչեր էր տալի, մի մահուտ էլ չուխայ, թէ որ բանը գլուխ բերեմ. տեսնո՞ւմ ես, աղպէ՛ր, բարեկամիցն ի՞նչ ա գուս գալի. ո՞ւր ա աչխարհքումս բարեկամ, քուրիցն էլ մօտիկ բարեկա՞մ, տեսար ի՞նչ արեց քեզ։

— Վա՛յ գլխիս, ասեց Սօսը. էս իրիկուն կերթամ նրա աղչկանը կը սպանեմ իրանց յիքուցը գալուս. տե՛ս հլա, փառքիդ մեռնիմ, Աստուա՛ծ, ում վրայ մարդ կը խօսայ, ինձ վրայ չուն ա հաչում. անպատճառ էս իրիկուն անց չեմ կացնիլ, ես նրա կարմիրը կը կապեմ։

— Գիժ մի՛ կենալ, ասեց Գարեգինը, «չունը կը հաչայ, քարվանը կըքօչայ». թո՛ղ նա էլ իրա համար աչխատի, դու ձեռ քցիլն ասա՛. դու արի՛ էրթանք մեր յիքին, հիմի մեր կիրակուրը պատրաստել կըլնի։

Էս հաւտղի վախտը Աչտարակայ յիքանիքը դառնում են դուքան բազար, աւելի ճամփի վրիններըը. չարչի ասես, եմիշ ծախող ասես, ֆալ-

չէ, թիկ բայ անողը, գալի քցողը, նեաը գնողը, դրբայ, մեկ խօսքով ինչ ուզես՝ կը գտնես։

Հէնց որ Սօսն ու Գարեգինն էկան իրանց յիքին, տեսան, որ մի զարտչի (թուրք բոշի կնիկ) նստել ա ավնուռը, ընկին ա մռիկ տալի, մի չորս հինգն էլ հետը՝ ուր լինն էլ լակոտներ չիվլախ չիվլախ, ոտները բոբիկ, գլուխները բայց, արևիցը սևացած՝ անծող դառած՝ չալակներին՝ կանանած են։

Գարեգինը սաքի ուղեց բարևտնալ, հետաքննիլ, համա Սօսը չի թողուց, թէ տեսնինք ի՞նչ են բայ անում. լինքն էլ իրա համար ընկին մռիկ տալ տուռուց։

Ղարաչին ասեց,—դու մի կորուստ ունիս, մեն ես գալի՝ չես գտնում, էս երկօրը տեղն արել ես, համա Աստուած ա խաբար։

Ղարաչոնցից մինն էլ թիւռ (ոչխարի կամ գառան հոր) մռիկ տալ դիտէր. նա էլ ասեց, թէ կորուստդ անպատճառ կը գտնիս։ Մինն էլ թասի մէջը չուր էր ածում, ջրին մռիկ տալի. նա էլ ասեց, թէ դու ո՛չ կորուստ ունիս, ո՛չ գտնես, համա քեզ թշնամիք ունիս, թաքուն եաևիցդ մեն են գալի։

Գարեգնի մէրը գնաց հաւտղ, գեղձը բերուց տուռուց դրանց ու ճամփու քցեց. լինքն էլ աղչկերանց հետ նստեց գեղձը կլպեց ձմեռուան ալանու համար, տղէքանց հետ ղրկից տալով։

ԻԹ.

Սուրբ խաչ շաբաթ իրիկունը Աչտարակումն լինչքան նոր ննջեցեալտէրը կային, թունդրները վառեցին, էծերը մորթեցին ու խորովուն քաշ արին էքուցվան համար։

Տանտիկինն իրա տեղերը թունդրի չըրթանը քցեց ու քնեց, որ վախտ վախտ վեր կենայ, ակը տայ, տեսնի էրուել չի հօ։

Լիսը որ բացուեց ամէնի վրայ էլ հանեցին անուշ խորովուն թունդրիցը, հոտիցը մարդ էր կչտանում. ո՛ր տեղը ձեռն էիր տալի, թել թել էր ընում; կարատեցին, բաժին բաժին, վայ աերին հարևաններին, ազգականներին ու ով էլ ռաստ գար։ Լաւ լաւ տեղերիցն էլ կտրեցին վեր կալան, որ ժամը ղրկեն ճաշին. էրին էլ տէրտէրի համար պահեցին։

Էս օր նոր մեռելների «Սուրբ խաչն» ա. թէկուզ պատի երեխայ էլ ըլներ, պտի կատարէին։

Կնանիքն ամէնքը հաւաքուեցին իրանց բակերեկամ ննջեցեալք ունեցողների տունն ու քշերհանայ գնացին գերեզմանները, լայ էլան, ընչանք տէրտէրներն էկան, օրհնեցին ու էլ յետ թօքունով վեր կացան, էկան ներքև, թադարէք (պատրաստութիւն) տեսան, որ ժամը հայ դրկեն։

Էլ յետ ժամի սեղանը բացուեց, «Սուրբ խաչի» խորովուն լցուեց. երկին սուփրի գլխիցը տերտերը վեր կալաւ ղրաղ դրուց, որ տուն ղրկի, մնացողը նստեցին անուշ արին, օղըրմաթաս խմեցին ու վեր կացան։

Գարեգինը հէնց որ էս հացկերութիւնիցը վեր կացաւ, Սօսը միան ընկաւ։ Գնաց մօր կուշտը՝ որ վաղարշակենց տանը տանուկին էր, մի քիչ խորովու առաւ ու գնաց Սօսենց ածերը։ Հիմի թէզ թէզ էր երթում։ վախում էր, որ Սօսը գժուի ոչ ու գնայ վաչէի տղի աղլկանը ջնաս տայ։

Տեսաւ, որ Սօսն ընտեղ չի. չատ դէս ու դէն ձէն տուուց, չը կար։ Հէնց ուզեցաւ յետ դառնայ, մին էլ էն տեսաւ, որ Սօսը մի ահագին չահմար (իժ) օձ, մի ձեռը չընքուտը՝ մի ձեռն էլ պոչիցը բռնած՝ բերուց։

Գարեգինը հէնց որ տեսաւ, վախեցաւ ու յետ քաշուեց, համա Սօսը՝ մի՛ վախիլ, ասեց ծիծաղելով, մեր թշնամին էլ ըտէնց խեղճանայ իմ ձեռին, ոնց որ էս գաղանը։

— Այ տղայ, էդ ո՞րտեղանց ես բռնել, ասեց վախվախելով Գարեգինը, վեր քցի՛ սպանի՛, թէ չէ մի ջնաս կը տայ։

— Ի՞նչ ես սիրտդ ահ քցում, ասեց Սօսը, սա իմ դերին ա դառել։ Գնացել էի մեր Քարաբաշը, տեսայ, որ Արշաւիրը աւետնչուն (թռվիչ) հետը քցած՝ տանում էր իրանց յիքու պատը աւետիլ տալու։ Հարցրի էդ ի՞նչ ա, ասեց, օձ կայ՝ պատի հանիլ տամ։ Երեկ երեխէքը տեսել են, վախում եմ՝ մի ջնաս տայ։

Ես որ լսեցի Արշաւիրիցը՝ նրանից առաջ ընկայ ու ասի, արի՛ ես էլ գամ, գնանք տեսնենք։ Հէնց որ հասանք նրանց յիքին, մին էլ տեսայ, որ պատի տակին կուտապ էր էկել (գաղարուել). վրայ վազեցի դպա օձը, համա նա փշշայրուց ու վրայ վազեց։ Ես անկաղ չէի արի, դամէս հանեցի ու առաջ գնացի։ Օձը տեսաւ, որ ես իրանից վախում չեմ, յետ փախաւ։ Ես ոտս դրի չընքին ու ընչանք նրանց գալը բռնեցի չընքիցն ու վազեցի առաջները։ Աւետնչի թռուրքը որ տեսաւ, արևացաւ ու ինձ վախացնելու համար ասեց՝ վեր քցի՛, թէ չէ քեզ ջնաս կը տայ։ Ես՝ որ էդ թաւուր բաներն ինձ համար խաղ ու պար են, անկաղ չարի։ Մի թօքուն երեխէք աւետնչու քամակիցն էկել էին, գլխիս վրայ աւելին։

Հէնց իմանաս, թէ են ահաթն էս հարևանների անկաղներուտը ձէն տուին. ամէն տեղից կիտուեցին։

Վարդիթերս էլ որ հարսի հետ ներքև սերկևելու տակին նստած էր, էկաւ մի քիչ վերև ու մոիկ տուուց։

Էլ ով կարայ ինձ բռնիլ, հէնց իմացայ՝ աշխարհքն իմն էլաւ, կռներիս վրայ մի նոր զօրաղութիւն էկաւ, սրտումս էլ հէչ ահ չի մնաց, հօ առանց էն էլ չ'կ...։ Ա. ան.չու գիլի աւետա-

բանն ինձ համար մի ահ վող չի ածեց։ Ես իմ դօչադուխիւնը չհանց տալու համար բայց Թոդի ափնուսը. խալխը քօմնա վախեցան ու ճղճըղալով յետ փախան. Օձն ուզեցաւ որ փախչի, մին էլ վրայ հասայ ու հաւի ճուտի պէս բռնեցի։

Աւտանչին վախենում էր մօտ գալը, յետոյ տեսաւ, որ վախացնելով բան չի կարաց չինել դօչադուխիւնս գովեց ու աղանչաք արուց, որ տամ իրան, տանի տատմիները հանի, մնան ածի, զատ կիտի իրա համար, համա տուի ոչ, վեր կալայ բերի։

— Վէ՛ր քցի սպանի՛, ասեց Գարեգինը. ա-տած ա. նալաթ նրան, որ օձը կը տեսնի ու չի սպանիլ։

— Ես էլ հէնց ըտուր համար եմ բերել ասեց Սօսը, որ տիկ հաննեմ, մորթին գամիս ե-րեսը քաշեմ։

Սօսն էս օձը բռնելով՝ հէնց գիտեր, թէ աչխարհքս իրան են տուել. իրա սիրեկանի մոիկ տալը, աւտանչու իրան գովիլը, Աբշալերի տա-մացքը ոտները գետնիցը կտրել էին։ Համա Գա-րեգինը փափակի ցատալի խօսքերը լսելուց յետոյ, որ Սօսին չէր ասել, միտքը տատանում էր. ընդ-դուր համար էլ սառը սրտով էր մոիկ տալի Սօսի արածին, աւելի տխրում էր՝ քանց թէ ուրախանում։

Սօսն իրա գերեմաստի դադանակովը մի հետ որ տուուց օձի գլխին, իր բանիցը պրծաւ. թէ

չէ որ գլուխը չի չարգէր, թեկուզ հազար կտոր անէր, օձը չէր սատկիլ՝ ընչանք աստղերը գու-գալը։ Յետոյ կաչին հանեց, անց կացրուց մի հատ փէտի վրայ, որ չորանայ ու ինքը գնաց ձեռները լուաց, էկաւ Գարեգնի բերած խորո-վուն կերաւ։

— Մեր Պարէհան ուզում ա էքսցուանից քաղ քցի, ասեց Սօսը, ինձ ասել ա, որ ես էսօր տաքար (գինու հոր) առագաստը լուանամ, ճրա-գուեմ, որ էքսցս Մինջնահանդի ածերը կրենք մի քանի ձիով, էլ օր էլ Փարաքաչը քաղենք, բե-րենք ըստեղ, ընչանք էս չաբաթ՝ բալքի կարե-նանք վերջացնիլ։ Համա ես ասեցի, Թո՛ղ էսօր կենայ, էքսցս պահանի (ձմեռուան համար կախ տա-ղու խաղող) կը կիտենք, մեզք ա՝ կիրակի ա, մե-ռելոցք ա. էլ օրուանից քաղը քցենք. գու ի՞նչ ես ասում էս խօսքին, դրումն ի՞նչ ա գրած՝ Այս-մաւուքքումը կամ Մաշտոցումը. էքսցսայ կիրա-կին կոտրիլը մեզք ա՞, թէ չէ։

— Ոչ Մաշտոցումը կայ էդ, ա՛չ Այսմաւուր-քումը, ծիծաղալով ասեց Գարեգինը, համա Տօ-նացոյցը դրում ա, որ էքսցս մեռելոցք ա, պահ-մեր ննջեցելոց հոգու համար աղօթք անենք, ո-ղորմութիւն տանք. մեր վրայ ամակ-աչխատանք ունին. չատ չենք նրանց յիշատակը մոքներս բե-րում. անուշն էն ա, տարին հինգ նատակատիկ կայ՝ իրենքն անճախ են կատարում։

— Լա՛ւ, տաքար առագաստ լուանալը հօ մեղք չի՞, հարցրուց Սօսը։

— Ընչի՞, թաղին (բարակ) չուն չես հեսա-քո՞ւմ, ասեց Գարեգինը, ըտոնք բան չի՞նե։

— Թէ որ իրիկնապահին անենք, հօ մեղք չի՞, հարցրուց Սօսը, մենք մեր հէրերիցը տեսել ենք, որ կիրակի օրն էլ, որ ճաչը թէքուեց, կիրակին կոտրեց, բանի կենալը մեղք չի. շաբաթ օրը, որ իրիկուայ զանգակը տան, ընդուց յետոյ մեղք ա, որ կիրակնամուտ ա, էքսի օրն էլ կիրակի ա. էս օր էլ մեղք ա, ընդուր որ էքսուց էլ կիրակի ա. էքուց իրիկնապահին ի՞նչ կայ որե։

— Օրը ո՞նց կը կոտրի, ասեց Գարեգինը, սաղ օրը անց որ կայ՝ ընչանք իրիկուն էլ ընկնց կըլի էլի՛, կիրակին կոտրիլս ո՞րն ա։

— Շատ լա՛ւ, ասեց Սօսը, բաս որ ըտենց ա, էքուց էլ անց կենայ, էլ օր բանի կը կենանք. տաքար առագաստ լուանալն ու պահոնի կիտիլը մի դժար բան չի. փառք Աստծու, իրան տուած իցը՝ էնքան ալվան հատոշ ունինք, որ ուղիքեան էլ պահոնի տանինք, էլի կը մնայ. Ասկեարին ու Քիշմիշին մէրս քաղել ա չամիչ արել, մէկէնէրիցը շատ ունինք. էդ լաւ կըլնի, էլ օր պօպօքներս (ընկոյզ) էլ վեր կանենք, կը մնայ փշտաը, չորեքշաբթի օրիցն էլ քաղը կը քցենք։ Համա դիտես, էքուց մեր գեղի կէսը քաղում են. էսօր հիմի կարամ ասիլ, որ հարիր տեղ տաքար առագաստ են լուանում. տէրտէրի տղէն հէնց նոր

ճրագուն պղնձէ միչին տանում էր. ասեց պաի էսօր պըծնեմ, որ էքուցուանից քաղ անենք. ժողովուրդը որ կայ՝ աչքը տէրտէրին ա քցում, ինչ որ տեսնում ա՝ էն ա անում. տէրտէրը որ կիրակի օրը բանի տեղ չի քցի, ժողովուրդը հօ Զատկի կիրակի օրն էլ հեսաբ չի պտի քցի. սաքի էս ի՞նչ իրաւունք ա, որ մեր էրէցն անում ա. բա վրնեերը խօսալուս բերնիս գալիս ես, թէ մի՛ խօսալ. հա՛, խօսքը մեր առաջնորդին հասցընող ընկեր հա՛. ես գիտէի, թէ կիրակուրը ո՞նց կէփելը. դուք ե՞րբ պտի քաղ քցէք։

— Մենք հլա էլ օր պտի սերկևիլներս քաղենք. մի քիչ տանձ ունէինք՝ էն օրը քաղեցինք, պահոնի էլ դեռ չենք հաւաքել։

Գարեգինն ու Սօսը երկար խօսալուց յետոյ՝ կամաց-կամաց ղրից տալով՝ յետ էկան գեղն ու գնացին լեղանալու ճաշուայ շրքին Աւազագեօղլումը։

ԻԳ.

Յերեկը քշերին յաղթելով՝ ցրուեց նրա թանձր մուխը. մարդկերանց քունը փախաւ, գընաց աչխարհքի տակը։

Սրանը դեռ նոր իր գլուխը հանել էր, Սուրբ Խաչի մեռելցք երկուշաբթի օրը, որ Մողնու թաղիցը վեր էկան դպա Աչտարակ քաղաքները, չարակներին, մի երկու ցամաք հայ միչին, հինգ

վեց հարիւր հոգի կարիցիք ու Հանափանքցիք, լըցուեցին Ուռուցի պատերի տակը, ընչից՝ որ ճամփայ էլ չէր ընում, որ մարդ անց կենայ։

Աշտարակցիք տեղիցը վեր կենալը մի մին մարդ ղրկում են Ուռուցը, որ քաղուր բերեն յիքին քաղելու։

Վարդիթերի հերը քոմհէքիցն առալ դուս ա էկել, տասը հոգի առալ արել, տանում յիքին՝ ամէն մէկին իր քաղլակովը մին հատոզ խոտատանալով։

Դեռ արևը նար էր բարձրանում, որ էնքան ֆահլիցը (բանուորներիցը) մինը չի մնաց, քոմմա ցրուեցին յիքանիքը։

Ըստուց յետոյ ընչանք յիքանոնց վերջանալը Աշտարակու հալը Աստուած ա՛չ չհանց տայ։ Ինչքան հարուստ մարդ էլ որ ըլի, հաբին հէնց գուրշ (ցնցոտի) կըլնի, իր ծլանքները (ծռռեվ) ուռռու տերևի պէս երկար երկար քաշ ընկած կըլնին։ Քոմմա էլ պատռուել են յիքանոնցումը հատոզի թիթերի մատներիցը կամ տաշտակներիցը (բարուճակ)։

Կնանիքը, որոնք տանն են քնում, առաւօտէնց թէզով իրանց բանը կը պրծնեն ու դպա յիքին։ Մէկ խօսքով՝ մի իստակ շոր չես գտնիլ որ չիրուտ էլած՝ կուպր դառած չըլնի։ Մի դհիցը քաղցու կրոդները բարձած լեքշերը (հորթևի տիկ), ձիանոնցը գա՛հ տալով, քամակիցն ընկած՝ կրում են, մի մին տեղ էլ ճամփին փուք տալի, որ

պատռուի ա՛չ, ես թէ որ լեքշը փռած ա ընում, կամ քաղցուն շատ ա էփ էկած ընում, մի պրատիկ աչեղ որ ուղում ա ծակի լեքշը, էն ահաթը մռռահար (փոր փայտ բիզ) են չինում ու տալի ծակուած տեղին, որ դուս չի գայ։

Որը յիքին քաղել պրծել ա, պղինձ ա, որ կրում ա գեղիցը՝ մաթ (ռուբ, բախտագ) էփելու համար, ով որ չի ուղում յիքումին էփել, տանն ա բերում։ Էրկու ընկնի մենծ մենծ արաղի պղինձները դնում են անկրակ օճաղի վրայ, լիանահողը մաղում, քցում նոր արտրած քաղցուի վրայ, էն ահաթը եռ ա գալիս։ Ընչանք էփը նատիլը պտի լսուռնեն, թէ չէ վեր կը թափվի։

Վարպիթերը թէզ թէզ իրա մոր միաքին ա քցում; թէ ասա՝ հատոզը արտրեն, որ մաթացու վեր ունենք, թթուի ա՛չ։

Հէնց որ քաղից պրծան, վարպիթերի աղպէրտներքը տանները հանեցին, խստակ լուսցին, Աստծու անուամբ տուին, մոտն առագաստի մէջն ու հատոզը արտրեցին։ Ցետոյ բերին մղեցին, դիրք գրին, տախտակն էլ վրէն գրին, որ քամուի։

Մարդի սիրտ փռռատորում ա, երբ որ քաղցուն՝ Աշտարակցու սրտի տրախտիթինը՝ նրա տարեկան ապրուստը՝ տախտակի տակիցը կնճռոռի մէջիցը առու ա ընում առագաստովին ու ըչըչալով թափում տաքարը։ Աշտարակցու սրտին

պանդակի ձէնից քաղցր ա թռուում էս գնգնդալը, որ տաքարն անում ա՝ քաղցուն իր մէջը լցուե-լուս. համա ի՞նչքան ուրախութիւն ա ընում; երբ որ մին էլ տեսնում ես, որ տաքարը չա-բաբներից (շուրթն) հետ լցուեց ու քաղցուն է-կած տեղովը յետ դառաւ առագաստումը գեօլ էլաւ, իմաց տալով իրա տիրոջը, թէ լինճ կրի՛ պրծի՛, կարասները լցրո՛ւ, յետոյ մին էլ պտի լցուի՛: Քանի՞ անգամ փառք ու շնորհակալու-թիւն ա, որ մեր ա ընում Աշտարակցոյց բեր-նից էս վախտ:

Վարդիթերենց տաքարն էս ուրախ խաբարը տուաց, երբ որ Վարդիթերի մերը պղնձները սարքել էր հնձանի դռանը:

Քաշեց տաքարից քաղցուն, պղնձները լցուց, հողը քցեց, մի դհիկն էլ տղէքը բարձեցին քաղցուն ու կրեցին: Վարդիթերը ջերեփը ձեռն առաւ ու քաղցուն խառնելով միտք էր անում ինքն իրան ու ասում: —ա՛յ քաղցու, հիմի որ ըսէնց թռչում ես, եարաբ ո՞վ պտի քու մաթիդին ուտի. եարաբ ո՞ւմ համար պտի հ ա լ ո ւ ա յ ու ձ ո ւ ա ծ ե ղ ընիս դու. եարաբ կընի՞ էն օրը, որ Սօսը մեր տանը նստած ընի, իմ մէրն ասի. աղջի՛, գնա՛ էն մաթիդը բե՛ր, որ դու ես վրէն կանանել էիլե. բե՛ր Սօսի համար հալուայ անենք, նորափեսայ ա, էկել ա. եարաբ քեզանից էփուած շուշուխը կը լցուի՞ Սօսի ջէքն ու նա էլ ուտելով կասի՞. սրա պօպօքն ու կորիզը չարել ա իմ սիրելիանը:

Ըսէնց միտք անելով Վարդիթերը՝ ջերեփը ձեռին խառնում էր, ես թէ չէ պարզածը քա-մում էր մեծ պղնձի մէջն ածում, տակը կրակ անում; որ մէրն էն դհիցը կռնները քչտած՝ էկաւ:

— Աղջի՛, լաւ մուղայիթ կա՛ց, էդ խաչուա-ծի տակն առնի ո՛չ:

— Ա՛խ, նանի՛ ջան, նանի՛, հոգէց քաշելով ասեց Վարդիթերը, ես էս մաթին էփում եմ; եարաբ ո՞վ պտի արժանի ընիլ սրանից ուտե-լուս:

— Հօ դժուել չե՞ս, աղջի՛, ղնամիլ անե-լով (մեղադրելով) ասեց մերը. էդ ի՞նչ միտք ա, որ քու մէջը մտել ա. հէնց ես խօսում, կասես, մազերդ սպասակած, դերեզմանի դուռը հասած պառաւ ըլես. հլա դու պտի աչխարհքիս մէջը նոր ոտ դնես. քու միտքը պտի ընի, թէ էս մա-թիդն իմ նշանածն ուտի, սրա քաղցրութիւնովը ես պտակուեմ: փառք Աստծու ի՞նչ ա էլել:

— Ա՛խ, նա՛նի ջան, ես էլ էդ եմ ասում; ասեց աղջիկը, եարաբ ո՞վ պտի սրանից ուտի, եարաբ մին օր պտի՞ Սօսը....

Աղջիկը հէնց էդ անումը բերնիցը հանեց, կարմրեց դառաւ չիլայ, անկողնները տաքացաւ, ջերեփը ձեռիցն ընկաւ պղնձի մէջն ու դլուխը կախ քցեց, սուս կացաւ:

— Մէրը որ տեսաւ, վախեցաւ, թէ աղջի-կը մի հանդիպակի կը դիմիչի, էն ա՛հաթն ասեց.

—Ի՞նչ ես վախում, բալա՛յ ջան, քու սրտիդ փափակը կը կատարեմ. մի՛ վախիլ, քեզ մի հէնց տղի տամ, որ աչխարհքի միջին մինն ըլնի. Սօսան ա սրտիդ մուրազը՝ աչքիս վրայ։

Սիրով կրակուած աղջկայ սիրտը դառաւ մի պղինձ, որ փլաւի ջուրը միջին եռ ա դալի. մօր խօսքերովը սիրտ առաւ, իրա միջին ճխաց, խընդաց ու մաթի վրայ պտիտ էկաւ։

Պարզածներին տակի տիլը թօփարին մի մէղաբի (յոդնայ սիոց) մէջ կախ տուին որ քամուի, նրա ջրովը հողի մաթն եփին, մեղրի պէս թանձր, որ գանակով կարուի, աղիզ սիրեկանը գալուս՝ հողի մաթի պուլիկը (կնուճ) բացուի։

Ընչանք սրանց հանդ ու հունդը, արևն էլ իր պարտքիցը պրծաւ, գնաց գնչանալու. ամէն մարդ էլ յերեկուան բանելուցը բեզարած՝ թեք ընկան քնելու։ Մաթ էփողին մէնակ քուն չի կայ. թէ աչքը մի քիչ կպցնի, վա՛յ թէ քնով անցնի, վախտն անց կենայ, կամ թանձրանայ, կամ թէ չէ ըլչի, պռնկներովը վեր թափի, փչանայ։

Վարդիթերի մերն էլ ղմիշ չարուց (խնայեց), որ չահել աղջկայ երեսը մուխ ու ծխից խարաբ ըլնի, եա թէ չէ անքնութիւնից աչքերը խառնի. տեղերը քցեց ու վարդիթերին ասեց. գնա՛ քնի՛, բալա՛ ջան, գնչացի՛, էն գլխէն թեզ վեր կը կացնեմ։

— Թո՛ղ ով ուզում ա, քնի, ասեց էրուած էչխալամիչ էլած աղջիկը, ես պարիտն պտի մը-

նամ, դու, պառաւ կնիկ ես, թեզ լինկ, աչքդ կպցրո՛ւ, մի քիչ չունչդ քեզ քաշի՛, ես օճախին մոխիկ կանեմ, կօ՛րոփեմ, տակը ցախ կանեմ, կը սառցնեմ, հասը կը տեսնեմ, թէ հասնելով ընկի, քեզ կը զարթնացնեմ. վախիլ մի՛, քչերը տարի ա, ինձ էլ հանգ կը գայ։

Մէրը աղջկանն ա զօռում, որ էրթայ քնի, աղջիկը մօրն ա ճամիայ չհանց տալի, հետն էլ աղանչաք անում, պռնկնոտում, թէ թո՛ղ ես զարթուն մնամ, սարվեմ։

Ինոզական սէրն ե՞րբ կը թողայ իր ազիզ մինուճար աղջիկը մինուէնակ քչերը զարթուն մնայ էս անվերի վերի (ատայի) տեղումը. չորս դիհըդ ես մոխիկ տալի, լինակի լիսը ամէն ծառի տակին մի մին հարամի (վիշապ) ա չհանց տալի. մի ծառ որ խշխշում ա, կամ տերևը ժաժ ա գալի, հէնց իմանաս, Ղզլբաշի սարվազն ըլնի գալիս, որ չափար քցի (շիոր), տարան-տարան անի։ Ճռեկները քարերի տակիցը, պատածակերիցը, հէնց իմանաս, թէ Չահրայ (ձախարակ) ըլին մանում։ Մի թուփ՝ որ թմբերքումը մի քիչ քամի ընկնելով դողդողում ա, հէնց իմանաս, թէ արջն էկել ա իր քօթօթներովը (կոտիւն) յիքին ա ընկել, հաւոյ չի գտել, հասել ա ընչանք ըստեղ։ Մի պըտիկ չօփի չուաքը մի մարդաչափ ա երևում. խամ մարդ որ ըլնի, լեղաճաք կըլնի։ Համա Աչտարակու յեսի երեխի համար էլ էդ թաւուր բաները հա էլած՝ հա չէ. նրա համար տխուր ա էն

քշերը, որ էդ բանները չըլի։ Ի՞նչ պաի անէին էդ բանները Վարդիթերին։

Համա չէ, մերը տեսաւ, որ խաթրովը չի ընում, աչքերն օլորելով ասեց. գնա՛ Թեք Իշկ, քնի՛, թէ չէ հօրդ կասեմ։

Խեղճ աղջիկը հօր անուշը որ լսեց, էլ չի կարաց բան ասիլ, գնաց մնաւ տեղն ու տաղ արուց, ոնց որ մի կաքաւ թառլան դղից (բազե) փախած՝ գնում ա գլուխը կոխում ձնի մէջն ու տաքի կենում։

Մերն արևէչինն ա ընկել, թէ աղջիկը քնեց. համա քունն էս քշեր նրանից փախել էր. թէ ուղում էլ էր մօտ գայ, Թողում չէր, որ իր աչքերի վրայ նատի, թէ էս մաթիկը պաի Սօսո ուտի, ես էվեմ, որ աւելի անուշ ընի։

Պառաւը փափաղով ամէն բանը կարդի քցեց ու էկաւ տեղի վրայ Թեք ընկաւ, որ մի քիչ դնջանայ։

Վարդիթերը եօրղանի տակիցը աչքերը քցել ա կրակի լոյսը մօր երեսին ու մոքումն ասում։ —Մի բուռը մեռի հող ըներ, չաղ տայի վրէն, քունը տանէր, ես վեր կենայի, եվէի։

Պառաւութիւնն էլ լաւ բօլ մեռի հող ա. գլուխը դրուց բարձին, էլ իրան իմացաւ ա՛չ, գնաց վերի աշխարհքն իր հոգու ճամփի համար խաբար իմանալու, գլխատեղն էլ որ լաւ չէր, խոբմէ փոցը վեր կալաւ։

Ուրախ ուրախ տեղիցը վեր կացաւ սիրով մաղուածը, կամանց լհեբը քցեց մօր վրէն, նըստաւ պղնձի կողքին ու աչքը քցեց իրանց ալանի վառելու չնդլին (կարհան), որ լիանակն ընկել էր վրէն. հիմի ա կը գայ, ասում ա, մի ահաթէն ա՝ ոտի չղկոցը վեր կըլի, Սօսո անց կը կենայ։

Պղինձն էլ մնաացաւ, մաթին էլ մոքիցը գընաց, ուշք ու միտքը չնդլի վրայ ա, աչքը ոչ մի դհով չի Թերթում։

Մին էլ էն տեսաւ, որ իրանց ավնումը մի սուփրայ ա քաց արած, ինչ որ աշխարհքիս միչին քաղցրահամ կերակրներ, անուշ խորակներ, լաւ լաւ չարաղներ (միրգ), իրա էված մաթը, իրա չարած չուլուխը, իրա կլպած, միչած ալանին ընտեղ լիքն աւ։

Էս սուփրի վրէն նատած էր Գարեգինը, Սօսը, մին էլ ինքը։

Գարեգինը գինին լցնում ա ոսկէ Թասի մէջը, մինն ինքն ա վեր ունում, մինն էլ տալիս ա Սօսին, մի Թաս էլ Թերմուն (օշարակ) տալիս ա իրան՝ Վարդիթերին։

Սօսն էս Թասերի վրայ հէնց ա խաղ կանչում, որ մի ձէնը երկնքումն ա լսում, մինը գեռնքումը. իրար են կպցնում Թասերը չկոչխակալով ու իրար կենաց խմում։ Սօսը Թոլած էն լաւ լաւ անմահական կերակրները, ուտում ա Վարդիթերի էված մաթը։ Մին էլ Թասերը լըցնում են ու յառաջ Գարեգինն ու Սօսը, յետոյ

Սօան ու վարդիթերը պռօշաի են անում; իրար չան ասում, չան լսում։ Հէնց էս վերջի պռօշտումը, դեռ պռօշ պռօշի մօա չը դնացած՝ երեսումս ա մէրը, որ դալա իրանց ա գալիս։ Յետ ա քաշուում աղջիկը, աչքերը բացուում ա, որ չէ, աչքին ա երևացել, տեսածը երազ ա էլել. մէրն իրան տեղն ա խռմփացնում; հէրն էն դիհը, աղպերտունքն էլ եափունջիքը քաշած գլխներին, անուշ քնի մէջ են։

Ախ ու վախ քաշեց վարդիթերը. օ՜հ, ասեց, ի՞նչ կըլեր մէրս չի գար, ընչանք լիս մնայի էն երկուսի մէջ տեղը, Սօսի կուռը չընքուս փաթաթած։ Համա ի՞նչ, երազը մի բօպէի բան ա, տեսաւ էլ, անց էլ կացաւ։

Մնաց աղջիկը զարթուն. տեսաւ որ աքլորների կանչելու վախտն ա, Քարվան ղռան (*քարվան ջարդող, մի ատոդի անուն է*) խելի բարձրացել ա, վեր կալաւ չերեփով էփած մաթիցը, հովացրուց, տեսաւ թանձրացել ա, կրակը մարմանդացրուց (*հանդարտեցրեց*) ու մօրը ձէն տուուց. —վեր կա՛ց, նանի՛, ասեց, մաթն էփել ա։

Պառաւի անկաղը ձէնի էր, էն սհաթը վեր թռաւ. աղջի՛, ասեց, մկար դու վեր ես կացե՞լ։

— Ի՞նչ անեմ, ասեց աղջիկը, աչքս բաց արի, տեսայ քունդ տարել էր, ղմիշ չարի, որ վեր կացնեմ, քնահարամ ըլնիս, ես նաեցի մաթի կչոխն։

— Քնած չէի, ասեց մէրը, հէնց գլուխս նոր վէր եմ դրել աչքս քիչ կպել ա. (*թէ և առաջի իրիկուանից էր թեք ընկել, բայց էլ առել քունը հարամ ա*)։

Մաթը վեր դրին, բերանը կալան, տղէքանցը վեր կացրին, պղինձը հնձանը դնիլ տուին, մի աման էլ մէրն ածեց, դրուց երկու տղի առաջը, կերան ու թեք ընկան քնեցին. ինքն էլ աղջիկն առաւ կոդքը, թեք ընկաւ ընչանք տուլթան ճաշ (*կես օր*)։

Լիսապէծ որ էլաւ, տղէքը վեր կացան, ճնացող քաղցուն կրեցին, երկու ոտք գնացին էկան, մօրը վեր կացրին։

Արշտոտալով, փռշտալով, երեսին խաչ հանելով, տէր Աստուա՛ծ, ո՛վ բարի լսի տուող սուրբ Աստուածածնին ասելով, երեսը մի քիչ սաքի թէ չուր քսելով, դոդնոցովը սրբեց պառաւը, էկաւ վարդիթերին էլ ձէն տուուց։

— Հողս գլխիդ, ասեց, քչերս ես եմ ընչանք լիս ոտիս վրայ պտիտ էկել, դու ես ճաշքուն տալի՞ս։

Վեր կացաւ աղջիկը, համա էս քչեր սաղ երազների միջին ա էլել. լաւ կըլեր, որ թողայինի՝ ընչանք իրեք օր էլ թեք ընկած մնար։

Սաքի թէ տեսնում էր, որ Սօսը մի սիպտակ, հրեղէն, ճակատը ղաչխայ, յեսի ոտները չալ, պոչը կապած ձիու վրայ նստած՝ իրան էլ

քամակն ա քցել, հէնց ա թռչում, որ թօզ ու դումանը աչխարհքը բռնել ա։

Շատ ձիաւորները ընկել են յետնուցը, համա նրա թօզի ձեռիցը ոչով չի իմանում, թէ ո՞ւր ա էրթում։ Մի օրէն ճամփէն մի սհաթը դնաց, հասաւ մի մեծ լեռ քարի ու դէմ էլաւ, ո՛չ մի դհից ճամփայ չը կայ, միայ մոլորուած կաննած։ Մին էլ էն տեսաւ, որ Աչտարակումն ինչքան զօչաղ ձի նստողներ կային, թիվանք ասպապ քըցած՝ ձէն ձէնի տալով՝ հասան։

— Բռնեցէ՛ք, տղէ՛ք, ձեր չանին մատաղ, ձէն տուին իրար, մեր որսը բանդ ա ընկել։ Վրայ տուին Սօսին, մի արինհեղութիւն էլաւ, մի քանիսին թուանքով կոտորեց, տեսաւ չի ըննում, զամէն հանեց, վարդիթերին վեր դրուց գետնին, ընկաւ դրանց մէջը կոտորելու, համա Արչաւիրն էկաւ, երեխի կռնիցը բռնեց, քցեց թարքը, վախաւ։

Էս փախչելումը մերը ձէն էր տալի, որ զարթնեց երեխէն ու իրանց բանին կացան։

Վարդիթերի ադպէրտինքն իրեք չորս ատք գնացին, վրայ հնգումը գեղի միջին ձէն հուչտ էլաւ (խոտնեց), տռճինկ արուց ու լեքչերը տուուց գետնովը, մինը պրծաւ, մինը պատռեց, քաղցուն չկկին տալով՝ միջիցը փլխաց։

— Բռնի՛, վահան, ասեց Արչաւիրը, մնաքանդութիւն էլաւ։

Համա ընչանք նրանց վրայ հասնիլը, լեքչումը ոչինչ չի մնայ. վրայ եկան, որ մեկել թայը վեր ունին, էն էլ վուք էր առել, կապը դուս քցեց ու քաղցուն գնաց։

Էս վախտին Սօսը, որ տեղից որ տեղ, քաղցու էր բերել տուն, յետ էր գառնում։ Հէնց որ տեսաւ, վեր ընկաւ ձիուցը, էկաւ, գրանց հարաբրին հասաւ (օգնեց), լեքչը վեր կալաւ, կաննացրուց ու նոր կապից, բարձեց ու նստեց իր ձիուն գնաց։

Արչաւիրը, զրթի ա, ուրախացաւ, երեսհանց էլ չնորհակալութիւն արուց, որ Սօսն իրանց հարաբրին հասաւ, համա սիրտն ուզում էր որաքի, թէ սատանէն ի՞նչքան ներհակ ա, որ սա էս սհաթը պատահեց, թո՛զ երկու լեքչն էլ վեր թափէր, կորչէր ու սա ըստեղ դուս չի գար։

Տարան էս մի թայն էլ գարտակեցին, յետ գառան յիքին ու հօրն ասին։ Նա էլ հալիւոր մարդ՝ էլ յետ իրա չահելութիւնը միտը քցեց։

— Դուք տղէք է՞ք, թիլիկ միլիկնե՛ր, ձերն էն ա, որ բրդած, առաչնորդ դրած ըլնի տաք տաք, որ քթանն առնէք ձեռնորդ ու խոթէք, մեծ մեծ էլ խօսաք։ Ա՛խ, օղորմի՛ քեզ, իմ հէ՛ր, ինձ հատնում չէիր, աչքդ բաց արա՛, մի տե՛ս ինձ ու իմ տղէքանցը. ես հարիր բեռը քաղցուն մենակ բերել եմ տուն (թէ և մի բեռն ես անկարելի է, մինչև գոնէ երկու ես չլինին), չալակել, տարել քչքչալով լցրել կաշտանները, միչքիս խլիկը (ողնա-

շարը) կոտրել ա աչխատելով, էլի իմ հէրն ասել ա, թէ բան չես արել։ Տարածներդ հիմի չորս բեռը քաղցու ա էլել, էն էլ աչքներդ էք կոխել։

Վեր կալաւ վահանը, թէ էն մի թայն էլ կէրթար, թէ որ Յօսը վրայ չէր հասել՝ օգնել։

Վարդիթերը, որ իրանց քամբազդութենի համար ձեռները խաչել կաննել էր, հէնց ուրախացաւ, որ կասես թէ հազար թուման փող քաչխեցին իրան։

— Մեռնի՛մ էն թաւուր տղի չանին, ասեց հալիւորը, հալալ ա նրա կերածը. աչքդ կը հանեմ (Արշաւիրին է ասում), վեր կունիմ աղչիկս կը տամ նրան. տղից խնդացի ո՛չ, վեսից էլ ա ուրախանամ։ Դու իմ արածը քանդեցիր, տե՛ս հիմի ի՞նչպէս կը չինուի. հաւանում չէիր, թէ անբան ա, բոչ բոզազ (պարապ) ա, հիմի տե՛ս, քալքի ճկլթի չափ խելք ու քեամալ ունենաս. քոնն էն ա, ընչանք իրիկուն քամի անելով, լոբ-բաղուվթիւն անելով (անպարծութեամբ) քեզ պէս-ների հետ ման գաս, խալխին էլ չի հաւանես։

Հալիւորն ընչանք քաղցուն տաքարի մէջիցը չափելը, ուրիշ լեքչերի մէջ ածելը՝ խօսաց, հլա էն էլ չի հերիք էլաւ, ամէն օր էլ որտեղ նըստում էր, ասում էր։

Քաղցուից պրծան, մաթը լցրին բզղնելը, չուլուզացուն էլ չոկեցին ու տարան տուն։ Իրանք էլ լուացք արին, քաղցուհան էլան ու բարկ ու բարխանէն (ծանրոցի) կրեցին տուն։

Իե.

Սուրբ Խաչից յեօթը երկու շաբաթ չի քաշչեց, որ Աշտարակցիք իրանց յիքանոնց քաղիցը պրծան։

Պրծնողները վոխատուր էին, որ կասես, թէ էն Աշտարակցիքը չընկին, որ երկօր առաջ կային. էն կեղտառ, միջոտ գուրչ շորերը հիմի գառել են եա թաղայ՝ եա թէ չէ խոտակ լուացած ու կարկատած. էն չաղացի գելխանք (արդոյ) գառակները հիմի գառել են կամ կարմիր գառակ, կամ ղրմզի մորթի, կամ չաուերինն էլ՝ բուխտայ. էն վիրնաշապիկները, որ հաղար տեղից կարկատած՝ քաղցուն միչին տախտակ էր գառել, ամէնի հաբին էլ կար, որ տակինը չի ճըղէլիս, հիմի գառել են մահուդ, եա Զեարքեագի, խոտ բաւթով (ժապաւէն) կարած չուխայ. էն օրը մի մարդի հագի լափչին (կօշիկ) չէիր գտնիլ, եօթ չաուերը հէնց լափչին ունին, որ կրնկի նալչէն մի մատն երկար ա. հալա էս երկօրն էլ շատրոնջը թախկ թուխկ (փոխ ի շատ) ծիուում ա։

Ընչանք շաբաթ օրն՝ էլ յիքանոնցումն ինչու չինս չես գտնիլ. քաղցուն որ պրծան, կնճռոռը կը լցնեն տաքարը, երկու իրեք բեռը քաղ-

շարը) կոտրել ա աշխատելով, էլի իմ հէրն ասել ա, թէ բան չես արել։ Տարածներդ հիմի չորս բեռը քաղցու ա էլել, էն էլ աչքներդ էք կոխել։

Վեր կալաւ վահանը, թէ էն մի թայն էլ կէրթար, թէ որ Սօսը վրայ չէր հասել՝ օգնել։

Վարդիթերը, որ իրանց քամբաղդութենի համար ձեռները խաչել կաննել էր, հէնց ուրախացաւ, որ կասես թէ հազար թուման վոզ քաչխեցին իրան։

— Մեռնի՛մ էն թաւուր տղի չանին, ասեց հարիւորը, հալալ ա նրա կերածը. աչքդ կը հանեմ (Արշաւիրին է ասում), վեր կունիմ աղջիկս կը տամ նրան. տղից խնդացի ո՛չ, փեսից էլ ա ուրախանամ։ Դու իմ արածը քանդեցիր, տե՛ս հիմի ի՞նչպէս կը չինուի. հաւանում չէիր, թէ անբան ա, բոշ բոշաղ (պարապ) ա, հիմի տե՛ս, բալքի ճկիթի չափ խելք ու քեամալ ունենաս. քունն էն ա, ընչանք իրիկուն քամի անելով, լոբաբաղուվիուն անելով (անպարծութեամբ) քեզ պէսների հետ մնան գաս, խալխին էլ չի հաւանես։

Հարիւորն ընչանք քաղցուն տաքարի միջիցը չափելը, ուրիշ լեբչերի մէջ ածիլը՝ խօսաց, հլա էն էլ չի հերիք էլաւ, ամէն օր էլ որտեղ նըստում էր, ասում էր։

Քաղցուից պրծան, մաթը լցրին բաղնները, չալմուշացուն էլ չոկեցին ու տարան տուն։ Իրանք էլ լուացք արին, քաղցուհան էլան ու բարկ ու քարխանէն (ծանրոց) կրեցին տուն։

Իե.

Սուրբ Խաչից յետոյ երկու շաբաթ չի քաշեց, որ Աշտարակցիք իրանց յիքանոնց քաղիցը պրծան։

Պրծնողները փոխուում էին, որ կասես, թէ էն Աշտարակցիքը չըլնին, որ երկօր առաջ կային. էն կեղտուտ, ճիլոտ գոբրշ շորերը հիմի գառել են նա թաղայ՝ նա թէ չէ իստակ լուացած ու կարկատած. էն չաղացի գելփանք (արդոյ) գտակներըը հիմի գառել են կամ կարմիր գտակ, կամ Ղրիմի մորթի, կամ չամերինն էլ՝ բուխարայ. էն վիրնաշապիկները, որ հաղար տեղից կարկատած՝ քաղցուի միջին տախտակ էր դառնել, ամէնի հաբին էլ կար, որ տակինը չի ճըղուին, հիմի գառել են մահուդ, նա Զեարքեագի, նա բաւթով (ժապաւէն) կարած չուխայ. էն օրը մի մարդի հագի լափչին (կօշիկ) չէիր գտնիլ, էսօր չատերը հէնց լափչին ունին, որ կրնկի նալչէն մի մատն երկար ա. հալա էս երկօրն էլ չատատրոնջը թախկ թուխկ (փոխր ի շատ) ճուում ա։

Ընչանք շաբաթ օրն՝ էլ յիքանոնցումն լինու չկնա չես գտնիլ. քաղցուն որ պրծան, կնճռոը կը լցնեն տաքարը, երկու իրեք բեռը քաղ-

ցու կածեն վրէն, որ հասնի, արագ դառնայ, ու իրանք կը դնան տուն։

Էս տակի շաբաթն էլ Մաղնու ըխտի պատա. հինգշաբթի օրուանից ըխտաւորի ծէրը դուս կը գայ։

Աշտարակցիք ու Կարբցիք օր առաջ տեղ խլուկ անելով՝ դուքաններըը կը սարքեն. որը ճաթածախ ա, ճոթ կը բերի, որը արագ, գինի. որը չարչու խուրդաւատ (ևաևուռնիք), որը չիրեն (մրգեղէն). Թուրքերն ու Քուրդերն էլ սուրսուներով ոչխար։

Ըխտաւորների որը երևելի մարդ ա, առաջուց կապապարի հայր սուրբին, որ իր համար խուց պահի. որն ապքատ ա՝ հասարի միջին, կամ դուրսը մի տեղ վեր կը գայ։

Ամենից առաջ հինգշաբթի օրը, կամանց կամանց կերևան Կողբցիք. կարմիր մինթանէքը կը նանոնց հաքներին, երեխէքանց չորսը մի ձիու վրայ շարած, մի բեռն էլ խուրջինների մէջը լցրած իրանց պաշարները ձիանոնց վրայ, շատերի հետ էլ մի թօխալի առաջ արած՝ մի երեխայ քշում ա։ Կը դան, Աշտարակայ միջոցն անց կը կենան հատուց ու մաճառ առնելով՝ կերթան վերև։

Ուրբաթ օրն աչքդ բարին տեսնի. որ կողմդ մարդ տաս՝ սիպտակ ու կարմրին տուող գլխներ ա, որ երևում ա։

Վաղուցուան խոյեցիք, որ հիմի Արագի էս երեսումն են կենում, գլխները քամակների դիհը կապած, ամէնի շինքին մի մին ղաթիր (ջորու)

զնդզնդանից շատ շարք (մանակ), երկար երկար ապրկէքը ոտով, նախշուն նախշուն գիւրքէքը հաքներին, պառաւ ու միջակ կնանիքը չիլայ շապիկը լաւ լաւ շորերի վրէցը հաքներին։

— Մկա խատնեսենք (հիմի կը հասնենք), ընդար լուս գերեզմանին խոզ պառնամ, ասում են, կօի խա՞ (հրե հա)։

Հէնց որ Սուրբ Գէորգի վանքի գլուխն երևում ա.—«կօ աղէն երևասի, իմ ձեռն ի ընդար փէշ», ասում են ու վեր ընկնում երեսների վրայ չերմեռանդ պառաւները, երեսները պատինը քսում։ Մարդիկն էլ բիզ բիզ (սրածայր) գետակածալներին մի մին չուխտ մոմ, երեսներին խաչ հանելով՝ համբուրում են ճամփի քարերը։

Մտիկ ես տալի Եղվարդու գիհյը երևում ա Գեղաքուղնոց քարվանը. խնամում ես, որ մօտացել ա աշնան գեղաքուղնին ուտիլը, որ հետները բերում ծախում են։

Վերև ես մտիկ տալի, ճոճոում ա, ճրվըտում ա Նօրագեայցոց ու Գիւմրեցոց արաբէքը (ապղի)։

—Օ՜հ, Շաքեար աղպա՛ր, հոգուդ զուրպան, էշտէ լուսամէտ լուս գերեզմանի քիւմբէթը (գմբէթը) կերևայ կը. յերեսս քեզի հոգ ու մխէրը, ա՛վ գինաւոր Սուրբ Գէո՛րգ. իմ մանչերուս մուրատը տաս, լուսի ես արաբէքանց միջիցը։

Աքարանցիք ձիանն ու եղներըը բարձած, երեխէքը, հարանները վրէն նստուտած՝—խատնենք

ներ ջոչ (ահճ) ադի առքերը պագնենք, ասում են իրարու։

Ամէն գհիչ էլ հաւաքում են Մողնի։

Մողնու գաշտը ներքևիցն ընչանք Աչտարակու գարիդուսի գլուխը, վերևիցն ընչանք Կարբու բերանը, կողքերիցն էլ ընչանք Ձորաքաշն ու Փարքու ճամիչէն՝ ըհտաւոր ա, որ լցուում աւ Ով որ հարուստ ա, չադիր (վրան) ա տալի. ով որ էլ չադիր չունի, իրանց արաբէքանց տակին, ետ թէ չէ հէնց գզումը մի քանի կարպետ ու վալաս են վռել նստել։

Կնանիքը՝ հէնց որ վեր են գալիս, բռնում են իրանց երեխէքանց կռներն ու էնքան բաղմութիւնի արանքը ճղելով՝ գնում համբուրելու։

Դու արի հիմի տե՛ս, ինչ էս ըհտաւորներն են անում։ իրեք հետ եկեղեցու գխովը փարփանի (ձրագի բիբեռ) պէս պտտուում են, ոնց որ փարփանէն ճրագի գլխովը, յետոյ միննում են ժամն ու գպա խորանը։

Խորանի գուռն ընչանք էն ներքի գասն էլ լիքն են. հէնց ա, որ ասեղ ըցես՝ գետինը չի ընկնիլ. գառգոռոցն եկեղեցին բռնել ա. եկեղեցու ձէնն էլ (արձագանգ), որ յետ չի գառնում, մնրգի անկաչ խլացնում աւ

Իրար առաչ կարելով, բռթբռթելով լըցուում են խորանը Սուրբ Գէորգի գերեզմանին ուխտ անելու. չատերն էլ սրտի չերմեռանդու-

թիւնիցը չոքչոք գասիցն ընչանք խորանն են գալիս։

Հէնց որ գերեզմանին հասնում են, գօչերին որ տալիս չեն ու մղկտալով՝ աղա՛ Սուրբ Գէորգ, ձէն տալի, մարդի չիգեաբ ա խաչուում։ Մինը գոռում ա. ա՛ղ Սուրբ Գէորգ, դու իմ երեխին լաւութիւն տաս. մինն գոռում ա. դու իմ գարդին մի գարման անես։

Համբուրում են էրեսած սրտով, լիզում էդ Սուրբ գերեզմանը ու խէչհամբուր քցում, մոմ վառում. չատերի մէրն էլ Հայր սուրբը, որ ընտեղ կաննած ա, ձեռնիցը առնում ա՝ թէ ես իրիկուընը, կամ էքուց պատարագին կը վառեմ։

Գերեզմանի տակին մի ծակ կայ հողով լիքը։ Ջերմեռանդ ըհտաւորն էդ օրհնութիւնի հողիցը հանում են, քցում բերաններն ու հետները վեր ունում, որ տանին իրանց գեղերումը չի էկող հարևաններին էլ նրա ողորմութիւնիցը մասնակից անեն։ Տեղ ու գադար չի կայ, հինգն ուխտ ա անում, տասը նեքսև են լցուում. թէ որ թուանքչին ճիպոտը ձեռին կաննած չըլնի խորանի գրանը, իրար կը կոտորեն առաչ նեքսև մտնելու համար։

Խորանիցը գուս են գալի, յետ գառնում գպա սեղանը, որտեղ բազմացրած ա Սուրբ Գէորգի լուսաթաթախ ոսկէ աչը, Մեռելյարոյց Աւետարանը և մէկէլ մասունքները։ Ամէն մի մասունքը հինգ վեց հետ համբուրում են, աչքնե-

ՄԵՐ ՉՈՂ (ԱՒԱԾ) ԱՂԻ ՈՍՔԵՐԸ ՊԱՊՆԵՆՔ, ԱՍՈՒՄ ԵՆ ԻՐԱՐՈՒ։

ԱՄԷՆ ԴԻՑԻ ԷԼ ՀԱՒԱՔՈՒՈՒՄ ԵՆ ՄՈՂՆԻ։

ՄՈՂՈՒ ԴԱՇԱՐ ՆԵՐՔԻՒԻՆ ԸՆՉԱՆՔ ԱՀՅԱՐԱՔՈՒ ԳԱՐԻԴՈՒԱԻ ԳԼՈՒԽԸ, ՎԵՐԻՒԻՆ ԸՆՉԱՆՔ ԿԱՐԲՈՒ ԲԵՐԱՆԸ, ԿՈՂՔԵՐԻՒԻՆ ԷԼ ԸՆՉԱՆՔ ՀՈՐԱՔԱՉԻՆ ՈՒ ՓԱՐՔՈՒ ՃԱՒԻՒԷՆ՝ ԸԼԱՒԱՒՈՐ Ա. ՈՐ ԼՅՈՒՈՒՄ ԱՒ։ ՈՎ ՈՐ ՀԱՐՈՒՍՏ Ա, ՉԱԴԻՐ (ՎՐԱՆ) Ա ՄԱՒԻ. ՈՎ ՈՐ ԷԼ ՉԱԴԻՐ ՉՈՒՆԻ, ԻՐԱՆՑ ԱՐԱՔԷՔԱՆՑ ՄԱԿԻՆ, ԵԱ ԹԷ ՉԷ ՀԷՆՑ ԳՈՒՄԸ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐՊԻԱ ՈՒ ՎԱՃԱՍ ԵՆ ՎՌԵԼ ՆԱՒԱԼԸ։

ԿՆԱՆԻՔԸ՝ ՀԷՆՑ ՈՐ ՎԵՐ ԵՆ ԳԱԼԻՍ, ԲՌՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՆՑ ԵՐԵԽԷՔԱՆՑ ԿՌՆԵՐՆ ՈՒ ԷՆՔԱՆ ԲԱՂՄՈՒԹԻՒՆԻ ԱՐԱՆՔԸ ՃՂԵԼՈՎ՝ ԳՆՈՒՄ ՀԱՒԲՈՒՐԵԼՈՒ։

ԴԱՒ ԱԼԻ ՀԻՄԻ ԱՒ՛Ս, ԻՆՉ ԷՍ ԸԼԱՒԱՒՈՐՆԵՐՆ ԵՆ ԱՆՈՒՄ։ ԻՐԵՔ ՀԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼՈՒԽՈՎ ՓԱՐՄԱՆԻ (ձրագի բիբեռ) ՊԷՍ ՊԱՏՈՒՈՒՄ ԵՆ, ՈՒՆՑ ՈՐ ՓԱՐՄԱՆԷՆ ՃՐԱԳԻ ԳԼՈՒԽՈՎ, ՅԵՏՈՑ ՄՆՈՒՄ ԵՆ ԺԱՄԻՆ ՈՒ ԴՊԱ ԽՈՐԱՆԸ։

ԽՈՐԱՆԻ ԴՈՒԱՆ ԸՆՉԱՆՔ ԷՆ ՆԵՐՔԻ ԴԱՆ ԷԼ ԼԻՔՆ ԵՆ. ՀԷՆՑ Ա, ՈՐ ԱՍԵՂ ՔՑԵՍ՝ ԳԵՒՈՒՆԸ ՉԻ ԸՆԿՆԻՒ. ԳՈՒԳՈՒԱՑՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱՆԵԼ Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂՆՈՒ ԷԼ (արձագանգ), ՈՐ ՅԵՏ ՉԻ ԳԱՌՆՈՒՄ, ՄԱՐԴԻ ԱՆԿԱՉ ԽԼԱՑՆՈՒՄ Ա։

ԻՐԱՐ ԱՌԱՋ ԿԱՐԵԼՈՎ, ԲՈՒԹԲՈՒԹԵԼՈՎ ԼՑՈՒՄ ԵՆ ԽՈՐԱՆԸ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՈՒԽՏ ԱՆԵԼՈՒ. ՀԱՒԵՐՆ ԷԼ ՍՐՏԻ ՉԵՐՄԱՆԱՆԴՈՒ-

ԹԻՒՆԻՑԸ ՀՈՔԷՀՈՂ ԴԱՍԻՑՆ ԸՆՉԱՆՔ ԽՈՐԱՆՆ ԵՆ ԳԱԼԻՍ։

ՀԷՆՑ ՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՀԱՆՈՒՄ ԵՆ, ԴՕՉԵՐԻՆ ՈՐ ՏԱԼԻՍ ՉԵՆ ՈՒ ՄԻԿՏԱԼՈՎ՝ ԱՂԱ՛ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ, ՀԷՆ ՏԱԼԻ, ՄԱՐԴԻ ՉԻՔԱՒ Ա ԽԱՉՈՒՈՒՄ։ ՄԻՆԸ ԴՈՌՈՒՄ Ա. ՈՎ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ, ԴԱՒ ԻՄ ԵՐԵԽԻՆ ԼԱՒԱԲԻՒՆ ՏԱՍ. ՄԻՆՆ ԱՍՈՒՄ Ա. ԴԱՒ ԻՄ ԴԱՐԴԻՆ ՄԻ ԴԱՐՄԱՆ ԱՆԵՍ։

ՀԱՄԲՈՒԲՈՒՄ ԵՆ ԷՐՈՒԱԾ ՍՐՏՈՎ, ԼԻՂՈՒՄ ԷԴ ՍՈՒՐԲ ԳԵՐԵԶՄԱՆԸ ՈՒ ԽԷՉՀԱՄԲՈՒՐ ՔՑՈՒՄ, ՄՈՄ ՎԱՌՈՒՄ. ՀԱՒԵՐԻ ՄԱՐԴԻՆ ԷԼ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԸ, ՈՐ ԸՆՏԵՂ ԿԱՆՆԱՃ Ա, ՀԱՒՆԻՑԸ ԱՒՆՈՒՄ Ա՝ ԹԷ ԵԱ ԻՐԻԿՈՒՆԸ, ԿԱՄ ԷՔՈՒՑ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԿԸ ՎԱՌԻՄ։

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԱԿԻՆ ՄԻ ԾԱԿ ԿԱՅ ՀՈՂՈՎ ԼԻՔԸ։ ՋԵՐՄԱՒԱՆԴ ԸԼԱՒԱՒՈՐՆ ԷԴ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԻՆ ՀՈՂԻՑԸ ՀԱՆՈՒՄ ԵՆ, ՔՑՈՒՄ ԲԵՐԱՆՆԵՐԸ ՈՒ ՀԵՏՆԵՐԸ ՎԵՐ ՈՒՆՈՒՄ, ՈՐ ՄԱՆԻՆ ԻՐԱՆՑ ԳԵՂԵՐՈՒՄԸ ՉԻ ԷԿՈՂ ՀԱՐԱՒԱՆՆԵՐԻՆ ԷԼ ՆՐԱ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԻՑԸ ՄԱՆԱԿԻՑ ԱՆԵՆ։ ՏԵՂ ՈՒ ԴԱՂԱՐ ՉԻ ԿԱՅ, ՀԻՆԳՆ ՈՒԽՏ Ա ԱՆՈՒՄ, ՄԱՍԸ ՆԵՔՍԵ ԵՆ ԼՑՈՒՄ. ԹԷ ՈՐ ԹՈՒԱՆՔՉԻՆ ճԻՊՈՄԸ ՀԱՒԻՆ ԿԱՆՆԱՃ ՉԸՆԻ ԽՈՐԱՆԻ ԴՐԱՆՔ, ԻՐԱՐ ԿԸ ԿՈՏՈՐԵՆ ԱՌԱՋ ՆԵՔՍԵ ՄՆԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ԽՈՐԱՆԻՑԸ ԴՈՒՍ ԵՆ ԳԱԼԻ, ՅԵՏ ԳԱՌՆՈՒՄ ԴՊԱ ՍԵՂԱՆՔ, ՈՐԱՏԵՂ ԲԱՂՄԱՑՐԱԾ Ա ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԻ ԼԻԱԼԹԱԼԹԱԼԱ ՈՍԿԵ ԱՂԸ, ՄՀԵՌԵԼՅԱՐՅՑ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԵՒ ՄԿԿԼ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ։ ԱՄԷՆ ՄԻ ՄԱՍՈՒՆՔԸ ՀԻՆԳ ՎԵՑ ՀԵՏ ՀԱՄԲՈՒՐՄ ԵՆ, ԱՉՔՆԵ-

րը քաւում վրէն ու գնում ուրախ ուրախ «օղորմի Աստուած» ասում իրանց մարդկերանցը. մինը մեր վախաքն առանք, ասում են, դուք էլ գնա-
333 ցէ՛ք, գիլակ (ոխս) արէ՛ք. մեր ապէն ողորմած ա՝ ամէնիս մուրազն էլ կը կատարի։

Ընչանք կնանոնց ժամիցը գալը, մարդիկն իրանց տեղը չինած են ընում. երբ որ նրանք էկան, սրանք են գնում ուխտ անում։

Ուրբաթ օրն ընչանք իրիկուն ամէն դիից գալիս են յաուում. ինչ թաւուր օյիններ ուզես՝ կայ. մի դիհը քեանդիրքաչ (շարախաղաց) պարանի գլխին՝ ո՛վ Սուրբ Գէորգ, եօթն անուան տէր Սուրբը կարապե՛տ ա ձէն տալի։ Մէկել դիհը մոդէն (պարող երեխայ) ա ձեռների վրայ մանգա-
335 լի. մի տեղ երկու աղուշ նստած՝ մի թօքուն (խումբ) մարդիկ գլխներին հաւաքած՝ մի աղլուխ փռած՝ մարաքեայ են անում (մրցուն են նշանա-
337 կում) ու Սուրբ Գէորգի անունովը փող հաւաքում։

Աչտարակցիք ձէն են տալի.—գնաց, չըմնայ լաւ հաւողը, լաւ փչաչը, լաւ ալանին, լաւ դեղ-ձաչիրը, լաւ գինին, լաւ արաղը։ Մինը ձէն ա տալիս. էս ա հատաւ լաւ պօպօքը, լաւ սերկե-
V էլը։ Կարբեցին գոռում ա. խլըսաւ (պրծաւ) լաւ ձմերուկ-ձմիչը։ Գիւմրեցիք էլ պարապիցը նէքսե նստած՝ իրանց հետ քերած ապրանքն են ծախս անում։ Մի խօսքով՝ Երեւանայ բազարը երա աչ-նան լաւ առուտուրի վախտն էս թաւուր ծախս

չի կարալ ունենալ, ինչ որ էս իրեք օրն ըստեղ ընում ա։

Իրիկունը որ մէջնանում ա, Հայր սուրբն էր-
33 կու աէրաէրի ձեռ քօչխաք (ախոռ) ա տալի, մի երկար էլ մնաց ձեռին, ղրկում ժողովրդի մէջը, որ պաշտուէց հաւաքենն։

— Էքուց Հայր սուրբը պատարագիչ ա, խալխի մէջը մանգալով ասում են աէրաէրները, ձեր բոլոր ննջեցեալց հոգին պտի յիշի սուրբ անմահ պատարագի առաջին. պաշտուէց տուէ՛ք, օրդի՛ք, լիաբուռն, Սուրբ Գէորգը ձեր բոլոր խընդըրուածքը կատարի՛։

Բխտաւորներն էլ Սուրբ Գէորգի անունը լսելուս՝ սրտերի դուռը բացում ա. հանում են ուրախ ուրախ ամէնն իրանց կարողութեան գեօղայ տալիս, մի մին բան էլ աէրաէրների բուռը դնում. աչիդ ղուրբա՛ն, ասում են, էս էլ քեզ ժամուց։

Մի քիչ որ լաւ մէջնեց, ականակիր էլաւ, իրեք թուանքչի հայր սուրբի հրամանովը ճրագները վառում են, ծննում ըխտաւորի մէջը։

Ամէն տեղ ոչխարի ու գառների բառանչոց ա, որ բօղաղը կտրելուս անում են։

Էն մարդիկն ընկնում են ու էրթ, մորթին կիտում։ Փչերն ընչանք լիս հաղար մորթի աւելի ա հաւաքուում; ընչնց էլ էրթ։ Համա ո՛ր ըխտաւորը Մողնու գեղումն ա վեր էկած՝ իրանց բարեկամի կամ ճանանչի ըներումը, նրանց մա-

տաղնելի էրին էլ, մորթին էլ, գմակի կէս փայը, մատաղի կէս փայը, ոտ ու գլուխն էլ տան տիրոջն աւ

Բոլոր գեղը տանուտէր տուն ա. ամէն մի տան տասը տանուհինդ արնուր կըննի վեր էկած. ընէնց տուն չի ըննիլ սրանցում, որ էս իրեք օրն իրան տարեկան զաւուրմէն անի ո՛չ, բրդին հո, էլ հեսաբ չը կայ. ըտով էլ չեն կշտանում Մողնեցիք, իրանց երեխէքն էլ քշերն ընչանք լիս, ցերեկն ընչանք իրիկուն մի մին քերեղաններ ձեռնեերին մատաղ են կիտում, իրանց ազքատ ու խեղճ սաելով։ Սրտաբաց ըխտաւորն էլ Սուրբ Գէորգի դուռն էկած ազքատին հո չի՞ կարալ դարտակ ձեռքով յետ դարձնիլ։

Ըխտաւորները մատաղները մորթում են, ու Աչտարակու, եա ուրիշ գեղերից ուզած պղնձեները շարում կրակի վրայ. խաշլամէն դուս են տալի կիտում ու շորվայ քցում ջրի վրայ, որ ուտողի բերնումը ընչանք մահը համը կը մնայ՝ էնքան անուշ ա։

Ըստուր համար ա, որ Մողնեցիք անբան են. աչքները տարին տաններկու ամիս անկում են, թէ ո՞րը պտի մի ըխտաւոր գայ, որ մատաղի շորվայ ուտենք։

Թէ որ նրանք ոնց որ էս մատաղ հաւաքելու համար են աշխատում, իրանց բան ու գործին կենային, հիմի ամէն մինը մի խան կըննէր. Աստուած տուել ա, ամէն բաններըը լաւ, հանդրնները շատ, իրանք անբան։

Ընչանք կէս քշեր ժամը բերնիցը հետը լիքն ըխտաւոր ա ընում։

Փառաւորի՛ հայր սուրբն էլ, ինքն առաւօտենց ընչանք էս վախտ գերեզմանի գլխավիրեն՝ էն շորումը նստած ա, յորդորում ա նաներին, քուրերին, հարսներին, իր խէչհամբուրը սրտալի քցեն. ի՞նչ անի խեղճը, կարգին հաստատ ընի, վանքի համար ա աշխատում, հօ իր ջիբը չի՞ քցում։ Թէ դուս գայ ըստեղանց՝ տիրացուներն ու թուանքչիքն աչքի սուրմայ (դեղ) կը թռցնեն. սրա համար լաւն էն ա, ասում ա, ես ներողութիւն քաշեմ, քանց թէ Սուրբ Գէորգի մի չոփը կորչի։

Գէչգան գէչ կէս քշերին ճիպատաւորները խեղճ գալով հայր սուրբին, հոգինները միսը քցեցին, զօռով դուս արին ըխտաւորներին ու դուռը չինեցին՝ թէ առաւօտն էկէ՛ք, հիմի քնելու վախտն ա։

Համա ո՞վ կը քնի. արի՛ լսի դու էս քշեր, ի՛նչ էս ըխտաւորներն են անում։ ամէն տեղ էլ մում են վառել, եա թէ չէ կրակ կիտել. նրա լսի առաջին երկու իրեք տրնուր մի տեղ հաւաքուած՝ քէֆ են անում։ խորովածի հոտը խնկահոտից անուշ ա գալիս։

Աչտարակու դինին ու արաղը ո՞ւմ վրայ աս սես, որ իր չնորհքն ու զօրութիւնը չհանց չի տայ. կոնձում են ու իրար օրհնում։—Սուրբ Գէորգը քու մուրազը տայ՝ էլ հետն ասում։ ու որը

Հայավար, որը Թուրքավար, որն էլ Քրդավար կկկլացնում։

Շատ տեղեր սազանդարներն ածում են ու աղջիկ՝ տղայ խաղացնում, ուրայ ձէն տալի՝ իրար կենայ խմում։ Քէ սը էգ օրհնուած սիրա վտառաւորը (խախէրը), Աստուած ո՛չ անի, հասնի, սաղ ըլի՛ն Աշտարակցոնց տկերը. անճախ են մի լիուքիւնի մէջն ընկել, փո՞ղ ղիմիշ կանեն։

Ներքև գնաս Կողբցոնց ու Շահրիարցոնց թօքունները (խարերին) մոխկ տաս՝ քէֆդ կը գայ։

Թօփ են էլել մի բաց տեղ աղաղ աղջկեքը, բռնել իրար փափուկ կուռն ու «ԼԷԼԷԻՆ» ղլել։ Նրանց աղջկերանց քաղցր ու բարակ ձէնը լսողի սրտին մի ուրախութիւն ա տալի։ Տղեքն էլ՝ որ նրանց բերնից առնում չեն ու իրանք ատում ե՛, դառնում ա մի սիրուն տեսարան։ Ամէն տեղից դալի ու զուռնի ձէնը գալիս ա. մի խօսքով տաս ըն օր անքուն կացած մարդ ըլի, էլ չի ուղիլ էս քչեր քնի։

Առաւօտեան լիսը բացուեց՝ Գիւմրըցիք իրանց սուփրի վրիցը վեր կացան, մատաղները կոխեցին խուրջիններն ու արաբէքը լծեցին։ Ընչանք մարդկանց հանգ ու հունգը (պատրաստութիւնը), կնանիքը նեղ նեղ դեղին շալ քաթիխեքը հաքներին, կապիտ կամ կանանչ մահուտից գոգնոցները կապած, դեղին սօլերն էլ ծըլփացնելով ոտնելուն՝ գնացին գերեզմանը համբուրելու, որ գան գնան Էջմիածին։

Մի կողմից սկսեցին գնալը, մի կողմիցը գալը։

Էս օր էլ ընչանք իրիկուն դէսից՝ դէնից, մօտիկ տեղերից, ըսատաւորներ էկան։ Էլ յետ էրէկուան խաղացողներն իրանցը սարքեցին։ Աշտարակցի ծախս անողները հինգ վեց հետ յետ գնացին գեղը, գատ բերին ծախելու։

Ըսատաց իրեք օր յառաջ, հինգշաբթի իրիկնապահին էր, որ երկու աղայ կուռ կուռի բռնած՝ Աշտարակայ Մողնի, մինը իրա բարձր ձէնովը, ոսկի քաքուլովը խուճուճ խուճուճ ճալվելովը, խաս բաւթով կարած Զերքեղի չուխովը, բարձրակրունկ Ղարաբաղի լափչիներովը, իրա սիրուն դէմքովն ու աղամարդի բոյովը. մէկէն էլ վորձուած՝ չատ բաներ դլխովն անցկացած խելքովը, քաղցր խօսքերովն ամէնի հետ քաղաքավարութիւն անելովը՝ էս Մողնու ըսատաւորի ուշ ու միտքը սիրուն աղջկերանց սիրան իրանց էլին քաշել։ Որ դհովը մեն էլին գալի, քսան երսուն հոգի քամակներից ընկած՝ ուզում էլին տեսնիլ, թէ էս ի՞նչ թաւուր աղեք են, էս ո՞րտեղանց են։

Թէ որ ոչ ով մտքիցը չի քցել հիմի կիմանայ, թէ սրանք են Սօան ու Գարեգինը, որ երե-

ւանու իրանց հընկերներիցը էկել էին ու զօռով վեր կալել հեռները բերել*։

Սօսի, թէ էդ աղիվ աղպեր-աղէքանց խաթիրը չըներ, ընչի՞ն էր պէտքն էս իրեք օրը պատրաստ ման գալ. ինքը մի ռանչպար (երկրագործ), ռահաթ (շինական) մարդ էր. իրան համար մի քանի շահի չհէտ քցեր իր աղպօր հետ, որ ըսեղ ծախս էր անում, իրան խէր էր. համա խաթրագերի էր, Գարեգինն էլ հետն էր, կարաց ոչ չըլինքը չի առնիլ։

Եաբաթ իրիկնապահին հացի վրայ նստած՝ էդ աղէքանց հետ խազ էր ասում, որ մի թօբուն Աշտարակցի կնանիք, առած իրանց հեռու տեղի բարեկամներրի կնանոնցը, որ ուխտ էին էկել, գալիս էին Սուրբ Գէորգը համբրելու։

Սրա ձէնը կաննացրուց մի մխալատուղի (մագնիս) պէս էս ըխտաւոր կնանոնց մինին։

— Կացէ՛ք, ասեց, մխիկ տանք էս քաղցր ձէնին, սրա պէս ես իմ օրումը քաղցր ձէն առաչինն ա, որ լսում եմ։

Համա Աշտարակցի մի կնիկ՝ սատանի զարմ՝ իմանալով, թէ էս ո՛ւմ ձէնն ա, զօռ ա անում, թէ չի ուղիլ գնանք ժամ։

Դրանց քամակիցը գնացողի ալ (քաց կարմիր) զանաւուղ (կերպաս) մինթանէն հաբին, դիմին մի

* Երևանի ըխտաւորը առ հասարակ երբորդ կիրակին կը գայ բայց բացառութեամբ այս կիրակի ես գալիս են։

բաղդատի աղըմա քցած՝ չահել աղջկայ տոները հէնց իմանաս, թէ բխովեցին (կաշկանդեցին), երբ որ էդ ձէնը լսեց։ Էլ չի ուզում գնայ, կաննել ա ու էն ըխտաւորի կնկանը կամանց ասում, թէ հլա՛ զորթ կաննէ՛ք՝ տեսնինք էս աղէն ո՞րտեղանց ա։

— Ա՛խ, ում յայտնի չըլնի, քեզ հօ յայտնի ա, ա՛յ դրա սիրտը սիրած մաչող աղջիկ, դու որ ըսենց քեզ չիմանաչն ես դնում, ո՞վ կաւատայ, սաքի քեզ ո՞վ չի ճանանչում, թէ ո՞վ ես. ո՞վ չի իմանում, որ դու նրա Վարդիթերն ես, էդ մեկել զօռ անողն էլ՝ թէ գնանք՝ քու մէրն ա, էն միամիտ կնիկն էլ ձեր ուրիշ գեղըցի բարեկամի կնիկն ա, որ փեշիցը բռնել ես ու անկաչում ասում՝ կաննի՛ տեսնինք։

Գարեգինն էս թաւուր տեղերումը չորս աչքանի ա դառնում. աչքերը դէս ու դէն պտըտելուս, մին էլ էնքան խալխի միջոցը անց կացրուց Աշտարակցոնց թօբունին։

Նրանց աղնիւ հագուստը, գլխներրի չարսաւը, ոտներրի ժաժ տալն էլ իրանց չհանց էր տալի։

Վարաւուղ արուց Գարեգինը, որ Համասիխուռը, Վարդիթերրի մէրը, մի քանի կնանիք գըլխին հաւաքած՝ կաննել ա բակումը մի մէյդան տեղ ու դալա իրանց մխիկ տալի։

— Զլա՛ (ձայնդ բարձրացրու), Սօ՛ս չան, ասեց, քանի կարաս ու վեր կալաւ, թաղը լցրուց, տեղիցը կաննեց ու ասեց. ով որ Սուրբ Գէորգը կը

սիրի, մի մին թաս խմի ու ասի. էս նրա կենաց-
ը, որ մեր խաղ կանչողին հաւէս ա տուել ու
ձէնը բաց արել. ինքն էլ էս սհաթը մեղանից մի
քիչ հեռաւ, մի թօքուռնի միլի աչքի պոչովը մը-
տիկ ա տալիս Ասեց ու խմեց։

— Ուռա՛յ, աղէ՛ք Ջան, խաղը թողալով ա-
սեց Սօան ու վեր թռաւ տեղիցը, թաստը պռոսէ-
հար (ղիմը) ընչանք վարդապետի խաղը (բա-
ժակի քերանի գիծը) լցրուց ու խմեց։

Ջէ,՛ էն արեւի շողքը իրա աչքին էլ ընկաւ,
էն վարդի հոտն իրա պնչովը էլ դիպաւ. էլ չի
կարաց իրան պահիլ, քանի ուժումը կար, կան-
նած տեղը վեր կալաւ էս մուխամբաղը, որ հէնց
էն սհաթը վրայ էկաւ.

Մի դարդ ունիմ, դարման կուզեմ,
Դարմանս չիւան Ջան կուզեմ.
Ամէն չնորհք ձեռիցը գայ,
Ինքն էլ հուբի ղմման կուզեմ։

Սիրով մօտս գալ ունենայ,
Հաքի չորն ալ ունենայ,
Սօրոր տալով, սիրուն դէմքով
Կաքաւների նման կուզեմ։

Իմ սիրածն էլ ինձ ա սիրում,
Սիրոյ բոցը սիրտն ա էրում.
Ինպէս ուխտի պինդ ճնալը
Մինչև օրն մահուան կուզեմ։

Գարնան վարդ ա՝ բուլբուլ ունի,
Ինձ դառնը միշտ ղոլ ունի.
Վարդ բուլբուլի տուրը խորհրդին
Ես մի բարի վախճան կուզեմ։

Վարդիս ծառը շատ վշտա է,
Ջեռ մեկնելուս կը ծակոտէ.
Ճամփին ածած տատաչի տեղ,
Փափուկ չայիր չիման կուզեմ։

Թէ կուզ արևն մէջը կոլչիմ,
Սուր վշերից բոլոր ուռչիմ,
Էլի ճամփիցս չեմ դառնալ,
Վարդիս համար տալ Ջան կուզեմ։

Ջի ասէք, թէ Սօ՛ս, քանի՞ լաս,
Վարդ կանչելով՝ միշտ մղկտաս.
Սաղ վարդը ձեզ՝ մի թերն էլ ինձ,
Ատուած անի արժան կուզեմ։

— Ամէ՛ն, ամէ՛ն, ա՛վ Սուրբ Գէորգ, դու մեր Սօսի մուրազը կատարես, ձէն տուին աղէքը միաբերան։

Ամէն տեղ էլ քէֆը թէժ էր, ամէն տեղից էլ խաղ ու պարի ձէն էր գալի, համա ամէնն էլ սուս կացան, որ լսեն քար ճաքացնող ձէնը. ամէն բերնից էլ դուս էր գալի էս. ա՛խ, էրնէ՛կ քու մերը քեզնից տատն էր բերել, ա՛յ Ջահել աղայ։

Վարդիթերենց զօնաղի կնկայ սիրտը հօ, քաշել ա Սօսի ձէնը. թէ ամանչի ո՛չ, կէրթայ կուշան ու նրա պուօչները կը պաչի։

— Եարաբ ո՞րտեղից ա էս տղէն, հարցրուց նա Համասփիւռին, էրնէ՞կ սրա մօրը, որ էս թաւուր տղայ ունի։

— Դա, ասեց պառաւը, Աշտարակու զօնաղներից ա։

— Եարաբ պատ՞կուած ա, ասեց, կարենա՞ յինք աղջիկս տալ դրան։

— Աղաչ ա, ասեց Համասփիւռը, համա դա քու աղջիկը չի առնիլ, դրա դլխովն անց-կացած բաները շատ շատ են, յետոյ քեզ կասեմ։ դնանք ժամը համբրենք, յետ դառնանք, մուրթն ընկաւ։

Լաւ չէր ուզում էդ զօնաղ կնիկը հեռանալ ըտեղանց, համա շուտ լսելու համար նրա պատմութիւնը՝ գնաց։

Ժամը համբուրեցին ու յետ դառան դպա Աշտարակ. վարդիթերի աչքը մինը յառաչ էր մտիկ տալի, մինը յետ։

Ճամիին Վարդիթերի մէրն ասեց էս կընկանը, ինչ որ անց էր կացել Սօսի դլխովը, ու ասեց. որ հիմի էլ չենք տալի իմ աղջիկը. էս խաղն էլ որ բանէրացրուց, իմ աղջկայ համար էր։

— Ես, ասեց էն կնիկը, ուզում էի, որ իմ բարեկամութիւնս ձեզ հետ հաստատեմ ընդմի,

որ աղջիկդ ուզեմ տղիս. համա էդ ուրիշ բանով էլ կըլնի, դուք էն տղի սիրտը մի՛ խաչէք. նրանից որ ձեր աղջիկը հանէք, ումն էլ տաք, չի վայելիլ, վերջը փոշմանութիւն կըլնի։

Էս կնիկը, հէնց իմանաս, Վարդիթերի սըրտին էր ջուր խմում; մէնակ մօր անկալն էր օձ մտել չէր ուզում հասկանալ. խեղճ մէրն էլ ի՞նչ անէր, պատճառի չինքը կոտրի։

Շաբաթ քշերն էլ էրէկուանից լաւ ուրախութիւն արին ըխտաւորներն ու կիրակի առաւօտենց բարձեցին իրանց քօչ ու քուրանն ու ճամիու ընկան. որոնք էլ Աշտարակ բարեկամ ունէին, դնացին ընտեղ։

Ո՞վ էր գժուել մի շաբաթ Աշտարակու դուս գնայ. գինին, արաղը, ուտելիքը, ամէն բանն էլ փառք Աստծու, բօլ մուֆտայ (ժրի) ուտում են, խմում ու մեն գալի. ասում ա՝ «գիժը գնաց հարսանիք, ասեց էս լաւ ա քանց իմ հօր տունը»։

Էս շաբաթ Աշտարակումը քիչ տուն կըլնի, որ ըխտաւոր չունենայ. էլածներն էլ քոմմա Բամբակաձորցիք։

— Հէյ՛, Աստուած չէն պահի էս Աշտարակը, աղպե՛ր, ասում են իրար, ամէն բարութիւն էլ կը դտնուի. մէջը մտնողը չի ուզում դուս գնալ։

Հէնց որ իրանց քէֆը կատարում են, դուս գնալու վախտն էլ չէր ու փշատով, տակճորները

գինի-արաղով լքցնում են ու Սուրբ Գէորգի անունը տալիս, ճամփայ ընկնում։

Խմելով, ըտեղ ընտեղ վեր գալով, Աշտարակու վեր կալած սիպտակ լօշերը փոխելով, ակճռրի տակը ընչանք իրանց տները հասնիլը տեսնում են։ Ի հարկէ, ամէն մարդ էլ իրա բարեկամի համար գալուս բերում ա մի քիչ մեղր, եա մի գլուխ մօթալ, համա միևն հինգ տասնում ա։

Սօան ու Գարեգինն էլ չաբաթ իրիկունը վեր կալան իրանց հընկերներին ու էկան Աշտարակ. մի չաբաթ Աշտարակումը քէֆ արին։ Մին օր Սօսենց տանն էին ղօնաղ, մին օր Գարեգնենց։ Ուրիշ բարեկամ տղէք էլ վախտ-վախտ տանում էին իրանց տները, սրապատիս (հերթով) անում։

Տակի կիրակի օրը նոր էգ տղէքանցը ճամփու քցեցին ու թեթևացան։

Օխտը չաբաթ իրար վրայ ըսաուց յետոյ ամէն կիրակի Սուրբ Գէորգի ուխտն ա. բնաւորն ամէն կիրակի անպակաս կրկնին, Աշտարակցիք էս օխտը չաբաթն էլ ընտիր կըընին։

Էս օխտը չաբաթումը Աշտարակու լաւութիւններն երևում են. աղքատ ասես, աշուղ ասես՝ Սուրբ Գէորգի անունովը գալիս են ընչանք կիրակի Աշտարակ ժողովք անում, կիրակի օրն էրթում ճամփին ողորմութիւն ուզում։

Աշտարակու կնանանց ոտն էս օխտը կիրակին Մողնի ա ըընում իրանց բարեկամ ըլուս-

ւորներին կնանանց հետ. ինչքան չարաշ չինել են, կէսը նրանց հետ գնում ա. միացող կիրակիքն էլ, տալին տաններկու ամիս պտի էրթան, որ Սուրբ Գէորգն իրանց դեղի վրայ աչքը քաղցր ունենայ, որ իր հրեղէն ձիու վրայ նստած, իրա կրակէ մզրախը (տեգը) ձեռին, ամէն քշեր գայ Աշտարակ մոտ գայ, նրանց դուշմանները ին կոտորի, Աստծու մօտ էլ ձեռները բարեխօս բռնի, որ Աշտարակցու բանին, գործին յաջողութիւն ընկնի, մի ուրի քինէթ չէ խոռուի նրանցից։ Մեռնի՞մ նրա սուրբ ղօրութիւնին, թէ որ աչքը մին օր Աշտարակու վրիցը վեր ունի, կը քանդուի. նա ա Աշտարակը պահում։

Ի Ջ.

Կիրակին որ անց կացաւ, իրիկունը չատ ցուրտ արաւ, վոս յիքանիքը չախտէն (խորշակ) տուաւ, թփերը դեղնեցին ու մի քամի անելուս վեր թափեցին։

Պարէտն էկաւ տուն, տեսաւ որ Սօսը սէհր ու սօհբաթից պրծել ա, էկել իրանց տանը նստել։

— Բարո՛վ, ասեց, նօթերը կիտած. հընկերներիդ ճամփու դրի՞ր, էլ ուրիշ քէֆ անելու տեղ չի կա՞յ. տե՛ս ո՞ւմ տանն ա մնացել ըխտաւորը, գնա՛ նրանց սիրտն էլ բաց արա՛, լաւ բան ա ի՞նչ. կաաեն լաւ տղայ ա, լաւ ձէն ունի. վա՛յ

մեր գլխին, հո՞ղը մեր տան կաթերը, որ ես պակ
353 երկու չաբաթ մեր դարդը, մեր բան ու գործը
թողամ; էրթամ մի քանի սալախանայ (անկարգ)
աղէքանց հետ նստիմ, ոտս մեր չեմքը չի դնեմ;
չիմանամ; թէ եա՛րաբ մեր տանը մեռա՞ն, ապ-
րեցի՞ն. ինձ տուն ունիմ; ինձ հաղար ու մին ցաւ
354 ու կրակ ունիմ: հրէս աչուընքացաւ, էքուց խալխը
իրանց յիքանիքը կը թաղեն, իրանց դպիկը (պա-
rտուս) հաւաքել պրծել են, մերը ցուրտը կը
տանի....

— էդ թօհմաթներդ (տրտունջ) քեզ համար
պահի, ասեց Սօսը. քէֆի օր էլ կայ՝ բանի օր էլ.
դեռ մեր գեղումն ոչ ով մի մատը (ործը) հողի
տակովը չի արել. նոր պակ էքուցուանից թաղն
355 ընկնի. ի՞նչ ա էլել փառք Աստծու. էս իրի-
կուն, որ մի քիչ ցուրտ արուց, հէնց լմնացար թէ
Ջրօրհնէնքի գահմարին (ցուրտ) էկաւ: Մողնու ըմա-
տիցը հո խամ չե՞ս, իրան պակ չհանց տայ. ա-
356 սենք էս տարի ըխտաւորի պրտօղը էլաւ. դու մի
հէնց ղըյամաթ (փորորիկ) վեր կացնիլ գիտես, էլ
ուրիշ ոչինչ. փոխարէն պակ անուի՞, թէ չէ. հօ
չես կարալ խօշկամուղով (փողով) մշակը կէս մա-
նէթ տալ, բանացնիլ խալխի պէս: էքուց իրեքս
էլ կէրթանք ուրիչի՝ էլօր մի տասը հոգի կանենք,
«Ս ե ւ ա հ ո ղ ը» կը թաղենք. դու սիրտդ ուրախ
պահի՛: Թէ դպիկի համար ես ասում, փառք
Աստծու, ի՞նչ ա էլել. մեր տարեկան հացը, ե-
ղը, պանիրը, կողակը, ձիու դարին, մի խօսքով

ինչ որ մեզ հարկաւոր ա, ունինք. մնացել ա բը-
լինձը, էն էլ հաւողով առած երկու բեռը չալ-
թուկ ունինք: էքուց արաղն էլ դուս կը գայ, մի
բեռն էլ արագով կը հաւաքեմ; կը տանի՛մ դըն-
կումը (քրիմն հարեղու տեղ) կը սիպառակացնեմ, կը
բերեմ:

— Ես էդ չեմ ասում; ա՛յ աղպէր, ասեց
Պարէտը, ընչի՞ պակ վասլխը մեզ մասխարայ
քցեն, թէ իրանց տունը թողել ա, ընչանք իրի-
կուն ընկել քէֆի յետնուց: Դու ասում ես՝ աղ-
չիկ եմ ուզում. աղչկայ աչքն ի՞նչ արտով քեզ
աղչիկ տայ. ոըճախը (գեղջուկ) որ կայ, յիմար
ա, ինչ երեսահանց տեսնի, էն ա. էլ չի ասիլ,
թէ սա օխտը մարդի բան կանի, իր տան ամէն
պակասութիւնները հոգացել պրծել ա. գո՛ւ
դիտես, որդի՛, մեղքը քու չլինքը. ամէն օր քեզ
համար մէր ու աղպէր չեն ընկիլ, որ գաս տես-
նես քու ամէն բանն էլ կարգը կարգին:

Պարէտի էս խօսքերը ով որ լսի, հէնց գի-
տենայ թէ Սօսը մի գեւավաղայ (դասարկապուտ),
անբան, հոտած, բանից վախչող տղայ ա: Հանա
չէ, նա մենծ տղպէր ա, նրա խօսքը չուանի չի
պակ դրած. թէ կուզ Սօսը տասը մտան էլ մում
չինի, վառի աղպօր առաջին, էլի պակ ասի.
թո՛ղ նա ինչ ուզում ա՝ ասի. աղպօր բնութիւնն
էդ ա:

Մեր Սօսը նրա ասածները չատ էր լսել, էս
դօնումն (անգամն) է՛լ սուս կացաւ:

Առաւօտնոյ թէզով ղանդակի ձէնին վեր թռաւ, բերուց իր պահած բահն ու թափ-չակը սարքեց, տանը վեր դրուց, գնաց դըրանը կանգնեց։ Հաղար մարդ ուղղ կար, թէ էս օր արի մեզ, ես էլ կը դամ ձեզ։ Էկաւ բահը վեր կալաւ, գնաց մի մարդի փոխարայ։ Մէկէլ աղպերքինքն էլ գնացին ուրիշի։

Էքսի օրը Սօսը Պարէտի խօսքերը վրիցը վեր ունելու համար թաղւոր արուց ու մօրն ասեց, որ վլաւ էփի, բերի,

Օրը մի քիչ յետ բացուեց, պառաւը հացը կապած պտի տպի չալակը, ինքն էլ վլաւը դըբ-խին էկաւ, մի գաւ էլ մաճար հետը։

— Բարի յաջողո՞ւմ ձեզ, որդի՛ք. Աստուած յաջողութիւն տա՛յ, ուրախութիւնով մին էլ յետ տա՛նք։

— Ա՛յ քեզ արքայութիւն, նանի՛, հոգիդ դրախտական ,Աստուած որդիքդ քեզ բախշի՛, դու բարով հազար բարի՛, ձէն տուին բանւորները։

— Դէ յետ դառէ՛ք, ձեզ մատաղ, վլաւս ափսս ա, խարաբ կըլնի, ասեց պառաւը։

Բանւորները հէնց աչքները ճամփին կըթած՝ դրան էլին մոիկ տալի. էն սհաթը բահները վեր ածեցին ու ձեռները մի քիչ լուացին, բոլորուան-քի (բոլորակ) նստեցին, «Ցիսուս Քրիստոս» արին. երեանները խաչ արին, վլաւի տեփուրը (ախսհ) քաշեցին առաջները։ Ուտում են հինգ մատով ու ասում. քեզ արքայութիւն, նանի՛, ես իմ

Աստուածը՝ լաւ վլաւ ես էփել. էլի հին կնա-նիքը. հիմիկուան նոր օղլուշատը ե՞րբ կարայ ըս-էնց վլաւ էփիլ, անճախ իրանց կոկիլ գիտեն. ափսո՞ս մենծ մարդիկ, քօմմա վեր ընկան, դեղը մնաց ջահել-ջուհուների ապով (ապահովութեան տակ), հին կնանիք էլ քիչ են մնացել, ո՞վ կայ որ։

Տղէքն ըսենց խօսալով՝ վլաւը քշեցին, հետո էլ պանիր էր բերել,- էն էլ սրբեցին ու—Աստուած օրհնի՛, չէն պահի՛, Աստուած հացին բա-րաքաթ տայ անելով՝ բերանները սրբեցին, մի մին ջուր էլ խմեցին ու ամէն մարդ իր բանին կացաւ,

— Քեզ արքայութիւն, նանի՛, ճաշուայ հա-յը թէզ դրկի. հիմի էլ չատ յետի բերիր, փոր-ներս վեց-վեց էր անում (քաղցած հիմի), թէ մի քիչ էլ յետի էիր հասել, թալըխիլ պտէինք, ասե-ցին տղէքը. անաչէ՛ն, տեսնում ես, միալար բա-հին քացի ենք տալի։

Մեր տղէքն ընչանք լրիկուայ ժամը բանե-ցին. հէնց որ ղանդակի ձէնը անկաչներն ընկաւ, —օրհնեա՛լ է Աստուած, տղէ՛ք ջան, ձէն տու-ուց Պարէտը, հերիք ա, բանիդ էլէ՛ք, չնորհա-կալ եմ, Աստուած ձեր ամակը չի կորչնի։

— Օրհնեա՛լ է Աստուած, ձէն տուին բան-ւորներն էլ ու բահները քերիչով ես էտոցով քե-րեցին ու դպա տուն։

Իրիկունը մի քիչ մութը որ դառնին առաւ, Սօսը գնաց Ուռուցիցը հաւաքեց իրանց բանւորներին, էկան նստեցին հացի։

Երկու բադիւայ սըպասը մէրը տաք-տաք դրուց դրանց յառաջը։ Բերին չոր լօչն ու խժռեցին մէջը։ Մինը քթալը անկեց փրթածի մէջը. թէ քթալը կանենց միջին, հօ հերիք էր. թէ չէ ընչանք փրթեցին, որ տեղը հասաւ, խառնեցին, չուռ է չուռ տուին ու քթալը տուին թանով սըպասի չանին։

— կերէ՛ք ձեզ ղուրբան, հալալ ըլնի ձեր մօր կաթի պէս, ասեց Սօսը, կռներդ դալա՛ր. էս օր ամէնդ հինգ մարդի բան արիք. էդ խօշկամուղին տուած փողը կորած ա։ Տնաքանդ կարըցոց ու Հանավանքցոնց իրիքը մեր մի տղի բանը չի անում։ օխտը սհաթ բահն անճախ են ժամ տալի. հէնց են ոռնները թափչակին տալի, կասես ծաղիկ ընկին արտրում։ իլլաքի թէ (ասկառանդ) որ նստում են հացի. մի սև բոքոն ա ընում, մի քիչ էլ պանիր չում։ պաստն չոր հաց. չուրը դընում են կողքներին ու մին կծում, մին խմում։ հինգ սհաթ ծղծղամ են տալի։ Հէնց որ աստւմ ես, ա՛յ տղէ՛ք, պրծէ՛ք, մութն ընկաւ՝ աստւմ են։

— Եա՛, չես թորդիլ խաց ուտենք, էդ ի՞նչ մալ (ի՞նչպես) մարդ ես դու։

— Զիմանաք, թէ մէնակ մեզ համար են բաէնց, իրանց բանն էլ չեն սրտով անում։

— Մեռնի՛մ Աչտարակցու կռներին, նրա ստեղծողին, ասեց բանւորներից մինը. ամէն բան նում մեզ ոչ ով չի կարող հասնիլ. երևանցիք մեր պէս քէֆ չունին. թէ կէրակի օրը մի մին իրանց տներումը խեղճերն իրանց օղլուշաղի հետ մի կատր հաց կերան, էն ա, թէ չէ ընչանք իրիկուն դուքանումը նստած, ամառ ձմեռ աչքները առուտրի միջին ա։ Մի՞ղարիք որ մէջներն ա դալի, ուրախանում են. մեր մարդը համ քէֆի միջին ա լաւ, համ բանելու։

— Էջմիածնեցիք էլ մեզ չեն հասնիլ, վեր կալաւ ընտեղանց մինը. իրանք ընչանք ի վերջը պարապ-սարապ ման կը գան, փողով մշակ կը բռնեն, յիքանոնցումը կը բանացնեն, էրթալ էլ չեն, թէ վրէն կաննեն, մութկ տան. մի կատէպանի (այգեպանի) ապով կը թողան. իրանց են լաւ-լաւ մլքերը խարաբայ կը թողան, էլ ախտս չեն դալ. Մի մարդ որ իր հալալ աչխատանքովը չի հաց ուտի, քրտինքը ծլծլալով ճակատիցը չընկի, էրթայ՝ պնչի ծէրովը վեր թաւիլ, նա ի՞նչ մարդ ա։

— Դորթ ա, կան մի քանի մարդիկ էլ նրանց միջին, որ լաւ են, ասեց մեկելը, որը դուքան են դրել, առուտուր են անում, իրանց աչքին իրանց դառանն ա, որն էլ իրանց մշակուԹիւնին են, համա մի քանիսով ի՞նչ պտի դառնալ մի փունջ ծաղկով Մայիս կը գա՞յ։

— Տօ՛ ի՞նչ էք ասում, վեր կալաւ մինը, մեզ ո՞վ կը հասնի. ամառը դուս ա գալի, յիքա-

բանի ենք. ձմեռն ա գալի, ձիու քամակին նստած՝ ես թե չէ յետնույն ընկած՝ ոտի տակ ենք տալի սաղ մհալները. մի գարատակ եավուն-ջով ճղում ենք ձինը, ցուրտը, Դվալի պես սա-ըեր ենք անց կենում: մի ոտներս Թլիգլիզ ա, մինը Գիւմրի ու Ջալալօղլի. Ապարանու բլբերը մեր առաջին սասանում են: Դեռ ընչանք էս օր լսուած չի, որ Աշտարակցի աղեքանցկց մինը ճամփին մնայ, ցրտաստր ընկի, բքարգել ընկնի, համա ձմեռը օրը քան ուրիշ գեղջիկը, մին էլ տեսար, էկան ոտ ու ձեռները սառած՝ տուն ընկան:

— Էս ընաուց ա, ասեց Սօսը, որ մենք ուրիշ գեղերի պես գոմերի մէջին տաք օդայ չունինք, որ հաւաքուենք ընտեղ, տաք տեղը տարվինք, էլ կարենանք ո՛չ դուս գալ. մեր օդեն կամ Ուռուցն ա, կամ Տէր Աստըենց դուռը, մանկուց դռներին ենք տարվում:

Մեր պարոն բանուորներն լսէնց իրանց գեղի զօչագուխիւններըը, իրանց արած բաները ուրախ ուրախ պատմեցին, ուրիշներին բամբասեցին ու հացից վեր կացան, շնորհակալութիւն արին, գնացին իրանց տները, իրանց խիզանոնց հետ անուշ քնեցին:

իէ.

Էս երկու շաբաթն Աշտարակցիք բանի հետ էին: Որը բանից պրծել էր, արադի ցանի էր չարդում, յիքանոնց պատերի չափարը քաշում, որ արադը քաշի. աւելորդ ճղքներն էր վեր քցում, մենծացած հին ծառերը, որ էլ բալ (պտուղ) չէին տալի, կարում, (ձղձղում), բարձում ձիուն, բերում տուն, որ ձմեռը խմորի թոնդրումը վառեն. իրա խոտը, որ հնձել էր, յիքումը դէպ դրել կրում էր, տանում մարաքն ածում:

Կնանիքն էլ կիրակի օրերը չուլուխն էին էվում, լի օրերն էլ տան բանն անում:

Էս կիրակի օրն էր, որ Վարդիթերի մերը չուլուխը դրուց կրակին, պրկեց, կանչել տուուց իրա ադիզ բարեկամներին:

— Երեխեքը հաւաքուել են գիւխին. մինն ասում ա՝ նանի՛, իմ վայն ածա՛, ես պոի տաք-տաք ուտեմ, մինը՝ թէ ես պոի հովացնեմ, նոր ուտեմ, իմ բաժինն էս բօշխաբի մէջն ածա՛:

— Համա Վարդիթերը կապուել ա, ո՛չ սիրտը չուլուխ ա ուզում ուտի, ոչ բան անի: Միտք ա անում:—ա՛խ, իմ քօռ բա՛խտ, ասում

ա. քանի սիրաս մաշես ու հաշես. ի՞նչ կըլլեր, որ էս աղիղ բարեկամներուդ միչին Սօան էլ ըլներ. նա էլ էս չուխուխիցը մի մասը վեր ունէր։

Միաբը մի բան ընկաւ. ես էլ ասեց, էրթամ մի աման բերեմ, իմ բաժինը լցնիլ տամ մէջը, սառցնեմ, կը տամ Փափակին (իր պատի աղպօրը) կը տանի իր խալֆին (ուստացչին), կասի քիրըս քեզ համար իր փայ չուխուխը ղրկէլ ա, նա էլ կը հասկանայ, կը կանչի Սօսին կուտա-ցընի։

Էն ահաթը վաղեց մի աման էլ ինքը բե-րուց, մնրը լցնիլ տվուց, երեսը պօպօքով նաչ-խեց ու տարաւ պահեց։

Շուչուխը թաթախեցին, կախ տուին պա-նի վրայ, մարդաբոյ չարերը հատա-հատա, յե-տոյ պառաւը բանիցը պրծաւ, կիրակուր էփեց, ղօնաղներին հայ ուտացրուց ու ճամիու քցեց։

Վարդիթերը թաքուն կանչեց իրա պուճուր աղպօրը, ասեց. արի՛ իմ փայ չուչուխը դնեմ հացի մէջ, տա՛ր խալֆիդ, ասա՛, էրթ քիրս ա իր փայը ղրկէլ հրամանոցդ համար, որ անուշ ա-նես, իմ աղպօրը լաւ կարդացնես։

«Գոյն ի՞նչ կուզի, մուրթը քշեր», Փափակին էլ էդ էր ուզում, որ կարենայ իր վարժապետի սիրտը շահիլ։ Առաւօտեանց անխօս լոշի միչին փաթաթած՝ առաւ գնաց խալֆին։

Գարեգինն էն ահաթը հասկացաւ, էրթ Վար-դիթերն ի՞նչ ա ուզել ասիլ.—չնորհակալ եմ,

ասեց, կասես՝ էրթ աչքիս վրայ, ինչ որ մտքումդ ունէիր, հասկացայ. ու չուչուխը տուուց մնրը, էրթ պահի, իրիկունը Սօսին կերթամ կը բերեմ, իրար հետ կուտենք։

Սօան իրանց բաներիցը պրծել էր, ճաշացել էր արաղը քաշիլ. իրիկունն երբ որ թաղաւոր-ներից էկաւ, գնաց հնձանը, տեսաւ որ արաղը քաշելու վախան էկել ա, բլղուրը (կնճեղը) հասել ա, պատ քաշուի։ Առանց Պարէտին ասելու, գնաց արաղ քաշողներին կուշտը, իմաց արուց, որ էս իրիկունը պղինձը տանին իրանց յիքին ու էկաւ տուն։

— Էս իրիկուն գնացի բլղրին ակը տուի, հասել էր, ասեց Սօսը Պարէտին. պղինձ մեն ածողներին ասել եմ, որ տանին մեր յիքին, ես էլ արաղի օճաղը չինեցի։

— Շատ լա՛ւ, ասեց Պարէտը, մի չուխա մուռ վեր կա՛լ մենծ պղինձները, տակերը, ծա-քարն ու մի պուճուր արաղի թաս, հաց կե՛ր, դնա՛ յիքին, ես էլ Ալշամին (յուեցց փոքր եղբօրը) կառնեմ ու կը գամ։

Կըլլեր չորս հինգ օր, որ Սօսը Գարեգինին չէր տեսել, գլուխը բանից խառնուած էր էլել. հիմի գալիս եմ, ասեց ու դուս թռաւ գնաց նրանց տունը։

Հէնց ընտեղ հասաւ, որ Գարեգինը դրսի դռնիցը դուս էր էկել, որ գայ իրան կանչի։

— Օ՛հ, բարո՛վ, ասեց, ես հէնց քեզ մօտ էլ գալի. էս ո՞ւր ես, էս քանի օր ա, չը կաս։

— Ի՞նչ անեմ, ասեց Սօսը, խառնուած էի, անճախ գլուխս ատակել եմ (պարապել), հիմի էլ պտի գնամ արագ քաշելու։

— Լա՛ւ, դէ արի՛, տե՛ս քեզ ի՞նչ եմ ու-տացնում է՞, բակը մտնելով ասեց Գարեգինը. էսօր առաւօտէնց Վարդիթերն իր բաժին չու-ղուխն լինէ էր ղրկել իմացայ, որ սրտին դարդ ա մնացել՝ Ծաղկազարդ կիրակի օրուայ գաթի պէս, ֆռւանդը (հնարը) գաել ա, ղրկել իմ մօտ։

— Ա՛խ, նրա արևին մեռնիմ, ասեց Սօսը, էսքան նրա սիրտն լինէ համար էրում ա. խեղճ երեխէն ընտեղ հալումաշ կըլնի, ես ըստեղ, մեր բանը գլուխ կը գայ։ Ամո՞ն Աստուած, ձեռները բանէրացնելով ասեց, դու դուշմանի սրտով չի անես ու ներս մտան օթախը։

Սօսը վեր կալաւ չուխուխը, լացակըլկնած կերաւ—օխայ, ասեց, անմահական ա, սիրտս վառաւորեց։

Էլ չի կարաց իրան պահիլ, սիրտը վուլ է-կաւ, աչքերիցը վէր ածեց։

— Լաց մի՛ ըլնիլ, աղլէր չա՛ն, ասեց Գա-րեգինը, Աստուած ողորմած ա. էն ա՝ օրերը մօտենում են. չատին համբերել ես, քիչն էլ սա՛ր։

Սօսն աչքերը սրբեց, չուխուխը կերաւ ու ասեց, ես պտի էրթայի մեր տանը հայ ուտէի, նոր, գնայի յիքին. իրեք օր լինէ հայրը պէտքը չի, էս հերիք ա, կշտացայ. բանը կիրակուի քիչ ըլ-նելը չի, բանը հասն ա։

Յետոյ վեր կացաւ՝ մնաս բարին ասեց, քեզ խէր ու բարի քչե՛ր, պղինձը կը տանին, կը մնան պարապ ու դուս էլաւ։ Գնաց իրանց տունը, ինչ կար՝ չը կար՝ հաւաքեց ու գնաց յիքին, ցախերը մօտացրուց, օճաղը խորացրուց, տեսաւ, որ պղնձնեերը բերին, կնճեռը մէջը լցրին ու կրակը տուին տակը։

Պարէտն ու Արշամն էլ հայրը կռնատակնե-րին էկան։

Էս քչեր ընչանք լիս տզեքը ղրից անելով ա-րագը քաշեցին. մի երկու թաս խմեցին, կատար-ները տաքացաւ, սկսեցին էլ յետ ըստուր ըն-դուր վրայ խօսիլ։

Արագ քաշողը մի գհից օճաղի տակը ցախ էր անում, մի գհիցն էլ ասում։—մեր գեղի ա-մէն բանն էլ լաւ ա, ախո՛ս, որ քէթխուդէքն (իշխանները) ու տանուտէրը մի քիչ շահասէր են։ Էս ի՞նչ ա, հիմի խաղչ են կխոտում; ես մի խեղճ մարդ եմ; նրանք ինչ որ ինձ կը հաներ խարչը տալու, երկու էնքան են առել։ Տաքի տասում են, որ գեղի մէջին տարեկան մսատաքի (ծախք) ա է-լել, վչացել ա, պտի լրացնենք. համա ա՛րտեղ, քոմնա իրանք են ուտում, քեռախը-քիւսուրի

370 (չհաւորի) տունը քանդում, իրանցը չինում։ Ես
371 գլօզաճնայ (nոպես թի) մի յիքի ունիմ, ինձ տա-
ըել են զօռով կապել իրեք յիքաւիրոնչ հետ, թէ
372 աբի՛ խարչ տո՛ւր. էլ չեն ասում, թէ աչառը
(արչառ) գոմչի հետ կարայ լուծն անի՞։

— Ա՛յ տղայ, ի՞նչ ես խալխի ոտը քաշում, վայկո՛ւն, ասեց Սօսը. էդ ո՞ր գեղումը չի մտա-
րաճ ընկել. մի մովրով կամ եասավուլ, որ գալիս,
ա, բա նրանց հաց չի պէտքը՞, պատիւ չի պէտ-
քը՞, գառը, գինի, արագ չի պէտքը՞։ Ի՛, նոր
տարի, զատիկ ա գալի, բա մովրովին տեսութիւն
գնալ չի պէտքը՞։ Դու քու երեխին, որ մի կա-
պայ ես կարում, թէ էքսի օրը խօսքիդ դուս ա
գալի, ասում ես՝ թէ ա՛յ որդի՛, քեզ չոր կարե-
373 ցի, որ ինձ անկայ անես, դու չլիզ քառանկայ
(խուղ) գառաբ։ Հիմի նա մեր վրայ ինչքան ա
միաք անում։ Մեր աղէն ա, որ տեսութիւն գը-
նանք, բա մի կարաս գինի, մի հինգ լիտր արագ
չը պահ տանի՞նք. հասողի ժամանակ ա գալի,
թաղայ հասող, լաւ գեղձը չի հարկաւոր տանի՞-
նքը։ Էս հօ մենակ մեզ համար չի՛, ասղ աշխար-
հըքի օրէնքն ըտենց ա։ Դու քու բարութիւննե-
րից ես տանում, Ասլարանցին էլ տանում ա նրա
ձիանոց տարեկան գալին, Փուրդը՝ նրա գառն ու
ոչխարը, Թուրքը՝ նրա եղ ու պանիրը, Դաշտըցին՝
եօնջէն, ցօրենը. ամէն մարդ էլ իրան գեղի գըա-
նուածքը տանում ա նրան։

— Էդ դրուստ ես ասում, Սօ՛ս ջան, ասեց վայկունը, համա ինչքան էլ որ ընկի, էդքան շատ
մսպրաճ, խարչ չի ընկիլ. սրա միջին մեր իշխան-
ներն էլ են շահուում։

— Ես արմանում եմ քեզ վրայ, Պարէտը. ա՛յ տղայ, բաս իշխաններըը քու հօր մշակն ե՞ն,
որ ամէն մովրով, վարդապետ, մենծ մարդ գա-
լուս, տանում են իրանց տանը վէր բերում, ի-
րանց երեխի բերնիցը կարում, նրանն ուտացը-
նում։ Հալբա՛թ, որ մի շահմանք չունենայ, ընչի՞
կանի, նա էլ քեզ պէս մի մարդ։

— Ի՞նչ են խարչում, ասեց վայկունը, եղն էլ, հացն էլ, միան էլ, ամէն բանն էլ գեղի-
ցը մեի տեղակ հնդապատիկ հասաքում ա ու բե-
րում. ո՞վ դիտի, թէ ընչանք կրում ա, որ մով-
րովը գնալուց յետոյ՝ տասն օր ուտում են, չի
հատնում։ Մի տունն ա նրան ընդում։ Ես էլ, որ
ընչից տուն ունենայի, էն տղերքանց ոտը կը պա-
չէի, իմ տանս վէր կը բերէի, խօսքս կշտին կըա-
րուկ կընչեր. ում տունն ուզէի՝ կըքանդէի, ումն
ուզէի՝ կը չինէի. ձիս ո՛ր դհոլն ուզէի՝ դէնը կը
քշէի։ Հիմի մովրովը գալուս, թէզով իշխանն ա
գնում գլուխս տալի, բարովում, ազավար խօսում,
հետը նստում վեր կենում։ Համա ես, որ տես-
նում եմ էկաւ, գլուխս առնում եմ կորչում, թէ
հիմի գլիրը կը քցի ճիպոտի տակը, թէ աբի՛ ձին
բռնի՛, տա՛ր գոմումդ պահի՛, խոտ, գարի տո՛ւր,
մովրովի համար ճուտ տա՛ր։ Իշխաններուի տանն

ա վէր գալի, աղբատներուն տունն ա քանդուում, հօ սուտ չի՛։

— Հիմի ասենք, թէ դու ինձանից համբայ ես, քու տանն էլ ոչով չի վէր գալի. համա ես իմ աղքատ տեղովս քեզանից չատ եմ խարջ տալի, կոռ քաշում, ձի տալի. թէ ես ու դուն էլ մի կռիւ անենք. թէ երկու մարդ իմ բարեկամներիցն իմ դիհը քաշի, տասը մարդ գեղիցը քու դիհը կը պահեն, որ գիտեն, թէ դու ինձանից լաւ ես, քեզնից խէր կը հանեն. համա ինձնից ուղի տալի չարչարուեն, չոր օսկոռից սաւահի ոչինչ չեն կարող գտնիլ։ Շատ էլ, ասենք, էն կռուում ես արդար ըլնիմ, վա՞յն էկել ա ինձ տալել. թէ կէրթամ մովրովին կը գանգատեմ, երբ որ քեզ կուզի նա, հեռդ գեղիցը մի թուղթ կը բերես, թէ գանգատողն ինքն ա մեղաւոր. էն վախտը մովրովը քեզ բաց կը թողայ, ինձ կը ծեծի, յետոյ, հալբա՛թ, դու էլ մի կարաս գինի կը խոստանաս, կը բարձես ձիուդ ու կը տանես։

— Վայկուն ափօր իսօսքերն ու ես տարանի կոդքին գրուած են, ասեց Աբշամը, սաքի ընչի՞ էք երկուերեսանութիւն անում, կողմնապահ ըլնում։ Հիմի էս հօ մեր պապական յիքին ա, ուզենան՝ կը խլեն, կը տան ուրիշի։ Քանի՛ քանի՛ օրինակներ կան, որ ընչանք քեզնից մի օգուտ չեն ունեցել, բանըդ չեն չինել։ Ես չեմ ասում մեր գեղի միջին լաւերը չը կան, լաւն էլ կայ, համա

«մի ծաղկով գարունք չի գառնալ» մի երկու մարդով ի՞նչ պտի ըլնի։

— Աղպէ՛ր, Աստուած երանց բարի տա՛յ, ասեց Սօսը, Աստուած նրանց մեր գեղի միջին սաղ պահի. թո՛ղ մեղնից ուտեն, որքան կարան, երանց հալալ. նրանք որ չըլնին, մեր գեղի անուշը կէս փողի չի անց կենալ։ Հիմի Աշտարակայ անուշն ում կշտին տալիս ես, սերուրը փառաւորում ա. էս քոմմա նրանց շնորհքն ա, նրանց մարդավարութիւնն ա, որ կայ։ Ամէն գեղում էլ աղայ մարդիկ կան, ամէնն էլ լաւ բօլ կաշառք ուտող են, բաս ընչի՞ չեն կարում գեղ պահիլ, անում ունենալ, ձէն ունենալ, մեծին մօտ խօսքը կարուկ անիլ։ Մեր գեղի նախրչին մովրովի կշտին լաւ պատիւ ունի, քանց Ապարանու Մէլիք Ղըրօն ու ռէս (տաւուտեր) Գաղօն։ Սաղ Ապարանը քանդես, մի Մէլիք Պօղոսիցը լաւ ուրիշ մարդ չես գտնիլ. էն էլ նրա հացի ձէնը չի՞, որ մարդի կշտի անում ունի, մեծին՝ պատկի մօտ պատիւ ունի. օրը հարիր ձիրաւոր էրթայ նրա դուռը վէր գայ, ամէնին էլ պատուով կը կաւափարի, ամէնի սիրան էլ կը շահի ու ճամիու կը քցի։

— Տեսնո՞ւմ ես մեր Մէփան աղէն, Սիմօն աղէն, Աստուած նրանց կեանքն երկար անի. մեր գեղի միջին հաստատ ըլնին. նրանք որ աչքներըը մեր գեղիցըվեր ունին, էլ մեր գեղին ո՞վ մտիկ կը տայ. էս թաւուր պատուով մարդկանցիցը մեղ

ջնաս չի գալ օգտից սաւահի. մի քանի նոր նոր հաւեր կան, որ ուզում են երկաթէ ձուեր ածիլ, նրանք են բանը խարաբ անում։

Մեր աղէքն ըսենց ղրից էիր տալի ընչանք կէս քշեր ու արաղը դարտակում, կամ պղինձը փոխում։ յետոյ հերթով հերթով երկուսը քնում, դնջանում, երկուսը մոզայիթ կենում։

— Ձերեկն էլ ընչանք իրիկուն քաշեցին. իրիկունը պրծան, լցրին ակերը, քաւիլ արաղը ջոկ արին, մէկէնները ջոկ, արաղ քաշողի հախը տուին ու բարձեցին ձիուն, բերին տուն։

ԻԸ.

Աշունքացաւ. Աշտարակու կանաչ յիքանիքը, որ մարդի սիրտ ուրախացնում էին ջահել աղջըկայ պէս իրան անուշ հոտերովը, կանանչ Աստծու փռած խալիչէքանդովը, հազար թաւուր ծաղկներովը, հիմի հէնց ելան, որ մարդի սիրտ չէր ուզում երես յետ դարձնի։ Հաւողի թփերը, որ դըլուխ գլխի կպցրած՝ իրանց քահրիքար ճիթերովը մարդիս բերնի ջուրը բերում էին ու երեսին ծիծաղում, հիմի մեռած մարդի նման գերեզմանները էին երևում, հողը գլխներին տուած։ Ծառերը, որ մի քիչ հով անելու վախտը գնալ գալով իրանց տերևներովն ինչքան ախրած մարդի սիրտ ըլնէր բաց կանէին, հիմի քաչալացած՝ մի տերև էլ չես գտնում վրընները, չոր-չոր չօփերն

էն երևում բիզ-բիզ։ Ամէնքը, իր իրանց Սիրիսիրի խոտերի թօփ-թօփ ծաղկներովը՝ վրէն նըստողի, սուփրայ բաց անողի իշտահը բաց էին անում, հիմի հէնց խմանաս, թէ ութ օրէն մեռած մարդի երես ա դառել, ծառերիցը վեր թափած՝ դեղնած ղազալներովը (տերեւ)։ Ամէն բան էլ փոխուած, մի տխուր տեսարան էին երևացնում։

Համա աշտարակցիք նոր են սկսում ուրախանալ։ Ձիքաբանիից պրծել են ու զարդարուել. ունեցող չունեցողն էլ հիմի հէնց ա տանից դուս գալի, որ կասես վեզիր (նախարար) ըլնի։ Կնանոնց, աղջկէքանց, հարսների նոր ատլղի չիթ մինթաներնէքանց խշխշալը, սաղրի ու կարմիր մաշկները, գլխներին քցած խաս չիթերն ու Բաղդադիքը մարդիս սրտի վրայ մի ուրախութիւն են բերում։

Մարդ չը կայ, որ իրան ու գեօրայ գինի չունենայ, ով որ հոգս ունի՝ ծախում ա ու իրան տունը նորում, ձմեռուան թաղարէքը (պատրաստութիւն) տեսնում, ում աղջիկ, տղայ ունի, միառ ա անում հարսանիք անելու։

Տղայ տէրը աչքը քցում ա մի աղջկայ վրայ, պտի ուզի, մարդ ա գրկում հօր կուշտը, թէ իմ տղէն պտի հարսանիք անեմ, իմ տունը չինեմ նրանով։ Նա էլ, թէ ուզում ա տալը, ասում ա. — ես թէկուզ աղջիկ էլ չունենամ, կերթամ ուրիչից փոխ կառնեմ՝ կը տամ նրա տղին. մի աղջիկ ա, ձեր չարը տանի։ Ցետոյ հաց են բերում խնամխօս եկողի առաջը, մի մին թաս գինի խը-

մում, Աստուած չնհաւոր անի՝ ասում ու ումու-
տով անում (յուսադրում), որ ֆլան օրը դան նը-
շան դնեն։

Համա ում որ կամք չունի աղջիկը տալու,
ասում ա.—Ձեր կորուստը մեղնում չկայ. ես
Ձեր ո՛չ տանն եմ վատ դնում (պախարակել), ո՛չ
տեղին, համա իմ աղջիկն էս տարի մաղդի տա-
լու վրաք չունիմ։ Ըսենցով ճամիու ա քցում։ Նա
դնում ա իր տղին ուրիշ տեղից աղջիկ ուզում։

Թէ որ ուրիշները մանրներումը չունէին, հի-
մի վախտ էկել ա, պտի իրանց աղէքանցը, հար-
սանիք անեն, ո՞ւր մնաց, որ Սօսն երկու տարի
ա չանը քանդել ա, նա ի՞նչ պտի անի։

Էլ գադար չի տալի Գարեգինին, էլ կէս սը-
հաթ կշտիցը դուս չի գալի. պրծի՛, աչխատի՛, ա-
սում ա, քանի օտարները մօտ չեն էկել կրնի,
որ բանը կը փոխուի. իմ քօռ բաղդն ինձ հետ ա,
նրանք մի խօսքի կանոով մարդիկ չեն, մատանի-
քին մի՛ խափուիլ։

Գարեգինն առանց գնալու էլ գիտէր նրանց
միտքը, որ չեն ուզում տալ հնարքներ ա միտք
անում, թէ որ էս վերջի գօնումին էլ տան ո՛չ,
աղջիկը փախցնի, համա չէ՛, մի ուրիշ վորձանք
կար, որ Սօսի գլխին պտի դար։ Ինչ ուզում ա
ընի, մենք մեր բանը խօսանք։

Մի իրիկուն Գարեգինը գնաց Աբշաւիրի կաշ-
տը, որ նրանց բերնի տաք ու հոգին իմանայ։

— Բարի րիկո՛ւն քեզ, մօտանալով ասեց նը-
րան. ի՞նչ բանի ես, պարապ մարդկանց օրը դուս
էկաւ. համա գժին անէն օր կիրակի ա, ինձ ու
քեզ չէ։

— Աստու բարի՛ն, մի սառը-սառը, աչք ու
ունքը կիտած, պինչը ներքև թողած՝ ասեց Աբ-
շաւիրը, մեզ համար էլ ըսենց ա Աստուած կա-
մեցել. համա գիտե՞ս Գարեգին։ ի՞նչ կայ. գուք
որ կաք, արքադի (խաղողի մասը) կրակ էք, ֆըռթ
էք անում (բորբոքում եք), էլ յետ անցնում։ Մի
վախտ կար, բան ու գործներդ թողած՝ մեզ էլ
չէիք թողում հալալ հայ ուտենք. հիմի օրերն
էկել հասել են, չեմ գիտում՝ փոշմանել է՞ք, թէ
էս ի՞նչ ա, որ մօտ չէք գալի։

Ի՛նչ մարդի գլուխ ա եղում է՛, էդ թաւուր
բաների մէջին նրա ցերեկուան մանէկած տեղե-
րը Գարեգինը քշերն ա մանէկել։

Տեսաւ, որ Աբշաւիրի միտքն ուրիշ ա, կեղ-
ծաւորութիւններ ա անում, բալքի կարենայ մա-
տանիքը յետ առնիլ, շուտով ասեց. ի՞նչ ես վը-
ռազում, «թէ չատ թայլի (շտապ) ես. գնա՛ վի-
րի չաղացը». հալբա՛թ մին օր օրհնաւոր նչան կը
բերենք գալ ու գուռնով, չրօրհնէքից յետոյ էլ
կը պատկենք. մեր նշանը հօ կա՞յ, էլ ի՞նչ կայ։

— Ձեր քէֆը, ասեց Աբշաւիրն ուսերին ա-
նելով, ես իմ կողմից մի անգամ տուել եմ, գը-
նացէ՛ք հօրս ու մօրս էլ ասէք, թէ որ կը տան,
Աստուած չնհաւոր անի։

Գարեգինը հասկացաւ Աբշաւիրի վեր դրած քարերը. վեր կացաւ անկոս դուս ելաւ, թէ ես կը տեսնեմ իրանց։

Հէնց էն սհաթին ժամից դաւաղան սին տալով, գլուխը քաշ քցած՝ գալիս էր Հեթումը. իրան մօտացողի ոտի թխթխոցը որ առաւ, գլուխը բանձրացրուց, տեսաւ որ Գարեգինը։

— Ողորմի՛ Աստուած, ասեց. էս ի՞նչ տիրացու ես, ժամ էլ չես գալի. հիմի էլ հօ՛ յիքաբան չունիք. դու որ ժամուժը չես ընում, ժամը խանդարուում ա։ «Համբարձաւ» չարականը կորցրել էին, օխտը սհաթ քրքրեցին, կարացին ոչ բաց անիլ բերան էլ գիտէին ո՛չ. վերջը մի ուրիշն ասեցին, որ մեռի վրայ ասում են. ես իմ հալիւոր տեղումս խմացայ, որ էն չէր։

— Ողորմի՛ ծնողացդ, ասեց Գարեգինը. սիրտս ուզեց քեզ, էկայ ձեր դուռը, որ քեզ տեսնեմ, ասի ժամ չես գնացած ըլնի, տեսայ ընտեղ չես։

— Աչի՛ երթանք, ասեց Հեթումը, ու իրար հետ կամայ ըտեղան, ընտեղան խօսքեր մէջ բերելով՝ գնում էին։

Գնացին տանը նատեցին. հարսները վեր կացան փախան, ծնացին մարդ ու կնիկ, մէկ էլ Գարեգինը.

— Է՛, ի՞նչ դուրուզ, աղպէ՛ր, մեզ միտդ ես գցել հարցրուց հալիւորը. էդ ո՞ր քամին ա պըտտել. մեր Փափակն ամէն վախտ ասում էր, որ

խալֆիս ղոնաղ չէք անում. փառք Աստծու, քու ոտովն ես էկել։ Աղպէ՛ր, կը բաչխես, իմ մտքումը կար, որ մին օր իրար հետ դայինք. էլի կը գանք, քու տունն ա, համա մի լաւ վախտ չէմ գտնում, որ կանչեմ։

— Շնորհակալ եմ, ասեց Գարեգինը. հէնց պտի կանչէք, որ գա՞մ, ի հարկէ իմ տունն ա, ես էլ ձեր տղէն եմ. սիրտս ուզած վախտը կը գամ էլ, կէրթամ էլ. համա էս իրիկուն ղոնաղ չեմ էկել. ձեզ երկուսիդ էլ լաւ յայտնի ա, թէ ի՞նչն ա ինձ բերել ձեր կուշտը։

— Գարեգի՛ն ջան, բերնիցը խլելով ասեց հալիւորը, խօսքդ էլ կարում եմ. ես քեզանից էս եմ ինդրում, որ դու ընչանք Հոր թաթողի պատմը համբերես էդ բանի համար. մեր գլուխն էլ խառնուած ա տան գործերովը. էն վախտը հալ-քաթ մի կարական չուղաբ կը տանք քեզ։ Իմ մտքումը հլա կայ ոչ, որ աղջկանս էս տարի մարդի տամ, ընդուր որ դեռ առաւիները նոր ա վոխել. ղորթ ա, ժամանակիս չահել չի կայ, հիմիկուայ երեխէքը շատ են հասկանում, քանց մեր վախտուայ հասած կատարածները, համա ես իմ ձին մեր ճամփովն եմ ուղում քշել։ Հէրու՝ ես, որ մեր Վահանին պատակեցի, փոչխմանեցի, Աստուած ո՛չ փոչխմանութիւն տայ, թէ ընչի՞ համար մի հասած կատարածը չուզեցի։ Տեսնինք, ընչանք էն օրը միտք անենք, վեր հանենք մեզն ու մեզը, էս մալբաղարի (անասնոց առուտուր). չի, էս չան-

379

380

բաղարի ա (անձի առեւտուր). մի տարէն՝ երկու տարէն չի, ընչանք մահն ա. մի քանի բարեկամներ ունինք, նրանց էլ հարցնենք, հօ բանն իմ ձեռին ա, համա թո՛ղ նրանց սիրան էլ չահուի։

Օրէնքով խօսքին ո՛չ ով բան չի ասիլ. Գաբրեդինը խելօք տղայ՝ չատ լա՛ւ, ասեց ու վեր կացաւ տեղիցը։

— Նատի՛, նատի՛ հայ ուտենք, ասեց Հեթումը, հաղարէն մի հետ մեր տունն ես էկել. դու խնամիսօս չես, իմ երեխի խալֆէն ես, հիմի փափակս կը դայ, մեղ կրակը կը դնի, կէրի, թէ խալֆէս իրա տոմին էկել էր, հայ էլ չի դրինք յառաջը։

Ջօռով Գարեգինին նստացրին ու հայ բերին։

Հացից յետոյ ընօրհակալութիւն արուց Գաբրեդինն ու վեր կացաւ։

Վարդիթերն էր հացի վրայ ծառայութիւն անողը, մաչկները դրուց Գարեգնի յառաջն ու գնաց, որ դուռը բաց անի. համա մէրն էն դհիցը բղաւեց, թէ ճրագը որ կպաւ, էլ մարդի յառաջի դուռ չեն բանալ ու յետ գառաւ Գարեգինին, ասեց. վաժապէ՛տ, աղչիկս հլա էդ էլ չի դիտում, մենք թէզով բաղար ենք քցում։

— Բան չկայ, ծիծաղալով ասեց Գարեգինը, տանողի չանը դուս դայ, թո՛ղ տարվացնի՝ ու դուս գնաց։

— Ես կասեմ՝ էն Վարդիւորի տասկուսէն վերջացաւ, ասեց Հեթումը կնկանը, երբ որ Գաբրեդինը գնաց. էլ չեմ լսում, մեր գեղի բանն երկու չաբաթ ա. անց կացաւ՝ էլ պրծաւ, մըտներիցը կը քցեն. էդ տղեն մեղ տագիլ չի՝ որ տանք։ Դ՛ըրթ ա, չատ վախտ ես հանաքուց ասել եմ, որ պտի տամ նրան, համա խալխն ի՞նչ կասեն, թէ իրան մտիկ տուէ՛ք, կարողութիւնին ու վեհին։ Նա մեր բաբը (յարմարը) չի. «Թուրքն անիծած՝ խօսքն օրինաց». տասում ա, «բաբըս բաբիա թափման, դուխա ախայինան դէչար». (եթէ ամէնն իրա յարմարը չդանի, աչխարհքս ախ ու վայով անց կը կենայ)։ Բռնենք, ասինք, Սօսը... դ՛ըրթ ա, նրանց տղեր մենծ ա, մի վախտ գեղի մէջին առաջին օճաղն են էլել, համա հիմի վեր են ընկել, իրեք յիքի ունին, չորս աղլեր են նըրանք, համա ես վեց յիքի ունիմ, իմ փոզս, հարըստութիւնս չատ ա. տաքի ես Սօսին կարալ չեմ վուտ դնիլ, իմ վեց տղիցը թէ քան անելով, թէ ղօչաղութիւնով, թէ մարիֆաթով (շնորհիվով) լաւ ա. իլլաքի թէ (ինանաւանդ), քանի Գարեգնի հետ ընկերացել ա, տասն էնքան աւելացել ա. մարդս մարդով կըլնի, Գարեգինն աչխարհք մանէկած տղայ ա, նրա կշտին կենողն անմարիֆաթ չի ըլնիլ, թէ որ լսէնց չըլներ, ես իմ տղին խո՞սա կը տայի իրան, որ տարին երեք մանէթով ա կարդացնում։ Հաղիր կը տայի վաչէի տղին, որ երկու մանէթ ա առնում։ Հարեաթ տասում ա. «Հայը հայտարարին տո՛ւր, մինն էլ աւելու», համա ի՞նչ կանես, ա՛յ կնիկ, լսկի չեմ ուզում տալ Սօսին։

381
382

383 — Ա՛յ մարդ, ասեց կնիկը. դու էրկու երեսանի սաչի (բովի) հայ ե՞ս, թէ Ապարանայ ամառ, որ օրն օխտը թաւուր հաւայ (կիսամայ) ա անում՝ մին արև, մին կարկուտ, մին ամպ, մին պարզ։ Հիմի քունն ա. թէ Աբշաւիրին ես վախտում, որ ուզում ա տալ իր սրտի ուզածին, էդ ասա՛, թէ չէ դու իրան ասել ես, որ ես Զարմայրի քաւորին աղջիկ չեմ տալ, հիմի ի՞նչ ես մարդկանցը չարչարում, դէս ու դէն քցում։ աշխարհքումն անուվից լաւ ի՞նչ կայ. ասում ա. «պղինձը վեր ընկաւ՝ կոտրուեց ո՛չ, համա ձէնը վեր էլաւ», մի գօնում; էն ա, թէ սխալեցի, թէ ոնց էլաւ, վարդիւորին ես էն բանն արի. դու արի՛, տանք էդ տղին՝ գնայ։

— Լա՛ւ ես ասում, ա՛յ կնիկ, ասեց Հեթումը, համա խալխը հաղար տեղից անկալս քաշում են, թէ քոռ պատուին ամօթ ա, որ էդ բանն անես. սաքի ճշմարիտն ասեմ; սաքի տամ էլ միաքս էն ա, որ էս տարի պատկեմ ոչ, երեխէս պատիկ ա. էկող տարի կը կենան հօ, կը տամ. թէ չէ՛, Աստուած ի՛նչ կամեցել ա, ճակատին ի՛նչ գրուած ա, էն կըլնի. թէ կուզ էրկաթէ զուռ 384 Թու (արկղի) մէջ էլ դնեմ, որ նրա վրայ գրուած կըլնի, կը տանի։

Էս խօսքումը մէնծ տղէն ու Աբշաւիրը տուն մտան ու բարի րիկո՛ւն ասին, նստեցնին ոտները հանելու։

Մէրն ու հէրը սուս կացան, կէսուրը հարսներին աչքով արուց. ձեռը բերնին դնելով հասկայրուց, որ իրանց մարդկանցը բան չասեն, նրբանք էլ դլխով արին։

Վարդիթերն էլ որ կանանց հարսների հետ լսում էր էդ խօսքերը, սիրտը կոտրած՝ յառաջ գնաց մէնծ աղպօր ոտները հանելու, պատի հարսըն էլ Աբշաւիրինը։

Իթ.

Մի առակ կայ, որ ասում ա. «ընչանք խեղճքը միաք կանի, գիժը տղին հարսանիք կանի». էս հիմի մեր գլուխն ա եկել։

Գարեգինը հէնց որ վարդիթերենց տանիցն էկաւ իրանց տունը, տեսաւ Սօսն իրան էր ծնում։ Համա իրանէ սանահօր տանիցն էլ մարդ էր էկել իրան կանչում; որ գնան սանահօր տղին նշան դնեն։

Գարեգինն էլ Սօսին բան չի կարաց ասիլ, թամամ արուց (պատուիրեց), որ էքուց գայ, ու 385 ինքը վեր կացաւ, գնաց։

Հէնց որ սանահօր դրանը մօտացաւ, հետի էկող տղէն վազեց յառաջ, սանն իմաց արուց, որ սանամէրը փախչի, քաւորը գալիս ա։ Սանամէրը մէրն էս վախտ մկան ծակը հարիր թումանով էլ կառնէր, որ մտնի մէջը. էլ տեղ չի գտաւ,

չկլուխիննիցը մոտաւ ալըրի չուալի տակն ու կուչ եկաւ։

Սանահէրը դուս էլաւ բակը քաւորի յառաջը, բարո՛վ հաղար բարի՛ ասելով՝ տարաւ տուն, քաւորին տեղ արէ՛ք, ասեց կանչած մարդկանցը. վիրև համեցէ՛ք, քաւոր չա՞ն, դօշակին համեցէ՛ք։

386 Գարեգինը գնաց իրա համար քցած դօշակին (մահիճ) նստեց։

— Հլա աչքներդ լիս ըլնի՛, ասեց, սանահէր Բաբկէ՛ն. ապպէ՛ր, լաւ թաքուն-թաքուն բաներ ունիս։

— Դէ՛ քաւո՛ր չան, մին էլ ուզեցի ոչ քեզ նեղութիւն տամ, ասեց Բաբկէնը։

— Շատ ուրախ եմ, ասեց Գարեգինը, էդ լաւ էր. ո՞ւմ աղչիկն ա։

— Մանդակունոնց Արմենակի։

— Ես իմ Աստուածը, արժան ա՛, ասեց Գարեգինը. Աստուած չնհաւար անի՛. դե բերի՛ք նշանը աեսնենք։

387 Էն ահաթը մի բօթնոց (մաստուցարան) լիքը չիրնի, չորս Սպահանու դանդ (շաքար) վրէն, մի քանի հատ լաւ նուռը միջին, մի կարմիր չաղրաթի ու մի դեղին Բաղդատի աղլուխի էլ միջին, մի ոսկի մատանիք էլ տուրը կապած՝ սանեկրու հատ էլ պաճախլու (ոսկի) բերին, մէջ տեղը վեր դրին։

— Աստուած չնհաւար անի՛, մօտ քաշելով ասեց Գարեգինն ու առաւ ձեռը ապլխները, ասեց.—սանահէր Բաբկէ՛ն երկու ապլուխն էլ նոր 390 ադաթ (ծիւս) ա՞։

— Չէ՛, քաւո՛ր չան, ասեց Բաբկէնը, էդ ընդուր համար եմ դրել, որ քու հրամանդ որը հաւանեա, էն տանենք. թէ երեսը կալ պտի պահենք՝ չաղրաթը տանինք, թէ չէ բաց՝ Բաղդատին. ես մի քիչ ուզում եմ, որ մեր հին օրէնքովը էրթամ, համա սանահէրդ ղաբուլ (հաւանայնի) չի կենում։ Ես էլ նրա խելքն ա. երբ 391 որ տեսաւ, թէ իրա խօսքին անկալ չեմ անում, ասեց, թո՛ղ քաւորիս քէֆովը ընի։

— Վէ՛ր կալէք չաղրաթը, ասեց Գարեգինը, Աստուած պահակեր ա տուել, որ երևայ. մեր Հայաստանիցը սավահի ա՛չ մի երկրում էդ երես ծածկիլը չը կայ, էդ Թուրքիցն ա մնացել։

Չաղրաթը յետ դրին, ու մի փանտա վառեցին, մի տղայ էլ նշանը դրուց դնելին, գաւն էլ ձեռն առաւ, գնացին նոր խնամոնց տունը։

Նրանք էլ իրանց բարեկամներին կանչել էլին, մնում էլին սրանց։

— Բարի՛ ըլկուն ձեզ, նեբան մոնելով ասին սրանք։

— Հա՛յ Աստծու բարին ձե՛զ, դուք բարի՛, հաղար բարի՛, վերև համեցէ՛ք առաջները գալ՝ ասեց աղչկայ հերը։

Տղի բարեկամներն աղջկայ բարեկամներիցը վիրև նստեցին. Գարեգինին էլ քոմմէկիցը վիրև նստացրին ու երկու նոր խնամիքն էլ ամէնքիցը ներքև նստեցին։

— Արմենա՛կ ափէ՛ր, ձէն տուր Գարեգինը, մենք ուզում ենք, որ իրար հետ բարեկամութիւն հաստատենք, ի՞նչ ես կամենում։

— Ես իմ կամենալուցը պրծել եմ, ասեց Արմենակը։

— Բաս որ ըտենց ա, Աստուած չնհատոր անի՛, ասեց Գարեգինն ու բօթնոցի երեսը յետ բաց արուց։

— Աստուած չնհատոր անի՛, ձէն տուին ամէնքն էլ ու սուս կացան։

— Մեր ադամութիը կայ ա՛չ, ասեց Գարեգինը, որ բերենք հարսնացուին էլ հարցնենք ու նշանը դնենք մատը. մեր աղջկէքն ուրիշների պէս չեն, հօրը հնազանդ են. ըստուր համար էլ պէտք չի միտք անիլ, թէ աղջկայ սիրտն ի՞նչ պէս ա։

— Ա՛յ, լսեցէ՛ք, մեր նշանն էս ա. մի ոսկի մատանիք։ Վեր կալաւ ձեռն ու վեր դրուց. մի Բաղդատի աղլուխ, տասն երկու էլ պաճախլու, Աստուած չնհատոր անի՛։

Ձեռոյ առաւ իրանց բերած գինուցը մի թաս ձեռը, ասեց.—սանահէր Բաբկէ՛ն աչքդ լի՛ս, Աստուած քեզ բաշխի՛, իրար հետ հալիւորին, իրար հետ պառաւին, մի բարէի տիրանա՞ն, հնազանդ ընկե՞ն, հօղ են՝ ոսկի դառնա՞ն, հաստատ բարեկամ ընկե՛ք։ Սանահէր Արմենա՛կ, աչդ լի՛ս, Աստուած փեսիդ էլ, աղջկանդ էլ քեզ բաշխի։ Բարեկամնե՛ր, սաղ ըլի՛ք, Աստուած էս ուրախութիւնն ամէն մարդի տան էլ ռասա բերի. ասէք ու խմեց։

— Անո՛ւշ, անո՛ւշ, քաւոր Գարեգի՛ն, քու աչքն էլ լի՛ս, էս ուրախութիւնը քունն ա, կարմիրդ կապե՞նք, մի օր էս ուղտը քու դրանն էլ չդնի, ձէն տուին ըստեղից-ընտեղից։

Ձեռոյ ամէնն էլ մի մին թաս գինի խմեցին ու աչքալիս խօսացին, չաքարներն էլ դրին մի պատուով մարդի առաջ, որ նա կոտրի ու բաժին-բաժին էն չիրլինուցն (մրգեղէն) էլ հետն ամէն մարդի վայն էլ տայ. չաքարի գլխներն էլ տայ հարսի մօրը, որ փեսէն ու հարսը պսակից յետոյ իրար հետ ուտեն, քաղցր մնան։

Նշանից յետոյ հայ քաշեցին. լաւ պատրաստութիւն էին տեսել. ամէն թասի վրայ էլ աչքալիից սաֆահի բան չը կար։

Հացից յետոյ Գարեգինն ասեց Արմենակին.

—Ե՞րբ էք ուզում, որ գանք ըստեղ բ ա ր կ ը* բարիշենք։

— Երբ ուզում էք, էկէ՛ք, ասեց Արմենակը։

392

---

* Բ ա ր կ ն է այն արծաթը, որ փեսայի հայրը կը տայ հարսի հօրը բաժինքի (օժիտ) պատրաստութիւններին հոգալու. իսկ նորա հետի եղած կերակրեղէններին կասեն բ ա ր խ ո ւ ս։ Ուրիշ շատ երկրներում աղջկայ տէրն է տալի փող տղային, իսկ Հայաստան բոլորովին դորա հակառակն է։ Հիմի կամաց կամաց փող տալն էլ վերջանում է և լինում ձրի։

— Լա՛ւ, ասին, էքուց իրիկուն էլ կը դանք, բարկը կը վերչացնեննք, մենք էլ ուղում՝ էինք Զրօրհնէքիս առաջ պահակենք ու վեր կացանք։

Առաւօտենց լիար որ բացուեց. Է՛լ սանա- հօր տանիցն էկան Գարեգինին կանչեցին, որ գնան աղջկայ տիրոնջ դրանը աչքալիս խմեն. վեր կա- լան մի քիչ մտայ, մի չուշայ արաղ ու գնացին աղջկայ հօր չեմքումը մի մին թաս աչքալիս խմեցին ու ասին, որ իրիկունը հաղիր (պատրաս) կենան, գալ պահեն բարկը բարիչելու։

Իրիկունն էլ յետ Գարեգինը, մի քանի բա- րեկամներ ու տղի հէրը գնացին խնամունց տունը։ Ընտեղ էրեկուան պէս երի մի քանի մօտիկ բա- րեկամներ էին հաւաքուած՝ սրանք էլ նստեցին, ու Գարեգինը, ղորթ ա, ասենք, չահէլ էր, հա- մա մին՝ որ քաւոր էր, խօսքը նրան կը հասնէր, մին էլ՝ որ չահէլութիւնին մի մտիկ տալ խել- քին մտիկ տա՛ւր, վեր կալաւ ու ասեց։

— Սանահէր Արմենա՛կ, էս մեր պատերիցը մնացած կարգն ա, որ պտի դուք մեղանիչ ինչ քէֆներդ կուզի, ուղէ՛ք, ոնց ա՛ր պէտիս օրէնքն ա. ի՞նչ էք ուզում, վախիլ մէ՛ք, փառք Աստծու տեղը լիքն ա, սաղ ըլնի սանահէրս, էնքան աչ- խատել ա, որ ձեզ էլ ա հերիք՝ մեզ էլ։

— Ձեր սաղութիւնն եմ ուզում, ասեց Ար- մենակը, ես իմ տեղը վէքիլ (հրաշխաւոր) եմ ա- նում մեր Ներսէհին (իր բարեկամներիցը մէկը). նա ի՞նչ կանի, ինձ զաբուլ ա։

— Որ ըսէնց ա, ասեց Գարեգինը, Ներսէ՛հ ափէր, ասա՛ տեսնենք, բանը մնաց քու վրայ. մենք ուզում ենք էքուց բաղար գնալ, որ տակի չաբթին, թէ Աստուած յաջողի, հարսանիք ա- նենք, ի՞նչ ես ուզում։

— Քաւոր Գարեգի՛ն, ընչունքի բանն ըսէնց էլաւ, ասեց Ներսէհը, չատ լաւ ես հրամայում. քեզանից կուզեմ քանի մանէթի վոզ մի ծիրանի ղանաւուզ՝ մօրը սուդ հախի (կաթի գին), մի մանհուդ չուխացու՝ հօրը, տասը լիտր միս, հինգ լիտր բրինձ, մի լիտր եղ, մէկ էլ ձեր սաղու- թիւնը. թէ որ հարսանիքը պատի նստացնէք՝ հինգ լիտր միս, երեք լիտր էլ ոսպը։

— Շատ լաւ, ասեց Գարեգինը, վոզն աչ- քենրիս վրայ, կը տանք, խալաթներն էլ հետը. համա մէկել բաներըը չենք տալ հիմի վերացել են ըտոնք. մեզ համար ամօթ ա, որ զուռնաչին ածելով ընկնի դեղի մէջը, թէ ես բ ա ր խ ու եմ տանում. թէ կուզէք, քանի ու հինգ մանէթի վոզ կը տանք ու էդ բաներըը չէ՛։

— Թո՛ղ քու տասծն ըլնի, ասեց Ներսէհն ու գինին լցրուց խմեց ու ասեց, Աստուած չըն- հաւոր անի՛։

Ամէնն էլ մի մին թաս խմեցին ու Բաբկէնը հանեց քանի ու հինգ մանէթը, տուաւ Արմենակին։

Դուս գալուս էլ թամբահ արին, որ էքուց պատրաստուէն, իրար հետ գնան Երեւան ա- ռուտուրի։

Լքքսի օրը խնամին ու Կագմոսը (Գարեգինի աղ-
պիրը) գնացին Երեւան։ Ճոնթ առան ու ինչ հար-
կաւորն էր բերին, մնացող չորերն էլ տուին ըն-
տեղ կարելու,

Գարեգինն էս երկու օրը չէր կարացել Սօսին
տեսնիլ, գլուխը խառնուած էր հարսանիքի բա-
ներովը։

Լաւը հէնց որ աղլօրն յղու արուց, մի մարդ
ղրկեց, կանչիլ տուուց.

— Հը՛, ալ ե՞ս, ձախ. նեքսև մտնելով՝ ծի-
ծաղելով ասեց Սօսը, չկը ե՞ս, թէ բօք (յաջող
է՛, թէ ոչ)։

— Փառք Աստծու, խէր ա, ասեց Գարեգի-
նը, համա գիտես ի՞նչ կայ, պտի ընչանք Հոր-
թաթոլը համբերենք. հերը հէնց դռները բաց
արուց առաջիս, որ պտի հաստատ ուտուտ (յոյս)
ունենանք. համա բանն էս ա, որ մի քիչ երկա-
րում ա. ես էլ տեսայ որ մի քիչ էլ թէ խօսամ,
զամազալը կընկնի, չարագլուխ մարդ ա, խօսք
տուի։ Էս լաւ էլաւ. էկող շաբաթ էս մեր սա-
նահօրանց հարսանիքը կը պրծնենք, ես էլ գլու-
խըս կատակեմ (պարապացնեմ), ընդուց յետոյ
հեչա ա։

Ա՛խ, հոգէց քաշելով ասեց Սօսը, վախում
եմ, թէ դրանք մեր գլխատակը բարձ ըլին դը-
նում, քնացնում. մին էլ լսենք, թէ տուին ֆլանի
տղին։

— Վախիլ մի՛, ասեց Գարեգինը, ըտոնք
մտքիցդ հանի՛. ես հլա հօրն էլ ասի, որ մատա-
նիքը մտախս ա. մին էլ, թէ որ Աստուած ո՛չ ա-
նի, ըսէնց բան ըլնի, բօղ ձին գրանը կանեցած ա,
ճամփէն էլ առաջներիս. ինձ հալիւորը հէնց ու-
մուտ տուուց, որ արխէյին ընկայ։

Մեր գեղի աստղը դու լաւ գիտես, որ
տալու չըլին, հայ չեն ուտացնիլ. օխտը հետ կըռ-
նիցս քաշեցին, թէ նսեմ՛ հայ կե՛ր, թէ մտքնե-
րումը չարութիւն ըլնէր, ընչի՞ հայ կուտացնէին։

Սօսը լաւ չէր ուզում համբերի, համա ձե-
ռին ճար չը կար։ Թուրքերն էլ չեն պատ պա-
հում, համա որ քեամիք (չխաւոր) են, քիսէքան-
յումը մի սև վուղ չես գտնիլ, չկըներումը մինները
սանթուր քեամանչայ են ածում, կճճնները հէնց լի-
ղած են, որ կասես, եղ չի մտնել մէջը, պա՞տ են
ու պա՞տ։ Մենք հլա լաւ ա, պատի օրերը չոր
խորակ (կերակուր) էլ ա ունենում ենք, նրանք
ըսկի ցամաք դարեձ հացից սաւահի ոչինչ չեն ու-
նենում։ Հիմի մեր Սօսինն ա, համբերէը ոչ՝ ի՞նչ
աներ։ «Աչին գժոխքը չէր գնում, գլխին վեր հա-
տելով տարան»։

Մխաք ա անում խեղճ Սօսը, թէ ընչանք
Հորթաթոլը մի ամիս կայ. ամիսը չէ, առանց էն
էլ օրը նրան տարի ա թուում. մի մին պօլօճիկ
(լոքի) քցեմ չերքս, ասում ա, որ իմանամ, թէ քա-
նի՞ օր ա մնացել։

Էլ ընչանք Հորթաթաղը վա՛յ էն օրերին, որ նրա համար անց կացան։

Իրեք օրից յետոյ երեւանաւորներն էկան։

Գարեգնի աղպերը բերել էր, ինչ որ խեչաղպերութիւնի հարկաւոր էր. մի ջուխտ հաստ մեղրամոմ; մի քանի ըսաիլ (ինս գռուանիից փոխ առնի) բարակ մեղրամոմ, չիրնի, մի քանի նուռը, մի երկու պսակիկ գանգ, մի ըսաիլ հինայ, իրեք գաղ էլ գանաւուղ։

Էքսի օրը Բաբկէնի տանը, ճոթ կտրէք էր. էկան քաւորի մօրը կանչեցին, ու Գարեգինն էլ մի չխտանոց (40 կոպեկ) տուուց ու ղրկեց։

— Բարով հաղար բարի՛, քաւորմէ՛ր, առաջը գալով ասեց Բաբկէնը. նա էլ հօ պառաւ կնիկ էր, համա քինթը կալած՝ խուշուշկը (շղարշ) քաշած՝ գլուխ տուուց, աչքաչխ խօսաց ու ներս գնաց։ Սանամէրը մէծ կնիկ էր, քաւորամօրիցը վախչում չէր, համա չխօսքան էր, էկաւ ձեռը պաչեց։

Տունը լիքը կնանիք էին, պղնձէներն էլ չերկով (կարգով) թունդրի վրայ չարած՝ էփած պըրծած էին՝ տան մի դիմը։

— Հրէս քաւորմէրն էլ էկաւ, կանչեց մի քէյվանի կնիկ, Բաբկէ՛ն, թէզ ղրկի՛ գերձակի հետ։

Մին էլ տեսանենք ուստայ Սաեփանը կխաղաղն ու մկրատը գօտիկը խրած՝ ներս էկաւ։

— Աչքդ լի՛ս, Բաբկէ՛ն, ասեց ու գնաց վիրեւ քաւորմօր կշտին նստեց ու ճոթն ուղեց։

Դերձակը մէջ տեղ էկաւ ու կնանիքը չորս դիմը շարուեցին։ Նրանից ոչ մի կնիկ չի ամաչիլ. նա քոմմէքի հետ էլ ընչանք էսօր հէնց ա վարվել, որ քոմմէքն էլ հէնց գիտեն, թէ իրանց աղպերն ա. ինչքան տխրած կնանիք ըլնին, նա ուրախութիւն անելով՝ նրանց սիրտը բաց կանի։

Ամէնքը մի դհիյը ծիծաղալով՝ ասում են.— ուստայ Սաեփա՛ն, գողանաս ո՛չ։

— Ի՞նչ էք վախտում, ա՛յ աղբաթներդ խեր (օրհնուածներ). հարիր աչքը կայ վրէս, ես ո՞րտեղ պտի պահեմ, որ պուք տեսնիք ոչ. դուք գիտէք, որ ես էդ թաւուր բաներ չեմ գիտում. ուրիշ ո՛ւստաէքանցից կըլնի, որ դուս գայ, համա ես էս ա ծերացել եմ։ Ծիծաղալով՝ Աստուած էն օրը տայ, մահ չի՛ տայ։

— Հանաք են անում; ուստայ Սաեփա՛ն, ասեց Բաբկէնը։

— Հա՛յ, օրհնուի՛ս դու, ասեց ուստէն ծիծաղալով. սաքի չիտակ էլ ասեն, ի՞նչ մեզք ա, քաս առանց էն հօ չի՞ ըլնիլ. գերձկները սուտ կը մեռնին, որ մին օր էդ չի անեն։

Պարթ որ ասած ա, «չիտակ խօսքը հանաքով կասեն». տեսէ՛ք, թէ մեր ուստէն ի՞նչ պտի անի։

Ճոթը բերին մէջ տեղը վեր քցեցին ու ուստայ Սաեփանն առաւ մի մին, բաց արուց ձևե-

լու. մի երկու չափ ու ձև արուց ու ասեց.— Բաբ-
կէ՛ն, դուս չի գալի։

— Ամա՛ն, ուստա՛յ Լան, Լանիկ մեռնի՛մ, ասեց Բաբկէնը, դուս քերիլը քու ձեռումն ա. մին էլ ինձ Երեւան մի՛ ղրկիլ, որ հոգիս դուս ա էկել, յիսուն մանեթա մի սև փողի պես գնացել ա։

— Ի՞նչ անեմ, ասեց ուստէն, մեր Բաբկէնն ես, ուրիշը պատ ըընէիր, տե՛ս ո՞նց էի պակասցընում։ Ցետոյ փռեց գետնի վրայ ու մկրատն առաւ ձեռը, ծամծմացրուց ու ասեց։

— Բաբկէ՛ն, կարում չի՛, բօլմայ (ախսէ) բերիլ տո՛ւր ըստեղ։ Բօլմէն երբ որ բերին, ուստէն ասեց.—Բաբկէ՛ն ցնծա՛։

— Էս սհաթիս, ուստայ Սաեփան, ասեց ու տանհինգ չահի չուռուկ փող (20 կոպեկ) հանեց քցեց բօլմի մէջը։

— Ի՞նչ ես անում, մի ո՛սկի ա։

— Դէ հերիք ա, լա՛ւ, չունիմ։

— Դէ որ չունիս, մկրատն էլ չի կարում, ասեց ուստէն ու ծամծմացրուց։

— Ա՛յ մարդ, ի՞նչ ես անում։ Իրեք հալալ դեսան (60 կոպ.) էլ ա տուր է՛։

Ըստեղից ընտեղից ասին, ո՛ւստայ, հերիք ա, ցետոյ յետ դառաւ, քաւորմէ՛ր, ասեց, ցնծա՛ տեսնիմ։ տղէդ խալխի փողերը շատ ա ուտում, ես էլ քու փողերը պատ ուտեմ։ Էս փոխ հաց ա։

Նա էլ անխօս հանեց չխտանոցը, քցեց բօլ-
մի մէջը։

Մէկէլ կնանիքն էլ մի շահով, երկու շահով քցեցին, բօլմէն լցրին ու ուստայ Սաեփանը վեր կալաւ, ուրախ ուրախ չէքը լցրուց ու ասեց։

— Աստուած չնհաւոր անի՛, մկրատը հիմի սրուեց, ու ձևեց։

— Էս իրան փէշերը, էս թևերը, կտրում էր ու ձէն տալով դնում ծնկան տակը։ Թէզ թէզ էլ աղլուխը չիբիցը հանում, պինչը սրբում, ծընկան առաջին վեր էր քցում, էլ յետ վեր ունում, դնում չէքը։

Ոչով չէր իմանալ, թէ ուստէն աւելցուկ կտորներն աղլխի հետ դնում ա չէքը, թէ ինքը վերջը խեղճ չի դար Բաբկէնին ու հանէր ո՛չ, տար իրան։

Չևելուց յետոյ մի երկու չոր ինքը տարաւ կարելու, ճնացողներն էլ էն բարեկամ կնանոնցը ցրուեց, որ նրանք կարեն։

Հացից յետոյ ուստայ Սաեփանն առաւ իրան կարերն ու դնաց, որ պատ տակի չաբաթը հասցնէր։

Մէկէլ կնանիքն էլ իրանց չինք առած չորեքը տարան։

Ի.

Տակի շաբթի չորեքշաբթի օրն էր, որ Գաբրիէլն իրիկունը ժամից եկաւ, տեսաւ, որ սանահօրանց տանից էկել են իմաց տան, որ էքուց իրիկուն հարսանիքի տաշտադրէքն ա*, պատրաստ ըլին, որ խեչպղպէր գան։

— Շատ լա՛ւ, ասեց Գաբրիէլնը, մենք խաչից վախչող չենք, ումուտով էլէ՛ք։

Էքսի իրիկունն էկան Գաբրիէլին ու աղպօրը կանչեցին տաշտադրէք։

Ընտեղ հաւաքուած էին շատ մօտիկ բարեկամներն ու տէրտէրը։

Հէնց որ Գաբրիէլնն ու աղպէրը տուն մտան, տէրտէրները համեցէ՛ք արին, իրանց կշտին նստացրին ու հացը քաշիլ տուին։

Բողբաշի վրայ մենծ տէրտէրը մի թաս գինի առաւ ձեռն ու ասեց. — օրհնեալ լինի՛ք, Աստուած հնհաւսր արասցէ՛, պարոն Բաբկէ՛ն, աչքդ լոյս եղիցի՛, բարեկամնե՛ր, ձեր աչքն էլ լոյս եղիցի՛։ Գիտէ՞ք, ի՞նչ կայ, որդի՛ք, ձեր բարի սովորութիւնն է, որ այս երեկոյին տաշտադրէք էք անում. սաքի թէ, ուզում էք իմաց անել, որ էքսից իրիկուն հարսանիքն ա։ Ի հարկէ պարոն Բաբկէնի գլուխը խառնուած կընի, չի կարող մեզ կառավարիլ. մի ձեռը ծափ չի տալ, պէտք է, որ մի քանի բարեկամները օգնական լինիք նրան և մեզ էլ այս քանի օրս կառավարէք։ Պարոն Բաբկէ՛ն, ո՞ւմն ես ուզում, որ կառավարիչ նշանակենք, կամ նրան օգնական, մուճուր (stiste)՝ իրան օգնական, իրան ձեռի տակի աղէք։

Բաբկէնը չհանց տուտւ կառավարչի համար իրա փեսայ Գուրգէնին, նրա օգնական՝ իրա հօրեղբօր տղայ Վարպետին, մուճուր՝ իրա քեռու տղայ Աբրամին, նրան օգնական՝ Թորգոմի տղայ Աբաջանդին, մի քանի տղայ էլ մարդ կանչողներ։

Օրհնեա՛լ լինին, շատ լաւ գործ կատարող են, ասեց տէրտէրը. պարոն Գուրգէ՛ն, ի՞նչ ես ասում, չլինիդ առնո՞ւմ ես ուրախութիւնով քու բարեկամների ծանրութիւնը։

— Ի՞նչ անենք, տէրտէ՛ր չէն, թէ մենք չօգնենք, ո՞վ պտի օգնի. պէտք է անենք, էլ ի՛նչ։

Էն ժամանակը տէրտէրն ասեց. — էս մի թաս էլ խմենք պարոն Գուրգէնի կենացը, ասենք բարի՛վ կառավարի, մեզ լաւ մտիկ տա՛յ, ու խմեց։

---

* Տաշտադրէք ասում են այն երեկոյին, որի միւս օրը հարսանիքը պէտք է սկսի. որովհետև այսօր են Քխում հարսանիքի հացը, որի ալիւրը մաղելուս՝ եօթը տանից ազապ աղջիկ են կանչում, որ նրբանք ամէնքը մի մին մաղեն տաշտի մէջը։ Սրա համար ասում են այս երեկոյին տաշտադրէք։

Այս երեկոյին ընտրում են հարսանեաց բոլոր կառավարողներին և ծառայողներին իրանց մերձաւոր բարեկամաց խորհրդատուութեամբ։

Մի մին թաս էլ խմեցին մուճուրի ու իրա օգնականների կենացն ու հայը վեր քաղեցին։

Էքսի օրն արևը որ մի քիչ բարձրացաւ, հարսանիքի տանիցը մարդ էկաւ Գարեգնին կանչեց, որ գայ՝ հարսանիքի միսը մորթում են։

Երբ որ գնաց, մի մենծ եղը բերին, վեր քցեցին ու զուռնաչին միս մորթելու զայդէն (եղաևակն) ածեց։

Արևը գալուս՝ Գարեգինը մի բաց կողպեք թաթախ արուց մէջն ու կողպեց, բալանիքը դըրուց չէքը, ընչանք բաց անելու վախտը գայ։

Մսից յետոյ Գարեգինը յետ գառաւ իրանց տունը, իրիկուայ համար թադարէք սեռնելու։

Արևը որ մի քիչ կախ ընկաւ, փեսէն մի քանի աղապների հետ ձի նստած՝ էկան Գարեգնենց տունը, գափ ու զուռնէն առաջին ածելով։ Լեզացաւ իրա համար դրած տաք չրովը, հագաւ թագաւորական չորերն ու Գարեգնի ու մեկել աղապների հետ ձի նստեցին, գափ ու զուռնէն առաջներին ածիլ տալով՝ գնացին Մողնի ուխտ անելու։

Զուռնաչիքը մնացին Մողնու թառումը, սըրանք գնացին վանքը համբրեցին ու դուս էկան։ Ընտեղ նստաղ Հայր սուրբին համեցէք արին, որ էքուց պատարագին գայ հարսանիքը։ Նա էլ չնորհակալութիւն արուց, մի բաղդատի ազլուխ կապեց փեսի չլինքը, օրհնեց ու ասեց, որ իր բաժինն իրանք քէֆ անեն։

Տղէքը հէնց որ հասան Աչտարակ, գեղի գըլխի դղումը (տափարակ) մի քանի հետ ձի խաղացին, իրար առաջ կտրեցին, հունարները չհանց տուին ու քշելով էկան Գարեգնենց դրանը վեր էկան։

Ո՞վ չի գիտուս, որ էս ձի խաղացողների միջին ամէնիցը ղօչաղ Սօսը կըլնէր, որ աղապնեբի հետ Մողնի էր գնացել։

Ընչանք տղէքանց Մողնուցը գալը, Գարեգընենց տանը դրանց համար տեղ էին չինել։ Էկան նստեցին, խաղն ու տաղը չաղ արին։

Գարեգինն էլ կանչեց իրանց հարևան աղապներին։

Իրիկունս իրանց տանը աղապների հացկերոյթն էր, ինքը խէչապղէր էր*։

Դեռ հացը չի քաշած, գալաքն էլ էկաւ փեսի ու մեկել աղպների երեսը վեր արուց, անուշ հոտ քսեց ու գնաց։

Հացը քաշեցին։

Դու արի՛, հիմի տե՛ս, թէ մեր աղապներն ի՞նչ քէֆի են։ Մենծ մարդ չես գանիլ, քոմնա թայդաշ (հատակակից) տղէք են, ոչովից ամաչում չեն. հէնց են իրար բերնից խաղն ու մուխամէ բաղն առնում ու աստւմ, նա թէ՛ չէ զուռնաչուն ածիլ տալի, մի մին վեր կենում լաղի խաղում, որ կասես, էս էն տղէքը չեն, որ ընչանք

2).

3).

* Այսուհետև մինչև հարսանեաց վերջանալը Գարեգինը ծառայում է խաչերպարական պաշտօնով։

իրիկուն աշխատանքի մէջին են ընում; բան ու գործումը զառխիչ էլած են ընում (խառնուած):

Սօսն էլ, որ ուրիշ հարսանիքների վախան աղանչաք էին անում տանում, ո՞ւր մնաց, որ էս իրիկուն հարսանիքն իր աղպօր տանն ա: Հէնց քեֆի էր չգանց տալի, որ տէրը փրկի:

Հացից յետոյ բերին մի մին մանր մեզրա-մում բաժանելու: Ինչքան աղաղներ կային, տեղներիցը կանգնեցին, մէրը վառեցին ու ղուռ-նային ածեց:

Գարեգնի Անուշ քիրն էլ էկաւ խաղայ ու Բաղդասի աղլուխը յուսը քցած՝ մօտացաւ, գը-լուխ առուց փեսին, երկու հետ գօչին (կրծին) խաչմերուկ քաշեց ու կապեց փեսի չլինքը, մի առատը աջու յուսումը բանգ արուց, մինն էլ ձա-խու դիհը գօակումը: Էս էլաւ փեսի առաջին կոսպանդը*:

Յետոյ փեսէն խնդրեց Սօսին, որ էս իրեք օրը զահմաթ քաշի (նեղութիւն կրի), իրան փե-սաղպէրն ընի: Նա էլ չլինքն առաւ ու թուրը կապեց մէջքը, մի դաւ դինի, մի բօշխաբով էլ մաղայ ձեռն առաւ ու դուս գնացին:

Առաջ առաջ էրթում էին աղաղները մու-խամբաղ ասելով, դաւլն (դահիրայ, թմբուկ) ա-ծելով. նրանից յետոյ փեսաղպերը (որ Սօսն էր), յետոյ խեչապերը, յետոյ փեսէն՝ կարգին**:

* Այս աղխին ասում են կոսբանդ, այսինքն յուսքանդ, որ կը նշանակէ յուսումն ամրացնել. այս է նշանը նորափեսութեան:

** Այս է կարգը կանգնելոյ, թէ պատկ գնալուս, թէ ուր և կա-միս:

Ձամբին փեսին ինչքան աղապ իր հընկեր աղէք էին ռաստ գալի, որ իրիկունս ընտեղ չեն էլել, նրա հետ պռօչակ էին անում ու ասում:— վաճառդ չնհաւո՞ր ընի:

Աղաղներն ընչանք կարմրաւորի ժամը հաս-նելը, եա մուխամբաղ էին ասում; եա ձէն էին տալի. «ա՛վ մեր թագաւորին (փեսին) կը սիրի, նրա սաղութիւնի համար եալլա՛յ կանչի» ու գո-ռում էին:

Կարմրաւորի դուռը որ հասան, դափ ու ղուռնէն կարեցին ու մուան նէքսն ուխտ արին, թագայ թագաւորին պարզերեսութիւն խնդրե-ցին ու դուս էկան:

Էլ էս կարգովը գնացին աղէքանց ու իրանց նաշաղ (հիւանդ) բարեկամների տները, հարսա-նիք համեցէք արին:

Նրանք էլ մի մին կոսպանդ կապեցին փեսի չլինքը:

Էս իրիկուն էրկու տեղ հացկերոյթ կայ, սամահի խեչապօր տանինը, որ պրծաւ. մին փեսանց տանը՝ մին էլ հարսի հօր տանը:

Հարսանիքն էս իրիկուն նստեց (սկսաւ):

Հէնց որ փեսէն իրա բարեկամներին տե-սութիւն արուց պրծաւ, յետ գառաւ գպա իրանց տունն ու գրան առաջին կանգնեց, խնդրեց աղաղներիցը, որ գան հարսանիք:

Նրանք էլ խօսք տուին, որ հացից յետոյ մի լաւ ուրախութիւն անեն, ու չսկնուեցին:

Փեսացուն առաւ խնչացուն ու վիճին տարաւ վերի դիհն իրանց համար պատրաստած Թաղտի վրայ կաննացրուց, որ մի խալիչայ էր քցած՝ բարձը վրէն դրած՝ պատիցն էլ մի կարպետ կախ տուած, որ չորերը Թողոտ չընկնին։

Տան չորս պատն էլ նախած էր ալրից չինած ծառերով։

Տունը լիքն էր զննաղներով։ Կենդ տուն՝ կը տանէր ընչանք երկու հարիր հոգի։

Մի դիհը կարգին նստած էին մարդիկը, մէկէլ դիհը կնանիքն իրանց երեխէքանցովը, անկարգ, իրար առաջ կտրած, բոզչուԹիւնի չորերը (պահուճաճիճներր) ոտներրի տակը քցած, աչքնեբրը դեղած, ունեցողներն էլ ոտկին ճակատներին, երծաԹէ չարքը ճանեբրին։

Հալբա՛Թ վարդեԹերրի մէրն էլ վեսի քեռակինն էր, ընտեղ էր իրա հարաններրովը։

Ղալմաղալի (գոռոցի) ձէնիցը մարդ մարդի խօսածը չէր հասկանում։

Մի կողմիցը կառավարիչը ձէն ա տալի մուճուբին, որ հացը դրկի. մի կողմիցը Բաբկէնը գալիս ա կառավարչին ասում.—ՓԼան մարդը չը կայ, կանչել ե՞ս, ԹԷ չէ։ Նա էլ՝ հա ասում ա կանչել եմ, հա ԹԷ չէ. մարդ ա, դրկում։ Մի դհիցը կնանանց քչըփչըն (փսփսոց) ա։ Ջահել աղջկերանց ու հարաններրի քաղցր մասլահաԹը հօ՛, որ քնչնումը հաւաքուած անում էին, էլ ո՞րտեղ կը լսուէր էսքան ձէնի միչին։

Տանափկէնն էլ մի պատիժ ա. նա էլ Թուն-դրի չրԹանը պըպըԹած՝ (կկըզած) իրան ծառայուԹիւն անող կնանանց վրէն ա դառում ու ասում. —որ ես պակ ամէն բանն անեմ, էլ դուք իմ ընչ՞ին էք պէտքը։ Շունը տէրը ճանաչում չէր։

Խեչճ տէրտէրի չարէն որ հատաւ, ձէն տուաց.—պարոն կառավարի՛չ Գուրգէնն եղբայր, հաց բերի՛ք։

— Տէրտէր չա՛ն, այիդ մեռնի՛մ, մի քիչ համբերի, մի երկու մարդ էլ կան՝ հիմի կը գան, ասում ա Գուրգէնն ու հետո էլ կաննաւորներին (ապատաւորներին) բան դնում։

— Օրհնուա՛ծ, դու բե՛ր, նրանք էլ կը գան, ես նրանց սիրտը կը շահեմ։

Հացը քաշեցին։ Տէրտէրը սեղանն օրհնեց ու հաց կարեց, մէկէլներն էլ հետը։

Նորափեսէն էլ իրան երկու հընկերներովը բարձի վրայ կաննած ու ընչանք հացը վեր ու նիլ, մենճամարդը դուս ընկնելը նրանց նստիլ չը կայ։

— Գինի խմացրո՛ւ, տէրտէ՛ր չան, ձէն ա տալի Գուրգէնն, ու աչքը դէս ու դէն մանա ծում, որ տեսնի ո՛ւմ առաջին հաց չը կայ, ո՛ւմ առաջին սման ա պակաս։

Տէրտէրը Թան առաւ ձեռը, մի երկար օրհնեց, աչքալիս խօսաց ու խմեց, խալխն էլ հետը։ Խալխի աչքը տէրտէրի վրայ ա, բերանը ժաժ տայ, ժաժ կը տան, խմի՝ կը խմեն։

Մի քիչ հայի վախտը սուստացան, որ կա-
ըէիր քեզնից հինգ մարդ հեռու նստածին գո-
ռալով բան հասկացնիլ։

Փլաւի վրայ դափ ու զուռնով էկաւ խէչ-
չախալօր խօնչէն ու իրանց օղլուշախը։

Մի բօթնոց լիքը չիրնի էր, մի թղթով հի-
նայ, որ պահ հարսի ու փեսի ձեռները դնեն,
էրկու դանդ, մի դաւ էլ գինի. բօթնոցի չորս
պենճրամին (անկիւն) էլ չորս մում վառած։

Ւերին աերաէրի առաջին վեր դրին ու նա
էլ առաւ բաց արուց։

— Շէն կենա՛յ խէչաղպէրն, ասէց ու բօթ-
նոցով գրկեց ամէնին էլ առանձին։ Էրկու պահիկ
լանգառու (ախտ) մէջ էլ չիրնի լցրուց, թաան
էլ դրուց մէջը, խէչաղպօր դինուցն էլ մի թաս
ինքը լցրուց, նորափեսի ու խէչաղպօր կենացը
խմեց, մի քիչ մաղայ վեր կալաւ ու ասէց, որ
ամէն մարդ էլ խմեն։

Ամէնքն էլ խմեցին, Գարեգինն էլ իրա ու
փեսի առջակ չնորհակալութիւն արուց, ու հայը
վեր քաղեցին քօչէն (դուս գնալու եղանակը) ա-
ծեցին ու մարդիկը քաշուեցին։

Մարդկանցից յետոյ կնանիքն էկան նստե-
ցին կարգին հայ ուտելու. խէչաղպօր մօրիքը
բռնած՝ հնչանք յետին կնիկը։

Սրանք թո՛ղ ըստեղ հայ ուտեն, մենք
գնանք հարսի հօր տունը։

Հարսի հէրն էլ իր պատրաստութիւնն էր
տեսել։

Ոնց որ փեսենց համար ասեցինք, նա էլ
ընտեղ իր բարեկամներին էր կանչել, մի մեծ
հայկերոյթ էլ նա ունէր։

Հէնց որ զուռնէն կարմրաւորիցը փեսին բե-
րուց տուն, գնաց, որ հարսին իրա քեռու աղջկայ
տանիցը տանի իրանց տունը. էս իրիկուն ընտեղ
ղօնաղ էր*։

Դափ ու զուռնէն երբ որ գնաց, հարսի քե-
ռու աղջիկը բերուց մի բաշօրթիկ (գլխաշոր),
մի քանի քիսայ (հատ), մին էլ տուլի լաչակ
խալաթ դրուց հարսի առաջը, ինքն էլ ու մօտիկ
բարեկամների աղջկէքն էլ հեռները (որոնց օղլու-
շաղը հարսանիքատանն էին), դափ ու զուռնէն
ածելով՝ գնացին հարսին հէրանց տունը։

Հարսնացուին նստացրին թախտի վրայ, մէ-
կէլ աղասնիներն էլ կշտին շարուեցին։

Հարսին որ բերին պրծան, դափ ու զուռնէն
գրկեցին փեսենց տունը, որ գնայ խէչաղպօր խօն-
չէն բերի, քօչին ածի ու թէզ յետ դառնայ,
ընչունքի էս իրիկուն սրանց կը պատկանի, սրանց
ուրախութիւնը մենակ էս իրիկուն ա։

---

* Աղջիկը նշանուելուց յետոյ՝ օրը մի բարեկամի տան հրաւիրուած կը լինի մի քանի ազապ աղջկերանցով՝ մինչև հարսանիքի օրը և ամէն տանող էլ պէտք է պարգև տայ հարսին, իսկ այս հարսանիքի երեկոյին անպատճառ մէկ բարեկամի տան պէտք է կանչուած լինի, որ մնենելուս դափ ու զուռնով մի քանի ընկերների հետ գնայ իրանց տունը։

Երբ որ փեսի տանը հացը վեր կալան, գալի ու ղուռնէն դնայ հարսի հօրանց տունը։

Աղապ աղէքանց մենծ բաժինը գալի ու ղուռնի քամակիցը դնային, ձնացող աւելի մօտիկ բարեկամները հաւաքուեցին, Սօսին քցեցին եալլի բաշի, իրանք էլ կուռն ընկած՝ «լէ՛լէ՛» ասելով՝ խաղացին։

Ամէն կնիկ էլ ուզում էր իր աղջկանը բաղար քցի։ Բերին իրանց հարսների հետ կուռբըռնուկ արին ու խաղացին։

Եալլիբաշի Սօսը հէնց էր ասում «լէլէն» ու մի ձեռին էլ ապլուխը պահ տալի, մարդի քէֆ էր բերում։ Վախտ-վախտ էլ որ մոխիկ էր տալի իր դիմացը եալլու մէջ ընկած վարդիթերին, էչխիցը չոնուն (խեղացնոր) էր գառնում։ Նա էլ հօ; ղորթ ա, եալլու մէջն ընկած՝ սաքի թէ խաղում էր, հարս ուռներն են մէնակ ժաժ գալի, աչքը հրէ Սօսի երեսին։

Ընչանք հալալ կէս քչեր հարսի հօրանց տանն ինչքան ազատ աղջկէք կային, մի մին խաղացրել էին ղուռնով։

Ձեռց իրանք «լէլէ» ասին, ղուռնէն դրկեցին փեսի տունը։

Հէնց որ ղուռնի ձէնն առան, եալլին քանդեցին ու մի քանի ազատ աղջկէք մէջ տեղ բերին, խաղացրին ու «չաբաշ» տուին*։

* Շաբաշ ասում են այն ընծային, որ աղջիկը խաղալուս տալիս են ղուռնաչուն, որ լաւ ածի։ Այս ընծայն՝ մարդկանց տուածը մի սև փող է, իսկ կնանոնցը՝ մի քիչ միրգ։ Որ աղջիկը լաւ խաղայ կամ ազատներին հաճելի լինի, նրա շաբաշը շատ կը լինի և նորա համար մեծ պարծանք է։

Վարդիթերի մէրը, ղորթ ա, Գարեգնին չատ էր պատիւ տալիս, Սօսին էլ վարդիւոր կիրակի օրը նշան էր դրել, համա մարդի միտքը գիտէր, ընդուր համար չէր ուզում աղջկանը «կենդաշաբ» խաղանիլ։

Մենծամարդը քաշուել էր, ձնացել էին քէֆի ազէքը։

Սօսն թէզ-թէզ Գարեգնի կողքին բռնում ա, թէ զուր տեղը մեր չաբաչներն ուրիչին տալով կորցնում ենք, ասա՛ մօրը, թո՛ղ երեխին խաղացնի։

Գարեգինն էլ տեսաւ, որ ամէն կնիկ էլ իրանն ա առաջ քաշում, մէնակ Համասփիւռն (վարդիթերի մերն) ա խեղճ երեխին մուրթը կոխել չի էլ ուզում թէ երեւանցի, տեղիցը մի ձէն տուուց թէ.—խնամի՛, երեխին թո՛ղ գայ խաղայ։

— Ձէ՛, զաղէդ առնի՞մ (մատա՛ղ), խէչապսէր չա՞ն, ճըրալով ու նազ անելով ասեց պառաւը, իմ աղջիկը խաղալ չի գիտում։

Տեսաւ Գարեգինը, որ ինչ անում ա՝ չի ըլնում։ Թո՛ղ ձնայ, ասեց Սօսին, էս իրիկուն, տե՛ս էքուց նրա գլուխն ի՞նչ կը բերեմ։

Աչքներն իրեք բերան կանչել էին, որ սրանք դեռ աղջիկ էին խաղացնում։

Ձեռց կառավարիչը ձէն տուուց, որ հինէն բերեն։

Էն ահաթը մի ազապ ազայ գնաց մուճաճանիցը հինի տեփուրը դրուց գլխին, խաղալով բերուց վեսի առաջին վեր դրուց։

Տեփրի միջին խաչահանքի փռած էր երկու հաց (շաւաշ). նրան վրայ մի ամանուս խեչապօր տանիցն էկած հինէն էր չաղախած՝ մին էլ մի ման մսի (ոռւբ, բաֆտագ)։

Ինչքան պսակուած մարդիկ կային, հեռացան, ու ազապ տղէքը հաւաքուեցին, վեսի առաջին չոքեցին։

Սօան էլ որ վեսապզէրն էր, ընչանք հիմի վեսի դհյոն էր, հիմի դառաւ ազապների դիմը։ Նատացրուց վեսին ու խեչապօրը, կռնեքը քշեց ու վեսի երկու մատը բռնեց։

— Համեցէ՛ք, ձէն տուուց նա, նորափեսին ինչքան բարեկամներ ունի, էկէ՛ք, որ հինէն դնում ենք։

Առաջ վեսի ծեր տատն էկաւ, կանգնեց, օրհնեց.—որդի՛, ասեց նա, Սիմոն ծերունի դառնա՞ս էս տանը, հէր Աբրահամի օրհնանքը քեզ վրայ ըլնի՛, քու բանին արի ըլնի՛ս, իմ տարսը (հատակին) հանի՛ս, հոզ բռնես՝ ոսկի դառնա՛յ, լեռը գնաս՝ կանանչի՛, ճամիխդ փունջ մանիչակ բուսնի՛, էտոպ սուր ըլնի՛, բահդ սար քնին ըլնի՛, շատ դատես՝ շատ ուսե՛ս, քիչ դատես՝ էլ շատ ուսե՛ս։

Պառաւը գնաց, հէրն էկաւ, հօր աղպէրտինքը, յետոյ ամէն աչխատաւորները, օրհնեցին ու գնացին։

Օրհնանքը որ պրծաւ, Սօսը ղայիմ հուպ տուուց վեսի երկու մատն ու ասեց Գարեգնին.—խեչապէ՛ր, ցնծա՛. էս աղապները քու պարտականը չեն, որ վեսին առաջին ղուլլուղ են անում։

Գարեգինն էլ, ինց որ իրանց սովորութիւնն էր, ասեց.—բարեկենդանին մի լաւ աչխատ կատենք։ վեսին էլ վեր կունենք, կերթանք մի լաւ քեֆ կանենք։ (էլա էն առնելն ա, ինչ առնում ա)։

— Շէն կենա՛յ խեչապզերը, ձէն տուուց Սօսը, մի լաւ աչխատ տուուց աղապներին, ու մատը թաթախ արուց հինի մէջը, վեսի աջու ձեռը հինայ դրուց, ձախումն էլ թողուց, որ հարսի ձեռները դնեն, նոր նրա մէկել ձեռը։ խեչապզերն ու մէկել աղապներն էլ ով ուղեց, իր ձեռը հինայ դրուց, ով չէ հօ՛, մաթը կերաւ։

Նորափեսի մի ձեռը որ հինայ դրին, վեր կալան ու դափ ու ղուռնով գնացին հարսի ձեռըն էլ գնելու։

Հետը գնացին վեսին քիրն ու Գարեգնի Աննուչ քիրը, մին էլ վեսի բարեկամներիցը մի տղայ։

Հարսանքատունը գարտակուեց, բարեկամները գնացին քնելու, աղապ տղէքն էլ ղուռնի հետ վազեցին խնամանց տունը։

Տունը որ խօլվաթացաւ (խաղաղուեց), նոր բերին փեսի, խէչապտօր առաջը հաց դրին. հօ էն կիրակրներիցը ո՛չ՝ ինչ խալխը կերել էին։ Սըրանց համար լաւ բաներ էին չինել պահել՝ գառ թայ, հավկայ, հաւի միս, խորոված սուկի ու անուշեղէններ։

Հէնց որ հինէն տարան խնամինց տունը, նըրանք որ ընչանք հիմի «լէլէ» էին խաղում, կարեցին ու ասեցին ղուռնաչուն.—գէ ածա՛, ուստա՛յ, հինէն դնենք։

Ջուռնաչին ծուռանը փչեց, դափաչին էլ կոմբաչին ու կոպալին առուց ու բայաթուն ղէցին։

Հէնց մղկատով ածում էր, որ չէ թէ մէնակ նորահարսի հօրն ու մօր ողբը պրծացրուց, հարս ով որ ընտեղ կային, ամէնի լացն էլ բերուց. ամէնի աչքի վրայ էլ արտասունք էին տեսնում. էն թաւուր ուրախութիւնը մի կէս սգաթումը դառաւ լաց ու չիւան։ Հարսի հէրը դլուխըն առել ա, քաշուել պատի տակին ուքուր-ուքուբ (աղիողորմ) լալի, մէրը չլինքն ա ծռել աղջկայ առաջին՝ աչքերիցը պէծ-պէծ կրակի նըման վեր ածում, մէկէլ կնանիքն էլ տխրած՝ արմանում են ղուռնաչու վրայ, որ ձեռիցն ինչքան բան ա գալի։

Էս սաղ հարսանքաւորի միջին իրեք հոգի մէնակ ուրախ են. ուրիշներըը լաց են ընում, իրանք ծիծաղում են։ Սրանք են՝ փեսի ու Գաբրիէլի քիրը, մին էլ խնամի էկող աղէն։

Հինէն որ դնում են, աղջկայ տիրոջ ումուրը կարուում ա, ընչանք հիմի իրանց աղջիկն էր, հիմի չէ։ Աղջիկը հօ՛, Աստուած ոչ չհանց տայ, թէ ընչե՞ր ա անում։ Էլ սիրտը կանում չի. ձէն հանիլն ամանչում ա, որ տալն ու քաւորաքիրը ըստեղ են. աղլուխը քաշել ա գլխին ու աչքերիցը վեր ածում, չորերը խարաթ անում։ Հլա լա՛ւ, որ աղջկուխիւնի հին չորերն են։

Ջուռնաչուն խասաֆ (խիղճ) չունի, անչախ (հազիւ) ա էչխալամիշ էլել (քորքոռուել), մի թաս էլ քցել ա՝ բէչինն (ուղեղն) ա ընկել. քանի չանումը չան կայ, ուզում ա հէնց անի, որ սարեբրին, ձորերին էլ լացացնի։ Դու հաղար կայ ու ասա՛.—ուստա՛յ, հերիք ա, չանիդ մատա՛ղ, մենք ջուր կաւելինք, նա իր բանը գիտի։ Ընչանք փեսի տանիցն էկած աղէն հրաման չանի, նա կըսրիլ չի։

Տեսան տղմարդիկը, որ քոմէքի աչքերն էլ ուռեցին, աղանչանք արին խնամի էկողին, որ կարիլ տայ։ Ջուռնաչու աչքը սրա վրէն էր. հէնց որ նա ձեռը բանձրացրուց, ինքը վոխեց և այլի։

Աղապ տղէքն էլ ըտուր էին բանդ, էն սըհադը կուռքռնուկ արին, եալլին տաքացրին։

Սրանք ըտեղ եալլի խաղային, օթախումը աղապ աղջկէքը հարսի ձեռները հինայ դրին, հինի հետ բերած մաթն էլ կերան։ Հինից յետոյ

Ա. Հարսի մէջը բերուց երկու բաշօրթիկ (դիւաշոր), դրուց էգ խնամի էկող աղջկերանցը խալաթ, նըրանք էլ չնորհակալութիւն արին, վեր չի կալան, բաշխեցին իրանց հարսին։

Ընչանք աղապ աղէքանց եալլին պրծնիլը՝ խընամի էկող աղջկերանցն ու աղէքանցը չոկ հայ քաշեցին, պատիւ տուին։

Երբ որ պրծան, նոր էլ յետ առան, դնացին նորաւէսի մի ձեռն էլ հինայ դնելու։

Խեղճերը դեռ նոր էին աչքները կպցրել, որ քնահարամ արին, վեր թռցրին, հինէն դրին։

Ղօրթ ա՝ էլ յետոյ թէք ընկան, համա վա՜յ էն քնելուն, ինչ քնեցին։ Ընչանք լիս երազներ էին տեսնում։ Փեսէն իրա նշանածին էր տեսնում, Գարեգինն էլ Սօսի համար աշխատիլը, Սօսն էլ հօ իր սիրտը կրակողին։ Էլ ի՞նչ ասիլ կուզի, որ «սոված֊ը հայ կը տեսնի երազում, ծարաւը ջուր»։

ԼԱ.

Լիսը նոր բացուում էր, կառաւարիչն էկաւ իրանց տանիքը, տեսաւ որ իրա հրամանի գեօղայ տանտիկինը թունդիրը վառել էր, պղինձներըը չարել վրէն. վրաւի պղինձն էլ դրանը օճաղի վըրայ դրած՝ Մուսէս ախէրն էլ կողքին մի կնկայ հետ գրից էր անում; ընչունքի նրա եփած վըրա-

ւէն վրաւ չի հասնիլ. ձեռդ որ վրէն դնես՝ կը նսեմ, էլ յետ կը բանձրանայ, ուտողն էլ կշտանալ չի։ Փեսէն Գարեգնի ու Սօսի հետ թէք ընկած քնած ա, մուճուրն էլ մուճուրատանն իրա օգնականների հետ պատրաստութիւններ ա տեսնում; համա Բաբկէնը գլուխը դրել ա մի քարին, մի բաց տեղ վեր ընկել։

—Բարի՛ լիս ձեղ, ասեց նա տուն մտնելով. աղբաթըխերնե՛ր (orինուածներ), օրը ճաշ ա դառնել, դեռ նորաւէսին վեր չէք կացրել. տան տիրոջն մեկ արա՛ է՞, երկար ու բարակ ո՞նց ա մկկնուել, ըսկի կառես ինքը չըլնի, ի՞նչ անհոգ մարդ ա էլած էլել սա։ Ցետոյ սկսեց քնածներին ձէն տալ, ղուռնաչուն ս հ ա բ ի ն* ածիլ տալ, աղէքանցն էլ թամբահներ անիլ, որ մի քիչ կենան ու երթան ֆլան ֆլանին համեցէ՛ք անեն, որ էս օր պռակաճաշին գան հարսանիք անորդովի։ Ինքն էլ Բաբկէնի հետ մնաւ մուճուրատուները, գինանոցց կարասների ծէփերը պոկեց, համերը տեսաւ, թէ ո՞րն ա լաւ, որ ինչ վախտ ուզենան խալխը գինին վոխիլ տալու, էն կարասին բերիլ տայ. մի քանի էլ մօտիկ բարեկամ պատուելի մարդկանց հիմի կանչիլ տուուց, որ դան փեսի հետ դնան աներանց. տերտերին էլ

---

* Սհարի Պարսից բառ է, կը նշանակէ առաւօտեան. այս անուամբ կոչում են այն եղանակը, որ քանի հարսանիքը չի վերջացել, զուռնաչին առաւօտ շուտով վեր է կենում կտուրն ու ածում, իմաց տալով, որ այս տանը հարսանիք է։

ապսպարեց, որ գայ Հարսի տունը. ինքն էլ մի քա-
նի թիքայ մսի լաւ-լաւ տեղերից խորովել տու-
ուց, Բաբկէնի հետ նհար (նախահաշիկ) արին։
Ըստուց յետոյ էլ գվանները ձեռները չի ընկնիլ
որ մի քիչ հաց ուտեն։

Աբրը սկսեց քիչ-քիչ բանձրանալ, որ կան-
չած պատուելի մարդիկն էկան, բարի լիս տուին
ու նստեցին։

— Դէ բերէք՛, ասեց նրանցից աւելի պատ-
ւաւորը, քթէքը (նարսի հալաւը, հանդերձը), տես-
նինք ի՞նչ կայ, օրը ճաշ դառաւ, իրիկնապահ կը
քաշի պսակը։ Քթէքը բերին վեր դրին, երեսի
շորը յետ քաշեցին, մոխիկ տուին, մաշկների մէջն
էլ չամիչ լցնել տուին, մի մին արաղ խմեցին,
Աստծու անուամբ տուին ու վեր կացան գնա խը-
նամնց տունը։

Քոմմէքի առաջին գնում էր գալի ու գուռ-
նէն, յետոյ մի տղայ քթէքը գլխին առաջին խա-
ղացնելով, յետոյ փէսապզերը խէչապզօր ու փե-
սի հետ, իր մաղէն ու գաւը ձեռին՝ բօլմի
միջին էլ խէչապզօր տանիցն էկած երկու հատ
մեզմամուժ կանաչ ու կարմիր նաբատով փաթա-
թած, յետոյ մարդիկ։

Հարսի հօր բակը որ հասան, դրանց առաջն
էկան հարսի հէրն ու մէրը, ղօնաղներին համե-
ցէք արին, տուն տարան, փեսի ու խէչապզօր
թշերն էլ պաչեցին, գանգաչն էլ փեսի ու խէ-
չապզօր բուռը մի մին կտոր շաքար դրուց, որ

քաղցրութիւնով տուն գան, ու տարան իրանց
համար պատրաստած թաղար վրայ կաննայրին։

Փեսի բարեկամներին հարսի բարեկամների-
ցը վերև նստայրին, տէրտէրն էլ փեսի կողքին,
քթէքն էլ առաջին։

— Նշան բերէ՛ք, ձէն տուուց տէրտէրը հար-
սի հօրը։

Էս սհաթը ինչ որ սրանք նշան էին տուել,
բերին։

— Բաբկէ՛ն, ասեց տէրտէրը, մոխիկ տուէ՛ք,
ձեր նշանն է՞ս ա, հօ բան չի՞ պակասած՝ եա վո-
խած՝ մի ոսկի մատանիք, մի Բազդատի աղըս, 12 էլ ընկած (կաւիթած) պաճախլու։

— Էդ ա, տէրտէ՛ր ջան, ասեց Բաբկէնը։

— Դէ՛ որ էդպէս է, օրհնեն՛ք. ասեց տէր-
տէրն ու տեղիցը վեր կացաւ, շուրջառը քցեց,
առաջ նշանն օրհնեց, նշանօրհնէքն առաւ խա-
չապզօրիցը, յետոյ քթէքն օրհնեց, պսակադրանն
առաւ Բաբկէնիցը։

Մուխթաւելին (ներկփոխ) էլ իրա լուսագինն
առաւ ու նստեցին։

Տէրտէրը մի մին ձեռն առաւ շորերը, խալ-
խին չհանց տուուց։

Երեսին դրած էր խալաթները։ Օրհնեալ լի-
նի՛, ասեց Բաբկէնը, իրա խնամու համար բերել
ա մի մահուտ չուխացու, մօրն էլ մի գանաւուզ
վինթանացու։ Մաշկների մէնի միջի չամիչն էլ

դարդակեց իրա ջէքը, մինն էլ թողուց, որ լցնեն հարսի ջէքն ու ասեց, որ տանեն չորերը հաքցնեն։

Ընչանք նրանց չոր հաքցնելը մի քանի աղջիկ խաղացրին ու փեսի համար խալաթ բերին։

Մի տեփրի մէջի դրած էր երեք ջուխտ նաշխատն դիւլբայ՝ փեսին, խաչապօրն ու փեսապօրը, երկու կարմիր ֆաս, փեսին ու խաչապօրը, երկու էլ կիրաքաչի (ներկարիչ) բէմբնեղին քցելու համար, որ պինչները սրբեն։

Ջուռնաչին չոքեց դրանց առաջին, մի մին հաքցրուց դիւլբէքն ու նրանց հներն էլ ինքը վեր կալաւ. յետոյ վեր կացաւ, մին էլ ածեց, որ աներանց կոսպանդն էլ կապեն։

Կնանանց չոր հաքնելն ինչքան թէղ ըլնի, մի սհադ կը քաշի. ո՞ւր մնայ, որ հիմի պատի հարսն են զարդարում։

Ինքան վախտ ինչ էկել էին, երկու էնքան էլ նատեցին խալխը, անճախ էկան խաչապօրը կանչեցին, որ գնայ հարսի գօտիկը կապի։

Գարեգինը հէնց որ գնաց, տեսաւ, որ չալասաւը քցել են գլխին ու կաննացրել։

— Տուէ՛ք, ասեց, գօտիքը կապեմ, օրը ճաշ դառաւ։

Շոր հաքցնողներն ասին՝ կորել ա գօտիկը, առանց փողի գտնուիլ չի։ Նա էլ հանեց մի երկու հատար դեան փող տուուց, առաւ գօտիկը, հարսի մէջքին մի պայիմ կապ տալով ասեց.—մէջին մի տպայ բերես, նշանածիդ հետ ըսէնց պինդ սէր ունենաս։

Հարսն էլ չոքեց իր քաւորի ոտը պաչեց, նա էլ սանամօր գլուխն՝ ու դուս էկաւ։

Գէչտանդէչ չորերը հաքցրին, հարսի հէրն ու մէրն էլ էկան վերջին օրհնանքը տուին ու հարսը դուս բերին, տան մէջ տեղը՝ երթի տակին կաննացրին՝ ալ տուլի լաչակը երեսը քաշած։

Տէրտէրն էկաւ փեսին ու հարսին ձեռ ձեռի տուուց ու շուռլաւը քցեց ուսը, գնաց ժամ։

Տ ա բ ա ն ի ն (տաճկու եղանակը) ածեցին։ Էլ յետ հարսի հօրն ու մօր սիրտը փուլ էկաւ։

Մի դիհը տղատէրերը ծափ են տալի, ուրախանում ու մատները պինչերին տալի, նրանց մասխարայ քցում, թէ տարանք։

Մէկէլ դիհն աղջկայ տէրերն ապլիները աչքերին դրած՝ գադ ու մունքիւն են անում (հեծում են)։ Խեղճ պատի հարսն էլ ի՞նչ անի։ Սիրան երտւում ա։ (Հօ միւս կողմիցն էլ ուրախ ա)։ Թէ լաց կընկի, երեսը պարզ երևում ա, ամօթ ա. թէ լաց չի ընկնի կասեն՝ էս աղջիկը մարդի գնալու համար մեռած ա էլել, վիրի ոտումն ա էլել։ Խեղճը մնացել ա մնըրած՝ գլուխը քաշ ա քցել ու տխրել։

29) Հարսի մէրն ուղեցաւ, որ կաննայնի վեսի քամակին, կ ի ր ա ա ա չ ի ն (երեսարիչ) տայ մի տուտը վեսին՝ մինը հարսին. երկու էլ հարսաղ-պէր հարսի կողքերիցը բռնեն. անց որ իրանց պապերիցը ճնացել էր։

Համա Գարեգինը չի թողուց՝ թէ հարսն ու վեսէն թո՛ղ կուռ կուռի բռնեն, մի հարսնաղ-պէր էլ մէկել կուռը բռնի։

30) Ըսէնց բռնեցին ու կրիմիշ էլան (խաղեցին)։

— Տարա՞նք, ձէն են տալիս տղատէրերն ու աղջկայ տիրոնջը մասխարայ քցում։

Դուռը դուս տանելուս ղուռնաչին տալ դէմ արուց չեմքին ու թողուց ո՛չ, որ դուս քաշեն։ Քանի ուժուամն էլ կար, տ ա ր ա ն ի ն ղէց, որ հօրն ու մօրն աւելի կրակի, ընչանք բերուն իրան մի խալաթ տան։

Ինչքան տղատէրերն ու Գարեգինն ասին ղուռնաչուն, որ անց կենայ, նա աւելի էր պըղ-31) տիներն (այտեր) ուռցնում ու ազալի տեղերիցն ածում։

Վերջը հարսի հէրն աչքերն արտասուքով լիքը՝ մի չուխա գիւղայ բերուց, կոխեց ղուռ-32) նաչու չէքը, որ անց կացաւ ու գայդէն (նռանակը) վոխեց։

Ո՛ր քուչովը պտի անց կենային, պատերի բաշերը լցուած մոխիկ էին տալի հատարաւոր մարդ ու կնիկ։ Աչքը քցողը հարսի երեսին ա

մոխիկ տալի որ տեսնի, թէ հիմի ա սիրո՞ւն, թէ աղջիկ վախտը։

— Ո՞վ չի իմանում, որ հիմի սիրուն ա, ասում էին մին մնաւ, սիրուն չալ օ չ խ ա մ՛ը կապած՝ ու աղջիկ վախտը մին պտի ըլնի՞ որ մի աղլխից սավահի բան չը կար գլխին, ափսոս չի՞ ըսէնց. բերանը բաց, ով գիտայ, ատամներն ե-լևան, պլինչը մենծ ըլնի, թշերը ծաղիկ չըլնի. համա ըսէնց ամէն պակասութիւնն էլ ը ը ն թ-կ ա լ ը ծածկել ա*։

Առաջին խաղալով տարան ընչանք ժամի բակը։ Բաւեղ ղուռնաչին սուս կացաւ։

Ժամահարը ժամի դուռը չինել ա, բայ չի անում, որ իրան բան բախշեն։

Գարեգինը մի քանի սև փող տուուց իրան ու մտան ժամ։

Պռակը որ վերջացաւ, տէրտէրն օրհնեց նը-րանց, որ երկարակեաց, բաղդաւոր ըլնի, վառեց խաչապօր մէրն ու մինը թադաւորին տուուց, մինն էլ խաչապօրը։ Խաչը դրուց թադաւորի դատակածալը, ուղեցաւ. որ հին ատաթնու գեօրայ թադաւորի վրայ չուրչառ էլ քցի, համա Գարեգինը չի թողուց, թէ աւելորդ բաներ են, հիմի վե-րացել են ու էլ առաջին կարգովը դուս է-կան։

---

* Այս դատողութեան վրայ հաստատ մնում են մինչև հիմա և կը մնան շատ տարիներ. ուստի և դժուարաւ կը վերջանայ այս վնասակար սովորութիւնը։

Ժամի դուռը որ անց էին կենում, վեսապետերը Թուրը հանեց, ժամի դրան դլխին բռնեց, նոր պսակուածներն անց կացան. էլ ետ ինքը յառաջ ընկաւ գնաց*։

Զուռնէն ածելին «Արեգական արդարութեան» շարականի եղանակովը ու երխմիչ էլան դպա Թագաւորի առները։

Ուր գռնովը անց էին կենում, անեցիք մի ձուաձեղ ու մի գաւ դինի էին գաս բերում ժամաւորի առաջը, մի մին թիքայ էլ խաչապաղօն ու Թագաւորին ուտացնում։

Խէչապէրն ու Թագաւորը հէնց մօտիկ էին գնում իրարից, որ արանքներովը մարդ չէր անց կենալ, ընչունքի Թէ որ Աստուած մի՛ արասցէ, օքմին անց կենայ՝ քառասունքակօխ կըլնի, էլ երեխայ չի ըլնի։

Թէ որ հարսը Թագաւորի քամակիցը գնալու ըլներ, անց որ հին սովորոյթքն էր, պաի շատ մօտիկ երթային, երկու ձեռին էլ մի կիր աքաչի պաի ըլնէր, որ ոչ ով չի անց կենար։

Թագաւորի առաջին ի՞նչ ուրախութիւններ ասես, որ անում չըլին։

Իրա ազպէրտինքն ու բարեկամի տղէքը ալիրը երեսները քսած՝ դիմները մի մին փօստ ալրցրած՝ ոսկուի ալանդէքը (մանր ոսկոռներ) շարած՝ չինքները քցած՝ ինար կուռ բռնած՝ Թըռչկոտալով խաղում են, խաղ են կանչում, միմեանի (կապիկ) պէս ծլունդ-ծլունդ են ընում, իրար երես պաչում ու հէնց մասխարայ բաներ անում, որ տեսնողը ծիծաղու Թիլանում ա։

Ըսէնց քէֆեր անելով՝ էկան ընչանք Թագաւորի հօր դուռը։

Դրան առաջին առաջ էկան Թագաւորի հէրը, հօրօղպէրը, բարեկամ մարդիկ, Թշերը պաչեցին ու խաղալով քաշեցին բակը։

Տանն ինչքան կաննաւոր տղէք կային, քօմնա դուս էին էկել առաջին Թռչկոտում։

Թագաւորենց կառը ու բաշ, դուռ ու տունը հէնց էին լցուել, որ ոտ փոխելու տեղ չի կար, բակումն էլ խալաթ քցողներն էին հաւաքուած։

Հէնց որ նորապսակներին դռնովը անց կացրին բակը, մուճաղը մի տեղրի միջի մի ձուաձեղ, մի ամանով էլ կրակ վրէն խունկ ածած՝ դուս բերուց, իրեք հետ նորապսակների գլխովը պտտեց ու նէքսէ տարաւ։

Ըսաեղ առաջ էկան ինչքան բարբկամ կնանէք կային, ամէնքից առաջ խաչապաղօր ու Թագաւորի մերը, իրեքի Թուշն էլ պաչեցին, մի մին կատր շաքար դրին բռնները, որ քաղցր տուն դան, իրանց խալաթը քցեցին հարսի գլխին ու գնացին մէջ տեղ ընկան խաղացին, քաւորամօրիցը սաւահի։

* Այսուհետև որքան դռներից անց կենալու լինին, վեսապղերը Թուրը կը բռնի դրան գլխին և Թագաւորին տակովն անց կը կացնեն, ոմ չըլի Թէ, ըստ իւրեանց կարծեաց, դրան միջի չար ոգիները աներևութապար վնասեն Թագաւորին, որի հետ այս երկօրս շատ նախանձ կը լինեն-

Թագաւորի հէրն ու մէրն էլ էս բաղմութեան մէջին կուռ կուռի բռնած՝ խաղացին ու իրար քօլօղեցին (գրկեցին), պաչպչորեցին, խալխի սիրան ուրախացրին։

Ամէն ազգական բարեկամներ էլ խաղում էին, համա թագաւորի պսակուած քիրը գլուխն առել ա կորել, չի երևում։ Խալաթներըը որ քցեցին պրծան, ուղեցան նեքսև տանեն, համա հարսընացուն պինդ բռնեց հարսի կուռն ու ոտը դեմ տուց, չի թողնում յառաջ գնալու։ Ինչքան կուզեն, թո՛ղ աղանչաք անեն, նա թողող չի. նրա մտքինը թագաւորի մենծ քիրն ա. թէ կը գայ կը խաղայ, իրա հարսին կը բարովի, հո նա էլ կը թողայ, թէ չէ՝ չէ։

Նա էլ չատ ոտը կծել ա (դիտմամբ), մտել ա մի սօխակ (անկիւն) ու տաի կացել, կասես իրան ապանել պաեն, գուս չի գալի։

— Կառավարի՛չ, գոռում են դուրս ու ներս խալխը, ապի սիրտը ի՞նչ էք կոտորում։ բերե՛ք թագաւորի քուերը, գա ձեզ ոտով գլխով մի աղջիկ ա տուել, գուք գրա սրտի ուզելիքը կէս ահաթ չէք կատարի՞ը։

Կառավարիչը մարդիկ ա քցել, քունչ ու պուճախ մեն գալի։

Վերջը գոան, չորս մարդով քաշտալով՝ բերին մէյդան։

Խեղճ աղջիկն ի՞նչ անի, տեսաւ որ ծակ աչքն իրան ա մտիկ տալի, կռնները բանձրացրուց, խաղալով գնաց աղպօրը բարովեց, անց կացաւ որ հարսին էլ բարովի, թուշը պաչի, ապրի՛ք ե աչ (կտրիչ) աղէն, գիլի պէս վրայ թռաւ, էդ հարսին էլ ինքը մի լաւ բարովեց։

Թամաշաւորը վերև ներքևիցը ձէն ձէնի տուին,—ապրի՛ս տղա՛յ, հալա՛լ ա հացը, մա՛ չալլա՛յ հարսնացուկ՛ը։

Համա վո՞ւն էկել էր հարսնացուօրը տարել թէ որ անպաչիլ թողել էր. թամաշաւորների ձեռիցը բէտաբուռ կըընէր. քօմման ձէն կը տալին, թէ խաբեցին, ամո՞թ հարսնացուօրը։

Հիմի էլ մի ցաւից պրծանք, վինն առաջ եկաւ. վաղինը չըլի, որ ասում ա, «գիլից փախայ, արջի ճանդ ընկայ»։

Զուռնաչին ոտը դեմ ա տուել, ածում ու առաջ չի գնում։ Հարսանքաւէրները ձէն են տալի, թէ գնա՛ համա թամաշաւորն ասում ա. սուտ են ասում, անկաշ մի՛անիլ։ Սա էլ էն քցած խալաթներիցը վինն ուզում ա։ Կառավարիչը բերել ա մի հասարակ ապլուղ, որ կապի բուկը (վիզը), համա նա զուռնի դնչովը հէնց ա վրայ քշում, որ քամակէ քամակ յետ ա դառնում, ըստուր ընդուր դիպչելով։

— Դէ՛, էլ ի՞նչ էք մարդի խաթրը կոտրում, ձէն են տալի ամէն կողմից, մի լաւ խալաթ տուէ՛ք իրան. ձեր տունն Աստուած չինի, նա ձեզ համար մի սիրուն հարսն ա բերել, գուք մի լաւ խալաթ չէք զիջ անում տալը։

Ձայն լ՞նչ. իրանց պապերիցը մնացած ա-
տաքեն ա:

Կառավարիչը բերուց մի լաւ խալաթ վա-
ճառեց դրա բուկը:

Նեքսև քաշեցին թագաւորին ու թագու-
հուն, որ թագալի վրայ կաննեն:

Ըսաեղ էլ մի կրակ ու պատիժ կայ. մի ուղ
տարեկան պատիկ տղայ նստել ա բարձի վրայ,
վեր չի կենում, որ հարսն ու թագաւորը կան-
նեն: Հօ՛ քիչ բան չի, երեխեն նստել ա, որ թա-
գաւորի աչքն առաջին անդամ տղայ տեսնի, իրա
առջևնեկը տղայ ըլնի:

Գարեդին պարտքն էր էս, հանեց մի երկու
սև վոշ դրուց երեխի բուռն ու վեր կացրուց:

Դավի ու դուռնէն կարեցին:

Տերտերը, որ յառաջուց էկել էր նստել
տեղիցը վեր կացաւ, «Թագաւոր գոլովն»
ու «Պահպանիչն» ասեց, Մաշտոցը տուրս թա-
գաւորի խոխոը (գիկ ը), որ բարեկամները դան 37.
համբրեն ու խչհամբուր քցեն, ինքն էլ դրա-
ղին կաննեց ու օրհնեց:

— Օրհնեալ լինի՛ք, ասում ա, լիսափրա
տուէ՛ք ձեր որդու պահն ա, քանի կարաք՝ մի՝
խնայէք, տանտիկին, քեյվանի՛ք, էկէ՛ք համ-
բրեցէ՛ք:

Հէնց որ խչհամբուրը պրծան, թագաւորի
մեծ քիրը, որ ընչանք հիմի գլուխ էր առել
կորել, հիմի մի քանի չահել ազկէ քանց հետ

խոպալով էկաւ հարսի կուռը բռնեց ու տա-
րաւ նրա համար պատրաստի օթախը թախտ 38.
(գահի) վրայ կաննացնելու:

Մի պատի ազկիկ էլ ըսաեղ ա նստել հարսի
բարձի վրայ ու վեր չի կենում: Սա էլ ուզում
ա ասի, թէ ամէնն էլ որ տղայ բերեն, ա՛րաեղ
կերթայ. առաջ տղայ տեսար, լօ՛ղ առջևնեկը
տղայ ըլնի, ինձ էլ ա՛ռ որ ազկիկ էլ ու-
նենաս, ազկիկն էլ աղջկն էլ Աստծու տուած
խիզան են, հինդ տատն էլ իրար բարեբար 39
(հաւասար), համա սրը կտրես, կը յաւի:

Ըսաուր պարտքն էլ հարսնաղպօրն էր, ջի-
բիցը մի քիսայ հանեց, տուրս երեխեն, վեր
կացրուց ու հարսին կաննացրուց, ինքն էլ կող- 40
քին նստեց ղայիմ (պինդ):

Էրնէ՞կ նրան, որ հարսնաղպէր ա ընում:
գլուխը քարը, թէ դուս անելուս անպատիւ ա
ընում; համա էս էրկօրը չան ու դիլի քէֆի մի-
ջի ա ընում: Ընչանք հարսանիքի վերջանալը պտի
աղկեքանց միջին նստած ըլնի, նրանց հետ դրից
տայ, նրանց հետ սեր ու սօհբաթի անի. թէ
կուզ քսան տարեկան ազատ տղայ էլ ըլնի, տը-
ղեքանց մէջը չի դուս դալ. նա պտի հարսի
կողքը կտրած՝ նստած ըլնի:

Մի առած կայ, ասում ա. «մարդ ձմեռը
կատու գառնայ, ամառը չուն»: Ընչանքի կա-
տուն ձմեռը որ տեղ տաք տեղ կայ, քունուս
տակին, տեղաչորի միջին ա քնում; ամառն էլ

չանը որաեղ հով տեղեր կայ՝ ընտեղ։ Հիմի ես ասում եմ, որ մարդ ձմեռը հարսնացպեր ըլնի, ամառը յիքսաեր։

Մեր յարգելոր չխօսքան հարս ու աղջկեքը, թէ ուրիշ վախտ տեսնէին հարսնացպօրը, չուաքից էլ կը կորչէին. հիմի ի՛նչ հանաքներ, մասխարութիւններ, զրկոցներ ասես, որ իրար հետ անում են նրա կշտին ու ամանչում չեն։

Ախ, ի՞նչ կըլեր, որ Սօան էս օր հարսնացպերը ըլնէր. քանց թէ փեսացպեր. նրա ազիզ սիրեկան Վարդիթերն էլ էս աղջկերանց միչին էր։

Հարսն, երբ որ թախտի վրայ կաննացրին, նստեց ոչ, ընչանք կէսուրը, քաւորմէրն ու մեկել բարեկամներն կնանիքը գան ո՛չ, հրաւիրան ման նստացնեն։

Իրանք իրանց տատաթը (ծհսը) դիտեն, էկան կաննեցին։

Յառաջ քաւորմէրը դնաց հարսի բուռը փաթայ դրուց ու ասեց, որ նստի։

Յետոյ կէսուրն էկաւ, կաննեց.—որդի՛ Յան, ասեց, տունս քունն ա, տեզս քունն ա, քունչ ու պուչախս քունն ա, դու լիմի ես, ես էլ քունն եմ, ըստուց յետոյ ամանչիլ մի՛, նստի՛։ Ասեց ու մի չուխտ երծաթիե քօրած դրուց բուռը, թշերը պաչեց, յետ գառաւ։

Մեկել կնանիքն էլ էկան, թշերը պաչեցին մի մին ղուրբաղի (ապարանջան), ես փող, ես մի

քանի մարչան բուռը դրին ու հրաման տուին որ նստի։ Նա էլ նստեց։

Հարսին որ թադաւորի կողքիցը տարան, հաւեցէքաւորը, որ ընտեղ մոիկ էին տալի, նեքսև էկան ու կառավարչն ամէն մարդի արժանաւորութեան գեօրայ նստացրուց։

Տէրտէրն էլ Կադմոսին (Քարեգնի աղպօրը) առաւ կողքին ու նստեց։

Էս օր կնանոնցն էս տեղ տեղ չէլաւ, ընքանք ուրիշ օթախում նստեցին ընչանք մարդկանց վեր կենալը։

Պսակաճաշին մենակ բարեկամները չին ընկնիլ, գեղումն ինչքան լաւ մարդիկ ընկեր՝ կանչած կընկէին։

Տունը դանիցը հետ իրեք չորս չէրկ նստած էին։ Վիրի դիմը նստած եր Սէփան աղէն։ Նրա խօսքը թրի պես կտրուկ ա, ինքն էլ մարդի սիրտ բաց անող, ուրախութիւն սիրող. ի՞նչ քեֆեր ասես, որ էս պսակաճաշին չի չհանց տայ. որ պսակաճաշին նա չընկնի, մարդի սրտէն տալ չի, որ ընտեղ նստի։

Մէկ էլ տեսանք ձէն տուաւ. Բաբկէն, քու մարիֆաթդ կտրուի՛, էս խալխին նստացրել ես ըստեղ մասլահաթի՞, մեր Ուռուցն աւելի լաւ զրուցի տեղ էր. թեզ արա՛, հաց բե՛ր։ Կառավարի՛չ, քու կառավարութիւնդ գլխովդ դիպչի՛. որ ըսենց յետացնիլ պտիր, ընչի՞ չէիր մեզ ա-

սում, որ յառաջ մեր անկրումը հայց ուտենք, յետոյ գանք։

Մի քանի մարդ էլ քամակիցը վկայութիւն են տալի.—նա իմ Աստուածն, աղէն լաւ ա ասում. կոտորուելինք առաջ։

— Սման աղա՛յ ջան, մի քիչ էլ համբերի՛, էս ահաթը խնամիքը կը գան, վաղուց եմ պրկել դեռ չեն էկել ասում ա կառավարիչը, հա՛յ աղե՛ք, մինդ էլ վազեցե՛ք։

Մին էլ առանինք հարսի հէրն իրա արսի ուղած բարեկամների հետ, տասը տասներկու հոգի նեքսան մտան։

— Օրհնեա՛ ի տէր, ասին, խնամի Բաբկէ՛ն, աչքդ լիս ըլնի՛։

Ներանք էլ—աչքալիսի կենաք, համեցե՛ք վերև, խնամի Արմենա՛կ, մեկել խնամի՛ք, համեցե՛ք տղի կուշաք։

Ներանց համար առաջուց տեղ էր թողած՝ էս կան իրանց տեղը նստեցին։

Դէ՛, քու քրդի կողքդ քեզ խոտո՛վ, ասեց Սէփան աղէն Արմենակին, ըսկի ամանչում ըլըննում է՞լ ես։ Թադաւորը թաղաը նի էլած՝ խաչը դլխին կանգած ա, էս ահաթն էլ քու վեսեդ ա, խանչալիք քարը վեր կընկնէ՞ր (ամօթ է՛ր) որ մի դլուխ էլ ա տայիր. դէ՛ վեր կա՛ց, դլուխ տո՛ւր էս ահաթս, շո՛ւտ։

Խեղճ Արմենակն ամանչելով տեղիցը վեր կացաւ, դլուխ տուուց թագաւորին ու նստեց։

Դէ՛ պրծէ՛ք, հայ քաշեցէ՛ք, ձէն տուուց աղէն։

— Ա՛յ ջանիկ դաբբան ադա՛յ, դու որ չըլ-նիս, մենք կը կոտորուինք, ո՛չ պակսիս մեր դըլխիցը, հատտա ըլիս էս գեղումը, ձէն տուին ամէն դհից խալխը, քու շաւքը մեր վրեցին անպակաս ըլնի։

Կանանաւորները հայցը քաշեցին, ամէն մի բան բերելուս՝ «Աստուած չնհաւոր անի» խօսքն էլ հետը։

Տէրտէրն էլ հացն օրհնեց ու սկսա կացաւ։

Բաօր Սէփան աղէն ըստեղ էր. ո՛րտեղ նա ըլնի, տէրտէրը չի, որ նահն էլ հադդալ (հաւատալ կուրիւն) չունի բերան բանալու։

— Աստուած չնհաւոր անի՛, ձէն տուուց էս պատուելի մարդը, Բաբկէ՛ն, աչքդ լիս՛, մեկել աղեքանդ էլ տեսնի՛ս, բարեկամաց աչքը լիս ըլնի՛. ամէնն էլ հետը։

Ընչանք հիմի խալխի աչքը տէրտէրի վրայ էր, հիմի աղի։

— Հայց կերէ՛ք, ուրախութիւն արէ՛ք, խըմեցէ՛ք, վչացրէ՛ք. Պ. Աբչա՛կ, ասեց մի մարդի, որ հեռու նստած էր, եդ քու կարգի ուրախութիւնը քեզ եմ տալի, թէ լաւ քէֆ անիլ, ինձնից պրծնիլ չես. Պ. Տիդրա՛ն, քու չարքինն էլ քեզ եմ տալի. Պ. Սհա՛կ, դու էլ բաեզ կառավարի՛, մի լաւ, մի լաւ ուրախութիւն անե՛նք, Բաբկէնի գեօղը քանդենք։

— Աչքներիս վրայ, աղա՛յ, ձէն տուին էս մարդիկը, գլխներիս վրայ, քու հրամանը կը կատարենք։ Ցեղոյ ամէնքն իրանց կարդի նստածներին ձէն տուին.—աղէն հրամանք արուց, քէֆ արէ՛ք, տղէ՛ք չան, մի լա՛ւ ուրախութիւն։

Խորովածի վրայ Սէփան աղէն թաան առաւ ձեռն ու ասեց.—օրհնեա՛ իտէր, էս մի թասը խմենք թագայ խնամնոց կենացը, նրանց սիրան էլ էս մի թասով չահենք, խաբեցինք աղչիկը ձեռներիցը խլեցինք. Աբմենա՛կ, քու կենացը՝ քու բոլոր բարեկամներով, Աստուած ձեր բարեկամութիւնը հաստատ պահի, (հօ ես գիտեմ Աչտարակցու բարեկամութիւնն ընչանք էտը (վաղը կտրելը) դուս գալն ա). մեկել խնամի՛ք, ձեր կենացը։

Նրանք էլ շնորհակալութիւն արին։

Աղէն խմեց ու ձէն տուուց.—տօլուբաչի Աբշա՛կ, լսեցիր ինչ որ ասի՞, թէ անկաղնեցիդ բուրդ էր մոել (խպացել ես)։

— Լսեցի աղա՛յ, ասեց, հրամանք արա՛։

— Դէ՛ որ լսեցիր ա, ասեց աղէն, ալլահվէրդի՛ն քեզ մօտ, քու չէրգի (կարգի) մարդկանցն էլ խմացրու։

Նա էլ ասեց.—ա խ շի օլ*, աչքիս վրայ, աղա՛յ, ու յետ դառաւ իրա մարդկերանցն ասեց.

* Ալլահվէրտի և եախշի օլ Պարսից բառեր են, որոց առաջինը կը նշանակէ Աստուած տուեց, երկրորդը լաւ լե՛ր. Թէ ինչ մասին են այս բառերը ի գործ ածում գինի խմելու ժամանակը, որ ընդհանրացած է, չը գիտեմ։

աղէն հրամայել ա, որ թագայ խնամնոց կենացը խմենք։ Ինքն էլ ալլահվէրդի գնաց Տիգրանի մօտ, նա էլ՝ Սահակի, ու ամէն մարդ էլ խմեցին։

— Մի մին թաս էլ տուէ՛ք կառավարողնեբին, թագաւորի հօրը, ասեց աղէն ու ձէն տուուց.—պարան կառավարի՛չ, հանտագլուխ Գուբադէ՛ն, անճախ գլխիդ ես զօռ տուել էլ չես առում, թէ էսքան խաչխը լցրել եմ տուն, էս ճոռ (վաս) գինին կապել փորներդը, դէ՛ քու ցեղիդ նալաթ (անէծք). հասարակութի՛ւն, հաւան է՞ք էս գինուն։

— Չէ՛, աղա՛յ չան, գլխիդ զուրբան, չատ փիս գինի ա։

— Էս սհաթը, աղա՛յ, ձէն տուուց կառավարիչը. դէ՛ պաի դու հրամանք անես, որ մենք էլ գլխներիս վրայ կատարենք. վաւք Աստծու, չերախանէն լիքը գինի ա, մի մարդ ղրկի՛, տա՛մ որ ուզում ես, գայ, որը կը հաւանի, ընդուց բերենք։

— Ես քեզ իմ տեղակ վեքիլ եմ անում, ասեց աղէն, դու՝ քու մարդութիւնդ։

— Գաւերը վեր կալէ՛ք, ձէն տուուց կառավարիչը կանանաւորներին ու գնաց չերախանէն, մի ուրիշ կարասից լցրուց ու ղրկեց։

Իհարկէ էս առաջուանիցը լաւ էր, խմեցին ընչանք վերաւ գալը։

Տօլմի վրայ էլ թագաւորի հօրն ու մօր ու իրանց բարեկամների կենացը խմէցին։

Ծնորհակալութիւն վախան աղայ Սեփանը հրամայեց, որ Բաբկէնն ու իր կնիկը դան մէջ տեղը, շնորհակալութիւն անեն. համա նա ըսաւամ դէմ ընկաւ, թէ իմ՝ կնիկը քաւորներիցը վախտամ ա, կարալ չի գալ:

— Դէ՛ դնա՛ բե՛ր, ախմա՛խ, օխտը քուռաս կամեր ա, հիմի ամաչում ա՞. ժամանակիս պէտի հարսներուն էլ չի ամօթ ճնայել:

Կառավարիչը տասը մարդ պրկեց, համա թագաւորի մէրն ասեց.—իմ գլուխը տուէ՛ք ու քաւորներիս առաջը մի՛ տանէք:

— Գալիս չի, էկան ասին ապին:

— Գնացէ՛ք, ասէ՛ք դայ, ասեց ապէն, թէ չէ տեղիցս վեր կը կենամ, քաշ տալով կը բերեմ:

Գարեգինն ու իր ապզերն էլ հրաման տուին, որ ամանչի ո՛չ, դայ:

Էկաւ խեղճ կնիկը քափ ու քրտինքը կոխած՝ գլուխը քաշ բցած պինչը չամբարի (ֆիրիակ) տակ կոխը խոր կալած՝ խուշուչքն ընչանք աչքերը նեռքև բերած՝ գլուխ տուաց, առաջ քաւորներին՝ յետոյ հասարակութեանն ու գլուխը գօչին կըպցրած՝ կաննեց:

— Թաս տուէ՛ք դրան, ասեց ապէն ու մըտիկ տալով Բաբկէնի կնկանն՝ ասեց.—էս հասարակութիւնը քու մարդի ու քու կենացը խմել ա, դու էլ դիտես, որ պտի շնորհակալութիւն ընել, սրանց ոչ մինը քու օրը պարտական չի, ա՛ռ էդ թասը, շնորհակալութիւն արա՛, մարդիդ հետ էլ պռօշակի արա՛ ու խմի՛. կամ՝ յետ տո՛ւր Գըլուխը պատից կնիկը:

— Է՛, որ ըսէնց ա, գլխո՛ւս կա, որ մարդդ քու տեղակ շնորհակալութիւն անի:

Նա էլի գլխով արաւ:

Բաբկէնը շնորհակալութիւնն արաւ, պրծաու ձեռը բցեց կնկայ չինքը, մի լաւ պաչից:

Կնիկը հէնց որ ուզեցաւ գլուխը կռան տակիսը հանի, քնթկալը պինչը դաս ընկաւ, պինչն երեսայ, խայխը ծիծաղեցին. նա էլ ձեռը բըցեց երեսն ու աչքի չանդռեց, թէ թուր էլանք աչխարհքիս միջին, պինչս երեսայ ու փախաւ:

Տօլմէն որ վեր քաշեցին, էկաւ վրաը:

Էս վախտին ապէն թասը լցրուց, ձեռն առաւ ու ասեց.—Հասարակութի՛ւն, անկալ արէ՛ք, մենք խոհեմնք թագայ ու հին խնամնոց կենացը, հիմի ճնայ մի մենծ բան, որ ամէնից հարկաւորն ա. էս ուրախութիւնը որ կայ ու վայելում ենք, քոմնա թագաւորի, թագուհու, մի քիչ էլ խեչացալօր համար ա. մենք պտի նրանց կենացին էլ անուչ անենք, որ Աստուած թագաւորի ու հարսի կեանքն երկար անի, վաճառները բարի ըլնի, ու յետ գառաւ գալա թագաւորը.—թագաւո՛ր, քու ու թագուհու կենա՞ցը, Աստուած ձեզ մի բարէի տիրացնի՛, հալիւորի՛ք, ծերանա՛ք, թոռան, ծռան տեր ըլնի՛ք, բաղդաւոր ըլնի՛ք: Խաչացալե՛ր, խաչի ղօրութիւնը քու բանին գօրծին

ամպուրիւն տայ, ինչ մուրազ ունիս, ամենա-
կարող Աստուածն ինքը կատարի, բարով էս օրս
քեզ էլ տեսնինք, քու հարսանիքն էլ մի քեֆ
անեմ, յետոյ մեռնիմ: Համա դու մի մզդի մարդ
ես, վախտւմ եմ յետացնես: Արշակ, ալլահվեր-
դի, ասեց ու խմեց:

Ամէն տեղ էլ թասեր են դարտակուտմ թա-
գաւորի, թագուհու և խէշտպօր կենացը:

Վերջին էլ մի մին թաս տուին թագաւորին
ու խէշտպօրը, որ շնորհակալութիւն անեն*:

Գարեգինը, փառք Աստծու, մենք գիտենք,
թէ ինչ քաղաքավարի ա, բերանը բաց արուց
թէ չէ, մի հէնց շնորհակալութիւն արուց իրեքի
տեղակ էլ, որ ամէնքի բերանն էլ բաց մնաց: Ցե-
տոյ ինքն ու թագաւորը գլուխ տուին ու
պռնկներն առան:

Զուռնաչին ծուռանին դրեց, բազմութիւնն
էլ իրեք հետ ձեռները բանձրացնելով՝ ուռա՛յ
ձէն տուուց ու սուս կայաւ:

Ցետոյ աղէն ասեց Արմենակին, որ հրաման
տայ՝ թագաւորը նստի, հաց ուտի:

— Նստի՛ հաց կե՛ր, տեղիցը կանգնեց Արմե-
նակն ու ասեց. որդի՛, էլ ըստուց յետոյ ամանա-
չիլ մի՛:

* Էս շնորհակալութիւնը, թէ որ խաչազգերը կատարեալ է, ին-
չը կանի, թէ չէ, մի մեծ մարդի շինք կըքցեն, որովհետև Թագաւորը
իսալ չի, մինչև որսի չի գնայ:

Թագաւորը նստեց, համա հաց չի կերաւ:

— Դու ուզում ես առանց բերանբացուկի
հա՞յ ուտացնիլ, ասեց աղէն Արմենակին. մեր
գեղի սովորոյթը գիտես ո՞չ:

— Հաց կե՛ր, որդի՛, ասեց Արմենակը փե-
սին ծիծաղալով. Ծակ քարափիցը վերև ինչքան
վռնուտներ (մագաղաս) կան՝ քեզ. Զագի դուղը,
վարդանաբակի խարաբէբը (առերահներըը), չընղնե-
ըը (խառնոյտներըը), մեր մենծ յիքու խաբկենի
(վարուցագաձու) պօպօքին, թէղ հատնուկ հաւ-
ոլի թուփը, լօդ գեղձի ծառը, մեր քուրաու վի-
րի կոդքը, եղի բղուղը, մաթի պուլիկը, մածնի
սերը, սերուսերա ձուերը, աղիղ թիքէքը քոմնա
քեղ (ըստինք ես գիտեմ զանքաչէ էլ թաքուն
երեխանցս բերնիցը կարիլ պտի, քեզ ուտացնի
հօ). հերիք չի՞, որդի՛, տուածս, էլ ինչ ես ու-
զում*, պէ հաց կե՛ր, էլ հօ հոգիս հանելու
չե՞ս:

Թագաւորի յառաջը բերին էն ձուաձեղը, որ
բակը մանեվրա գլխովը պտիտ էին տուել:

Նա էլ մի թիքայ վերը կալաւ, բերանը սըր-
բեց բմի ապլխով, մի երկու թիքայ էլ խէշտա-
պէրին ու փէսապզերը վեր կալան, Ցետոյն էլ
գինի չը խմողներն անուշ արին:

* Էս առածները միայն ծիծաղալու համար է, ապա Թէ ոչ, խոս-
տացած տեղերը բոլորն անպիտան տեղեր են և ոչ մինը իրանը չի:

Ընչաք հայի վեր ունիլը զուռնաչին մի նա մ-
ղայ (եղանակ ի) ածեց, վերջը հայը վեր քաղեցին:

Ծերաեբի խօսալու վախտը հիմի էկաւ. դը-
տակը գլխից վեր կալաւ, հացն օրհնեց, «աչ-
քներդ լոյս եղիցի՞» ասեց, Բաբկէ՛ն, Աբմենա՛կ,
սիրով լինի՛ք Աստուած թագաւորին և թագու-
ւոյն ձեզ բաշխի, ու մալիկները իրա նստած շորի
տակիցը հանեց, հագաւ ու գնաց, նրա քամակից
էլ ագէն ու ամէն հաժեցքաւորները:

Մարդիկը որ վեր կացան՝ կնանիքը խեչապ-
պօր մօրն իրանց գլխաւիրեն առած՝ նստեցին
հացի:

Սրանց հետ թագաւորն ու իր երկու ընկեր-
ներն էլ հաց կերան:

Համա հարսի համար պատկից յետոյ հօրանց
տանիցը թի բ ա յ (բաժին) էկաւ: Էս երկօրը ընտուց
պահ ուտի:

Կնանիքը հացից պրծան ու չահէլներին թողին
պատի հարսի կշտին, ահէլները (մեծերը) գնացին
իրանց տները հօրս (որս) գրկելու:

Կնանանց հացից յետոյ թագաւորն իր մի քա-
նի մանկաբներով գնաց գերեզմանները, իրանց
ննջեցեալ գերեզմանն օրհնել տուաց ու յետ
դառաւ իրանց կառը հորս անելու.

Ընչանք հորսի հաւերը հաւաքուիլն ազատ
տղէքը թագաւորի ապիղ խաթեր համար իրանց
զօչազուլթիւնը չհանց տուին, ուժնելը փորձե-
ցին:

Երկու երկու դուս էին գալի մէյդան ու կոխ
պրծնում (ըմբշամարտում): Յառաջ փահլևանի (ըմ-
բիշ) պէս մի քանի հետ պատ-պատ էին անում;
քարտցը ձիծաղն երեսներին ծլունդ-ծլունդ էին
ընում, մեա գալի, ազատ պէս ձեռներն իրար գօչի
տալի, ետ թէ չէ՝ մին մընի ուզը բռնն անում
ու բաց թողում, իրար ուժ չհանց տալի, յետոյ
քիչ քիչ մեա գալի իրար բռնում, թափ է թափ
տալի, ոնց որ երկու զօչ բերես մէջ տեղ կըռ-
ուացնես, մին մընի լինդ էին քցում ու իրար քաշ-
քշում:

Աղատ աղջկէքանց թամաշէն հօ, որ էս վախ-
տին կիսուկ կիսուկ դուս են գալի հարսի օթա-
խից, քունչ ու պուճախից թաքուն թաքուն մեկ
տալի, մեր զօչաղների էչքը բերում, տաքացնում,
ուժ էր տալի:

Վէր ընկնողն անում խեցատի պէս կոտրու-
ում ա: Թէ մի աղջիկ էլ մաքուճն էն տղին սիրում
ընի, սիրտը կոտրում ա, իր խորհուրդն անկատար
ա թողում: Համա մեր սիրով չահէլներն ե՞րբ կը
թողան իրանց աղիղ հընկերի անունը կոտրիլ. հէնց
որ մինը վեր ա ընկնում, ասում են՝ ոտը սոխ պրծաւ
(ապրտից), ետ թէ չէ մէջքը գետնովը չի դիպաւ
ու էն յաղթուողն սիրտն ուրախացնում:

Ո՞րտեղ էս թաւուր զօչազուլթիւններ ընի
ու մեր աշխարհքի ուշ ու միտքն իր վրայ գար-
ձընող Սօսն իր հունարը չհանց չի տայ, էն էլ իր
աղիղ սիրեկաններն առ աչքին. տե՛ս, թէ ի՞նչ էլաւ:

Սօսի թշնամիքը՝ վարդիթերին ուղղները քշեր ցերեկ աչխատանքի միջի են, բալքի էս թաւսուր ատի անուսը կէս փող չինեն։ Էլ էնքան միաք չեն անում, թէ իրանցից ո՞վ կը հասնի նըրան։ Էն ճկիթով վընդանները (դարբնի սաղ) շուռ տուոդ, օխտը սարեկան գօչի օլօքը երկու մատով փչրող ատին ուզում են, հէնց անեն, որ կոպքը գետնովը սան, բալքի վարդիթերի սերը սառ ցընեն։

Գիտեն, որ Փարպի մի Թուրք կայ փահլևվան, դեռ նրա թիկունքը գետին չի տեսել, գըներացել են մի բօլուկ (բատականին) փող մատրաֆ արել (ծախել), առել էկել, որ նրա հետ մէյդան մտնեն։ Գեղումն ինչքան թաղդաշներ (հատակից) կան, քոմնա հաւաքել են թամաշի համար, որ լաւ խայտառակեն։ Էլ չեն համարձակուում, որ աչկերայ ասեն. Թուրքին մէջ տեղը կանգնացրել են ու ասում։ —տղայ կասենք նրան, որ սրա հետ կոխ պրծնի, ի՞նչ բան ա անդօռների միջին պարծենալն ու էս թաւսւր տեղումը հեռու փախչելը։

Ասում ա. «փա՛րչ, քեզ ասեմ, կուլա՛, դու լսի՛ր»։

Սօսն առանց էն էլ դիտեր, որ դրանց միտքն իրա վրայ ա։ Ցեռնում ա, որ Թուրքը խօրոզացել ա էլել (գոռոզացել), կռնները քցելով՝ դէս ու դէն հպարտ հպարտ մտն ա գալի ու մարդ կանչում, որ հետը կոխ պրծնի. սիրտը վեր չի

կալաւ մեր Սօսի, արինը կռներումը տաքացաւ, չանը կրակ ընկաւ։ Ցետ մտիկ տուոդ գալա հարսի օթախը, տեսաւ, որ մի թօքուն (խումբ) աղչիկ հաւաքուել են վարդիթերի գլխին, մատով մին Սօսին՝ իրան չհանց տալի, մին Թուրքին։

— Վ՛այ գլխիս, ասեց. հիմի նրանք ատում կըընին, թէ դու, որ Սօսին գովում էս, բա ընչի՞ չի Թուրքի հետ մէյդան մտնում։ Էլ սրան ի՛նչը բանդ կանի։

— Գարեգի՛ն չան, ասեց, համբերութիւնս հատաւ. էս Թուրքի փքուած մանդալն ինձ ճաքայրուց, վարդիթերս էլ աղչկէքանց միջից աչքով արուց, որ կոխ պրծնեմ։

— Մէյդան բաց արէ՛ք, գոռաց ու վոթորկի նման մէջ տեղ ընկաւ չորահան էլած. երեսը յետ դարձրուց դալա Մ՛ողնի, Սուրբ Գէորգի անուսը տուուց, իրեք հետ խեչահանեց։ Ցետ մտիկ տուուց իր սրաի սին վարդիթերին, տեսաւ, որ երեսը ծիծաղ ա էկել. ինչքան ուժ ուներ, տատն էնքան նրա ծիծաղովն ուժ ու էչխ առաւ։

Դէ՛, մարդ բերէ՛ք, որ դիմանայ։

Թուրքն ընչանք հիմի հէնց էր ման գալի, կասես Շահի ապէն ըըներ. Սօսի էչխալամիչ ընելը որ տեսաւ, չանը դող ընկաւ, սարսափեց, դլուխը պտիտ էկաւ. Թէ ամանչեր ա՛չ, վեր կընկներ, համա ի՞նչ, փող էր առել, հօ կարալ

չէր յետ դառնալ. մին էլ որ մի անուշ տէր էր, պոի ցեխը կոխէ՞ր։

Որեղանց որեղ Աբշաւիրն էս ահաթն էկաւ. նա թուրքին լաւ էր ճանանչում. հէնց որ տեսաւ Սօսի հետ մէյդանումը պոիտ պոիտ ասելիս, ուրախացաւ, թէ հիմի Սօսին կը տայ գետնովը, հօրս բերնիցը սրա գովասանքը կը կըտրուի։

Թուրքը հէնց ուզեցաւ մօտ գալ եա՛ Ալի՛, Մահմատ փէյդամբա՛ր, Հասա՛ն Հիւսէի՛ն ասեց ու վրայ քշեց, մեր կարիճ Սօսը ծունկը տուաց գետինն ու ձեռը քցեց թուրքի ուսը, հէնց չըպրտեց գլխովը, որ երկու գաղ հեռու գետնի հետ հաւասարուեց։

Հէնց ուզեցաւ Սօսը չոքը գետնիցը կտրիլը, թուրքը մին էլ վրայ էկաւ։

Էլ յետ, ապրի՛ իմ ապրէրը, որ թուրքի չինքը կռնատակը չառաւ պրծեց, ճառճառի ձէն հանեց ու թիլացած մնաց Սօսի ձեռին։ Բանձրացրուց դրան մին էլ հէնց քցեց, որ գլուխը մի քանի տեղից պատռեց։

— Ապրի՛ տղէն, գոռացին ամէն դհից ծափ տալով, հալալ ըլնի՛ քու կերածը։

Աղկէքն էլ, որ ընչանք հիմի ծակ ու ծուկից էին մտիկ տալի, հիմի հաւաքուել էին չարդախի տակը, ընտեղից ծափ տուին ու վարդիթերի դօշին, մէնքին կամանց տուին, թէ աչքդ լի՛ս։

Գարեգինն էն ահաթը վազեց, պաչեց իր սիրելի աղպօր ճակատը, որ դուշմանի արտովը չարուց ու էն ահաթը չորերը քցեց ճիտը, որ քրանած ա՝ մրսի ո՛չ։ Համա Սօսին էլ թաւուր բաներն իրենչ կը քրտնացնեն։ Թագաւորն էլ էկաւ պռօշտի արուց ու իր ձեռովը մի թաս գինի թաւազայ արուց։ Դարդիմանդ տղէքն էլ էկան պռօշտի արին ու Գարեգինն աչքալուս խօսացին։ Աբշաւիրն էլ, ղրիթ ա, լաւ պատռեց, հէնց էլաւ, ոնց որ մի քար վեր ուներս արտաքթալը չարդես, համա երեսահանց էկաւ պռօշտի արուց։

Թուրքին բերդնեցիքն ոչով չի մնաց, սըրտների հերսիցը գլխներն առան կորան ու Թուրքին թողին վռուած՝ վա՛յ վա՛յ անելով։

Էլ յետ մեր բարեսիրտ Սօսը գնաց վեր կացուց, Թուրքի գօտիկը յետ արուց, կապեց գըլուխն ու ճամփու քցեց, թէ գնա՛ հիմի քու բախտիներին դո՛։

Կոխ պրծնիկը որ վերջացաւ, եաԼլին սաքքեցին ու ազապ տղէքն իրանց սրտի ուզած մի եաԼլի խաղացին։

Հէնց էն թռչում, որ կատես ոտները գետինը չի առնում։

Ընչանք եալլու պրծնիկն էլ բարեկամների տանիցը մի մին հաւ էկաւ։

Եալլին որ վերջացրին, զուռնաչին էս հաւերը մի մին ձեռն առաւ ու բանձրացնելով կանչեց.

—Թագաւորի մակարնե՛ր։ Քոմմա ձէն տուին.— հրամմէ՛։

—Աստուած ձեզ բարի կամէ՛, ասեց զուռնաչին, չէն կենա՛յ խէչապզերը, էս օրէս իրան ըլնի, Աստուած իր կեանքն երկար անի՛, որ բերել ա մեր Թագաւորին մի լաւ հո՛րթ, մի լաւ խալա՛թ, մի լաւ խոնչա՛յ (թէև մի հաւից սավահի ոչինչ չը կայ), տունը չէ՛ն, չէ՛ն կենայ։

Մէկէլ հաւերն էլ ըսկնց անում անում կանչեց, զուռնէն ածեց։

Էկան տան երթկի վրայ թռուրը ղնիցը (պատենից) հանեցին ու ղնի հետ խաչաձև դրին։

Թագաւորն էս թրի վրայ իրեք հետ ծունր դրուց ու թռուրը համբրեց, աղօթք արուց Աստծուն, որ էն խաչի միջնորդութիւնովն իր թուրը կարուկ անի ու վեր կացաւ։

Բաց թուրը վեր կալան երկու մարդ, երթկի վրայ բռնեցին։

Ցառաջ մի մենծ աքլոր Թագաւորը հորս տուուց, աքլորի չլինքը թռցրուց թրի վրայ ու քցեց երթկովը նեքսև, յեսոյ խաչապզերը, յեսոյ Սօսը, համա չէ թէ թրի վրայ, մի մասը բըռնեց ու աքլորի չլինքը մատով թռցրուց, քցեց նեքսև։ Յեսոյ ամէն ազապ էլ իրանց տանիցն էկած հորը տուին ու նեքսև ածեցին, որ ևիեն իրիկունա հորսի միս ուտեն*։

* Էս հորսի սովորութիւնը և մենամարտութիւնը, կարծեմ, մնացած պէտք է լինի մեր նախնի Թագաւորների ժամանակիցը, որ առհասարակ երբեմն երբեմն զուարճութեան համար անում էին։

Հորսից յեսոյ ընչանք մութը գեղինն առնելը տղէքը կաերն ետ լլլի խաղացին, Թագաւորին ուրախացրին։

Հէնց որ մութն ընկաւ, Թագաւորը Թուրը ձեռին իր խէչապզոր ու փեսաղզոր հետ նեքսև էկաւ*, գնաց իր Թախտին կանգնեց, ազատներն էլ գնացին, որ յեսոյ գան քէֆ անեն։

Էս իրիկուն էլ կանչիլ չի հարկաւոր. բաբեկամները՝ ով հորս ա ղրկել իրանք կը գան։

Մէնակ աէրաէրին կանչեցին, որ էկաւ հացն օրհնեց։

Հաւի չորվէն ու հաւերն անուշ արին ու մենծամարդը քաշուեց։

Կնանիքն էլ հայց կերան չուտով, որ Թամաշէն սկսեն։

Քօչին ածելու ձէնը որ լսեցին, գեղումն ինչքան ազապ ազայ կար, լցուեցին նեքսև. տաղա, բաւոց (դարակ), պատրհան չի մնաց տանը, որ չարուեցին. գեանին հօ, ոտ փոխելու տեղ չը կար։

— Ո՛վ աղջիկ ունի խաղացնելու, հունար ունի չհանց տալու, դուս բերի՛ մէյդան, լաւ բաղար քցելու վախան ա, մուշտարին չատացել ա, ձէն տուուց կառավարիչը։

* Պսակի հացից յետոյ, Թուրը փեսաղզերը կը տայ Թագաւորին. այսուհետեւ մինչև Թագը վերցնելը Թագաւորը պէտք է պահէ և զգոյշ կենայ, որ հարսնաղզերը չ'գողանայ և իրան ամաչացնի։

— Ասա՛ մի կենդապարն (պարի անուն է) ածեն. ասեց մի կնիկ, իմ աղջիկը պաի խաղայ։

Կենդապարն ածեցին, աղջիկը գլուխը քաշ քցած՝ մէջ տեղ եկաւ, գլուխ տուուց թագաւորին ու ծանր ու բարակ կռները ժամ տուուց։

Խաղը որ մի քիչ թեթեւացաւ, կանոնաւոր տղէքանցիսը մինը մէջ տեղ մտաւ ու շաբաշ կանչեց։

Խաչաղպէր Գարեգինն առաջ տուուց մի փող։

Կանչողն էլ ձէն տուուց.—էս շաբաշը խեչաղպօրն ա, նրա բարեկամին ուրախանա՞յ, թշնամին կուրանա՞յ, հինգ թուման շաբաշ տուուց (թէև մի սև փող էր), ա՛յ շաբաշ, ա՛յ հաւատաւոր։

Ազապ տղէքանց՝ որը հաւանում էր էն խաղացողին, նրա սիրու շաբաշ էր տալի։ Որ աղջկայ խաղալուս շատ շաբաշ կիատւէր, էն աղջիկը հընկերներուն մէջին պարծենալով ասում էր.—հո՞ղը ձեր գլխին, ես մի հետ կռներս բանձրացընելումը զուռնաչուն տասը շահի խէր եմ տուել։

Սօան երբ որ տեսաւ, որ Վարդիթերի մէրն իր աղջկանը խաղացնելու միտք չունի, կնանիքն էլ երբ որ զօռ են անում, ունքերով իրան ա չհանց տալի, սիրտը փուլ էկաւ ու Գարեգինի անկաղուծին ասեց. մի՞տդ ա էրէկուանը, խի՞ չես ձէն տալի, բերի խաղացնի։

Գարեգինն էն սհաթը վեր թռաւ, գնաց Համասփիւռի կողքին նստեց ու ասեց.—թէ ինձ կը սիրես, քու պատիկ Փափակի արևը կը սիրես, երեխէն ղրկի՛ խաղացրո՛ւ, հիմիկուց խեղճին ճըլըացնիլ մի՛, սրա լաւ օր տեսնելու վախտը հիմի ա, էքուց ղահր ու հոգսերի տակ կը մնի, արևի հասրաթ կը մնայ, էլ կարալ չի օր քաշիլ։

Պառաւը, ղորթ ա, մի հետ պղին էր կանել (հակառակել), մնց որ ասում են, «գոմէշ կը տար, մեղայ Աստծու չէր ասիլ», ես վեր կը կենամ, ասում էր, պառաւ տեղովս կը խաղամ քու խաթեր համար ու սրան չեմ թողալ, համա Գարեգնի խօսքերը հէնց քարոզ չի, որ ում ասի քեար չանի, տեսաւ որ չի ըլնում՝—դէ՛, լա՛ւ, ասեց, քու խաթեր համար թող գնայ, խաղայ։

Վարդիթերը մօր հրամանը որ առաւ, դուս էկաւ, մի լաւ Մ իր գ այի (պարի անուն է) խաղաց։ Քոմմէքի բերանն էլ բաց մնաց։

Խաղը որ թեթեւացաւ, էլ շաբաշ կանչողին մհուլ (ժամանակ) չէին տալի, որ մինը պրծնի՝ նոր մինը։ Իրար վրայ տալիս էին ազապները. Սօսը հօ, թէ չիբումը մի քանի սև փող ունէր, էօր պրծաւ։

Զուռնաչու էլ քէֆն ա էկել սև փողերի ձէնն էլ նրա էշին ա բերել (որովհետև էն շաբաշի փողերն իրանն ա), քանի կարում ա, խաղի եղանակները փոխփոխում ա, որ չէ թէ խաղա-

ցողի՝ նստողների ճռներն էլ ա ընկնում, ուզում ա, վեր կենայ, խաղայ։

Վարդիթերն էլ՝ Աչտարակու միջի վարդը, հէնց ա խաղում, որ կասես ոտը գետինը չի ըլնի առնում. նրա կաքաւի պէս սորոր տալը, բարակ չարմազ կռների քուլայ քուլայ անիլը, չարխի պէս պտիտ գալը, ալ վարդ երեսի սիրունութիւնի հետ միացած՝ մտիկ տուողների սրտի մէջ տեղն ա նեքսև դնում։

Շատ աղկէք խաղալուս ազապ տղէքը տասը մի տեղ, հինգը մի տեղ իրանց Գիւմրու ճամփին, ես թէ չէ յիքանոնցումն արած զօչադութիւնները պատմելիս, չէին էլ ուզում խաղացողի երեսին մտիկ տալ. համա հիմի բակումն էլ ով որ կայինն, լցուեցին տուն. էրթկէցն էլ գլխները կախ քցած մտիկ էին անում։ Էրնէ՞կ էս թաւուր աղկայ մօր աչքի լոյսն։

Սօսը Գարեգնին մի կարմիր խնձոր էր տալու։ Հէնց որ Վարդիթերը խաղալը պրծաւ, Գարեգինը տեղիցը կանգնեց, առաջ գնաց ու տալուց իրան։ Նա էլ, դորթ ա, Գարեգնի ձեռիցն առաւ, համա հոտիցն էլ իմացաւ, թէ ո՞ւմ ձեռիցն ա դուս էկել։

— Էլ կո՞յ, բերի՛ք, ձէն տուուց կառավարիչը, բազարի ապրանք, գլուխ ցխելու մալ, չահէլների կրակուած վախտն ա։

Ինչ լա՛ւ, որ ոչով չի գուս էկաւ, թէ չէ Վարդիթերից յետոյ էն ո՞ր աղկիկը պտի ըլնէր,

որ աղասների մտքիցը քցի նրա խաղալը. ո՛վ դուս դար, անպատիւ կըլնէր։

Խաղալուց յետոյ օյինն սկսուեց։

Դափ ու զուռնի ձէնը կարուեց, տունը բըռնեց մի խոր սատուիթիւն։

— Ձամփայ արէ՛ք. Շահը գալիս ա Օսմանլուի հետ կռուելու, ձէն ա տալի մի չառչի (մունետիկ) ճիպոտը ձեռին, ըստուր ընդուր քչելով, մէյդան անելով։

Ամէն տեղ էլ ճրագները վրնացրել են, մըննացել ա մի մում թագաւորի առաջին, մի երկու էլ ճրագ նուազ լիսով աների վրէն։

— Աթոռ դրէ՛ք, բզաւում են։

Էն սհաթը բերին մի հին, որքը ծակ քաղլակ (ասկառի) դրին տան մէջ տեղը, երթկի տակը։

Մին էլ ի՞նչ տեսնես, մի բօզ իշի վրայ նըստած՝ երևան ալրուա, ոսկոռի ալանգէքը չինքին, մի քուլա բամբակից միրուք չինած, մի ոչխարի հին քուրք թարս չհագին, մի ճղճղատուած վոստ գլխին, մի աքլորի չղայ (պոչ) գտակածալին, երկու մարդ էլ գտակները շուռ տուած, երեսները մուր քսած, մի մին ալթարոց (կրակ խառնելու փայտ) ձեռներին, իշի նոզտէն քաշելով, ծանր ծանր գալիս են։

Ուռած-ուռած՝ էկաւ մեր Շահը. իշից վեր գալուս մի վեր ընկաւ։

— Տննեաս քանդուեց, ձէն տուին փարրաշ-
ները (շաբիր, ծառայ), որ առաջին էին ու վազե-
ցին վեր կացրին, նստացրին աթոռի վրայ։

Խալխը ծիծաղու կտաորուել են։

Մի առաջ մէրուքը սղալեց, հազաց, բօղաղն
խառակեց ու ասեց, թէ Օսմանլուն գալ պտի, նա
մեր հաւատին թշնամի ա, Հայի հաց են ուտում,
Անի վեղամբարին ուշունց են տալի, մեր Հասան-
Հիւսէյինը բանի տեղ չեն դնում, զօնշուն հաւա-
քե՛նք, որ նրանց Օմարի աչքը հանենք։

Էն ահաթը, որը մի թի, որը մի բահակոթ,
որը մի ցախաւել, որը մի խչմար (երկմիւղ փայտ)
վեր կալան, էկան առաջին կաննեցին։ Ձեռ դա-
ռաւ մեր Շահը, որ կռուիլը սարվացնի, մի մաս-
խարայ մարդ քամակիցը գլխին որ բամբաջեց
(զարկեց), աչքերը վոս ընկաւ, քաղլակը տակիցը
դուս թռաւ, միջքի վրայ փռուեց։

Ընչանք վեր կենալն էլ ճրագը բռնեցին մէր-
քի տակը, բամբակը կպաւ, քիչ մնայ՝ բեղերն
էլ հետը խանձի։ Մի տղայ էլ փարչով ջուրը
բերուց, սաքի թէ կրակն անցնում ա, լցրուց
գլխին։

Խեղճ Շահը վեր կացաւ ու փախաւ։

Ըսենց մի քանի օյիններ արին ու ազապ տը-
ղէքը լէլէն ասին ու մի լաւ ե ա լլի խաղացին.
լէլէի հալլին զուռնիցն աւելի ա ճռներ ընկ-
նում, ադաշների քէֆը բերում։

Սօսը որ մի տեղ ընկի, ո՞վ կարայ ե ա լլի-
բա չի ընկիլ. բռնեց ձեի ձեռն ու հալլին տա-
քացրուց։

Էլ տանը մարդ, կնիկ, հարս ու աղջիկ չի
մնաց, որ վեր կացան, ընկան հալլու մէջը։

Մէնակ մի քանի պառաւ կնանիք հաւաք-
ուել էին մի քնջնում ու իրար հետ զրից անում։

Ընչանք լիս մօտանալը խաղացին։ Լիսամօ-
տին աղջկերքը միջից դուս էկան, ազէքը մի լաւ
թռչելու եղանակ ասին.

«Հա թռէ՛ք, թռէ՛ք լիսանայ,
«Ցան տէրը գայ դուս անայ»։

Մի քանի պտիտ էլ թռան, վերջն «Աստ-
ուած չնհաւորն» ասին ու ամէն մարդ գնացին
իրանց տները։

Թագաւորն ու խէչապղերը մի քիչ հաց ու-
տելուց յետոյ թէք ընկան քնեցին։

Համա խեղճ վեսապղօրն էս քշեր քուն չը
կայ։ Հարսնապղերը կը գայ թագաւորի թուրը
գողանալու, պտի մուղայլեթ կենայ, որ չի կարե-
նայ, թագաւորն էլ թէ կարաց, պտի հարսի
չորերը գողանայ։

Ամենքը որ աչքները կպցրին մի քիչ հան-
գըստանալու, թագաւորը գնաց հարսի օթախը,
տեսաւ, որ հարսնապղերն ու հարսը քնած են. ու-
սուլով (զգուշութեամբ) վեր կալաւ հարսի երեսի

տուլին (շղարշը), հարսնադպիր դիւլբէքն ու բերուց։

Հարսնադպէրն աչքերը մի վախտ բայ առուց, որ քուր երեսը բայ, իր էլ դիւլբէքը չը կայ։ Խեղճը գլխին վա՞յ տուուց, որ փեսէն ա տարել, էկաւ որ տանի, համա մեր փեսադպէրը Սօան ընչնց չատերին ա ճամփու քցել՝ սա հօ յետինն էր։ Վեր կայաւ, բռնեց հարսնադպօրը, երկու մարդ զարթնացրուց, վկայ բռնեց, որ առաւօտը գողի դիւանն ընկի ու բայ թողուց։

Լիսը բացուեց ամէնի վրայ էլ, կառավարիչն էկաւ տներըը սրբիլ տուուց, որ էս օր նօղլի (*խաղցեղեկի*) օրն ա, թագաւորը շառ (*դատաստան*) պտի կարի։

Թագաւորը թախտին նստեց, Գարեգինն չինեց վէզիր, Սօսին էլ ֆարրաշ ու հրամայեց, որ Գարեգինը շառ կարի։

Փեսադպէրը մի լախտ ձեռն առաւ, կաննեց. ով որ տուն էր մնում, իրեք հետ գլուխ էր տալ տալի թագաւորին ու բերում, առաջին կանգնացնում ձեռները սրտին։ Ամէն էկող իրա հետ բերում էր մի աղլուխ չիրնի, մի չուշայ էլ առած։ Ֆարրաշն ասում էր.—թագաւորն ապրած կենա՛յ, էս մարդը գող էր, շատ մարդիկ թալանեց, չատերի տունը քանդեց, շատ չարիշ էկանք (*տանջուեցիմ*) չի կարացինք բռնիլ, հիմի ինքն իրան ա էկել, քու դուռն ընկել, քեզ համար էլ փեչքաշ ա բերել, ի՞նչ ես հրամայում։ Նա էլ

ասում էր.—բերնին գիւլլով տուէ՛ք։ Թէ մենծ մարդ էր ընում, մի թաս արաղ լցնում էին բերանը, թէ պատիկ էր ընում՝ մի կտոր տուչուխ կամ մի ալանի էին կոխում բերանը։

Ամէն բարեկամներն էլ մի աղլուխ միրք նօղլ պրկեցին ու իրանք էլ յետնուց էկան։ Հէնց որ քոմնա հաւաքուեցին, թագաւորը նստեց չարեաթի (*դատաստան*), մի մարդ նստացրուց միրզայ (*գրագիր*), մի մոխրատ (*աղր թափելու կուէ առան*) դրուց առաջին թանաքամանի տեղակ, մի ալթարոց ղաւլամի տեղակ, պարանն էլ բերին մէչեթը վեր քցեցին։

Առաջ բերին թագաւորի հօրն ու մօրը։

Ֆարրաշն իրեք հետ գլուխ տալ տուուց ու առաց վէզիրին.—սրանք մեր թագաւորի տան վերակացուն էին. քանդել, փչացրել կերել են ու մեր թագաւորին էլ մոխարայ են քցում։

— Դրանց երկուսին էլ մի տեղ կապեցէ՛ք, ասեց վէզիրը (Գարեգինը), կարպետի միչին կոլոլէ՛ք ու թօլ արէ՛ք։

Էն ոհմակը հրամանը կատարեցին։

Մի քանի մարդի էլ, որին կախ տուին, որին խաչեցին, որին կապեցին, հարսնադպօրն էլ չօքէ չօք բերին ներսուլթիւն խնդրել տուին ու մի մին թաս գինի խմելուց յետոյ՝ տղամարդիվը քաշուեցին։

Օրը որ մի քիչ բանձրացաւ, պրկեցին բա-
ժընքի յետնուցը։ Կանչեցին ինչքան մենծախնա-
նիք կային բաժինք տեսնելու։

Դափ ու ղուռնի ձէնն իմաց արուց բաժնքի
գալը, կնանիքը կարգը կարգին չարուեցին։

Մ'ին էլ տեսանք, նէքսէ մնաւ մի ղուխիկ
շալակին մի տղայ, մի հարսն էլ քամակիցը, մի
բօխնոց չիրնի էլ նօղլը։ Հարսին համեցէք ա-
րին վերի դիսը թագաւորի կշռին բալմայրին,
յետոյ գնացին դափ ու ղուռնով մէկէլ օթախը
պատի հարսին բերին թախտը հանեցին, թագա-
ւորի կողքին կանոացրին։

Բաժինք բերող հարսը ղուխին քաշեց ա-
ռաջն ու բաց արուց, մի մին քաց անելով՝ չո-
րերը տուուց իրանց։

—Էս իրան երկու մինթան է՜ն՝ մինը խաս՝ մի-
նը խամ; էս իր քեաթխէ՜ն, էս արխալո՜ղը,
էս 12 բաշօրթի՜կ, 10 չուխա քիսա՜յ, ղա-
լո՜ւխա և այլն։

Կառավարիչը մի մին ձեռն առաւ ու չէ՜ն
կենա՜յ մեր խնամին ասելով, քամիքին էլ չհանց
տուուց։

Բաժնքից յետոյ հայ քաշեցին, թագաւորն իր
առաջի եղած չէլածը յղնուամ ա էն հարսի (իր ին-
ձին kr) առաջը, թէ կե՜ր. նա էլ իրան ա թաւա-
զայ անում, չի ուտում։ Նա պատի հարսի հետ
հայ ուտի։

Թագաւորաթոլուն (կենաց թասն) էլ խմեցին
ու վեր կացան, մի լաւ եալի ածեցին, խաղա-
ցին, հարսին էլ քցեցին եալուս մէջը խաղացրին
ու Աստուած չնհաւոր անի՜ ասելով՝ ամէն մարդ
դնաց իրանց տունը, աէրտէրն էլ էկաւ թագը
վեր կալաւ ու հարսանիքը պրծաւ։

Լ.Բ.

— Ես ինց որ լսել եմ, դու շատ քեզ ու
գլուխ բաներ ես անում; դու իմացար իմ միա-
քըս, որ չեմ ուզում էս տարի աղջիկս մարդի
տալ, ասում էր հարսանիքից յետոյ Վարդիթերի
հէրն իրա կնկանը. էս ի՞նչ թաւուր պատաւ ես
դու. հարսներդ, ասենք, չահէլ են, նոր ծէսեր
են բանացնում; դու ընչի՞ ես իմ աղջկանը բա-
զար քցում, հարսանքատանը խաղացնում; որ Գա-
բեգինն էլ վեր ա կենում; խնձոր տալի Սօսի
համար. բայըլ ես նրան չեմ տալի, պատ ճամփեն
կապուի խեղճ քօրփի՞ս. ա՜յ կնիկ, հէրիկ չի՞ դու
մեր անուշը խայտառակիլ տաս, աշխարհքով մին
անե՞ս։

— Ա՜յ մարդ, արի՜ մի՜ անիլ, մի՜ ըլիլ դո-
դիպ քարը վեր ածա՜ (հարմոզուիր), Աստծանից վա-
խեցի՜. էն տղեն խեղճ ա, մեր աղջիկն էլ նը-
րանից պակաս չի սիրահարուելը։ Սաքի ի՞նչ պա-
կաս տղայ ա, որ դու նրան հետանում չես։ Փո՞ղ
կաս տղայ ա, որ դու նրան հետանում չես։ Փո՞ղ
Աստծու, պարաք, պակասութիւն չունի, տարին

տան երկու ամիս սարերում, քօչերում գլուխը չոր քարին դրած՝ մի եավուննով ա մեն գալի. Աշտարակցուննն էլ էդ ա, էլ ի՞նչ ես ուզում։ Ուրիշ հունարներն էլ հո, Աստուած չար աչքից վերկի՛, ձէն ասես, քաղաքավարութիւն ասես, զօռ ասես, ունի։ Մէկէլ օրը փահլեվանին հէնց գետնովը տուց, որ գլուխն ուղի տեղ պատուեց։ Մակ բերանը նրա վրայ էր խօսում։ Էս մեր Արշաւիրն էլ որ առաջ գլխներս տարաւ՝ ընչանք տաքացրուց, հիմի յետ ա կաննել, խալխի միջին գնացել ա պուշտի արել հնաը, ինքն էր էկել նստել արմանալով աստւմ։

— Որ ըսէնց ա, ա՛յ կնիկ, մեղքը քու չինքըն, ասեց Հարութօրը, ըսաուց յետոյ, թէ վոչիմնունեթիւն դուս գայ, ես մեղաւոր չեմ։ Իրիկունը մեր տղէքը տուն կը գան, նրանց հետ էլ մասլահաթ անենք, ես գիտեմ, էքուց էլօր էլ Հորթաթաղոն ա, Գարեգինն էլ կը գայ, բերենք խօսք տանք, նշան դնենք, Ութօրէքից (յետ Ծննդեան) յետոյ էլ պսակեն, առնեն էրթան, Աստուած իրանց հետ։ Ջա՛նմ; ես վայխ չեմ գառնալ. դու տեսնում ես գեղումն քանի՞ մարդի ենք ճամիու քցել, չենք տուել. հարուստները տեղիցը վեր կենողը տասը հետ անըսայ մարդ ղրկեցին, մօտչի թողինք, գնացին իրանց համար պսակուեցին. մնացել են մի քանի չահել չուհուլներ, որ աստւմ են, պսակուիլ չենք, ընչանք վարդիթերին առնինք ա՛չ. հալբաթ նրանց մինը պատ առնի, հո

կարալ չենք տասը կտոր անիլ. հէնց էրէկ էլ Գարեգինն ինձ պատահեց՝ ասի, թէ մի քանի օր համբերի, տեսնենք Աստուած ի՞նչ կը յայտի։

Հէնց էս խօսքին երկու աղէն էլ տուն մտան։

— Բարի օ՛ր, ասին, էլ ի՞նչ մարդ ու կնիկ թաքուն թաքուն խորհուրդներ էք անում։

— Էդ աղջիկն ում որ տալու էք, տուէ՛ք, ասեց մեծ տղէն, թէ չէ գլխներս տարան, քուչումն էլ չենք կարում անց կենալ ամէն գիհից խօլվաթ (առանձին) են կանչում։ Մեր Արշաւիրն էլ Աստուած բալքի մի խելք ու քեամալ տայ, թէ չէ՝ գլխինն իրան օգնիլ չի. հարիր մարդի ծիծ ա տալի. համա ինձ հարցնողին ես ասում եմ, որ էս տարի աղջիկ չունինք մարդի տալու։

— Որդի՛ ջան, ասեց Հեթումը, ընչանք հիմի էլ մենք ըտուր վրէն էինք խօսում. դուք էլ էս տանը, ղորթ ա, տղէք էք, համա աչխատասէր էք. ձեր քուեր համար մի չուխա մաշիկ էլ ա առած կըընէք, ո՞ւր մնաց, որ ինձ էլ դուք էք պահում; ի՞նչ էք ասում, ձեր միտքն ի՞նչ ա. աղջիկ ա՝ պահելը պէտքը չի, ո՞ւմ տանք, որ լաւ ըլի։ Փառք Աստծու, մեր աղջիկը բաղտաւոր ա, տասը տեղից մուշտարի ունի. ո՛րը ձեր սիրտը կուզի՝ ասեցէ՛ք, մենք էլ էն մարդկանցը մի պատասխան տանք։

— Թէ ինձ էք հարցնում, ասեց մենծ աղէն, ղորթ ա, ուրիշ ուզողները հարուստ են, համա Սօսը նրանց պէս հարրին ծարաւ կը տանի ջուրը՝ կը բերի. ոնց որ էլ լսում եմ, մեր աղջիկը բուրթայ են տուել նրան. թէ որ Աբշաւիրն էլ խելօք տղայ ըլնի, մարդին ուշունցնատեղ չենք դառնալ։

— Ապրի՛ս, որդի՛, մեր միտքն էլ հէնց էդ էր, ասեց հէրը։ Աբշաւի՛ր, որդի՛, ղորթ ա, դու սրանից պատիկ ես, համա իմ հասցրած պատուղը դուք էք. ի՞նչ ես ասում։ Թէ պոի դպա Զարմայրի քաւորի տղէն տանես խօսքդ, մոքիցդ հանի, քանի չունէս պռնկիս ա, ես մեր գեղիցը դուս աղջիկ չեմ տալ. ես մեր գեղի նօքարը լաւ աշեմ՝ քանց ուրիշ գեղի աղէն։

— Դէ որ քահէնց ա, պոի էն էլմիամնեցուն չի տանք, տուէ՛ք Սօսին, նրանից լաւ տղայ չի կայ, քարով քցես՝ անկաղը վեր չի անիլ. աղի տուողը պոի ինքը փեսին նօքար ըլնի. Սօսը թէ կուզ հոգին էլ կը քանդի մեզ համար. թէ կուզ ես էքուց Գարեգնին կասեմ, նչան բերեն։

— Չէ՛, որդի՛, ասեց հէրը, ես նրան խօսք եմ տուել, որ Հօրթաթոզիցը յետը գայ ինձ մօտ, կարաւկան չուշաք առնի, էս ա՝ էքուց չի էլօր Հօրթաթոզի բարեկենդանն ա, ինքն իր վախտը գիտի։

Ընենց խորհուրդ արին իրանց միջին, համա Աստուած իր բանը գիտի, մենք յառաջ գնանք։

Հօրթաթոզի պատին Գարեգինն երեան էր գնացել։

Սօսը Փափակիցը լսել էր, ինչ որ տանն նրանց էն օրն անց էր կացել ընդուր համար էլ ամէն օր գնում էր կարմիջի ծէրը, երեանի ճամբին մոիկ տալի, թէ ի՞նչ ելաւ, էս ա Հօրթաթոզի պատը դուս էկաւ։

Հէնց որ Գարեգինն էկաւ, Սօսը հէնց էն իրիկունն իմաց տուաւ։

— Պրծի՛, ասեց, իրիկունս գնա՛, էրկաթը տաք-տաք կը ծեծենք։ Խեղճ աղէն էս կէս քշերին չարդուած վեր կացաւ գնաց, համա քօռ բադը իմ դուշմանին մտահան չանի։

Գարեգինը ներս մտաւ տուն, տեսաւ որ Հեթումն երկար բարակ մեկնուած՝ լսելին քացի ա տալի, հիւանդացել ա. կնիկը ոտի տակին, աղէքն էլ գլխաւիրևը նստած՝ երեսին մոիկ են տալի։

— Բարի րիկո՛ւն, ասեց, էդ ընչի՞ցն ա հիւանդացել, նոր երեանայ էկայ, հէնց որ լսեցի, ասի էրթամ ակը տամ։

Մի քիչ ղրից արուց, սիրտ տուուց ղրանց ու «Աստուած լաւութիւն տայ» ասեց, վեր կացաւ դուս էկաւ։

Սօան էս կէս քշերին վարդիթերևից ղրանը Գարեգնի գալուն զուլ էր դառել, հէնց որ լսեց

հալիւորի հիւանդութիւնը՝ խպռնուեց (տրտմեց), վա՛յ տուուց դլխին իր անբաղդութիւնի համար ու աչքերը պարկ դառած (ուռցած)՝ ընկաւ Գաբրեգնի հետ, գնաց անխօս։

Լ.Գ.

Վարդիթերի հէրն ընչանք նոր տարին մնաց հիւանդ։

Սօսի քարը մի հետ ծոլն էր ընկել, բանը խափանուեց։

Գարեգինը միշտ սիրտ էր տալի նրան, որ համբերի էս ադիլ օրերն էլ անց կացնեն, հալիւորն էլ լաւանայ ու գնան ուղեն։

Էս ումուտոլն օրէցօր հալումաշ ընելով՝ դիմանում էր Սօսը։

Կաղանդի օրն էկաւ. միտք արուց, որ էսօր վարդիթերենց տանիցը Գարեգնի համար չիրինի (խաղցրեղեն) կը գայ, նրա աղպօր խալֆէն ա. վեր կացաւ քշերհանայ գնաց Գարեգնին «տարի ընհաւորէք»։

Հէնց որ իրար տեսան, փաթաթուեցին, պռօշտի արին, ուրախութիւնով տարի անց կացնենք, ասին ու մի մին թիքայ մաղայ դրին բերանները, որ սաղ տարին քաղցրութիւնով անց կենայ։

Էսօր ամէն տան էլ քաղցրեղէն ու աբաղ դրած կըլնի։

Ժամիցը որ դուս կը գան, կերթան իրար տարի չնհաւորելու. իրար տեսնելուս սիրով պռօշտի կանեն, կասեն—«քարո՛վ, ուրախ սրտով՝ ցամաք աչքով մին էլ էսօր հասնե՛նք, չատ տարի անց կացնենք»։

Աչկերտներն ուստեքանցը կերթան տես, մոնթերը՝ խալֆին, ժողովուրդը՝ աղէքանցը։ Մէկ խօսքով ամէն մարդ էլ ըսօր ուրախ կըլնի։

Մէնակ մեր սրտամաշ Սօսն ա տխուր, որ ո՛չ բարեկամի տուն ա՝ երթուս, ո՛չ խնդուս ծիծաղուս. հէնց էն ա՝ ինչ էկաւ Գարեգնին տեսաւ, նրա կշտին նստեց, էլ վեր չի կացաւ։

Գարեգնի մոնթերը մին բօլմա (ախսկ) մազայ, մի ջուխտ գիւլբով, մի չուշայ արաղով էկան տեսութիւն։

Փափակն էլ ամէնից յետոյ ներս մտաւ։

Սօսի աչքը փափակի աղլխի վրէն ա, թէ տեսնինք ի՞նչ պտի ընկել։ Վէր դրուց, բաց ա՝ րուց. չիրինի էր ու երկու ջուխտ լաւ խորասնու գիւլբայ։

— Էս մի ջուխտն, ասեց, մէրս ա ղրկել քեզ համար, մէկն էլ քիրս ղրկեց, որ Սօսին տաս. ոչով ըստում խաբարութիւն չունի, թաքուն ա բերել մէջը դրել։

— Տեսա՞ր, Սօ՛ս, ասեց Գարեգինը, նոր տարին վրայ էկաւ քեզ. փա՞ռք Աստծու, առաւօտնց քշերհանայ փէչքեաշի ռաստ էկար, Աստծով փէչքեաշդ մենծ կըլնի. տե՛ս վարդիթերի

սիրտը, թէ ի՞նչքան ա տաք քու վրայ, էլ ըստուց յետոյ դարդ մի՛ անիլ։

— Ա՜խ, ասեց Սօսը, ես նրա չիւան չանին մաատ՛ղ գնամ, հիմի ես իմ շնորհակալութիւնս նրան ո՞նց յայտնեմ, ի՞նչ կարենամ անիլ, որ սրտիս ուրախութիւնն իմաց անեմ նրան։

— Կա՛ց, ասեց Գարեգինը, տե՛ս թէ դրա տեղակն ի՞նչ դրկեմ։

Բերուց մի մատանիք, յառաջ սարվացրուց Փափակին, որ Վարդիթերին թաքուն չհանց տայ ու մի երկօր իրա մօտ պահի, ձէն հանի թէ դտել ա ու յետոյ բաշխի նրան։

Փափակը դեռ տանը Գարեգնի հետ խօսում էր, որ Սօսի միտքը բան ընկաւ. տեղիցը վեր թռաւ ու դռնի դուս. էլ կաննեց ո՛չ, թէ հարցը-նող ըլէր։

Մի աչքը թերթելումը մին էլ տեսնինք յետ եկաւ ու Փափակին տուուց մի պատիկ փաթթած բան։

— Ձեռ տո՛ւր մատանիքն, ասեց, էս տա՛ր քուերդ, ասա՛, թէ ես քեզ ուրիշ բան չեմ պըր-կում; էս թո՛ղ մնայ քու կշտին ընչանք օրերը թօղ կըընեն (կը գործուեն), ամէն շաբ անց կը կե-նայ, էլ դրան կարօտութիւն չես ունենալ։ Հա-մա, քեզ մատա՛ղ, Փափակ ջա՛ն, թէ քու վար-ժապետիդ դլուխը կը սիրես, իմանալ մի՛ սրա մէջի էլած բանը, թէ չէ ես կը մեռնիմ։

— Շատ լա՛ւ, ասեց Փափակը, իմ վարժա-պետիս արևն ամէն բանիցը թանգ ա ինձ հա-մար, ըտենց հաշար բան ընկի՝ էլ չեմ քաց ա-նիլ։

Գարեգինն էդ կապոցը չէր տեսել չէր էլ ի-մանում, թէ մէջին ի՞նչ կայ. գիտէր, որ Սօսն ի-րանից թագուն բան չունէր, էս մի բանն ի՞նչ պիտ ըլի։ Էլ Փափակի կշտին բերանը ժաժ չի տուուց, մէնակ թամբահ արուց (պատուիրեց), որ տեսնի ո՛չ, թէ ի՞նչ-ա։

Հէնց որ Փափակը գնաց, օթախումն էլ մարդ չմնաց, նոր հարցրուց բանը։

— Գարեգի՛ն ջան, իմ մեծ ազպէ՛ր, իմ տէր ու սիրեկա՛ն, իմ սրտի սիրեկա՛ն, ես ըն-չանք էսօր իմ սըռը (գաղտնիք) քեզ ասել եմ, էլի կասեմ ընչանք մահս. ամա՞ն, ոտիդ տակին մեռ-նի՛մ (ասելով ընկաւ ոտքերի տակը), թէ մեր աղ-պերութիւնը կը սիրես, էս բանի համար ինձ-նից նեղանալ մի՛. թէ որ ուղում ես, ես հէնց հիմի հոգիս տամ, մուրազախտափան մնամ, սրտիս խորհուրդը քու կշտին կը բանամ. իմ չանը՝ քու սիրտը չի կտրելու համար՝ դժար բան չի մնհին տալը. դու, թէ դրուստն ասես, էս կապոցը տես-նել էլ չպտէիր. ես իմացայ որ ընդով մէնակ չը-նորհակալ կըընիս. հաստատ ումուտ ունիմ, որ դու բանի տեղ չես դնիլ, հլա թէ դրուստն իմանաս՝ կը կռուիս ինձ հետ, թէ ընչի՞ չհանց տուի քեզ,

ժեր ազգերութիւնը վկայ, որ ասածներս քոմմա դրուստ են։

Գարեգինը Սօսի արտասուքն ու պարզասըրտութիւնը որ տեսաւ, մտաք արուց, թէ բալքի սրան երազ ա էկել էդ բանի համար, ես ընչի՞ սրա մահին պատճառ դառնամ։

— Շատ լա՛ւ, ազգե՛ր չան, ասեց, Աստուած՝ ինչ որ արիր՝ բարի վրայ բերի. ես զօռով քեզ հարցնի չեմ, թէ ի՞նչ բան էր։

Ախո՞ս, որ միամիտ Սօսի խօսքերին ուշադրեցիր, ա՛յ խելօք տղայ. թէ էդ թաւուր բաներով մարդ մեռնէր, հիմի աշխարհքումն ոչով չպտի ճնացած ըլներ, դու ըսաեղ սխալուեցիր, որ թողիր էն կապոցը փափակի ձեռովն էրթայ։

Ա՛խ կապոց, քո ղրկողին բան չեմ ասիլ, քու չինոզի ձեռնները կոտրի. քանի՞ մարդի արենաէր ես էլել, ոնց որ հիմի Սօսինը պտի ըլնես։

Սօսն ընչանք Ջրօրհնէքն էլ էնքան դարդ չէր անում, կապոցին արխէյին էր։

Թաթախման օրն առաւօտեննց շատ քչերհանայ էկաւ ժամի ճամբին ղուլ դառաւ. դիտէր, որ էսօր ոնց որ ըլի, Վարդիթերը ժամ կը գայ, իրիկունա պտի հաղորդուի, աղապ աղջիկ ա, մի-աժուռմ (ծոմ) պահած կըլնի։

Ինքն էլ էս սաղ շաբաթը միաժուռմ էր, պտի հաղորդուէր։

Ընչանք կացաւ, որ Վարդիթերը ժամ մտաւ, նոր սրան թիթիփոցը կարեց, ինքն էլ գնաց մի

արխէյին աղօթք արուց, իր մեղքերը լաց էլաւ, ապաշխարանք քաշեց, որ պտի հաղորդուէր։

Էս քչեր Անուշն էլ իր մօր հետ ժամուճն էր։

Վարդիթերի հետ լաւ երկար ղրից տուին։

Վարդիթերը դրան արխէյին քցեց, թէ հօրս հիւանդութիւնը պրծել ա, մի քանի օրից յետոյ վեր կը կենայ, իրանք էլ տանը խորհուրդ են արել, որ բանը գլուխ գայ. ասա՛ Գարեգնին, թո՛ղ մի երկօրից յետոյ իրանց բանը տեսնին։

Ժամը որ դուս էկաւ, տէրտէրներն ընչանք իրիկնապահ խօստովանք արին ու իրիկուայ ժամը տուին, պատարագը կանոնեց։

Էս իրիկուն շատ քիչ մարդ ճնաց, որ հաղորդուի ոչ. մեծամարդիկը քոմմա ծուռ էին պահել. Սօսն ու Վարդիթերն էլ ընկնոց։

Ուրախութիւնով ամենքն էլ սրբութիւնն առան ու գնացին իրանց տները, սուփրէն քաշեցին։

Տիրացուներն երկու երկու էլած՝ չապկները հագնելով, մի մին պատիկ զանգակ ձեռներին, «Այսօր ոտն է» ասելով, ամեն տուն մտնում փող էին առնում, ասելիս էլ զանգակը հետը քաղցը ձէնով ածում։

Տէրտէրներն էլ ընչանք կէս քչեր շուրջառն ուտներին, մի տիրացու, ես մի ժամհար հետները տնօրհնէք էին մտն գալի. չահա էին անում (աշխատել) հարուստ տներն իրիկունս պրծնիլ, որ քեասիբ քիսուբինը (չխաւորների) յետոյ էլ կըլնի։

Որ առնը մնում էին, ասում էին.—«չնհաւո՞ր ծնունդ և յայտնութիւն»։

Նրանք էլ աեղնեբիցը կանում էին—օրհնեա՜լ է ծնունդ և յայտնութիւն ասում։

Տանակինն էլ փոչամանի կճուճը (ալիւրամանը), ախամարն (ախոռ) էլ միչին բերում էր Աւետարանի տակին վեր դնում; որ օրհնուի, խեր ու բարաբաթն անպակաս ըլնի. տերտերի տատած նըշխարքն էլ դնում էր իր չոքատաի մէջը, որ դեւերը հալածուին։

Երեխէքն էլ մի երկու լրեք գօտիկ իրարից կապած՝ ծերին էլ մի տոպրակ կախ արած՝ ամէն երթիկով էլ քաշ էին անում կարնեբիցն ու ասում։

— Ալէլուեա՛, ալէլուեա՛,
Եւ ցնծացէ՛ք, ուրախացէ՛ք,
Մէր Մայրամի պատը բացէ՛ք,
Մայրամ գնաց Լեռն ի ծնունդ,
Ծննդուեցաւ, աղատուեցաւ։

Հրէս էկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին բօղ ձիաւոր,
Ալու ձեռին աւետարան,
Ջախու ձեռին սաղմոսարան.

չինի՛, չինի՛, ձեր տղէքանց անուն ի՞նչ աս։

Նրանք էլ տանիցն ասում էին մի պատի տղի անուն, ասենք թէ Երուանդ։

Երեխէքն էլ յետ ասում էին.

— Երուանդին թաղտը հանենք,
Ալու ձեռը չէքը տանենք.
Դուշմանի աչքը հանի,
Տասը շահին չարը տանի։

Կնանիքը նեբքնիցը տոպրակին մէջը չերկնիք էին ածում, եա թէ չէ մի սև վոշ քցում մէջը։

Էս քշեր էլ չուրը մի տհաճ ոտը կըընի, չի գալ. ա՛չով տեսնել չի, թէ ե՞րբ։

Աբշաւիրն իր մօրիցը լսել էր։

Մի բահ վեր կալաւ, գնաց չորերը հանեց, էն ղահմարովը (ցուրտ) լեզացաւ ու բահը դրուց չրի մէջը, միալար ասեց. «բահս ոսկի՛, բահս ոսկի՛»։

Խեղճ տղեն էն ցրտի մէջին խեբքն էլ քիչ մնաց կորցնի. փողասիրութիւնն էնքան յաղթել էր, որ թէկուզ մեռնէր էլ, հեռանալ չէր, թաքըլի (միայն թի) բահը ոսկի դառնայ։ Լիզու-միզուն կպել էր, չէր իմանում, ի՞նչ ա ասում։

Հէնց էն չրի կաննած վախտը քօռաղաղինայ (տարաբաղդաբար), որ պտի ուզածը կատարուէր, ոսկին մտից ընկել էր, ասում էր. «բահս թի՛, բահս թի՛»։

Լիսը բացուելուն մնատցել էր, որ հանեց, տեսաւ, բահը թի ա դառել. քօռ վոշման գըլը խին տալով՝ յետ դառաւ։

Թէ ընչանք հիմի երկաթ էր, մի բան էլ ա կաժէր, հիմի օխտը չուռուկ չահուց (10 կոպեկ) աւելի ոչ ինչ չի ժիլ. էն էլ թէ որ սաղ ըլէր՝ գլուխ քարը. բահի ծէրը կոտրած էր, թին էլ ընէնց դուս էկաւ, որ ըսկի ո՛չ մի բանի պէտքը չէկաւ*:

Էքսի օրը աղօթարանից (այգ) յառաջ ժամը տուին:

Ամէն մարդ էլ իր օղլուշաղովը գնացին ժամ:

Պատարագը հէնց որ վերջացաւ, առաք վառաք, տէրտէրներն ու տիրացուները զարգարուած, խաչ ու խաչվառով, քշոցները չղկղկացնելով, բուրվառները չղկղկացնելով, կնդրկի հոտն աշխարհքովը մին անելով, մարդիկը յառաջներին գլխաբաց-գլխաբաց գնալով, խաչը տարան Մէլիքի բաղչէն, ընտեղ առուումը չուրը քցելու համար:

Տախտակից յառաջուց չրի վրայ տեղ էր շինած:

Առուի ղրաղի ուռիքանց վրայ ապակ տղէքը թուանքները դարտակ բարութով լիքը կանէնել էին: Մեր Սօան էր դրանց գլխաւորը: Առուի երկու կողմը մարդիկը չարուել էին: Աղջնից կալը կնանոնցով ու հարս ու աղջկէքանցով զարդարուել էր: Առուի վրայ ղօչաղ տէքը լօք արած՝ մի մին փարչ ձեռներին, մոխկ էին անում, մարդ չը կար, որ մի պուճուր փարչ, եա մի չուչխ աման չունենար խաչալուայ վերցնելու համար:

* Էս մի աւանդութիւն է:

Հէնց որ ՄԵՌՈՆԸ (նրա չնորհքը մեզ պահի) չրի մէջն ընկաւ, թուանքները ուռիքանց վրիցը ճռճռոցն ընկաւ:

Ամէն բերնից դուս էկան էս խօսքերը.—ո՛վ Սուրբ Մեռոն, դու մեր Հայոց ազգը հաստատ պահե՛ս, ամէն ցաւի փարատում ըլի՛ս, ամէն ցաւումի հովութիւն տա՛ս:

Կնանիքը հօ՛ աչքներիցը արտասուքը թափում էին ու ջերմեռանդ աղօթք անում, իրանց դարդերին դարման խնդրում:

Ջահել աղջկէքը, ղոլթ ա, մի քիչ թուանքների ճռճռոցիցը վախում էին, համա էլի իրար չհանց էին տալի ծառի վրի աղապներին, թէ ո՞րն ա լաւ թուանքը կրկիտ (ամուր) բռնում:

Վարդիթերն էլ չհանց էր տալի Սօսին, որ մի ձեռով թուանք էր քցում, մի ձեռքով երեսին խէչ հանում:

Առուի վրայ լօք տուղներն էլ մի մին փարչ խաչալուայ էին վեր առնում ու ուրիշների ամանները լցնում, աչքները քսում, մի քիչ խմում ու պահում տուն տանելու համար:

Խաչը չրիցը հանելու վախը, փառաւորի տէրտէրը, հէնց լաւ քարող տուաւ, որ համ խալխին լացացրուց, համ ինքը լաց էլաւ. թէ չէք աւատում, լսեցէ՛ք:

— «Օրհնեալ ժողովո՛ւրդ, դուք գիտէք, որ ամէնքս էլ Հայ Քրիստոնեայ ենք, Լուսաւորչի լոյս հաւատիցն ենք, 12 խաչապաշտի գլուխը մենք

ենք, մեր Մեռոնն ամէն ազգին էլ մենծ ա, ոչ ովի մեռոն ինքն իրան կարալ չի էվիլ. Էջմիածինը մեր սուրբ աթոռն ա, Երուսաղէմի լուսաւորչի թախ սուրբ աչն ընտեղ բազմացրած՝ մեզ բարեխոս ա ընում, որ Աստծու աչքը մեր վրայ քաղցը ըլնի. արևնկոլով Սուրբ Գ է զ ա ր դ ը, կենաց փայտն ընտեղ են, մեր ազգին ամէն նեղութիւնից աղատել են ու ընչանք վերջը պտի ազատեն, աշխարհքիս ամէն որքերի մասունքներին էլ ընտեղ կայ, դինասող Սուրբ Գէորգն էլ ըստեղ, Ծառայ եմ նրա սուրբ զօրութիւնին, մեզ թև ու թիկունք ա, մեր բանին դործին յաջողութիւն ա տալի, մեր յիքանիքը կարկտից, թրթռից, ժանգից պրծացնում ա:

Մենք էլ, օրհնեալ լինի՛ք, սրանց փոխարէնը պտի մեր չերմեռանդութիւնը շհանց տանք, սրբանեռս բաց անենք, ոչինչ չի խնայենք:

Քրիստոս աէրն մեր ինքն էսօր մկրտուում է, Յովհաննէս Մկրտիչն էսօր նրան քաւոր դառաւ, մենք էլ էն օրինակն ենք պահում. պտի որ էս խաչը, որ Քրիստոսի աեղակ դրել ենք ջուրը, վինդ հանէ՛ք, սուրբ եկեղեցուն օգուտ տաք:

— Ինչ ձեր սրտիցը կը բղխի, օրհնեալ լինի՛ք, մի՛ խնայէք. ով որ ձեղանից շատ կը տայ, Թողէ՛ք նա հանի. մեկեյնեղդ էլ, թէ ուզում էք, տուէ՛ք, Թող եկեղեցին շահուի. դէ՛ տեսնեմ, որ դի՛ք, ո՞վ ա գալի Քրիստոսին քաւոր դառնում: Խաչի զօրութիւնը ձեր տան ու տեղի, ձեր ազգ

ու ընտանու, ձեր հանդ ու հանդաստանի վրեն ըլնի՛»:

— (Ամէ՛ն, աէրտէ՛ր չան, ամէ՛ն):

Տէրտէրի քարոզն ամէն մարդի սիրտ էլ դուխ քցեց. համա մեր Չերմեռանդ Սօսն ամէնից առաջ ընկաւ, ծառի վրեն ասեց.—Ես իրեք մանդէթ կը տամ, կը հանեմ, իմ կարողութիւնս էսքան ա տալի, ով որ աւել կը տայ, Համեցէ՛ք:

— Դէ՛ ներքև արի՛, օրհնեալ լինի՛ քո ծնունդը, ասեց մենծ աէրտէրը. հերս դռնաբացիքը դու արիր, հիմի էլ խաչին քաւոր ես դառնում:

Սօսը ներքև էկաւ, թուանք, ասպասը տըւուց աղպօրը, դնաց աէրտէրի կշտին կանգնեց:

— Օրհնեալ լինի՛ Սօսը, բանձր ձէնով ասեց աէրտէրը, Աստուած սրա հաւատն օրհնի՛, շատ ապրի՛, Քրիստոս սրա սրտի խորհուրդը կատարի՛. էս երկու հետ ա սա ըսենց բաներ ա անում, հերս ժամի դուռը բաց արաւ, հիմի խաչն ա Չրիսը հանում: Յովհաննէս Մկրտչին փոխանորդ դառնում, իրեք մանդէթ փող ա տալի Սուրբ Եկեղեցուն օգուտ:

Ամէն տեղից ասին.—Զօրանա՛յ լինքը, խաչն իրան պահի՛, շատ լաւ բան ա անում:

Հարցրէ՛ք վարդիթերիցը, թէ նա ի՞նչ ա անում:

Մենծ հարսի կողքին բրթում ա, թէ տեսա՞ր էսքան խալխի մէջին Աստծու դառն ո՞վ էլաւ, նրանից քանի՞ փողաւէրերը կան, որ մէրի

մինչեւ մոլորուել են, ո՞րը սիրա արուց մի խօս-
քով իրեք մանէթի գլխիցը թռչիլ։

— Ա՛պրի՛ Սօսո, իրան ումբրու արե՛ւ, խաչն
իր կռանը կենա՛յ, ես իմ Աստուածը լաւ տղայ
ա, հասը չը կայ աչխահքի տակին, իրար աստւմ
էին կինանիքը։

Հարսները հօ՛ արմացել են.—քա՛, սրա կո-
խած հողը մեր մարդկերանց գլխի՛ն, աստւմ են
իրար, չահել չահել ի՞նչ բաներ ա անում, որ
մենծանայ, Աստուած իր հօրը բաշխի՛, չար աչ-
քից վերկի՛, մի քիչ որ իր համար հայ ունենայ,
էլ ո՞վ կարայ հետը մէյդան դուս գալ. խիղա՛ն,
Աստուած սրան ամէն չնորհքը տուել ա։

Խաչը աէրտէրը ջրիցը հանեց, աղլուխը քը-
ցեց Սօսի գլխին, տուց խաիան (գիրկ) ու չա-
րական ասելով յետ գառան գալա ժամը։

Ընչանք ժամը մանկիը չահէլները թուանքնե-
րը տրաք-տրաքացրին։

Պարէտը վազեց տուն, կիրակուր պատրաս-
տել տուց, որ աէրտէրները գան հայ ուտեն։
Ա՛պրի՛ Պարէտը, ուրիչ աղպէր ըլնէր, ո՞նց զա-
րուլ կանէր (կը համաձայներ) Սօսի արածներին, հա-
մա նա էնքան լաւ սիրտ ունէր, որ աստւմ էր. —աղ-
պէրս ի՛նչ ուզում ա՝ անի, թաք ըլի իր սրտի ու-
զածը կատարի։

Խաչը տարան ժամը, Սօսին կաննացրին սե-
զանի տակին, խաչը դրկին։

Ջերմեռանդ ժողովուրդն էկան համբրեցին
ու դնացին իրանց տները Աստծուն փառք տա-
լով հաց ուտելու։

Ժամից յետոյ աէրտէրները, Գարեդինը, տի-
րացուները մոլթաւելին (երեցփոխ), մի քանի էլ
պատուաւոր մարդիկ գնացին Սօսենց տանը հաց
ուտելու։

Մեր ղօշաղ Պարէտը կէս սհաթուայ ամէն
բան սեղծել էր։ Օրինաւոր հայ քաչեց. հացից
յետոյ էլ աէրտէրների ժամուցը, մոլթաւելու լուա-
դինն ու մի սև փող էլ ժամհարին տուց ու
օրհնութիւն առնելով ճամփու քցեց։

ԼԴ.

Ջրօրհնէքն էլ անց կացաւ, ութօրէքն էլ պըր-
ծաւ, Սուրբ Սարգսի պատն էլ էկաւ, դեռ Սօսի
քօռ բաղդիցը Հեթումի կողքը գետնիցը վեր չի
կենում։ Հալիւոր մարդ՝ ճոնների էլած ուժն էլ
գնացել ա, ղօրութիւն չի մնացել, տաղ վախան
ի՞նչ էր, թէ կաղ վախան ի՞նչ ըլի, հինգ հետ
կրկին ա արել։

Սօսն էրտւում, կրակուում ա։ Պարապ մարդ՝
թէ մի հետ քրեհ քարվանի ա գնում, մեկել հե-
տըն աղպէրտինքն են գնում։ Շատ վախտ նըս-
տում էր տանը, գլուխը քուրսուն դէմ անում ու

նժժուած (յափշտակուած) ձիուս, ընչանք մէրն ուխ հետ ձէն չէր տալի, վէր չէր կենուս։

Զէ՛, Սուրբ Սարգսի պատն ա. Սօսին ի՛նչ անուս են, ճար ու մունքիւն չի ըլնուս, հայ չի ուտուս։ Աստուծան ասուս էր՝ միաժուս եմ, հէնց որ իրի-կոնը հայի վախան էկաւ՝ թէ ես ծուս պաի կենամ էս շաբաթ։ Կա՛ց ու բարկացի ես ապանչաք արա՛, նա հէնց իր ձին ա քշուս, մի հետ կոդքին ա ընկել։ Ցեսան, որ իլաճները հատաւ (անհնար եղաւ), ասեցին—քու մեղքը քու չինքը, ի՛նչ կանես՝ արա՛։

Երկուշաբթի անց կացաւ. էքսի օրը մօրն ասուս ա, թէ աղանձ արա՛, էս խալխը քեզ համար չեն ոտ ու ձեռն էլել. տեսնուս ես Սուրբ Սարգիսն ա, մեր պապական աստուածը հօ՛ քանդիլ չի՞ պտենք, ուրբաթ իրիկունը փոխին ձ չի պտի շաղախե՞ս, շաբաթ օրը խաչիլ չի պտի անե՞ս։

Խեղճ մէրն իմացաւ տղի միտքը։ Սիպտակահատ ցորենը հընտրեց, աղանձն արուց, երկանքով աղաց։

Ուրբաթ իրիկունը անեցիք փոխնձով թաթախուեցին, Սօսի համար էլ մի աղաբլի (նիւանակ) թխեցին, նա էլ էն կերաւ, ծարաւ ճնաց, որ տեսնի քչերն ո՞վ ա ջուր տալիս։

Սօսը մօրը փոխինձ շաղախել տուուց, դրուց աստղերը, որ քչերը հարահաս (առագահաս) Սուրբ Սարգիսն իր սիպտակ հրեղէն ձիու վրայ նստած՝ իր սուրը Մարտիրոս որդին էլ թաթրքին, թափուղը ձեռին պտեն գալ փոխինձը արորիլ։

Խեղճ տղէն երազում տեսաւ, որ վարդիթերը մի փարչով ջուր ա վեր կալել, բերում իրան խամացնելու։ Համա ի՛նչ կանես, Աբշաւիրն ու մին էլ մի մարդ, որ պատի տակին տափ էր կացել, երևում չէր, էդ աղջկայ ճամիչեն կապում են, չեն թողում, որ անց կենայ. Սօսն էն մարդին, ղօրթ ա, տեսնում չի, համա փէչի ծէրիցը, որ դուրս էր ճնացել, իմանում ա, որ իր փեսէն պտի ըլնի։

Սօսը սաղ քչերը երազումը տեսնում էր վարդիթերին ընչանք լիս մի քիչ հեռու Աբշաւիրի հետ կռիւը տալով, համա ի՞նչ, կարաց ո՛չ խմիլ նրա տուած ջրիցը։

Սօսն առաւօտենց վեր կացաւ դարդերը դուխն առած՝ գնաց փոխնձին մտիկ տուուց, տեսաւ որ Սուրբ Սարգսի ձիու ոտնատեղերն ըրիում են*. փառք տուուց Աստծուն, որ թէ վարդիթերը կարաց ո՛չ ջուրն իրան հասցնիլ, էս մինն էլ ա կատարուեց։

Մի քիչ սիրտը պնդաց՝ մօր էփած խաչլիցը տարաւ կուուրը, դրուց բաշի ծէրին։

* Սուրբ Սարգսի պահոց ուրբաթ երեկոյին անպատճառ փոխինդ կանեն և կը դնեն դուրս աստղերի տակը, յուսալով՝ որ Սուրբ Սարգիսն իր ձիու վրայ նստած՝ կը գայ և կը տրորի այն փոխինդը. իսկ շաբաթ օրը փոխինդով խաշիլ կեփեն անպատճառ, որից Թէ աղջկները, Թէ տղայքը կտուրը կը դնեն: Մեր Սօսի փոխնդի վրայ Պարէտը գիտուՔեամբ Քաքուն ձիու պայտով (նալ) նշան էր արել ծիծաղելու համար:

Մի կեչեղակ էկաւ վեր կալաւ ու փախաւ։

Խեղճ Սօսը մտիկ տուուց, մէջքի իլիկը (ողը) քիչ մնաց կոտրի, ճռնեերը թիլացաւ, հէնց որ տեսաւ թէ կեչեղակը խաչիլը դպա Վարդիթեռընց տունը չի տարաւ։ Թէ դէնը տանէր, Վարդիթերին պաի առնէր։

Տեսաւ Սօսը, որ բանն անյաղող գնաց, էս չաբլիտան ծուռն էլ դուր անց կացաւ, ա՛ խա՛ չելով յետ գառաւ դպա Գարեգինը։

— Ո՛հ, ո՛հ, աստւա՛ծ էր ինքն իրան ճամփին. թէ ինձ զամաթ ըլնէր, էսքան քաշ չէի գալ, ջրի հետ գնալ ղմի (առագի) հետ մնալ. երևում ա, որ Աստուած չի կամեցել։

Հէնց Գարեգինն տեսաւ, բարի լիս չի տուած՝ ասեց. – Ես գլուխս առնում եմ քաշուելմ մի սարում, քօլում ճգնիմ, էլ ուզեցի ո՛չ էս փուչ աշխարհքը, էլ սուրբ չի մնաց, որ մատաղ, խունկ ու մում չի տարայ, էլ պաս, ծուխ, աղըմուխին չի մնաց, որ արի, էլ փալչի, դրբաց, գարի քցող, թիվ բաց անող, նեռ գնող (հնազանդիեններ են) չի մնաց, որ հարցրի, մինն էլ ա օգուտ չէլաւ. էս սաղ չաբաթըն էլ անսուտ ծուխ պահեցի։ Ղորթ ա՛, հաթըն Սուրբ Սարգիսը, մեռնիմ նրա ոտի տակին, փոխնէիս վրայից անց էր կացել, համա ո՛չ քչերս խեղճ Վարդիթերս կարաց չուրն ինձ հասցնիլ երազում՝ Աբշաւրի ու մին էլ էն ո՞վ էր չեմ իմանում; նրա ձեռիցը, ո՛չ էլ կեչեղակը առաւօտս խաչիլը դպա նրանց տարաւ. սատկածն

առաւ կորաւ կարմրաւորի լանչերը, գերեզմանների դիհը, երևում ա որ վերչը փսի պաի ըլնինք։

— Ա՛յ աղպէր, գիժ մի՛ կենալ, ասեց Գարեգինը, ես քեզ քանի՞ հետ եմ ասել, որ էդ պառաւական բաներին աւատալ մի՛. խաչի՞լս որն ա, չուր տա՞լս ինչ բան ա, փոխինձը տրորի՞ն ինչպէս կըլնի. ըտոնք քօմնա տուտ բաներ են, դու մէնակ Աստծու վրայ ումուտդ դի՛ր, բանը գըլուխ կը դայ։

Գարեգինը քանի խրատում ա, նա էքսան (աւելի) ա գժուտում։

Տեսաւ, որ Սօսը կաննած տեղը տմբտմբում ա, ոտ ու ձեռը դող են ընկել. վախեցաւ, որ չըլնի թէ գլխին մի փորձանք գայ, ասեց,—դու դարդ մի՛ անիլ, հալուորը լաւացել ա. ես իրիկունա կէրթամ կարական կանեմ, մարդիկը կամ են տուել, կըլնի որ էքուց նշան կը տանեննք։

Փօսիդըալ (տարաբաղդ) տղա՛յ, չէր իմանում, թէ ի՞նչ ցեխ ա էլել արևին. հէնց գիտի, թէ առաչուան խօսքին են. կասես սատանէն քրնած ա, որ ըտոնք լսէր ո՛չ ու երթար մտներ Սօսի բարեպաշտ (գլխովը գիպչի իր բարեպաշտութիւնը) փեսի տամարը, որ իր քաղցր լիզուովն էնքան էր մեր խակամիտ Սօսի գլուխը կլեկել, ընչանք մոքիցը քցել էր իր ասածները։

Միամիտ Սօսը Գարեգինի խօսքերովը մի քիչ ումուտ առած, ընչանք իրիկնապահ կացաւ Գա-

բեգնի կշռին։ Իրիկնապահին արևելյինն ընկաւ, գնաց իրանց տունը, տեսաւ փեսէն ընտեղ։

— Հը՞, Սօ՛ս ջան, մի ուրախ խաբար ունի՞ս, երեսդ ժմռում ա. մի ասա՛, սրախս տակին տա- յաղ (նեցուկ) ըլնի է՞, կեղծաւորութիւնով, կողքին նստացնելով, ձեռը գլուխը քաշելով, ասեց էն օձի կծածը։

— Գարեգինս իրիկունը գնալ պտի բանը վերջացնել, ուրախ ուրախ ասեց Սօսը. Հերթումը լաւացել ա, բանը գլուխ էկածի պէս ա, կըլնի որ տակի շաբթին հարսանիք կուտենք։

— Աստուած տայ, շատ ուրախ կըլնիմ, քեզ մատա՛ղ, ասեց էն կեղծաւորների ու փողապաշտ- ների թագաւորը, ա՛ռ հարսանիքիդ ի՞նչ ուրա- խութիւններ եմ անում է՛. հենց բաներ անեմ, որ սաղ Աշտարակն իմանայ, թէ քու մօտիկ սըր- տացաւ բարեկամն ես եմ։ (Մէնակ Աշտարակը չի պտի իմանայ, աշխարհքի մէջին դու կերևաս, մի քիչ էլ կա՛յ, ես քեզ կասեմ)։

Զար լիզուն իր չարութիւնները ծածկելու համար մի քիչ սիրի բերի (պետաստաբանութիւն փա- դմշական) արուց, քօմմէքին էլ արևելյին քցեց, վեր կացաւ, գլուխն առաւ, կորաւ։

Ձամփին ոտք կոտրեր, մէջ տեղիցը չիլիկ (երկու կտոր) ըլներ, վեր ընկնէիր, լաւ չէ՞ր, քանց թէ տանիքը մի քիչ հեռանալուց յետոյ, քուչէն ծռուելիր դպա Հերթումի դուռը, ա՛յ արևն- ծարաւ։

Տէ՛ր Աստուած, դու իմ դուշմանի գլուխը չի բերես, ինչ որ Տիրանը (Սօսի փեսեն) միտք ա- նելով, իր մէջին նեղնալով էթում ա։

— Գարեգինը, ես գիտեմ, ասում ա էդ ան- խղճմտանքը, հազար ֆանդ ու ֆել (հնարք) գիտի. թէ որ ես հիմի գնամ ո՛չ աղջկայ հօրն ու մօրն տակը լցնեմ, վա՛յ թէ իրիկունս գնայ բանը գը- լուխ բերի, քանի մանէթս կորչի, տուն անաքանդ ըլիմ։ Էս յետի անդամին էլ վաչէի աղէն ինձ տե- սաւ, ասեց քանի մանէթ-կը տամ, թէ իմ աղջի- կը տուել ես Սօսին. թլխամի կապոցը, ղորթ ա, Սօսին տուի, իմացայ էլ որ խօսքիս աւատա- նել ա, կաղանդի օրը փափակի հետ պրկել ա, համա վա՛յ թէ փափակը բացարած ըլնի, ընդուր չի թլիսմը բռնել. թէ չէ էն Շօրագեալցի տիրա- նու վարսոի արածն էր, նրա գրածը քար կը ճա- քացնէր, նրա փիթիկի զօրութիւնն ամէն տեղ յայտնի ա։ Նա ասում էր, որ սատանի մենճա- ւորին եմ կանչել ու նրա խորհրդովը արել. ա- խար ընչի՞ համար ընչանք էօր նրանց տանիցը մի խաբար չի դուս էկաւ։ Էն կապոցի զօրու- թիւնովը պտի նրանք քօմմէքն էլ խօսքներիցն յետ կանչէին, Գարեգինն խայտառակ անէին ու ասէին, թէ որ մին էլ մեր տունն ես էկել էդ բանի համար, արինդ վեր կածենք. ըսկի ո՛չ էն լսեցի, ո՛չ էն։ Կաղանդիցը դէսը քիչ վախտ չի. շատ կարելի ա Գարեգինը գնացած չըլնի. ես հի- մի էրթամ նրանց հէնց բաներ ասեմ, որ փի-

թէ՝ լի՛ ղուռթիւնը քամմա էս իրիկուն գլուխ գայ. ասում ա՝ «կաչը տէրը զօրաւոր կանի», վիթիկն էլ իմ խաչն ա։ Բալքի հէնց անեմ՝ ծեծիլ տամ, որ մէկնէրը թունդ կռիւ ընկնի, էլ էդ բանի համար աչքս ոչի ա՛չ Գալուգինը, Սօսիկ հեռանայ, յետոյ ես գիտեմ, Սօսն իմ էշը կը դառնայ, որ դհոլը ուզեմ, դէնը կը քշեմ։

Էս չար մտքերն անելով՝ գնայ Հեթումի դուռը քաց արուց, մտաւ նեքսև, տան մէջ տէրը կաննէց։

Հեթումը նաչազատեղից նոր վեր կայած՝ նստել իր տղէքանց հետ ղրից էր տալի։ Տիրանին որ տեսաւ, համեցէ՛ք արուց քուրսու վիրի դինը, հէնց իմացաւ, թէ էկել ա աղչիկն ուզելու, ուրախացաւ, իրանք էլ հէնց էդ էին խօսում, որ կանչեն Գալուգինին, նչան ուզեն։

— Աչա՛յ բալա՛յ, խէր ըլի, ծիծաղալով ասեց հալիւորը, մեր տունը տան ես կոխել, էդ ո՞ր քամին պատեց, դու որտե՞ղ, ըսած որտե՞ղ, դեռ բարեկամութիւնը գլուխ չի էկած՝ ոտնատուտանելդ ենք չնհաւորում։ խէրով բարով ըլնի՞։

— Ի՞նչ խէր ու բարի, ախէ՛ր, մի սառն աչքով, ժանգոտ նօթերը կիտելով, սև երեսը կընճռնոտացնելով, հանեց բերանից էս դժոխքի թագաւորիցը դաս առած, մարդի տուն քանդող, սիրտ ծակող խօսքերը. չեմ իմանում ի՞նչ էք մարդի տուն քանդում, ի՞նչ էք տուել մեզ չէք կարում առնիլ, մեր տուն ընչի՞ էք արին քցում,

մեր տղին ընչի՞ էք գլխահան անում, զօռով ձեր աղջկայ վրայ տաքացնում։ աղջիկ ունիք պատկելու, գնդա լիքը տղայ, ա՛մմ ուղէք՝ նրան տուէ՛ք. էս էլ նայ տասի ա՞, որ տղին խաբէք, ձեր աղջիկը գլուխը կապէք։ Բալքի մենք մեր տղին էս տարի հարսանիք անելու կարողութիւն չունինք, զօռով ընչի՞ էք արեհատը դառնում, անէծքի տակ ընկնում։ Բա նրա մօր արտասուքը չէ՞ք տեսնում։ Մի տղէն պատկեց, գլուխն եղումը թագրուեց, մինն էլ պատկի, մեղրումը կը թաղուի. դուք՝ որ ձեր ցաւը քաշում էք, մի ուրիչի դարդին էլ հարցնէ՞ք։ Քանի էն տղին գժուացրել էք, նրանց տանը հալալ հաց չի կերուել, քամմա աղի արտասուքը ա էլել, քամմա ձեր տան ու տեղի վրայ անէծք ու ուշունց ա էլել։ Դու էլ հալուոր մարդ ես, Հեթում ախէ՛ր, գիտես, որ մենծի անէծքը քար կը ճաքացնի։ Նրա մերը լիսը բացուում ա, աղօթարանի տակին, բարի լսի առաջին չօքում ա, թէ—«Տէր Աստուա՛ծ, Հեթումի տունը սունկ անե՛ս (աւերես), նրա յիշատակը կորե՛ս, հօրն յաւիտենականին իմ տան, տեղի, իմ որդի կերանց մեղքը նրա չընքի՛ն։ Մի տղայ ունիմ, բայրի (վայրենի) են չինել, էլ ոչ տուն ա տեսնում, էլ ոչ քշէր քուն ունի, ոչ ցերեկ զարար։ Ընչի՞ էք ըտէնց անում, Հեթում ախէ՛ր, բա ձեր երեխքը խեղճ չե՞ն, խալխի տղի հետ ի՞նչ բան ունիք։ Հըմ՛, մարդ պրկի՛ տե՛ս, մեր Պարէտը գլխը կապած, օխտը տեղ պօպօճիկ էլած (ուռած)՝

վէր ընկած ա, որ մեռնի, չէ՞ որ դուք պիտի ջու-
ղաբ տաք։ Մեր փչուած Սօսն էսօր էկել ա, թէ
Հեթումին ապսպրել ա, թէ իրիկունս էկէ՛ք խօ-
սացէ՛ք, նչան դնենք, վեր կա՛յ դնա՛։ Նա էլ ա-
սել ա.—ա՛յ աղպէ՛ր, ես էս տարի հարսանիք ա-
նելու կարողութիւն չունիմ, դու դիտես՝ քու մէրը։
Ին պառաւն էլ վեր ա կացել, երթիկի տակին չոքել,
ծծերը դուս քցել, Սօսին էլ անիծել, ձեղ էլ։ Ին
փչանալու պտուղն էլ կաննել ա, թէ քաժան-
ւում եմ։ Ըստով տունն արին ա ընկել, տուել ա
աղպօրը նահատակ արել, հիմի հրէ նաչաղ վեր
ընկած, ո՞վ դիտայ կողքն էլ կոտրուած ըլնի, հը-
րէս դնալ պտեմ անդչու (ոակրադոյժ) հետ։ Պառա-
ւըն երեխին ղրկել էր ինձ հետ, դնացի տեսայ,
գլխս կրակ վառուեց։—Ինչ ղուրբա՛ն, Տիրա՛ն
չան, ասեց ինձ պառաւը, ոտիս տակն ընկնե-
լով, ծնկներիս փաթաթուելով. տունս արէնթրա-
չէն (արեւիւղութիւն) տարաւ, դնա՛ էն սև սրտի
հալիւորին ասա՛, ա՛յ քու տունդ քանդուի՛, դու-
ռըդ չարուխ, ի՛նչ իմ տունը քանդեցիր. էքուց,
որ իմ երեխի գլուխը մի բան դայ՝ արէնտէրը
դու ես. ի՞նչ էք տուել մեզ՝ չէք կարում առնիլ,
քու որդիդդ առաջիդ ճուտի պէս թռպռտորիկ
գան, ննց որ իմ երեխէն էկաւ. ի՞նչ ես ուզում
մեզանից, չեմ ուզում քու աղջիկը, քեզ հետ ազու-
հայ չեմ կարում, ա՛յ, քու հայը կարուի՛. ձե-
ռը վեր կա՛լ իմ օջաղիցը, իմ տանիցը, իմ տե-
ղիցը։ Ա՛յ սև սրտեր, վարդիւոր կիրակի օրը դուք

տեսաք, թէ ես ի՞նչ աչքով էի մոխիկ տալի ձեր
արածներին. ընդուց էլ ա իմացէ՛ք է՞, որ չեմ
ուզում։ Ա՛յ անաքանդ, կա՛ց, տասը հետ մարդ
ղրկեմ, աղանչաք անեմ, ոտդ պաչեմ, նոր տո՛ւր.
թէ չէ իմ տունն ընչի՞ ես քանդում. էս էրկու
տարի ա, համբերութիւնս էլ հատաւ. մի բարի
լիս չի բացուեց, որ իմ տանն ըտուր կռիւը չէ-
լաւ, վերջն էլ էս տեղը հասցրիք»։ Հիմի, Հե-
թո՛ւմ ափէր, ես էլ նրանց թէ մօտիկ, թէ հե-
ռու՝ բարեկամ կը յիշուիմ. ըսօր նրանց հէր չու-
նին, հէրները ես եմ. քեզ աստմ եմ, թէ որ մին
էլ դուք մեր տղին ձեր տունն էք բերել, ես հե-
տը խօսացել որ տեղ օրէնքն ա՝ դանդատ կա-
նեմ. ձեռը վեր կալէ՛ք, հերիք էլաւ, դանակն
օսկուին հասցրիք։

(—Լիզուդ ծործորակովդ դուս գա՛յ)։

Աբի՛, լսի՛ էս խօսքերն ու համբերի, լսողի մա-
զերն ա բիզբիզ ընծում, ո՞ւր մնայ Հեթումենցը։
Ոանդ ուանդ են անուում (զուլաստուկ), իրար երե-
սին են մոխիկ տալի, բերաններըը խօսք չի գալի,
որ ասեմ, սրտերը պատռում ա։ Մարդը մոխիկ
ա տալի կնկայ երեսին ու աստմներըը վրէն
ղրճացնում, աչքերն օլորում. կնիկը քիչ ա մնա-
ցել, թխլանայ վեր ընկնի. Աղչաւիրը մէնակ
սրտով ուրախացել ա ու աղպօր երեսին մոխիկ
տալի։ Խեղճ կրակուած վադիթերս, ջուրը նը-
րան տանի՛, թաղաթից (զօրուրիւն) ընկած՝ հե-
ռու տեղը սնի տակին, փարտի (վարագոյր) քա-

մակին գլուխը անաքարին դրած՝ անիրաւ Տիրանի մի երկու խօսքը լսել ա ու խելքամաղ էլել։ Հարանները փարատի տակիցն արմացել են ու ձեռները բերանները հուպ տալի արմանալով։ Վերջապէս լեզուները փակուել ա, ոչ ոքի բերանը խօսք չի գալի. մենակ էն օձի կծած Տիրանի լիզուն էր, որ սատանի չարխի պէս պտտում էր ու սուր սլաքները ցցում իմ տարաբաղդ Վարդիթերի սրտումը, որ հէնց էն ահաթին տանջալ (իջուածք) վէր բերուց։

(Ա՜խ սրտամաշ խաբար)։

Անխղճմտանք Տիրանը սրտի գառը մազէները որ վէր ածեց, պրծաւ, Հեթումը քիչ ճնաց, որ կրկին անի (հիւանդութիւնը նորոգուի). ձեռները դողդողալով ասեց.

— Տիրա՜ն, ձեր տղին ո՞վ ա տուն բերել, աղջկայ վրայ տաքացրել. վա՜ռ Աստծու, հիւանդ վախտս էլ չէիք թողում, թէ դինչ վէր ընկնիմ։ Գարեգինն ընչանք ըսօր 1000 հետ իմ տունը ոտ կըլի կոխել. մենք օրէց օր քցելով, թալ տալով (խաբեկով)՝ ճամփու ենք արել։ Վարդիւօրին էլ նա ա էլել, որ էս ախմախ կնկանը խաբել ա, էն բանն արել։ Ես ընչանք ըսօր էլ ասել եմ, թէ թո՛ղ խալխն ասեն. Սահակի տղայ Սօսը Հեթումի աղջկայ հետ պռօշի ա արել, թո՛ղ ոչով իմ աղջկին ուղի ո՛չ, ես նրան չեմ տալ։ Էդ ի՞նչ բան ա, որ խօսում ես, թէ որ էն խաբեբայ Գարեգինը ձեզանից սրխէյին (միամիտ) չէր, ընչ՞ էր մեզ դիւապադար անում։ Ես թէ չէ, ո՞վ ա մարդ ղրկել, թէ էկէ՛ք նշան բերէ՛ք. ես դեռ հիւանդաւեղիս վեր չեմ կարում կենալ, նշա՞ն էր պակաս։ Ա՜յ որդի՛, իմ երե՛ս, քո երե՛ս, էդ բանն ասողի երե՛ս. թո՛ղ գան խապաթ անեն (ապացուցեն), աչքս հանեն, թէ չէ էդ ի՞նչ խայտառակչութիւն ա, որ անում են։ Իմ աղջկայ մարդի տալ որ ուղեցել էի, հիմի Աչառաբակու ամէնից հարուստ մարդկերանց տղին տուած կըլէի։ Օրը հինգ վեց հետ դուռս կտրում էին, ես ասում էի, ես տարի մարդի տալս աղջիկ չունիմ. հիմի «պաս ուտեմ, պաս ուտեմ» էն էլ թանով սպաս ուտեմ». տղայ դլխահան անեմ, էն էլ ձեր Սօսի՛ն. նրա ընչին էի կարօտ, տա՞ղը, տեղի՞ն, թէ անումին։ Ղօրթ ա, մի վախտ մենծ օջախ են էլել, համա հիմի նրա պէսները նօքար (ծառայ) են. գու գիտես, որ գեղումը, թէ մի հինգ մարդկան, թէ անունով, թէ հարստութիւնով, մինն ես եմ, իմ պատուին էլ չի՛ ամօթ, որ Սահակի տղին դլխահան անեմ։ Փառ՛ք Աստծու, ընչանք ըսօր սաղ գեղն ա դիտում, թէ ո՞վ ա ո՞ւմ ապանչաք անում։ Էն յետի էրեխին հարցնես, կասի, Գարեգինը քչեր ցերեկ չալիշ ա գալի (տանջվում) Հեթումի աղջկին ուղի Սօսին. թէ էդ բանն իր մօր, ազգօրանից ու բարեկամների կամքովը չէր, Գարեգինն ի՞նչ դլուխը քարոզի էր տալի, իմ տունը գալի։ Շատ լա՛ս, ըսուց յետոյ իմ աչքի վրէն. Աստուած տայ նա իմ

տունը ոտ կոխի՝ տեսնի. դղեմ ու թողամ: Հէնց անեմ, որ չունը ձեռքիցը հաց չի առնի: Դնա՛, որդի՛, մօրն էլ, ապպօրտանցն էլ ասա՛, թէ որ մենք էդ բանումը մեղաւոր ըլինք, ձեր տղին գլխահան արած ըլինք, էս թէ չէ ասած ըլինք, որ իրիկունս էկէ՛ք նշան դրէ՛ք, էնքան անէծքը չի, օխտն էդքան մեր տան ու տեղի վրայ թափի՛, թէ չէ ինչ որ բերանովդից դուս ա էկել ձեր ծոցը թափի: Ձեր թշնամին, ասա՛, ձեր բարեկամ Գարեգինն ա, որ ըստեղ էկել ա մեղ խաբել, ըստեղ ձեր տղին ու ձեզ, ի՛նչ որ ա-նելու էք, նրան արէ՛ք, ի՛նչ ասելու էք, նրան ասեցէ՛ք, կանանչ ու կարմրուում կացէ՛ք, մեզանից հեռու կացէ՛ք. մենք ձեզ հետ բան չունինք:

— Էդ վուչ Գարեգինն մի հարիր հետ ես բիաբուռ արած կըլնիմ, ասեց սատանի սրոց Տիրանը. նա, կըլնի հինգ ամիս, ինձ խօսք ա տըվել, որ ըստուց յեսը խառնուվ ո՛չ. մկար (միթէ) հիմի էլ գալիս ա՞:

— Ի՞նչ ես խօսում, որդի՛, ասեց Հեթումը, Բաբկէնի տղի հարսանիքիցը դէսը քան հետ էկել գնացել ա. իմ հիւանդութիւնն էր, որ ընչանք ըսօր քաշ տուտց. թէ չէ օրը 100 հետ անլուայ էր ներս մտնում:

— Հա՞, որ ըսէնց ա, դուք մեղք չունիք, ասեց անամօթ Տիրանը. դուք ինձ խօսք տուէ՛ք, որ Գարեգինն էլ ձեր տունը չի թողաք, ես կերթամ զանքաչիս կը հասկացնեմ, էն փչին էլ գերդամիչին խայտառակ կանեմ:

— Էլ ըստուց յեան իմ տունը նրա համար պաս էլաւ, ասեց Հեթումը. Էլա ես իմ կաշումը կենդը չեմ, էս մի երկու շաբաթ բարեկենդանի ազիզ օրերն անց կենան, ես էլ մի քիչ լաւանամ, տե՛ս նրա գլուխն ի՞նչ եմ բերում: դուս արեխչին գնա՛ իրանց էս խաբարը տա՛ր:

— Բաս, որ ըսէնց ա, ասեց անիծած Տիրանը, անէծքի համար դարդ մէ՛ք անիլ, չուրն իր ճամբէն կը գտնի. քօմմա էն չար Գարեգինի վրայ կերթայ (թէև իրան գլխին պէտք է թափի). պատաւի մորմոքը նրան մնալ չի, ես հիմի կերթամ նրանց կատաղացնեմ, որ դուք մեղաւոր չէք, մնա՛ք բարին. ասեց ու վեր կացաւ ուրախ-ուրախ դուս կորաւ:

Իրիկուայ ժամը դուս էր էկել, որ Հեթումենց դեռ տանը նստած՝ մեղքն իրար վրայ էին քցում, ազիկանիցն էլ հէչ խաբարութիւն չունէին, որ Գարեգինը նեքան մնաւ:

Դեռ Աստծու բարին չի առած՝—դէ՛ գըլուխդ ա՛ռ կորի իմ տանիցը, խաբեբայ սատանա՛յ, արենկե՛ր, ասեց գաֆիլ տեղը (յանկարծ) Հեթումը, թէ չէ՝ հիմի կասեմ, քեզ կը սպանեմ:

Խեղճ Գարեգինը միամիա՝ հէնց էլաւ, որ տաք չուրը գլխին ածես, լիզուն քիչ մնաց կպչի: Թէ մի քիչ անտաչ, բան չը հասկացող էր էլել

կը մեռնէր սրտի հերսիցը, եա թէ չէ, մի լաւ անպատիւ կանէր Հեթումին ու դուս կը գար։

Համա Գարեգինը, որ ամէն թաւուր էլ ժամ գալ գիտայ, տեղն ու գեօրայ—ի՞նչ կայ, ասեց արմանալով, առաջ մարդի խօսք հասկացրո՛ւ, յետոյ անպատիւ արա՛, էդ ի՞նչ բան ա, ես քեզանից լսէնց խօսքե՞ր՝ առաջինն ա, որ լսում եմ։

— Դուս կորի՛, անաքանդ, ասում եմ քեզ, ծպրտաց գժուած հայհոյորը, ի՞նչ ես դրոշ դաւել աչքիս առաջին կանգնում, խալխի արեւտէր չինելու միտք չունի՞ս հօ. դու որ մեռնիս էլ, իմ տանիցը մի ծեզ (շիտ) չես կարալ դուս տանիլ. դու էլ մեռնի՞ս, քու Սօսն է՛լ մեկել մէքսէլն է՛լ, ըսաուց յետո ումուտդ կոլի՛ իմ տանիցը. ա՛յ տղէ՛ք, վեր կացէ՛ք, ըսաուր դուս քցեցէ՛ք։

Աբշաւիրը հէնց որ հօր բերնիցին խմացաւ դուս քցիլը, աչքերը բօղացրուց (կատաղեց), վեր թաւ սոված դիլի պէս, վրայ ընկաւ, էն էր պատռտորում էդ դաւին, մենծ տղէրը, որ էլի քչից՝ շատից մարդկութեան նշան կար վրէն, վրայ հասաւ, էս կատաղած դիլի կռնիցը բռնեց, Գարեգնին էլ ասեց.—տղէ՛ք, դուս գնա՛, կանենլու վախտը չի, մենք տղիկ չունինք մարդի տալու։

Ողբմելի Գարեգինն անպատիւ էլած՝ դարդերը գլուխը ոսած՝ դուս էկաւ, աղաւուց էդ

դաշանի ձեռիցն ու ճամփին միտք անելով՝ էրթում էր։

— Տէ՛ր Աստուած, ասում էր լինքն իր միչին, ես ի՞նչ բան էր՝ սրանք իմ գլուխը բերին. ես արեւտէր ընչի՞ պէտ ընկիմ, ո՞ւմ եմ մի նեղութիւն տուել չըլի՞ թէ վարդիթերն ինձ համար բան ասած ընկի. նրանք էլ կոպիտ բռաdեաչներ (աճուաշ), քցած ընկին ծեծի տակն ու մահուան դուռը հասցրած. եա թէ չէ էդ էլ դէն կենայ, ես հիմի ի՞նչ չուղաք տամ Սօսին, նա որ լսի, դարդամահ կընկի. ես էլ կարալ չեմ ընդունց ժանգոտ երեան էրթալ, որ սիրտ տամ նրբան։ Էսօր իմ ոտս կտրուեց նրանց տանիցը. էսքան վախտուան քաշած նեղութիւններս ղուր անց կացաւ, համ էն խեղճ տղէն ու աղջիկը մուրազ ախտան էլան, համ ես էս օրն ընկայ, իմ պատիւս էս թաւուր մարդկանց միչին փչացրի։ Լսողն ի՞նչ կասի, կենամ՝ կենամ, վերջը մի եարամաղ (շիտ) մարդից անպատիւ ընկի՞մ։

Էս խօսքերովը Գարեգինը ներս մնաւ իրանց տունը, տեսաւ անհամբեր Սօսը նստած։

Էլ միտք չի արուց մեր խելօք Գարեգինը. Աբշաւիրի գազանութիւնը, Հեթումի կծու խօսքերը, նրանց տան անց կացած բանները, որ միտն էկան, էլ կարաց ոչ համբերիլ ու միտք անիլ թէ էս թաւուր վատ խաբարն ուրիչին ասես բէղաֆիլը դժարը կը գայ, ո՞ւր ճնաց էն սիրտը չուշայ դառած տղին։

— Սօ՛ս, ասեց նա, աղպէ՛ր, էլ ըսուց յե-
ռըն էն աղջկանիցը ձեռներդ լուա՛, էլ ինձանից
ումուսադ կարի՛. ես էլ կարալ չեմ էն թաւուր
բայըի (վայրի) արջերի ու գելերի մէջը ոտ կո-
խիլ, քիչ եր մնացել հում հում ուտեն. Ատուած
իրանց բարի տայ. արի՛ դու ձեռը վեր կա՛լ
դնա՛ փեսիդ անկալ սրա՛, նրա ասած աղջիկն
ա՛ռ, քեզ համար նատի: Նրանք իրանց աղջիկը
սաղ-սաղ դերեզման կը դնեն ու քեզ չեն տալ.
դու դիտես, ես իմը պրծայ, քու մեզքը քու
վրենքը:

Հիմի դու տե՛ս, թէ Սօսը որ հասատատ ու-
մուսը դրել եր կարական խօսք լսելու, էքուց
նշան դրկելու, ի՞նչ էլաւ էս խօսքերը լսելից յե-
ռը: Կուռն ու ճուռը դող ընկաւ, գլուխը պատ
էկաւ, ոտները ձին դառաւ (գուճատուից), սառից
կարուճց, ճնաց: Մի կէս սհաթից յետը յանկարծ
վեր թռաւ գիժ մղոս (երինջ) նման, էլ ոտներն
էլ չի հագաւ, ուզից որ դուս փախչի. իրան կոր-
ցրուց՝ դուռն էլ չի գտաւ. վազելով գնաց հէնց
դիպաւ տան պատին, որ գլխի վրայ կործ էլաւ:

— Ա՛յ հարայ, գոռաց Գարեգինն ու վրայ
ընկաւ վեր կացնելու:

Ընչանք մէկէլների վրայ հասնիլը, Սօսը մին
էլ տեղիցը վեր կացաւ, մի հէնց բռունցքը սը-
ւուց խեղճ Գարեգինին, որ թիլացաւ, գետինը
փռուեց:

— Ա՛յ քեզ, Արշաւի՛ր, ասեց գժուած Սօսը.
իմ Գարեգինին անպատիւ կանե՞ս, ես էլ քեզ ը-
ստենց մէյ էդ կը քցեմ (կանշնչացնեմ): Ատում ա
ու մատն էլ վրէն թափ տալի.—Թէ դու վար-
դիթերին սաղ-սաղ գերեզմանը կը դնես ու ինձ
չես տա՞լ, դէ հիմի դու մեռի՛, ես կառնեմ. ա-
սեց ու դռնիցը, որ բաց էին արել, դուս թռաւ:

Ընչանք խեղճ Գարեգինն խելքի բերիլը, նա
աներևոյթ ելաւ, էլ իմացուց ո՛չ, թէ ո՞ր գը-
նաց: Ձրագվառոցն անց եր կացել:

Աչքերը բաց արուց Գարեգինը, կողքի ցա-
ւին էլ մոռիկ չի տուուց:—Ամա՞ն, ասեց աղպօրը,
կադմո՛ս չա՛ն, տե՛ս էն խեղճը դըվո՞րը գնաց.
նա իրան կորցրուց, հէնց իմացաւ, թէ ես Ար-
շաւիրն եմ:

Խեղճ կադմոն աղպօրն անկալ սրուց, հա-
մա ո՞րտեղ գտնէր, քի՞չ կայ Աչտարակ սար ու
ձոր, թուփ ու քօլ, որտեղ ուզենար՝ կերթար,
ճամփէն բօլ (շատ), էլ ո՞րտեղ կը գտնէին նոր:

Լսողը կասի, թէ Սօսը խելքը կորցրած՝ էս
ձին ու ցուրտ վախտին ո՞ր կերթար:

Երկօր մնն էկան՝ երևաց ո՛չ:

Վերջը, մի քանի Աբարանցիք խաբար բե-
րին, թէ իրանց գեղիցը տեսել են Ալագեազի
դարիգուսոմն իրեք գաղաչափ ձինը ճդելով՝ վի-
րեւ գնալիս:

Երկօրիցը յետո էլ Աչտարակու հորս անող-
նեըն իրանց Խ ու բ ա ն ն ե ր ու մ ն (այգիմ) են

տեսել գլխաբաց, արխալղչանց, բոբիկ, վարդի-
թեր կանչելիս, Աբշաւիրի հետ կռիւը տալիս,
Գարեգինիցը չնորհակալութիւն անելիս ու խոտե-
րի քօքերը ձնի տակիցը հանելիս ու ծամելիս:

Մին էլ լսում էր, թէ ձորումը չորերը
հանել ա ու սառցները չարդում; գլուխը տակը
կոխում, մտնում չուրը, լեղանում; դուս գալի
տկլոր սառցների վրէն մեկնում; սաքի թէ՝ ա-
րեգունի ա անում ու ինքն իրան ասում: — Գա-
րեգին՛ն չա՛ն, էս չոքովը մենք լեղանում ենք՝ հո-
վանում; ըսկի չենք ասում, թէ մեր վարդիթերը
հիմի քրանքի մէջին ղըղղըում ա (թրջուել է):

Մի շաբաթ ա Աշտարակու տղէքը մեն են
գալի Սօսին. ղորթ ա, չատ էլ տեսնում են, հա-
մա ոչով սիրտ չի անում մօտ գնալ, ղամչն կըշ-
տին էր, ամէնքն էլ վախում են:

Գարեգինը հօ՛, բան ու գործը թողած՝ ըն-
չանք իրիկուն էն ցրտումը քարափների գլխիցը
դէս ու դէն ա մտիկ անում: Մի սհաթ չէր կա-
րում ցրտումը կենալ, հիմի էս քանի օր ա, իրի-
կուններն ա տուն գալի մենակ:

Ա՜խ, էս դարդերովը թողանք Գարեգինը
լաց ըլնի, մենք երթանք էն վարդիթերի հալը
(դրութիւնը) հարցնենք:

Էն խեղճը փարատ տակին, ասինք, հէնց որ
տիրաննենգ Տիրանի խօսքերն ու հօր չուղաբները
լսեց, գլուխը մնաքին դէմ արուց ու ա ա մ լ ա յ

(կաթուածի) վէր բերուց. հէնց էդ էլաւ նրա ցա-
ւը, տեղով բարձով վէր ընկաւ:

Մի քանի օր անիրաւ հէրն ու մէրը մտիկ
չէին տալի, հէնց իմանում էին, թէ զաստի (գի-
տութեամբ) ա անում: վերջը՝ որ տեսան, թէ աղ-
ջիկն օրէց օր ձեռից գնում ա, նոր հասկացան.
նոր են սիրտ տալի, թէ լաւացի՛, քեզ կը տանք
Սօսին, Տիրանի խօսքերին աւատալ չենք:

Համա ո՞րտեղ, բանը բանից անց էր կա-
ցել, տամլին էլ ի՞նչը կարայ ճար ըլնի, լողմանը
գայ, կարալ չի վերկել:

Խեղճ երեխէն օրէց օր հալուում էր ու նը-
ւազում. վախտ վախտ էլ դէրն էր տալի, սայիր
քայիր անում (զառանցել) ու իրան իրան Սօսի ու
Գարեգնի հետ խօսում, թէ խի՞ չէք գալի լինէ
տանում, հարսանիքիս չորերը կարել, բաժինքը
չինել, ամէն թաղարէքն էլ տեսել ենք, էկէ՛ք
տարէ՛ք էլի:

Երկու շաբաթ էր վարդիթերը վէր ընկած
էր: Յեսի բարիկենգանի չորեքշաբթի օրն էր,
որ փափակը տուն մտաւ, տեսաւ տանը մարդ
չը կայ, հարևները բանի են, մէրն էլ վարդի-
թերի տեղաշորի կշտին գլուխը վէր էր դրել
նժժուել (ննջել), քունը տարել:

Խեղճ տղի սիրտը պատռուում էր, որ տես-
նում էր իր վարժապետն ընէնց դարդերի մէջի.
խալխի համար բարիկենգան, քէֆ, ուրախու-

թիւն; իր խալֆի համար սուգ ու չիւան, իր քրը-
ըն էլ ընէնց երեսի վրայ քնկած։

— Վարդիթե՛ր չան, ուսուլով (սկզբից) ա-
սեց փափակը, ախար ընչի՞դ ես հիւանդ։

Սաղչիկն աչքերը քցեց աղպօր երեսին ու
լաց էլաւ։

— Փափա՛կ չան, ասեց նա, իմ ցաւերս
թո՛ղ դէն կենայ, մի ասա՛ տեսնիմ Սօսն ի՞նչ
ա անում, ի՞նչ խաբար ունիս, Սօսի քէֆն ի՞նչ-
պէս ա. քա ըսկի ինձ միտը չի բերո՞ւմ։ քա
Գարեգինը գալ չի պտի ինձ տեսութի՞ւն. դը-
րանք խի՞ (ի՞նչու) թէզով ըտէնց քարասկրտ դա-
ռան։

Փափակն ինչքան կարդացող էլ ըլնէր, երե-
խայ էր. ա՛չ տարաւ՝ ա՛չ բերուց, թէ—ո՞ւր ա Սօս.
նա էս էրկու չաբաթ ա գժուած, արխալղչանց
(բաճկոնով), բոբիկ ոտով, գլխաբաց սարերն ա
ընկել, չօլէ չօլ (անապատներում) մնն գալի. նա
քեզանից բէթար (աւելի վատ) ա։ Դու, լաւ ա, տե-
ղիդ տակին քեզ համար դինջ (հանգստ) թէք ըն-
կած ես, նրանից ըսկի ումուտ չը կայ. ասում
են, գիլանոնց ու աղուէսների հետ ա կռիւ տա-
լի։ Էքուց՝ էլօր գէլը կը ճղի, էս ցրտատար կըլ-
նի, կը մեռնի չօլերումը, գիլանոնց փայ կըլնի։
Գարեգինն էլ էդ էրկուսիդ դարդը չանը տուած՝
ա՛չ բերանը լիզու ա գալի որ խօսայ, ա՛չ գեղի
մէջ ա դուս գալի. ընչանք իրիկուն քարափներին
գլխին, բանձր կարնելի ծէրին գժուածի պէս

դէս ու դէն ա մռիկ տալի, թէ ի՞նչ ա, Սօսին
տեսնի։ Խեղճ խալֆէս ձեղանից չաս ա էր-
ւում։

Մէս հալչում ա, լիղուս կապ ա ընկնում,
երբ որ ուզում եմ ասիլ, թէ կրակուած վար-
դիթերն ի՞նչ էլաւ։ Ա՛խ, էլ խօսաց ա՛չ, մի կա-
մաց Աստծուն փառք տուց, մի քիչ վախտ աչ-
քերն երկինքը բանձրացրուց, աղօթք արուց ու
յետ դառաւ աղպօրը.

— Փափա՛կ չան, ասեց, իմ հաւատարիմ,
օրտացաւ աղպե՛ր, իմ աչքի լիս փափա՛կ, գըլ-
խովդ պտիտ դամ, լսի՛ քու անբաղդ քուեր վեր-
չի խօսքերն, ի՞նչ որ ասեմ՝ անկայ արա՛։ Դու
ես էլել իմ մխիթարանքը, ինձ ուրախացնողը, էս
յետի անգամն էլ խօսքիս լսի՛։ Բե՛ր քու դիվիթ-
զալամը (գրիչ-բանաֆառնանը), կշտես նատի՛, ինչ որ
ասեմ, դրի՛։ Խեղճ եմ, աղպե՛ր չան, թո՛ղ իմ
մտքինս հետս չի տանեմ, էդ էլ ա չանիս դարդ
չի մնայ։

Փափակը տեսաւ, որ քիրը շատ ա աղան-
չաք անում, առաւ թուղթն ու գրեց վարդի-
թերի էս խօսքերը։

«Էս երկու տարի ա՝ ես Սօսի սիրովը մաշ-
ւում եմ, նա էլ իմ համար էրուում, խորովում
ա։ Մեր գիրն ըսէնց էր գրուած, որ մենք պտի
մեր սրտի փափագն էս աշխարհքումը չի առ-
նենք։ Հիմի, թէ շար մարդի ձեռով էր, թէ իմ
աղպեր Սրշաւիրի արածն էր՝ էս բանը քանդը-

ւեց. Աստուած էլ կամեցել չէր, որ երկուսս մին ճիշդ յետո էս աշխարհքումս նեղութիւն քաշենք։ Էսօր երկնքի դռները բացուել են, ինձ ու Սօսիս համեցէք են անում։ Մենք էրթում ենք ընտեղ իրար տեսնելու։ (Կատարեա՛լ մարգարէութիւն)»։

— «Թո՛ղ ոչով դարդ չի անի, թէ ինքն էլաւ մեր մահի պատճառը. Աստուածանից խնդրում եմ իմ անարժան բերանով, որ ամէնքի մեղքն էլ ների. ամէնքդ էլ մնաք բարէն»։

— «Իմ երախտաւոր հէ՛ր, մնա՛ս բարէն. ի՛նչ որ քեզ նեղութիւն տուել եմ կամ ես կամ ուրիշներն ինձ համար՝ կը բաշխե՛ս։ Իմ մէ՛ր, իմ աղպէրսի՛նք, ձեր վարդիթերի համար դարդ չի անէք, մի՛ վախէք, ես մուրազախափան (յուսարեկ) չեմ ըլում։ Թէ մէնակ ես գնայի, էն վախը դարդ անէիք, համա Աստուած մեզ ողորմել ա, ինձ էլ՝ Սօսիս էլ իրար հետ ա տանում, ես ուրախ-ուրախ գնում եմ»։

— «Պատուելի Գարեգին աղպէ՛ր, ես մի անարժան աղջիկ եմ; թո՛ղ արժանաւորների աղօթքը քու վրայ ընկի, ես քեզ պարտական եմ; դու ինձ համար շատ նեղութիւններ ես քաշել շատ անարգանքներ ես ստացել, դարդ մի՛ անիլ, դու քու արածն արիր, Աստուած աչքաստանդարդ չի կորցրուց, վատ չի անց կացաւ։ Էստեղի կեանքըն օրական էր, մենք գնում ենք յաւիտենական վայելենք. երկուսս մի տեղ ենք էրթում։

Քեզանից էս եմ խնդրում, որ ընչանք մնդ մարդ ունենաս սէրին մատաղ էլած Սօսին ու վարդիթերին. աշխարհքին չհանց տաս, որ չահել չիւան սիրահարութիւնի բոցի մէջն ընկնողը շատ կը հալուի. սէրը մի թէժ կրակ ա, մեծ էկողին կէրի. մնա՛ս բարէն, իմ հաւատարիմ ու բարերար Գարեգի՛ն, Աստծու աչքը քեզ վրայ քաղցր ընի՛»։

— «Մէնակ մի խնդիրք ունիմ ձեզանից, իմ հէ՛ր ու մէ՛ր, լսեցէ՛ք ձեր միտուճար աղջկայ խնդիրը, գնացէ՛ք, ներողութիւն խնդրեցէ՛ք էն Աստծու գառն, էն սրտացաւ Գարեգնիցը։ Նրա սիրտը ցաւացրել էք, բարեկամացէ՛ք Սօսիս մօր ու աղպօրտանց հետ. միաք արէ՛ք իրար հետ, մեր երկուսին իրար կըտի թաղեցէ՛ք, լսեցէ՛ք, ոտներդ համբրեմ, լսեցէ՛ք ձեր անբաղդ աղջկայ վերջին աղաչանքը, որ ես բաղդաւոր ըլիմ էն աշխարհքումը՝ դուք էլ ըստեղ»։

Փափակը դիրը գրեց, կարդաց լաց ընելով, քուէր երեսը համբրեց, նա էլ նրա թշերը պաչեց, առաւ թուղթը, դրուց ծոցն ու մօրը վեր կացնել տուաց։

— Նանի՛ չան, ասեց նա. քու աղջկանից դ- մնա՛ս բարով. էս աշխարհքումն էլ ինձ հրաման չը կայ կենալու, իմ Քրիստոսն ինձ կանչում ա, որ գնանք իր կշտին Սօսի հետ ընտեղ մեր մուրազին հասնինք. էս աշխարհքիս փուչ սէրի տեղակ, իրա սուրբ սէրին ա մեզ արժանացնում։

ես քեզ մեղաւոր չեմ ասում, նանի՛ ջան, ես բա-
նում ես ոչովի մեղքի տակ չեմ քցում, թո՛ղ
ոչով դարդ չանի. Աստուած ըսկնց էր կամեցել,
Աստուած ամէնքի մեղքին էլ թողութիւն տայ։

— Կանչիլ տո՛ւր տէրտէրին, նանի՛ ջան,
թո՛ղ գայ ինձ սրբութիւն տայ։ Ղո՛րթ ա, մի
ամիս չը կայ, որ Սօսիս հետ Ջրօրհնէքին ժա-
մումը սրբութիւն առանք, համա սրբութիւնն ա
մեր ամէն դարդերը սրբողը, մեր մեղքերը չըն-
ջողը, թո՛ղ գայ տէրտէրը, ծառայ եմ նրա ա-
չին։

— Աղչի՛, գժուեցի՞ր, դու ի՞նչ ես էլել
վառք Աստծու, լաւ ես, վախիլ մի՛, բալա՛յ ջան,
ասեց պառաւը. դու սաղացի՛ (առողջացի), ես
քեզ Սօսին կը տամ, սիրած ուրախ պահի՛։

— Էլի ուրախ եմ; վա՛ռք Աստծու, ասեց
վարդիթերը, մէնակ հօ ես չե՞մ, որ տխուր
ըլիմ; իմ Սօսն էլ ա գալի հետս։ Երկնքի դըռ-
ներն էսօր երկուսիս համար էլ բացուել են։

Վարդիթերն էնքան ազանչաք արուց, որ
մերը ղրկեց մարգին ու աղէքանցը կանչիլ տուուց
դեղամիջից, տէրտէրին էլ բերին, խոստովանա-
ցրուց, արժանի արաւ Քրիստոսի կենդանութիւն
տուող Մարմնին և Արիւնին ու էս կենդանի
նահատակը, էս պարկեշտութիւնի հայլին, էս
չահել չիւան աղչիկը, էս կոկոմ վարդը՝ դեռ
Մայիսի լաւ օրերը չի տեսած՝ ամէնքին էլ վեր-
չին բարովը տալուց յետոյ՝ Սօսի սիրոյ արևովը

խաշուեց, թռաւ ու իր արդար հոգին Աստը-
ծուն աւանդեց։

Սուգ ու չիւանը (կոծ) տունն ընկաւ, բարե-
կամները լցուեցին, գոռգոռոցն աշխարհքը բըռ-
նեց, ամէնն էլ իրանց են իմանում մահի պատ-
ճառը, համա էլ նոր ո՞րտեղ, բայց թողածը գը-
նաց։

Երբ որ չորերը հանեցին, հանգուցեալի ծո-
ցին դտան երկու թուղթ՝ մին փափակի գրածը,
մին էլ կապոցը։

Առաջ կտակը կարդացին ու գլխներին տը-
ւին, յետոյ կապոցը բայ արին։

Նրա միջին էլ էս էր գրած. «Ես Թլիսմի
զօրութիւնովը գլուխս էկած բանը քանդուի, Հե-
թուին իր օղըչաղովն իր խօսքերիցը յետ դառ-
նայ, Գարեգինն անպատիւ ըլնի, վարդիթերը
դարդակալի՛, ղուսակալի (վշտահար լինի), տամլայ
վէր բերի՛, սադայելը նրանց սերը հովացնի»։ Մի
քանի էլ անհասկանալի նշաններ էր գրած։

Տէր Աստուա՛ծ, ի՛նչ որ Հեթումներ անում
են, դու հեռու տանես։

Ընկել են էն խեղճ աղչկայ նաչի (դազաղ)
վրայ ու քիչ ա ճնում, թէ իրանք էլ մեռնին։

— Վարդիթե՛ր ջան, մենք քեզ պարտա-
կան ճնացինք, գոռում են, մեզ ների՛, մենք սե-
րես ենք քու առաջին։

Արշաւիրը հօ՛, գլխին էնքան տուուց, քիչ
ճնաց իր էլած խելքն էլ թռցնի։

— Ա՛յ քի՛ր չան, ասում ա, յաւուր դատաստանին քու առաջին սևերես պտի ինամ։

Ամէնքն էլ լայ են լինում. մէնակ Փափակը սիրտը հանդարտ, խղճմտանքն խաղաղ, լայ ա ընում իր քուեր մեռնելու համար։

Փառաւորի՛ տէրտէրը, դրանց սիրտը հանդարտացնելու համար մի երեխայ ղրկեց Գարեգինին կանչելու, որ բարիշեն (հաշտուեն), բալքի մի քիչ դնչանան։

Վարդիթերի հիւանդութիւնը Գարեգինն իմացել էր, մի ցաւն էրկու էր դառել։

Խեղճը ո՞րի դարդը քաշի. թէ որ մի քիչ անհասկացող ընէր, հիմի դարդամահ էլած կըընէր։

Ոնց որ ասինք, թէ բարձր տեղերումը կանանած մռիկ էր տալի Սօսի համար, էսօր էլ ձորաբաչինի կանանած էր, որ Սօսը, գլուխը քաշ քցած՝ անխօս էկաւ իրա կուշտը։

Վաղեց Գարեգինը, կուռը բռնեց, խրատեց։

—Աղջի՛ր չան, ասեց, ընչի՞ ես լսէնց, ա նում, էրթանք տուն, հրէ՛ նրանք էլ կամք են տուել, որ իրիկունս նշան դնենք։

Ըսէնց խօսալով առաւ գնաց տուն։

Չէր գիտում խեղճը, թէ Աստուած ա նրան ղրկել։ Տանը նստել էր, խելք ու քեամալ էր գընում գլխին (հաւնոզում եր)։

Նա էլ ըսկի բան չէր ասում, մէնակ գլխով էր անում։

Մէն էլ էս խօսքերուն էին, որ մի երեխայ նեքսև մտաւ ու Գարեգինին ասեց, թէ վարդիթերը մեռել ա, տէրտէրը Հեթումենց տանը քեզ ուզում էր։

Թողէ՛ք լինէ ըստեղ մի քիչ կանգ առնեմ. աչքներիս արտասուքը չեն թողում առաջ երթամ, ձեռներս դողում ա, գլուխս պտտուում ա, խելքս թռչում ա, երը որ ուզում եմ ասիլ, թէ իմ ազիզ աղպէրը, իմ սիրով կրակուած, չօլէ չօլ ընկած Սօսը, որ սոված՝ ծարաւ էս երկու չաբաթ անց էր կացրել ձների ու սառցների միջին, ոչ երեսի ռանդն էր թռել, ա՛չ մի ճլաս էր պատահել, հիմի հէնց որ լսեց իր սրտի սիրեկանի մահը, մի խոր հոգէց քաշեց, միջքի վրայ յետ գնաց՝ գլուխն իր ազիզ սրտակից Գարեգնի կռանը դրած՝ մի քանի խօսք ասեց, խնդրեց ընդանից, որ աչխատի երկուսին իրար կշտի թաղիլ տայ, իր մօրը մխիթարի, իր աղպօրտանցը ինաք բարին ասի, ինքն էլ ուրախ կենայ։

Յետոյ աչքերը վերև բարձրացրուց, աղօթք արուց Աստծուն ու գնաց իր փափաքն առնի հոգով՝ իր սիրեկանիցը՝ երկնքումը։

Սօսին ու վարդիթերին երկուսի խնդրքովն ու իրանց խղճմտանքը մի քիչ հանդարտացնելու համար իրար կշտի թաղեցին։

Գարեգինն երկուսի վրայ մի քար քցիլ տրուց ու վրէն գրեց, էս խօսքերը.

„Ահա՛ սիրոյ պատուհանը,
„Մի ագահ մարդի զոհերը.
„Ով բաժեղից անց կենայ,
„Ցիչի ՍՕՍՆ ու ՎԱՐԴԻԹԵՐ“:

Ինքն էլ ասեց էս ողբը, որ ընչանք իր մահը բերնիցը չէր կարում:

Գիմա՛, Տէր Աստուա՛ծ, այս ի՞նչ խիստ ցաւ է,
Այս ի՞նչ վշտալի դառն հարբաւ է.
Սօս ու Վարդիթերս հողն եմ դրել,
Աչխարհս ինձ համար կացարա՞ն չինել:

Ա՛խ, երկի՛նք երկի՛ր, դուք ինձ նայեցէ՛ք,
Ինձ կարեկցելով՝ խղճիս խղճացէ՛ք.
Տարաբաղդ եմ ես ամէն մարդից չատ,
Ո՞ւր գնամ արդեօք, որ չինիմ հանդարտ:

Րոպէ չի լինիլ, ա՛խ, որ իմ սիրտս
Զբյիշէ սիրելիքս, կարատէ լերդս.
Նոցա սուրբ չիրիմն արտասուօք թացել
Եւ տապանադիրն ձեռօքս եմ փորել.

Եւ այս գերեզմա՞ն, ախուր գերեզմա՞ն,
Այս իմ սիրելեաց մի հատիկ դամբան.
Այստեղ կը գանեմ ես անդորրութիւն,
Աչխարհում՝ այս ինձ մխիթարութիւն:

Գեղեցիկ այս դաշտ, կանաչ այգիները,
Այս ձորերը, թփերը, լեռ ու քարափները.

Երբեմն Սօսիս հրճուանաց տեղերը՝
Այժմ կոծարան խղճիս են եղել:

Իսկ այն Տիրանը՝ ագահ Տիրանը,
Կոարեց սիրելեաց կենաց գերանը.
Քանի արծաթի երկու սիրեկանն
Զոհ տուաւ հողին անխեղճ բարեկամին:

Նահատակնե՛ր ղոյդ, ձեր հողին մեռնիմ,
Ձեր սուրբ յիչատակն ես միաս ունիմ:
Դուք ձեր վախճան երկնքում առաք,
ԳԱրեգինն էլ ձեզ մօտ կըստանայ նոր կեանք:

Վ Ե Ր Ջ:



460

0014721

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0014721